Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. ՀԵՐ ԿՈՐՊԵՏՅԱՆ

ՀԱՅՈՑ 1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 1998

ԴՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Կ—294

Հրատարակվում է Հայաստանի Հանրապետության
գիտությունների ազգային ակադեմիայի հայոց
ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. ԴԻԼՈՑԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ.

Կ—294 Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ:— Երևան. 1998. 372 էջ:

Գրքում լուսաբանվում է և վերլուծության ենթարկվում 1915—1916 թվականների ցեղասպանության ուսումնասիրությունը հայ պատմագրության մեջ և բազմակողմանի քննարկվում է հայ պատմաբանների վերաբերմունքը դեպի այդ հարցը:...

ԳՄԴ 63.3 (2Հ) 52

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ ՄԱՋԱՊՈՒՐԾ ՄՈՐՍ՝ ԾՈՒՇԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՀՈՐՍ՝ ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԵՂԲՈՐՍ՝ ԺՈՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

ԱՌԱՋԱԲԱՆ

Քսաներորդ դարի աննախադեպ ոճրագործությունը՝ հայոց 1915—1916 թվականների ցեղասպանությունը, մեր նորագույն պատմության առանցքն է կազմում: Հետագա բոլոր կարևորագույն պատմական իրադարձությունները պտտվում են այդ առանցքի շուրջ և այսօր էլ այն պահպանում է իր պատմաքաղաքական այժմեականությունը:

Չնայած նախորդ իրավակարգի պայմաններում Հայոց Մեծ եղեռնի մասին արգելվեց խոսել ու գրել, որովհետև այդպես էր պահանջում գերպետության արտաքին քաղաքականության և բոլորին պարտադրված գաղափարախոսության շահերը, այնուամենայնիվ, 1965-ին մեր ժողովուրդը մկանների հուժկու պրկումով կտրատեց տասնամյակների կապանքներն ու լայնորեն նշեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը: Ժողովրդի սրտի ու հիշողության գաղտնարաններում մշտապես ու սրբությամբ վառ մնաց անմեղ նահատակների հիշատակը, և մտքերի ու հոգիների վրա դրված արգելքների վերացումից հետո ողջ երկրով մեկ բարձրացվեցին բազում քարեղեն հուշարձաններ:

Հրապարակ հանվեցին նաև պատմագիտական ոչ քիչ թվով աշխատություններ, որոնցում այս կամ այն չափով լուսաբանված է Մեծ եղեռնի պատմությունը: Սակայն արևմտահայերի ցեղասպանության ամբողջական պատմության ստեղծումը շարունակում է մնալ հայ պատմագիտության օրախնդիր հիմնահարցերից մեկը, որն էլ կդառնա լավագույն ոգեղեն հուշարձան:

Սույն ուսումնասիրությանը ձեռնամուխ ենք եղել՝ Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանության պատմության բնագավառում հայ պատմագրության մեջ մինչ այժմ արված մեծածավալ ու շնորհակալ աշխատանքը ինչ-որ չափով հանրագումարի բերելու և համակարգելու մղումով:

Կարծում ենք, որ Հայոց ցեղասպանությունը մեր ժողովրդի պատմության չխունացող և արդիականության օրակարգում մշտական տեղ

գրաղեցրած հիմնահարցերից մեկն է, որի գիտատեսական և գաղափարական-քաղաքական բացառիկ կարևորությունը առանձնահատուկ հիմնավորման կարիք չունի: Այսօր, երբ մեր ժողովուրդը հետամուտ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը՝ դրանից բխող ազգային իղձերի իրականացման ակնկալիքներով, այդ բնագավառի ամեն մի ուսումնասիրություն ձեռք է բերում ուղղակիորեն գործնական նշանակություն: Մասնավորապես մեծանում է պատմագրական ուսումնասիրությունների դերն ու նշանակությունը, որոնցում համադրվում են տարաբնույթ բազում աշխատություններ, հանրագումարի են բերվում հիմնարար ուսումնասիրությունները՝ իրենց գլխավոր եզրակացություններով, միաժամանակ բացահայտվում է պատմության կեղծարարությունը, ցուցահանվում դրա միտումնավորությունը, փաստազրկությունն ու միջազգային հանրության թյուրիմացության մեջ գցելու նպատակադրվածությունը:

Հայտնի է, որ թե անցյալի, թե ժամանակակից թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը, երբեմն էլ նրանց ձայնակցող արևմտյան որոշ պատմաբաններ ճիգ ու ջանք չեն խնայում ոչ միայն ժխտելու Հայոց Մեծ եղեռնի բուն փաստը, այլև փորձեր են կատարում «ապացուցել», թե, ընդհակառակը, եթե պիտի խոսվի Եղեռնի մասին, ապա խոսք պետք է գնա հայ «ավազակախմբերի» կողմից թուրք ազգաբնակչության կոտորածի մասին: Առավել արտառոց է որոշ հեղինակների մոտեցումը, ըստ որի Եղեռնի համար միակ հանցավորը իրենք՝ հայերն են: Ուստի հայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից է ցուցահանել նման բարբաջանքների սնանկությունը և միջազգային հասարակայնությանը ներկայացնել իրերի ճշմարիտ պատկերը:

Ուսումնասիրության նպատակն է համակողմանիորեն հանրագումարի բերել հայոց 1915—1916 թվականների ցեղասպանությանը նվիրված ժամանակակիցների հուշագրություններն ու ուսումնասիրությունները, հայ պատմաբանների հետագա հետազոտությունների արդյունքները և դրա հիման վրա կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ:

Աշխատության հիմնախնդիրներից է վեր հանել Մեծ եղեռնի ժամանակաշրջանում հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, ի մի բերել դրանցում տրված գնահատականները, իրարամերժ պատկերացումների համադրմամբ վերականգնել այդ հերոսամարտերի իրական մասշտաբները, ընդգծել դրանց պատմական նշանակությունը:

Մեր ուսումնասիրության կարևոր խնդիրներից է գոյություն ունեցող

տարբեր տեսակետների համադրմամբ որոշակիություն մտցնել Հայոց Մեծ եղեռնի իրական պատճառների բացահայտման հարցում:

Ոչ պակաս կարևոր խնդիրներ են տերությունների դիրքորոշման, այդ չարագործության պատասխանատուների հարցերը, որոնք նույնպես պատմագրության մեջ արժանացել են տարբեր մեկնաբանությունների:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Մեծ եղեռնի զոհերի թվի հարցը, որտեղ նույնպես չկա միասնական կարծիք:

Համադրելով տարբեր հեղինակների հաղորդած տեղեկությունները, փորձել ենք պատասխանել այն այրող հարցին, թե որոնք էին թուրք բարբարոսներին առավել մասշտաբային ու կազմակերպված, համահայկական բնույթ կրող հակահարված չտալու հիմնական պատճառները:

Աշխատության աղբյուրագիտական հիմնական առաղձը եղել է հայոց ցեղասպանության վերաբերյալ սփյուռքահայ և հայրենական պատմաբանների՝ տարբեր ժամանակներում հրատարակած պատմագիտական ուշխատությունները, ինչպես նաև դեպքերի ականատես-ժամանակակիցների հուշագրությունները և այլ բնույթի հրատարակություններ: Լայնորեն օգտագործվել են նաև օտար մի շարք հեղինակների սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող այն աշխատությունները, որոնք թարգմանաբար հրատարակվել են հայերեն: Ձեռքի տակ ենք ունեցել նաև մեծաքանակ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, վիճակագրական, տեղեկատվական, հանրագիտարանային, մատենագրական, գեղարվեստական և այլ բնույթի գրականություն: Մայր աղհրաժեշտության դեպքերում անդրադարձել ենք նաև գիտական պարբերականներին և ընթացիկ մամուլին:

Առաջին գլուխը երկու ենթագլուխներով բովանդակում է դեպքերին ականատես-ժամանակակիցների պատմագիտական ուսումնասիրությունների և հուշագրությունների, ինչպես նաև օտար հեղինակների հայերեն հրատարակված աշխատությունների քննական-վերլուծական նկարագիրը: Դրանցից շատերն արժեքավորվում են իբրև փաստական նյութի անփոխարինելի գանձարաններ, սկզբնաղբյուրային նշանակության գործեր: Մատնանշվում են դրանցում տեղ գտած մի շարք վիճարկելի դրույթներ և մերժելի տեսակետներ:

Երկրորդ գլուխը երկու ենթաբաժիններով ներկայացնում է սփյուռքահայ պատմագրությունը երկու փուլով՝ 1915—1965 և 1965—1998 թվականներին:

Սփյուռքահայ պատմագիտական ժառանգությունը դիտվում է իբրև Մեծ եղեռնի գիտական ամբողջական պատմության ստեղծման կարևո-

բագույն և առաջնային հիմք, իբրև փաստավավերագրական նյութի անսպառ շտեմարան:

Երրորդ գլխում փուլ առ փուլ տրված են հայրենական պատմագրության զարգացման աստիճանները, ներկայացված է այն հիրավի հսկայական աշխատանքը, որ կատարված է այդ բնագավառում:

Հայրենական պատմաբանների աշխատությունները քննարկելիս առաջնորդվել ենք յուրաքանչյուր պատմաբանի ավանդը արժեքավորելու, օբյեկտիվորեն գնահատելու և ընթերցողին ամփոփ ձևով ներկայացնելու սկզբունքով:

Առանձին ենթաբաժիններ ենք հատկացրել հայրենական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ սկզբնաղբյուրներին՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներին, բուն ցեղասպանության պատմությանը, ինքնապաշտպանական հերոսամարտերին, պատմագրական բնույթի հետազոտություններին:

Եզրակացությունների բաժնում աշխատել ենք ընդհանրացված ձևով ներկայացնել քննարկված հիմնահարցերը, ուրվագծել Հայոց ցեղասպանության պատմագրության զարգացման հեռանկարները:

Աշխատության վերջում տրված է օգտագործված գրականության մատենագրություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայոց Մեծ Եղեռնի մասին շատ է գրվել. գրել են աննախընթաց մղձավանջից հրաշքով փրկվածները՝ անմոռաց պահելու համար սեփական աչքերի առաջ մորթոտված հարյուր հազարավոր անմեղ զոհերի հիշատակը, չեն զլացել ահավոր սպանդի և, միաժամանակ, հայոց գերմարդկային մաքառումների քիչ թե շատ սիստեմատիկ պատմությունը թողնել հանձնել դեպքերին ժամանակակից պատմաբանները, հասարակական գործիչները, գրել են իրադարձությունների հաղորդակից օտար երկրյա քաղաքական, ռազմական, դիվանագիտական, կրոնական, մշակութային գործիչները: Գրել են, գրում են ու դեռ էլի շատ կգրեն: Ստեղծվել է, այսպիսով, պատկառելի ծավալով տարաբնույթ գրականություն, որը իր գերակշիռ մասով միտված է աշխարհին, մարդկությանն ու սերունդներին պատմել ճշմարտությունը հայ ժողովրդին վիճակված դաժան ճակատագրի մասին, պատմության անաչառ դատաստանին հանձնել թուրք մարդասպաններին ու դիմակազերծել պատմության կեղծարարներին, որոնք այսօր էլ ճգնում են ժխտել, կամ արդարացնել մարդկության դեմ կատարված անօրինակ չարագործությունը:

Փորձելով քողարկել անհավոր ոճրագործության հետքերը, երիտթուրքական կառավարողների հոգածությամբ ոչնչացվել է արխիվային մերկացնող փաստաթղթերի մեծ մասը, և պահպանվել են չնչին փոքրաքանակ միայն:

Այդ առումով դեպքերին ականատես-ժամանակակիցների հուշագրությունների և պատմագիտական բնույթի ուսումնասիրությունների մի զգալի մասը ստանում են պատմական հավաստի վավերագրերի արժեք, մանավանդ, եթե նկատի առնենք, որ դրանցից շատերը գրվել ու հրատարակվել են իրադարձություններից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ, սկսած հենց 1915-ից:

1. Ականատես-ժամանակակիցների ուսումնասիրություններն ու հուշագրությունները

Հայոց Մեծ եղեռնի պատմության այսօրվա ուսումնասիրողի համար խիստ մեծ է Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) ծավալուն աշխատության արժեքը[1]: Պատմաբան, բանասեր-հրապարակախոս Ա-Դոն, 1915-ին իբրև «Մշակի» հատուկ թղթակից շրջագայելով ռուսական զորքերի գրաված Վասպուրականի մի քանի կենտրոնական շրջաններում, գրուցելով ջարդերի ու ինքնապաշտպանության ակտիվ մասնակիցների հետ, ականատես լինելով Վասպուրականի մեծ գաղթին՝ ստեղծել է ճշմարտապատում մի ուսումնասիրություն:

Պատերազմի ընթացքում Թուրքիայի հայաբնակ բոլոր շրջաններում տեղի ունեցած դեպքերը հեղինակը դիտում է իբրև հայ ժողովրդի պատմության տարեգրության գերագույն էջը, իր իսկ բառերով ասած՝ գերագույնը աղետների և գերագույնը հերոսամարտի:

Գիրքը բաղկացած է 22 բաժիններից, որոնցում պատմաաշխարհագրական ակնարկ է տրվում Վասպուրականի մասին (ի դեպ, Ա-Դոն հեղինակ է նաև «Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների» մեծարժեք աշխատության, Երևան, 1912), ներկայացվում է նահանգի ժողովրդագրական վիճակագրությունը: Այնուհետև պատմվում է արևմտահայերի՝ թուրքական բանակ զորակոչվելու, կամավորական շարժման, ջարդերի սկսման ու դրանց հետագա աճավոր չափերով ծավալման մասին: Հեղինակը հատուկ շեշտ է դրել վասպուրականցիների գոյամարտի պատմության վրա՝ ականատես-մասնակիցների վկայությունների հիման վրա հավաստիորեն շարադրելով Արճակի, Հայոց Ձորի, Թիմարի, Վարագի, Շատախի, Գեսանդաշտի կռիվների պատմությունը, առավել հանգամանորեն կանգ է առել բուն Վանի հերոսամարտի վրա: Պատմական սկզբնաղբյուրի արժեք ներկայացնող այս գիրքը ավարտվում է Վանի ժամանակավոր հայկական կառավարության գործունեության և ապա՝ Վասպուրականի մեծ գաղթի նկարագրությամբ:

Եղեռնի անմիջական տպավորությունների տակ է գրված դեպքերի ականատես ու մասնակից Մուշեղ Արքեպիսկոպոսի յուրատեսակ հուշագրություն-ուսումնասիրությունը[2], որը պարունակում է նաև ուշադրության արժանի մի շարք դատողություններ առհասարակ հայ ազատագրական շարժման վերաբերյալ:

«Երկու խոսքում» պարզելով իր մեկնակետը գրքի շարադրման սկզբունքների մասին, հեղինակը հայտնում է կուսակցական վեճերից և անձնական հաշիվներից վեր կանգնած լինելու մասին, խոստանալով լիակատար անաչառություն՝ պայմանավորված ազգային նվիրական շահերով: Միաժամանակ նա հայտարարում է, որ, այսպես կոչված, «չեզոքները կամ ոչ կուսակցականները ինքնաարդարացումի չքմեղանքով չեն կարող և իրավունք չունեն ներքին քայքայումի պատասխանատվությունը գցելու հայ ազատագրական շարժման վրա, որովհետև նրանց զանգվածային անտարբերությունը աղետի թերևս մեծագույն պատասխանատուն է:

Շարադրանքի հենց սկզբում ավելի պարզեցնելով իր միտքը, Մուշեղ Արքեպիսկոպոսը գրում է. «Մեր խոսքը անոնց մասին է, որոնք կվարդապետեն, թե Հայ ազգին տառապանքը արդյունքն է Հայ հեղափոխականության գործունեության, և թե Հայկական վերջին բնաջնջումի եղեռնը ի գործ պիտի չդրվեր, եթե Կովկասի սահմանագլուխներուն վրա կամավորական շարժումներ սկսված չըլլային»[1]: Նա գտնում է, որ նման մտածողություն ունեցողները պարզապես պատմությունը խեղաթյուրողներ են, իր արտահայտությամբ՝ պատմությունը թուլավորողներ, կեղծ տրամաբաններ, որոնք չգիտես ինչ մտայնությամբ արդյունքը շփոթում են պատճառների հետ, որովհետև կույրերն անգամ աներկբայորեն գիտեն, որ եթե հայ հեղափոխությունը հազիվ երեսունհինգ տարվա կյանք ունի, ապա հայ տառապանքը իր մարտիրոսի ճակատի վրա կրում է դարերի արհավիրքի «աղվեսադրոշմը»: Ուրեմն «Հայ հեղափոխությունը արդյունքն է և ոչ պատճառը Հայ տառապանքին»,— վերջնականորեն եզրակացնում է հեղինակը[2]:

Հետաքրքիր է Մուշեղ Արքեպիսկոպոսի վկայությունը օսմանյան սահմանադրության հռչակումից ընդամենը 13 օր հետո իր և Ադանայի նոր կուսակալ նշանակված երիտթուրքական պարագլուխ Ջեմալ բեյի միջև կայացած զրույցի մասին, որի ընթացքում նա լիովին համոզվում է, որ երիտթուրքերի համաթրքության ծրագիրը աղետավոր է լինելու հատկապես հայերի համար, ուստի և Ադանայի 1909-ի կոտորածի վրա երբեք էլ չի զարմանում: Բացահայտելով երիտթուրքերի «ազատական

---

1 Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին, Երևան, 1917:

2 Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական ոճրավանքը (քննական վերլուծումներ), Բոստոն, 1916:

1 Նշվ. աշխ., էջ 5:

2 Նշվ. աշխ., էջ 6:

և ֆրանսիական» երևութական, խաբուսիկ լինելը, Մուշեղ Արքեպիսկոպոսը անվարան գրում է, որ նրանք իրենց գործունեության բոլոր շրջաններում միշտ եղել են վայրագորեն ազգայնական ու հակիսլամական և նրանց հակաթրքությունը իրենց դավանած հակիսլամության ու պետական կենտրոնացումի ամենավերջին կերպարանափոխությունն է միայն, որովհետև իթթիհատի ստեղծման առաջին իսկ օրերից նպատակ էր ընտրված «Թուրքիան թուրքերին» նշանաբանը[1]:

Այնուհետև, խորամուխ լինելով եղեռնի իրական դրդապատճառների բացահայտման մեջ, հեղինակը պարզաբանում է, որ իթթիհատական ազգայնամոլների առջև ամենամեծ խոչընդոտը արևմտահայությունն էր, որովհետև եթե Թուրքիայի սահմաններում բնակվող ոչ-թուրք մուսուլմանների թրքացումը նրանց համար ժամանակի խնդիր էր միայն, ապա հայերի հակիսլամական մտավոր զարգացումը, ճարտարարվեստական ընդունակությունները, իբրև ինքնուրույն ազգ գոյատևելու բնական ու համառ ջանքերը, նրա ազգային-կրոնական ներքին անջատ կազմակերպությունը, վերջապես ազգային գրականությունն ու պատմությունը, ինչպես նաև կապիտուլյացիաներով եվրոպական պետությունների անվանական հովանավորությունը պատճառներ էին, որոնք անձուկելի, անմարսելի էին դարձնում հայերին՝ հակիսլամության և հակաթրքության հիվանդ ստամոքսի մեջ: Ուրեմն եզրակացությունը մեկն է՝ հայ ազգի բնաջնջումի ծրագիրը իրապես դարբնվում էր իթթիհատի կազմակերպությամբ, և նրա պետական հիմքերը դրվում էին 1868—1870 թվականներին[2] (1868-ը իթթիհատական կուսակցության հիմնադրման տարեթիվն է— Մ. Կ.): Շարունակելով իր միտքը, հեղինակը գրում է, որ 1870—1877 թթ. ընթացքում, երբ տակավին ոչ հայ հեղափոխություն գոյություն ուներ, ոչ էլ հայ կամավորներ Կովկասյան սահմանագլխին, հայկական բնաջնջումի ծրագիրն արդեն գործադրության մեջ էր դրված, և այդ թվականներին պատրաստված տեղեկագրերը վավերականորեն ու փաստացիորեն ցույց են տալիս, որ թալանը, առևանգումը, մարդասպանությունները սովորական դարձած, պետականացած իրողություններ էին[3]: Նա այն միտքն է հայտնում, որ թուրքերի հայաջինջ քաղաքականությունն էր Հայկական հարցի, դրանով իսկ Սան-Ստեֆանոյի, Բեռլինի, Կիպրոսի միջազգային պայմանագրերի ստեղծողը և դրանց անմիջապես հաջորդած Սայիդ փաշայի՝ «Հայկական հարցը պիտի լուծենք՝ հայերը բնաջնջելով» շատ որոշ ու կտրուկ բանաձևը, որի հայրությունն, իհարկե, պատկանում է սուլթան Համիդին:

Մուշեղ Արքեպիսկոպոսը կարծիք է հայտնում, որ հայ հեղափոխության, այսինքն՝ անցյալ դարավերջի հայ ազատագրական շարժման ուժգնացման դրդապատճառներն էին իթթիհատի հայաջինջ ծրագրի գործադրության անընդհատ շարունակությունը, խոստացած բարեկարգումների չգործադրվելը, եվրոպական դիվանագիտության հակակամարդկային, պողպատե սառնությունը: «Հայ ժողովուրդը ակամա և առանց ուզելու ընդգրկեց Հեղափոխությանը,— գրում է նա,— իբրև իր փրկության վերջին լաստակը, և եթե կան մարդիկ, որոնք հեղափոխությունը հանցանք մը կը նկատեն, այդ հանցանքին պատասխանատվությունը թող երթան փնտռեն թուրքերուն և եվրոպացիներուն մոտ... Հայը ի բնե խաղաղ զարգացումի ընդունակ, երբեք պիտի չհոժարեր իր ապահով երջանկությունը, եթե ունենար, վտանգի ենթարկել հեղափոխական արկածախնդրություններով: Եվ եթե ընդվզեցավ, այդ կընշանակե, թե հարկադրված էր ընդվզելու, ճակատագրորեն հարկադրված... Այդ անխուսափելի և կրակե լուծը նախամեծար համարեց իր ամենօրյա տառապանքներեն, իր ամենօրյա լկումներեն ու բռնաբարումներեն»[1]:

Իրավացիորեն հայկական շարժումը դիտելով իբրև սոցիալ-քաղաքական հակաբնական կյանքի բնականոն հետևանք, մեր կարծիքով սխալվում է, անշուշտ, հեղինակը, գրելով, թե այդ բնականոնությունը խախտվեց այն օրից, երբ շարժումը ղեկավարելու գործն ստանձնեցին տառապանքի շրջանակներից դուրս ապրող մի շարք ռուսահայ մտավորականներ, որոնց ձեռքի տակ հայ հեղափոխությունը արհեստականացավ:

Աշխատության երկրորդ մասում, առաջ քաշելով այն բնական հարցը, թե ինչո՞ւ ապա երիտթուրքերը հայոց եղեռնը չգործադրեցին բալկանյան պատերազմի շրջանում, Մուշեղ Արքեպիսկոպոսը կատարում է հետևյալ կարևոր եզրահանգումը. «Իթթիհատական թրքամոլ ոճրագործությունը իր կանխամտածված դիտավորություններու գործադրության համար պարտավոր էր սպասել նպաստավոր պայմաններու և պարագաներու... Համաեվրոպական պատերազմը երկար ատենէ ի վեր սպասված այդ պատեհությունը կուբերեր կուտար»[2]: Եվ հեղինակը նշում է նման պատեհության հետևյալ էական բաղկացուցիչները. 1. Հայկական

1 Նշվ. աշխ., էջ 14:
2 Նշվ. աշխ., էջ 19:
3 Նշվ. աշխ., էջ 21:

1 Նշվ. աշխ., էջ 27:
2 Նշվ. աշխ., էջ 42:

բարեկորոգումները հսկող պետությունները ներքաշված էին պատերազմի մեջ, իսկ վերահսկիչ խորհրդակները ետ կանչվեցին Թուրքիայից, 2. Թուրքիան պատերազմի հենց սկզբից չընչեց կապիտուլյացիաները, 3. Զարդարարական ծրագրի անվրդով գործադրության համար Թուրքիան դաշնակից ուներ Գերմանիան[1]:

Հատկապես ընդգծելով Գերմանիայի մեղսակցությունը հայկական եղեռնին, հեղինակը բացահայտում է այդ պետության գիշատչական պլանները Ասիայում՝ հենվելով ֆրանսիացի հեղինակ Էմիլ Դյումերկի վավերագրական արժեքավոր գրքի վրա: Եղեռնը բնորոշելով իբրև գերմանական մեթոդի թուրքական գործադրություն, Մուշեղ Արքեպիսկոպոսը գրում է. «Մենք ջարդվեցանք թուրքին ձեռքով, բայց եվրոպական դիվանագիտության երեսեն: Անոնցմե յուրաքանչյուրը իր շահը միայն փնտռեց մեր արյուններուն, մեր բնաջնջումին մեջ... Գերմանական դիվանագիտության օգտապաշտությունը ամենեն աղետավոր դերը կատարեց, անգլիական հակառուս քաղաքականութենեն հետո հայկական կոտորածներուն մեջ»[2]: Այնուհետև, ծավալելով իր դատողությունները, հեղինակը գրում է, որ Ռուսաստանի բնական ձգտումները Հայաստանի հանդեպ այնքան աղետաբեր չպիտի լինեին, որքան եղան Գերմանիայի անբնական ծրագրերը, որովհետև Ռուսաստանը ցանկանում էր Հայաստանը գրավել իր ազգաբնակչությամբ հանդերձ, մինչդեռ Գերմանիան ուզում էր Հայաստանը գրավել առանց հայերի, իբրև գերմանացի գաղթականների ամենահարմար բնակավայր: Իսկ ինչ վերաբերում է Լոբանովի «Հայաստանը առանց հայերի» նշանաբանին, ասյա, հեղինակի կարծիքով, այն անցման մի կարճատև շրջանի կարգախոս եղավ միայն, որի ստեղծման մեջ իր պատասխանատվությունն ունի հայկական որոշ շրջանների հակառուսական դիվանագիտության անմտությունը:

Վկայակոչելով գերմանացի հեղինակ Կարլ Ռոթի խոսքերը, թե Գերմանիան հանդիսացավ թուրքերի անմիջական խորհրդատուն, Մուշեղ Արքեպիսկոպոսը գրում է, թե այնտեղ, որտեղ թուրքերն անճարակացան գազանային վայրագության գործադրության մեջ, գերմանացի սպաները եղան ջարդերի, առևանգումի, կողոպուտի և տարագրության առաջնորդները, և Գերմանիան իրեն հպարտ կարող է զգալ թուրքերի պես աշակերտներ ունեցած լինելու համար, աշակերտներ, որոնք գերազանցեցին իրենց ուսուցիչներին:

[1] Նշվ. աշխ., էջ 44:
[2] Նշվ. աշխ., էջ 65:

Աշխատության երրորդ՝ «Ներքին պատասխանատվություններ» բաժնում Մուշեղ Արքեպիսկոպոսը անարդարացիորեն անարգանքի սյունին է գամում դաշնակցությանը, գտնելով, որ այն իր արկածախնդրական գործելակերպով լիովին մեղսակից դարձավ հայոց եղեռնին, կուսակցություն, որն իր գոյության ողջ ընթացքում ջանաց շահագործել ազգն ու ազգային ցավը, և նրա պատմությունը շահագործումի ու կողոպուտի պատմություն է միայն:

Խոսելով կամավորական շարժման մասին, Մուշեղ Արքեպիսկոպոսը նախ ընդգծում է, որ անձամբ ինքը համակիր է դրան, գտնելով, որ այն պիտի նշանակեր թշնամուն ցույց տալ ջարդոտված ու թափառական դարձած հայ ժողովրդի գոյատևելու ազգային կամքը, սակայն, դժբախտաբար, այդ կամքի տեղ դրվեց դաշնակցության կուսակցության կամքը և, այդպիսով, կամավորական շարժումը ոչ միայն օգտակար չեղավ, այլև ներքին ցավերի նոր դուռ բացեց:

Առհասարակ ազգային կուսակցությունների գործունեության վերաբերյալ հեղինակն իր մտքերը ամփոփում է հետևյալ կերպ. «Եղավ վայրկյան մը, ուր Հայ Կուսակցությունները զիրար ատեցին ու հալածեցին այնքան խորին ատելությամբ, որ ալ հասարակաց թշնամիին դեմ ատելության բաժին չմնաց... Եվ այս կուսակցական հակատակությունները ազատ ասպարեզ տվին թուրքին, իր ջարդի պապակը հագեցնելու համար»[1]:

Որոշակի արժեք է ներկայացնում ձերբակալության ու աքսորի տառապալի ուղիներով անցած Ս. Ակունու հուշագրական-ուսումնասիրությունը[2]: Կ. Պոլսում հայ մտավորականության մասնակական ձերբակալությունների պահին Ս. Ակունին «Ժամանակ» թերթի խմբագիրներից էր և ապրիլի 24-ին դարձավ մայրաքաղաքից արտաքսվածներից մեկը: Հեղինակը ոչ միայն նկարագրում է անձամբ տեսածը, այլև փորձում է տալ տեղահանությունների և աքսորի ընդհանուր պատմությունը՝ ակնատես-տարագրյալների հիշողությունների, ինչպես նաև այն ժամանակ դեռ պահպանված արխիվային վավերագրերի հիման վրա առանձին-առանձին տեղեկություններ հաղորդելով Զեյթունի, Սեբաստիայի, Կարինի, Խարբերդի, Բաղեշի, Ակնի, Տրապիզոնի, Էնկյուրիի և այլ վայրերի բռնագաղթի մասին: Այսպես՝ Սեբաստիայի նահանգի տեղահանության

[1] Նշվ. աշխ., էջ 137:
[2] Ս. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1920:

և ջարդի վերաբերյալ նյութերը նա քաղել է տեղի հոգևոր առաջնորդ Գնել Եպիսկոպոս Գալեմքարյանի և ուսուցիչ Պ. Գաբիկյանի կենդանի վկայություններից, որոնց խիստ վավերականությունը անտարակուսելի է: Իսկ այդ վկայությունները հավաստում են, որ Սեբաստիայի նահատակումները կատարվել են իթթիհատի ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Բեհաէդդին Շաքիրի հրահանգի համաձայն, և կոտորածն ընդհանրապես իրագործվել է մանգաղներով, նահատով, մահակով, կացնով, սրածայր ձողերով կամ յաթաղանով: «Ավազակները առանց չարչարանքի, գնդակով մեկ անգամեն սպանելու համար, գնդակ գլուխ երկու ոսկի պահանջած են զոհերեն»,— վկայում է հեղինակը[1]:

Սեբաստիայի ամերիկյան վարժարանի ականատես աշակերտուհի Հայկանուշ Զաքացյանի բերանով Ս. Ակունին պատմում է, թե ինչպես թուրքերը հայ տարագրյալների քարավանից առանձնացրին 10 տարեկանից բարձր տղամարդկանց և պահանջեցին 6-ական ոսկի փրկագին, որից հետո քրդերն ու ժանդարմները չվճարողներին սկսեցին պայտել, կամ ձեռքերը խաչել ու գամել՝ ասելով. «Ի՞նչ կա, համբերեցեք, չէ՞ որ ձեր Քրիստոսն ալ ասանկ ձեռքերեն ու ոտքերեն գամեցին, անիկա բնավ չտրտնջաց»[2]: Ահավոր այս արարը փակվում է նրանով, որ դահիճները չոր խոտ ու նավթ են լցնում խոշտանգվածների վրա և բոլորին ողջակիզում:

Հեղինակը ցավով արձանագրում է, որ Սեբաստիայի գրեթե բոլոր քարավաններին վիճակված էր նույն բախտը, իսկ այդ դեպքերի ընթացքում հազիվ թե ընդդիմության փոքրիկ փորձեր եղան[3]:

Խոսելով Կարինի տեղահանության մասին, Ս. Ակունին վկայում է, որ նահանգի բնակչության 95 տոկոսը նահատակվեց տարագրության ճանապարհներին: Այս բաժնում հեղինակը մեջ է բերում գինադադարից հետո Կարնո իթթիհատական ակումբի արխիվում հայտնաբերված Թալեաթի և Շաքիրի հեռագրերը՝ ուղղված կուսակցության Մալաթիայի մասնաճյուղի ղեկավարությանը, որոնցով հրահանգվում էր իրենց անմիջական պատասխանատվությամբ բնաջնջել այնտեղ ուղարկված հայ բնակչության զանգվածներին:

Խարբերդի տեղահանության առիթով Ս. Ակունին հարկ է համարում «հիշատակել պատվաբեր նոթ մը, որ հազվագյուտ ըղլալուն չափ ալ գնահատելի է»: Խոսքը Դերսիմի քրդերի վարքագծի մասին է, որոնք խարբերդցիների քարավաններից մոտավորապես 10—15 հազար հայերի հյուրընկալեցին և հակառակ կառավարության բազմաթիվ սպառնալիքներին՝ նույնիսկ զենքի ուժով պաշտպանեցին իրենց մոտ ապաստանած հայերին ու մինչև վերջ կերակրեցին նրանց[1]:

Տրապիզոնի ջարդի կապակցությամբ Ս. Ակունին հաղորդում է, որ շուրջ 14 հազար հայերի սպանդը այստեղ ղեկավարել է իթթիհատական մեկ այլ բորենի՝ կուսակալ Զեմալ Ազմին, և որ ոճիրն այստեղ իրականացվել է հայերին նավակներով ծովը թափելու վայրագ մեթոդով:

Հեղինակն անդրադառնում է նաև Գոնիայի, Բրուսայի, Էսքիշեհիրի, Ռոդոստոյի, Իզմիթի, Պարտիզակի, Ադաբազարի, Կիլիկիայի, Հալեպի, Դամասկոսի, Իզմիրի և այլ վայրերի տեղահանությանը, նշում, որ հիշյալ վայրերում տարագրությունը կրել է մասնակի և համեմատաբար խաղաղ բնույթ:

Աշխատության մեջ համառոտակի խոսվում է նաև Վանի, Մուշի, Սասունի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի հերոսամարտերի մասին, պատմվում են հայերի անձնազոհությունն ու քաջությունը բնորոշող շատ դրվագներ:

Պատմական իրականության խեղաթյուրում պիտի համարել, սակայն, գրքի սկզբում Ս. Ակունու զարգացրած այն վարկածը, թե իբր պատերազմն սկսվելու պահին արևմտահայերն ըստ ամենայնի արտահայտեցին իրենց կատարյալ հավիրվածությունը օսմանյան պետությանը: Այդ թյուրըմբռնումը հավաստելու համար նա վկայակոչում է Զավեն պատրիարքի նոյեմբերի 7-ի հեռագիրը բոլոր առաջնորդարաններին՝ օսմանյան պետության հաղթանակին ամեն ինչով նպաստելու մասին, հայոց ազգային հիվանդանոցում վիրավորների համար 150 տեղ հատկացնելը, այնտեղ բուժքույրական դասընթացներ բանալը, Թալեաթի շնորհակալական ուղերձը պատրիարքին՝ «Պատրիարքարանի և հայ ազգի հայրենասիրական ձեռնարկումների համար», Թիֆլիսի փոխարքայության իբր սկսած պատասխան բռնություններն ու խստությունները արևելահայերի նկատմամբ և այլ փաստեր: Բանը հասնում է այնտեղ, որ կառավարության կողմից հայ վաճառականների, արհեստավորների, երկրագործների ունեցվածքի մասնայական բռնագրավումը ներկայացվում է իբրև հոժարակամ նվիրատվություն:

Մեր կարծիքով տեղահանությունների ու ջարդերի չարդարացված

[1] Նշվ. աշխ., էջ 96:
[2] Նշվ. աշխ., էջ 97:
[3] Նույն տեղում:

[1] Նշվ. աշխ., էջ 159:

լինելն ընդգծելու համար հարկ չկա հակառակ ծայրից խեղել պատմական փաստերը, որովհետև արևմտահայությունը թե պատերազմի սկզբում, թե դրանից էլ շատ ու շատ առաջ ոչ մի պատճառ չի ունեցել իր «անհուն գոհունակությունը» հայտնելու թուրքական վարչակարգից ու, մանավանդ, գոյություն չունեցող հավատարմության ցույցեր անելու: Այդպես ներկայացնել իրականությունը՝ նշանակում է տուրք տալ բարեխնամ կառավարության վերաբերյալ թուրքական ստահոդ վարկածին, խոչընդոտել բացահայտելու եղեռնի իրական պատճառները:

Փաստավավերագրական կարևոր արժեք ունի Տարոնի նախկին առաջնորդական փոխանորդ Եղիշե քահանա Տեր-Պարսամյանի հուշապատումը[1], որտեղ միանգամայն իրատեսորեն են պատկերված թե պատերազմի սկզբում կառավարության ձեռնարկած հայակործան միջոցառումները, թե դեպքերի հետագա ընթացքը, թե տարոնահայության ապրած ահռելի ողբերգությունը, որի անմիջական հորձանուտում էլ գտնվել է ինքը՝ հեղինակը, իբրև ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչներից մեկը: Այսպես՝ Ե. Տեր-Պարսամյանը վկայում է, որ երբ 1914-ի հուլիսի վերջին զորահավաքի լուրը հասավ Մուշ, մի կողմից՝ 18—45 տարեկան հայ երիտասարդները մաճկան սպառնալիքի տակ գնացին զինվորագրվելու, մյուս կողմից՝ նախապես կազմված ցուցակի համաձայն յուրաքանչյուր տան պարտադրվեց կառավարությանը հանձնել որոշ թվով ձիեր, ընդ որում ձի չունեցողները պարտավոր էին դրանք գնել և հանձնել՝ հայ վաճառականը՝ 3—4, թուրք կալվածատերը՝ 1 ձի, իսկ ձիու գինն էլ 2—3 հարյուր ղուրուշից բարձրացավ 15—20 ոսկու: Անհանգստեցնողը վկայում է նաև, որ այդ բոլորին զուգահեռ սկսվեց պաշտոնական թալանը հայերի խանութներից. վերցվում էր ամեն ինչ և փոխարենը իբրև տուգանական ապրանքատեսակներին տրվում էր ոչինչ չարժեզրկող թղթի մի կտոր[2]:

Հետաքրքրական են Ե. Տեր-Պարսամյանի տեղեկությունները փոխադրական գործի կազմակերպման մասին: Նա վկայում է, որ զինվորագրությունից դուրս մնացած ողջ հայ ազգաբնակչությունը՝ կանայք, աղջիկներ, 10—18 տարեկան պատանիներ, հավաքագրվեցին շալակով փոխադրության, քանի որ տներում ձի կամ ավանակ չէր մնացել: Բանակին անհրաժեշտ բեռները շալակով պետք է հասցվեին մինչ Քյոփրի-

[1] Ե. ք. Տեր-Պարսամյան, Տարոնո ինքնապաշտպանությունն ու ջարդք (1914—1915), Փրեզնո, 1920:

[2] Նշվ. աշխ., էջ 21:

քյոյ և Հասան-կալե՝ 10 օրվա ճանապարհ, այն էլ անբավական սննդի, ծեծի ու չարչարանքների պայմաններում, ուստի յուրաքանչյուր երթ ու դարձին մոտավորապես 100-ից 30-ը մեռնում էին ճանապարհներին: Ե. Տեր-Պարսամյանը եզրակացնում է, որ նման տաժանակրությանը բնականաբար պետք է հաջորդեր ապստամբությունը, որը և կառավարության ցանկացածն էր՝ ջարդի պատրվակ ստեղծելու համար, սակայն հայերը զգուշանում էին[1]:

Ե. Տեր-Պարսամյանը իրական փաստեր է բերում, այսպես կոչված, բեդելի ասկերի (փոխարժեք) հարկի մասին, որը պարտադրվում էր հայերին՝ զինծառայությունից ազատվելու դիմաց: Նա հաղորդում է, որ այդ գումարը հասնում էր մինչև 60 ոսկու, որը կազմում էր վճարողի 2—3 ամսվա վաստակը, որը, սակայն, հայերը ուրախությամբ էին վճարում, քանզի լավ հիշում էին, թե ինչպես էին Բալկանյան պատերազմի ժամանակ թուրք զինվորները կռնակից խփում գրեթե անզեն հայ զինվորներին: Սակայն բանը հարկի վճարումով չէր ավարտվում. վճարողները դառնում էին անկարիա՝ տարապարհակ աշխատանքներ կատարողներ, որն ավելի թեթև չէր, քան զինվորական ծառայությունը[2]:

Այնուհետև Ե. Տեր-Պարսամյանը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է թուրքերի խժդժությունները Տարոնի գյուղերում, հայերի ինքնապաշտպանության բոլոր կարևոր դրվագները: Հետաքրքիր է, որ նա, ջերմորեն արտահայտվելով ինքնապաշտպանության տեղական ղեկավարների մասին, կեղծ ազգասերներ է անվանում դաշնակցական Վ. Փափազյանին ու նրա գործակիցներին, որոնք ստանձնել էին տարոնահայության ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունը, սակայն փաստորեն միայն վնաս հասցրին գործին:

Հայոց Մեծ եղեռնի պատմության գիտական ուսումնասիրման համար չափազանց մեծ է Արամ Անտոնյանի աշխատության[3] վավերագրական արժեքը, որտեղ առաջին անգամ հրապարակված են թուրք ջարդարարների պարագլուխների ստորագրած բազմաթիվ գաղտնի փաստաթղթեր, որոնք անմիջականորեն վերաբերում են եղեռնի բուն գործադրությանը: Պատերազմի ավարտից անմիջապես հետո Ա. Անտոնյանը որոնել-գտել է բազմաթիվ վերապրողների և մեղվաջանորեն գրի

[1] Նշվ. աշխ., էջ 27:

[2] Նշվ. աշխ., էջ 30:

[3] Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն, 1921 (Աշխատությունը գրվել է 1919-ին):

առել նրանց բոլորի պատմածները: Հարկ է նշել, որ Թալեաթ փաշային աճաբեկողի՝ Սողոմոն Թեհլերյանի դատավարության ընթացքում վերջինիս փաստաբանները Արամ Անտոնյանին հրավիրեցին Բեռլին, որը և դատարանին ներկայացրեց Թալեաթ փաշայի և ուրիշ թուրք պաշտոնյաների՝ հայերի ամբողջական բնաջնջման վերաբերյալ ստորագրած հրահանգների ու հրամանների բնագրերը: Հիշյալ բնագրերը դատարանը զննման հանձնարարեց Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության մի բարձր պաշտոնյայի՝ Վ.Ռեոպերին, որը 1914—1918 թթ. հյուպատոս էր եղել Թուրքիայում և ականատես վկա էր հայկական ջարդերին: Ռեոպերը կազմեց գաղտնի մի տեղեկագիր, որով լիովին հավաստվում էր Արամ Անտոնյանի ներկայացրած փաստաթղթերի բնագրերի ներքին վավերականությունը: Ռեոպերի հիշյալ տեղեկագիրը, ինչպես նաև Արամ Անտոնյանի՝ փաստաթղթերին կից ներկայացրած հուշագիրը, վճռական դեր խաղացին Սողոմոն Թեհլերյանին արդարացնող դատավճիռ կայացնելու գործում[1]:

Ինչպես նշվում է աշխատության առաջաբանում, հեղինակի շարադրանքի առանցքը թուրք բարձրաստիճան մի պաշտոնյայի՝ Հալեպի գաղթականական տեսչության նախկին գլխավոր քարտուղար Նայիմ բեյի հուշերն են՝ եղեռնի սարսափների ականատես-վկա հեղինակի անհրաժեշտ մեկնաբանություններով: Այդ հուշերը, ինչպես նաև հիշյալ փաստաթղթերի բնագրերը Արամ Անտոնյանին էր տրամադրել ինքը՝ Նայիմ բեյը, որը դեռ իր ժամանակին հայերի բնաջնջման վերաբերյալ հրահանգները չկատարելու համար պաշտոնանկ էր արվել:

Առաջին գլխի սկզբում հեղինակը կատարում է մեր կարծիքով մի շատ կարևոր պարզաբանում. նա գրում է, որ ամենից զարհուրելի եղեռնագործությունները և մեծագույն ջարդերը կատարվեցին ոչ թե 1915-ին, այլ 1916-ին և նրանից հետո, հետևաբար անապատների մեջ, ուր արդեն մեկ տարի էր, ինչ տանջվում էին իրենց օջախներից բռնորեն տարագրված հայ գանգվածները[2]: Նա գրում է, որ հայ ժողովուրդը անապատ էր քշված արդեն, երբ ի հայտ եկավ նրա նկատմամբ կառավարության ունեցած բուն մտադրությունը: «Այնևս ուժէ ինկած,— գրում է Ա. Անտոնյանը,— նույնիսկ իրենց մնացած կյանքի շուքին բեռը անգամ տանելու անկարող, աղքատացած, թշվառացած, զուլումին ու զարհուրանքին, բոլոր կորուստներուն, բոլոր հիվանդությանց և արհավիրքներուն մեջ

[1] Տե՛ս Հուշամատյան Մեծ եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 234—235:
[2] Նշվ. աշխ., էջ 15:

խելաթեղ դարձած ժողովուրդ մըն էր ատիկա, որ անխուսափելիորեն մահվան դատապարտված էր արդեն այդ տարամերժ անապատներուն մեջ»[1]: Շարունակելով իր միտքը, նա ավելացնում է, որ նույնիսկ այդ զարհուրելի կյանքն էլ կառավարությունը շատ համարեց և անապատների մեջ կազմակերպեց երեք սոսկալի ջարդեր՝ Ռես-ուլ-Այնում՝ 70 000, Ինթիլիում՝ 50 000, սրանք Բաղդադի երկաթգծի թունելի վրա աշխատողներն էին, Տեր-Զորում՝ 200 000: Հեղինակի վկայությամբ այս թվերի մեջ չեն մտնում սովից և հիվանդություններից մահացածները, որովհետև միայն Խալահիեում տիֆից մահացան 150 000, Կատմայում և Ազազում՝ 60 000, Պապեում՝ 80 000, Մեսքենեում՝ 100 000, որոնցով և նահատակների թիվը անցնում է մեկ միլիոնից: Հեղինակը հաղորդում է, որ նշված թվերը վերցված են հատուկ մեռելաթաղ ջոկատների հաշվետվություններից, որոնք անգամ չէին հասցնում թաղել բոլորին, ուստի նեխող դիակները հոշոտելու համար շրջակա գյուղերից իջնող վայրենացած շների ոհմակները դիտվում էին արդեն իբրև աստծո կողմից ուղարկված բարիք:

Այնուհետև հեղինակը խոսքը տալիս է վերոհիշյալ Նայիմ բեյին, որը գրում է. «Հայոց եղերական տարագրության և սպանության խնդիրը, որ թուրք անունը մարդկության հավիտենական անեծքին արժանի կդարձնե, անանկ կկարծեմ, թե համաշխարհային պատմության մինչև այսօր արձանագրված զարհուրելի դեպքերուն ոչ մեկուն կնմանի: Թուրքիո ընդարձակ հողամասին որ անկյունն ալ որոնվի, որ ամենամութ խորշն ալ խուզարկվի, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայու դիակներ և կմախքներ պիտի գտնվեն»[2]:

Ավելորդ չէ մեջ բերել Հալեպի կուսակալությանն ուղղված ներքին գործերի մինիստրության ծածկագիր հեռագրերի մի երկու նմուշ, որոնք օգտագործել է Նայիմ բեյը: Ահա դրանցից մեկը. «Ծանոթ անձնավորությանց (խոսքը հայերի մասին է— Մ. Կ.) առաքման նպատակը հայրենիքին ապագա բարօրության ապահովումն է, որովհետև ատոնք՝ ուր որ ալ բնակեցվին՝ դարձյալ ետ չպիտի կենան իրենց անիծապարտ գաղափարներեն, պետք է աշխատիլ, որ կարելի եղածին չափ նվազի անոնց թիվը»[3]: Նայիմ բեյին այն հարցադրմանը, թե սկսված սովից ու համաճարակներից ոչնչանում է նաև շրջակա գյուղերի արաբ ազգաբնակչու-

[1] Նշվ. աշխ., էջ 17:
[2] Նշվ. աշխ., էջ 19:
[3] Նշվ. աշխ., էջ 23:

թյունը, նրան պատասխանում են, որ հոգ չէ, որովհետև մի օր էլ նրանց հերթը պիտի գա:

Երկու ուրիշ հեռագրերով Թալեաթը արգելում էր թուրք պաշտոնյաներին հայերի բողոքների հիման վրա պատասխանատվության կանչել, որը կարող էր սառեցնել մարդասպանների եռանդը, իսկ մեկ ուրիշ հեռագիր էլ հանձնարարում էր, նման կարգի բողոքագրերն ընդունել, սակայն չտանել:

Աշխատության երկրորդ գլխում, խոսելով Ռես-ուլ-Այնի և Ինթիլիի ջարդերի մասին, Ա. Անտոնյանը գրում է, որ 1916-ի փետրվարին այստեղ ժամանեց Վանի նախկին կուսակալ հայտնի Զևդեթ բեյը, որը, կարծեք, քաջարի վանեցիներից վրեժխնդիր լինելու համար կարգադրեց կոտորել բոլոր ողջ մնացածներին: Հեղինակը բառացիորեն բերում է գաղթականների առաքման գծով թուրք պաշտոնյա Ադիլ բեյի հետևյալ խոսքերը՝ ուղղված ստորադրյալներին, որոնք, կարծեք, այդ, ժամանակներում յուրատեսակ կարգախոս էին դարձել թուրք շատ պաշտոնյաների համար. «Հրլլա որ հատ մը անգամ ողջ թողուք, պզտիկները մանավանդ, մինչև 7—8 տարեկանները, չթաղեցեք ամենևին, որովհետև եթե ողջ թողուք՝ վաղը ատոնք մեզմէ վերժ լուծելու պիտի գլնեն»[1]:

Աշխատության երրորդ գլուխը պատմում է Տեր-Զորի ճահիճի մասին: Ա. Անտոնյանի վկայությամբ միմիայն Հալեպից Ռես-ուլ-Այնի և Մեսքենեի ճանապարհով շուրջ 200 000 հայ ուղարկվեց, և դրանից միայն 5—6000-ը ողջ մնաց, մանուկները Եփրատի մեջ նետվելով մեռցվեցին, կանայք՝ զանազան ճանապարհների վրա, ժանդարմների ու խաժամուժի խժդժությամբ ու վայրենությամբ՝ սվինով կամ հրազենով սպանվեցին: Նա վկայում է նաև, որ Զեքի բեյը Տեր-Զորից տեղահանեց հայերին՝ իբր Մոսուլ ուղարկելու համար, բայց ոչ ոք այնտեղ չհասավ: Իշխանությունները ստեղծեցին սպրեետական սով, որի հետևանքով հայ գաղթականները նախ՝ կերան եղած էշերը, շները, կատուները, հետո՝ ձիերի, ուղտերի դիակներ, և երբ արդեն ուտելու ոչինչ չմնաց, մարդիկ սկսեցին ուտել մարդկային դիակներ, առավելապես՝ փոքր երեխաների, իսկ մահամերձ երեխաներն արդեն գիտեին, որ մեռնելուց հետո իրենց պիտի ուտեն[2]: Թուրքերը 550 երիտասարդների բանտարկեցին՝ յոթ օր թողնելով առանց ուտելիքի ու ջրի, որի հետևանքով վերջիններս սկսեցին միմյանց բզկտել ու ողջ-ողջ ուտել: Ահա թե ինչու մի դեղագործի

[1] Նշվ. աշխ., էջ 56:
[2] Նշվ. աշխ., էջ 110:

պատրաստած թույնի հաբերը մարդիկ հատը մի ոսկով ձեռքից-ձեռք էին խլում:

Գրքի վերջաբանում Ա. Անտոնյանը դնում է թուրք ժողովրդի պատասխանատվության հարցը և աներկբայելիորեն հայտարարում, որ մեկ միլիոնից ավելի հայերի սպանդի գործում կառավարության հետ հավասարապես հանցավոր են օտոմանյան կայսրություն կոչվող գեհենի մեջ բնակվող բոլոր իսլամ ժողովուրդները[1]:

Եղեռնի պատմության վերաբերյալ փաստավավերագրական կարևոր աղբյուր է դեպքերի ականատես, տարագրության դառնությունը անձամբ ճաշակած ու չարաղանից մազապուրծ Նազարեթ Փիրանյանի ծավալուն հուշագրությունը[2]:

Ինչպես նկատում է հուշագրության առաջաբանի հեղինակը՝ Ե. Մեսիայանը, իր կյանքը և փորձառությունները պատմելով, Ն. Փիրանյանը իր ապրած ողբերգական դրվագների մեջ ներկայացրել է ամբողջ տեղահանված ու բնաջնջված կամ գեհենից փրկվելու ձգտող հայության համամնման ընդհանուր պատմության մի փոփոխակը: Նա նշում է, որ հայ ազգի կրած մեծ աղետի պատմությունը ասպագա գրողները Ն. Փիրանյանի գրքում կարող են գտնել որքան պատմական, այնքան է հոգեբանական ճշմարտություններ: Լիիրավ հիմքով առաջաբանի հեղինակը գտնում է, որ Ն. Փիրանյանի գործի պատմական արժեքը ականատեսի ճշմարիտ պատմություններն են՝ իրենց բացարձակ վավերականությամբ:

Գրքի առաջին բաժիններից մեկում Ն. Փիրանյանը խոսում է «թեքէալիֆի հարպիէ» (պատերազմական ևսպառ)-ի մասին, գրում, որ այդ անվան տակ իբր զինվորական կարիքների համար թուրքական իշխանությունները բռնագրավում էին բոլոր հայ մեծաքանակ ու փոքրաքանակ վաճառականների ապրանքները, թափանցում էին նույնիսկ ամենահետին գյուղերը, թալանում տառացիորեն ամեն ինչ՝ այդ ամենի դիմաց տալով մի ընկալագիր՝ «Փոխարժեքը գումձ-ի է պատերազմից վեց ամիս հետո» զավեշտական պարտավորությամբ, որը սովորաբար ստորագրում էր մի ինչ-որ վեցերորդական պաշտոնյա: Նա նույնպես խոսում է հայ շալակավորների անլուր շահագործման մասին, որոնք պարտավոր էին ոտքով անընդհատ ուղերթ կատարել մինչև Կարին, Մուշ, Բիթլիս:

Նկարագրելով հայ տարագիրների համար ստեղծված դժոխային

[1] Նշվ. աշխ., էջ 248:
[2] Փիրանյան Նազարեթ, Խարբերդի եղեռնը, Բոստոն, 1987:

պայմանները, Ն. Փիրանյանը վկայում է, որ թուրքերը հաճախ Եփրատի երկայնքով սփռված աքսորյալների հանգրվաններին էին մոտենում աղբատար սայլերով և դիակների հետ միասին տանում ու գետն էին լցնում նաև կենդանի մնացածներին:

Ն. Փիրանյանը տուղ, բայց հուզումնալի էջեր է նվիրել խարբերդցի հայդուկային փոքրաթիվ խմբերի հուսահատ կռիվներին:

Եղեռնի հուշապատումների շարքում արժանի տեղ պետք է հատկացնել այնօրյա պոլսահայ ուսուցիչ Գաբրիել Թագվորյանի աշխատությանը[1], որը, ինչպես ինքն է գրում, երկյուղածորեն նվիրել է իր հոր, մոր, երեք դեռահաս քույրերի, բանտի ընկերների, ինչպես նաև կիրճերի, ձորերի մեջ հոշոտված, կախաղանի վրա խեղդամահ, գնդակահար, անապատների մեջ ծարավահյուծ, ջրամույն կամ խարույկների մեջ մոխրացած, անթաղ կամ թաղված, անհայտ կամ հայտնի մահով գլխատված անհաշվելի հայ նահատակների նվիրական հիշատակին:

Ներկայացնելով գրքի շարադրման սկզբունքները, Գ. Թագվորյանը այն հավատամքն է հայտնում, որ պատմական հուշագրությունը սերտորեն կապված է իրականության հետ, և ձևափոխել այն՝ կնշանակի հեռանալ պատմության կետ-նպատակից՝ ճշմարտությունից: Նա ավելացնում է նաև, որ անհատի սեփական ապրումներ լինելով հանդերձ, գիրքը միաժամանակ բյուրավորների հուշագրությունն է, որովհետև շատ պարզ է հայկական ողբերգության թեման՝ կանխամտածվածությամբ գործող ոճրագործ մի կառավարություն, որը հետապնդում ու կոտորում է իր անմեղ հպատակներին՝ գորավիգ ունենալով իր հետամնաց ժողովուրդը: Միաժամանակ հակազդեցության օրենքով զոհերի մեջ արթնանում և իր բարձրակետին է հասնում ինքնապաշտպանության փրկարար բնազդը՝ ամեն հնարք գործ դնել ի դերև հանելու համար անողոք թշնամու որոգայթներն ու սադրանքները:

Գիրքը գրված է լավատեսական մղումներով, որի հաստատումն է հեղինակի այն միտքը, թե. «Մեր պատմության մեջ 1915-ը կատարած է այն դերը, որ բռնորեն մղելով մեզ կերտելու նոր հայը, որ թոթափած է վերջապես իր անցյալ ոռմանտիկ ոգին և երևան եկած է իրատես, թրծված, խիզախ և ճակատ առ ճակատ կյանքին նայող հայը: Իրերու բերումով, ան պատմության առջև հանդիսավոր հանձնառությունը ստանձնած է նվիրվելու, նյութական և բարոյական ամեն հնարավորություններով լեցուն մեր կենսաւորոգ հայրենիքի սպասին և անոր լուսաշող ապագայի հանդերձումի սատարումին»[1]:

Գրքի հետագա ողջ շարադրանքը լեցուն է ձևրբակալությունների, աքսորի, բանտախցերում տեղի ունեցող լկնաքների, տարատեսակ մահապատիժների և թուրքական այլևայլ բարբարոսությունների մանրամասն ու ճշմարտապատում նկարագրություններով, որպիսիք հեղինակը հանձն է առել ներկայացնել սերունդներին, որպեսզի, ինչպես ինքն է ասում, պատմությունը փակ գերեզմանների շարք չմնա:

Տալով նախապատերազմյան շրջանի Թուրքիայի ընդհանրական պատկերը և հայ ժողովրդի անագորույն վիճակի խտացված նկարագիրը, հեղինակը գրում է. «Քսաներորդ դարուն մեջ, նախապատմական մոայլ շրջանի մը անասնաբարոյությունը, սանձարձակությունը, անիշխանությունը, կապրեր ու կվայելեր թուրքը, ի հաշիվ խաղաղ, շինարար, պարկեշտ և ազնվաբարո հայ ժողովրդին: Ինչ հեգնանք քաղաքակրթության»[2]:

Գ. Թագվորյանը ցավով է նշում, որ նախկին խարիսխված մտայնությունը, թե թուրքը երազել է ջնջել միայն հեղափոխականներին, հարուստներին ու քաղքենի բարգավաճ դասերին, եղեռնի գործադրման ընթացքում միայն անհետացավ ամբողջովին, և բոլորը համոզվեցին, որ թշնամին նպատակ ունի բնաջնջել բովանդակ հայ ժողովուրդը թե իր հայրենիքում, թե դրսում և սրբել նրա անունը նոր պատմությունից ու կյանքի բեմից: Հեղինակի կարծիքով, եթե մտածողության այդ հեղաշրջումը տեղի ունենար եղեռնի առաջին իսկ օրերին, հայ ժողովուրդը կարող էր թերևս անսպասելի մի հրաշք գործել՝ զանգվածորեն ծառանալով ավազակաբարո կառավարության դեմ, սակայն այդ հատակատեսությունը եկավ միայն այն ժամանակ, երբ արդեն հայ ժողովուրդը մի անշունչ դիակ էր՝ բզկտված ու անդամահատված:

1952-ին Փարիզում հասարակական գործիչ Լևոն Մեսրոպի նախաձեռնությամբ հրատարակվեց եղեռնից վերապրողների հուշագրությունների մի չափազանց արժեքավոր ու ծավալուն ժողովածու, որոնք ստացվել էին աշխարհի տարբեր ծագերից[3]: Ինչպես առաջաբանում նշում է ժողովածուի նախաձեռնողը, հատորը ոչ թե եղեռնի սիստեմատիկ պատմությունն է,այլ ականատես զոհերի վկայությունների հավաքածուն, որը

[1] Թագվորյան Գաբրիել, Գորշ գայլը կատղեր էր (վկայություններ և տպավորություններ), Կահիրե, 1958:

[1] Նշվ. աշխ., էջ 11:

[2] Նշվ. աշխ., էջ 350:

[3] Աղետ և վերածնունդ: Հեղինակ՝ աղետեն վերապրողներ, Փարիզ, 1952:

առատ նյութ կարող է մատակարարել 1915-ի լիակատար պատմության ապագա գրողներին: Արձանագրելով, որ մեր պատմության մեծագույն աղետի ամենատխուր վերհիշումն է հրատարակվող գիրքը, նա ընդգծում է, որ միաժամանակ այն մեր ժողովրդի անընկճելի կենսունակության վավերաթուղթ է, լուսավոր ապագայի հանդեպ հավատք ներշնչող խանդավառության աղբյուր: Ընտելով, որ հայ ժողովրդի հույսը Հայաստանն է, ներգաղթը, հայրենիքի հարուստն վերելքը, ժողովածուն կազմողը եղեռնի աճյավոր տեսարաններին զուգահեռ հատորում զետեղել է նաև հայ ժողովրդի անհնավատալի վերածնունդը ավետող լուսանկարներ:

Գրքի սկզբում դրված է Հայկ Թորոյանի ընդարձակ հուշերը, որի հեղինակը եղել է թուրքական բանակում ծառայող գերմանացի սպայի հատիարզ, որի հետ էլ ծառայության բերումով ճանապարհորդել է Հալեպից մինչև Բաղդադ՝ մոտ 1000 կմ, անցել Եփրատի երկայնքով, ուր ցրված էին տարագիր հայերի քարավանները՝ կոտորակված, սովահար ու տակավին թուրքերի վայրագություններին ենթակա: Հ. Թորոյանին հաջողվում է հարցաքննել աքսորյալների և գրի առնել տեսածներն ու լսածները: Ծանր տպավորությունների տակ Պարսկաստանում գերմանացի սպան խելագարվում և ինքնասպանություն է գործում, իսկ նրա հատիարզին հաջողվում է փախչել Կովկաս: Ինչպես նշում է Լ. Մեսրոպը, 1916-ին Թիֆլիսի հայկական թերթերում առաջինը Հ. Թորոյանը գուժեց Թուրքահայաստանի ներքին նահանգների ողբերգությունը, որի մասին շշուկներ էին միայն լսվել մինչ այդ: Դրանից հետո էր, որ անգլիական կառավարությունը Թիֆլիս ուղարկեց լորդ Բրայսին, որը և թուրքական բանակի նախկին հայ զինվորի վկայությունները վերածեց «Կապույտ գրքի»: Հիշյալ փաստն ինքնին ընդգծում է Հ. Թորոյանի հուշերի վավերագրական արժեքը:

Հ. Թորոյանի հուշերին հաջորդում են ևս 31 վերապրողների հուշեր, որոնց մի մասը հատուկ հանձնախմբի կողմից գրի են առնվել դեռևս 1916-ին, Կովկասում հիմնված որբանոցներում, և որոնցից մեկն էլ ապագայի հայ նշանավոր բանաստեղծ, որբանոցի սան Սողոմոն Տարոնցու հուշերն են:

Եվ ահա հատորի կազմման աշխատանքների ընթացքում պարզվեց մի անակնկալ ու կսկծալի իրողություն. Միջագետքի հայկական գաղութներից տեղեկություններ ստացվեցին, որ անապատի արաբական վրանների տակ դեռևս գոյություն ունեն կիսով չափ կամ ամբողջովին արաբացած հայ ընտանիքներ, կանայք ու երեխաներ, շուրջ 5 000 մարդ,

որոնք թողնված են բախտի քմահաճույքին: Այս հանգամանքն էլ պայմանավորեց ժողովածուի երկրորդ գրքի[1] հանդես գալը: Հիշյալ հատորը, կազմողի արտահայտությամբ, կենդանի-նահատակների՝ արաբացած հայ-բեդվինների հուշերի գիրքն է, որը հնարավոր դարձավ գյուխ բերել տերզորաբնակ տիկին Փառանձեմ Պալյանի ակտիվ աջակցությամբ և աշխատակցությամբ, որը և ստանձնեց հուշ-վկայությունների հավաքման ծանր պարտականությունը: Հատորում զետեղված են վավերաթղթերի արժեք ներկայացնող շուրջ 60 հուշագրություններ:

Ուշացած խոստովանության նոտաներով է գրված Կ. Պոլսում հրատարակվող դաշնակցության օրգան «Ազատամարտի» այնօրյա աշխատակից Լևոն Մոզյանի հուշագրությունը[2]:

Մասսայական տեղահանությանը նախորդած ժամանակաշրջանի քաղաքական մթնոլորտի իրական նկարագիրը տալու և կուսակցությունների գործելակերպը ցուցահանելու համար հուշագրողը պատմում է հետևյալ միջադեպը. 1913-ին Կ. Պոլսում մեծ շուքով տոնվում էր հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակները, երբ ինչպես և դաշնակցական ուսանողական միությունների ցերեկույթներում հազարավոր հայերի ծափահարությունների ներքո ցուցադրվում են հայ թագավորների ու զինանշանների նկարներ: Նույն երեկոյան 5—6 ուսանողներ ձերբակալվում են և տարվում Կ. Պոլսո զինվորական հրամանատար Ջեմալ փաշայի մոտ, որը ասում է, թե հայերը անջատողական ձգտումներ ունեն, անկախության են ձգտում, ու հրահանգում է իր խոսքերը հաղորդել հայ քաղաքական ղեկավարներին՝ ավելացնելով, որ եթե հայերը շարունակեն նման «դավաճանական գործունեությունը» թուրքական պետության դեմ, թող գիտենան, թե կառավարությունը բավական ուժեղ է նրանց բնաջինջ անելու համար՝ առանց խնայելու ծեր ու մանուկի: «Եվ մեր ղեկավարները,— ցավով շարունակում է հեղինակը,— լսելով այդ բոլորը, ծիծաղ ու արհամարհանք միայն ունեցան... Թուրքիո և անոր ուժերուն հանդեպ մեր արհամարհանքը մեծ է, և մյուս կողմէ ալ անսահման վստահություն ունենինք, գերագնահատելով մեր ուժերը և նաև մեծ պետությանց միջամտության կարելիությունը»[3]: Կամ՝ երբ ձերբակալում են իրեն՝ Լ. Մոզյանին, ու տանում ոստիկանատուն,

[1] Տես-Ջոր: Հեղինակ՝ աղետեն վերապրողներ: Փարիզ, 1955:

[2] Լևոն Մոզյան, Աքսորականի մը ոդիսականը (Սև օրերու հիշատակներ), Բոստոն, 1958:

[3] Նշվ. աշխ., էջ 10:

ոստիկանապետը հարցնում է, թե ինչո՞ւ է նա թուրքական ֆեսը փոխարինել գլխարկով, վերջինս հանդգնորեն պատասխանում է, թե ապա ինչո՞ւ է ոստիկանապետը դեղին վերարկու հագել, իրեն էլ դա դուր չի գալիս: «Կզգայի, թե պատասխանս ծանր էր,— այդ առիթով գրում է. Լ. Մոզյանը,— մեծամտության ու արհամարհանքի խառնուրդ այս վերաբերումով շատ վերեն նայելու վարժված էինք մեր դարավոր դրացիին, որ մեր դարավոր թշնամին ալ էր նաև, ահոր ուժերուն և կարելիությանց վրա: Այս ընթացքը մեզ ուռեցուցած էր քաուչուկէ գնդակի մը պես, որ լեցված էր օդով միայն, առաջին հարվածին՝ պատռվելու և պարպվելու ենթակա: Այս ոգիով և այս տրամադրությամբ լեցուն էր որոշ շրջանակներու հայկական մտայնությունը, և ձերբակալությանս այդ առաջին օրը՝ ես կներկայացնեի այդ մտայնությունը հավատարմորեն»[1]:

Հետագա էջերում հեղինակը ափսոսանք է հայտնում, թե ինչո՞ւ իրենք միշտ համառորեն լավատես եղան, ինչո՞ւ Տեր-Զորը չկարողացան նախատեսել, օրորվեցին սին ակնատումներով ու դրա փոխարեն կիզիչ ճամփաների վրա որևէ ելք գտնելու հույսով ու հավատքով՝ նույնիսկ արկածախնդրության չդիմեցին, ու գտնում, որ հարկավոր էր կրակի տալ շուրջ բոլորը, և հոգ չէ, թե իրենք էլ կխանձվեին այդ կրակից, միևնույն է, ի վերջո առանց դրա էլ թշնամու վառած կրակի վրա մոխրացան[2]:

Եղեռնի պատմության վերաբերյալ հարուստ փաստական նյութ է պարունակում Տրապիզոնի կաթոլիկական թեմի վիճակավոր Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանի հուշերի մեծադիր ու ստվարածավալ (շուրջ 700 էջ) հատորը[3]:

Գրքի առաջին մասում զարգացվում է այն միտքը, թե Օսմանյան կայսրության մեջ բնակվող հայերի քնաջնջումը հղացված և ծրագրված էր երիտթուրքերի կուսակցության կողմից, արտահայված՝ Բ. Դռան կողմից և գործադրված՝ քաղաքացիական ու զինվորական իշխանությունների օժանդակությամբ ու քաջալերությամբ՝ խլամ բնակչության կողմից, հովանավորությամբ՝ տարագրյալների հսկողության համար առանձնացված պահակազորքերի: Հեղինակը նշում է, որ երիտասարդ թուրքերը իշխանության գլուխ անցնելուց հետո ուրիշ բան չէին երազում, քան

[1] Նշվ. աշխ., էջ 13—14:

[2] Նշվ. աշխ., էջ 40:

[3] Հովհ. արք. Նազլյան, Հուշեր, Ա հատոր, Բեյրութ, 1960: Աշխատությունը ֆրանսերեն լույս է տեսել 1951-ին, հայերենի թարգմանիչն է դոկտ. Համլյակ Ստեփանյանը:

մեջտեղից վերացնել փոքրամասնություն կազմող ցեղերը՝ ձուլելով նրանց թուրքերի հետ, և այդ տեսակետից հայերն էին, որ կազմում էին առաջին թիրախը, որովհետև նրանք թվաքանակով, ազգային կազմով, սոցիալ-տնտեսական դրությամբ կարևորագույն հավաքականություն էին ներկայացնում: Այնուհետև նա քննարկում է հայկական ջարդերը քաղաքական և կրոնական հայեցակետով ընդհանրապես, երիտթուրքերի առաջ քաշած պատճառաբանությունները՝ արդարացնելու համար իրենց գործադրած բնաջնջման ծրագիրը. հայ կաթոլիկների նկատմամբ երիտթուրքերի ունեցած մասնավոր մոտեցումը: Այդ կապակցությամբ նա գրում է. «Հայ կաթողիկէները, իրողությամբ՝ թեև ավելի կարգապահ էին և ավելի ներամերձ՝ բոլորված իրենց Պատրիարքարանին, և Թուրքիո կայսրության ամբողջ տարածության վրա սփռված թեմերու իրենց Եպիսկոպոսներուն շուրջ, և իբրև կրոնակից Արևմուտքի քրիստոնյաներեն մեծ մասին, Երիտասարդ թուրքերու կողմէ նկատված էին որպես սկզբունքով և վարդապետությամբ դավադրական տարր մը, անջատողական հակումներով ներշնչված՝ ընդդեմ Թուրքիո բացարձակ անկախության»[1]: Բացի այդ, շարունակում է հեղինակը, հայ կաթոլիկները ավելի վտանգավոր տարր էին դիտվում, քան լուսավորչական հայերը, քանի որ նրանք Ֆրանսիայի պաշտպանյալներն էին, և Թուրքիայի զինակից երկրների կաթոլիկները ևս շահագրգռված էին նրանցով, որի շնորհիվ կարող էին պատճառ դառնալ եվրոպական երկրների միջամտությանը:

Փաստական տեսակետից արժեքավոր է աշխատության այն հատվածը, որտեղ խոսվում է ջարդերի հենց ընթացքում համաշխարհային հասարակայնության բարձրացրած զայրալի բողոքի մասին, քաղվածաբար մեջ են բերվում բազմաթիվ հատվածներ մեզ համար անհաս մի շարք հատկապես օտարալեզու վավերաթղթերից, քաղաքական, կրոնական ու հասարակական գործիչների նամակներից ու ելույթներից:

Հայերի հանդեպ երիտթուրքերի բռնած թշնամական դիրքի քաղաքական պատրվակներին, որոնցից առաջնագույնը հայկական ապստամբության մասին ստահոդ առասպելն էր. Հ. Նազլյանը ավելացնում է ևս երկուսը՝ բարեկորոգումների խնդիրը և օտար մրցակցությունը՝ միջամտելու համար Թուրքիայի ներքին գործերին[2]:

Աշխատության երկրորդ մասը ամբողջությամբ նվիրված է տեղա-

[1] Նշվ. աշխ., էջ 18:

[2] Նշվ. աշխ., էջ 68:

հանութեան ու եղեռնի գործադրութեանը ըստ կաթոլիկական թեմերի՝ Մշո, Կարնո, Տրապիզոնի (որի եպիսկոպոսն էր հեղինակը— Մ. Կ.), Սեբաստիա-Թոքատի, Մալաթիայի, Խարբերդի Տիգրանակերտի, Մարդինի (Արևելյան Միջագետք), Պրուսիայի, Անգորայի, Կեսարիայի, Սդանայի, Մարաշի, Հալեպի արքեպիսկոպոսության: Յուրաքանչյուր թեմի վերաբերյալ հաղորդվում են արժեքավոր նախագիտելիքներ, ինչպես նաև կարևորություն ներկայացնող վիճակագրական տեղեկություններ:

Վերջում գրքին կցված են յոթ վավերագրերի տեքստեր:

Վավերագրական արժեք է ներկայացնում Գրիգոր Պողարյանի հրատարակած գիրքը[1]:

Գրքում ամփոփված են Համայի շրջանի Սելիմիե ավանում ապաստանած 13 հայուհիների ու պատանիների՝ դեռևս 1919-ին գրի առնված վկայություններ:

Հեղինակը դրանց կցել է նաև Այնթափի տեղահանության մասին սեփական հիշողությունները, ինչպես նաև բավականին ընդարձակ իր «Տարագրի օրագիրը», որն ընդգրկում է 1915 թ. հուլիս—1916 թ. դեկտեմբեր շուրջ 500-օրյա ժամանակաշրջանը:

Գրքի հեղինակը նշում է, որ Հայկական հարցի լուծման բանալին արևմտահայության բնաջնջումն էր, հղացված Իթթիհատի վերնախավի՝ Թալեաթի և Էնվերի կողմից: Նա չի բաժանում այն կարծիքը, թե վերջիններիս համաստիճան մեղսակից էր նաև Ջեմալ փաշան, որը, հեղինակի վկայությամբ, դեմ է եղել հայաջինջ քաղաքականությանը և անձամբ ճնարավորություններ է ստեղծել բազմաքանակ հայերի փրկության համար՝ ընդգրկել է նրանց արհեստանոցներում, չի ոչնչացրել իսլամ չընդունողներին:

Գր. Պողարյանը պարզաբանում է, որ համեմատաբար թեթև եղավ այն տարագիրների վիճակը, որոնք, ի տարբերություն հետիոտն աքսորյալների, երկաթուղով ընկան Հալեպ: Նման «բախտավորություն» վիճակվեց նաև Այնթափից տեղահանված առաջին վեց քարավաններին, որոնց, հեղինակի վկայությամբ, արաբ ասպնջական ժողովուրդը, չհամակերպվելով Թալեաթի ոճրապատ ծրագրերին, չկոտորեց, թեև սովն ու համաճարակները խլեցին տասնյակ հազարավորների կյանքը:

Մեծ եղեռնի անապատային արհավիրքների և հուսահատական ու

[1] Գրիգոր Պողարյան, Ճեղապատ թուրքը: Վկայություններ՝ քաղված հրաշքով փրկվածներու զրույցներեն, Պեյրութ, 1978:

գերմարդկային ոգորումների պատկերներով է հյուսված Մելքոն Տեր-Մելքոնյանի հիշողությունների մատյանը[1]: Հեղինակի ծննդավայրը Այնթափն է, որտեղից էլ նախատագիրը նրան տարել է Չոր-Մարգվան՝ Ալեքսանդրետի ծոցի շրջանը:

Հեղինակը, որը պատերազմն սկսվելու պահին 20—21 տարեկան երիտասարդ էր, վկայում է, որ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո մթնոլորտը հիշեցնող դարձավ, որովհետև «թեքեալիֆի հարպին» կոչված բռնագրավումները մի կողմից, զինվորագրության արհավիրքը մյուս կողմից, տնտեսապես-ողբալի կացության մատնեցին երկրի ժողովուրդներին և, մասնավորապես, հայերին, որոնք ակնհայտ կերպով ավելի էին ենթարկվում կողոպուտի, քան մյուսները[2]: Նա գտնում է, որ հայերի և թուրքերի հարաբերությունների վատթարացման պատճառը թուրքն էր:

Մ. Տեր-Մելքոնյանը գտնում է, որ բռնագաղթի ենթարկվող ժողովրդի արդար իրավունքն էր ինքնապաշտպանության դիմելը, և, ավաղ, որ ամբողջ Թուրքիայում դրան ընդամենը չորս քաղաք դիմեց, ուստի միանգամայն շինծու են թուրքերի հորինվածքները Վանի, Ուրֆայի և Շապին-Գարահիսարի «ապստամբությունների» մասին, որով նրանք ձգտում են արդարացնել տեղահանությունն ու կոտորածը: Նա ամբաստանություն է համարում նաև թուրքերի կողմից Կոլկասում ծայր առած կամավորական շարժման վկայակոչումը, ընդգծելով, որ տակավին կամավորական շարժում գոյություն չուներ, երբ թուրքերն սկսեցին խորթ աչքով նայել հայերին՝ անարգեցին, հայհոյեցին, հալածեցին, լրտեսեցին ու բանտերը լցրեցին հազարավորների՝ իբրև կասկածելի և կախաղանով պատժեցին շատ անմեղների՝ հայտարարելով նրանց զինվորական փախստականներ կամ պարզապես պետության թշնամիներ: Ուրեմն միանգամայն բնական էր հայերի դիմադրությունն ընդդեմ թուրքերի, ի շահ նրանց թշնամի դաշնակիցներին[3]:

Հեղինակը վկայում է, որ հայերի աքսորի վերաբերյալ օրենքը կառավարությունն արձակեց՝ Ազգային երեսփոխանական ժողովին վավերացնել տալու պայմանով, իսկ իրենց՝ ծովեզերյա բնակիչներին տեղահանելը քողարկեց այն պատճառաբանությամբ, թե ծովեզերքը գտնվում

[1] Մելքոն Տեր-Մելքոնյան, Կյանքի և մահվան միջև, Բեյրութ, 1974:

[2] Նշվ. աշխ., էջ 87:

[3] Նշվ. աշխ., էջ 90:

է թշնամու զրահանալների ռմբակոծման մշտական սպառնալիքի տակ, ուստի բարեխնամ կառավարությունը, զերծ պահելու համար բնակչությանը հավանական վտանգներից, ցանկանում է փոխադրել նրանց ավելի ապահով մի վայր, օրինակ՝ Տեր-Զոր: Թուրքերը գովում էին անգամ աքսորավայրերի բնակլիմայական պայմանները, «բարեբեր» հողերը, և խաբված մարդիկ նույնիսկ ձգտում էին օր առաջ հասնել այնտեղ: Նա զավեշտով է հիշում, որ ինքն անգամ կարթեր ձեռք բերեց՝ Եփրատում ձուկ որսալու համար[1]:

Նկարագրելով առհասարակ գաղթականների ահավոր վիճակը, Մ. Տեր-Մելքոնյանը նույնպես վկայում է, որ մասնավորաբար ադանացիները մեծապես օգտվեցին իրենց նախկին կուսակալ Ջեմալ փաշայի ընձեռած հնարավորություններից ու նրա տված արտոնագրերով ընկան Դամասկոս և շրջակա քաղաքները՝ ազատվելով գաղթականի անհրապույր կյանքից: Նա հաստատում է, որ «Ջեմալ փաշան նույն վերաբերմունքը չունեցավ արաբ ազգին հանդեպ (որքեմն չդադարեց ընդհանրապես ջարդարար լինելուց— Մ. Կ.), բայց արդար ըլլալու համար պիտի խոստովանել, որ շատ մը հայեր, օգտվելով անոր բարի տրամադրություններեն, փրկվեցան ստույգ մահէ: Այն հայերը, որոնք կարողացան մուտք գործել իր ազդեցության գոտիին մեջ, բոլորն ալ, առանց բացառության, մինչև պատերազմի վախճանը ավելի տանելի պայմաններու մեջ ապրեցին և չենթարկվեցին որևէ հալածանքի»[2]:

Ջեմալ փաշայի «հայասիրության» վերաբերյալ նման վարկածները, մեր կարծիքով, լրացուցիչ պարզաբանման կարիք են զգում: Երիտթուրքական հեղափոխության ազդեցիկ անդամը վերջին հաշվով չէր կարող անմասն լինել ընդհանրապես հայակործան պլանների մշակումից ու իրականացումից, և, անշուշտ, լիովին պատճառաբանված պիտի լիներ նրա նկատմամբ հայ ահաբեկիչների որոշումը:

Մ. Տեր-Մելքոնյանի վկայությամբ անապատային շրջաններում Տեր-Զորի նախիջևրին համահավասար անուն վաստակեցին նմանապես Շեդադադեն և Ռաս-ուլ-Այնը, որոնց անմշակ հողերը բառի իսկական առումով ոռոգվեցին հայերի արյունով, և մակերեսը ծածկվեց անթաղ մեռելներով, իսկ գաղթականների վերջին խլյակները զոհ գնացին չեչենների ու չերքեզների գնդակներին: Նա պատմում է Էնթիլիի 5 կիլոմետրանոց երկաթուղային թունելի շինարարությունից հետո, որը համաշխարհային թունելաշինության գլուխգործոցներից մեկն է համարվում, այն կառուցող հայերի մասսայական բնաջնջման մասին, որից իրեն հրաշքով հաջողվեց խուսափել: Մ. Տեր-Մելքոնյանի գրքից տեղեկանում ենք նաև, որ ինքն է ստույգ մահից փրկել տարագրության մեջ գտնվող համբավավոր «Ամենուն տարեցույցի» հեղինակին՝ Թեոդիկին:

Գրքում էջեր են նվիրված փախստական գաղթականներից կազմված գինված խմբերի մ՛հատկապես քաջարի զեյթունցի Արամ Չոլաքյանի հայդուկային խմբի մղած հաճախավասար կռիվներին: Հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի վկայությունը կառավարության հրատարակած այն վայրագ օրենքի մասին, ըստ որի փախստական գաղթականի ինչքը անցնում էր նրան ապահողին:

Գիրքը եզրափակվում է Կիլիկիայի դեպքերի նկարագրությամբ ու նրա ամկումով, որտեղ հանգրվան էր գտել հեղինակը:

Զեյթունի տեղահանության, աքսորի, մի բուռ քաջարի լեռնցիների մղած հերոսական մաքառումների և, վերջապես, Կիլիկիայի վերջնական հայաթափման մասին է պատմում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից պրոֆ. Հ. Պողոսյանի խմբագրությամբ հրատարակված Լևոն Նորաշխարհյանի մեծարժեք հուշագրությունը[1]:

Հեղինակը, որը Զեյթունի նշանավոր Նորաշխարհյան (Ենիտունյան) գերդաստանի շառավիղներից է՝ 1895-ի հերոսամարտի ղեկավարներից մեկի՝ Նազարեթ Չավուշի որդին, անձամբ ճաշակել է տեղահանության և աքսորի բոլոր դառնություններն, ակտիվ մասնակիցը եղել զեյթունցի մի բուռ քաջերի մղած գերմարդկային մաքառումների, ուստի, ինչպես նշում է պրոֆ. Հ. Պողոսյանը, նրա բերած փաստերը և դեպքերը իրական են ու հավաստի:

Գրքի առաջին մասում, որն ընդգրկում է 1914—1919 թվականները, հեղինակը գրում է, որ Զեյթունի քաղաքապետ Նազարեթ Չավուշի տմարդի ձերբակալմամբ սկիզբ դրվեց զեյթունցիների նկատմամբ իթթիհատականների բարբարոսական քաղաքականության իրականացմանը, և Զեյթունը դարձավ մեծ ջարդերի անդրանիկ նոխազը: Նա պատմում է, թե ինչպես դավաճան Հայկ Ասմբնյանի մատնության հետևանքով Եղիա Նորաշխարհյանի հղացած ապստամբության պլանը վիժեցվեց, և Զեյթունը իր շրջակայքով գինաթափ արվեց, ու բոլոր ղեկավարները ձերբակալվեցին:

Լ. Նորաշխարհյանի հուշերը խորհել են տալիս, որ այնքան էլ ճիշտ

[1] Նշվ. աշխ., էջ 96:

[2] Նշվ. աշխ., էջ 118:

[1] Լևոն Նորաշխարհյան, Զեյթունը 1914—1921 թթ., Երևան, 1984:

չէ, թե իբր 1915-ին խաբված զեյթունցիները խոնարհաբար ենթարկվեցին տեղահանության հրամանին և դատարկեցին Զեյթունը: Փաստորեն, զեյթունցիների մեջ եղել է մի թև, որը մինչև վերջ հավատարիմ է մնացել ինքնապաշտպանության դիմելու գաղափարին, և այդ նրանք էին, որ ամրանալով Զեյթունին մոտակա ս. Ատտվածածնա վանքում՝ մինչև արյան վերջին կաթիլը համառ դիմադրություն են ցույց տվել թուրքական զորքերին, մարտում սպանելով Սուլեյման հարյուրապետին, որի անվամբ էլ ներկայումս Զեյթունը վերանվանված է Սուլեյմանլի: Ցավոք, սակայն, այդ թևը փոքրամասնություն էր, և ի վերջո Զեյթունը ենթարկվեց տեղահանության, իսկ հայ ազատագրական շարժման խորհրդանիշը համարվող Զեյթուն գյուղաքաղաքը հրդեհվեց և մոխրակույտի վերածվեց:

Խոսելով զեյթունցիների բեկորների՝ Տեր-Զոր հասնելու մասին, հեղինակը նշում է, որ հայությունը կարողացել էր դիմագրավել տեղահանության բոլոր տառապանքները, ինչ որ չէր կարող նախատեսել իթթիհատական կառավարությունը, իսկ արաբ ժողովուրդը ձեռք չէր բարձրացրել հայ մանուկների, կանանց ու ծերերի վրա, և գլխավոր վտանգը չեչեններն էին, որոնք իրենց ապրուստն ապահովում էին կողոպուտով, ջարդով, թալանով, ապրում էին թափառելով, վայրի կենդանիների նման անապատում որս որոնելով[1]:

Շարադրանքի ընթացքում դիմելով նաև զեյթունցիներ Միհրան Տեմիրճյանի, Փանոս Պոյաճյանի, Սիրանուշ Քասիմյանի, իր քրոջ՝ Սիրունի Կյուլվանեսյանի և այլոց հիշողություններին, նա վկայում է, որ գինադադարից հետո Հավրանի կողմը աքսորված զեյթունցիների մի մասը փրկվեց և վերադարձավ Զեյթուն, իսկ Տեր-Զոր քշված զեյթունցիներից մնացել էին լոկ մի քանի տասնյակ խլյակներ: «Հնձվեցան ավելի քան մեկ ու կես միլիոն հայորդիներ,— ամփոփում է Լ. Նորաշխարհյանը,— մեծ ու փոքր, ծեր ու երեխա անխնա կոտորվեցան մարդակերպ հրեշներու սադայելական հղացումներով: Սերունդներ ամբողջ բնաջնջվեցան անասպատներու խորն ու անծանոթ ճանապարհներուն վրա: Արյունն ու արցունքը ցամաքած աչքերու մեջ, լքված աշխարհեն, կարավանները կքալեին անընդհատ գիշերվան մութին մեջեն կամ արևի կիզիչ ճառագայթներուն տակ, պատառ մը հացի ու կաթիլ մը ջուրի կարոտով տոչորուն»[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 78:

[2] Նշվ. աշխ., էջ 82:

Եվ, սակայն, հպարտության զգացումով շարունակում է հեղինակը, սպանդի կողքին զեյթունցիները պատվավոր և մխիթարական էջեր էլ արձանագրեցին: Գտնվեցին մի բուռ զեյթունցիներ, որոնք, արհամարհելով թուրքի մատուցած դառը բաժակը, վրեժխնդրությամբ լցված, քաշվեցին Զեյթունի անառիկ լեռները՝ զեն ի ձեռին պատվով մեռնելու պատրաստ: Այդ քաջարի ռազմիկների անօրինակ մաքառումների պատմությանն էլ նվիրված է հուշագրության հետագա էջերը:

***

Հայոց եղեռնապատումն, իհարկե, վերը շարադրվածով չի սահմանափակվում: Իրենց արյունոտ հուշերը թղթին են հանձնել նաև տարբեր հայացքների ու զբաղմունքի տեր բազմաթիվ այլ վերապրողներ: Հիշատակելի են դրանցից Վ. Մինախորյանի[1], Մ. Էմերյանի[2], Մ. Սասունցու[3], Ղ. Մակունցի[4], Ստ. Միսքճյանի[5], Ա. Նագգաշյանի[6] և այլոց հուշագրությունները, որոնց վրա հարկ չենք համարում հատուկ կանգ առնել՝ նկատի ունենալով դրանց զուտ պատմողական-նկարագրական բնույթը: Այդուամենայնիվ, դրանք ունեն ճանաչողական-վավերագրական արժեք և կարող են օգտագործվել եղեռնի պատմության այս կամ այն կոնկրետ դրվագի պատմությունը լուսաբանելիս:

2. Օտար հեղինակների հայերեն թարգմանված աշխատությունները

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում արևմտահայության ճակատագրի մասին գրել են նաև ռուս և օտար շատ հեղինակներ՝ դիվանագետներ, հասարակական գործիչներ, դեպքերի ականատես վկաներ: Օտարալեզու գրականության մի մասը հայ գործիչ-

[1] Վ. Մինախորյան, 1915 թվականը (արհավիրքի օրեր), Վենետիկ, Ս. Ղազար, 1949:

[2] Մ. Էմերյան, Աքսորի և պատերազմի կրակներում մեջեն, Բոստոն, 1953:

[3] Մարտիրոս Սասունցի, Սև օրագիր, Բեյրութ, 1957:

[4] Ղազար Մակունց, Տրապիզոնի հայոց տեղահանությունը: Հուշագրական էջեր, Թեհրան, 1963:

[5] Ստ. Միսքճյան, Ես Տեր-Զորի դժոխքեն փախած եմ, Ա հատոր, Փարիզ, 1966:

[6] Ա. Նագգաշյան, Հայ մտավորականներու ձերբակալությունը և Այաշի բանտը, Բեյրութ, 1969:

ների ջանքերով դեռևս այն հեռավոր ժամանակներում թարգմանվել և հրատարակվել է հայերեն, որոնցից շատերը հիմնարար նշանակություն են ունեցել հետագայի շատ հայ հեղինակների համար և այսօր արդեն ստացել են սկզբնաղբյուրի արժեք: Այդօրինակ հեղինակներից են՝ Վալերի Բրյուսովը, Անդրե Մանդելշտամը, Ջեյմս Բրայսը, Հենրի Մորգենթաուն, Հերբերդ Ադամս Գիբոնսը, Ռենե Պինոնը, Յոհաննես Լեփսիուսը, Հենրիխ Ֆիրբյուխերը, Ֆրիտյոֆ Նանսենը, Հաների Բարբիճ, Ֆայեզ էլ Ղոսեյնը, Մեվլան Ջադե Ռիֆաթը և ուրիշներ, որոնցից մի մասի աշխատություններին անհրաժեշտ ենք համարել վերլուծաբար անդրադառնալ՝ դիտելով դրանք իբրև հայ պատմագրության ոլորտի ինքնօրինակ բաղկացուցիչներ, որոնք շատ դեպքերում ունեցել են ելակետային նշանակություն:

Ռուս հեղինակներից հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մասին գրել են ակադեմիկոս, գիտնական, գրականագետ, պրոֆեսոր Յուրի Վեսելովսկին, ականավոր պոետ և գիտնական Վալերի Բրյուսովը, նշանավոր արևելագետ, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին, մեծահամբավ պատմաբան, ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ս. Կոտլյարևսկին, բազմապիսի փաստաթղթեր ու նյութեր է հրապարակվել ռուսական պարբերական մամուլում: Սակայն, ցավոք, դրանց մի մասն է միայն թարգմանվել հայերեն:

Արևմտահայության ողբերգությունը գտնվել է **Վալերի Բրյուսովի** ուշադրության կենտրոնում: Այդ ուշադրությունը այնքան մեծ էր, որ նա հատկապես սովորում է հայերեն, կարդում հայկական աղբյուրներ: Նա այցելել է Հայաստան, եղել Երևանում, Էջմիածնում, հանդիպել արևմտահայ փախստականներին, զրուցել տասնյակ մարդկանց հետ, որոնք ականատեսն էին հայկական սարսափներին: 1916-ին նա գրեց **«Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը»** աշխատությունը, որը հրատարակվեց Մոսկվայում, 1918-ին: Գիրքը Երևանում ռուսերեն վերահրատարակվել է 1940-ին և 1989-ին: Այն հայերեն է թարգմանվել ու հրատարակվել Վենետիկում, 1931-ին[1]: Հեղինակը ընթերցողին է ներկայացնում հայ ժողովրդի պատմական ամբողջ հերոսական անցյալը և հասցնում մինչև 1915-ի ցեղասպանության օրերը:

Բրյուսովը նշում է, որ պատերազմում Հայաստանը հանդիսանում է ռուս-թուրքական բանակների բախման ռազմաբեմը, որը մեծ աղետ է

[1] Բրյուսով Վ., Տարեգրություն հայ ժողովրդյան պատմական ճակատագրին, թարգմ. Հ. Մարգարյան, Վենետիկ, Ս. Ղազար, 1931:

հայ ժողովրդի համար, քանի որ մի ամբողջ ազգ սարսափելի կոտորածների է ենթարկվում թուրքերի կողմից: Նա զայրույթով է խոսում թուրքական գազազած հորդաների կողմից հայ ժողովրդին գլխովին բնաջնջելու ոեալ վտանգի մասին, խնդիր է դնում ռուսների ու եվրոպացիների առջև՝ օգնության ու փրկության ձեռք մեկնել հայերին: Այդ առումով էլ մեծ հումանիստը պարտավորվում է պատմել հայ ժողովրդի մասին, համառոտակի ներկայացնել նրա անցած ուղին, նրա պատմական բախտն ու մշակույթը:

Գիրքը կազմված է ինը գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը լուսաբանում է հայոց պատմության մի ամբողջական դարաշրջան: Հեղինակը ընդգծում է այն անողոք ճշմարտությունը, որ հայկական ազգային ինքնուրույն կյանքի վերջին ծիլերը Հայաստանում կործանեցին թուրք օսմանները: Խոսելով թուրք-օսմանյան լծի տակ մնացած Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տիգրանակերտի, Սվասի, Խարբերդի նահանգների և նրանցում բնակվող արևմտահայ ժողովրդի մասին, Վ. Բրյուսովը գրում է, որ մոտ կես հազարամյակ տևող օսմանյան լուծը Արևմտյան Հայաստանին բերեց տնտեսական քայքայում, մշակույթի զարգացման սահմանափակում և կասեցում, ազգային դաժան ճնշում և բռնի ձուլման անդադար փորձեր: Նա բացահայտում է թուրք-օսմանների վանդալիզմը, որից փրկվելու համար հայերն իրենց հայացքն ուղղում էին Ռուսաստանին, սպասելով նրանցից օգնություն և արևելահայերի հետ վերամիավորվելու ճգտում, որից էլ ծնվում էր արևմտահայերի հավակրանքը դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը: Նա թուրքական գերիշխանության տակ ապրող հայերի բախտը ողբերգական է անվանում:

Վալերի Բրյուսովը պատմում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մի քանի վառ էջերի մասին: Այդ առթիվ նա ուշագրավ դատողություն է անում, որ ոչ թե հայերն ապստամբեցին, որի պատճառով թուրքերը կազմակերպեցին հայերի կոտորած, ինչպես պնդում են պատմության թուրք կեղծարարներն ու նրանց ձայնափողերը, այլ, ընդհակառակը, թուրքերի դաժանությունները և հայ բնակչության ջարդերը ժողովրդին զայրացրին ու հասցրին զինված ապստամբության:

Նա նույնպես հայ ժողովրդի ճակատագրում բացասական է գնահատում եվրոպական տերությունների շահախնդիր միջամտությունը:

Վ. Բրյուսովը կտրականապես մերժում է պանթուրքիզմի պրոպագանդիստների տարածած վարկածները և հայկական կոտորածների

«հիմքեր» որոնելու նրանց պատճառաբանությունները: Նա միաժամանակ ժխտում է թուրքերի պաշտպանների կարծիքները, գտնում, որ անհիմն են թուրքերի պնդումները՝ հայերի կոտորածները «պետական անհրաժեշտություն» համարելու մասին, ուր ոչ մի բանով չի կարելի արդարացնել զանգվածային ջարդերը, ամբողջ գավառների ամայացումը, գյուղերից և քաղաքներից վտարված բնակչությանը սովամահությանդատապարտելը:

Անդրադառնալով հայ բնակչության կորուստների թվին, Վ. Բրյուսովը գտնում է, որ ընդհանրապես ֆանտաստիկ չեն այն հաշվումները, որ ցույց են տալիս, թե սույն պատերազմի սկզբներում Թուրքիայի տիրույթներում կախաղանի միջոցով, սպանություններով, սովամահությունից, հյուծվածությունից, հրկիզումներից, դեպի անապատներն աքսորի ճանապարհներին և այլն, ոչնչացվել է մեկ միլիոնից ավելի հայ բնակչություն, իսկ այլ աղբյուրները ցույց են տալիս մինչև երկու միլիոն մարդ:

Մեծ գիտնականն ու քաղաքացին հավատով մոտ ապագայից ակնկալում էր, որ այդ անսահման փորձությունների և կորուստների համար Հայաստանը վարձահատույց կլինի քաղաքական անկախության վերածնությամբ կամ հայկական նահանգներից ֆեդերատիվ միավորում ստեղծելով: Նա չէր բացառում և ազգային օրգանիզմի նոր մասնատումների հնարավորությունը, որն էլ հենց, ցավոք, բաժին պիտի ընկներ արյունաքամ հայ ժողովրդին:

Մեծ եղեռնի պատմության լուսաբանման գործում կարևոր նշանակություն ունեն **Անդրե Մանդելշտամի** աշխատությունները: Նա Օսմանյան կայսրության վերաբերյալ հարցերի մասնագետ էր, եղել էր Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության առաջին թարգմանը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում վարել տնօրենի պաշտոն:

Հայերեն հրատարակված իր գրքերից մեկում[1] Ա. Մանդելշտամը վկայում է, որ երիտասարդ թուրքերի կառավարությունը, օգտվելով համաշխարհային պատերազմից, գործի դրեց **մոտ մեկ միլիոն** (ընդգծումը մերն է— Մ. Կ.) հայերի սպանությունը ջարդով, սովահարությամբ, ծարավով և խոշտանգումներով:

1915-ի գարնանն ու ամռանը, շարունակում է հեղինակը, կառավարության հրահանգով Թուրքիայի արևելյան նահանգներում բնակվող հայերի մի մասը տեղում ջարդի ենթարկվեց, իսկ ուրիշները քշվեցին դեպի հարավ և մահացան տարագրության ճանապարհներին: Հեղինակը ընդգծում է, որ թուրքական իշխանությունները ոչ միայն մտահոգված չէին տարագիրների կյանքի ապահովությամբ և ապրուստով, այլ ընդհակառակը, նրանք քաջալերում և նույնիսկ հաճախ կազմակերպում էին թուրք և քուրդ գյուղացիներին և հրոսակներին, որոնք կողոպտում և սպանում էին տարագիրներին, իսկ թուրքական իշխանությունների հրահանգով զինվորները = ջարդում էին իրենց պաշտպանությանը հանձնված սեռնեղ հայերին, հազարավոր տարագիրներ էլ սովամահ էին լինում կամ մեռնում ծարավից ու հոգնածությունից: Հեղինակը վկայում է, որ երբեմն դահիճները խեղդամահ էին անում իրենց զոհերին, այրում էին ողջ-ողջ, կամ դաժան չարչարանքներով նրանց բրածեծ էին անում, **առևանգում** ու վաճառում դեռատի կանանց ու մանուկներին:

Վկայելով, որ տարագիրներին կոտորում էին նաև Միջագետքի և Արաբական անապատի վատառողջ արգելակայաններում, ինչպես դա արվեց Ռաս-ուլ-Այնում հավաքված 14 000 տարագիրների հետ, Մանդելշտամը եզրակացնում է, որ հայերի տեղահանությունն ու աքսորը ջարդի քաղաքավարի ձևերից մեկն էր:

Մեղադրելով Գերմանիային, նա գտնում է, որ վերջինիս համար այնքան էլ անհաճո չէր մի տարրի բնաջնջումը, որն ընդհանրապես դեմ էր գերմանական թափանցումին Թուրքիա: Այնուհետև Մանդելշտամը մեջ է բերում գերմանական դեսպան Վանգենհայմի 1915 թ. մայիսի 31 թվակիր հեռագիրը, որը կատարյալ լույս է սփռում Գերմանիայի խաղացած սև դերի վրա եղեռնի հարցում: Ըստ հեռագրի Էնվերը խնդրում էր գերմանական կառավարությունից չքոնել իր բազուկը՝ տարագրությունն իրականացնելիս: Այնուհետև գերմանական դեսպանը տեղեկացնում էր իր կառավարությանը, թե իբր հայերի խափանարարական աշխատանքը, որը կազմակերպված ու քաջալերված է Ռուսաստանի կողմից, այնքան մեծ ծավալ է ստացել, որ սպառնում է Թուրքիայի գոյությանը: Մանդելշտամը ցավով ավելացնում է, որ Գերմանիան համակարծիք գտնվեց իր դեսպանին, չքոնեց Էնվերի «բազուկը» և չարգելեց հայերի «տեղահանությունները»:

Գերմանական դիվանագիտական փոստից կատարելով բազմաթիվ քաղվածքներ, հեղինակը եզրակացնում է, որ ջարդերի նախաձեռնությունը երբեք արդյունք չէ հայերին վերագրված «դավաճանության»

[1] Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Ա մասն, թարգմ. Ենովք Արմեն, Կ. Պոլիս, 1919

հետևանքով թուրք ժողովրդին պատճառած զայրույթի, ինչպես ջանում են հավատացնել երիտասարդ թուրքերը: Վկայակոչելով Թուրքիայի մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայի իսկ արտասանած խոսքերը Փարիզի խաղաղության խորհրդաժողովի Գերագույն խորհրդի 1919-ի հունիսի 17-ի նիստում, որն ասել է, թե պատերազմի ժամանակ քաղաքակիրթ ամեն մի մարդ հուզվեց, լսելով թուրքերի գործած ոճիրները և ինքն իրեն հեռու է պահում մարդկային խիղճը սարսափով թունդ հանող այդ ոճիրները ծածկելուց, Մանդելշտամը եզրակացնում է, որ գլխավոր պատասխանատուները Իթթիհատ վե Թերաքքը կուսակցության ղեկավարներն են ու նրանց խորհրդականները[1]:

Օտար հեղինակների շարքում առանձնանում են անգլիացի լորդ **Ջեյմս Բրայսի** աշխատությունները[2]:

Անգլիացի հեղինակը իբրև առաջին քայլ հարկ է համարում ճշտել տարագրության ժամանակ Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող հայերի թիվը: Բաղդատելով Հայոց Պատրիարքարանի մարդահամարի տվյալները՝ 2 100 000 և օսմանյան կառավարության տվյալները՝ 1 100 000, նա հավանական է համարում մոտ 2 միլիոնը:

Երկրորդ անհրաժեշտ քայլը հեղինակը համարում է տարագրությունից փրկվածների թվի ճշտումը: Վկայակոչելով հավաստի աղբյուրներ, նա Կովկաս ապաստանածների թիվը հաշվում է 182 000, Եգիպտոս փախչողներինը՝ 4200, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների վերապրողների թիվը է 12 000: Բերելով նաև այլ տվյալներ, Բրայսը գտնում է, որ Թուրքիայում տարագրությունից ազատվածների թիվը չի անցնում 600 հազարից: Այդ հաշվով, ըստ Բրայսի, տեղահանության ու ջարդերի զոհ գնացած հայերի թիվը կազմում է **մեկ միլիոն և** հավանաբար 1 200 000 կամ ավելի: Նրա կարծիքով, ճշտման կարոտ երրորդ հարցն է պարզել, թե այդ մեկ միլիոնից որքա՞նը բնաջնջվեց և որքա՞նը վերապրեց: Նա վկայում է, որ մի շարք վիլայեթներում, ինչպես Վանն ու Բիթլիսը, տարագրություն չեղավ, այլ միայն ջարդ: Ուրիշ վիլայեթներում, ինչպես Էրզրում, Տրապիզոն, տարագրությունն ու ջարդը նույն բանն էին ճշանակում, քանի որ աքսորյալների քարավանները սիստեմատիկ կերպով բնաջնջվում էին դեռ նոր ճամփա ելած: Վատահորեն կարելի է ասել, ավելացնում է նա, որ ջարդերի և տարագրության դատապարտվածների **առնվազն կեսը** բնաջնջված է: Ամփոփելով իր վիճակագրական պրպտումները, Բրայսը գտնում է, որ 1915-ին տարագրությունից հավասար թվով հայեր փախել, ջարդվել և վերապրել են, և յուրաքանչյուր խմբի թիվն ընդունում է 600 000:

Այնուհետև նա նշում է, որ չնայած ոճրի քանակական կշիռը անորոշ է մնում, սակայն անորոշություն չկա նրա հղացման ու գործադրության պատասխանատվության հարցում: Նա գտնում է, որ տառապանքի և սպանության այս ահավոր պատուհասը կրոնական ներմտության՝ **ֆանատիզմի** հետևանք չէր: Հաստատելով թուրք գյուղացուն ու քաղաքացուն, Բրայսը անբողջ հանցանքը բարդում է օսմանյան կառավարության պաշտոնատարների վրա, գտնելով, որ այս կամ այն կերպ կենտրոնական կառավարությունն էր, որ հսկում էր ծրագրի գործադրության վրա, որի մտահղացումը միայն իրենն էր: Եզրափակելով իր խոսքը, Ջ. Բրայսը գրում է, որ երիտասարդ-թուրք նախարարները և Կոստանդնուպոլսի նրանց գործակիցները ուղղակիորեն և անձնապես պատասխանատու են, սկզբից մինչև վերջ, այն հսկայական ոճրի համար, որ ավերեց Մերձավոր Արևելքը 1915-ին:

Հայոց մեծ եղեռնի պատմության գիտական ու անաչառ լուսաբանման առումով դժվար է գերագնահատել 1913—1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի քաղաքական-հրապարակախոսական մեծարժեք մենագրության նշանակությունը, որը Ենովք Արմենի հայերեն թարգմանությամբ լույս տեսավ Կ. Պոլսում, 1919-ին[1]: Անվարան կարելի է ասել, որ սույն գիրքը ելակետային դարձավ եղեռնի պատմության հետագա մի շարք հայ և օտար պատմաբանների համար: Գրքի կարևորագույն արժանիքներից մեկը նրա փաստավավերագրական հավաստիությունն է և հեղինակի՝ մինչև վերջ անկեղծ, անաչառ ու անկողմնակալ մնալու ընթացքը: Ինչպես նկատել է գրքի թարգմանիչը, Օսմանյան կայսրությունում ահավոր ոճրի իրականացման պահին գտնվեց մի զգայուն սիրտ, որը բողոքի ձայն բարձրացրեց զարհուրելի դավի հեղինակների դեմ և աշխարհով մեկ բարձրացրած նրա աղաղակը **ցնցող ազդակ եղավ Հայ Դատի** նկատմամբ հուզումնալից շարժում առաջ բերելու համար: Հատու և ազդու են ամերիկյան դեսպանի գնա-

[1] Ա. Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 48—51:

[2] Բրայս Ջ., Անգլիական կառավարության Կապույտ գիրքը հայկական մեծ եղեռնի մասին (1915—1916): Կ. Պոլիս, 1919: Նույնի՝ Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, կազմեց Վ. Միրագեցը, Կ. Պոլիս, 1920: Նույնի՝ Հայերու տառապանքները Օսմանյան կայսրության մեջ 1915—1916: Թարգմ. Ա. Պուճիկանյան, Բեյրութ, 1965:

[1] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, ֆաքսիմիլային հրատարակություն, Երևան, 1990:

հատականները երիտթուրքական պարագլուխների մասին: Բնորոշ ընդհանրացում կատարելով, նա գրում է. «Ինչպես որ ոճիրը եղած էր այն միջոցը, որով այդ մարդիկ գերագույն իշխանության տիրացած էին, նույնպես ոճիրը մնաց իրենց գործիքը՝ այդ իշխանության մեջ դիրքերնին պահպանելու համար»[1]: Թալեաթին նա անվանում է ավազակապետ, որը ծագումով թուրք էլ չէր, այլ՝ բուլղար գնչու:

Էնվերի տիրապետող հատկանիշը նրա հանդգնությունն էր, որին մերձավորները փոքրիկ Նապոլեոն էին կոչում: Մորգենթաուն մի երեկո Էնվերին տեսել էր իր տանը, Նապոլեոնի և Ֆրիդրիխ Մեծի նկարների միջև նստած, որն ընդգծում էր 32-ամյա ռազմական նախարարի ունայնամտությունը[2]: Արտաքինապես նա ուներ փափուկ, կանացի տեսք, միշտ խաղաղ էր, սառն ու անխռով: Դեմքը նման էր դիմակի, որը չէր մատնում իր զգացմունքները: Նվագում էր ջութակ, ուներ երաժշտական ճաշակ, տիրապետում էր գերմաներենին:

Գրքի 14-րդ գլխում Հ. Մորգենթաուն խոսում է 1914-ի նոյեմբերի 13-ին սուլթանի կողմից պատերազմ հայտարարելու մասին, որն իրականում Ջիհադի, այսինքն անհավատների դեմ «սրբազան պատերազմի» կոչ էր: Դրանից քիչ անց հրապարակվեց Շեյխ-ուլ-Իսլամի հայտարարությունը, որը ամբողջ իսլամական աշխարհին հրավիրում էր ոտքի կանգնելու և ջարդելու իրենց քրիստոնյա հարստահարիչներին: Կրոնապետերը այս հրովարտակը կարդացին մզկիթներում, բոլոր թերթերն այն տպագրեցին խոշոր տառերով: Սակայն, ամերիկյան դեսպանի վկայությամբ, ճիշտ նույն ժամանակ հայտնվեց նաև մի գաղտնի տետր, որը մզկիթներում չկարդացվեց, այլ գաղտագողի տարածվեց բոլոր մահմեդական երկրներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, Մարոկկոյում, Սիրիայում և այլուր: Այն տպագրված էր Ղորանի լեզվով՝ արաբերեն և ցեղային ու կրոնական ատելության մի մոլեգին կոչ էր: Դա բոլոր քրիստոնյաներին, բացի գերմանացիներից, բնաջնջելու ծրագրի մի մանրամասն նկարագրություն էր: Կատարելով ընդարձակ քաղվածքներ հիշյալ տետրից, Հ. Մորգենթաուն եզրակացնում է, որ ոճրի և սպանության գրգռիչ այս տետրակի յուրաքանչյուր մասի վրա նկատելի են գերմանական ձեռքի խմբագրման հետքեր[3], և ավելացնում, որ այդ գրգռիչ տետրը մահմեդականների հոգում առաջ բերեց քրիստոնյաների հանդեպ անսահման ատելություն, կրքերի բռնկում, որոնք հետագայում դրսևորվեցին հայերի և ուրիշ հպատակ ժողովուրդների ջարդերի ժամանակ:

Ուրվագծելով Ջեմալ փաշայի կերպարը, Հ. Մորգենթաուն նրան նմանեցնում է իր հռոմեացի նախաճոր՝ Մարկոս Անտոնիոսի հետ, որոնց ընդհանրական հատկանիշը անհագ սնափառությունն էր: Նշանակվելով 4-րդ բանակի հրամանատար, Ջեմալն ուղարկվեց Սիրիա՝ Եգիպտոսը նվաճելու: Նա ուներ նահանջ և կենդանակերպ դեմք, որի վրա դաջված էր վայրենությունը: Նա համաթրքության ջատագովներից էր և հավասարապես ատում էր արաբներին, հայերին, հույներին, չերքեզներին ու հրեաներին:

Մեծագույն զայրույթով է հեղինակը վերհիշում, թե ինչպես էին երիտթուրքերը մտադրվել դաշնակիցների կողմից Պոլիսը գրավելու դեպքում ոչնչացնել այն ճարտարապետական գեղեցիկ հուշարձանները, որոնք թուրքական տիրապետությունից առաջ կառուցել էին քրիստոնյաները: Մասնավորապես նրանք մտադիր էին պայթեցնել Այա-Սոֆիայի մզկիթը, որ մահմեդական մզկիթի վերածվելուց դարեր առաջ քրիստոնեական եկեղեցի էր և բյուզանդական կայսրության ամենաշքեղ կառույցներից մեկը: Իր պահանջին՝ խնայել գոնե Այա-Սոֆիայի մզկիթը, հետևում է Թալեաթի ցինիկ պատասխանը. «Միության և Առաջադիմության Կոմիտեին մեջ վեց մարդ չի կա, որ մտահոգ ըլլա հնության եղող բանի մը համար: Մենք ամենքս նոր բան կսիրենք»[1]:

Հ. Մորգենթաուն փորձ է կատարում բացահայտել թուրքերի էությունն ընդհանրապես: Այդ առթիվ նա գրում է, որ թուրք մտայնության թաքուն հիմնական ոգին կազմում է խոր արհամարհանքը բոլոր ուրիշ ազգերի հանդեպ:

Անդրադառնալով երիտթուրքական հեղափոխության ժամանակաշրջանին, Հ. Մորգենթաուն գրում է, որ հպատակ ժողովուրդները՝ հույները, սիրիացիները, հայերը, հրեաները, այնպես «սպիղծ գյավուրներ» չպիտի հավասարվեին, այդ բոլոր ժողովուրդները հավասար իրավունքներ և հավասար պարտականություններ պիտի ունենային: Այնուհետև հեղինակը նկարագրում է այն ցնծատոնը և խելահեղ հավերժության տեսարանները, որոնք հաջորդեցին նոր ռեժիմի հաստատմանը. թուրքերը և հայերը հրապարակավ ողջագուրվեցին, թուրք գործիչները, որոնց թվում և Թալեաթն ու Էնվերը, քրիստոնեական եկեղեցիներ այցելեցին և բարեմաղթություններ արեցին նոր կարգերի համար, գնացին հայկա-

[1] Նշվ. աշխ., էջ 18:
[2] Նշվ. աշխ., էջ 31:
[3] Նշվ. աշխ., էջ 139:

[1] Նշվ. աշխ., էջ 167:

կան գերեզմանատները և զոչումի արցունքներ թափեցին մարտիրոսների ոսկորների վրա: Փոխադարձաբար հայ կրոնավորները աղոթքի իրենց պարտքը հատուցեցին թուրքերի մզկիթները գնալով: Էնվեր փաշան բազմաթիվ հայ վարժարաններ այցելեց, քարոզելով երեխաներին, թե իսլամ-քրիստոնյա պայքարի ճին օրերը հավիտյան անցած են և թե երկու ժողովուրդները հիմա պետք է իրար հետ փարվեն եղբայրների ու քույրերի պես: Երիտթուրքերը քաջալերում էին բոլոր քրիստոնյաներին՝ զենք առնելու և նրանց հավասար իրավունքներով բանակ զորակոչեցին, որոնք թե իբրև սպա և թե իբրև զինվոր կովեցին իտալական և բալկանյան պատերազմներում ու իրենց քաջության և հնարամտության համար արժանացան թուրք հրամանատարների բարձր գնահատականին[1]: Այնուհետև Հ. Մորգենթաուն վկայում է, որ երիտթուրքական շարժման մեջ կային նաև հայ գործիչներ, որոնք հավատում էին, թե սահմանադրական Թուրքիան հնարավոր է[2]: Սակայն, շարունակում է հեղինակը, այդ բոլոր ցանկությունները նոազի պես ցնդեցին, և համաշխարհային պատերազմից առաջ երիտթուրքերը հարություն տվեցին համաթրքության գաղափարին:

Ինչպես նշում է Հ. Մորգենթաուն, համաթրքության այդ գաղափարի իրականացմանը խանգարում էին հայերը, որոնք ունեին ազգային ցանկություններ և բնակվում էին դեպի Ռուսաստանի սահմանները ձգվող վեց նահանգներում և այնտեղ ստվարաթիվ էին: «Դարերէ ի վեր,— գրում է նա,— հայերը օսմանյան կայսրության արևելյան մասին ամենեն քաղաքակիրթ և ամենեն ճարտարարվեստ ցեղը հանդիսացած են... Անոնք բոլոր մեծ քաղաքներու ազգաբնակչության կարևորագույն մեկ տարրը կկազմեն: Ամեն կողմ անոնք ծանոթ են իրենց ճարտարարվեստով, իրենց ուշիմությունով և կանոնապահ կյանքով: Անոնք իմացականապես և բարոյապես այնչափ գերազանց են թուրքերէն, որ առուտուրի և ճարտարարվեստի մեծ մասը իրենց ձեռքը անցած է: Հույներուն հետ հայերը կայսրության տնտեսական ուժը կկազմեն»[3]:

Այն, ինչ չհաջողվեց Աբդուլ Համիդին, իրենց գլխավոր նպատակը դարձրին երիտթուրքերը, որոնք 1915-ին ձեռնամուխ եղան Թուրքիան ապամերժորեն թուրքերի հայրենիքը դարձնելու գործին:

Հ. Մորգենթաուն համառոտակի շարադրում է Վանի ինքնապաշտպանության ընթացքը և անառարկելիորեն մերժում «հայկական ապրստամբության» մասին ստահոդ վարկածը:

Հ. Մորգենթաուն վկայում է, որ Վանի նահանգը թուրքական կայսրության ամենագեղեցիկ ու բերրի մասերից մեկն է, պատմական հուշարձաններով հարուստ, իսկ Վան քաղաքը Փոքր Ասիայի մեծագույն քաղաքն է, ուր 1915-ի վերջերին ապրում էին 30 000 հայեր, որոնք մասնագիտական մեդալականներից շատ էին և կայսրության ամենախաղաղ, երջանիկ ու բարգավաճ համայնքն էին կազմում: Սակայն պատերազմն սկսվելուն պես դրությունը փոխվեց. բանակի պարենավորման համար Վանում սկսվեցին գրավումներ, բռնագրավվեցին վանեցի հայերի բոլոր արջառները, ամբողջ ցորենը, ողջ ունեցվածքը՝ փոխարենը տալով անարժեք թղթի կտորներ[1]: Այնուհետև նա սարսափազդու է, որ թուրքերը ամբաստանում էին հայերին ու նրանց էին վերագրում Կովկասում կրած անհաջողությունները: Այն իրողությունը, որ ռուսական ուժերի կարևոր մասը կազմված էր հայերից, թուրքերին անզուսպ զայրույթ էր պատճառում: Դրանից բացի,— ավելացնում է հեղինակը,— թուրքերը հավատում էին նաև, թե Վանի և ուրիշ հայկական նահանգների հայ զինվորներից շատերը դասալքել էին, անցել սահմանը, միացել ռուսական բանակին, և ճանապարհներին ու երկրին նրանց ծանոթությունը կարևոր ազդակ էր դարձել ռուսների հաղթանակների գործում[2]: Բացի այդ,— շարունակում է նա,— պատերազմի սկզբում երիտթուրքական գործիչները Կարինում և Վանում կոչ արեցին հայ գործիչներին՝ գնալ Արևելյան Հայաստան և այնտեղ հայերին ապստամբեցնել Ռուսաստանի դեմ, բայց որովհետև մերժվեցին, դա ավելի սաստկացրեց տիրող գրգռվածությունը: Այնուհետև հեղինակը վկայակոչում է թուրքական մի երգիծաթերթ, որն այդ առթիվ գրում էր, թե իմանալու համար՝ ինչպես է պատերազմի ընթացքը, միայն որևէ հայի երեսին նայեցեք. եթե նա ժպտում է, նշանակում է դաշնակիցներն են հաղթում, իսկ եթե երեսը ծուռ է, նշանակում է հաջողությունը գերմանացիներինն է:

Չափազանց կարևոր է Հ. Մորգենթաուի նման քաջատեղյակ անձնավորության վկայությունն այն մասին, որ 1914—1915-ի աշնան և ձմռան ողջ ընթացքում, թեև մթնոլորտը լցված էր իտովությունների կանխանշաններով, այնուամենայնիվ, հայերը ինքնապաշտպանության հիանալի ընթացքով շարժվեցին: «Հայ կղերը և քաղաքական պետերը,—

[1] Նշվ. աշխ., էջ 234:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 238:

[1] Նշվ. աշխ., էջ 244:
[2] Նշվ. աշխ., էջ 245:

գրում է նա,— ժողովուրդին մեջ մտան, նախազգուշացնելով հանդուրժություն պահել, համբերատարորեն հանդուրժել ամեն անարգանքի և նույնիսկ ծայրահեղությունների, ատով չտալու համար թուրքերուն այն առիթը՝ զոր կփնտրեին: Եթե նույնիսկ անոնք մեր մեկ քանի գյուղերը կրակի տան,— կըսեին այդ պետերը,— փոխարեժի մի՛ դիմեք, որովհետև ավելի լավ է, որ մեկ քանի գյուղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորվի»[1]:

Այնուհետև Հ. Մորգենթաուն խոսում է Վանի խաղաղասեր կուսակալ Թահսին փաշային Էնվերի քեռայր Զևդեթ բեյով փոխարինելու մասին, որն իր ցեղի հոռեգույն ավանդություններին հավատարիմ՝ թշնամական, կեղծավոր, դավող ու վայրագ էր ոչ իսլամների նկատմամբ: Նա ատում էր հայերին և սրտանց համակիր էր հայկական խնդիրը թուրքական տարբերակով լուծելուն: Հեղինակը չի կասկածում, որ Զևդեթը Վան էր եկել հայերին բնաջնջելու որոշակի հրահանգներով: Երբ գարնան սկզբին ռուսները ժամանակավորապես նահանջեցին, նրանց հետապնդելու փոխարեն թուրքական բանակը հետ դարձավ և արշավանք սկսեց Վանի դեմ: «Փոխանակ ռուսական մարզված զինվորներով բանակին դեմ կռվելու,— գրում է հեղինակը,— թուրքերը իրենց հրացանները, գնդացիրները և ուրիշ զենքերը դարձուցին Վանի գյուղերը բնակող կիներուն, տղոց ու ծերերուն դեմ... Ապրիլ 15-ին 500-ի չափ երիտասարդ հայեր կանչվեցան Ականցէն, արևմուտին անոնք քաղաքեն դուրս հանվեցան և անգթորեն հրացանազարկ սպանվեցան: Վանի լճի հյուսիսը գտնվող թեմի ութսունի չափ հայ գյուղերում երեք օրվա մեջ 24 000 հայեր սպանվեցան»[2]: Այնուհետև նա խոսում է չորս երևելիների (Իշխանի խումբը— Մ. Կ.) Ծատախ մեկնելու և Զևդեթի հրամանով նրանց սպանվելու մասին:

Ըստ Հ. Մորգենթաուի, Վանի կաթոլիկավոր պաշարումն սկսվեց ապրիլի 20-ին (նոր տոմարով— Մ. Կ.): Հայերի ամբողջ կռվող ուժը բաղկացած էր 1500 հոգուց, որոնք ունեին 300 հրացան և անբավարար քանակությամբ ռազմամթերք, մինչդեռ Զևդեթն ուներ կատարելապես ապահովված և սարեևավորված 5000-անոց բանակ: Չիսորացնելով Վանի ինքնապաշտպանության մանրամասների մեջ, սակայն շեշտելով անհատական դյուցազնության բազմաթիվ դեպքերը, հայ կանանց հավատարմությունը, հայ պատանիների եռանդն ու կորովը, ամերիկացի

[1] Նշվ. աշխ., էջ 246:
[2] Նշվ. աշխ., էջ 247:

միսիոներներ դոկտոր Էշերի ու նրա կնոջ, օրիորդ Կրեյս Նեվի անձնազոհությունը, հեղինակը եզրակացնում է, որ այդ և հազարավոր ուրիշ պարագաներ այդ զարհուրելի ամիսը դարձրին ժամանակակից հայոց պատմության ամենափառավոր էջերից մեկը, և գործի հիմնական կողմն այն է, որ հայերը հաղթանակեցին[1]: Նա վկայակոչում է դոկտոր Էշերին, ըստ որի Վանի նահանգում ռուս զինվորները հավաքել և հրկիզել են 55 000 դիակ:

Նպատակահարմար ենք համարում Վանի իրադարձությունների կապակցությամբ հեղինակի-ամփոփումը ներկայացնել ամբողջությամբ. «Ես Վանի «հեղափոխության» այս պատմությունը ըրի ոչ միայն անոր համար, որ ամբողջ ազգ մը բնաջնջելու կազմակերպված փորձի առաջին քայլը կկազմե ան, այլ նաև անոր համար, որ թուրքերուն կողմէ այդ դեպքերը միշտ առաջ կբշվին՝ իբրև արդարացում իրենց հաջորդ ոճիրներուն: Ինչպես որ պիտի պատմեմ,— շարունակում է նա,— ամեն անգամ որ Հայերու նպաստին կդիմեի Էնվերի, Թալեաթի և նմաններուն, անոնք անփոխարինելիորեն կհիշեին Վանի «հեղափոխականները», իբր օրինակ «դավադրության»... Այդ հանրաբավոր «հեղափոխությունը» **ուրիշ բան չէր, բայց եթե Հայերու դիմադրությունը՝ միտքերնին դրած ըլլալով պաշտպանել իրենց կիներուն պատիվը և իրենց կյանքը**»[2]:

Հայոց ցեղասպանության դրվագների ներկայացրությանն է նվիրված Մորգենթաուի գրքի «Ազգի մը սպանումը» 24-րդ ծավալուն գլուխը: Գլխի սկզբում հայտնվում է այն միտքը, որ եթե 1890-ական թվականների ջարդերի տարիներին հայերը դիմադրության տկար ուժի կամ միջոցների տեր էին, որովհետև զորակոչի ենթակա չէին և, հետևաբար, զինավարժ չէին ու զենք չէին կրում, ապա 1915-ի բնաջնջումը հարուցում էր մի շարք դժվարություններ, որովհետև 1908-ի հեղափոխությունից հետո քրիստոնյաներին ոչ միայն արտոնվեց զենք կրելու, այլև իշխանությունները քաջալերեցին նրանց զինումը: Հետևաբար 1915-ի սկզբին **թուրքական յուրաքանչյուր քաղաքում կային հազարավոր հայեր, որոնք իբրև զինվոր մարզված էին և որոնք զինված էին հրացաններով, ատրճանակներով և ուրիշ մարտական զենքերով** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Ուստի մի ամբողջ ազգ բնաջնջելու ծրագիրն իրականացնելու համար երկու նախապայմ պետք է կատարվեր. անհրաժեշտ էր բոլոր հայ զինվորներին անզոր դարձնել և բոլոր քաղաքների հայերի ձեռքից զենքը վերցնել:

[1] Նշվ. աշխ., էջ 248:
[2] Նշվ. աշխ., էջ 249:

Այլ կերպ ասած՝ Հայաստանը խեղդամահ անելուց առաջ պետք էր այն անպաշտպան դարձնել[1]:

Ամերիկացի հեղինակը վկայում է, որ 1915-ի սկզբին թուրքական բանակում ծառայող հայ զինվորները մի նոր օրենքի ենթարկվեցին: Մինչ այդ նրանք պատերազմողներ էին, բայց այժմ նրանց բոլորի զենքերն առնվեցին, ու նրանք վերածվեցին գործավորների: Փոխանակ իրենց երկրի համար հրետանիգ կամ հեծելազորք ծառայելու, նրանք ճանապարհաշինարարների ու բեռնակիր կենդանիների վերածվեցին: Ամեն տեսակի բեռներ շալակած ու դրանց ծանրության տակ կքած, քշվելով թուրք վերահսկիչների խարազաններով ու սվիններով, նրանք հոգնատանջ քարշ էին գալիս լեռներում, երբեմն մինչև գոտկատեղը ձյան մեջ խրված ճանապարհ բացելով: Նրանց չէին թողնում քնել, տալիս էին չնչին սնունդ, հիվանդներին ու ուժասպառներին անխնամ թողնում էին ճանապարհներին, իսկ տեղ հասածների մեծ մասին սովորաբար սպանում էին: Մասսայական սպանությունների մեթոդը ամենուրեք գրեթե նույնն էր. այստեղից-այնտեղից հավաքում էին 50 կամ 100 հոգիանոց խմբեր, չորսական դասակներով կապում իրար և տանում գյուղից քիչ հեռու մի ամայի վայր: Հանկարծ հրացանների պայթյունը լցնում էր օդը, և թուրք զինվորները տխրադեմ վերադառնում էին: Նրանք, որ սպանվածներին թաղելու էին ուղարկվում, հանդիպում էին լրիվ մերկ դիակների, որովհետև ըստ սովորության թուրքերն արդեն գողացած էին լինում նրանց զգեստները: Սպանողները իրենց գոհերի տառապանքի վրա մի «նրբություն» էին ավելացրել՝ ստիպելով գնդակահարվելուց առաջ փորել սեփական գերեզմանները:

Հայ զինվորների բնաջնջման նկարագրությունը հեղինակը եզրափակում է հետևյալ կերպ. «Հովանոցակ թուրք կայսրության մեջ կանոնավոր ջանք մը գործադրվեցավ սպանելու բոլոր քաջակազմ այրերը, ոչ միայն մեջտեղեն վերցնելու նպատակով բոլոր արուները՝ որոնք Հայերու նոր սերունդ կրնային արգասավորել, այլ նաև ժողովրդի տկարագույն դասակարգը դյուրին որս մը դարձնելու նպատակով»[2]:

Այնուհետև անանատես հեղինակն անցնում է զինահավաքման նկարագրությանը, գրելով, թե որքան էլ անհավոր լինեին անգեն զինվորների ջարդերը, դրանք իրենց **գթություն և արդարություն էին** (հեղինակի բառերն են— Մ. Կ.) համեմատած այն վարմունքի հետ, որ զենք

[1] Նշվ. աշխ., էջ 250:
[2] Նշվ. աշխ., էջ 252:

պահելու կասկածին ենթարկված հայերի գլխին պայթեց: Նախ գյուղերում և քաղաքներում ազդագրեր փակցվեցին, որոնցով հրամայվում էր զենքերը տանել զինվորական կայան: Ի դեպ, հրամանը վերաբերում էր միայն քրիստոնյաներին, իսկ նրանց հարևան իսլամներին արտոնված էր պահել իրենց զենքերը: Հալածված ժողովրդից շատերը գլխիկոր հնազանդվեցին հրամանին, և թուրք պաշտոնյաները ցնծագին կերպով գրավեցին հրացանները՝ իբրև նշան, թե «հեղափոխություն» էր ծագվում և իրենց գոհերին դավադրության ամբաստանությամբ լցրեցին բանտերը: «Հազարավորներ զենք չհանձնեցին,— շարունակում է հեղինակը,— պարզապես անոր համար որ՝ հանձնելիք զենք չունեին, մինչդեռ բավական մեծ թվով անձեր համառորեն մերժեցին հանձնել, **ոչ թե որովհետև ապստամբություն մը կսարքեին** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), այլ որովհետև կուզեին պաշտպանել իրենց կյանքը և իրենց կիներու պատիվը...

Այն պատիժը, որուն ենթարկվեցան այս անմասնտողները, կկազմէ ժամանակակից պատմության ամենեն ահավոր գլուխներեն մեկը»[1]:

Պատկերը կատարյալ դարձնելու համար ամերիկացի հումանիստը սթափության է կոչում բոլոր նրանց, ովքեր միամտաբար կարծում էին, թե չարչարանքը վաղուց ի վեր դադարել է վարչական ու դատական միջոց լինելուց, ու ավելացնում, որ ամենախավար դարերն անգամ չեն ներկայացրել այնպիսի զարհուրելի տեսարաններ, քան այն ժամանակ բովանդակ Թուրքիայում տեղի ունեցածները: Պահված զենքեր փնտրելու պատրվակի տակ ոչ մի նվիրականություն չճանաչող թուրք ոստիկան-զինվորները կողոպտում էին եկեղեցիները, ամենածայրահեղ սրբապղծության ենթարկում խորանները ու նվիրական առարկաները, զգայազուրկ անելու աստիճան գանակոծում քահանաներին: Երբ եկեղեցիների մեջ զենք չէին գտնում, հրացաններով, ատրճանակներով և սրերով զինում էին եպիսկոպոսներին ու քահանաներին, նրանց կանգնեցնում էին պատերազմական ատյանների առջև՝ իբրև օրենքի հակառակ զենք կրողներ, կամ էլ «զինված» պտտեցնում էին փողոցներում՝ պարզապես ամբոխի մոլեռանդ զայրույթը գրգռելու նպատակով: Ոստիկան-զինվորները կանանց հետ վարվում էին նույն անգթությամբ ու անպատշաճությամբ, ինչպես որ վարվում էին նրանց ամուսինների հետ: Իբր թե զենք պահող կանայք մերկացվում և գանահարվում էին դալար ճյուղերով: Գանահարվում և բռնաբարվում էին նաև հղի կանայք:

[1] Նշվ. աշխ., էջ 253:

Այնուհետև սկսվում էր բանտարկվածներին իրենց «հեղափոխական» լինելը և զենքի տեղը խոստովանեցնելու արարը: Խոշտանգիչները բարակ ճիպոտներով գանահարում էին իրենց զոհի ոտքերի տակը: Նախապես ցավը զգալի չէր, բայց երբ ծեծը կամաց-կամաց ուժեղացվում էր, ցավը փոխարինվում էր զարհուրելի տառապանքի, ոտքերն ուռչում և պատռվում էին, և հաճախ պետք էր լինում ոտքերը կտրել: Նկարագրվում են նաև զոհին «խոստովանեցնելու» զանազան ուրիշ մեթոդներ. զատ-զատ քաշում էին նրանց հոնքերի և մորուքի մազերը, ձեռքերի և ոտքերի եղունգները, հրաշեկ երկաթներ էին դնում կրծքի վրա, հրաշեկ աքցանով պոկում էին միսը և վերքի մեջ եռացրած յուղ ցցնում: Երբեմն զոհի ձեռքերին և ոտքերին խաչելության նման փայտի կտորներ էին գամում, և երբ չարչարվողը ցավից գալարվում էր, նրան ասում էին. «Թող հիմա Քրիստոսդ գա և քեզ օգնի»: Խոշտանգումները կատարվում էին գիշերները, և թուրքերը բանտի շուրջ թմբուկ էին զարկում և սուլիչներ հնչեցնում՝ զոհերի աղաղակները խլացնելու նպատակով: Խոշտանգումներն այն աստիճան սարսափազդու դարձան, որ երբ լուր էր ստացվում խուզարկուների մոտենալու մասին, հայերն իրենց թուրք դրացիներից զենք էին գնում և հանձնում՝ սոսկալի պատիժներից խուսափելու համար[1]:

Երբ ամերիկյան դեսպանը այս ամենի մասին տեղեկացնում է Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյին, վերջինս չի թաքցնում, որ չարչարանքների մանրամասները քննարկված են «Միության և առաջադիմության» կոմիտեի գիշերային խորհրդակցություններում, և չարչարանքի յուրաքանչյուր նոր մեթոդ ողչունված էր իբրև մի աքանչելի գյուտ, իսկ նիստերին ներկա եղողները շարունակ տանջում էին իրենց միտքը՝ որևէ նոր չարչարանք հորինելու ճիգով: Ոստիկանապետը հայտնում է նաև, որ իրենք հետազոտել են իսպանական Հավատաքննության արձանագրությունները և չարչարանքի ուրիշ պատմական հիշատակարաններ ու որդեգրել նրանցում եղած բոլոր նյութերը: Հրեշածին ոստիկանապետը հայտնում է նաև, որ սահմանված մրցանակը շահել է Վանի կուսակալ Զևդեթ բեյը, որը հռչակված էր «Բաշկալեի պայտահար» անունով, որովհետև չարչարանքի այս «մասնագետը» հորինել էր այն, ինչ որ թերևս բոլոր չարչարանքների գլուխգործոցն էր— իր հայ գոհերի ոտքերին պայտ գամել[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 254:
[2] Նշվ. աշխ., էջ 255:

Սակայն Մորգենթաուն այս բոլոր վայրագությունները համարում է հազիվ նախնական քայլերը միայն, որոնք նախորդեցին հայ ազգի բնաջնջմանը: Այդ կապակցությամբ նա գրում է, որ երիտթուրքերը ավելի մեծ հնարագիտություն ցուցաբերեցին, քան իրենց նախորդը՝ Աբդուլ Համիդը: Գահընկեց սուլթանի հրամանն էր միայն «սպանել, սպանել», մինչդեռ երիտթուրքերը բոլորովին նոր ծրագիր գտան: Փոխանակ հայ ցեղը մեկ անգամից ջարդելու, որոշեցին տարագրել: «Նախապատրաստելով» հայերի տարագրման վայրերը՝ Օսմանյան կայսրության հարավային և հարավ-արևելյան կողմերում տարածվող Սիրիայի անապատը և Միջագետքի հովիտը, հեղինակը գրում է, որ թեև այդ երկրամասի մի հատվածը ժամանակին ծաղկուն քաղաքակրթության թատերավայր էր, բայց վերջին հինգ դարերի ընթացքում զարկվեց այն խորշակին, որը ճակատագիրն է դառնում թուրքական վարչության ենթարկված որևէ երկրի և հիմա այն տխուր, ամայի մի անապատ է՝ առանց քաղաքի և ավանի և առանց որևէ կյանքի, բնակեցված միայն սակավաթիվ վայրի և մոլեռանդ բեդեվի ցեղերով: Արդ, թուրքական կառավարությունը մտադրվեց կայսրության զանազան մասերում ապրող 2 000 000-ից ավելի հայերին հավաքել և նրանց փոխադրել այդ անապատային և անհյուրընկալ վայրերը:

Մորգենթաուն հայտնում է այն միտքը, որ եթե երիտթուրքերը նման տարագրությունը ձեռնարկած լինեին անկեղծ մտքով, էլի դա գերագույն անգթություն և անարդարություն պիտի դիտվեր, որովհետև նրանք ներկայացնում էին երկրի տնտեսական ուժը, որոնց չէր կարելի միլիոններով քշել Ասիայի անշեն մասերը: Սակայն իրողությունն այն է, որ թուրքերը որևէ մտադրություն չունեին հայերին այդտեղ բնակեցնելու և շատ լավ գիտեին, որ նրանց խոշոր մեծամասնությունը չպիտի հասներ սահմանված վայրը, իսկ հասնողներն էլ կամ ծարավից ու սովից պիտի մեռնեին, կամ պիտի սպանվեին անապատի մահմեդական վայրի ցեղերի կողմից: «Տարագրության իրական նպատակը,— եզրակացնում է հեղինակը,— ավազակություն և ավերածություն էր. անիկա ճշմարտապես ջարդի նոր **մեթոդ** (ընդգծումը իրենն է— Մ. Կ.) կներկայացներ: Երբ Թալեաթ այդ տեղահանություններուն հրամանը կուտար, լոկ մահվան վճիռը կարտասաներ ամբողջ ցեղի մը. շատ լավ գիտեր ատիկա, և ինծի հետ ունեցած իր խոսակցություններուն մեջ ոչ մեկ մասնավոր ջանք չէր ըներ իրողությունը քողարկելու»[1]:

[1] Նշվ. աշխ., էջ 256:

Մորգենթաուն հավաստում է, որ տարագրությունները տեղի ունեցան 1915-ի գարնան ողջ ընթացքում: Մեծ քաղաքներից միայն Պոլիսը, Իզմիրը և Քյոթահյան խնայվեցին: Ուրիշ տեղերում հրամանից մեկ հայ անգամ զերծ չմնաց, որքան էլ զարգացած կամ հարուստ լիներ, կամ սոցիալական որ շերտին էլ որ պատկաներ: Գյուղերում սովորաբար մեկ-երկու օր առաջ փակցվում էին ծանուցումներ, որոնք հրամայում էին հայերին որոշված ժամին ներկայանալ հրապարակ, իսկ այլ վայրերում, մուեզինիկը շրջում էր փողոցներում և հրամանը հաղորդում բանավոր: Շատ տեղերում էլ ոչ մի ազդարարում չէր կատարվում, այլ պարզապես ոստիկան-զինվորները ցցվում էին հայերի տների առջև և հրամայում էին բոլոր բնակիչներին՝ հետևել իրենց: Ոստիկանությունը նրանց վրա էր ընկնում, ինչպես Վեզուվի հրաբուխը Պոմպեյի վրա. կանանց տանում էին լվացքի տաշտից կտրելով, մանուկներին խլում էին անկողիններից, հացը փռի մեջ կիսաեփ էր մնում, ընտանեկան ճաշը կիսատ էր մնում, տղաները դուրս էին բերվում դասարաններից, մշակները թողնում էին իրենց արորը: Նույնիսկ բռնադատվում էին նոր զավակ բերած կանայք: Մի շարք դեպքերում հայերին որոշ ժամեր կամ օրեր էին տրվում՝ իրենց գույքը տնօրինելու համար, բայց դա էլ պարզապես ավազակության էր հանգում: Հայերը կարող էին գույքը ծախել միայն թուրքերին, իսկ գները գույքի արժեքի չնչին մասն էին կազմում: Հայերին ծանուցում էին նաև, թե որովհետև իրենց տարագրությունը ժամանակավոր է և պատերազմից հետո նրանք պիտի վերադառնան, արգելվում էր տները ծախել: Բայց հազիվ էին հայերը գյուղերից հեռանում, և անա մահմեդական մուհաջիրները (Թուրքիայի ուրիշ մասերից գաղթածներ) փոխադրվում էին հայկական թաղերը: Հայերի բոլոր թանկարժեք իրերը՝ դրամ, մատանիներ, ժամացույցներ և գոհարեղեն— տարվում էին պահեստները՝ «ապահով պահվելու» համար մինչև իրենց վերադարձը, բայց թուրքերն անմիջապես դրանք բաժանում էին իրար մեջ: Սակայն այս ավազակությունները տարագիրներին ցավ չէին պատճառում, որովհետև նրանց աչքերի առջև ավելի սոսկալի տեսարաններ էին տեղի ունենում: Տարագիրների քարավանների մեկնումից առաջ տղամարդկանց բաժանում էին իրենց ընտանիքներից, չորսական խմբերով կապում միմյանց, բնակավայրերից դուրս էին տանում ու գնդակահարում: Շարունակ տեղի էին ունենում հրապարակային կախաղան-մահապատիժներ, առանց դատելու, այն միակ հանցանքով, որ կախվողները հայեր էին:

Ոստիկան-զինվորները առանձնակի եռանդ էին ցուցաբերում զարգացած և ազդեցիկ հայերին ոչնչացնելու գործում: Մորգենթաուն, վկայակոչելով ամերիկյան հյուպատոսներից և միսիոներներից ստացված տեղեկագրերը, պատմում է, թե ինչպես Էնկյուրիում 15—70 տարեկան բոլոր հայ տղամարդկանց ձերբակալեցին, չորսական խմբերով իրար կապեցին և ուղարկեցին դեպի Կեսարիա: Հինգ-վեց ժամ հետո, երբ նրանք հասան մի մեկուսի ձոր, նրանց վրա հարձակվեց **թուրք գյուղացիների խուժանը** (ընդգծումն իմն է— Մ. Կ)՝ զինված բրերով, մուրճերով, կացիններով, գերանդիներով, բահերով ու սղոցներով: Այս կերպ ոչնչացվեցին Էնկյուրիի բոլոր հայ տղամարդիկ, որոնց մեջ էին նաև բոլոր հարուստներն ու կրթվածները: Նրանց չարաչար կտրատված մարմինները թողնվեցին ձորի մեջ ու վայրի գազանների կեր դարձան[1]:

Նույն տեղեկագրերը պատմում են, որ Տրապիզոնում հայ տղամարդկանց նստեցնում էին նավակները, դուրս բերում բաց ծով, որտեղ բոլորին գնդակահարում ու դիակները ծովն էին նետում:

Հետևաբար, երբ քարավանների շարժվելու ազդանշան էր տրվում, նրանք բաղկացած էին լինում բացառապես կանանցից, երեխաներից ու ծերունիներից: Դիմադրության ընդունակ տղամարդիկ վաղօրոք արդեն ոչնչացված էին: Քարավանի մեկնումից առաջ երբեմն կանանց առաջարկվում էր մահմեդական դառնալ: Սակայն կրոնափոխները, որոնք շատ քիչ էին, պարտավոր էին իրենց զավակներին հանձնել իսլամ որբանոցներին և իրենք էլ ամուսնանալ մահմեդականի հետ: Եթե այդպիսին չգտնվեր, կրոնափոխը նույնպես ենթակա էր տարագրման: Սովորաբար քարավանին միանում էր ոստիկան-զինվորների մի պահակախումբ՝ իբր առաջնորդելու և նրանց պաշտպանելու նպատակով:

Ըստ նրա, **ստուգված տվյալներով այդ վեց ամսվա ընթացքում** դեպի Սիրիական անապատ քշվեցին 1 200 000 հայեր:

Հազիվ էին հայերը հեռացած լինում իրենց բնակավայրերից, երբ սկսվում էին հալածանքները: Թուրք սայլապանները, իրենց վարձակալների վերջին դրամը կորզելուց հետո հանկարծ նրանց գույքը թափում էին ճանապարհի վրա և գյուղ էին վերադառնում՝ նոր զոհեր գտնելու: Ալնպես որ, կարճ ժամանակ անց երիտասարդ թե ծեր դատապարտված էին ոտքով քայլելու: Այն ոստիկան-զինվորները, որոնց կառավարությունն ուղարկել էր իբր աքսորականներին պաշտպանելու համար, մի քանի ժամ անց դառնում էին նրանց հարստահարիչները: Նրանք իրենց պաշտպանյալներին հետևում էին ավիները հրացանների վրա հագց-

[1] Նշվ. աշխ., էջ 259

րած, խթանելով դահձաղ քայլողներին: Թուրքերը նույնիսկ սվիններով խթանում էին հղի կանանց, և եթե նրանցից մեկը ճանապարհի վրա զավակ էր ծնում, նույնպես պետք է անմիջապես ելներ ու միանար քայլողներին:

Հ. Մորգենթաուն կարևոր տեղեկություն է հաղորդում այն մասին, որ ճամփորդության ողջ ընթացքում **հայերը տևական պայքար են մղել իսլամ բնակիչների դեմ** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), վկայություն, որը, ցավոք, հաճախ չի պատահում: Նա գրում է, որ ոստիկան-զինվորներն առաջ էին անցնում՝ հայտնելու քուրդ ցեղերին և թուրք գյուղացիներին, թե իրենց զոհերը մոտենում են: Կառավարությունը նույնիսկ բանտերը բացեց և ազատ արձակեց դատապարտյալներին: Դրանով կարծեք թե Մորգենթաուն ճգնում է փոքր-ինչ մեղմել այն ճնշող տպավորությունը և միաժամանակ բացատրություն տալ, թե ինչու առհասարակ աքսորի ճանապարհներին հայերը կազմակերպված դիմադրություն գրեթե ցույց չեն տվել: Մեր կարծիքով, այդ հարցը ավելի խոր պատճառներ ունի և կարիք չի զգում առանձին համակողմանի ուսումնասիրության:

Մորգենթաուն խորին կսկիծով արձանագրում է, որ ճանապարհին հայերը հազարներով մեռնում էին սովից, ծարավից, տիֆից, դիզինտերիայից ու խոլերայից, հետ մնացողները տեղում սպանվում էին, իսկ թափորին անընդհատ հետապնդում էին դիակների համար իրար հետ գզվռտող շները, օդում պտտվում էին գիշակերների երամները:

Հեղինակի վկայությամբ ամենազարհուրելի տեսարանները տեղի ունեցան գետերի և, մասնավորապես, Եփրատի մոտ: Երգնկայի մոտ գետի մի ագույցի վրա հազարավոր դիակներն այնպիսի մի թումբ էին կազմել, որ Եփրատը իր հունը փոխել էր: Ամբողջ ճանապարհի ընթացքին մինչև Ռես-ուլ-Այն, որը Բաղդադի գծի առաջին կայարանն է, այդ թշվառ ուղևորների կյանքը մի կատարյալ արհավիրք եղավ:

Սեբաստիայի քարավանը միացավ Խարբերդի քարավանին, և ամբողջ քարավանի թիվը հասավ 18 000-ի: Նրանք հինգ օր քայլեցին՝ առանց հացի ու ջրի, գրեթե մերկ, անապատի խանձող արևի տակ: Նրանց լեզուները ածուխ էին դարձել, և երբ հինգ օր հետո մի աղբյուրի հասան, ամբողջ քարավանը դեպի ջուրը գնաց, սակայն ոստիկանները, ճանապարհը կտրեցին և արգելեցին անգամ մի կաթիլ ջուր խմել: Նրանց նպատակն էր՝ ջուրը ծախել գավաթը 1—3 ոսկով: Երբեմն էլ դրամը վերցնում, բայց ջուր չէին տալիս: Երբ ջրհոր էր հանդիպում, շատ կանայք ուղղակի իրենց ներսում էին նրա մեջ, և երբ դուրս էին գալիս,

մյուսները լիզում էին նրանց թաց շորերը: Տասնյոթերորդ օրը 18 000-ի միայն 150 կանայք և երեխաներ հասան Հալեպ:

Մորգենթաուն մեկնաբանում է մանրամասնություններ պատմելու իր նպատակը՝ անգլիախոս հասարակությանը հասկացնել, թե ինչ է թուրք կոչված ազգը: «Ես համոզված եմ,— ցավով ու զայրույթով գրում է ամերիկյան դեսպանը,— որ մարդկային ցեղին ամբողջ պատմությունը այնչափ ահավոր դրվագ մը չի պարունակեր: Անցյալին մեծագույն ջարդերը և հալածանքները գրեթե աննշան կթվին, բաղդատվելով 1915-ին հայ ցեղին կրած տառապանքներուն հետ... ուր գոնե 600 000 և թերևս մինչև անգամ 1 000 000 անձեր ոչնչացան»[1]:

Նա գտնում է, որ անտարակույս կրոնական մոլեռանդությունը շարժիչ դրդապատճառ էր, բայց այն մարդիկ, որոնք իրապես հղացան ոճիրը, անաստվածներ էին, որոնք նույնքան քիչ հարգանք ունեին մահմեդականության, քրիստոնեության հանդեպ և որոնց միակ դրդապատճառն էր պետական քաղաքականությունը:

Հաջորդ՝ 25-րդ գլխում Մորգենթաուն պատմում է Թալեաթի հետ իր մի հանդիպման մասին, որի ընթացքում բուդդոգի դաժանությամբ թուրք ներքին գործոց նախարարը պահանջում է իրենց հանձնել տարագիր հայերի համար Ամերիկայից իբրև օգնություն ստացված գումարները: Ամերիկյան դեսպանը փորձում է ազդել իրերի ընթացքի վրա, ասելով, որ երիտթուրքերը փափագում են Թուրքիան տեսնել իբրև ժամանակակից առաջադիմական աշխարհի մի մասը, մինչդեռ հայերի նկատմամբ վարվելակերպը թուրքերին մղում է հետամնաց ժողովուրդների շարքը: Թալեաթը պատասխանում է, որ հայերը մերժեցին զինաթափ լինելու պահանջը, դիմադրեցին Վանում և Զեյթունում, օժանդակեցին ռուսներին և ապագայում նրանցից պաշտպանվելու միայն մի միջոց կա՝ տարագրել հայերին: Նա հայտնում է հայերի նկատմամբ իր երեք հիմնական նկատառումները. 1. հայերը հարատացել են ի հաշիվ թուրքերի, 2. նրանք որոշել են անջատ պետություն կազմել և թուրքերի վրա բռնակալել, 3. նրանք բացեիբաց օգնել են ռուսներին ու դրանով պայմանավորել թուրքերի ձախողումները: Ահա թե ինչու իրենք անդառնալի որոշում են ընդունել՝ պատերազմը վերջանալուց առաջ անզոր դարձնել հայերին[2]: Երբ Մորգենթաուն փորձում է առարկել, որ Հայկական հարցը արդյունք է դարավոր հոռի վարչության և անարդարության, Թալեաթը

[1] Նշվ. աշխ., էջ 267:
[2] Նշվ. աշխ., էջ 280:

պատասխանում է, որ միևնույն է, հայերի երեք քառորդի հարցն արդեն լուծված է, Բիթլիսում, Վանում և Էրզրումում այլևս հայ չի մնացել, և թուրքերի ու հայերի միջև ատելությունն այնքան է ծավալվել, որ իրենք ստիպված են ավարտին հասցնել գործը, այլապես հայերը վրեժխնդիր կլինեն: «Մեր հայկական քաղաքականությունը բացարձակորեն որոշված է,— եզրափակում է խոսակցությունը թուրք ճիվաղը,— և ոչինչ չկրնար զայն փոփոխել: Անատոլուի որևէ կողմը ալ Հայ չենք ուզեր: Անոնք կրնան անապատին մեջ ապրիլ, բայց ուրիշ ոչ մեկ տեղ»[1]:

Դեսպանը մի վերջին անգամ փորձում է համոզել մարդակուլ պետական գործչին, որ հայերի բնաջնջումը տնտեսապես կխարխլի Թուրքիայի հիմքերը, որ թուրքերը կհեղինակազրկվեն ամբողջ աշխարհում, և Թուրքիան երբեք չի կարողանա փրկվել այդ անպատվությունից, որ, ի վերջո, դա զարհուրելի սխալ է: Սակայն ոչ մարդկային կերպարանքով նախարարը (նրա դաստակները սովորականից երկու անգամ երկար էին) անվրդով պատասխանում է, որ տնտեսական վնասը հաշվված է՝ այն չի անցնի 5 միլիոն ոսկուց, իսկ ինչ վերաբերում է սխալին, այո, իրենք կարող են սխալներ գործել, բայց երբեք չզղջալ: «Հայերի մասին Թալեաթի հետ շատ մը խոսակցություններ ունեցա, բայց երբեք չհաջողեցա ամենաթեթև չափով իր միտքը շարժել»,— հուսահատ գրում է դեսպանը[2]: Հայերի մասին խոսակցությունն ավարտվում է նրանով, որ Թալեաթը ցինիկորեն պահանջում է իրենց հանձնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում գտնվող հայերի գումարները, քանի որ դրանց տերերն ու ժառանգները այլևս կենդանի չեն: Եվ վերջապես դեսպանը հիշյալ գլուխն ավարտում է Թալեաթի՝ հանրահայտ դարձած հետևյալ պոռոտախոսությամբ. «Հայկական խնդիրը լուծելու տեսակետով՝ երեք ամսվան մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Աբդուլ-Համիտ երեսուն տարվան մեջ»[3]:

Աշխատության 26-րդ գլխում Մորգենթաուն կանգ է առնում Էնվերի հետ իր հանդիպումների վրա, նշում, որ պատերազմական նախարարը Թալեաթից տարբեր կերպար էր, որը կարողանում էր հաջողությամբ ծածկել իր զգացմունքները, քաղցրաբարո էր, պաղսպրտուն և քաղաքավարի: Հանդիպման ժամանակ Էնվերն արդարանում է, ասելով, որ ինքը դեռ երեք ամիս առաջ կանչել է հայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանին և ասել նրան, որ եթե հայերը փորձեն հեղափոխություն անել կամ ռուսներին օգնել, ինքը չի կարող նրանց պատասխանելիք չարիքները արգելել: Սակայն, ցավոք, իր զգուշացումը արդյունք չունեցավ, հայերը հեղափոխություն հարուցեցին և օժանդակեցին ռուսներին: Նրանք տիրացան Վան քաղաքին, ուժանակներ նետեցին կառավարական շենքերի վրա և բազմաթիվ իսլամներ սպանեցին, ուրիշ տեղերում էլ ապստամբություններ էին նախապատրաստում: «Մենք չենք կրնար թույլատրել մեր իսկ երկրին մեջ գտնվող մարդոց, որ մեր կոնակեն զարկեն մեզ: Մենք ստիպված ենք արգելել ատիկա, խնդիր չէ, թե ինչ միջոցի դիմել հարկադրված ենք: Բացարձակապես ճշմարիտ է, որ ես հակառակ չեմ հայերուն՝ իբրև ժողովուրդ: Ամենամեծ հիացումը ունիմ իրենց մտացիությանը և ճարտարահնարությանը համար, և ոչինչ ինձի ավելի հաճույք պիտի պատճառեր, քան տեսնել, **որ անոնք մեր ազգին մեկ մասը եղած են** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Բայց եթե անոնք մեր թշնամիներուն միանան, ինչպես ըրին Վանի նահանգին մեջ, այն ատեն փճացվելու են»[1]: Այնուհետև Էնվերը միանգամից «դասեր է տալիս» Ռուսաստանին, Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային և Ամերիկային, որոնք բարիք չեն անում հայերին, երբ քաջալերում են նրանց: Եթե այդ երկրները չքաջալերեին հայերին, նրանք կթողնեին ներկա կառավարության դեմ ելնելու իրենց բոլոր ջանքերը և կդառնային օրինապահ քաղաքացիներ: Դեսպանի այն առարկությանը, թե իսկ ինչո՞ւ չպատժել միայն հանցավորներին, ինչո՞ւ մի ամբողջ ժողովուրդ նահատակել՝ անհատների կարծեցյալ հանցանքների համար, ռազմական նախարարը պատասխանում է, թե այդ տեսակետը ճշմարիտ է խաղաղության ժամանակ, սակայն պատերազմի ժամանակ պետք է գործել վայրկենապես ու վճռականորեն: Էնվերը չի զլանում «դասեր տալ» նաև հայերին, որոնք նրա կարծիքով մեծ սխալ են գործում՝ ռուսներին կառչելով: Ըստ նրա՝ ռուսներն իրապես ավելի պիտի ուզեին հայերին մահացած տեսնել, քան ողջ, որովհետև հայերը նույնքան վտանգավոր են ռուսների համար, որքան թուրքերի: Եթե հայերը անկախության հասնեին Թուրքիայում, Ռուսաստանում էլ պիտի ջանային նույնն անել: Շինծու մեղադրանք ներկայացնելով հայերին ու քրդերին՝ միայն Վանի նահանգում բոլոր թուրքերին կոտորելու և 30 000-ին էլ փախստական դարձնելու համար, Էնվերը երեսպաշտորեն խոստանում է նեղություն չտալ Պոլսի 70 000 հայերին, բացի դաշնակցականներից ու դավադիրներից և առհասարակ

[1] Նշվ. աշխ., էջ 281:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 284:

[1] Նշվ. աշխ., էջ 287:

դադարեցնել հայերի ջարդերը: Զրույցի վերջում Էնվերը նույնպես «խորհրդավոր» խորհուրդ է տալիս հայերին օգնելու ամերիկյան դրամ տալ իրենց, և իրենք կհոգան հայերի կարիքները, պատճառաբանելով, թե պետք չէ, որ հայերը գիտենան, որ իրենք ԱՄՆ-ի նման պաշտպան ունեն: Դա նրանց պիտի ըմբոստության քաջալերի, և իրենք էլ ստիպված պիտի լինեն շատ պատուհասել հայերին: Ամերիկյան դեսպանը մի քանի առիթներով փորձում է հայկական հարցի վրա հրավիրել նաև եպարքոս (վարչապետ— Մ.Կ.) և արտգործնախարար Սայիդ Հալիմի ուշադրությունը: Դեսպանը հույս ուներ, թե նախարարապետի վերաբերմունքը հայերի հանդեպ այլ կլինի, որովհետև նա թուրք չէր, այլ եգիպտացի, և բացի այդ, կրթված ու դաստիարակված մարդ էր: Բայց սխալվում էր. եպարքոսը հայերին ճիշտ նույնչափ թշնամի էր, որչափ Թալեաթն ու Էնվերը: Հանդիպումներից մեկի ժամանակ բարկությունից կարմրած դեմքով Սայիդ Հալիմը մի երկար պարսավաճառ է արտասանում ողջ հայ ժողովրդի հասցեին և հայտարարում, թե հայ «ապստամբները» Վանի նահանգում սպանել են 120 000 թուրք: Երբ դեսպանն առարկում է եպարքոսի այլ և այլ անհեթեթ հայտարարություններին, վերջինս ամպատկառորեն հայերի չարչարանքների ողջ պատասխանատվությունը վերագրում է ամերիկացիների՝ հայերի հանդեպ տածած համակրանքին[1]:

Որևէ արդյունքի չհանգեցրին Մորգենթաուի հանդիպումները նաև արտգործնախարար Խալիլ բեյի հետ: Խալիլն ինքն է այցելում ամերիկյան դեսպանին, կցկտուր բացատրություններ տալիս հայկական վայրագությունների մասին, ցավ հայտնում գործված ծայրահեղությունների ու չարաշահումների համար, բայց վերջին հաշվով կրկնում է Վանի «ապստամբության», հայերի անկախության ձգտման, ոուսներին օգնելու վարկածը և ստեղծված պայմաններում հայերին դեպի հարավ տարագրելու ստիպողական անհրաժեշտությունը: Քիչ ավելի ուշ Խալիլը պահանջում է ամերիկյան դեսպանից՝ դադարեցնել ամերիկյան հյուպատոսների կողմից հայերի մասին Ամերիկա տեղեկագրեր ուղարկելը:

Գրքի 27-րդ գլուխը Մորգենթաուն նվիրել է հայկական հարցում Գերմանիայի դիրքորոշմանը: Նա այն համոզմունքն է հայտնում, որ 1915—1916 թվականներին արևմտահայությանը տարագրելու գաղափարը թուրքերին թելադրել էին գերմանացիները[2]:

Հայերի դեմ գործադրված գերմանական պետական քաղաքակա-

[1] Նշվ. աշխ., էջ 300:

[2] Նշվ. աշխ., էջ 306:

նությունը ամերիկյան դեսպանը իրավամբ բխեցնում է սուլթանի և Վիլհելմ Բ-ի բարեկամությունից: Ահա թե ինչու, երբ ամերիկյան դեսպանի մոտ միտք է հղանում բոլոր երկրների դիվանագիտական ներկայացուցիչների միացյալ դիմում ուղարկել օսմանյան կառավարությանը՝ բռնաարարքները դադարեցնելու մասին, գերմանական դեսպան Վանգենհայմը անմիջապես ցուցադրում է իր հակակրանքը «դավադիր» ու «ապստամբ» հայերի հանդեպ, հայտարարելով, որ ինքը ոչինչ չպիտի անի այդ «ըմբոստ անպիտանների» համար[1]: Գերմանական դեսպանի լսիրշությունը հասնում է այնտեղ, որ նա պահանջում է ԱՄՆ-ից՝ ռազմանյութ չվաճառել Անգլիային և Ֆրանսիային, և այդ պայմանով միայն իրենք կմտածեն հայերին օգտակար լինելու մասին: Վանգենհայմի կարծիքով հայերն ապացուցեցին թուրքերին թշնամի լինելը, հետևաբար այդ երկու ժողովուրդները չեն կարող նույն երկրում ապրել: Նա առաջարկում է հայերի մի մասին տեղափոխել Ամերիկա, մյուս մասին էլ իրենք կուղարկեն Լեհաստան և նրանց փոխարեն հայկական նահանգներ կբերեն լեհ հրեաների:

Եվ սակայն 1915-ի հուլիսի 4-ին Վանգենհայմը բոլորի պաշտոնական ծանուցագիր ներկայացրեց եպարքոսին, բայց ոչ Թալեաթին ու Էնվերին, որը լոկ ձևականություն էր: Այդ կարծեցյալ բողոքը հանձնելու պահին անգամ գերմանական դեսպանը Մորգենթաուին բացատրում էր այն պատճառները, թե ինչու Գերմանիան չէր կարող իրականապես գործնական քայլեր անել՝ հայկական ջարդերը վերջացնելու համար:

Ամերիկյան դեսպանի արտահայտությամբ Վանգենհայմը այնքան ոխերիմ չէր հայերի հանդեպ, որքան Պոլսի գերմանական ծովային կցորդ Հումանը, որը մեծ ազդեցություն ուներ և գերմանացի մի դիվանագետի բնորոշմամբ Էնվերից ու Թալեաթից ավելի թուրք էր: Նա Էնվերի բարեկամն էր, գերմանական կայսեր անձնական գաղտնի պատվիրակը: Երբ Մորգենթաուն փորձում է հայերի հարցում օգտվել Հումանի կապերից ու հեղինակությունից, վերջինս Հայկական հարցի մասին արտահայտվում է ծայրահեղ բրտությամբ: Նա ասում է, թե թուրքերը պարտավոր են իրենց պաշտպանել, ուստի կատարելապես իրավունք ունեն իրենց արածների համար: Եվ Հումանը վկայակոչում է Գատր-Քյոյում իբր հայտնաբերված հայերին պատկանող 70 000 հրացանները: Ծովային կցորդի կարծիքով բոլոր հայերն աշխատում են Թուրքիայի ուժի խորտակման ուղղությամբ, ուրեմն մի բան է մնում անելու՝ տարա-

[1] Նշվ. աշխ., էջ 310:

գրել նրանց, իսկ Էնվերը բարեսիրտ մարդ է, անձնապես նա չի կարող նույնիսկ մի ճանճի վնասել, բայց երբ հարցը գալիս է ինքնապաշտպանության, նա ոչ աչ կնայի, ոչ էլ ձախ[1]:

Հայկական հարցի նկատմամբ իր թշնամանքը չէր թաքցնում նաև Գելիբոլու թերակղզում ամերիկյան դեսպանի որդուն ընդունած գերմանական ոչ անհայտ գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը դեսպանին մեղադրում է թուրքերի չարագործությունների մասին ամերիկյան մամուլում նյութեր հրապարակելու համար:

1916 թվականի սկզբին հայ ժողովրդի մեծ բարեկամ Հենրի Մորգենթաուն պաշտոնաթող եղավ և վերադարձավ հայրենիք:

***

Փաստավավերագրական և գիտական մեծ արժեք է ներկայացնում ամերիկյան իրավաբան-միջազգայնագետ Հերբերտ Ադամս Գիբոնսի «Ժամանակակից պատմության սնագույն էջը» գիրքը[2]: Առաջաբանում հեղինակը պարզաբանում է, որ Թուրքիայում ինքը գտնվել է մի այնպիսի դիրքում, որ հնարավորություն է ունեցել մոտիկից ճանաչելու հայերին, ինչպես նաև ծանոթանալու երիտասարդ թուրքերի նոր ռեժիմին ու նրանց իսկական նպատակներին: Նա ականատես էր նաև Կիլիկիայի (Ադանա) և Հյուսիսային Սիրիայի 1909-ի հայկական նախճիրին, երբ իր աչքերի առաջ հոսեց հայերի արյունը: Այս պարզաբանումը հեղինակը տալիս է անտեղակության մեջ չմեղադրվելու համար: «Կարևոր կնկատեմ հայտարարել թե,— այդ կապակցությամբ գրում է նա, — հոս ցույց տրված իրողությունները կուգան մեկու մը կողմե, որ մոտեն անձնական տեղեկություն ունի անոնց **վավերականության** (ընդգծումն իմն է— Մ. Ս.) մասին, և այս փաստերու նկատմամբ եղած դատողությունը արդյունք է տարիների ուսումնասիրության զգուշավոր, մանրակրկիտ քննության»[3]:

Գրքի առաջին գլխի բովանդակության հանրագումարային իմաստն այն է, որ ցույց է տրվում, թե ինչպես 1915-ի ապրիլին օսմանյան կառավարությունը Թուրքիայի մի ծայրից մյուսը սկսեց գործադրել սիստեմատիկ և խնամքով պատրաստված մի ծրագիր՝ հայ ցեղը բնաջնջելու համար: Վեց ամսվա ընթացքում մոտավորապես **մեկ միլիոն** հայեր (ընդգծումն իմն է— Մ. Կ.) սպանվեցին: Զոհերի թիվը և նրանց սպանելու եղանակը ժամանակակից պատմության մեջ անհախընթաց է:

Գիբոնսը վկայում է, թե ինչպես դեռևս 1914-ի աշնանը թուրքերը բանակի համար քրիստոնյաների և իսլամների զորահավաք սկսեցին, և հայերը նույնպես զինվորական ծառայության կանչվեցին: Ուներներից զինվորական փրկագին գանձվեց, բայց մի քանի շաբաթ անց փրկագնի ստացականները չեղյալ համարվեցին և նրանց տերերին էլ սկսեցին զինվորագրել: Պոլսի շրջանակներում գտնվող հայ երիտասարդ զինվորները տեղակայվեցին գործող բանակում, ինչպես Բալկանյան պատերազմի ժամանակ, իսկ ավելի տարիքավորներն ու հեռավոր վայրերի հայերը ուղարկվեցին ճանապարհների, երկաթուղիների և ամբարտակների շինարարության վրա աշխատելու: Ուր էլ որ ուղարկվեցին հայերը, նրանք բարեխղճորեն կատարեցին իրենց պարտքը, քաջ զինվորներ և ուշիմ, ժրաջան ու շինարար աշխատավորներ դուրս եկան:

Այնուհետև հեղինակը հավաստում է, թե ինչպես 1915-ի ապրիլին Պոլսից հրամաններ ուղարկվեցին Փոքր Ասիայի տեղական իշխանություններին՝ գործադրել ամեն միջոց՝ կանխարգելելու հայերի կողմից փորձվելիք ապստամբական որևէ ձեռնարկ: «Տեղական իշխանության շեշտված էր,— գրում է հեղինակը,— թե հայեր կայսրության ապահովության ծայրահեղ վտանգ կսպառնային և ազգային պաշտպանությունը կպահանջեր **հրամայականորեն** (ընդգծումը հեղինակինն է— Մ. Կ.) կանխազգուշական խստություն, հայերը անվնաս դարձնելու»[1]:

Նա վկայում է, թե ինչպես մի շարք վայրերի տեղական իշխանությունները պատասխանեցին, թե իրենք չեն նշմարել որևէ կասկածելի գործունեություն հայերի կողմից և հիշեցրին կառավարությանը, թե հայերը ոչ մի վնաս չէին կարող հասցնել, քանի որ զենք չէին կրում, իսկ ամենից կորովի հայկական տարրը բանակում էր գտնվում: Բայց թուրք պաշտոնյաների մեծագույն մասը պատրաստակամ և եռանդագին՝ Պոլսից եկած թելադրանքը կատարեց, և հայկական ջարդերի մի նոր թվական սկսվեց:

Այնուհետև Գիբոնսը նկարագրում է, թե ինչպես նախ այդ ձեռնարկը ամենաքիչ դժվարություններով գործադրելու համար, դեռևս քաղաքներում և գյուղերում մնացած հայ բնակչության տղամարդկանց

[1] Նշվ. աշխ., էջ 314:

[2] Հ. Ա. Գիբոնս, Ժամանակակից պատմության սնագույն էջը: 1915-ի հայկական դեպքեր: Իրողություններ և պատասխանատվություններ: Թարգմ. Ա. Սաղաթելյան և Ե. Մարկան: Նյու-Յորք, 1916:

[3] Նշվ. աշխ., Առաջաբան:

[1] Նշվ. աշխ., էջ 22:

հրամայվեց հավաքվել քաղաքից դուրս մի վայրում՝ ժանդարմների հսկողության տակ, ոտքի ոչ ոք աչքից չվրիպեց: Դրանց բոլորին սրի քաշեցին: Խոշոր քաղաքներում հայերի մեծ մասը իրենց տներում սպանվեցին: Ծովեզերյա քաղաքների հայերը նավակներով բաց ծով տարվեցին և... զարմանալիորեն շուտ վերադարձան՝ առանց իրենց ուղևորների:

Շինարարության վրա աշխատողներից կազմեցին 300—500 հոգուց բաղկացած խմբեր և գնդակահարեցին: Այնուհետև սկսեցին հեռագրել Պոլիս՝ Թալեաթ բեյին, թե «հայկական հեղափոխություներ» ջախջախված է: Թալեաթն էլ իր հերթին շնորհակալական հեռագրեր հղեց նրանց, և այդ հեռագրերը ցույց տվեցին չեզոք դիվանագետներին ու թղթակիցներին:

«Ինքզինք հայ ցեղի գործունյա արու դասեն ազատելե ետքն ալ թուրք կառավարությունը տակավին աննահանգիստ կզգար: Ծեր, կին, տղա և մանուկ վտանգավոր տարրեր էին Օսմանյան կայսրության,— շարունակում է հեղինակը:— Պետք էր հայությունը Թուրքիայեն արմատախիլ անել: Սակայն արդյոք ինչպես կարելի էր գործադրել այս նպատակը... Թալեաթ բեյ պատրաստած էր իր ծրագիրը— Տեղահանություն— զինվորական անհրաժեշտություն՝ բայց կատարելապես մարդկային»[1]: Նա վկայում է, որ մայիսից մինչև օգոստոս՝ օսմանյան կառավարությունը մեթոդիկ կերպով հետապնդեց մի ծրագիր, քան հնարավոր հոռեգույն ջարդը: Փոքր Ասիայի յուրաքանչյուր նահանգ հեռագրվեց բովանդակ հայությանը դեպի Միջագետք տեղահան անելու մասին:

Հրամանը որոշ էր և մանրամասն: Ծերերը, հիվանդները և հղի կանայք բացառություն չէին կազմում: Միայն հարուստ վաճառականները, դրամատերերը և գեղադեմ կանայք ու աղջիկները արտոնված էին ազատ մնալ՝ մահմեդական կրոնը ընդունելու պայմանով: Երկու օրից մինչև վեց ժամ էր տրված պատրաստության համար: Տնային առարկաներ, անասուն կամ ավելորդ զգեստ արգելված էր տանել: Եվ պիտի քայլեին հետիոտն՝ կիզիչ արևի տակ, անջրդի ձորերով և ձյունապատ լեռների կիրճերով: Ճամփորդությունը տևում էր երեքից մինչև ութ շաբաթ: «Ծերեր, հիվանդներ և փոքր մանուկներ ինկան ճամբաներուն եզերքը, անգամ մըն ալ չեղլելու պայմանով... Երկունքի մեջ եղող կիներ սայլերով ու խարազաններով առաջ կքշվեին, մինչև որ մահը ազատեր զիրենք: Սիրուն աղջիկներ կխլվեին հարեմներուն համար... Մայրեր, խելագար՝ գետը նետեցին իրենց զավակները, անոնց տառապանքին վերջ տալու համար»[1]:

Հ. Ա. Գիբոնսը վկայում է, որ ինքն ունի նույնօրինակ փաստեր՝ ամերիկյան, անգլիական, գերմանական և շվեյցարական ականատեսների տված, որոնց վկայությունները իրար հաստատում են:

Եղեռնի հանցավորների և պատասխանատուների բացահայտման առումով մեծ արժեք է ներկայացնում ֆրանսիացի պատմաբան և հրապարակախոս Ռենե Պինոնի «Հայերի բնաջնջումը. գերմանական մեթոդ-թուրքական գործելակերպ» գրքույկը[2]:

Ֆրանսիացի հեղինակը գրում է, թե ջարդի պատմության մեջ աչքի զարնողը կանոնաշոր և սիստեմատիկ կազմակերպվածությունն է, որի մեջ գերմանացիները պիտի գտնեն իրենց դաշնակիցներին ու աշակերտներին: Գործողությունն սկսվում է ոչ թե մի ժողովրդի՝ մյուսի վրա հարձակվելով, այլ գյուղերում կառավարության կողմից փակցրած հայտարարությամբ: Ամեն ինչ անցնում է ահռելի կարգապահությամբ: Քաղաքներում չեն սպանում՝ հիվանդություններից խուսափելու համար: Քարավանները միացվում են որոշված օրը և որոշված ժամին: Կանխապես լուր է տրվում քրդերին և ավազակներին, որոնք գալիս են ժամադրության:

Շարունակելով իր դատողությունները եղեռնի պատասխանատուների մասին, Ռ. Պինոնը հայտնում է այն միտքը, որ երիտթուրքերից բացի կա նաև մեկ ուրիշ պատասխանատվություն, այդ այն է, որ թուրք դահլիճը մի ազատ կառավարություն չէր, այլ ողղակի կախում ուներ Գերմանիայից: Պոլսի գերմանական դեսպանը ավելի ազդեցություն ուներ, քան ունեին միևիստրները, Արևմտյան Հայաստանի բոլոր գլխավոր կենտրոններում կային հյուպատոսներ: Նրանք, անշուշտ, օր օրի տեղեկանում էին մի ամբողջ ժողովրդի բնաջնջման մասին, որ տեղի էր ունենում գերմանական գործակալների աչքի առաջ, սակայն դեսպանատունը ոչինչ չարեց արգելելու կամ մեղմացնելու համար սարսափները, այլ ինքն իսկ տեղեկացրեց իր կառավարության թուրքերի աղետավոր ծրագրի մասին, և կառավարությունը լուռ մնաց կամ հավանություն հայտնեց: Այնուհետև Ռ. Պինոնը փաստեր է բերում այն մասին, որ տեղ-տեղ գերմանական հյուպատոսները իրենք են քաջալերել ու

[1] Նշվ. աշխ., էջ 27:

[1] Նշվ. աշխ., էջ 29:

[2] Պինոն Ռ., Հայերու բնաջնջումը: Գերմանական մեթոդ— թրքական գործելակերպ: Թարգմ. Մ. Չոբուրյան, Կ. Պոլիս, 1919:

անձամբ ղեկավարել ջարդերը: Հիշատակվում է մասնավորապես Պ. Ռոսլերը, Հալեպի հյուպատոսը, որի դերը տեղի ջարդերի գործում անուրանալի է: Նույնը ասված է նաև Ուրֆայի գերմանական հյուպատոսի մասին, որը նույնպես վարում էր ջարդերը: Վկաները նաև հաստատում են, որ գերմանացի տպաները ղեկավարում էին մասսայական գնդակահարությունները: Նա պատմում է, թե ինչպես Վաշինգտոնի գերմանական դեսպան Պ. Բեռնշտորֆը նախ ուրացավ ջարդերի իրականությունը, իսկ հետո հայտարարեց, թե ռուսներն էին, որ ստիպում էին Էջմիածնի կաթողիկոսին՝ տարածել նման պատմություններ: Իսկ հունիսի 6-ին գերմանական «Վոլֆ» գործակալությունը պաշտոնական հայտարարություն հրապարակեց այն մասին, թե հայերի կոտորածների մասին լուրերը սուտ են, թե Էրզրումի, Երզնկայի, Ակնի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերը որևէ շարժում չեն կատարել՝ հանրային անդորրը խանգարելու ուղղությամբ, որը անհրաժեշտ դարձներ մասնավոր խստություններ կիրառել նրանց դեմ, և այդ մասին գիտեն չեզոք պետությունների հյուպատոսները:

Ավելի ուշ, վկայում է Ռ. Պինոնը, գերմանական դեսպանությունը ներկայացրեց մի տեղեկագիր, որով արդարացվում էին ջարդերը այն պատճառաբանությամբ, թե հայերը դավաճանում էին թուրք կառավարությանը, և օժանդակում էին ռուսներին, իսկ գերմանական մամուլը որդեգրեց դեսպան Վանգենհայմի այն թեզը, թե Գերմանիան չի կարող միջամտել օսմանյան կառավարության ներքին գործերին: Բանը հասավ այնտեղ, որ գերմանական մամուլը սկսեց «ապացուցել», թե հանցանքը հայերինն էր, իսկ ոմն կոմս Էռնեստ Ռևենտլով հայտարարեց մամուլում, թե Թուրքիան ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է պատժել ըմբոստ և արյունածարավ հայերին[1]: Կոմսի կարծիքով հեղափոխական հայերն են, որ Ռուսաստանի և մանավանդ Անգլիայի դրդումով պատրաստեցին ապստամբություններ և լրտեսություններ, իսկ թուրքերը վրեժ լուծեցին միայն, ի գործ դրեցին իրենց կառավարական իրավունքը, ճնշեցին հայկական շարժումը առանց ջարդելու: Իթթիհատական կառավարությունը վերջ տվեց քրդերի չարագործություններին, բայց հայերի հեղափոխական շարժումները գոյատևեցին:

Ռ. Պինոնը եզրակացնում է, որ հարյուր հազարավոր հայերի ջարդը ավերեց ամբողջ Անհական Թուրքիայի ճարտարարվեստը և առևտուրը, որը մի կատարյալ աղետ էր Օսմանյան կայսրության համար:

[1] Նշվ. աշխ., էջ 56:

***

Հայոց եղեռնի պատմության անգերագնահատելի վավերաթուղթ է հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, Մերձավոր Արևելքի Միսիոներական ընկերության և Գերմանա-հայկական ընկերության նախագահ, աստվածաբանության դոկտոր **Յոհաննես Լեփսիուսի** «Հայաստանի ջարդերը» գաղտնի տեղեկագիրը, որի հայերեն թարգմանությունը լույս տեսավ Պոլսում, 1919-ին[1]:

«Տարագրություն» բաժնում գերմանացի դոկտորը տալիս է տեղահանության մանրամասն աշխարհագրությունը, հատվածներ է բերում ամերիկյան հյուպատոս Ջեկսոնի տեղեկագրից, որից երևում է, որ թուրքերը ձերբակալել ու ոչնչացրել են բոլոր հայ երևելիներին՝ տարագրությունը առանց աղմուկի և ընդդիմության գլուխ բերելու համար:

Այդտեղիչ երևում է նաև, որ ամենավայրագ միջոցներով հայ ազգաբնակչության զենքերը հավաքելուց զուգահեռ տեղի է ունեցել թուրք ազգաբնակչության զինումը: Իթթիհատական ակումբները ներքին գավառներում կազմել էին հրոսակախմբեր՝ բանտերից ազատված ոճրագործներից, որոնց տրված էր ամենայն ազատություն և լիազորություն[2]:

Լեփսիուսը վկայում է, որ զանազան նահանգների քաղաքների ու գյուղերի տարագրությունը շուտով վերածվեց կանոնավոր բնաջնջումի:

Վկայակոչելով Զեյթունի, Շապին-Գարահիսարի, Վանի ինքնապաշտպանական գոյամարտերը, ինչպես նաև մի քանի նմանօրինակ գործողություններ, Լեփսիուսը գտնում է, որ դրանք միմյանց հետ ոչ մի առնչություն չունեին, իրարից մոտ 400 կմ հեռու էին, և տեղի ունեցան տարբեր ժամանակներում: Նա ժխտում է դրանց կանխամտածված շարժում լինելու կեղծ վարկածը, գրելով, որ միայն հարձականքն էր կանխամտածվածը, որ գործադրվեց մեթոդիկ եղանակով:

Նկատենք, որ հակառակ շատ հեղինակների, որոնք ժխտում են Զեյթունի դիմադրության գոյությունը 1915-ին, Լեփսիուսը այն ևս հաստատում է գոյամարտի օջախ: Ցավոք, նա չի անվանում «բանի մը նմանօրինակ իրողությունների» տեղանունները:

«Թուրք կառավարությունն ինքն ալ երբեք հաստատած չէ,— շարունակում է Լեփսիուսը,— թե հայ ժողովուրդը հեղափոխական ըմբոստությամբ մը ինքզինքը մեղապարտ կացուցած ըլլա: Ամբողջ ամիսներ

[1] Լեփսիուս Յո., Հայաստանի ջարդերը. Գաղտնի տեղեկագիր դոկտոր Յոհաննես Լեփսիուսի: Թարգմ. Մ. Շամտալճյան, Կ. Պոլիս, 1919:

[2] Նշվ. աշխ., էջ 27—32:

մենք թուրք մամուլից մեջ կկարդայինք, թե հայերը հավատարիմ մնացած էին իրենց թուրքական հայրենիքին»[1]: Նա հավաստում է, որ պատերազմի առաջին օրվանից բովանդակ հայ մամուլը հրավիրում էր հայ ժողովրդին՝ օսմանյան հայրենիքի միությունը պաշտպանելու: Հայ լուսավորչական եկեղեցու պատրիարքը շրջաբերական հեռագիր ուղարկեց բոլոր իր թեմերին՝ ամեն տեսակ զոհողությամբ հավատարմություն դրսևորել և պաշտպանել օսմանյան հայրենիքը: Այդ փաստերի հիման վրա էր, որ թուրքական մամուլն էլ իր հերթին հայտարարեց, թե հայ ժողովրդի ընթացքը ըստ ամենայնի ողջամիտ է եղել՝ սկսած ռուս-թուրքական թշնամության առաջին օրից:

Երբ պատերազմական նախարար Էնվեր փաշան փետրվարին Կովկասի ճակատից Պոլիս վերադարձավ, հայոց պատրիարքին մասնավոր գոհունակություն հայտնեց հայ զորագնդերի վարմունքի և քաջության համար, նույնիսկ նշեց Հովհաննես չաուշի անունը, որն իր մարդկանցով փրկել էր փաշայի սպայակույտը տագնապալի մի կացությունից և պատվանշանի արժանացել:

Սկզբում Լեփսիուսն այն կարծիքն է հայտնում, թե ռուս-թուրքական պատերազմի առաջին հինգ ամիսներին որևէ նշան չկար կարծել տալու համար, թե կենտրոնական կառավարությունը բացասաբար տրամադրված լիներ հայերի հանդեպ[2]:

«Մենք ուրեմն դեմ առ դեմ կգտնվինք այն նշանավոր իրողության հետ,— ամփոփում է այս կապակցությամբ իր մտքերը Հ. Լեփսիուսը,— զոր թուրք կառավարությունը ոչ միայն պատերազմի առաջին ամիսներուն, այլ մինչև սեպտեմբեր ամիսը ինքզինք գոհ ցույց կուտա հայ ազգին ընթացքեն և բան մը չի գիտեր հայ ժողովուրդին ընդհանուր մեկ դավադրութենեն, որ պատուհասելու արժանի կրնար եղած ըլլալ»[3]:

Սակայն, քննարկելով երիտթուրքերի պանիսլամական և պանթուրքական ծրագրերը, Լեփսիուսը գալիս է այն եզրակացության, որ տարագրության որոշումը և նրա մասը կազմող ջարդերը բացեիբաց պայմանավորված են երիտթուրքական պարագլուխների 'հայերի գլխից բարեհորոգումներ ստանալու գաղափարը մեկընդմիշտ հանելու ցանկությամբ: Նրանց կարծիքով կյանքի, ինչքի ապահովության, քաղաքացիական հավասարության, ազգային մշակույթի և լեզվի հանդեպ հարգանքի վերաբերյալ հայերի հավակնությունն իսկ արդեն գերագույն դավաճանություն է, հետևաբար պետք է պատժվի, եթե պարագաները նպաստավոր լինեն: Դրան հետևում է Լեփսիուսի այն միտքը, թե հայերին բնաջնջելու դիտավորությունը գոյություն ուներ պատերազմի հենց սկզբից:

Իր ամփոփիչ խոսքում Հ. Լեփսիուսը այն միտքն է հայտնում, թե հայերը երբեք կողմնակից չէին Ռուսաստանի կողմից Թուրքիայի ոչնչացմանը, որովհետև դաշնակցության ազգային ծրագիրը նախատեսում էր, որ հայ ժողովուրդն իր ստանալիքը պիտի ստանա այդ նույն Թուրքիայից: Ուստի, շարունակում է Լեփսիուսը, Թուրքիան պիտի օգտագործեր հայ տարրը իբրև զորավոր պահակ ամբողջ Կովկասի սահմանագլխի վրա: Սակայն երիտթուրքական կոմիտեն կուլ գնաց համաթրքության դոնքիշոտության պատրանքային գաղափարին, վազեց համիդյանական տիեզերական կայսրության հետևից և ծրագրեց հայ ցեղի բնաջնջումը, որն այնքան սատար էր եղել Թուրքիայի բարգավաճմանը[1]:

***

Հայոց Մեծ եղեռնի պատմության համակողմանի ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունի թուրք հասարակական գործիչ, լրագրող, երիտթուրքական կուսակցության երբեմնի ղեկավար անդամ Մեվլան Զադե Ռիֆաթի աշխատությունը[2]: Բազմիցս ներկա գտնվելով Իթթիհատի գաղտնի նիստերին, հեղինակը քաջատեղյակ էր նրանց գործերին, և այդ առումով աշխատությունը վավերագրական հավաստի փաստաթղթերի հավաքածուի նշանակություն ունի: Հեռանալով Իթթիհատից և անցնելով Իթիլաֆ կուսակցության շարքերը, հենց պատերազմի ժամանակ Մ. Ռիֆաթը ենթարկվեց հալածանքների, աքսորվեց կայսրության ներքին նահանգներից մեկը: Հետագայում Մ. Քեմալի դեմ կազմակերպված դավադրությանը մասնակցելու մեղադրանքով դատապարտվեց: Մահացավ 30-ական թվականներին ' Հալեպում (ծննդյան և մահվան ստույգ թվականները հայտնի չեն):

Մ. Ռիֆաթի աշխատությունը բաղկացած է եղել չորս մասից, սա-

[1] Նշվ. աշխ., էջ 171:
[2] Նշվ. աշխ., էջ 172:
[3] Նշվ. աշխ., էջ 174:

[1] Նշվ. աշխ., էջ 227:
[2] Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանեան Յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները: Երևան, 1990, ֆաքսիմիլ հրատարակություն:

կայն հրատարակվել են 1—2 մասերը՝ 1929-ին, Հալեպում, թուրքերեն լեզվով: Հետագայում մի քանի անգամ հրատարակվել է արևմտահայերենով: Հայերեն վերջին հրատարակությունները եղել են 1968-ին և 1975-ին, Բեյրութում:

Նկարագրելով 1915-ի հունվարին Սարիղամիշի ճակատամարտում Էնվերի գլխավորած թուրքական բանակի ծանր պարտությունը, որտեղ թուրքերը կորցրին 75 000 զինվոր, Ռիֆաթը գրում է, որ այդ աճուղի պարտությունից հետո ռուսները Վանի, Տրապիզոնի, Էրզրումի և Երզընկայի ուղղություններով սկսեցին առաջխաղացումը, որի ժամանակ ռուսական զորքին առաջնորդում էին հայ կամավորները, որոնց սրտերում եռում էր վրեժը: Նա նշում է, որ մինչ այդ դաշնակցական ղեկավարները իթթիհատի ղեկավարների հետ համաձայնության էին եկել և 1914-ի հունիսին կայացած Էրզրումի 8-րդ համագումարում վավերացրել էին ռուս-թուրքական պատերազմի պարագայում հայերի չեզոքությունը պահպանելու որոշումը:

Սակայն Իթթիհատի կառավարությունը, տեղեկանալով հայ կամավորների՝ ռուսական բանակը առաջնորդելու մասին, այդ պարագան հարմար առիթ նկատեցին դաշնակցության հետ կնքած համաձայնությունը չեղյալ համարելու համար և Պոլսում ու գավառներում գտնվող բոլոր դաշնակցական շեֆերին մեկիկ-մեկիկ ձերբակալելով՝ քշեցին զանազան վայրեր ու ճանապարհին սպանեցին[1]: Այդ շարքում նա հիշատակում է Զոհրապի, Վարդգեսի, Տիրան Քելեկյանի, Խաժակի, Ռ. Զարդարյանի, Հ. Ճանկյուլյանի, Ակնունու, Ն. Տաղավարյանի անունները: Այնուհետև նա ավելացնում է, որ զինվորագրվող հայ երիտասարդներին էլ ճանապարհների շինության ուղարկելով՝ սկսեցին տաժանակիր աշխատանքներով ոչնչացնել: Հեղինակը հայությանը մինչև վերջին անհատը բնաջնջելու որոշման գլխավոր պատճառներից մեկն էլ համարում է Վանի գրավումը, Ջևդեթին փախուստի մատնելը, Արամ Մանուկյանին ժամանակավոր կառավարության կառավարիչ նշանակելը:

Մ. Ռիֆաթը գրում է, որ հպանցիկ ակնարկով հնարավոր չէ ոճիրի ողջ անհավորությունը ներկայացնել, դրա իրական պատճառներն ու պատասխանատուները պարզելը համարում է մեծ ծառայություն պատմության առջև, ուստի նպատակահարմար է համարում նույնությամբ արձանագրել տեղի ունեցած իթթիհատի գաղտնի խորհրդակցությունը:

Թալեաթի նախագահությամբ գումարված այս գաղտնի նիստում

[1] Նշվ աշխ., էջ 90:

առաջին խոսքը տրվում է դոկտոր Նազըմին, որը խնդիրը բացատրում է հետևյալ կերպ. «Հարգելի ընկերներ, առանց արյունահեղության կատարված հեղափոխություններում պտուղը խակ, լեղի և անմարսելի կըլլա... Հայերը, հակառակ իրենց չեզոքություն պահելու խոստումին՝ ռուսական բանակի կամավոր արձանագրված հրոսակային խմբեր կազմելով, մտած գյուղի և քաղաքի բնակչությանը առանց խղճահարության սպանած և տեղ-տեղ ապստամբություններ հանելով մեր վրա հարձակվելով մեր բանակին ճահիճի գծին սպառնալ սկսան: Վանի մեջ Արամ Մանուկյան անուն հայ ապստամբապետ մը, մեր ազատության հերոս Էնվերին քեռայրը՝ կուսակալ Ջևդեթ պեյը, փախուստի մատնելով, առժամյա կառավարություն մը հիմնեց: Արևելյան Ծ. Գարահիսարի հայերն ալ բերդը գրավելով աշտարակներուն վրա ապստամբության դրոշ պարզեցին»[1]:

Թալեաթը հաստատում է Նազըմի խոսքերը և ավելացնում. «Այո, այս իժերը կրկին գլուխ կբարձրացնեն, վերջնականապես ատոց հաշիվը մաքրել պետք է»[2]:

Կրկին խոսք է վերցնում դոկտոր Նազըմը և ասում. «Հայերը մահացուցիչ վերքի մը կնմանին. այս վերքը նախապես անկնաս կկարծվի, բայց երբ ժամանակին կարող վիրաբույժի մը գործողության չենթարկվի և չհանվի, անպատճառ կսպանե— գործել և արագ գործել պետք է: Եթե 1909-ի մեջ Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել տվածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կհասնի, մեր մաքրագործել առաջադրած ուրիշ տարրերը, արաբները, քրդերը, կարթնցնե և վտանգը մեկի տեղ երեք կրլլա... Եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական պիտի չըլլա, օգուտի տեղ վնաս կբերե. պետք է հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողի վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի. այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերէն անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է...»[3]:

Նիստի մասնակից Հասան Ֆեհմին առաջարկում է հայերի զենք

[1] Նշվ. աշխ., էջ 92:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 97—99:

վերցնելու ընդունակ երիտասարդներին ուղարկել առաջին գիծ և ոչընչացնել, իսկ տանը մնացած ծերերին, կանանց ու երեխաներին կմաքրեն թուրք հավատացյալները:

Ելույթ ունենալով, ֆինանսների նախարար Ջավիդը «եզրակացնում է», որ հայերը երկար դարեր ապրած այս հայրենիքի դեմ դավաճանելով, բոլոր առիթներն օգտագործելով, թուրքի թշնամիների հետ ձեռք ձեռքի տվին, ի վնաս թուրքի աշխատեցին, այն թուրքի, որն իրենց հանգստությունը, բարգավաճումն էր ապահովում: Նա միտք է հայտնում, որ թուրքն այս երկրում միայն անվանական իշխող է: Նա արևի կիզիչ ճառագայթների տակ աշխատում է, քերքը քերում ու վաճառում է քաղաքի վաճառական հային՝ հարստացնելով նրան և ապահովելով նրա հանգստությունը: «Տնտեսական իշխանությունը հայու ձեռքն է,— ամփոփում է նա,— հայերէն ոչ մեկ մնալու պայմանավ բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետեն որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է, քվեի դիմենք»[1]:

Թալեաթի առաջարկությամբ տեղի է ունենում քվեարկություն, և միաձայնությամբ ընդունվում է մեկ հայ իսկ չմնալու պայմանով հայերի բնաջնջման մասին որոշում:

Նշենք, որ այս և Ռիֆաթի բերած մյուս վավերագրերը իբրև հավաստի փաստաթղթեր օգտագործվել են հետագա գրեթե բոլոր հայ և օսար հեղինակների կողմից, և որևէ կասկած չի հայտնվել դրանց արժանահավատության մասին:

Բնութագրելով Մասնավոր կազմակերպությունը իբրև իթթիհատի ոճրագործ, մարդասպան և թալանչիներից բաղկացած կառույց, որը ղեկավարվում էր Եոյակ գործադիր կոմիտեի կողմից՝ Ծաքիր, Ծյուքրի, Նազըմ, Մ. Ռիֆաթն այն անվանում է պետություն պետության մեջ, կուսակցություն կուսակցության մեջ, որը դարձել էր մի վտանգավոր մարմին: Նրա ընդհանուր թիվը հասնում էր 8—10 հազարի, որոնք բաժանված էին 10—50 հոգիանոց խմբերի: Նրանք որևէ վախ չունեին, որովհետև գործած ոճրագործություններն ու վայրագությունները գնահատվում էին իբրև ծառայություն հայրենիքի հանդեպ:

Եոյակ գործադիր կոմիտեն իր առաջին նիստը գումարեց Իթթիհատի Կենտրոնում, և առաջին ելույթն ունեցավ Բեհաէդդին Ծաքիրը,

[1] Նշվ. աշխ., էջ 101:

որն առաջարկեց Մասնավոր կազմակերպության շարքերը համալրել բանտերից ազատված ոճրագործներով: Առաջարկը արժանացավ միահամուռ հավանության:

Մեվլան Ջադե Ռիֆաթը ամբողջությամբ մեջ է բերում Թալեաթի ստորագրած հրահանգի տեքստը՝ հայերի տեղահանության մասին, ինչպես նաև 1915 թ. մայիսի 14-ի 3 հոդվածներից բաղկացած հատապատասխան օրենքը[1], որն անմիջապես սկսեց գործադրվել գավառներում:

Ինչպես վկայում է Մ. Ռիֆաթը, մասնավոր կազմակերպության չեթեները որոշակի վայրերում դիակների կարոտ ագռավների նման սպասում էին տարագրված հայերի խմբերին, որ նրանց էին հասցնում ոստիկան-զինվորներն ու վերադառնում:

Մեվլան Ջադե Ռիֆաթը ամբողջությամբ մեջ է բերում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի 1915-ի մայիսի 24-ի համատեղ հայտարարությունը հայերի կոտորածների մասին: Հայտարարությունը ջարդերի պատասխանատու էր հռչակում օսմանյան պետական անձանց և բոլոր մասնակիցներին:

Բերվում է նաև հիշյալ բողոքագրին տրված թուրքական կառավարության պատասխանը, որը բացարձակապես հերքում էր հայերի ընդհանուր ջարդի մասին մեղադրանքը և տալիս որոշ «սպարզաբանումներ», որոնք հանգում են հետևյալին. հայ ժողովրդին ամեն պատեհ առիթով օսմանյան կառավարության դեմ ապստամբություն մղողներ Անտանտի տերությունների, մասնավորապես Ռուսաստանի և Անգլիայի գործակալներն են... Ռուսական կառավարությունը թրքահպատակ հայերին գինվորագրելով և զինելով մեր սահմաններն է ուղարկում: Սրանք էլ Վանի, Ծենիկի, Խանասորի, Գավաշի և Թիմարի հայերին Օսմանյան պետության դեմ զինված ապստամբության և թուրքերին ու քրդերին սպանելու են մղում: Բերվում է նախկին օսմանյան երեսփոխան Արմեն Գարոյի՝ Գարեգին Փաստրմաճյանի օրինակը, որը հայ կամավորների խմբապետեր Դրոյի և Խեչոյի խմբերի հետ անցել է օսմանյան սահմանը: Մյուս կողմից՝ ֆրանսիական և անգլիական ծովային հրամանատարները Սդանայում, Դորթ Ցոլում, Իսկենդերունում և այլ վայրերում հայերին ապստամբության են մղում: Ուստի օսմանյան կառավարության պարտականությունն է խռովությունները զսպել և բնդհանուր անպահովությունը երաշխավորել՝ հարկ եղած բոլոր միջոցների գործադրությամբ: Անհրաժեշտություն զգացվեց դաշնակից տերությունների գործակալների հետ

[1] Նշվ. աշխ., էջ 119:

հարաբերություններ պահպանող հայ հեղափոխականներին ձերբակալել ու բանտարկել: Թուրքական կառավարության զսպողական միջոցների գործադրության մեջ ժողովրդի ոչ մի տարր մասնակցություն չի ունեցել: Գավառներում կատարված խուզարկությունների ժամանակ հայերի մոտ հազարավոր ռումբեր և ռուսական հրացաններ են գտնվել: Որ կառավարությունը նպատակ չունի ընդհանուր հալածանք սկսել հայերի դեմ, վկայում է այն փաստը, որ Պոլսի 77 735 հայերից ձերբակալվել են ընդամենը 235 հոգի: Եթե որոշ կարգի հայեր փոխադրված են ուրիշ վայրեր, ապա դրա պատճառը նրանց՝ պատերազմական գոտու մեջ բնակվելն է, կամ նրանց հանդեպ եղած կասկածը: Բ. Դուրը իր ցամաքային և ծովային սահմանների պաշտպանության համար հարկ եղած կանխամիջոցները գործի դնելն իր պարտականությունն է համարում և դրա համար ոչ մի օտար տերության պարտավոր չէ հաշիվ տալ: Ինչո՞ւ Ռուսաստանի մոտ մարդասիրական զգացումներ չեն արթնանում, երբ նա Կարսի շրջակայքում հազարավոր մահմեդականների նույն հայերի ձեռքով սպանել է տալիս: Կարծված դեպքերի կամ սույն հեղափոխական շարժումները կազմակերպողի պատասխանատվությունը Եոյակ համաձայնության տերություններին է պատկանում: Նրանց բողոքներն անգամ հայկական շարժումները պաշտպանել և քաջալերել են ընդհանուր[1]:

Հետաքրքրությունից զուրկ չեն Ջեմալ փաշայի խոստովանությունները ու խորհրդածությունները Հայոց եղեռնի մասին, որ հատվածաբար բերում է հեղինակը:

Թուրք մարդակերը հետին թվով անվրդով հայտարարում է, թե ինքը կառավարության՝ հայերի տարագրության որոշումից տեղեկություն չունի, որովհետև այդ ժամանակ մեկնած է եղել Սիրիա՝ իբրև 4-րդ բանակի հրամանատար, և Պոլսում տեղի ունեցած խորհրդակցություններին չի մասնակցել, իր կարծիքն էլ չեն հարցրել: Տեղեկանալով հայերի տարագրման մասին, ինքը Հալեպից մինչև Պոզանթի է գնացել, ականատես եղել հայերի թշվառ վիճակին և հրամայել բանակային պահեստներից հայ գաղթականներին հաց բաշխել,իսկ զինվորական բժիշկներին կարգադրել է օգնել հիվանդներին: Այնուհետև ինքը հակառակվել է Ադանայի և Հալեպի հայերի տարագրմանը, պատճառաբանելով, որ դա բացասաբար կանդրադառնա բանակի տնտեսական վիճակի վրա, բայց հաջողության չի հասել: Դրա փոխարեն իրեն հաջողվեց շուրջ 150 000 հայ գաղթականների բնակեցնել Սիրիայի, Բեյրութի և Հալեպի նահանգներում: Ուստի նա գտնում է, որ անարդարացի է Պոլսի սվետական Ատյանի դատավճիռը՝ իրեն ևս մահվան դատապարտելու մասին[1]:

Գալով հայերի տարագրության խղճալի տեսարաններին, Ջեմալը դրան հակադրում է ռուսական գրավման ժամանակ Գոնիայում և Սեբաստիայում ապաստանած քուրդ և թուրք գաղթականների «ոչ ավազ խղճալի» տեսարանները:

Լուտանք թափելով Հ. Մորգենթաուի, Ա. Մանդելշտամի և նրանց նման «հիմար և ապուշ պնակալեզների» վրա, որոնք իբր ջանում են ամբողջ հանցանքը թուրքերի վրա բարդել և մամուլի միջոցով բարբաջանքներ են տարածում աշխարհով մեկ, հայակեր թուրքը շարունակում է. «1915-ի կեսերում Զեյթունի և Ուրֆայի մեջ ծագած խռովությունը հայոց կատարյալ զինված հեղափոխո թևենեն ուրիշ բան չէր: Մուսա լեռան կողմերն ալ ծագած ապստամբությունը այս հեղափոխության շարքեն էր: Ըստ իս փաստված իրականություն է, որ Իմպենդերունի ծոցին սկիզբը եղող Ռաս-էլ-Խընզըրէն սկսյալ մինչև Տեորթ-Յոլ, Մուսա լեռ, Հալեպ, Այնթափ, Ուրֆա և Զեյթունի կողմերը ծագելիք հայ հեղափոխությունը՝ Սուրիան Անատոլուէն բաժնել ծրագրող ֆրանսիական և անգլիական Արևելյան Միջերկրականի բանակներու հրամանատարներուն (Չանագ Գալեի ամենասաստիկ ընդհարումների ժամանակ) հայերու տված հրահանգին համաձայն կատարված է: Արդեն այս կողմերը հայերը շատոնց պատրաստված ըլլալնուն, միայն գործի սկսելու համար հրամանի կսպասեին»[2]: Եվ առանց կասկածելու իր ասածների շինծու լինելուն, թուրք մարդասպանը կոչ է անում օտար պետությունների պաշտոնյաներին՝ քանի որ պատերազմն արդեն ավարտված է, պատվավոր գործ կատարել և հանրային կարծիքի առջև խոստովանել այդ ամենը:

Մեվլան Զադե Ռիֆաթ մերկացնում է Իթթիհատ վե Թերաքգը կուսակցության անդամների շվայտ և ցոփ կյանքը, խայտառակություններն ու ոճրագործությունները, որոնք միայն Պոլսին հատուկ չէին: Նա գրում է, որ գավառների կուսակալների, պատերազմը վարող հրամանատարների, իթթիհատի ներկայացուցիչների ու քննիչների և Կենտրոնական վարչության անդամների կողմից տրված գինու սեղանները, շռայլություններն ու շուքերը ամեն տեղ էին հայտնի: Դրա համար

[1] Նշվ. աշխ., էջ 125—126:

[1] Նշվ. աշխ., էջ 127—131:

[2] Նշվ. աշխ., էջ 133:

էր, որ Պոլսում և գավառներում գտնվողները փոխանակվում էին և իրար գերազանցում: Մասնավոր շոգեկառքերը դեպի Սիրիա, Սիրիայից դեպի Պոլիս կանոնավոր սիրուհիներ էին փոխադրում, և այդ փոխադրությունը ավելի կանոնավոր էր, քան զինվորական փոխադրությունները: Սիրիայում կատարվող խայտառակությունների վրա ավելացող ոճրագործությունները մազերը ցից-ցից էին կանգնեցնում: Հեղինակը բերում է Լիբանանի Ալեյ գավառակում կազմված պատերազմական ատյանի օրինակը, որը արաբ իսլամ և քրիստոնյա երևելիներին ու մտավորականներին ձերբակալելով, շինծու և անհիմն պատճառներով կախաղան էր բարձրացնում: Միայն 1916-ի մայիսի 6-ին Դամասկոսում և Բեյրութում 21 հիանավոր արաբներ կախաղան հանվեցին: Թվարկելով նրանցից շատերի անունները, հեղինակը վկայում է, որ այդ մահապատիժներն առաջ բերեցին արաբ հասարակայնության խորը ցասումը, որից վախենալով, իթթիհատականները սկսեցին Սիրիայի ազդեցիկ և սիրված երևելիներին մաս առ մաս, խումբ-խումբ իրենց ընտանիքներով Անատոլիայի խորքերն աքսորել[1]:

Հայերին բախտակից արաբների նկատմամբ կիրառված ոճրագործությունների վերաբերյալ Մ. Ռիֆաթի սույն վկայությունները չափազանց կարևոր են, մանավանդ եթե նկատի ունենանք, որ պատմագրության մեջ այդ հարցը գրեթե չի շոշափվել: Մանավանդ որ հեղինակը վկայում է, թե այդ մահապատիժները Հեջազի ապստամբության պատճառներից մեկը հանդիսացան[2]:

Նա ամփոփիչ տվյալներ է բերում առաջին համաշխարհային պատերազմի արդյունքների մասին, որոնք զուրկ չեն հետաքրքրությունից: Այսպես՝ Անտանտի տերությունների կողմից պատերազմին մասնակցել է 43,5, Գերմանիայի և նրա զինակիցների կողմից՝ 20,5 միլիոն զինվոր: Պատերազմին մասնակցած զինվորների ընդհանուր թիվը՝ 64 միլիոն: Մոտավորապես 15 միլիոն զոհվել է, դրա կեսի չափ էլ մահացել է: Անտանտի պատերազմական ծախքերը կազմել են 889, հակառակորդինը՝ 489 միլիարդ օսմանյան ոսկի: Պատերազմի գլխավոր արդյունքը հետևյալն է. «Թեև մարդկությունը գիտության և ճարտարարվեստի մեջ խելք թոցնելու աստիճան հառաջացած է, սակայն մարդկություն և քաղաքակրթություն բառերուն նշանակությունն անգամ դեռ չէ հասկցած»[1]: Կարծում ենք, որ սա գլխավորապես ասված է Հայոց եղեռնի առիթով:

Մ. Ռիֆաթը ամփոփում է Իթթիհատ վե Թերագգը կուսակցության 10-ամյա տիրապետության գործած ավերածությունները Օսմանյան կայսրությունում: Այդ կուսակցության իշխանության գալու պահին վիճակագրության համաձայն Օսմանյան տերությունն իշխում էր 30 893 950 անձերի վրա: Նրանք Անկարայի նոր հանրապետությանը փոխանցել են միայն 8 500 000 հպատակներ: Ուրեմն 10 տարվա մեջ իթթիհատը կորցրել է 22,5 միլիոն հպատակներ:

Թուրքիան հողային տարածքներ կորցրեց Եվրոպայում, Աֆրիկայում, Արաբիայում,-Սիրիայում, Միջագետքում, Միջերկրականում, որոնք մնացած տարածքներից հինգ անգամ ավելի են և նյութական ու հոգևոր առումով ամենակարևոր շրջաններն էին[2]: Սակայն, հակառակ այսչափ կորուստների, ստորությունների և ոճիրների, Իթթիհատ վե Թերագգը կուսակցությունը պատասխանատվությունից զերծ է մնացել:

Ուշադրություն է գրավում իթթիհատական կուսակցության սոցիալական կազմի վերաբերյալ հեղինակի տված պատկերը. նախարարներ ու մարաջախտներ, հրամանատարներ ու սպաներ, գիտնականներ ու կրոնականներ, բանաստեղծներ ու հրապարակագիրներ, քարտուղարներ ու պաշտոնյաներ: Ինչպես նաև՝ մարդատպաններ ու ելուզակներ, գողեր ու դրամաշորթներ, կառապաններ ու վարիչներ, նավավարներ ու մակույկավարներ, բեռնակիրներ, աղբահավաքներ ու խաղամոլներ: Իգական սեռից՝ թագուհիներ ու իշխանուհիներ, տիկիններ, գրագիտուհիներ ու բանաստեղծուհիներ, ուսուցչուհիներ ու դաստիարակչուհիներ, դայակներ, սպասուհիներ և հանրային կանայք: «Իթթիհատ վե Թերագգը կուսակցությունը իրականին մեջ Օսմանյան կայսրությունը քանդելու նպատակով «Սիոնիստ» հրեաներուն տաղանդեն ծնած էր»,— հանկարծակի եզրակացնում է հեղինակը[3]:

Հեղինակը բաժինը եզրափակում է 1928-ին Հալեպում լույս տեսնող թերթերից մեկում տպագրված մի հոդվածով, որն ամենացայտուն ձևով է ներկայացնում իթթիհատականներին. «ԵՒնոնց անունը՝ մարդկային մարմիններ, խմածնին՝ արյուն-արցունք, շնչածնին՝ վառոդի ծուխ, արդարությունին՝ կախաղան, եղբայրությունին՝ տարագրություն, հա-

[1] Նշվ. աշխ., էջ 148—150:
[2] Նշվ. աշխ., էջ 151:

[1] Նշվ. աշխ., էջ 168:
[2] Նշվ. աշխ., էջ 168—169:
[3] Նույն տեղում:

վասարությունին՝ սպանություն և ազատությունին՝ բանտի խորերն էին... Ժամանակ եղավ, որ մեղալներու ոսկորներով ապարանքներ շինեցին: Բարձերնին որբերու Ճագերով լեցուցին և սենյակնին այրիներու քողերով զարդարեցին: Անոթիներու ճիչը աւոնց երաժշտության ձայն կուգար: Որբերուն արցունքները գավաթներու մեջ լեցուցին և նահատակներու վերջին շունչը համադամի տեղ գործածեցին... հարստության համար ամբողջ կայսրություն մը կորսնցուցին...

Հիմա ամեն մեկը մեկ անկյուն... մեկը սպանված, մյուսը կախաղան հանված, մեկը թշնամիի գնդակով, մյուսը բարեկամի հրամանով, մեկը Թուրանի լեռներուն, մյուսը գերման հողի վրա: Յուրաքանչյուրը տեսակ մը մահով մեռնող և անհետացող այս մարդիկը ահա այս ոճիրները գործող թշվառներ էին, այն թշվառները, որոնք հիմա անհիշատակ, անձնաև և անհնամ գերեզմաններու մեջ, անցյալի մահազդներու ժամանակը չմոռանալու համար միայն կհիշվին և մտածեցեք անգամ մը, որ ասոնք ոչինչէ ամեն ինչ և ամեն ինչէ ոչինչ ըլլալուն համար 8—10 տարին բաված էր»[1]:

***

Պատմության կեղծարարության յուրատեսակ մեթոդ է ընտրել թուրք ականատես պատմաբան **Ահմեդ Ռեֆիկը**, որի գիրքը հրատարակել են ՀԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և արևելագիտության ինստիտուտը[2]: Այն թուրքերենից թարգմանել և առաջաբանը գրել է Սամվել Մուրադյանը:

Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկ Ալթընայը (1880—1937) 1915 թ. Էսքիշեհիրի հայոց տեղահանության ականատեսներից է: Այնուհետև 1918-ին նա եղել է Էրզրումում և Գյումրիում: 1919-ին Ստամբուլում նա հրատարակել է երկու հոդված՝ իր տեսածների մասին, որոնք հետագայում երկու անգամ հրատարակվեցին առանձին գրքով: Ներկա թարգմանությունը կատարված է Անկարայի 1994-ի թուրքերեն հրատարակությունից:

Առաջաբանի հեղինակը Ահմեդ Ռեֆիկին դասում է թուրք այն փոքրաթիվ մտավորականների շարքին, ովքեր ընդունում են հայերի ցեղասպանության փաստը իբրև պատմական իրողություն և խորասնս գի-

[1] Նշվ. աշխ., էջ 171—172:

[2] Ահմեդ Ռեֆիկ. Երկու կոմիտե՝ երկու ոճիր: Երևան, 1997:

տակցում են կատարվածի ողբերգականությունը նաև սեփական ժողովրդի պատմության կտրվածքով: Նրա կարծիքով Ահմեդ Ռեֆիկը օժտված էր տեսածը հասկանալու, պատճառը պրպտելու, փաստագրելու և հրապարակավ ասելու կարողությամբ ու ազնվությամբ, ճշմարտությունը ցուցահանելու պատմաբանի համարձակությամբ[1]:

Աշխատությունը բաղկացած է երկու մասից՝ «Էսքիշեհիր», որտեղ նկարագրված է 1915 թ. հայոց ցեղասպանությունը, և «Էրզրում», որտեղ պատկերված են թուրք ազգաբնակչության նկատմամբ, այսպես կոչված, «հայկական հրոսակախմբերի» կարծեցյալ «գազանությունները» 1918 թվականի գարնանը: Այստեղից էլ աշխատության վերնագիրը՝ երկու կոմիտե (նկատի ունի երիտթուրքական և դաշնակցական կոմիտեները) և երկու ոճիր: Ինչպես իրավամբ նկատում է Ս. Մուրադյանը, թուրք հեղինակը փաստորեն չի տարբերակում հարձակվողն ու պաշտպանվողը, ուստի հայերի ու թուրքերի գործողությունները դիտարկում է նույն հարթության վրա, հավասարապես դատապարտում դրանք՝ անկախ նրանց ծավալներից, դրդապատճառներից ու նպատակներից: Դրան զուգահեռ նշվում է նաև, որ Ահմեդ Ռեֆիկը առաջիններից էր, որ ոչ միայն ոճրագործություն հայտարարեց երիտթուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանությունը, այլև փաստեց նրա ծրագրվածությունը և բացահայտեց ծրագրողների շահագրգռությունները, ուստի անուրանալի է նրա առանձնահատուկ տեղը թուրքական պատմագրության մեջ: Ընդգծվում է թուրք հեղինակի սկզբունքային ու ելակետային այն եզրակացությունը, որ կայսրության հայ բնակչության հանդեպ գործադրված անողոք կոտորածն ու աքսորը ողբերգություն էր նաև թուրք ժողովրդի համար, ուստի երիտթուրքերը հանցագործներ էին նաև սեփական ժողովրդի նկատմամբ: Ուշադրություն է հրավիրվում թուրք պատմաբանի այն դատողության վրա, ըստ որի սեփական ժողովրդի ազատագրությունը շաղկապվում էր հայերի ենթադրյալ հաղթանակի հետ[2]:

Իր՝ Ահմեդ Ռեֆիկի հեղինակային խոսքում նշվում է, որ իմդրո առարկա ժամանակաշրջանը օսմանյան պատմության ողբերգական էջերից մեկն է: «Օսմանյան պատմության մեջ, հարկավ, բավականաչափ խառնաշփոթ և գրեթե սարսափահարույց ժամանակաշրջաններ են եղել, սակայն ոչ մեկը համեմատելի չէ այս բռնակալների (երիտթուրքերի—

[1] Նշվ. աշխ., Առաջաբան, էջ 5:

[2] Նշվ. աշխ., էջ 9:

Մ. Կ) կառավարման հետ: Ագնիվ դրդումներով սկսված, բայց հակա մի պետության անկմամբ ավարտված այս ժամանակահատվածը օսմանյան պատմության ամենացավալի շրջանն է»[1],— գրում է ընդհանուր պատմության պրոֆեսորը:

Գրքի առաջին մասում Ա. Ռեֆիկը պատկերում է Էսքիշեհիրի իրականությունը 1915 թվականի աշնանը, գրում, որ հայերի կայարանամերձ բոլոր գեղեցիկ տները բռնագրավվել էին, երեք դղյակներ էլ բաժին էին ընկել գլխավոր ոճրագործներ Թալեաթ, Ջանփոլադ և Հաքքի բեյերին: Դատողություններ անելով երկրի ահավոր ծանր վիճակի մասին, նա նշում է, որ օսմանյան պատմության մեջ երբեք չի եղել մի շրջան, որ նմանվի Մեհմեդ 5-րդի՝ անարդարության ու կազմալուծման ժամանակաշրջանին: Թուրքական պառլամենտի պատգամավորների մեծ մասը զուրկ էին օրենքն ու իրավունքը պաշտպանելու կարողությունից, նշանակված էին իթթիհատի կողմից ու նրա հավատարիմ ապաստավորներն էին: Հույն և հայ պատգամավորների մոտ իրենց ազգակիցների տեղահանումներն ու սպանությունները բողոքի ձայն չէին առաջացնում: Բարձրագույն պաշտոնյաները թալանում ու վատնում էին ազգային գանձարանը, իսկ ժողովուրդը, որը մի ժամանակ ձեռքներին դրոշակներ առնելից զուռնաներ, ինքնամոռաց վազում էր իթթիհատականների հետևից, այժմ սովամահ էր լինում, բայց և զոհաբերվող ոչխարների պես գնում էր այդ արկածախնդիրների իշխանության պաշտպանելու համար իրենց դիակներից պատնեշներ կառուցելու[2]: Անգամ Բյուզանդիան իր անկման վերջին օրերին այս աստիճան չէր բարոյալքվել:

Հեղինակը զուտ թուրքավարի է մեկնաբանում պանթուրքիզմի հանդես գալը, գտնելով, որ թուրանականության խնդիրը մեջտեղ հանեցին իշխանավորները՝ ի հակակշիռ Հունաստանը հույներին, Հայաստանը հայերին, Արաբիան արաբներին կարգախոսների: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը պարարտ հող ծառայեց Թուրանի գաղափարի իրականացման համար, որի կույր գործիքը դարձավ լուսավորության նախարարությունը:

Սմմեդ Ռեֆիկը այն համոզմունքին է, թե դարեր շարունակ օսմանցի փաշաները հայերից և ոչ մեկի քիթը չեն արյունոտել: Թուրք, հայ և հույն պարոնները շքեղ ու բարեկեցիկ կյանք են վարել: Հայ վարպետներն ստեղծել են օսմանյան արվեստի ամենաւքանչելի գեղարվեստական գործեր: Եվ այս իրավիճակը շարունակվեց այնքան, մինչև օսմանյան հայրենիքում ապրող ժողովուրդները տարվեցին ազգային գաղափարներով: Թուրքիայի գործերին Եվրոպայի խառնվելը և ոչ մահմեդականների դիմակ հագնելը էապես վնասեց գործին: Հայերի գաղտնի մտադրությունները ամբողջովին երևան եկան պատերազմի սկզբնական շրջանում: Նրանք բացահայտորեն հայտարարում էին, որ պատերազմում թուրքերը ջախջախվելու են և կոչ էին անում ամեն կերպ օգնել ռուսներին[1]:

Վանի ինքնապաշտպանությունը հաշվարկելով ապստամբություն, Ահմեդ Ռեֆիկը գտնում է, որ իշխանությունները դրա կազմակերպիչներին պատժելու փոխարեն որոշեցին խպատ բնաջնջել հայերին և այդ ձևով մեջտեղից հանել վեց վիլայեթների հարցը: Անատոլիայի արևելյան սահմաններում կատարվող շուտափույթ ձեռնարկումները վերաճեցին կոտորածների, և «հայրենիքի հազարավոր հայ ու թուրք զավակներ ճզմվեցին Կոմիտեի ոտքերի տակ»[2]:

Թուրք հեղինակն արձանագրում է, որ պատերազմի սկզբում Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա, որոնք կազմված էին բանտերից ազատված մարդասպաններից ու հանցագործներից: Նրանք ռազմական նախարարության մարզահրապարակում մեկ շաբաթ վարժվելուց հետո «Հատուկ կազմակերպության» միջոցով ուղարկվում էին Կովկասի սահման: Ընդգծվում է, որ հայերի նկատմամբ իրականացվող բռնություններում ամենից մեծ հանցագործություններն այս հրոսակախմբերն են կատարել: Մեր կարծիքով հեղինակի նման շեշտադրումը միտում ունի նեղացնել ոճրագործությունների մասնակիցների շրջանակները:

Նկարագրելով բեռնատար վագոններով Էսքիշեհիր հասնող տարագիր հայերի ծանր վիճակը, ականատես պատմաբանը արձանագրում է, որ մի քանի օրվա ընթացքում քաղաքի կայարանի շրջակայքը լցվեց շուրջ 20 000 ընտանիքներով: Որոշ ժամանակ այստեղ մնալուց հետո նրանց անասուն տեղափոխող վագոններով աքսորեցին դեպի Կոնիայի անապատները: Նրա վկայությամբ արտաքսվեցին նաև Էսքիշեհիրի, Իզմիթի և Ադաբազարի հայերը, որոնց գույքը նույն գիշեր թալանվում էր, իսկ տները հրկիզվում էին՝ հետքերը ծածկելու նպատակով:

Ընդհանուր պատմության ապագա պրոֆեսորը խիստ ուշագրավ

1 Նշվ. աշխ., էջ 11:
2 Նշվ. աշխ., էջ 28:

1 Նշվ. աշխ., էջ 31—32:
2 Նշվ. աշխ., էջ 33:

դատողություն է անում, որ գերմանացիներից նրանք, ում սրտերը լի էին մարդասիրական զգացմունքներով, ատելություն էին տածում այս հանցագործությունների նկատմամբ: «Սակայն եթե պաշտոնական Գերմանիան ցանկանար,— շարունակում է նա,— խոչընդոտ կհանդիսանար կոտորածներին: Սայիդ Հալիմ փաշան Իթթիհադի կույր գործիքն էր: Էնվերն ու Թալեաթը, սովորաբար, Գերմանիայի խոսքից մեկ քայլ չէին կարող դուրս գալ: Հնարավոր չէր ոճիրն իրականացնել՝ ապավինելով միայն հանցագործ ուժերին: Անկասկած է այն, որ նրանք ապավինում էին Գերմանիայի հաղթանակին, հույս էին տածում Գերմանիայի միջոցով լռեցնել տալ **այս մեծ ոճրի** (ընդգծումն իմն է— Մ. Կ.) արձագանքները, անմեղ զոհերի ողբի ձայնը խեղդել գերմանացիների հաղթական երգերով: Գերմանիան ինքն իր հերթին տարված էր Անատոլիայում եկամուտներ կորզելու շահադիտությամբ: Նա իր վրա էր վերցրել լռակյաց ու անտարբեր դիտորդի դերը: Անգամ միջնադարում չեն հիշատակվում կատարված նման հանցանքներ»[1]:

Վկայակոչելով Էսքիշեհիրում Զեմալ փաշայից ստացված հեռագիրը՝ իթթիհատի «աչքի բիբը» հանդիսացող Ահմեդ Չերքեզին գնացքից իջնելուն պես ձերբակալելու մասին, Ա. Ռեֆիկը փորձում է այն տպավորությունն ստեղծել, թե փաշան հովանավորել է հայերին, պաշտպանել իրեն ենթակա տարածքներ մուտք գործած աքսորյալ ժողովրդին: Ա. Ռեֆիկի այն հարցին, թե ինչ եղավ Վարդգեսի ու Զոհրապի հետ, Ահմեդ Չերքեզը պատասխանել էր, որ Վարդգեսի գլուխը անձամբ է բացել մատուզերի գնդակով, ապա ոտքի տակ է առել Զոհրապին ու մի մեծ քարով ջախջախել նրա գլուխը[2]:

Թուրք պատմաբանը վկայում է նաև Ստամբուլի հայ մտավորականության աքսորի մասին, որոնց մի մասը ուղարկվել էր Էսքիշեհիր և որոնց ինքն անձամբ ճանաչում էր՝ Տիրան Քելեկյան, Բյուզանդ Քեչյան, Թորգոմյան և ուրիշներ: Նա ցավով է արձանագրում, որ այդ բոնությունների դեմ ոչ ոք ձայն չէր բարձրացնում: Կղզու շքեղ ամառանոցում Հալաճյան էֆենդին խնջույքներ էր կազմակերպում իթթիհատականների համար, իսկ հայ երեսփոխանները խորհրդարանում շարունակում էին շողոքորթել Թալեաթին ու նրա հանցակիցներին:

Հեղինակը հաստատում է, որ մեծ ոճրի իրականացումը արդարացված պատկերելու նպատակով նախապատրաստական քարոզչական

[1] Նշվ. աշխ., էջ 44:
[2] Նշվ. աշխ., էջ 49:

հիմնավոր աշխատանք էր կատարվել. լուրեր էին տարածում, թե հայերն միահնալու էին թշնամուն, Ստամբուլում ապստամբություն էին բարձրացնելու, սպանելու էին Իթթիհատի առաջնորդներին ու ձգտելու էին բացել նեղուցը: Այնուհետև նա գրում է, որ այս նողկալի խաբեությունները կարողացան համոզել միայն հասարակ ժողովրդի այն հատվածին, որը չէր գիտակցում իր քաղցած լինելը: Եվ ապա Թուրքիայի ապագայի վերաբերյալ նա հայտնում է այն ոչ ստանդարտ միտքը, թե ավելի լավ կլիներ, որ իթթիհատականների օրոք հայերը հաջողություն ունենային, այդժամ և Թուրքիան, և Թուրքերը փրկված կլինեին արկածախնդիրների գերիշխանությունից, հայերը հավերժ կվայելեին թուրքերի երախտագիտությունը: «Եթե հայերը տարված լինեին անկախության ու փրկության գաղափարներով,— շարունակում է Ա. Ռեֆիկը,— նրանց իղձերի իրականացման գեթ մի փորձն անգամ կարող էր ամեն ինչ տակն ու վրա անել, քանզի իթթիհատականների անկումը պատճառ կհանդիսանար երկրում համաձայնության ու խաղաղության կողմնակից կուսակցության իշխանության գլուխ գալուն: Եթե հնարավոր լիներ դուրս պրծնել գերմանական երկաթե օղակից, համաձայնություն ձեռք կբերվեր անգլիացիների հետ, և Թուրքիան ավելի նպաստավոր դիրքեր կզբաղեցներ»[1]: Նա ցավով է ավելացնում, որ միևչդեռ տեղահանման հարցը հայերի ապստամբության ու պայքարի ողբերգական ու վերջին պատասխանն էր, իսկ դրա քաջալերումը՝ գերմանացիների հաղթանակը:

Թուրք հեղինակը փորձում է համոզել, որ Էսքիշեհիրում ազգաբնակչությունը տեղահանումներին չի մասնակցել և հայերի նկատմամբ առավելապես բռնություններ էին կատարում առանձին պաշտոնյաներ, ժանդարմներ ու ոստիկաններ, իսկ շատ վայրերում սպաներն իրենց ձեռքերը չեն թաթախել այդ արյունալի չարագործությունների կաթսայում: Նա ընթերցողին է փոխանցում Բուրսայից և Անկարայից եկողների պատմածները, թե ինչպես են պաշարել տներն ու հարյուրավոր ընտանիքների լցնելով կառքերը՝ գետերը թափել: Տեսնելով այս գազանությունները, մի քանի կին ուղղակի խելագարվել էին:

«Այս ողբերգությունն իմանալով— գրքի առաջին բաժինը եզրափակում է Ահմեդ Ռեֆիկը,— հնարավոր չէր չվշտանալ: Միանշանակ էր, որ մի օր սրա պատասխանը պահանջվելու էր: Այս ամենը մարդկության անվան տակ կատարված հանցագործություններ էին: Երբևէ ոչ մի իշ-

[1] Նշվ. աշխ., էջ 51:

խանություն այս աստիճան դաժան չի գործել: Արյունով ողեկցվող հայերի տեղահանումները երկիրը զրկեցին կարևոր մի տարրից: Այս անմարդկային գործողություններին հաջորդեց այն, որ կանգ առան ապրաղացները, բնակչությունը մատնված էր առանց հացի մնալու վտանգի...»[1]:

Գրքի երկրորդ՝ «Էրզրում, 6 մայիսի 1334» բաժինը ընդրված է Էրզրումի և Ալեքսանդրապոլի իրականության նկարագրությանը 1918-ի գարնանը: Եվ... կարդալով «հայկական գազանությունների» վերաբերյալ հորինվածքները, միանգամից ոչոր են ցնդում հեղինակի ազնվության, օբյեկտիվության և անաչառության մասին նախորդ տպավորությունները:

Հեղինակի պատկերացմամբ ռուսական զորքերի հարձակումը խախտեց Արևելյան Անատոլիայի անդորրը, և դարեր շարունակ համատեղ ապրած երկու ժողովուրդները՝ թուրքն ու հայը, վերջ դրեցին իրենց մտերմությանը, նրանց միջև խորը անդունդ առաջացավ: Նրա խոստովանությամբ իշխանությունները, որոնք դաժան ու անարդար էին գործել ժողովրդի հանդեպ, ուժասպառ էին արել թուրքերին, իսկ հայերի շրջանում ազատության ու փրկության ձգտումներ էին արթնացրել, որի ամենամեծ ապացույցը հայկական Կոմիտեներն էին: Բանից պարզվում է, որ թուրքը չգիտեր, թե ինչ բան է ռումբը, այդ հայկական Կոմիտեներն էին, որ Թուրքիա ռումբ մտցրին և դրանով փորձեցին նույնիսկ սպանել փադիշահին: Եվ այդ ռումբերն այժմ Անատոլիայում էին պայթելու, բռնարար իշխանությունների անգթության պատճառով թուրք ժողովուրդը խելդամած էր արվել «հայկական հրոսակախմբերի կողմից հոսեցված արյան հեղեղում»[2]:

Խեղաթյուրելով Վանի հերոսամարտի պատճառները, հեղինակն այն համարում է ցավալի ընդհարում, որովհետև ռուսական զորքերի առաջխաղացմանը զուգընթաց հայերի դաժանությունն ու խիզախությունը էլ ավելի էր բռնում, և Անատոլիա ներխուժած ռուսական բանակին միակ աջակցողները հայերն էին: Խեղաթյուրվում են նաև հայկական կամավորական շարժման պատճառները: «Նորույթ» է նաև հեղինակի այն տեղեկությունը, թե իբր Էրզրումն ազատագրելիս ռուսների առաջին քայլն այն եղավ, որ չթողեցին հայկական գումարտակներին քաղաք մտնել, քանի որ շատ լավ գիտեին, որ հակառակ դեպքում թուրքերը դաժանաբար ոչնչացվելու են: Եվ ահա թուրքերը հայ հրոսակախմբերից

[1] Նշվ. աշխ., էջ 52:
[2] Նշվ. աշխ., էջ 55:

ահաբեկված թողնում էին իրենց տները և ապաստան էին որոնում երկրի խորքերում:

Սարիղամիշից մինչև Տրապիզոն ընկած շրջաններում ռուսական գերիշխանության հաստատումը հեղինակը բարեբախտություն է համարում թուրք ժողովրդի համար: Սակայն վիճակը փոխվեց, երբ, ըստ հեղինակի, բոլշևիզմի հաղթանակի հետևանքով ռուսները դիմեցին փախուստի, և նշված շրջաններում իշխանությունն անցավ հայկական Կոմիտեների ձեռքը:

Ամբողջ իշխանությունը հայերի ձեռքում էր կենտրոնացած հատկապես Երզնկայում և Էրզրումում: Նրանք երբեմն փողոցներից հավաքում էին թուրք աշխատավորներին, խումբ-խումբ կտրում կոկորդներն ու փոսը գցում:

Ըստ թուրք հեղինակի, հիմնական ջարդերը սկսվեցին ավելի ուշ, երբ Երզնկայի, Տրապիզոնի և Էրզրումի մատույցներում օսմանյան զորքեր երևացին: «Հայկական հրոսակախմբերը քաղաքից դուրս դիմադրում էին օսմանյան բանակի առաջխաղացմանը, ներսում ժողովրդին զորանոցները լցնելով ու դռները փակելով կոտորում: Երբեմն գլուխները կտրելով, դիակները ջրհորն էին գցում... Էրզրումն այս արյունաոուշտ վայրագության ամենաողբերգական էջն է»[1]:

Ահմեդ Ռեֆիկը առիթը բաց չի թողնում վերստին անարգանքի խոսք ասելու Ստամբուլի կառավարողների հասցեին, որոնք գրաքննությամբ բոլոր դժբախտությունները թաքցնում էին ժողովրդից: Չարաշահումների աղբյուր նա համարում է Էնվեր փաշային, որն իր բացահայտ տգիտության պատճառով Սարիղամիշում 150 հազար թուրք էր զոհաբերել, բայց պատասխանատվության չէր կանչվել: Այն ժամանակ, երբ Ստամբուլի ազգաբնակչությունը սովամահ էր լինում, Իթթիհատի բարձր աստիճանավորներն զբաղված էին ճոխ խնջույքներով, իսկ Շվեյցարիան նրանց կանանց զվարճատեղին էր: «Այնես ոչ ոք չէր մտածում հայ հրոսակախմբերի արյունոտ դաշյուններից սպանված ու սովամահ եղած դժբախտ թուրքերի մասին»,— ողբաձայն գրում է հեղինակը: Շարունակելով շինծու ողբն ու կականը, նա բացականչում է, որ երբ Ստամբուլում Իթթիհադի այրերը շամպայն խմելով սազ ու երաժշտություն էին լսում, Էրզրումում հայերի բռնություններից այրվող փլատակների տակ պառկած թուրքերը հոգի էին տալիս, որոնց ողբը մինչև երկինք էր հասնում:

[1] Նշվ. աշխ., էջ 61:

«Տրապիզոնից մինչև Էրզրում, ավերածություններից բացի, ոչինչ չէր երևում: Ոչ մի գյուղում, ոչ մի տան որևէ կենդանի էակ չկար: Հայերի բոնություններին այժմ հաջորդում էր սովը»[1],— ամփոփում է կեղծ ողբասացը:

Հետագա էջերում թուրք հեղինակի երևակայությունն ավելի է բորբոքվում, և նա գրում է, որ ռուսների ճահճանջից հետո հայերն այն աստիճան էին ավերել գյուղերն ու ավանները, որ Արդահանից մինչև Երզնկա, Տրապիզոնից մինչև Կարս ոչ մի գյուղում որևէ կենդանի շունչ չէր մնացել, իսկ Երզնկան կարծես վերածվել էր թուրքերի կառափնարանի[2]: Ամենուրեք հրդեհված տների ու քանդված պատերի տակ լի էին թուրքերի դիակներ՝ դեռևս չթեխած մարմիններ, կտրված ձեռքեր, գանգեր ու ազդրակներ:

Անդրադառնալով Էրզրումին, նա գրում է, որ այստեղ նույնպես փողոցներում հազարավոր թուրքերի դիակներ էին կուտակված: Գյումրիում նույնպես, ըստ հեղինակի, քաղաքի հանձնման լուրն իմանալով, հայերն սկսեցին կոտորել թուրքերին, որը հայ-թուրքական կոտորածի վերջին փուլն էր: Կատարելով դերերի մտացածին տեղափոխություն, հեղինակը կեղծ վկայություն է տալիս, թե իբր այստեղ հայերը թրքուհի օրիորդներին բռնելով, բոլորի աչքի առաջ պարտադրում էին իրենց քմահաճույքը կատարել, անասնաբար վրեժխնդիր էին լինում նրանց անմեղ մարմնից, ապա սվինի հարվածով բացում էին որովայնը և գցում կրակը: Պատերին կանանց կրծքեր, անգամ այր մարդկանց անդամներ էին կախված, ճանապարհի երկու կողմերում որովայնները բաց կանանց մերկ դիակներ էին դրված:

Գրքի վերջում Ահմեդ Ռեֆիկը գրում է հետևյալ տողերը, որը մեր կարծիքով հնչում է իբրև լավագույն ինքնամերկացում. «Եվրոպան անկասկած պատժի է ենթարկելու նրանց, ովքեր բռնագաղթի են ենթարկել հայերին: Բայց տեսնենք կորոնի՞ արդյոք Եվրոպան այս հանցագործության մեղսակիցներին: Պատմությունն անգամ չի արձանագրել այսպիսի դաժանություններ»[3]: Այո, թուրք հեղինակը, իր կամքից անկախ, պարզ ու հստակ մատնացույց է անում, թե վերջապես որտեղ է թաղված շան գլուխը:

[1] Նշվ. աշխ., էջ 77:
[2] Նշվ. աշխ., էջ 81—83:
[3] Նշվ. աշխ., էջ 89:

***

1995 թ. լույս տեսավ գերմանացի հրապարակագիր և հասարակական գործիչ Հայնրիխ Ֆիրբյուխերի «Հայաստան 1915» մեծարժեք գիրքը[1]: Գրքի պատմագիտական արժեքը չափազանց մեծ է, որովհետև հեղինակը առաջին համաշխարհայինի տարիներին եղել է Թուրքիայում Գերմանիայի զինվորական առաքելության գերագույն հրամանատար, մարշալ Լիման ֆոն Սանդերսի անձնական թարգմանը և իր գիրքը հրապարակել է պատերազմի ավարտից անմիջապես հետո: Չնայած այն արգելվեց, բայց ունեցավ ևս երկու հրատարակություն, թարգմանվեց նաև ֆրանսերեն: 1991-ին հրատարակվեց գրքի ռուսերեն թարգմանությունը՝ պրոֆ. Վաղարշակ Միքայելյանի առաջաբանով[2]: Գիրքը ծավալով մեծ չէ, սակայն բովանդակությամբ ընդգրկուն է և նպատակասողված:

«Խաչքար» գլխում, որը գրքի մուտքն է, հեղինակը նկարագրում է Երզնկայի և Սվազի միջև գտնվող Քեմախի կիրճը, որի գլխապտույտ բարձունքից 1915-ի հունիսին տասնյակ հազարավոր կանանց ու երեխաների, աննկարագրելի կտտանքների ենթարկելուց հետո, ողջ-ողջ ցած են նետել: Այդ ձորը հիշեցնում է անեծքի այն վիհը, որ Դանթեն նկարագրել է «Դժոխքում»: «Քեմախը, Կովկասի այս ամոթալի խարանը,— գրում է Ֆիրբյուխերը,— ամբողջ երկրագնդի հիշողության դաշտը պետք է դառնա, որտեղ մարդկությունը գիտակցի իր մեղսակցությունը, հանցանքը քավելու պարտավորվածություն ունենա, քանի որ ամենաարյունոտ ոճիրներն այստեղ են գործվել»[3]:

Պարզաբանելով իր նպատակը՝ շատ սեղմ նկարագրել պատմության մեջ քրիստոնյաների ամենաահավոր հալածանքը, հեղինակը ցանկություն է հայտնում, որ փոքրիկ գիրքը նահատակների համայնական գերեզմանին դրված համեստ խաչքար դառնա:

Հ. Ֆիրբյուխերը գրում է, որ պատերազմի հենց առաջին տարում 100 000 դասալիք կար: 1916-ին Սիրիայում և Միջագետքում այնպիսի փախեփախ էր սկսվել, որ Ջեմալ փաշան հրամայեց մահապատժի ենթարկել յուրաքանչյուր 10-րդ դասալիքին: Նրանց մասսայաբար կախում

[1] Հայնրիխ Ֆիրբյուխեր, Հայաստան 1915, գերմանացի սպայի վկայությունը, Երևան, 1995:
[2] Генрих Фирбюхер. Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Ответ. ред. Вардкес Микаелян. Перевод с немецкого В. Микаелян. Изд. АН Армении, Ереван, 1991.
[3] Նշվ. աշխ., էջ 6:

էին, գնդակահարում[1]: Գերմանացի սպան Դամասկոսում ամեն օր տեսնում էր մի բեռնատար մեքենա, որի թափքից ծորում էր դիրքերը լքած ու գնդակահարված թուրք զինվորների արյունը: Նա տեսել էր նաև 24 կախաղաններ, որոնց վրա ճոճվում էին դասալիքների մարմինները: Դասալիքների մասին ասվածը հաստատագրում է, որ դրանց գերակշիռ մասը ոչ թե հայեր էին, այլ թուրքեր:

«Դրվագներ Թուրքիայի պատմությունից» գլխում անդրադառնալով Օսմանյան կայսրության անցյալի տարբեր դրվագներին, Ֆիրբյուխերը դրանով աշխատում է պարզաբանել, թե ինչպես հնարավոր դարձավ անպաշտպան հայ ժողովրդի բնաջնջումը: Նա գրում է, որ օսմանյան պատմության գլխավոր կարգախոսն է եղել՝ բռնություն, բռնություն և դարձյալ բռնություն:

Անցնելով թուրք ժողովրդի բնութագրմանը, Ֆիրբյուխերն ուղղակի հայտարարում է, որ բառի բուն իմաստով թուրք ժողովուրդը քաղաքակրթված չէ:

Սակայն Թուրքիան պատերազմել է, պատերազմել ու դարձյալ պատերազմել: Սպառնակոչությունների թվով նա կարող է համաշխարհային դափնեպսակ նվաճել: «Մի խոսքով,— ավարտում է իր միտքը գերմանացի հեղինակը,— Գերմանիայի համար ամոթ էր նման ոճրակի՝ եվրոպական սանրվածքով ոճրագործների հետ դաշնակցելը, որոնք միայն հարմար պահի էին սպասում, որպեսզի իրագործեն բոլոր ժամանակների ամենամեծ կոտորածն ու թալանը»[2]:

Հ. Ֆիրբյուխերը ուրվագծում է հայ ժողովրդի ընդհանուր նկարագիրը, նշում, որ նրանք իրենց երկրի քննիկներն են, իսկ հին հայերենը հնդեվրոպական լեզու է:

Հրապարակագիրն այն միտքն է հայտնում, որ Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը բնականաբար ինքնուրույն կյանքով է ապրել, որը բխել է իր ազգային նկարագրի, մշակույթի առանձնահատկություններից: Այն հարցին, թե ինչո՞ւ, սակայն, չի մերվել, ինչո՞ւ է հարուցել երկրի տերերի ատելությունը, Ֆիրբյուխերը տալիս է հետևյալ պատասխանը. «Ամեն ժողովուրդ ունի իր ինքնությունը պահպանելու, զարգացնելու իրավունք... Եվ հետո՝ ո՞ւմ մերվեր հայությունը՝ թուրք էֆենդիությա՞նը, որն աշխարհի ամենաբարոյազուրկ իշխող դասն էր, ժողովրդի՞ն՝ խեղճուկրակ, տառապած, բութ, գրել-կարդալ չիմացող այն անդեմ հավաքականությանը, որը հեզ անասունի նման կրում էր բռնակալների լուծը»[1]:

Այնուհետև հեղինակը ընդգծում է, որ խաղաղաբարո կենցաղի, մտավոր փայլուն կարողությունների շնորհիվ շատ ու շատ հայեր դարձան Առաջավոր Ասիայի ամենալավ մանկավարժները, բժիշկները, թարգմաններն ու վաճառականները: Արևելյան Անատոլիայում հայությունը գյուղատնտեսության բարգավաճման միակ կայուն հիմքն էր, կայսրության արհեստավորները հիմնականում հայերն էին, առևտուրն էլ էր նրանց ձեռքում: «Երբեմն հայ վաճառականներին հանդիմանում էին թուրքերի տգիտությունն ու ծուլությունը շահագործելու համար,— գայրանում է հեղինակը,— բայց մի՞թե նրանք պարտավոր էին նույնքան բութ ու անբան լինել»[2]:

Հեղինակը գալիս է այն համոզման, որ թուրքերը ոչ մի կերպ չկարողացան ներել որոշ հայերի խիտ հարստանալը: Նրանք տեսնում էին, որ իրենց երկիրը փլուզվում է, բայց մտքերից էլ չանցկացրին, որ կործանումը կարելի է կանխել անցյալի մեթոդներից հրաժարվելու, գլխից մինչև ծայրահդամները վերաիոխվելու հանապարհով: Նրանք զգում էին, որ ի վիճակի չեն նորը ստեղծել, քանի որ միշտ եղել էին բռնապետներ, ղեկավարվել բիրտ ուժով: Ի՞նչ էր մնում անել: Կամ գիջումներ կատարել, հասնել փոխըմբռնման, կամ շարունակել կոտորել, վերացնել հայերին[3]:

«Աբդուլ Համիդի տապալումը» գլխում Ֆիրբյուխերը ուրույն մեկնաբանություն է տալիս 1908-ի երիտթուրքական հեղաիոխությանը, այն որակելով իբրև պատմության մեջ եզակի զինվորական հեղաշրջում, որի շարժիչ ուժը դարձան Մակեդոնիայում հաստատված մի խումբ սպաներ:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն բացարձակ իշխանության հասավ: Սակայն քաղաքակրթության և մարդասիրության դրոշի փոխարեն նրանք պարզեցին օսմանյան արնագույն դրոշը, որը մի ամբողջ ազգի պատրանքը դարձավ, և իշխանության նոր տերերը ավարտին հասցրին գաղընկեց մարդասպանի ոճիրը[4]:

Գերմանացի հեղինակը խոսում է Հայ հեղաիոխական դաշնակցության մասին, նշում, որ այն կազմավորվեց Աբդուլ Համիդի օրոք հայությանը բաժին ընկած ծանր ճակատագրի հետևանքով: Կուսակցության

[1] Նշվ. աշխ., էջ 17:
[2] Նշվ. աշխ., էջ 26:

[1] Նշվ. աշխ., էջ 27:
[2] Նշվ. աշխ., էջ 28:
[3] Նույն տեղում:
[4] Նշվ. աշխ., էջ 32:

առաջնորդները եղբայրաբար համագործակցում էին երիտթուրքերի հետ, որովհետև վերջիններիս ժողովրդավարական բարեփոխումների, ազգերի իրավահավասարության և այլ ծրագրային պահանջները լիովին համընկնում էին իրենց ազգային-ազատագրական ու ժողովրդավարական ձգտումներին: Երբ 1909-ին Աբդուլ Համիդի գործակալներն սկսեցին հետապնդել երիտթուրքական առաջնորդներին, հայ դաշնակցականները, կյանքերը վտանգելով, թաքցրին նրանց: Սակայն 1911-ին երիտթուրքերը հայերին զլացան նույնիսկ խոստացված խորհրդարանական 10 տեղերը, և խաբվածները, ճարահատ, կուլ տվեցին ներքին ընդվզումը: Հայ քաղաքական առաջնորդները շարունակում էին հուսալ և կրկին հավատալ իրենց ևվիրվածությունը նոր վարչակարգին: Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ հեղինակի պատկերավոր արտահայտությամբ «երկրի բոլոր կարկատանները պատառոտվում էին», նոանք դավաճանական ոչ մի քայլ չկատարեցին, իսկ 1914-ի նոյեմբերին, երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ, դաշնակցությունը պարտավորվեց պաշտպանել օսմանյան «հայրենիքը»: «Այսօր, երբ հետադարձ հայացք ենք նետում իրադարձությունների վրա,— գրում է հեղինակը,— հայ կուսակցապետերը այն՝ մի խումբ անձանց հավատալու ու վստահելու զոհն են թվում, որոնք շատ շուտ ցույց տվեցին իրենց իսկական դեմքը...

Հայերը կարծում էին, հույսեր փայփայում... Երիտթուրքերի իշխանավորները, սակայն, իրենց հաշիվներն ունեին: Ըստ այդմ էլ գործում էին: 1915 թվականին նրանք սառնասրտորեն կոտորել տվին հայ բարեկամներին, ովքեր 1909-ին փրկել էին իրենց կյանքը»[1]:

Բնութագրելով երիտթուրքերի կառավարությանը, Ֆիրբյուխերը նշում է, որ առաջին իսկ օրվանից նրանց պարագլուխները ընտրեցին բռնապետության ուղին: «Հաստատվել էր կիսագրագետ մտավորականության ու սպաների անարքեկչություն, որոնք Նապոլեոնի կենսագրականը ուղեցույց ձեռնարկ էին համարում և կարծում էին, որ նրան կպակսի լիուլի բավարար է Նապոլեոն դառնալու համար»[2]:

Ծուտով ամբողջ երկիրը ցեղապաշտական այնպիսի մոլուցքով բռնկվեց, որ ոչ թուրքական ամեն ինչի դեմ անողոք հալածանք էր մղվում: Հեղինակը նշում է, որ Էնվերը անպատկառության կարկառուն ներկայացուցիչների՝ Թալեյրանի, Մետերնիխի, Բիսմարկի արժանի հետնորդն էր: Թուրքիայում թուրք ազգաբնակչությունը հազիվ ինը միլիոն էր, իսկ Էնվերը երազում էր այնպիսի տարածքներ նվաճել, որ առնվազն 31 միլիոն թուրք էր ապրում, այսինքն՝ հավակնում էր հասնել մինչև Չինաստան:

«Ոճրի հղացումը» գլխում Ֆիրբյուխերը գրում է, որ թուրքերը բացեիբաց մեղադրում էին հայերին՝ պատերազմում կրած անհաջողությունների համար և սպառնում նրանց ոչնչացնել: Նրա համոզմամբ 1915 թ. ապրիլի 21-ին արդեն կառավարությունը վերջնականապես վճռել էր բնաջնջել հայերին: Նա հաստատում է նաև, որ իշխանությունների նպատակը ոչ թե հայ ժողովրդին տեղահանելը, այլ բնաջնջելն է եղել:

1915-ի հունիսին Թալեաթ փաշան քաղաքացիական իշխանություններին հրահանգեց սկսել հայերի «տեղահանությունը» և միջազետք աքսորելը: Այդ առնչությամբ հեղինակը գրում է. «Այդ լերկ, ամայի երկրամասում, կարճ ժամանակամիջոցում, անհնար էր մեկ ու կես միլիոն հայ տեղավորել, մանավանդ, որ նման քանակությամբ տարագիրներ բնակեցնելու համար նախապատրաստական ոչ մի աշխատանք չէր կատարվել... Պարզ չէ՞ր, թե ինչ նպատակ է հետապնդում մի ամբողջ ազգության՝ կանանցով, երեխաներով, իրենց հազարամյա հող ու ջրից արմատախիլ անելը, ամառվա կիզիչ տոթին, թալանված, հուսահատության մատնված անպաշտպան զանգվածներին հարյուրավոր կիլոմետրեր լեռնային կածաններով քշելը, քաղցի, ծարավի, հիվանդության տապալանքներին մատնելը»[1]:

Անդրադառնալով հայերի ունեցած զենքի հարցին, նա գրում է, թե սովորաբար նախ շրջապատում էին գյուղերն ու քաղաքները, տղամարդկանցից պահանջում զենքերը հանձնել՝ մի բան, որ շատ քչերի տանը կար, այն էլ, հիմնականում, դեռևս հեղաշրջման ժամանակ երիտթուրքերը էին բաժանել, որ հայերը պաշտպանեին նոր վարչակարգը: Չնայած դրան, ում մոտ հրազեն էին գտնում՝ կամ տեղնուտեղը գնդակահարում էին, կամ դաժան կտտանքներով մահվան հասցնում:

Գերմանացի ականատեսը վկայում է, որ տղամարդկանց կապկպում էին իրար, սովորաբար սպանում բնակավայրերից ոչ հեռու: Հետո կանանց, երեխաներին հրամայում էին մի քանի ժամում, հաճախ մի քանի րոպեում պատրաստվել ու ճամփա ընկնել:

Սարսռեցուցիչ է Քեմախի կիրճում տեղի ունեցած հայերի նախահիրի նկարագրությունը: «Հարյուր հազարավոր հայեր այնպիսի աննկարա-

[1] Նշվ. աշխ., էջ 33:
[2] Նշվ. աշխ., էջ 34:

[1] Նշվ. աշխ., էջ 42:

գրելի տանջանք ու տառապանք կրեցին այնտեղ, որ թվում էր այդ անիծյալ մի ափ հողակտորի վրա դարձյալ կենտրոնացել է մարդկային հազարամյա դաժանությունը»,— գրում է Ֆիրբյուխերը[1]: Հայերի մեծ զանգվածները հունիսի 8-ին, 9-ին և 10-ին դուրս եկան Երզնկայից: Նրանց ուղեկցում էր զինվորական պահակախումբը: Բռնագաղթվածներին քշեցին Քեմախ: Անդնդախոր կիրճում թուրք զինվորներն ու արյունարբու քրդերը հարձակվեցին անպաշտպան գաղթականների վրա, արյան անհագ ծարավով կողոպտեցին, կոտորեցին նրանց: Զարդարարները խելագար ոռնոցներով անդնդախոր կիրճն էին շրխտում դիակներն ու մահամերձների մարմինները: Ձախջախվող ոսկորների ճարճատյունն անընդհատ արձագանքում էր ձորի նեղ պատերի մեջ, խառնվում վերևից եկող հոգեվարքների հուսահատ ճիչերին: Ծնողների աչքի առաջ զավակներին ու մերձավորներին բզկտում, կտոր-կտոր էին անում, արյունաշաղախ մսագնդերը խփում սուրսայր ժայռերին: Ցած ընկնող անկենդան մարմիններից ալիքներն անընդհատ ոռոլիում էին[2]: «Մի՞թե գերմանացի ոչ մի պետական գործիչ գիշերը չզարթներ խղճի խայթից,— զայրագին գոչում է հեղինակը,— որպեսզի բոսֆորյան պաշտոնակիցների դեմքին գոռար, որ նրանք շղթայվելու արժանի դևեր են...

1915 թվականի եղեռնագործությունը անընդունելի է այն աստիճանի, որ իրավամբ թվում է պատմության ամենաարյունոտ դժնդակ **առեղծվածը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Սովորական, մարդկային բանականության համար հայերի սպանդը անընդունելի ու անմեկնաբանելի է՝ ոճիր, որի հետ չի կարելի հաշտվել»[3]:

Հեղինակը քաղվածքներ է բերում Մարզվանի (Սեբաստիայի կուսակալություն) քոլեջի մի ամերիկյան միսիոների զեկուցագրից. քաղաքի 12 000 հայերից կենդանի մնացին մի քանի հարյուրը: Պայտել էին Սեբաստիայի եպիսկոպոսին: Ջիլե գյուղի տղամարդկանց կապկպել էին իրար, հավաքել գյուղի կենտրոնում, բոլորի աչքի առաջ սպանել: Կանանց ստիպել էին մահմեդականություն ընդունել ու քանի որ հրաժարվել էին, խողխողել էին զավակների ներկայությամբ: Խարբերդի ամերիկյան քոլեջի հայ ուսուցիչներին տանջահար էին արել: Պոկել էին պրոֆեսորներ Թենեքեջյանի, Բուջիկանյանի մազերը, մորուքը, գլխիվայր կախել, մի ուրիշ պրոֆեսոր խելագարվել էր: Կուսակալն անձամբ

[1] Նշվ. աշխ., էջ 44:
[2] Նշվ. աշխ., էջ 45:
[3] Նույն տեղում:

էր մասնակցել պրոֆեսոր Լյուլեջյանի խոշտանգմանը: Դիարբեքիրում 26 երևելիների սպանել էին, բռնաբարել կանանց, 674 տղամարդու լցրել էին լաստերը ու թափել Եփրատը: Հինգ քահանայի մերկացրել էին, վրաները ձյութ լցրել, պտտեցրել քաղաքի փողոցներում: Մի ենթասպա հինգ ոստիկանների հետ Ուրֆայի ճանապարհին գնդակահարել էր 700 անզեն հայերի: Լիջեի գավառապետին, որը չէր ենթարկվել կուսակալի հրամանին՝ հայերին կոտորելու վերաբերյալ, Դիարբեքիրից ոչ հեռու խողխողել էին: Սասունից Խարբերդ էին փոխադրել 3000 տղամարդու և, բացառությամբ երեքի, բոլորին մորթել[1]:

Ֆիրբյուխերը Վանի կուսակալ, Էնվերի փեսա Ջևդեթ բեյին ներկայացնում է իբրև ջարդարար: Նա գրում է, որ Վանը չենթարկվեց ջարդարարների կամքին, մի ամիս դիմադրեց, որի ընթացքում **տասնութ թուրքեր** (ընդգծումն իմն է— Մ. Կ.) սպանվեցին, մինչդեռ Բեռլինի օսմանյան դեսպանն աշխարհով մեկ տարածեց, որ Վանում հայերը 150 000 թուրք են կոտորել: Մինչդեռ իրականությունն այն է, որ պաշարման ամբողջ ընթացքում Ջևդեթ բեյը ավերել է 200 գյուղ, սպանել 26 000 բնակչի, և քաղաքը փրկվեց ռուսների անսպասելի առաջխաղացման շնորհիվ:

Նա վկայակոչում է վենեսուելացի Ռաֆայել Նոգալես-ի-Մենդեսի «Չորս ամիս կիսալուսնի ներքո» գիրքը, որտեղ Ջևդեթը ներկայացված է իբրև մարդու տեսքով գազան:

Մեկ այլ առիթով Ֆիրբյուխերը խոսում է Հալեպից հարավ Մեսքենեի մի մեծ համակենտրոնացման ճամբարի մասին, ուր հայերը սովամահության էին դատապարտված: Ըստ թուրքական տվյալների, այդ վայրերում 55 000 հոգի է թաղված, իսկ Տեր-Զոր աքսորված 66 000 հայերից գրեթե ոչ ոք չի փրկվել:

Նա վերստին վկայակոչում է Նոգալես-ի-Մենդեսին, որը պնդում է, թե «թուրքական բանակի հայր» գերմանական մարշալ ֆոն դեր Հոլցը, որը համարձակվել էր ցավակցաբար խոսել հայերի կրած տառապանքների մասին, սովամահ է արվել Խալիլ փաշայի կարգադրությամբ[2]:

«Վերջ տանք, բավական է» գլխում, տրվելով խոհափիլիսոփայական մտքերին, Ֆիրբյուխերը հարց է տալիս. «Պատմության ամենամեծ ողբերգությունը երբևէ կգտնի՞ իր մարմնավորողին՝ նկարչին, գրողին,

[1] Նշվ. աշխ., էջ 47—49:
[2] Նշվ. աշխ., էջ 52:

որը կարողանա գալիք սերունդների հայացքը բևեռել մեր դարի՝ խելագար, դիվայինն սոդոմգոմորի վրա...

Երբ աշխարհին Շեքսպիր, Վոլտեր, Գյոթե տված Եվրոպան կուրացավ պատերազմի արյունոտ մտքից, լեռնային երկրում ապրող մի ժողովուրդ նահատակվեց գլխովին: Ու այդ մասին մոռացան...

Մենք իրավունք չունենք տրվելու մոռացմանը: Մեզնից ամեն ոք պարտավոր է նայել իր էության խորքը, լսել՝ հոգում կեղծ ձայնանիշեր չե՞ն հնչում, որոնք վաղը կարող են պատերազմի ազդակոչերի, մեկ օր անց մահվան քայլերգի փոխվել»[1]:

Առանձին գլխում դնելով կայզերական կառավարության մեղքի բաժնի հարցը, Ֆիրբյուխերը անվարան եզրակացնում է. «Վիլհելմ 2-րդի՝ դիվանագիտական ու ռազմական հիմարություններից ու հանցագործություններից, այն ահռելի մեղքից զատ, որ ընկած է գերմանական հերոստրատների ուսերին, պատերազմի տարիների կայզերական կառավարությունը պատասխանատու է նաև 1915 թվականի նողկալի ոճիրների համար»[2]:

Սակայն, կայզերական կառավարությունը համամի՞տ էր դաշնակցի գործած ոճիրներին, հեղինակը կտրականապես պատասխանում է՝ իհարկե՝ ոչ: Նա պնդում է, որ Թուրքիայում գտնվող շատ գերմանացիներ, որոնք ազդեցություն ու հեղինակություն ունեին, անհնարինն արեցին հայերին օգնելու, պաշտպանելու համար:

Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, Գերմանիան մտքով իսկ չանցկացրեց հրաժարվել Ստամբուլի դահիճների դաշինքից, Ֆիրբյուխերը գրում է. «Մեր կառավարությունը ոճրագործների այդ խմբի հետ համագործակցում էր, որովհետև նրանք բոլոր խաղաթղթերը ձեռքերում էին պահել և ստիպում էին ենթարկվել իրենց ավելի զորեղ կամքին: «Հաղթանակ» կոչվող ուրվականը դղրդում էր շատ ու շատ բան՝ այդ թվում բարոյական չափանիշեր գիշել»[3]: Մեր կարծիքով, այստեղ առկա է գերմանական կառավարության հանցանքը ինչ-որ չափով մեղմելու միտում:

1915-ի մայիսին Էնվերը բարոն Վանգենհայմին տեղեկացրեց, որ հարկ կլինի տվյալ պահին խռովության գոտիներում ապրող բոլոր հայ ընտանիքներին Միջագետք տեղափոխել, և մայիսի 3-ին դեսպանը

[1] Նշվ. աշխ., էջ 54
[2] Նշվ. աշխ., էջ 55:
[3] Նշվ. աշխ., էջ 56:

հեռագրեց Բեռլին. «Էնվերը համառորեն խնդրում է, որ այդ նախաձեռնությանը չմիջամտենք: Իհարկե, հնարավոր է, որ կիրառվող միջոցները չափազանց ծանր լինեն հայ ժողովրդի համար, սակայն, իմ համոզմամբ, մենք ի վիճակի ենք միայն որոշ քայլեր մեղմել տալ, սկզբունքորեն արգելել չենք կարող»[1]: Դրան հետևում է հեղինակի բերած՝ դեսպանի հունիսի 17-ի հաղորդումը. «Թալեաթը առանց թաքցնելու հայտարարեց, որ Բարձր Դուռը որոշել է օգտվել համաշխարհային պատերազմից, երկրի ներքին թշնամիներին (քրիստոնյաներին) վերացնել: Նա հույս հայտնեց նաև, որ միջազգային դիվանագիտությունն իրենց չի խանգարի»: Եվ վերջապես բերվում է դեսպանի հուլիսի 7-ի տեղեկությունը. «Տարագրության ձևերը ակնհայտ են դարձնում, որ կառավարության բուն նպատակը Օսմանյան կայսրությունում հայ ազգը գլխովին բնաջնջելն է»[2]:

Գերմանացի հրապարակախոսի մոտ կասկած չի մնում, որ կայզերական կառավարությունը շատ լավ գիտեր, թե ինչ է կատարվում Հայաստանում, որի դեսպանին 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթն արդեն հայտարարում էր, որ Հայկական հարց այլևս գոյություն չունի ու պարծենում, որ այդ հարցը լուծելու համար ինքը մի օրում ավելին արեց, քան Աբդուլ Համիդը՝ 30 տարում:

Ինչ վերաբերում է գերմանացի ժողովրդին, հեղինակն ափսոսանքով նշում է, որ երբեք ոչ մի ազգ նման նենգությամբ չի խաբվել, և նույնիսկ ռայխստագում չգիտեին ճշմարտությունը, իսկ Լեփսիուսի՝ պատգամավորների համար հայթայթած տեղեկատվական նյութերը հասցեատերերին չհասան:

Ֆիրբյուխերը իր գիրքը եզրափակում է հետևյալ խոսքերով. «Այդպես հայ ժողովրդին դավաճանեցին, խաբեցին ու լքեցին»[3]:

Հայոց ցեղասպանության ականատես-վկաներից է դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսոնը, որի հուշերի գրքից մի պատառիկ Վ. Ս. Այվազյանի ջանքերով հրատարակվել է վերջերս[4]: Նրա ծավալուն գիրքը հրատարակվել է դանիերեն, անգլերեն, արևմտահայերեն (Անթիլիաս, 1979):

Պատերազմի տարիներին Յակոբսոնը որբանոց է բացել Խարբերդում, 1921—1922 թթ. իր ընկերուհի Պետերսոնի հետ անցել է Լիբանան և Սիրիա, շարունակել զբաղվել հայ որբերի խնամքով: Նրա վկայու-

[1] Նշվ. աշխ., էջ 56:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 61:
[4] Մարիա Յակոբսոն, 1915, պատառիկներ օրագրություններից, Երևան, 1995:

թյունները, ինչպես իրավամբ նախաբանում է նշել գրքույկի հրատարակիչը, այդ չտեսնված հանցագործության կենդանի փաստերն են:

Հուշագրության սկզբում նկարագրելով թուրքական բանակի մատակարարման ողբալի վիճակը, դանիացի միսիոներուհին գրում է, որ բռնադատումները կատարվում են բռնագրավված գրատներով, որոնք տեղափոխում են մգլած ցորեն, իսկ զինվորներին տրված կերակուրները չեն ուտվում: Հիվանդանոցները լիքն են տիֆով հիվանդ զինվորներով: Մեզրեի հիվանդանոցում օրական մեռնում էր 25 հոգի: Մի զինվոր պառկեցնելու համար գետնի ոջիլները ալլում էին ավելով: Զինվորները դասալքում էին հազարներով, որոնց բռնելիս կախում էին: Դրանք և թուրքերից էին, և հայերից:

1915-ի փետրվարի 7-ին օրագրության մեջ նշվում է, որ այդ օրը եկեղեցում կարդացվել է մի հրովարտակ, որը զորակոչ էր հայտարարում, և ավելացվում էր, որ նրանք, ովքեր փախուստի կդիմեն, կպատրժվեն որպես գող, և նրանց տները կայրվեն: Նշվում էր նաև, որ սա մահմեդականի և քրիստոնյայի պատերազմ չէ, այլ պատերազմ է նրանց դեմ, ովքեր աստծուց չեն վախենում: «Հայերը շատ դժբախտ են,— գրում է օրագրողը,— որովհետև նրանք պետք է պատերազմեն քրիստոնյաների դեմ և, այսպիսով, օգնեն մահմեդականներին»[1]:

Փետրվարի 9-ի օրագրության մեջ պատմվում է երեք հայ և չորս քուրդ փախստական զինվորների մահապատժի մասին: Նա գրում է, թե այս երկրում մարդը արժեք չունի: Տիֆը գնալով տարածվում է, և երբ մի զինվոր է մեռնում, նրան թեւտում են փոսը, որից հետո նրա մասին այլևս չեն մտածում, կարծես աննասուն էր եղածը: Զինվորներն ստանում են օրական երկու փոքր հաց և հինգ գդալ ապուր: Շատ հատարակ բան է քրդերին մտրակելը, որոնք թուրքերենն չիմանալու պատճառով չեն հասկանում, թե ինչ են հրամայում իրենց և սովորություն չունեն թուրք սպաներին բարևել: Մինչ զինվորները մեռնում են կեղտից ու քաղցից, սպաները լցնում են իրենց գրպանները:

Մայիսի 4-ի օրագրությունը տեղեկացնում է, որ ժողովուրդը սարսափի մեջ է: Բոլորն էլ ասում են, թե այս ամենը նախապես ծրագրված է և պարզ է, որ լինելու է ջարդի սկիզբը, քանի որ զենքերը հանձնելու համար տրված է հինգ օր ժամանակ: Սակայն ամենքն էլ ասում են, որ չպետք է հանձնեն: Մտածում են՝ եթե հանձնեն, թուրքերը կկատաղեն ու վրեժխնդիր կլինեն:

[1] Նշվ. աշխ., էջ 6:

Հունիսի 8-ին միսիոներուհին գրում է, թե բանտերի մեջ ծանր ֆիզիկական տանջանքների են ենթարկում մտավորականներին: Գայմագամի հրամանով խոշտանգեցին պրոֆեսորներ Լյուլեճյանին և Պուճիգանյանին, հետո նրանց քարշ տվեցին զուգարան, որտեղ մնացին մի ամբողջ օր:

Նկարագրելով Խարբերդի հայերի աճապար վիճակը, Յակոբսոնը գրում է. «Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու այս ժողովրդի ցավերը, տառապանքներն ու սարսափը: Մարդը խելագարվում է, երբ լսում է նրանց պատահած տոկալի դեպքերի մասին: Կարծես սատանայական հնարամտություններ հասել էին իրենց գագաթնակետին, տանջում ու չարչարում էին իրենց զոհերին»[1]:

Յակոբսոնը պատմում է, թե ինչպես էին թուրքերը զենք փնտրելու պատրվակով մտնում հայերի տները, տղամարդկանց ձերբակալում, ծեծում ու չարչարում, նրանց վազեցնում են, ոտքերը դնում ջրի մեջ, մտրակում են մինչև ոտքերից արյուն հոսի: Գեղվանքում նրանք բանտարկյալներին նստեցրել էին շիկացած երկաթների վրա:

Հունիսի 17-ին միսիոներուհին արձանագրում է, որ բոլոր բանտարկյալները սպանվել են լեռներում, իսկ ձերբակալությունները շարունակվում են: Լուրեր են պտտվում, թե բոլոր հայերին աքսորելու են Ուրֆայի կողմը, որը կնշանակի հայ ժողովրդի մաքրագործում:

Օրագրում հուլիսի 6-ը նշված է իբրև Խարբերդում տոկալի դեպքերի օր: Զինվորները պաշարել են քաղաքը և 13 տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց ձերբակալում են: 800 հոգու տարան Խան Քյոյ և ըստ այնտեղից փախած դեղագործ Մելքոն Էֆենդու պատմածի, բոլորին գնդակահարեցին, իսկ երբ գնդակները վերջացան, ողջ մնացածներին սպանեցին կացիններով ու սվիններով[2]:

Տեղեկություն է ստացվում, որ Իչմեում մորթել են բոլոր տղամարդկանց, Կարմիր Խոնազի բոլոր երիտասարդներին սպանել էին աքսորի ճանապարհին:

Հուլիսի 9-ին միսիոներուհին գրել է, որ թուրքերը հայտարարում են, թե այն կանայք ու աղջիկները, որ մնացել են, պետք է մահմեդականություն ընդունեն: Սա նշանակում էր, որ պետք է ամուսնանային թուրքերի հետ, իսկ փոքր տղաները պիտի թուրքանային: Դրա պայմանն այն է, որ պիտի թլպատվեին:

[1] Նշվ. աշխ., էջ 17:
[2] Նշվ. աշխ., էջ 21:

Երզնկայից փախած մի խումբ պատմում էր, որ տղամարդկանցից շատերն արդեն սպանված են, կանայք ու աղջիկները՝ բռնաբարված: Քայլել չկարողացող ծերերին ու հիվանդներին թուրքերը թողել են գերեզմանատանը, որպեսզի մեռնեն: Խմբի մեջ եղած տղամարդկանց պարզապես մորթել են:

Հուլիսի 21-ին Յակոբսոնը գրել է, որ Խարբերդում թուլատրվել էր մնալ միայն հայ ընտանիքների, որոնք կոշկակար էին, թիթեղագործ, ժամագործ, արծաթագործ, կազմարար: Թուրքերը տեղափոխվում էին հայերի տները, որոնք ավելի լավն էին: Փողոցները լի էին աղբով ու աղտեղությամբ, իսկ առաջ այնպես գեղեցիկ ու մաքուր էին:

Թուրքերը մզկիթների մեջ հայտարարում էին, որ եթե որևէ թուրք պաշի մի հայի, ապա կկախվի և տունն էլ կայրվի: Նաև ասում էին, որ խուզարկվելու են բոլոր թուրքերի, նույնիսկ վալիի տունը:

Օգոստոսի 7-ին միսիոներուհին ականատես է լինում մի հսկայական հրավառության՝ այրվում էր Զմշկածագի դաշտը իր մի շարք գյուղերով:

Թուրքերն այլևս չէին դժվարացնում մաքրագործման հարցը. հայերին մի քիչ դուրս էին հանում գյուղից ու սպանում: Այդպես վարվեցին Հուսեյնիկ գյուղում:

Խոլլու գյուղում (Թլկատին) բոլոր կանանց հավաքել ու սպանել էին: Նրանց հրամայել էին հագուստները հանել, այնուհետև իրար վրա դարսելով, գլխատել էին: Ներքևում գտնվող կանայք առաջին հարվածից չէին մեռնում, ուստի մեռած ձևացողները հետո կարողացան փախչել:

Օրագրության հրատարակված հատվածն ավարտվում է 1915 թ. սեպտեմբերի 26-ի գրառումներով, որը տեղեկացնում է, թե բոլորին ներում են շնորհել, որովհետև ամեն ինչ արդեն վերջացած է[1]:

***

Հայ ժողովրդի ճակատագիրը խորապես մտահոգել է նորվեգացի աշխարհահռչակ բևեռախույզ, գիտնական Ֆրիտյոֆ Նանսենին: Մեծ գիտնականը տարբեր առիթներով անդրադարձել է Հայկական հարցին, գրել գրքեր, հոդվածներ, ճառեր արտասանել: Նա 1925 թ. ամռանը, որպես Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովի նախագահ, որը պետք է ուսումնասիրեր 50 հազար հայ գաղթականների Սարդարապատի շրջանում տեղավորելու հարցը, եղավ Հայաստանում և վերադարձին գիրք

[1] Նշվ. աշխ., էջ 42:

գրեց Հայաստանից ու հայ ժողովրդից իր ստացած տպավորությունների մասին:

Հայ ժողովրդի մասին ջերմ սիրով ու մուրբ դիտողականությամբ գրված այդ գիրքը[1] պարունակում է նաև անդրադարձներ հայ ժողովրդի պատմական ճակատագրի և, մասնավորապես, հայոց ցեղասպանության մասին:

Ուրույն մեկնաբանություններով հայոց պատմության շարադրանքը հասցնելով մինչև 19-րդ դարի վերջերը, Ֆ. Նանսենը դիպուկ բնորոշում է տալիս Աբդուլ Համիդին, գրելով, որը գահ բարձրանալուց (1876 թ. օգոստոսի 13) հետո շուտով ապացուցեց, որ ինքը հարյուրամյակների ընթացքում Թուրքիայի ունեցած սուլթաններից ամենալպիրշը, նենգն ու դաժանն է: Թեև նրա մայրը հայ էր, բայց ինքը համակված էր հայերի նկատմամբ անհագ ատելությամբ, որովհետև հայերին համարում էր Թուրքիայի գործերում մեծ տերությունների միջամտության կարևոր պատրվակներից կամ պատճառներից մեկը:

Մերկացնելով մեծ տերությունների դավաճանական դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ 90-ական թվականներին, որոնց թողտվության պայմաններում ընթացան կոտորածները, մեծ մարդասերը գրում է. «Այսպիսին է Եվրոպան: Ըստ ինձ հուսալի մի առասպելի, նա թույլ էր տվել, որ մի ցուլ մոլորեցնի իրեն: Միշտ չէ, որ մարդ կարող է հպարտ զգալ իրեն որպես եվրոպացի»[2]:

Աշխատության «Հայերը քսաներորդ դարում» գլուխը Նանսենը սկսում է այն դատողությամբ, որ Թուրքիայում «լիբերալ» երիտասարդ թուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը աճում էր և դաշնակցել էր հայերի հետ, **որոնք այս շարժմանը բերում էին ուժ, ունայնություն, հեռատեսություն և նրա վերջնական հաղթանակի գործում մեծ ավանդ մտցրին** (ընդգծումն իմն է— Մ. Կ.)[3]:

1908 թվականի հուլիսին տեղի ունեցած երիտթուրքական հեղափոխության հաղթանակից հետո, ինչպես գրում է Նանսենը, հաստատվեց մի լիբերալ սահմանադրություն, որը հավասար իրավունք էր տալիս բոլոր ցեղերին ու դավանանքներին: Ամբողջ կայսրության մեջ ուրախությունը մեծ էր: Կոստանդնուպոլիսը լուսավորված էր, բանտերի դռները բացվել էին: Ժողովուրդը շարքերով գնում էր 1896 թվականին կոտորված հայերի

[1] Ֆրիտյոֆ Նանսեն, Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 1998

[2] Նշվ. աշխ., էջ 133:

[3] Նշվ. աշխ., էջ 139:

մեծ գերեզմանոցը: Մահմեդական առաջնորդները գովաբանեցին գոհվածներին, որպես ազատության մարտիրոսներ:

Բայց, շարունակում է հեղինակը, հայերի բերկրանքը երկար չտևեց: «Թեև երիտասարդ թուրքերի նոր ղեկավարները կրոնական նախապաշարումներից ազատ էին, եթե չասենք անկրոն, բայց շուտով պարզվեց, որ նրանց նպատակն էր հիմնել թուրքական գերիշխանություն՝ հնարավորին չափ քիչ զիջումներ անելով ոչ թուրք ազգաբնակչությանը, ինչպիսի դավանանքի էլ նրանք լինեին, լինեին արաբներ, քրդեր, հայեր, հույներ և այլ ազգություններ: Ամբողջ կայսրության մեջ խոսակցական լեզուն լինելու էր թուրքերենը: **Հայերի նկատմամբ երախտագիտությունը ազատության պայքարում նրանց օգնության համար, կարող էր շատ կարճ տևած լինել** (ընդգծումն իմն է— Մ. Կ.)»[1]:

Այնուհետև նա պատմում է այն մասին, որ 1909 թ. ապրիլին Աբդուլ Համիդը փորձեց զինվորական հեղաշրջման միջոցով վերահաստատել իր իշխանությունը, և մի քանի օր երիտասարդ թուրքերի արյունն էր հոսում, սակայն շուտով մայրաքաղաքի պատերի տակ հայտնվեց Մահմեդ Շևքեթ փաշայի գլխավորած բանակը: Քանի որ սուլթանը նշանակված ժամին կապիտուլյացիայի չենթարկվեց, Ստամբուլը շրջապատվեց, և սկսվեց կատաղի մի կռիվ: Հեղինակը շեշտում է, որ այդ կռվի ժամանակ **հայ կանայք և երեխաները օգնում էին երիտասարդ թուրքերի զորքերին՝ հրանոթները դիրքերի մեջ քաշելով** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Սուլթանի դղյակը գրավվեց հարձակումով, նա դուրս բերվեց հարեմի հարկաբաժինների ետևի մի սենյակից և, ահաբեկված, կողքի սենյակից լսեց իր մասին դատավճիռը, որով նրան զրկում էին խալիֆի գահից:

Խոսելով 1909 թ. Կիլիկիայի կոտորածի մասին, Նանսենը նշում է, որ երբ այստեղ հեռագիր ստացվեց սուլթանի ռազմական հեղաշրջման մասին, երիտթուրքերի հակառակորդ, հին ռեժիմի կողմնակից մահմեդականները Կիլիկիայի բոլոր քաղաքներում ու գյուղերում թափվեցին հայերի վրա, որոնք շատ էին խանդավառվել իրենց ազատագրումով, կողոպտեցին, այրեցին ու սպանեցին: Նրանց անգթությունը ֆանտաստիկ ձևեր ընդունեց, և սպանվեցին մոտ 20 000 հայեր: «Երիտասարդ թուրքերի կառավարության բռնած դիրքը,— այդ կապակցությամբ գրում է Նանսենը,— այս կոտորածների նկատմամբ այնքան էլ պարզ չի երեվում, թեև նրանք հրաման տվեցին, որ ջարդերը դադարեցվեն... Ջարդերի հանրահայտ ղեկավարները չենթարկվեցին տույժի, մինչ մի քանի մարդասպանների պատահականորեն ընտրեցին ու կախեցին, որոնց հետ նաև մի քանի հայերի, որոնք զինված դիմադրություն էին ցույց տվել՝ պաշտպանելով իրենց ու իրենց ընտանիքները: Այժմ, երբ հաղթանակն ապահովված էր, երիտասարդ թուրքերն իրենց նախկին զենքի ընկերների կարիքն այլևս չէին զգում: Ավելի կարևորը մահմեդական հին թուրքերի զգացմունքները չվիրավորելն էր»[1]:

Ջարգացնելով իր դատողությունները, Նանսենը գրում է, որ շուտով ակներև դարձավ երիտասարդ թուրքերի ծրագիրը՝ հիմնել համաթուրքական մի կայսրություն, որտեղ ամենուրեք իշխեր թուրքական լեզուն և ամբողջովին թուրքական կառավարություն լիներ: Քրիստոնյաներին, հատկապես հայերին, պետք էր ճնշել, որովհետև նրանք իրենց քաղաքակրթության և բանիմացության մակարդակով շուտով կդառնային երկրի գլխավոր ուժը: Միանգամայն ճիշտ է նկատել հեղինակը, որ թուրքերի պարտությունը Բալկանյան պատերազմում էլ ավելի վատացրեց հայ քրիստոնյաների վիճակը, որովհետև եվրոպական Թուրքիայի կորստից հետո հազարավոր թուրք գաղթականներ Մակեդոնիայից ու Թրակիայից եկան Անատոլիա, իրենց հետ բերելով անչափ ատելություն դեպի բոլոր քրիստոնյաները, և այդ բանում նրանց դրդում, քաջալերում էր կառավարությունը:

Նանսենը, վկայակոչելով իրեն հայտնի փաստաթղթեր, հավատում է, որ Հայաստանի քրիստոնյա բնակչությանը «նոսրացնելու» հարցը որոշված է եղել նույնիսկ համաշխարհային պատերազմից առաջ: Ըստ նրա, հայ ղեկավարներն զգում էին, թե ինչ է լինելու և դիմում էին տերությունների կառավարություններին: Այդ նպատակով էլ Էջմիածնի կաթողիկոսը նշանավոր հայ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ մի պատգամավորություն ուղարկեց Եվրոպա: Այդ քայլը կատաղեցրեց երիտթուրքերին, որոնք վայրագ սպառնալիքներ կարդացին հայերի գլխին, Նուբար փաշային հրավիրեցին զինվորական դատարան, թեև նա ոչ թե թուրքական, այլ եգիպտական քաղաքացի է, որպես դավաճանի նրան դատապարտեցին իր բացակայությամբ և զրկեցին պատվից, գույքից ու կալքից, մի դատավճիռ, որն իրականում կիրառվեց ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 140:

[1] Նշվ. աշխ., էջ 141:
[2] Նշվ. աշխ., էջ 148:

«Հայերը համաշխարհային պատերազմի օրերին» համեմատաբար ծավալուն գլխում Նանսենը տեղեկացնում է, որ երբ 1914 թ. հուլիսի վերջերին սկսվեց համաշխարհային պատերազմը, հայերը Էրզրումում խորհրդաժողով հրավիրեցին, որտեղ քննարկեցին պատերազմի դեպքում իրենց վերաբերմունքը, նկատի ունենալով այն փաստը, որ իրենց երկիրը սահմանագծով բաժանված է երկու մասի: Ժողովին մասնակցում էին նաև երիտթուրքերի մի քանի ներկայացուցիչներ: Թուրքերը ապագա ինքնավարության ոսկե խոստումներով փորձեցին հայերին ապստամբեցնել ռուսների դեմ: Հայերը մերժեցին, արտահայտվելով Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու մտադրության դեմ, թեև խոստացան պատերազմի դեպքում կատարել իրենց քաղաքացիական պարտքը:

Երիտթուրքերի ղեկավարները կատաղեցին ու աստիճանաբար մշակեցին ամուղղելի հայկական «գարշելի ճիճուն» բնաջնջելու ծրագիրը: Նա վկայակոչում է 1915 թ. փետրվարի 15-ի թվակիր մի փաստաթուղթ, ուղղված Սիրիայի դիկտատոր Ջեմալ բեյին, որտեղ նշվում էր, որ երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեն որոշել է հայրենիքը ազատել այդ անիծված ցեղի բռնակալությունից և իր հայրենասիրական ուսերի վրա կրել այն նախատինքը, որ այդ քայլը կբերի օսմանցիների պատմությանը: Կոմիտեն որոշել է բնաջնջել Թուրքիայում ապրող բոլոր հայերին, առանց թույլ տալու, որ որևէ մեկը փախչի... Կառավարությունը վալիներին ու բանակի հրամանատարներին ջարդերի կազմակերպման մասին կտա անհրաժեշտ թելադրանքներ[1]:

Նանսենը հաստատագրում է, որ բնաջնջման ծրագիրն իրականացնելու համար խնամքով նախապատրաստական աշխատանքներ էին տարվել: Անատոլիա ուղարկվեցին ժանդարմական ուժեր, որոնք պետք է հայերի տներում զենք որոնեին, բանտերից ազատվին քրեական տարրերին ու նրանցից կազմակերպեին հատուկ խմբեր՝ տիեզտաներ (տիեզտա՝ նշանակում է արյան գին): Նրանք չզորակոչված մահմեդականներից կազմակերպեցին քաղաքացիական զինվորների խմբեր ու նրանց զենք բաժանեցին: 1914 թ. նոյեմբերի 21-ին անկրոն երիտթուրքերը ջիհադ կամ սրբազան պատերազմ հայտարարեցին, որը պարտավորեցնում էր սպանել բոլոր անհավատներին, ովքեր կմերժեին ընդունել իսլամի հավատքը: Բոլոր քրիստոնյաներին՝ 20—43 տարեկան, իսկ հետագայում՝ 18—48 տարեկան, աստիճանաբար զորակոչեցին, թեև

[1] Նշվ. աշխ., էջ 144:

օրենքով ծառայության ենթակա էին 27-ից ցածր տարիքի մարդիկ: Աշխատանքի անընդունակները պարտավոր էին ծառայել իբրև գրաստ: Միայն Մուշի և Էրզրումի ճանապարհին նրանցից 3 000 հոգի ճզմվել են իրենց բեռների ծանրության տակ[1]:

Համառոտակի խոսելով Կիլիկիայի տեղահանության, Սուեդիայի ինքնապաշտպանության մասին, Նանսենն առավել հանգամանորեն կանգ է առնում Վանի «ապստամբության» վրա, որն, ըստ նրա, թուրքերը փորձել են օգտագործել, որպես հայերի դավաճանության լավագույն ապացույց: Հպանցիկ անդրադառնալով Շատախի, Ուրճեշի, Հայոց Ձորի ինքնապաշտպանական մարտերին, հեղինակը նկարագրում է Վանի պաշարումն ու ռմբակոծումը, որը տևեց 4 շաբաթ: Հայերը որոշ չափով հրացաններ ունեին, բայց ռազմամթերքը քիչ էր, ուստի և խնայողաբար էին այն օգտագործում: Նրանք պատրաստում էին գնդակներ՝ օրական 3 000 հատ, ինչպես և վառոդ. վերջում նրանք պատրաստեցին նույնիսկ մեկ-երկու հրասանդ: Քաղաքի վրա արձակվել էր հրետանու 12 000 արկ, բայց վնասը շատ քիչ էր եղել: Հայերի կողմից սպանվել էին 18 հոգի, բայց վիրավորները շատ էին: Թուրքերի կորուստները հավանորեն մոտավորապես նույնքան են եղել: Հետո, երբ ռուսական բանակը հուլիսի 31-ին որոշ ժամանակով նահանջեց դեպի հյուսիս, Վանի վիլայեթի հայ ազգաբնակչությունը, թվով մոտ 200 000 մարդ, փախավ դեպի Ռուսաստան[2]: Անկերև է, որ նորվեգացի գիտնականի բերած թվական տվյալները, մեղմ ասած, անստույգ են:

Այնուհետև Նանսենը տեղեկացնում է, թե ինչպես Վանի ինքնապաշտպանության փաստը Էնվերը հատուկ կոմյունիկեով ներկայացրեց Բեռլին՝ իբրև հայ հրոսակախմբերի՝ մահմեդական ազգաբնակչության վրա թիկունքից հարձակվելու ապացույց, որի հետևանքով Վանի վիլայեթի 180 000 մահմեդականներից միայն 30 000-ին է հաջողվել փախչել և փրկվել: Հետագայում Բեռլինում հրատարակված մի տեղեկագրում թուրքերը սպանված մահմեդականների թիվը հասցրին 180 000-ի: Այսպիսով 18-ը դարձավ 180 000: Վիճակագրական տվյալների այս խաղը որակելով իբրև «ապշեցուցիչ տուտ», հեղինակը գրում է, որ իրականում Վանի վիլայեթում, իրոք, կային 180 000 մահմեդականներ, որոնցից 30 000-ը՝ թուրքեր, 150 000-ը՝ քրդեր: Ռուսական բանակի առաջխաղաց-

[1] Նշվ. աշխ., էջ 145:
[2] Նշվ. աշխ., էջ 149:

ման ընթացքում թուրքերը փախան դեպի արևմուտք, իսկ քրդերը մնացին իրենց տեղերում, և ոչ ոք նրանց չնեղեց: «Այս ամբողջ միջադեպը,— գրում է նա,— տիպիկ օրինակ է այն մեթոդի, որով թուրքերը վարվել են հայերի հետ և փորձել այնպես ձևացնել, թե հայերը ապըստամբներ ու դավաճաններ են: «Մյուս ապացույցները» հայերի հանցավոր լինելու մասին, նույն տիպի են:

Փոքր Ասիայում գերմանական հյուպատոսների և Կոստանդնուպոլսի դեսպանների տեղեկագրերը միանգամայն պարզ ցույց են տալիս, **որ ոչ մի ապացույց չկա հայերի դավաճանության կամ ապստամբական ծրագրեր ունենալու մասին** (ընդգծումը հեղինակինն է— Մ. Կ.)[1]:

Այնուհետև նորվեգացի հումանիստը գրում է Պոլսում ապրիլի 24-ի գիշերը կատարված հայ մտավորականության ձերբակալությունների մասին, նշում, որ առանց հարցաքննության ու դատի Փոքր Ասիա աքսորվեցին շուրջ 600 այնքան ընկնող հայեր՝ երեսփոխաններ, ուսուցիչներ, գրողներ, բժիշկներ, օրենսգետներ, խմբագիրներ, քահանաներ: Նրանցից միայն 8 հոգի վերադարձան, մնացածներն անհայտացան: Այսպիսով, բոլոր նրանք, ովքեր ընդունակ էին Հայկական հարցը պաշտպանելու, հարմար ձևով հեռացվեցին ասպարեզից[2]:

Այնուհետև, ինչպես գրում է հեղինակը, 1915 թվականի հունիս ամսին **սկսվեցին սարսափները, որոնց հավասարը հայտնի չէ պատմությանը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Կիլիկիայի, Անատոլիայի, Միջագետքի բոլոր գյուղերից ու քաղաքներից հայ քրիստոնյաներին քշեցին դեպի մահվան ճամփան: «Գործը կատարվեց սիստեմատիկ կերպով, շրջան շրջանի ետևից մաքրվում էր, անկախ այն բանից, թե այդ բնակչությունը պատերազմական բեմերին մոտիկ էր, թե դրանցից հարյուրավոր կիլոմետրեր հեռու: Պետք էր մաքուր ավլել բոլոր հայերին»[3]: Նա այն միտքն է հայտնում, որ տեղահանումներն անսահմանորեն ավելի վատ էին ու դաժան, որովհետև վայրկենական մահվան փոխարեն նրանք իրենց գոհերին ստիպում էին ենթարկվել ամեն տեսակի ոչ մարդկային տառապանքների: Այս վատոգի և բարբարոսական տեղահանման պլանը իշխանության դեմքը փրկելու համար էր, անշուշտ, երբ առաջադրվում էր իբրև «ռազմական անհրաժեշտ միջոցառում»: Այդ

[1] Նշվ. աշխ., էջ 150:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 151:

շարանները օրավուր փոքրանում ու փոքրանում էին, այնքան, որքան քաղցը, ծարավը, հիվանդությունը, սպանդը լրիվ կատարում էին իրենց գործը: Հաճախ տիեզերների կամ քրդերի խմբերը խոյանում էին այս շարանների վրա, կողոպտում, տանջում, սպանում ու բռնաբարում էին:

Նահանգը տարօրինակ է համարում, որ Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի և Հալեպի հայերին «մոտավորապես» խնայեցին շնորհիվ այն բանի, որ այս քաղաքներում շատ եվրոպացիներ կային, որոնք կտեսնեին, թե ինչ է տեղի ունենում: Իսկ Զմյուռնիայի հայերի տեղահանումները, նրա կարծիքով, կասեցրին գերմանական սպաները:

Նա նշում է, որ մի քանի տեղերում՝ Բիթլիս, Մուշ, Մալաթիա, Ուրֆա, Տիգրանակերտ և այլն, վալիները ավելորդ համարեցին տեղահանության մեթոդը և հայերին կոտորեցին առանց հետագա նեղությունների:

Նահանգը գրում է, որ թուրքական բանակի հայ զինվորները նույնպես, որոնք **այնպես քաջաբար կռվել էին, որ նույնիսկ Էնվեր փաշան հրապարակավ չխնայեց իր փաղաքշական խոսքերը նրանց քաջության, հավատարմության ու կարգապահության մասին** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), հետագայում զինաթափվեցին, թիկունքում դրվեցին տաժանակիր աշխատանքի և վերջում գնդակահարվեցին իրենց ընկերների կողմից՝ իրենց սեփական սպաների հրամանով[1]:

Նահանգը կարծեք հասու չէ Գերմանիայի խաղացած քաղաքականի դերին, այլապես չէր գրի, թե գերմանական կառավարության ջանքերը՝ գազանություններն դադարեցնելու կապակցությամբ, ոչ մի արդյունք չտվեցին:

Նահանգի տվյալներով, որոնք հիմնականում վերցված են գերմանական դեսպանների և հյուպատոսների տեղեկագրերից և որոնք նրա կարծիքով իրենց դաշնակցի չարագործության լավագույն մերկացումներն են, 1916 թ. ապրիլին 14 000 տեղահանվածների կոտորեցին Ռաս-ուլ-Այն ճամբարում: Եփրատի ափին, Մեսքենեում, Հալեպից արևելք, մի մեծ համակենտրոնացման ճամբարում թաղվել է 35 000 մարդ: 1915-ի ընթացքում Դեյր էզ-Զոր (Եփրատի ափին) են ուղարկվել 60 000 տեղահանվածներ, որոնց մեծ մասն անհետացել է, իսկ 1916-ի հուլիսին այստեղ է բերվել 20 000 մարդ, որոնցից 8 շաբաթ անց մնացին միայն մի քանի արհեստավորներ: 1916-ի ապրիլին Մոսուլ ուղարկվեցին 19 000

[1] Նշվ. աշխ., էջ 154—155

հայեր և 300 կմ անապատային ճանապարհը հաղթահարեցին ընդամենը 2500-ը:

Նանսենը առաջ է քաշում այն հարցը, թե ինչո՞ւ հայերը չկարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ և այդ կապակցությամբ հայտնում է հետևյալ ուշագրավ միտքը. «Հայերի թշնամիները հավակնում են այս բոլորի վրա նայել որպես այլասերված անզորության ապացույց, երբ նկատի են ունենում, որ այդպիսի մեծ թվով մարդիկ առանց դիմադրության թույլ են տալիս, որ իրենց կոտորեն կամ քշեն հեռուներ՝ դեպի ստույգ մահ: Սակայն հենց այս փաստը անմիջականորեն հակասում է թուրքերի օգտագործած ոչ ճիշտ ամբաստանությանը, թե իրենց զոհերը եղել են վտանգավոր ապստամբներ: Բացի այդ, մարդիկ պիտի հիշեն, որ կարող տղամարդկանց մեծ մասին տարել էին բանակ՝ պատերազմական ծառայության, և ամբողջ հայ ազգաբնակչությանը սիստեմատիկ կերպով զինաթափ էին արել, ուստի նրանց համար այնքան էլ հեշտ չէր դիմադրություն ցույց տալ լավ զինված ժանդարմներին, զինվորներին ու կամավորներին: Այսուհանդերձ, որոշ դեպքերում, երբ առիթ է եղել, հայերը քաջաբար պաշտպանել են իրենց և ունեցել որոշ հաջողություններ, օրինակ՝ Վանում և Կիլիկիայում, Սուեդիայի մոտակայքի լեռներում, որտեղ հայերից մի քանիսը զենք ունեին, և այն էլ՝ կայծքարի փականակով հին հրացաններ:

Ուրֆայում հայերը ոչնչացան հերոսական, բայց անհուսալի պայքարից հետո: Մի ժողովուրդ, որը կարող էր հանուն արդար դատի (որին նրանք հավատում էին) կռվել այնպիսի հախուռն արիությամբ, ինչպես կռվեցին հազարավոր հայ կամավորներ կովկասյան և սիրիական ճակատներում, կարող է ապահով կերպով մերժել վախկոտության մասին բոլոր տեսակի ամբաստանությունները»[1]: Մեր կարծիքով, սակայն, մեծ նորվեգացու առաջ քաշած կռվանները չդիմադրելու մասին, լիովին չեն փարատում տարակուսանքները: Հիրավի, ինչո՞ւ հայերը ավելի լուրջ ու կազմակերպված դիմադրություն ցույց չտվեցին, ինչո՞ւ թույլ տվեցին, որ իրենց հետ վարվեն այնպես, ինչպես կամեցան: Կարծում ենք, որ դրա իրական պատճառները ավելի խորն են թաղված և կարոտ են հետագա հատուկ ուսումնասիրության:

Խոսելով այն մասին, թե ինչ զայրույթի փոթորիկ բարձրացավ աշխարհում ընդդեմ թուրք բարբարոսների, հեղինակը գրում է, որ իբրև

1 Նշվ. աշխ., էջ 158—159:

հանդարտեցնող միջոց եղան հանդիսավոր խոստումներ, որ հայերը կստանան լրիվ փոխհատուցում անկախության ու ազատության ձևով, պայմանով, որ նրանք միանան Անտանտին և իրենց կարող տղամարդկանց ուղարկեն կռվելու: Աշխարհի բոլոր մասերից սկսեց հայ կամավորների անընդհատ հոսանք: Հայկական լեգեոններ կազմակերպվեցին Սիրիայի անգլո-ֆրանսիական բանակում: Կովկասում, ռուսական ճակատում հայ երիտասարդները կատաղի եռանդով հավաքվեցին ռուսական դրոշի տակ: Ի հավելումն ռուսական կանոնավոր բանակում եղած 150 000 հայերի, կազմվեցին հայ կամավորների վաշտեր, որոնք իրենց սեփական ղեկավարների, հատկապես հերոսական Անդրանիկի հրամանատարությամբ փառավոր մարտեր մղեցին թուրքերի դեմ: Ավելի քան 200 000 հայ զինվորներ զոհվեցին հանուն դաշնակիցների գործի:

Իր խոսքը հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը ավարտում է թևավոր դարձած հետևյալ նախադասություններով. «Եվ վերջապես դա սոսկ մի կոտորված, բայց տաղանդավոր փոքրիկ ազգ էր, որը չուներ նավթաբեր տարածություններ կամ ոսկու հանքեր:

Վա՜յ հայերին, որ երբևէ քաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Ավելի լավ կլիներ, եթե Հայաստան աշխարհը երբեք արտահանված չլիներ եվրոպական որևէ դիվանագետի կողմից:

Բայց հայ ժողովուրդը երբեք չի լքել իր հուրը: Նրանք քաջաբար շարունակել են աշխատել ու սպասել... սպասել տարեցտարի:

Նրանք դեռ սպասում են»[1]:

***

Հայ ժողովրդի ազատագրի երախտավորների շարքում ուրույն տեղ ունի յեհ ճշանավոր արևելագետ, լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ Բոգդան (Ալեքսանդր) Անտոնովիչ Գեմբարսկին (1905—1978): Ծնվել է Պետերբուրգում, 1924-ին մշտական բնակություն է հաստատել Վարշավայում: Երկրորդ համաշխարհայինի տարիներին զինվորագրվել է հակաֆաշիստների բանակին, եղել է 1944-ի Վարշավայի ապստամբության կազմակերպիչներից մեկը, ընկել գերմանական համակենտրոնացման ճամբար: 1956-ին այցելել է Հայաստան:

1961-ից մինչև կյանքի վերջը զբաղվել է Հայկական հարցով, այն

1 Նշվ. աշխ., էջ 176:

քարձրացրել միջազգային ասպարեզ: Նամակագրական կապեր է ունեցել Մ. Սարյանի, Պ. Սևակի, Հ. Շիրազի, Ն. Զարյանի, Գ. Էմինի և այլոց հետ:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ արժանի տեղ պետք է գրավի Բ. Գեմբարսկու «Նամակներ աշխարհին» գիրքը, որը կազմել, խմբագրել, ծանոթագրել և համապատասխան վերջաբանով հրատարակության է ներկայացրել հեղինակի հայ բարեկամ Համլետ Կարճիկյանը[1]:

Գիրքն ամփոփում է լեհ հրապարակախոսի 1960—70-ական թվականներին հրապարակած հակաթուրքական հոդվածները, որոնցում դատապարտվում է 1915-ի հայոց ցեղասպանությունը և բարոյա-իրավաբանական փաստարկումների հիման վրա պահանջ է առաջադրվում վերականգնել հայ ժողովրդի իրավունքները նրա բռնազավթված հայենիքի գոնե մեկ հինգերորդ մասի վրա:

Գրքի առաջաբանի յուրօրինակ դեր է կատարում Մարտիրոս Սարյանի նամակը Բ. Գեմբարսկուն, որտեղ աշխարհահռչակ նկարիչը երախտագիտության խոսքեր է ուղղում «Մեծ Մարդուն, արդարամիտ լեհին», որն արժանի է հայ ժողովրդի պատմության մեջ մնալու մեծ փառքին:

Գիրքն սկսվում է 1961 թ. նոյեմբերի 20-ին Վարշավայի «Կյորուեկի» («Ուղղություններ») շաբաթաթերթում Բ. Գեմբարսկու տպագրած «Նամակ իմ հին թուրք ծանոթին» այժմ արդեն հանրահռչակ հոդվածով: Իսկ այն օրերին հոդվածի հայերեն և ռուսերեն տարբերակներ երևանաբնակ լեհուհի Մարիա Գրոխոլսկայի թարգմանությամբ մեզանում ձեռքից ձեռք էին անցնում մեքենագիր, շատ վատ ընթեռնելի վիճակում, իսկ տարածողներն էլ հետապնդվում էին:

Դիմելով իր «հին թուրք ծանոթին», որն, անշուշտ, հրապարակախոսական հնարք է, Գեմբարսկին հատնում է ի լուր աշխարհի, որ հրեաների դահիճ գերմանացի Այխմանը եղել է թուրքերի ուշիմ աշակերտը միայն և այն, ինչ նա արել է 1942—44 թվականներին հրեաների նկատմամբ, կրկնողությունն էր ավելի մեծ չափով նույն բանի, ինչ որ թուրքերը գործել են հայերի նկատմամբ դեռևս 1915-ին, իսկ դա եղել է մարդկության պատմության մեջ առաջին ծրագրված, գիտական հիմքի վրա հենված ամբողջ ժողովրդի ոչնչացում: «1915 թվականի կոտորածի

[1] Բոգդան Գեմբարսկի, Նամակներ աշխարհին, Երևան, 1990:

ժամանակ,— գրում է Գեմբարսկին,— որը շարունակվեց հաջորդ հինգ տարիների ընթացքում, ...զոհվեցին ընդհանուր թվով երեք միլիոն հայեր, որը կազմում է ամբողջ ժողովրդի 60 տոկոսը... Վերադառնալով ներկային և հաշվի առնելով բանականական վիճակը 1911 թվականին, ինչպես և նրանց բնական աճի տոկոսը վերջին 50 տարիների ընթացքում, ընթացիկ 1961 թվականին նրանք պետք է հասնեին 10 միլիոնի, իսկ իրականում հազիվ չորս միլիոն են»[1]:

Հայտարարելով, որ հայերի դեմ արշավանքի հենց առաջին տարում՝ 1915-ին, զոհվեց մոտ երկու միլիոն հայ, Գեմբարսկին Թալեաթին հավասարում է Հիտլերի հանճարեղ նախորդը, իսկ երկրորդ հանցագործ հավասարում է Այխմանի նախորդ Էնվեր փաշային, որոնք երկուսն էլ արժանի, բայց, ցավոք, չափազանց մեղմ պատիժ ստացան՝ սպանվեցին հայ վրիժառուների ձեռքով:

Լեհ հրապարակախոսը նշավակման արժանի երրորդ չարդարար է հոչակում թուրք մտավորականությանը, որը ինքնակամ օժանդակեց ոճրագործների կազմակերպած ազգայնամոլ հալածանքին: Մարտավարական հնարք պետք է համարել, անշուշտ, ազնվագույն լեհի այն պնդումը, թե այդ նույն ժամանակ թուրք հասարակ ժողովուրդը, մուսուլման հոգևորականությունը և ազնվական տոհմերը կամ բոլորովին չեն մասնակցել կոտորածին, կամ նույնիսկ փորձեր էին անում հայերին փրկելու[2]:

1915 թվականի հայերի կոտորածը հեղինակի կարծիքով կոտորածի բնույթ չունեին, այլ նրանք ներկայացնում էին «ոստիկանական կարգադրությունների» հրամաններ, որոնց արդյունքները հասցրին միլիոնների անխուսափելի սոսկալի մահվան: Պատկերելով իրականացվող ոճրագործության սխեման, նա ցույց է տալիս, որ նախ և առաջ իշխանությունների կողմից հրամայական էր արձակվում, որի համաձայն բոլոր հայերը պարտավոր էին թողնել տվյալ վայրը սովորաբար երկու ժամվա ընթացքում նոր բնակավայր հասնելու համար: Թույլատրվում էր հետը վերցնել միայն ձեռքի ուղեբեռ, խիստ արգելվում էր օգտվել որևէ տրանսպորտից: Հետիոտն երթը ամառվա կիզիչ արևի տակ ուղեկցում էին զինված ոստիկանները: Եթե որևէ մտնալման փորձում էր ջուր տալ հայերին, սպանվում էր տեղն ու տեղը: Ուժասպառ ընկնողները նույնպես տեղում սպանվում էին: Երթի հետևից քարշ էին գալիս չեչենների

[1] Նշվ. աշխ., էջ 7:
[2] Նշվ. աշխ., էջ 8:

ու թափառաշրջիկների հրոսակախմբերը, որոնք ոստիկանների լուռ համաձայնությամբ առևանգում էին կանանց, աղջիկներին, բռնաբարում ու ճահճատակում նրանց: Եվ դա կատարվում էր գաղտնի հրահանգի համաձայն, որի իմաստը աքսորյալներին ճանապարհին մեռցնելն էր: Նրանցից կազմում էին նաև «աշխատանքային բաժանմունքներ», աշխատեցնում ռազմական ճանապարհների շինարարության վրա՝ յուրաքանչյուր բաժանմունքի տրվում էր երկու կիլոմետր, հետո բոլորին ոչնչացնում էին:

Նամակագիրն այնուհետև գրում է, որ կանանց, երեխաներին ու ծերերին քշում էին ավելի հեռու, մինչև բնաջնջման ճամբարները, որոնք տեղադրված էին Միջագետքի անապատում: Օրական մահացությունը անցնում էր տասը հազարից:

Տեղահանումն ընդգրկեց այդ տարաբախտ ժողովրդին պատկանող բոլոր անձանց: Այն հայը, որը հանդիպում էր ճամբարից կամ աշխատանքային բաժանմունքից դուրս, սպանվում էր տեղն ու տեղը: Կասկածի դեպքում ստուգում էին թլպատվածությունը:

Լեհ հայասերը գրում է նաև հայկական գնդերի զինվորների մասին, որոնք այնպես դյուցազնաբար կռվում էին Էնվեր փաշայի կյանքի համար, սակայն հենց նրա հրամանով բաժանվեցին ընդհանուր բանվորական դրուժինաների, և հանձնարարությունը կատարելուց հետո ամբողջ դրուժինան ոչնչացվեց ճահճատակող վաշտի կողմից: Այս մասին Բ. Գեմբարսկին գրել է նաև փաստավավերագրական վիպակ՝ «Մահվան դատապարտվածներ» վերնագրով (Երևան, 1991):

Արևմտյան Հայաստանի տարածքի յուրացումը թուրքերի կողմից դիտելով իբրև հատուկ մի պարգև ժողովրդասպանության համար, նամակի հեղինակը հռետորական հարց է տալիս՝ ինչո՞ւ հայերին ճահճատակելը պարգևի պիտի արժանանա, երբ լեհերին ու հրեաներին նույն ձևով ճահճատակելը պաշտոնապես ճանաչված է իբրև մարդկության դեմ գործած ոճիր: Թե՞ այդ դժբախտ հայերը ինչ-որ բանով վատ են լեհերից ու հրեաներից[1]:

Նամակում խոսքն ուղղելով թուրք ժողովրդի «ճշմարիտ խիղճը» հանդիսացող գրականագետներին, արտիստներին, ուսուցիչներին, հասմաշխարհային հատկով վայելող թուրք գիտնականներին, երիտասարդության դաստիարակներին ու բարեկամներին, լեհ մարդասերը կոչ է անում նրանց թուրք հասարակության առջև դառապաշտպան դառնալ մինչև օրս էլ աշխարհով մեկ ցրված հայերի համար, հենց այն պատճառով, որ նրանց հայրերն են խլել հայերի ոտքի տակից հայրենի հողը՝ 3 միլիոն կյանքով հանդերձ:

Նամակի վերջում Բ. Գեմբարսկին ափսոսանք է հայտնում, որ հայերի ցեղասպանության հարցը Թուրքիայում ընդմիշտ քողարկված է ամոթալի լռությամբ, եթե ոչ բացարձակ արհամարհանքով:

Բ. Գեմբարսկու հաջորդ բաց նամակը հասցեագրված է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար պարոն Ու Տանին: Գլխավոր քարտուղարի ուշադրությունը հրավիրելով 1915-ի հայկական ցեղասպանության փաստի վրա, որի հետևանքով ամբողջ Արևմտյան Հայաստանը դարձել է աշխարհի ամենակուլտուրական ժողովուրդներից մեկի գերեզմանոցը, իսկ հրաշքով փրկվածների ժառանգները պանդուխտ են օտար երկրներում: Բ. Գեմբարսկին առաջ է քաշում «թուրք պետության և ժողովրդի, որպես ամբողջության, պատասխանատվության հարցը 50 տարի առաջ կատարված եղեռնի համար: Նա գտնում է, որ եթե առհասարակ կա հատուցում 3 միլիոն կոտորվածների դիմաց, ապա դրա միակ ձևը կարող է լինել իսկական ժառանգներին, այսինքն՝ աշխարհով մեկ ցրված հայերին իրենց նախնիների հողերի գեթ մի մասը վերադարձնելը[1]: Այդ կապակցությամբ Բ. Գեմբարսկին առաջարկում է կոնկրետ նախագիծ, որի շուրջ կարելի է գալ փոխադարձ համաձայնության:

Հայ Դատի լեհ պաշտպանը համամտման բովանդակությամբ բաց նամակ է ուղղել նաև Հնդկաստանի պրեզիդենտ պարոն Ռադհակրիշնանին: Նամակում ուշագրավ փաստարկ է բերվում երիտթուրքերի կուսակցության քաղբյուրոյի 1914 թ. հոկտեմբերի 5-ի գաղտնի խորհրդակցության տեղեկագրությունից, որտեղ նյութվում էր արևմտահայության բնաջնջման պլանը: Քաղբյուրոյի անդամ Ջավիդը միակն էր, որ առաջարկեց հայերին արտաքսել, բայց չոչնչացնել: «Ես լավ գիտեմ հայերին,— ասել է նա:— Կատարելով նրանց ցանկությունների թեկուզ մեկ հինգերորդը, մենք կարժանանանք նրանց շնորհակալությանը»[2]:

Ըստ այդմ էլ նամակագիրը մատնացույց է անում, որ ստեղծվելիք արևմտահայկական պետության իր առաջարկած տարածքը կազմում է

[1] Նշվ. աշխ., էջ 16:

[1] Նշվ. աշխ., էջ 26:
[2] Նշվ. աշխ., էջ 40:

պատմական Հայաստանի մեկ հինգերորդը: Անխոնջ գործիչը երազական հույս էր փայփայում, որ հայ ժողովրդի հանդեպ բարի կամքով տրամադրված և Երևան այցելած պրեզիդենտը թուրքական դեսպանի միջոցով կարող է այդ մասին խոսակցություն սկսել Թուրքիայի կառավարության հետ:

Բ. Գեմբարսկու հաջորդ, իր բառերով ամենաճշգրտական նամակը ուղղված է հայ ընթերցողներին: Նա նշում է, որ ինքը հատկապես կուզենար կարծիքներ փոխանակել հայկական փտարանդիության քաղաքական շրջանների հեղինակավոր մարդկանց հետ:

Բացատրելով իր նամակների երևան գալու շարժառիթները, հեղինակն ընդգծում է, որ Հայկական հարցն այսօր բարոյական կարգի պրոբլեմ է, իսկ դա որոշակի տեսակարար կշիռ ունի, քանի որ բարոյական սկզբունքներն այժմ պաշտոնական փաստարկներ են միջազգային քաղաքականության ասպարեզում: Հորդորելով հայերին՝ օգտվել գաղութարարության ընձեռած վերջ տալու վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձևից, որը հայերի համար ուղղակի պալքարի իրավեր է, նամակագիրը ճշմարիտ ուղի է ցույց տալիս: «Եթե դուք ինքներդ թերագնահատում եք ձեր նյութական և բարոյական ուժերը,— գրում է նա,— ապա փոխարենը դրանք լրիվ գնահատում են ձեր թշնամիները: Մի՞թե դուք կարծում եք, որ թուրքական կառավարությունը հետևի ոտնաթաթերին կկանգներ Խորհրդային Միության առջև, եթե հայկական կոտորածի հոբելյանական տարում չվախենար հենց ձեզնից»[1]:

Նամակով հեղինակը ցանկանում է պարզել՝ արդյո՞ք հայերը հավատում են մեր սերնդի օրոք մեռյալ Արևմտյան Հայաստանի հարության առնելու հնարավորությանը և մտադի՞ր են արդյոք բարենպաստ պայմանների դեպքում միջազգային համաժողովում առաջադրել անկախության կոնկրետ պահանջներ առնվազն այդ տարածքի մի մասի համար:

Բ. Գեմբարսկու հաջորդ նամակը՝ ուղղված Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին, «Երջանի հայկական քառակուսին ունի իր լուծումը» վերտառությամբ, հեղինակի առաջադրած նախագիծն է Արևմտյան Հայաստանի խաղաղ ազատագրման վերաբերյալ:

«Սիրիական անապատ» հավելվածում, որը տպագրվել է դեռևս 1965-ին, Կրակովում, Բ. Գեմբարսկին վերաշարադրում է հայոց ցեղասպանության իրականացման ողջ սարսափազդու ընթացքը՝ որոշ նոր մեկնաբանություններով ու եզրահանգումներով հանդերձ:

[1] Նշվ. աշխ., էջ 50:

Ժողովածուն ամփոփելով հայ ժողովրդի մեծ բարեկամի կենսագրականով, Համլետ Կարճիկյանը Բոգդան Գեմբարսկու անունը անառարկելիորեն դնում է աշխարհի մեծ հումանիստների՝ Բայրոնի, Բարբյուսի, Նանսենի, Վերֆելի, Վեսելովսկու, Բրյուսովի, Գորկու, Սախարովի անունների կողքին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ վերոհիշյալ օտար հեղինակների հայերեն թարգմանված ու հրատարակված աշխատություններում կուտակված է զգալի քանակությամբ փաստավավերագրական նյութ, որը լույս է սփռում Եղեռնի այս կամ այն դրվագի վրա:

Այդ աշխատությունները մի որոշակի չափով պարունակում են նաև օգտակար տեսական ընդհանրացումներ ու եզրահանգումներ, որոնք, անշուշտ, նկատի կարող են առնվել հետագա ուսումնասիրություններում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՑՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՍՓՅՈՒՌԱՀԱՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մարդկության պատմության մեջ դարի ամենամեծ ոճրագործությունը՝ հայոց Եղեռնը, կաթվածահար արեց հայ ժողովրդին: Ժամանակ էր պետք ուշքի գալու և խորհելու կատարվածի մասին: Ուստի պատահական չէ, որ Եղեռնին նվիրված պատմագիտական առավել ամփոփ ուսումնասիրությունները սփյուռքահայ իրականության մեջ ի հայտ եկան երկու-երեք տարի անց միայն, որոնցում առաջին փորձերն էին արվում բացահայտել սպանդի իրական պատճառները, որոշել նրա շրջանակները, պարզաբանել կորուստների մոտավոր չափերը, ի հայտ բերել իսկական հանցավորներին, տալ հայկական հերոսամարտի նկարագիրը, կատարել տեսական ընդհանրացումներ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հաջորդ շուրջ հինգ տասնամյակները լռության ժամանակաշրջան էին հայ պատմագրության մեջ: Այդ ժամանակահատվածում արևմտահայության ողբերգության մասին հնարավոր էր բարձրաձայն խոսել ու գրել միայն սփյուռքում: Սակայն այստեղ հրատարակված պատմագիտական աշխատությունները մինչև 1965 թվականը գլխավորապես կրում էին փաստագրական-նկարագրական բնույթ:

Նկատի առնելով որակական այն փոփոխությունները, որպիսիք կատարվեցին Եղեռնի պատմագրության մեջ 50-ամյա տարելիցի նշումից հետո, երբ առավել մեծ տեղ սկսեցին գրավել գիտատեսական վերլուծությունները ու ընդհանրացումները, նպատակահարմար ենք համարել ըստ դրա էլ պայմանականորեն սփյուռքահայ պատմագրությունը ժամանակագրորեն բաժանել երկու հատվածի և բաժանման սահմանագիծ դիտել 1965 թվականը:

1. 1915—1965 թվականների հրատարակությունները

Եղեռնի զոհերի հիշատակը պահպանելու գործում անգերագնահատելի է «Ամենուն տարեցույցի» մեղվաջան հրատարակիչ **Թեոդիկի (Թեոդորոս Լապճինյան)** ծառայությունը: Ինքն էլ աքսորված լինելով Թուրքիայի խորքերը, պատերազմից հետո նա վերադարձավ Պոլիս, որտեղ, վերսկսելով «Ամենուն տարեցույցի» հրատարակման շնորհակալ գործը, զուգահեռաբար 1919-ին Եղեռնի 4-րդ տարելիցի առթիվ լույս ընծայեց **«Հուշարձան ապրիլ տասնմեկի»** գիրքը[1]: Բազում հոգեպաշտ պրպտումներ» պահանջող այս գիրքը պարունակում է Մեծ եղեռնի զոհ դարձած 761 հայ մտավորականների համառոտված կենսագրականներ, տրված են դրանց ճնշող մեծամասնության լուսանկարները: Հանրագիտարանի նշանակություն ունեցող այս մեծարժեք գիրքը, որը, անվարան կարելի է ասել, առաջին ուղեցույցը դարձավ Եղեռնի պատմության հետագա ուսումնասիրողների համար, լրացումներով ու ճշգրտումներով վերահրատարակվեց 1939-ին, Ալեքսանդրիայում:

Միևնույն ժամանակ ջանքեր գործադրվեցին Եղեռնի վերաբերյալ պատմական հավաստի փաստաթղթերի հավաքման ու հրատարակման բարդ ու դժվարին խնդրի իրականացման ուղղությամբ: Այդ ասպարեզում շնորհակալ աշխատանք կատարեց **Հայկ Ահեմեան,** որը սեփական պրպտումներով լրացրեց, ծանոթագրեց ու հրատարակեց **Մաղաքիա Օրմանյանի** կազմած **«Թուրքահայ աղետը»** խորագրով տեղեկագիրը[2]:

Տեղեկագրի հրատարակիչը նպատակ է դրել մաս առ մաս լույս ընծայել թուրքահայ նորագույն աղետի (1915—1918) մասին իր ձեռք բերած պատմական փաստաթղթերը, և դրանցից առաջինն է հանգուցյալ Մ. Օրմանյանի բավական մանրակրկիտ տեղեկագիրը, որի վրա ինքն ավելացրել է մի շարք կենսագրական համառոտ ծանոթագրություններ հիշատակված պատմական անձնավորությունների մասին, իբրև հավելված Արևմտյան Հայաստանի կրոնական, հասարակական, հեղափոխական և գրական սպանված կամ անհետացած մի շարք գործիչների անուններ, որոնց մասին տեղեկագրում հիշատակություն չկա:

[1] Թեոդիկ, Հուշարձան ապրիլ տասնմեկի, Կ. Պոլիս, 1919:

[2] Հայկ Ահեմեան, Թուրքահայ աղետը, պատմական փաստաթղթեր, Ա. Տեղեկագիր Տեր Մ. Օրմանյանի, Նախկին պատրիարք Թուրքիո Հայոց, Նոր ծանոթագրություններով և հավելվածներով հրատարակեց Հայկ Ահեմեան, Ս. Էջմիածին, 1919:

Ինչպես ինքը՝ Հայկ Ածեմյանն է նշում, չնայած տեղեկագիրը լոկ մանրամասն անվանացուցակի տպավորություն է թողնում, բայց դրա ճշտությամբ կազմելն էլ մեծ ու դժվարին աշխատանք է, պատասխանատու գործ: Անշուշտ, իրավացի է հրատարակիչը, գրելով, որ եթե մեր դատի և աղետի վերաբերմամբ նման տեղեկագրեր շատ լինեին ու դրանք բոլորն էլ լույս ընծայվեին, ապա դրանք ապագա պատմագրի համար անգնահատելի աղբյուրներ կլինեին:

Տեղեկագիրը, որը վիճակագրական ու կենսագրական տվյալներ է պարունակում անհայտացած հոգևորականների, Կ. Պոլսից 250 աքսորվածների, Վասպուրականի նահատակների, Էրզրումից, Բիթլիսից, Տիգրանակերտից, Խարբերդից, Սեբաստիայից, Մարզվանից տարագրվածների ու հոշոտվածների մասին, հրատարակչի վկայությամբ հավաքված են շատ վստահելի ու պաշտոնական աղբյուրներից:

Հայկ Ածեմյանը Էջմիածնի դիվանատան հին թղթերի միջից հայտնաբերել է Վասպուրականից գաղթած ու այստեղ սովին ու համաճարակներին զոհ գնացած 8126 հոգու ցուցակ, որոնք թաղված են վանքի անտառի հարավակողմում գտնվող գերեզմանափոսում:

Թարմ տպավորությունների տակ է գրված աքսորի տառապալի ուղիներով անցած **Սեպուհ Ակնունու** գիրքը[1], որը փաստավավերագրական հարուստ նյութ է մատակարարում հետագա ուսումնասիրողին: Մեծամասնալ այս գրքում հնարավոր մանրամասներով ու ժամանակագրական կարգով ըստ գավառների տրված է ոչ միայն հայերի տարագրության ու ջարդի պատմության ուրվագիծը, այլև ներկայացված են հայոց դյուցազնամարտի դրվագները: Հեղինակը ձեռքի տակ է ունեցել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից և այլ աղբյուրներից վերցված վավերագրեր ու փաստաթղթեր, որոնցից կատարված են ընդարձակ հղումներ:

Հեղինակը հետաքրքիր վավերական նյութ է շրջանառության մեջ դնում իթթիհատի կոմիտեի հույժ գաղտնի նիստի մասին, որտեղ վերջնական որոշում ընդունվեց հայերի ցեղասպանության մասին: Այդ նիստին թուրքերը թույլ չեն տվել մասնակցել նույն մարմնի ազդեցիկ անդամ Պետրոս էֆենդի Հալաճյանին, որը ժողովի որոշման մասին կարող էր տեղեկացնել հայերին:

Հայոց եղեռնի պատմության ստեղծման առաջին լուրջ փորձերից

[1] Ս. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1919:

մեկը պետք է համարել, անշուշտ, մարտիրոսագրության բոլոր ուղիներով անցած ու արհավիրքը սեփական աչքերով տեսած Գրիգորիս վարդապետ **Պալաքյանի** երկհատոր աշխատությունը, որը հուշագրություն լինելուց ավելի պատմաքննական վերլուծություն է և հարուստ ու մեծարժեք նյութ է մատակարարում հետագա ուսումնասիրողին[1]:

Հեղինակը, Եղեռնի իրական պատճառների մեջ խորամուխ լինելու նպատակադրմամբ, վերլուծում է պատերազմի սկզբին ստեղծված իրադրությունը, գտնում, որ եթե այդ պատասխանատու պահին ամեն ազգ հետամուտ էր ըստ կարելույն քողարկելու իր մտքերն ու իղձերը, ահա այդ պատմական օրերին հայերն էին միայն, որ ազգովին կուրորեն հետևում էին գահավեժ բախտախնդրության մեջ ու այդպիսով գրգռում դարավոր չարանենգ թուրք թշնամուն, որն առանց այն էլ վաղուց արդեն պատրվակ էր փնտրում համատարած արյան ծովի մեջ խեղդելու ողջ արևմտահայությանը: Գր. Պալաքյանը սրտի անհուն ցավով է արձանագրում, որ ճակատագրական այդ օրերին ազգային որոշակի քաղաքականություն գոյություն չուներ, և համազգային ընդհանուր կարգախոսի չգոյության պատճառով ամեն հայ և ամեն կուսակցություն անպատասխանատու կերպով գրում, խոսում և գործում էր իր ըմբռնած ու նախասիրած եղանակով: Մինչդեռ իթթիհատական հեղգամիտ կառավարությունը ոչ միայն որևէ արգելք չէր հարուցում, այլ, ընդհակառակը, էլ ավելի դյուրություններ էր ընձեռում, որպեսզի հայությունն իր բոլոր խավերով ու շերտավորումներով հանդիսավորապես ու բացահայտորեն ցնծա Ռուսաստանի ու նրա դաշնակիցների հաղթանակների առիթով և ժամանակ չունենա թափանցելու իր սարքած արյունոտ ծրագրերի մեջ: Խորին ափսոսանքով է նա փաստում այն իրողությունը, որ մայրաքաղաքի և գավառի հայությունը միմյանցից բացարձակապես լուր չունեին, և վերջինս չգիտեր, թե որն է ազգային ընդհանուր կարգախոսը և թե ինչպես պետք է գործել, ուստի նա էլ իր ազգային դարավոր երազների ու հույսերի իրականացման պատմական ժամը հասած էր համարում ու այդ պատճառով ինքը ևս աննախընթաց խանդավառության մեջ էր: Եվ վերջապես Գ. Պալաքյանը արձանագրում է այն տխուր իրողությունը, որ պատմական այդ ահավոր օրերին հայ քաղաքական կուսակցությունների ղեկավարների կրավորական դիրքի պատճառով ազգի ճակատագիրը փաստորեն վարող Պոլսո Ազ-

[1] Գրիգորիս ծ. վարդապետ Պալաքեան, Հայ Գողգոթան (դրվագներ հայ մարտիրոսագրութենեն, Ա հատոր, Վիեննա, 1922, Բ հատոր, Փարիզ, 1959:

գային պատրիարքարանը ևս շվարած վիճակի մեջ էր և բոլորովին անընդունակ էր կշռելու կացության ողջ ծանրությունը: Գրելով, որ դեռևս 1914-ի հուլիսին կայացած Կարինի համագումարում դաշնակցությունը որոշել էր Թուրքիայի՝ պատերազմին մասնակցելու դեպքում չեզոք մնալ, իսկ հետո մերժել էր իթթիհատի հրավերը՝ օգնելու նրանց, նա միաժամանակ ընդգծում է, որ «հայ քաղաքական կուսակցությանց ընթացքը հանդեպ թուրք կառավարության միշտ բարեացակամ եղավ և երբեք դավադրական (ընդգծումը հեղինակինն է— Մ. Կ.), ինչպես կճգնին ցույց տալ հայ արեան պատասխանատու մեծ եղեռնագործ իթթիհատական փախստականները, անշուշտ իրենց մեծ ոճրին չքմեղանքն ապահովելու հույսով»[1]:

Մեր կարծիքով, եղեռնի հիմնապատճառը միանգամայն ճիշտ է մեկնաբանում Գ. Պալաքյանը, գրելով, թե «Երիտասարդ թուրքերու ոճրածարավ այս ոհմակը՝ տարված համաթուրանական և համիսլամական ցնորամիտ գաղափարներէ, կերազեր արևը մայր մտնող օսմանյան կայսրութեան հեռուհետէ խորասուզվող սահմաններուն վրա, կանգնեցնել հսկա կայսրություն մը, կազմված օսմանյան երկիրներեն զատ Եգիպտոսէ, Կովկասեան իսլամներէ, պարսիկներէ, Աֆղանիստանէ, Պելուճիստանէ, տարածելով մտացածին այս իսլամական մեծ կայսրությունը մինչև Հնդկաստան...

Բայց որովհետև այս բոլոր ցեղերու մեջ հայերն էին միայն, որ Եվրոպայի մեջ իրենց ողբ ու կոծովը թուրքերու դեմ գրգռություն առաջ կբերեին և Եվրոպայի հանրային ձայնը կլարեին ընդդեմ ջարդարար թուրքին, ուստի թուրք իթթիհատական կառավարությունը ու քոմիտեն, կուզեին համաշխարհային պատերազմին ընծայած բացառիկ այս պատեհությունը օգտագործել և հայ ցեղը մեջտեղեն վերացնել»[2]:

Այնուհետև Գ. Պալաքյանը հինգ կետերով մեկնում է հայերի իսպառ բնաջնջման ծրագիրը, որը հետևյալն էր. 1. զորահավաքի պատրվակի տակ հավաքել 20—46 տարեկան տղամարդկանց, որպեսզի հայ ժողովուրդը զրկվեր անձնապաշտպանության հնարավորությունից, 2. ձերբակալել մայրաքաղաքի հանրաճանաչ մտավորական և ազգային բոլոր գլխավոր գործիչներին, 3. զինաթափել մնացած ամբողջ հայությանը, 4. նախքան ընդհանուր զինաթափությունը, անմիջապես զինաթափել անպարտելի Զեյթունը և քանդել դարավոր այդ արծվաբույնը, 5. ամենից առաջ զինաթափ անել և իսկույն տեղահան անել Վանի հայությանը:

Հեղինակը նոր, մինչ այդ գաղտնի մնացած փաստեր է բերում հերքելու համար թուրքերի կեղծիքը՝ հայերի ապստամբության մասին և ամենահամառ կասկածողներին իսկ տարհամոզելու, թե «Վանի 1915 ապրիլ 7-ի կարծեցյալ ապստամբութենեն չորս ամիս առաջ արդեն թուրք կառավարությունը վճռած էր հայ ժողովրդի վերջնական բնաջնջումը, տեղահանության նվազ անմեղ ձևին և տարագրության պիտակ անունին տակ»[1]:

Խոսելով 1915-ի ապրիլ 11 (24)-ին Կ.Պոլսի հայ մտավորականների ձերբակալության մասին, Գ. Պալաքյանը նողկանքով է արտահայտվում Պեշիկթաշի տխրահռչակ մուխթար (թաղապետ) Արթին Մկրտչյանի, որի ձեռքով էր կազմված սև ցուցակը, և Պատրիարքարանի պաշտոնյա, Թալեաթի ծպտյալ լրտես Գամեր Շիրինյանի մասին, որը թուրքերին իրազեկ էր պահում հայերի յուրաքանչյուր քայլին[2]:

Այսօր վավերագրական արժեք ունեն Այաշի բանտից և Չանկրիի զորանոցից աքսորված հայ մտավորականների ցուցակները, որոնք համառոտ տեղեկություններով կազմել է հեղինակը:

Առանձին գլուխ է հատկացված իթթիհատի կոմիտեի 1915 թ. գաղտնի նիստի որոշմանը՝ արևմտահայության բնաջնջման ծրագրի մասին, որը հետևյալն էր. 1. բացարձակորեն արգելվում էր հայերի տեղաշարժը երկրի ներսում, 2. ձերբակալել քաղաքների հայ մտավորականությանը, որպեսզի վերջինները չկարողանան ժողովրդին ապըստամբեցնել, 3. հայերին զինաթափել մինչև խոհանոցի մեծ դանակները և այդպիսով անհնար դարձնել ապստամբական որևէ հավանական շարժում, 4. ամբողջ Փոքր Ասիայի հայությանը տեղահան անել և Տեր-Զոր աքսորել ընտանյոք հանդերձ ու անխնա կոտորել օրորոցի մանուկից մինչև 90-ամյա ծերունին, 5. թույլատրել գեղեցիկ հայ հարսներին և կույսերին թուրք հարեմներ տանելը, 6. մերժել իսլամանալու որևէ առաջարկ, նկատի ունենալով, որ 1895—1896-ի դեպքերը ցույց տվին, թե հայերի հավատափոխությունը չի կարող անկեղծ լինել, 7. հայ ժողովրդի ազգային և անհատական շարժական ու անշարժ ամբողջ հարստությունը, տեղական բանկերում ավանդ տրված դրամը, ոսկյա և արծաթյա զարդերը գրավել հարկումիս, իբրև անտեր թողնը-

[1] Նշվ. աշխ., էջ 53:
[2] Նշվ. աշխ., էջ 57—58:

[1] Նշվ. աշխ., էջ 70—71:
[2] Նշվ. աշխ., էջ 52, 76:

ված գույք՝ հատուկ կազմված հանձնաժողովների միջոցով, 8. դեպի սպանդ տարվողների սև ցուցակները պիտի կազմեին գավառական ոստիկանական իշխանությունները և մի պատճենը ուղարկեին Պոլիս՝ ներքին գործոց նախարարություն, որպեսզի իթթիհատի կոմիտեն օր օրին տեղեկանար, թե որքան հայ սպանվեց և որքան դեռ մնաց:

Այս հրեշավոր ծրագիրը գործադրելու համար ընտրվեցին հետևյալ միջոցները. 1. Փոքր Ասիայի բոլոր քաղաքների բանտերում գտնվող մահապարտներին, թիապարտներին և բոլոր ոճրագործներին ներման արժանացնելով՝ նրանցից կազմված հրոսակային (չեթեական) խմբերով անխնա կողոպտել ու ջարդել հայերին, այդպիսով իբր ապահովելով օսմանյան բանակի թիկունքը, 2. կենտրոնի հայաջինջ հրամանները չգործադրող բոլոր կուսակալներին, կառավարիչներին և տեղակալներին անմիջապես պաշտոնանկ անելով, նրանց փոխարինել կամակատար, հոու անձերով, 3. իթթիհատի ընդհանուր ժողովի այս որոշումների գործադրության անթերի հսկողությունը հանձնել իթթիհատական կոմիտեի գավառական բոլոր մասնաճյուղերին[1]:

Այսպիսով, ամփոփում է հեղինակը, դաշնակից պետությունների դեմ հայտարարված ջիհադը՝ սուրբ պատերազմը, գործադրվեց միայն անզեն ու անպաշտպան հայ ժողովրդի դեմ՝ ամենավայրագ եղանակներով:

1930—50-ական թվականներին սփյուռքում Եղեռնի պատմության ուսումնասիրությունն ինչ-ինչ պատճառներով թուլանում է: Մեր կարծիքով, դրա պատճառը թերևս հանրապետական Թուրքիայում բարձրացած հայահալած քաղաքականության նոր ալիքն էր, որը այնտեղ մնացած հայության բեկորները չվտանգելու մտահոգություն էր առաջացնում: Նշանակություն կարող էր ունենալ նաև այն ընդհանուր դեպրեսիան, որ Եղեռնից հետո տիրում էր սփյուռքահայության ամենատարբեր շերտերում: Ինչևէ, այդ շրջանում Եղեռնի վերաբերյալ լույս են տեսնում հատուկենտ գրքեր միայն:

***

Սկզբնաղբյուրային արժեք ունի Վան-քաղաքամիջի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկի՝ Չինվորական մարմնի նախագահ Հայկակ Կոսոյանի «Վան-քաղաքամիջի ապրիլյան կռիվները» հուշագրությունը-ուսումնասիրությունը[1], որը գրվել է դեպքերի թարմ տպավորության տակ, հենց ինքնապաշտպանության օրերին և այդ առումով էլ առ այսօր պահպանել է գիտահանրաճանաչողական արժեքը:

Գիրքն սկսվում է առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից անմիջապես հետո 1914-ի հուլիսի 21-ին սուլթանական իրադեմ՝ զորաշարժի հայտարարությամբ, Վանի Պատերազմական ատյանի ստեղծմամբ և Չինվորական պիտոյից Հայթայթիչ մարմնի (թեքալիֆի հարպին) մարմնի կազմակերպմամբ: Հիշյալ մարմնի պարտականությունն էր բնակչությունից հավաքել մեծաքանակ շաքար, նավթ, օճառ, բրինձ, ցորեն, մանուֆակտուրային ապրանքներ, կաշի, կտավ, յուղ և այլն: Կուսակալության յուրաքանչյուր գավառակ պիտի հանձներ 200 թիթեղ ղավուրմա, 250 օխա (25 փութ) յուղ, յուրաքանչյուր գյուղը՝ 10 ոչխար և այլն: Քաղաքի յուրաքանչյուր թաղամասը պիտի տար 50 զույգ գուլպա, 50 զույգ ձեռնոց, 50 զույգ շապիկ-վարտիք, 50 բանկոն, 5 թաղիք, 3 ջուլ կամ կարպետ, 7 սավան, կաթ, մածուն, որի համար հրապարակներում դրված էին մեծ կաթսաներ: Թվարկելով այս ամենը, հեղինակը նշում է, որ հենց առաջին օրը՝ հուլիսի 22-ին, այդ անվան տակ Վանի ամբողջ շուկան թալանի մատնվեց՝ ապրանք թաքցնողներին Պատերազմական ատյանին հանձնելու սպառնալիքով:

Պատմվում է հուլիսի 25-ին Պատերազմական ատյանի հայտարարած զորաճավաքի մասին, երբ զենքի տակ կանչվեցին 20—45 տարեկանները: Նշվում է, որ այս հանգամանքը տագնապի մատնեց 25—45 տարեկաններին, որոնք տարիներ շարունակ զինվորական հարկ էին վճարել և իսպառ անվարժ էին զինվորական կյանքին: Սակայն դա չխանգարեց, որ քաղաքացի հայերը մեծ ցույցով Արամի առաջնորդությամբ զինվորական պաշտոնատան առաջ լցվեին՝ արձանագրվելու: Նրանց հետևեցին նաև գյուղացիները[2]:

Հեղինակը պատմում է այն անհանգստության մասին, որը պատեց հայերին, երբ կուսակալ Թահսին բեյին փոխարինելու եկավ ոճրագործ Ջևդեթը, որը հայտնի էր «Բաշկալեի նալբանդ» անունով:

Նա գրում է նաև Չիհադի հայտարարման մասին, որը ակներև խորթություն և թշնամանք հրահրեց մահմեդականների ու քրիստոնյաների միջև:

[1] Նշվ. աշխ., էջ 111—113:

[1] Հայկ Կոսոեան, Վան-քաղաքամիջի ապրիլեան կռիվները, Երևան, 1992: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է Թեհրանում, 1927-ին:

[2] Նշվ. աշխ., էջ 5:

Խոսք է գնում նաև քրդերի դասալքությունը խրախուսելու, հայ զինվորներին զինաթափելու, իրրև բեռնակիրներ օգտագործելու, ապա ոչնչացնելու մասին:

Հ. Կոսոյանը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ արյունալի դեպքերը Վասպուրականում սկսվեցին 1914-ի դեկտեմբերի սկզբին, ռուսական զորքի նահանջից անմիջապես հետո: Կոտորածներ տեղի ունեցան Աղբակում, Սարայի շրջանում, Շատախում:

Համառոտակի պատմելով Իշխանի և Վռամյանի նահատակության մասին, հեղինակը անցնում է ինքնապաշտպանության նախապատրաստության նկարագրությանը, վկայում, որ ինքնապաշտպանության պահին Վան-քաղաքամեջը ուներ 400 տուն հայ բնակչություն՝ 2500 շնչով, 250 տուն թուրք՝ 1250 շնչով: Դա պատմական Վան քաղաքն էր, որտեղ հայերն ունեին Ազգային Առաջնորդարան, Հիսուսյան անվամբ երկսեռ դպրոց, Շուշանյան անվամբ մանկապարտեզ, յոթ հարուստ եկեղեցիներ, «Հայրիկյան» գրադարան-ընթերցարան: Ամերիկյան միսիոներությունն ուներ մի ժողովարան-եկեղեցի, երկսեռ դպրոց և մանկապարտեզ: Քաղաքի կենտրոնում էր Վանի շուկան: Կային թուրքական պետական 19 հաստատություններ՝ նահանգապետարանը, ոստիկանատունը, դատարանը, բանտը, քաղաքապետարանը, բանկ Օտոմանը, հեռագրատունը, զինարանը, թեքալիֆի հարպիեն, Ազիզիե զորանոցը և այլն: Թուրքերն ունեին 15 մզկիթ, պահեստներ և այլն:

Հեղինակը վկայում է, որ Քաղաքամիջի ինքնապաշտպանության գործը սկզբից ևեթ իր վրա վերցրեց տեղի Հ. Հ. Դաշնակցության մարմինը, որը 1914-ի հոկտեմբերից դարձավ զինվորականն մարմին՝ բաղկացած 7 հոգուց. Դավիթ Սարգսյան (խանութպան), Լևոն Գալճյան (առևտրական), Հայկ Կոսոյան (ուսուցիչ), Միհրան Թորոմանյան (օճառագործ), Միհրդատ Միրզախանյան (կալվածատեր), Հարություն Խղոյան (պղնձագործ), Սարգիս Շահինյան (վաճառական)[1]:

Զինվորական մարմինը իր տրամադրության տակ ուներ 80 տասնոց մաուզեր՝ 200-ական փամփուշտով, 82 զանազան հրացան՝ 150-ական փամփուշտով: Կռվի առաջին օրը դրան ավելացան ժողովրդականների, Ոստիկանավարների ունեցած զենքերը, և դարձավ 90 մաուզեր, 101 հրացան[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 33:

[2] Նշվ. աշխ., էջ 35—37:

Քաղաքամեջն ուներ 60 000 փամփուշտ, 12 000-ը լցվեց կռիվների ժամանակ, իսկ մայիսի 7-ին Զին. մարմնի պահեստի կեսը դեռ անձեռնմխելի էր: Կային նաև 6 փոքր, 6 միջակ և 4 մեծ ռումբեր, իսկ կռվի ժամանակ թուրքական հրասանդերի ետևած ռումբերից ձեռք բերվեց 80 օքսա վառոդ:

Զին. մարմնի պատրաստած հատակագիծ-քարտեզի համաձայն որոշված դիրքերի գիծը շրջափակում էր հայկական թաղամասը, իսկ այդ գծի վրա ընկնող մյուս տներն ու հաստատությունները պետք է պայթեցվեին կամ գրավվեին: Դիրքերը բաժանվեցին 4 շրջանների՝ իրենց շրջանապետերով: Ինքնապաշտպանության շտաբը դարձավ Առաջնորդարանի շենքը: Շտաբի ղեկավարն էր Հայկ Կոսոյանը:

Հեղինակի վկայությամբ Քաղաքամիջում հերոսամարտն սկսվեց ապրիլի 7-ին, եվրոպական ժամանակով ժամը 9-ին: Մանրամասնորեն նկարագրվում է, թե ինչպես հայերը մեծ հնարամտությամբ ու հերոսությամբ կռվի հենց սկզբում գրավեցին թեքալիֆի հարպիեի շենքը: Թուրքերը հրդեհեցին այն, բայց օրիորդ Աղավնու շնորհիվ այն հաջողությամբ մարվեց:

Նշանակալի գործողություն էր կառավարական զինապահեստի հրկիզումը, որը հաջողությամբ իրականացրեց վանեցի հրձիգ Արամ Կազարուկյանը: Հրո ճարակ դարձավ հսկայական քանակությամբ զենք և զինամթերք:

Զինվորական մարմինը կազմակերպեց նաև ամրաշեն խմբեր, մատակարարման մարմին, բժշկական ծառայություն, զինգործարան, դերձականոց:

Հայկ Կոսոյանը հատկապես կանգ է առնում ապրիլի 10-ի կռվի վրա, որը սարսափելի էր: Այդ օրը թշնամու հրանոթային կրակն ավերեց վանեցիների բոլոր դիրքերի վերնահարկերը: Նույն օրվա գիշերը Զինվորական մարմինը գումարեց խորհրդակցություն, խմբագրեց հայտարարություն և զինվորական կարգապահական հրահանգներ, որոնք դիրքերն ուղարկվեցին ապրիլի 12-ին: Ահա թե ինչ էր ասվում հայտարարության մեջ. «Զինվոր ընկերներ, վեցերորդ օրն է անա, որ մեր կուրծքը դեմ արած թշնամուն, արիաբար կմարտնչենք: Թնդանոթներ և հազարավոր հրացաններ ունեցող թշնամին անզոր եղավ ճեղքելու մեր գիծը, ընկճելու մեզ: Մենք, որ որոշած ենք մեր կյանքը, պատիվը և իրավունքը հերոսությամբ պաշտպանել, դեռ շատ անակնկալներու ալ պիտի սպասենք և դիմագրավենք...

Զինվորներ, սույն պայմաններու մեջ մեր դիմադրությունը երկար

և բեղուն ընելու համար, կհորդորենք բոլորովին լինել սառն, չշփոթվող, կարգապահ և խնայող: Ահա ասոնք են, որ մեր դիմադրությունը պիտի դարձնեն կանոնավոր, արժեքավոր և հպարտ... Այս լինի բոլորիդ նշանաբանը՝ խնայողություն փամփուշտի, խնայողություն կյանքի և խիստ զինվորական կարգապահություն»[1]:

Ամրողջությամբ մեջ է բերվում 11 կետերից կազմված «Զինվորական կարգապահական հրահանգներ» հակիրճ փաստաթուղթը, որի գործադրությունը պարտադիր էր բոլորի համար:

Հետագա շարադրանքում հուշագրողը մանրամասնորեն նկարագրում է ապրիլի 11—17-ի հերոսական կռիվները: Անհուն խանդաղատանքով է գրում նա 10—15 տարեկան պատանիների՝ Բաբկեն Իսաջանյանի, Մարտիրոս Գոլոշյանի, Հովհաննես Ազգասերյանի, ծուռ Անուշի մանչ Ռստանիկի (Ռուռուս), Ասլան Ասլանյանի և այլոց մասին, որոնք պատրույգազերծում էին թշնամու հրասանդերից նետված ռումբերը, որոնք պետք է պայթեին 15—35 վայրկյան անց, ու վառոդ հայթայթում: Այդ փոքրիկ հերոսների ջանքերով, որոնցից մի քանիսը զոհվեցին, ոչ միայն առատորեն հայթայթվեց ամենօրյա գործածության վառոդ, այլև հարյուր օխա էլ պահեստավորվեց[2]:

Հեղինակը պատմում է Զևդեթի հետ անարդյունք բանակցությունների մասին, որից հետո էլ հերոսամարտը շարունակվեց: Նա մանրամասնորեն նկարագրում է Այգեստան սուրհանդակ ուղարկելու չորս փորձերը, որոնցից միայն վերջինը հաջողությամբ պսակվեց: Սակայն մեծագույն դժվարությամբ Այգեստան հասած երկու սուրհանդակները ուրախալի լուրերով Քաղաքամեջ վերադարձան թուրքերի փախուստից հետո միայն:

Այնուհետև հեղինակը նկարագրում է ապրիլի 23-ից վերսկսված կռվի մանրամասները, պատմում Մանուկ Պայլոյանի, շրջանառության օգնական Մարգար Սարգսյանի, հայկավանքցի Միքայելի և այլոց անձնազոհության մասին, որոնք կյանքի գնով ապահովեցին հաղթանակը:

Անհուն բերկրանքով է հեղինակը նկարագրում ապրիլի վերջին օրերից սկսված թուրքերի փախուստը, այգեստանցիների հաղթական մուտքը Քաղաքամեջ, հաղթանակի բուռն ցնծությունը, փոխադարձ ողջագուրանքները:

Իսկ մայիսի 7-ին երկու թևերով վան մտան հայ կամավորների

[1] Նշվ. աշխ., էջ 79:
[2] Նշվ. աշխ., էջ 90:

խմբերը՝ Համազասպի, Դրոյի, Քեռու և Վարդանի գլխավորությամբ: Դրոն կարճ ու ազդու ճնշո արտասանեց և ապա հրամայեց հրացանային հինգ համազարկով ողջունել վանեցիներին, որին վերջիններս պատասխանեցին բերդի թնդանոթի հիսուն համազարկով:

Գրքի վերջում անհուն առ անհուն բերված են 30-օրյա կռվի ընթացքում Քաղաքամեջում զոհված 34 և վիրավորված 69 վանեցիների ցուցակները, որոնցից զինվոր էին համապատասխանաբար 12-ը և 16-ը[1]:

Գիրքը եզրափակվում է թավրիզաբնակ վասպուրականցիների Հայրենակցական միության վարչության հավաստագրով՝ Հ. Կոստյանի գրքում շարադրված փաստերի արժանահավատության մասին:

Եղեռնի պատճառները բացահայտելու պատմաքննական փորձ է կատարված Դաշնակցության գործիչ Կարո Սասունու գրքույկում[2]: Նա գտնում է, որ Ապրիլյան եղեռնը համաշխարհային արյունոտ պատերազմի հարազատ զավակն է, իսկ նրա արտաքին պատճառները շատ են, բարդ ու միաժամանակ հայ ժողովրդի կամքից անկախ:

Նպատակադրվելով պարզաբանել, թե ի՞նչ տեղի ունեցավ 1915-ին, Կ. Սասունին գրում է, թե անապատների հարվածից հայությունը շփոթած ու շլմորած էր, Պատրիարքարանը, առաջնորդարաններն ու եկեղեցիները վերածվել էին խոհեմություն ու հնազանդություն քարոզող անզոր հաստատությունների, հայ հարուստներն ու առևտրական դասակարգը իրենց գլուխը կրիայի պատյանի մեջ էին քաշել, հայ մտավորականությունը պառակտված էր, հավաքական կամք ու վճռականություն չուներ՝ ամբողջ ազգի գլուխը կանգնելու և պատմության առջև պատասխանատու ներկայանալու, որովհետև նրանց ուշացած միությունը տեղի էր ունենում արդեն բանտերում ու աքսորի ճամփաների վրա, մահվան բախտակցությամբ[3]: Նա գտնում է, որ միակ շաղկապող օղակը կարող էին լինել հայ հեղափոխական կուսակցությունները, բայց նրանք էլ սպասողական ու անվճռական կեցվածք էին ընդունել, շշմեցնող հարվածի այդ օրերին հեղափոխական կազմակերպությունների կապը կտրվել էր, ամեն շրջան թողնվել իր բախտին, և հայ ժողովրդի մնացած հոծ զանգվածը, իբրև անհովիվ մի բազմություն, աչքերը չորս կողմն էր դարձնում ու մնում անպատասխան, իսկ դեպքերն ընթանում էին գահավեժ կերպով, տեղահանված ամբողջ

[1] Նշվ. աշխ., էջ 131:
[2] Կ. Սասունի, Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով, Փարիզ, 1931:
[3] Նշվ. աշխ., էջ 11:

ժողովուրդը աքսորի անվերջանալի ճանապարհներին սպանդանոցի դատապարտված հոտի էր վերածվում:

Դաշնակցական հեղինակը պարսավում է նաև իր կուսակցությանը, որը, նրա կարծիքով, վճռական քայլերի չդիմեց, սպասողական դիրք ընդունեց՝ ժամանակ շահելու և աճռելի փորձությունից նվազագույն վնասով դուրս գալու ակնկալությամբ, իսկ հայ ժողովուրդը հինգ-վեց ամիսների ընթացքում փոշիացավ: Նա արձանագրում է նաև, որ այդ համատարած խավարի մեջ, սակայն, պատահեցին նաև մի շարք դղրդագին ընդվզումներ և ազատամարտեր, որոնք այդ վայրերի ժողովրդի փառապսակ են կազմում, որը դահճակը ոսկորին հասնելուց հետո ցնցվեց և կյանքի ու մահվան անհավասար պայքարի ելավ թշնամու դեմ:

Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկելով Սասունի, Շատախի, Վանի, Խնուսի, Շապին-Գարահիսարի, Սուետիայի, Ուրֆայի գոյամարտերը, Կ. Սասունին գրում է, որ դրանք, առաջին երկուսից բացի, սկսվեցին միայն այն ժամանակ, երբ հեղափոխական ղեկավարները, առաջնորդներն ու զանազան երևելիները բանտարկված ու քշված էին: Ուրեմն, եզրակացնում է նա, տեղի ունեցած դեպքերը վերջին վայրկյանի պոռթկումներ էին, գերազանցապես ինքնապաշտպանության կոիվ, առանց կապ ունենալու որիշ որևէ վայրի պոռթկումի հետ, ուստի և ապստամբության ու նախահարձակման փաստերը իսպառ բացակայում են: Իբրև իր ասածի հաստատում նա վկայակոչում է այն փաստը, որ անգամ Վանը, որը ամենակարճ, բայց ամենափայլուն գոյամարտը վարեց, դեպքի պայթումից 24 ժամ առաջ այդ վճիռը չուներ, այլապես Վռամյանն ու Իշխանը չէին ընդունի վալիի հրավերը՝ դրանով իսկ բռնելով մահվան ճանապարհը[1]:

Փորձելով պատասխան տալ այն հարցին, թե ինչո՞ւ այդպես ընթացան դեպքերը, Կ. Սասունին գտնում է, որ 1915-ին հայ ժողովրդի բարոյական և ֆիզիկական գոյավիճակը այդ օրերի անմիջական արդյունքը չէր, այլ այն կազմավորվել էր նախորդ 6—7 տարիների ընթացքում, և հետևաբար հայության վարվելակերպը տրամաբանական հետևանքն էր Թուրքիայում սահմանադրական շրջանում ձևավորված մտայնության, ուստի այդ պարզաբանությամբ միայն կարելի է բացատրել, թե ինչո՞ւ մի ամբողջ ժողովուրդ բռնեց հանձնակերպության ճանապարհը:

[1] Նշվ. աշխ., էջ 15:

Դատապարտելով դաշնակցության անվճռականությունը, նա գրում է, որ եթե պատերազմի բռնկումից անմիջապես հետո այդ կուսակցության տատանումը որոշ չափով արդարանալի էր՝ դրության անորոշության պատճառաբանությամբ, ապա Եղեռնի առաջին շաբաթներին նման դիրքավորումը նույն արդարացումը չունի, որովհետև դաշնակցության անվճռական պատասխանը իթթիհատին, թե իրենք չեզոք կմնան՝ վճռական նշանակություն ունեցավ թուրքերի համար, որոնք համոզվեցին, որ եթե դաշնակցությունն իրենց հետ չէ, ուրեմն իր թշնամիների հետ է: Նա գտնում է, որ ստեղծված պայմաններում հնազանդությունը՝ անխելք ինքնատուրացում էր, ձեռնտու թշնամուն՝ դյուրությամբ ջարդն իրականացնելու, իսկ կրավորական ինքնապաշտպանությունը, որին կոչ էր անում դաշնակցությունը, ինքնախաբեություն, վերջին շունչը փչելու մի ջանք, որ իր նպատակին չէր կարող ծառայել: «Ինքնապաշտպանությունը Թուրքիո մեջ, այն ժամանակ-շրջանին կարելի էր միայն ապստամբությամբ, վճռական ու խիզախ, Վանեն մինչև Կիլիկիա»[1],— գրում է Կ. Սասունին և միաժամանակ ափսոսանքով ավելացնում, որ մինչդեռ ապստամբության հոգեբանություն իսկ գոյություն չուներ, այդպիսի ծրագիր նախագծված չէր, դաշնակցությունն այդպիսի ծրագիր գլուխ բերելու համար նախապատրաստված չէր: Դրա մեղքը, սակայն, նա փորձում է բարդել հայ կղերականության, ռամկավարների, չեզոքների և ունևոր դասակարգի վրա, որոնք բռնել էին հանձնակերպվելու ճանապարհը և սաստում էին դաշնակցությանը՝ խելոք մնալ ու նոր փորձանք չբերել հայ ժողովրդի գլխին, և երբ բռնկվեց ապրիլյան ճգնաժամը, դաշնակցությունն այլևս անզոր գտնվեց սեփական ուժերով ամեն տեղ դիմադրության դիմելու և բազմությանը իր ետևից փրկարար ապստամբության ճանապարհ դուրս բերելու համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Փարիզում Հ. Թյուրապյանի հրատարակությամբ լույս տեսավ «Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ» գիրքը[2], որ պարունակում է ջարդերից ու տարագրությունից փրկված մի քանի անձանց սրտաճմլիկ հուշերը (Ա. Ժամկոչյան, Կ. Հովսեփյան, Խ. Ծանիկյան, Բ. Մարգարյան), տե-

[1] Նշվ. աշխ., էջ 42:

[2] Հ. Թյուրապյան, Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ, 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրներով: Փարիզ, 1946:

ղեկությունները Բալուի, Տրապիզոնի, Իզմիրի կոտորածների, Խարբերդի, Մալաթիայի, Տիգրանակերտի, Կարինի, Այնթափի, Բաբերդի, Մարզվանի, Զիլի, Սեբաստիայի, Կեսարիայի տեղահանությունների, Տավրոսի և Ամանոսի, Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության մասին: Համառոտված ներկայացված են Կ. Պոլսի մտավորականության ձերբակալությունը, իթթիհատի կազմակերպած ջարդերն ու տեղահանություններն ըստ Հ. Լեփսիուսի և Հ. Մորգենթաուի:

Հնչակյան այս հրատարակության առաջաբանում նշվում է, որ իրենք, իբրև սոցիալ-դեմոկրատներ, և հետևաբար միջազգային եղբայրակցության (ինտերնացիոնալի— Մ. Կ.) ջատագովներ, բնավ նպատակ չունեն ատելության հուրը մշտավառ պահելու հայ սրտերի մեջ՝ ընդդեմ թուրք ժողովրդի, որի բազմաթիվ անդամներ տեղ-տեղ ոչ միայն մերժել են թուրքական կառավարության արձակած ջարդի հրամանները գործադրել, այլև իրենց կյանքի գնով պաշտպանել են թշվառ հայ տարագիրներին: Շեշտվում է, որ գրքի միակ նպատակն է մեկ անգամ էլ անարգանքի սյունին գամել անպատիժ մնացած իթթիհատականներին, որոնց պիտի պատժել այնպես, ինչպես պատժվեցին պատերազմի գերմանական հանցագործները:

Հայոց ցեղասպանությանը սերտորեն առնչվող մի շարք կարևոր վավերագրեր են հրապարակված ու մեկնաբանված Գաբրիել Լազյանի մենագրության մեջ[1]: Մենագրության երկրորդ մասում, որը կրում է «Եվրոպական պատերազմ, Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի խորհրդայնացում» ընդհանուր վերնագիրը, հեղինակը գրում է, որ եվրոպական պատերազմի բռնկման հենց սկզբից հայերի համակրանքը Համաձայնականների (Անտանտի— Մ. Կ.) և, մասնավորապես, Ռուսաստանի կողմն էր, այն հույսով, որ վերջինը պիտի գրավեր Թուրքիան և գոհացում պիտի տար հայ ազգային պահանջներին:

Խոսելով 1914 թ. հուլիսին Կարինում բացված Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի մասին, նա նշում է, որ այնտեղ հատուկ իթթիհատական վարիչները, առաջարկելով Դաշնակցությանը՝ գործակցել Թուրքիայի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի, որովհետև գիտեին, թե ռուսների կողմից ինչքան հալածանքների էր ենթարկվել Հայ ազգային դատը Կովկասում:

[1] Գաբրիել Լազեան, Հայաստան և Հայ Դատը (Հայ և ռուս հարաբերություններու լոյսին տակ): Կահիրե, 1957: 1991-ին Երևանում հրատարակվեց գրքի ֆաքսիմիլային տարբերակը:

«Վկայություններ կամավորական շարժումի մասին» ենթագլխում հեղինակը գրում է, որ Կովկասում կամավորական շարժումն սկսվեց Ռուսաստանի ներշնչումով ու քաջալերությամբ: Մեջբերումներ կատարելով դաշնակցական գործիչներ Բարսեղ Շահբազի, Մալխասի, Կոմսի, Կ. Սասունու, Արմեն Գարոյի, Ալ. Խատիսյանի, Հ. Ջավրիևի, Իշխանի և այլոց հուշերից ու տարբեր հրապարակություններում ունեցած ելույթներից, Գ. Լազյանը եզրակացնում է, որ Կովկասում արևմտահայերի մասնակցությամբ առաջ եկած կամավորական շարժումը երբեք համապատասխան չէր Կարնո Գերագույն ժողովի որոշումներին: Չնայած դրան, Ավետիք Շահխաթունյանից բացի, որը զգուշացրեց նման շարժման ծանր հետևանքների մասին, ոչ ոք դեմ չեղավ կամավորական շարժմանը, որովհետև քաղաքական հզոր ազդակներն ստեղծել էին մի ռազմաշունչ մթնոլորտ, և կարծվում էր, թե Ռուսաստանը պիտի իրագործեր հայերի ազգային իդեալը:

Գ. Լազյանի կարծիքով այս կամ այն չափով կամավորական շարժումը պատրվակ ծառայեց թուրքերի համար, որպեսզի կատարվի հայերի տարագրությունը և մեկ միլիոն հայերի կոտորածը[1]:

Գ. Լազյանը ուշադրության արժանի վարկած է առաջ քաշում քսան հնչակյան գործիչների կախաղան հանվելու հանգամանքների մասին: Հենվելով Ս. Խատիսյանի հիշողությունների վրա (Ա. Խատիսյան, Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք» ամսագիր, 1932, թիվ 12), նա գրում է, որ ռուսական իշխանությունները առաջադրանք են տալիս Դաշնակցությանը՝ հնուտ ահաբեկիչներ ուղարկել Թուրքիա և սպանել Էնվեր փաշային: Նույնը առաջարկում են Անտանտի տերությունները Հնչակյաններին, սակայն նրա վարիչներից Արշավիր Շահլանը ահաբեկիչների անուններն մատնում է թուրքերին, որոնք և կախաղան են բարձրացվում:

«Ռուսական նահանջը և Տարոնի եղեռնը» ենթագլխում Գ. Լազյանը գրում է, որ Կովկասյան ճակատում ռուսական բանակը մի քանի անգամ նահանջից, այդ պատճառով էլ ազատագրված հայ բնակչությունը նոր աղետների ենթարկվեց:

Նա ամենաողբերգականը համարում է Տարոնի հայության կոտորածը, երբ լեռները քաշված դիմադրողները օգնության հույսով լուր էին ուղարկել ռուսներին, որոնց թնդանոթների ձայները նրանք լսում էին, բայց ոչինչ սպասեցին ազատարարի գալուստին: Հենվելով Կարո

[1] Նշվ. աշխ., էջ 180:

Սասունու հուշագրության վրա (Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914—1918), Գ. Լազյանը գրում է, որ Կոմսը և Ռուբենը Սասունից շորի կտորի վրա գրված ծածկագիր նամակ էին ուղարկել Մանազկերտում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությանը, որով հայտնել էին, որ օգնություն չստանալու դեպքում իրենք միայն ութ օր կարող են շարունակել դիմադրությունը, սակայն օգնությունն այդպես էլ չստացվեց, իսկ ռուսական զորքերը ճահճացեցին: Նա վկայակոչում է Կ. Սասունու և Կոմսի մեղադրանքները ռուսական բանակի հետախուզական բաժնի հայ սպա Տ. Դևոյանի հասցեին, որը Սասունի վրա արշավող թուրքական զորքերի թիվը 30-ի փոխարեն ցույց էր տվել 70 հազար, և որն իբր վճռական դեր էր կատարել ռուսական ճահճացի գործում, անմիջապես էլ պարզաբանելով, որ ռուսական հրամանատարությունը այս կամ այն զինվորական կարևոր շարժումը՝ ճահճացը կամ առաջխաղացում, չէր կատարում միայն մեկ տեղեկության վրա հիմնվելով:

Գ. Լազյանը չի ընդունում նաև հիշյալ հեղինակների մեղադրականը հայ կամավորական գնդերի հրամանատարների և, մասնավորապես, Անդրանիկի հասցեին:

«Տեղահանությունները և Համաձայնականներու ազդարարությունը» ենթագլխում Գ. Լազյանը, խոսելով 1915-ի մարտին Կովկասյան ճակատում Էնվեր փաշայի կրած պարտության, Դարդանելում անգլո-ֆրանսիական ճավատորմի ձախողանքի մասին, գրում է, որ թուրքերը զգացին, որ մահու և կենաց կռիվ է սկսված Օսմանյան կայսրության համար, իսկ հայերը ազգովին պատրաստ չէին դիմագրավելու անհավոր փոտանգը: Նա ընդգծում է, որ օսմանյան սահմանադրության 1908—1914 տարիներին **հայ պահպանողական դասը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.) մեկ մտահոգություն ուներ՝ ճակատել ու կովել Հ. Հ. Դաշնակցության ազդեցության դեմ: Հեղինակն արձանագրում է այն ճակատագրական փաստը, որ 1890—1908-ին ազատագրական արյունալի պայքար մղող հայդուկները ցած էին դրել զենքը, հուսալով, որ օսմանյան սահմանադրության ընձեռած ազատ պայմաններում մեր ժողովուրդը պիտի գտներ իր փրկությունը: Իբրև այդ ախտավոր հոգեբանության վառ ապացույց նա վկայակոչում է նորակազմ Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցության 1908-ի հոկտեմբերի 31-ին հրապարակված ծրագրի նախաբանը, որտեղ ասվում էր, թե սահմանադրության հռչակման հետևանքով հեղափոխական կուսակցությունների գոյության և գործունեության անհրաժեշտությունը ինքնին վերացած է: Նրանց էր

միացել նաև Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: «Քաղաքական գետնի վրա ամբողջ ազգը,— եզրակացնում է Գ. Լազյանը,— Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Կ. Պոլսո Պատրիարքարանի ղեկավարությամբ, իր հույսը դրած էր Բարենորոգումների վրա, որոնք պիտի գործադրվեին ռուս և թուրք 1914 հունվար 26-ի համաձայնությամբ»[1]: Այդ էր պատճառը, որ գոնե հայերի համար առաջին համաշխարհային պատերազմը պայթեց անակնկալորեն, իսկ թուրքերը ծրագրել էին իրենց անելիքը, որին հասան թեկուզև իրենց իսկ երկիրը ավերակ դարձնելու գնով:

Ներկայացնելով Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների համատեղ հայտարարությունը հայոց ցեղասպանության մասին, որտեղ մասնավորապես նշվում էր, որ դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտնում են Բ. Դռանը, թե իրենք այդ ոճիրների համար պատասխանատու պիտի նկատեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև այն պաշտոնյաներին, որոնք մասնակից են եղել կոտորածներին, Գ. Լազյանը միաժամանակ նշում է, որ ոճրագործները երբեք պատասխանատվության չկանչվեցին, որոնք հետագայում Պոլսից փախան և ապաստան գտան Բեռլինում:

Մուշի և Սասունի 1915 թվականի յոթամսյա հերոսամարտի ճշմարիտ պատմության վերականգնման առումով մեծ արժեք են ներկայացնում խմբապետ Սասունցի Մուշեղի (Մուշեղ Ավետիսյան) հուշերը, որը զետեղված է Ռուբենի «Հայ հեղափոխականի մը հիշատակները» հուշագրության 7 հատորյակի վերջին՝ 7 րդ հատորում[2]:

Խմբապետ Մուշեղի քայքայված առողջության պատճառով նրա հուշերը գրի է առել ու խմբագրել Արամ Սահակյանը:

Ինչպես նշվում է հրատարակիչների առաջաբանում, Ռուբենի հուշագրությունը պետք է բաղկացած լիներ 10 հատորից, որի 7—8 հատորները նվիրված պիտի լիներ Տարոնի անօրինակ հերոսամարտին: Սակայն վերահաս մահը խանգարեց իրականացնելու այդ մտադրությունը, ուստի հրատարակիչները այդ բացը լրացնելու համար դիմեցին Ռուբենի զենքի ընկերոջը՝ խմբապետ Սասունցի Մուշեղին: Հրատա-

[1] Նշվ. աշխ., էջ 183:

[2] Ռուբեն: Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Երևան, 1990 (Թեհրանի 1982-ի հրատարակության վերատպություն), էջ 22—122: Գիրքը առաջին անգամ հրատարակվել է 1951—1952 թթ.:

բակիչների (Ալեք Փիլիպոս, Հերրի Քարլաև, Տրդատ Գազանճյան) կարծիքով դա խիստ կարևոր էր, որովհետև, ինչպես իրենք են ընդգծում, ապագա պատմաբանների համար անհասկանալի պիտի լիներ, որ Վանը, Շապին-Գարահիսարը, Ուրֆան և Սուետիան ունեցել են իրենց հերոսամարտերը, իսկ Տարոնը՝ ոչ: Այն Տարոնը, որը հայ ժողովրդի դիմադրական ողնաշարն էր, որի ծոցից դարեր շարունակ դուրս են եկել առասպելական հերոսներ, որոնք իրենց կյանքի գնով կերտեցին հայոց ազատամարտի լուսեղեն էջերը, որը ժողովրդի երևակայած Սասունցի Դավիթը իրականություն դարձրեց և 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ ունեցավ իրեն արժանի մի հերոսամարտ, որի առջև նահանջում են բոլոր մյուսները:

Սասունցի Մուշեղի մասին հրատարակիչները գրում են, որ նա դաստիարակվել էր Հրայրի շնչով, եղել Գևորգ Չաուշի և Ռուբենի գործակիցը, աշխատել Սիմոն Զավարյանի և բժիշկ Զավրիևի հանձնարարականներով: 1913-ից Ռուբենի ղեկավարությամբ Մուշեղը Կորյունի և Փեթարա Մահունկի հետ միասին ձեռնամուխ է լինում ժողովրդին կրկին զինելու գործին, սակայն «Այդ մարզին մեջ, դժբախտաբար, մեծ բան չկրցան անել, որովհետև 1915 թվականի աճավոր փոթորիկը շուտ պայթեցավ հայ ժողովրդի գլխուն»[1]:

Հրատարակիչները նշում են, որ Սասունի վրա էին հարձակվել թուրքական 100 000-անոց կանոնավոր բանակը, շրջապատի քրդական աշիրեթներն ու չեթեները, որոնց դեմ կանգնեցին հարյուրապատիկ պակաս ուժեր ունեցող սասունցիները: Ամեն գյուղ ունեցավ իր հերոսապատումը, գյուղերում ցրված ֆիդայիները տեղական ինքնապաշտպանական խմբերով մահու և կենաց կռիվ մղեցին՝ թշնամուց խլելով տասնապատիկ ավելի զոհեր: «Սա ո՛չ կռիվ է, ո՛չ ալ հերոսամարտ,— գրում են նրանք,— այլ մահվան մարտ. ո՛չ մեկ տեղէ օգնության հույս, թշնամին հազարապատիկ ավելի ուժեղ, իսկ մերինները՝ հացի տեղ խոտ կուտեն. ռազմամթերքը թշնամուն է, որ անկէ խլելով, անոր դեմ կը գործածեն և այդ հերոսական պայքարի մեջ մեկիկ մեկիկ կզոհվին հայրենիքի ազատության չքնաղագույն հերոսները...»[2]:

Հուշերի առաջին բաժնում Սասունցի Մուշեղը պատմում է չորս տարվա ընդմիջումից հետո 1918-ի աշնանը Դաշնակցության բյուրոյի որոշմամբ Ռուբենի Մուշ գալու և ինքնապաշտպանության կազմակերպ-

[1] Նշվ. աշխ., էջ 50:
[2] Նշվ. աշխ., էջ 51:

մանը ձեռնամուխ լինելու մասին: Հրավիրվում է խորհրդակցություն, որին մասնակցում էին փորձված ֆիդայիներ Մուշեղը, Գոմսա Կորյունը, Ավրահա Արամը, Ալիջանա Միսակը (Համզո), Տիգրանը և Մոկունց Արտաշես Միրզոյանը: Խորհրդակցությունն անցկացվում էր Մշո շրջանի դպրոցների վիճակի քննարկման քողի տակ, որոնց տնօրեն էր ուղարկված Ռուբենը, իսկ իրականում գլխավոր հոգսը ինքնապաշտպանության կազմակերպումն էր: Նման քողարկման պատճառը սահմանադրությունն էր, որի համաձայն հայ հեղափոխականը վար էր դրել իր զենքը: Հուշագրողը նշում է, որ 1908-ի թթիհատական սահմանադրությունը մեծագույն աղետ եղավ հայ ժողովրդի համար, որից հետո ֆիդայիները մինչև 1913-ը, մինչև Ռուբենի գալը, մեծ մասամբ քաշված էին իրենց գյուղերը և զբաղված էին սեփական տնտեսությամբ[1]:

Հուշագրողը տալիս է վկայություններ, որոնք կարևոր են Եղեռնի ժամանակ ինքնապաշտպանական կռիվ համակարգ չստեղծելու պատճառները պարզաբանելու տեսակետից: Նա գրում է, որ սահմանադրությանը հաջորդող տարիներին Զավարյանը, Գարմենը, դոկտոր Զավրիևը վստահություն չունեին կառավարության վրա, սակայն չէին կարող պատկերացնել, որ այդքան շուտ կհասնի 1915-ի աղետը: Հուշագրողն ավելացնում է, որ դժբախտաբար ամբողջ Արևմտյան Հայաստանի ու նաև Տարոնի Բարձրավանդակի զինումը անցյալում էլ ընդհանուր բնույթ չէր կրել, որովհետև հեղափոխությունը հազիվ 15—20 տարվա կյանք ուներ, և այդ կարճ միջոցին միայն ընտրյալներն էին կարողացել զենք ձեռք բերել, առիթ ու ժամանակ չէր եղել ժողովուրդը զինելու, ունեցողների մեծ մասն էլ սահմանադրության բերումով այն վայր էին դրել, և միայն փորձված ֆիդայիներն էին պահել իրենց ունեցածը:

Ռուբենին և նրա զինակիցներին մնում էր գործը սկզբից սկսել, և նրանց առաջին մտահոգությունը եղավ հաշվառման ենթարկել Մշո դաշտի բոլոր գյուղերի զենքերն ու կովողներին: Պարզվեց, որ զենքը քիչ էր, մեծ մասամբ հին չախմախալիներ: Ռուբենը Գոմսա Կորյունին Էրզրում ուղարկեց՝ նորագույն զենք ձեռք բերելու: Վերջինս քարավանապետ Միջոյի միջոցով որոշ քանակությամբ զենք փոխադրեց Տարոն: Սակայն, ինչպես գրում է հեղինակը, արդեն ուշ էր, որովհետև երբ 1914-ի կեսերին քաղաքական կացության սրման հետևանքով ժո-

[1] Նշվ. աշխ., էջ 55:

ղովուրդը ցանկացավ զինվել, հունական հրացաններն արդեն անգտանելի էին դարձել:

Հեղինակի վկայությամբ հրավիրվում է փորձված հայդուկապետերի ևոր ժողով, որտեղ դրվում է ինքնապաշտպանության անհրաժեշտության հարցը: Խոսք է գնում փրկության հույսը ռուսական բանակների օգնության հետ կապելու մասին:

Սասունցի Մուշեղը վկայում է, որ Սասուն բարձրանալու որոշում ընդունվեց 1915-ի մարտի 10-ի Գոմսի կռվից հետո, երբ կռվող խմբերը և Ռուբենը հավաքվեցին Շենիկում: Այստեղ են փոխադրվում Մշո դաշտի թաքստոցներում պահված զենքն ու զինապաշարը:

Հիշողությունների հաջորդ բաժնում Սասունցի Մուշեղը մանրամասնորեն պատմում է 1915 թ. մարտ-օգոստոս ամիսների Սասունի յոթամսյա հերոսամարտի մասին: Նա վկայում է, որ Շենիկում Ռուբենը անմիջապես հրավիրում է ֆիդայիների և իշխանների ժողով, որին ներկա էին ինքը, Կորյունը, Միշոն, Փեթարա Մանուկը, Սեմալի Մանուկը, Կելիեկուզանի ռես Կիրակոսը, Մորուք Կարոն, Ղազարը, Չոլոն, Գալուստ Սասունին և ուրիշներ: Լայն զեկուցում տվեց Ռուբենը և տեղեկացրեց, որ հալածանքներն ու տեղահանությունները արդեն սկսված են: Նա մատնանշեց երեք ճանապարհ՝ 1. ձեռնածալ նստել և սպասել, որ թուրքը գա և ոչխարների նման կտրի իրենց վիզը, 2. հավաքել ուժերը և նախահարձակ լինել, 3. ինքնապաշտպանություն՝ ազատություն կամ մահ նշանաբանով: Ընտրվեց երրորդ ճանապարհը:

Սասունի ընդհանուր ճակատը բաժանվեց պաշտպանության յոթ շրջանների: Տալվորիկի, Խուլբի, Խիանքի շրջանը հանձնվեց Մուշեղին, որի օգնականներն էին հին ֆիդայիներ Թութարը, Համզեն, Բազեն և Ոզգոն:

Փսանա ճակատը հանձնվեց Ստեփան Վարդապետին և Դավիթ Երիցյանին:

Կելիեկուզանի շրջանը տրվեց Կորյունին ու Միշոյին:

Շենիկ-Սեմալի ուղղությունը բռնեցին իշխան Մանուկը, Չոլոն և Արամը:

Աղլի հինգերորդ շրջանը հանձնվեց Աղբնա Մարտեին:

Կեփիի լեռնամասը տրվեց Իշխանձորի Արթինին ու իր եղբայր Մըկրտին:

Յոթերորդ շրջանը Ալեանքի լեռնամասն էր, որտեղ գտնվում էին Շենիկի Պողոսի, Սեմալի տերտերի, Գրգեի Վարդանի, Ղազարի խմբերը: Այստեղ էր նաև խմբապետուհի Ռպեն՝ իր կանանց խմբով:

Մուշեղը պատմում է, թե ինչպես Ռուբենի մտահղացմամբ շարքից դուրս բերվեցին այդ ուղղությամբ գործող թշնամու երեք թնդանոթները, որոնք վտանգում էին Կելիեկուզանի և Անտոքի դիրքերը և բացի այդ, բարոյական ճնշում գործադրում ժողովրդի վրա:

Նա վկայում է, որ ձմռան առաջին ամիսներից սկսած Սասնո պաշարման շղթան սկսեց հետզհետե նեղանալ: Այդ առումով դրությունն ավելի ծանրացավ, երբ «Ռուս բանակը և Անդրանիկի կամավորները, որոնք հասած էին Մշո դաշտի արևելքը գտնվող Չուխուրի շրջանը ու մեծ հույսեր ներշնչած, անակնկալ կերպով կհետանային, հայությունը ձգելով իր դժբախտ ճակատագրի հետ: Ցարերու հին քաղաքականությունն էր որ կկրկնվեր»[1]:

Ռուսական բանակի նահանջից հետո թուրքական բանակը հյուսիսից, իսկ բանակն ու քրդերը հարավից, ինչպես նաև արևելքից ու արևմուտքից ուժեղացրին հարձակումները Սասունի վրա:

Հեղինակի վկայությամբ Սասնո և Տարոնի կռիվներն ընդգրկեցին մի ընդարձակ շրջան՝ Ս. Հովհաննեսի անտառներից, Փեթարից, Կուռթիկ լեռից մինչև Մուշ քաղաքի ուսը՝ Արջգոր, Առաքելոց վանքից մինչև Ծիրիճկատար, իսկ Ս. Կարապետի և Պաղլուի շրջանները դիմադրության ամրոցների էին վերածվել: Մուշ քաղաքի դիմադրության գլուխ էր կանգնել Կոտոյի Հաճին, որը ութ օր միայն կարողացավ դիմանալ և իր փիդայիներով մնաց թնդանոթների կրակի տակ: Մուշեղի հավատամքով Ռուբենը որոշեց օգնության հասնել Մուշին և, հակառակ բոլորի թախանձանքին, Փեթարա Մանուկի, Կելիեկուզանցի Հովսեփի, Ալեանցի Միսակի և Ծրգեի խմբերի գլուխ անցած՝ շարժվեց դեպի Մուշ: Նրանք կռիվներով հասան մինչև Մուշեղաբերդ, սակայն անկարելի եղավ Մուշ հասնել՝ խիտ պաշարման հետևանքով, և Ռուբենը ստիպված էր վերադառնալ Սասուն:

Մուշեղը պատմում է նաև Մշո Զիարեթ, Մեղդին, Խեպեան և Սորտար գյուղերի դիմադրության մասին, որը տևեց մինչև հուլիս, որից հետո այդ գյուղերի խմբերն անցան Սասուն, իսկ վերջինիս անկումից հետո անցան Ս. Կարապետի անտառները և կռիվներով դուրս եկան Մանազկերտ ու փրկվեցին:

Պատմվում է նաև Վարդոյի և Խնուսի շրջանների դիմադրության մասին, որոնց բնակչությունը փրկվեց շնորհիվ ռուսական զորքի և հայ կամավորների:

[1] Նշվ. աշխ., էջ 69:

Խմբապետ Մուշեղը տեղեկություններ է հաղորդում Կոմսի (Վահան Փափազյան) գործունեության մասին, գրում է, որ նա Մուշում հիվանդանում է տիֆով, փոխադրվում Քանա լեռ, որտեղ առողջանալուց հետո անցնում է Սասուն՝ Ռուբենի մոտ, որտեղից որոշվում է նրան նորից ուղարկել Քանա լեռան շրջանը՝ ռուսների հետ կապ հաստատելու համար:

Հուշագրողը պատմում է Մշո դաշտի արևելյան կողմում Չուխուրի շամբերի մեջ խմբապետներ Մարտիրոսի և Հասրեթի ղեկավարությամբ մոտ տասը հազար ժողովրդի դիմադրության մասին, որոնց փըրկեց Անդրանիկը:

Վերստին անդրադառնալով Սասունի կռիվներին, խմբապետ Մուշեղը գրում է, որ կռվի միջոցներն անբավարար էին, իսկ ճակատն ընդարձակ էր, գլխավոր դիրքերը գտնվում էին իրարից երկու ժամվա հեռավորության վրա: Խնայողությամբ չօգտագործելու դեպքում փամփուշտը ոչ թե յոթ ամիս, յոթ օր էլ չէր բավարարի: Օրավուր ծանրանում էր պարենավորման խնդիրը: «Այս բոլոր հոգերը,— գրում է Մուշեղը,— զինական, պարենավորման, ներքին անդորրության, ամբողջությամբ ծանրացած էին Ռուբենի ուսերուն: Ամբողջ յոթ ամիս անիկա ոչ գիշեր ուներ և ոչ ալ ցերեկ, շարունակ կշրջեր դիրքերը, կովողներուն խրախուսյս կուտար, ճակատներու կացությունը կքններ, ռազմամթերքը քննության կենթարկեր: Ռուբեն գիտեր նույնիսկ յուրաքանչյուր կովողի փամփուշտին քանակը ու շարունակ հաշիվ կպահանջեր: Անիկա որքան հանդերատար, նույնքան ալ դաժան էր պարտազանցներու հանդեպ»[1]: Հուշագրողի վկայությամբ Ռուբենը անձամբ էր ղեկավարում Չողոյի, Փեթարա Մանուկի և այլոց հետ թշնամուց զենք ու փամփուշտ խլելու գործողությունները, և ուրախությանը չափ չկար, երբ Միջոն հղացավ «Կրա» տիպի հրացանների համար փամփուշտ պատրաստելու գործը:

Մուշեղը վերհիշում է, որ հատկապես ծանր կռիվներ տեղի ունեցան Շենիկի և Սեմալի համար, որոնք տևեցին երկու շաբաթ, և ի վերջո Ռուբենը հրահանգեց լքել այդ շրջանը և ամրանալ Կելիեկուզանի դիրքերի վրա, որտեղից էլ անցնում են վերջնական դիրքերը՝ Անդոքի և Ամպրնի լեռները:

Նույն այդ օրերին անընդհատ կռիվներ են տեղի ունենում Տալվորիկի շրջանում, իր՝ Մուշեղի գլխավորությամբ:

[1] Նշվ. աշխ., էջ 72։

Խմբապետ Մուշեղը տալիս է վերջին օրերին Կապլորի ձորում տեղի ունեցած ճակատամարտի ընդարձակ նկարագիրը, որտեղ սասունցիները դրսևորեցին արտակարգ հերոսություն, իսկ կռանց խմբերը՝ Կուլեի, Անթառամի և Ծուշանի ղեկավարությամբ, լեռներից խոշոր քարեր էին գլորում թշնամու վրա: Երեկոյան քրդերը զինադադար առաջարկեցին, որը և Ռուբենի խորհրդով ընդունվեց:

Հուլիսի կեսերին վիճակը վատթարացավ. զորքը և թնդանոթներն ավելի էին նեղացնում կռվի սահմանները: Խմբապետը հիշում է, թե ինչպես, երբ ինքը հաջորդ օրը գնաց Ամպրնի առաջավոր դիրքերը՝ Ռուբենի մոտ, վերջինս և կրակում էր, և միաժամանակ խոսում իր հետ: Նա ցավով է հայտնում, որ երեկ սպանվել է Կորյունը, որի դիակն ընկել է թշնամու ձեռքը և ցուցադրվել Մուշ քաղաքում, կառավարական շենքի առջև:

Շատ չանցած Մուշեղը ստանում է Ռուբենի հրահանգը՝ հավաքել մնացած ուժերը և շտապել Անտոք: Պարզ էր արդեն, որ յոթամսյա կատաղի կռիվներից հետո Սասնո բոլոր դիրքերն էլ թշնամու գերազանց ուժերի առջև սկսել էին տեղի տալ:

Խմբապետ Մուշեղը հատուկ ուշադրություն է նվիրել Գումաց վանքի և Մազե կամրջի կռիվներին: Նա պատմում է, թե ինչպես Փսանաց գավառի ժողովուրդը՝ 15 000 մարդ, բարձրացել էր Գումուց վանք և ամրանալով այնտեղ՝ Ստեփան Վարդապետի և Դավիթ Երիցյանի ղեկավարությամբ 15 օր դիմադրել թշնամուն և սպառել փամփուշտները: Այնտեղից Տալվորիկ կարելի էր անցնել միայն Մազե կամրջով, որն էլ ամուր փակված էր քրդական աշիրեթների կողմից: Ռուբենի հրահանգով վերցնելով 100 կովողներ, Մուշեղը շտապում է Գումուց վանքին օգնության և դիրքեր բռնում Մազե կամրջի շրջակայքի քարակուտերի մեջ, սկսում հրացանաձգություն, ապա ճարահատյալ անցնում դաշտանամարտի, հարկադրում քրդերին՝ դիմել փախուստի, գրավում փրկարար Մազե կամուրջը և Փսանաց ժողովրդին անցկացնում Տալվորիկ:

Հատուկ գլուխ նվիրելով Ռուբենի հետ դեպի Մանազկերտ իրենց նահանջին, խմբապետ Մուշեղը ջանում է վեր հանել պատմական ճշմարտությունը և պարզաբանել այդ նահանջի օբյեկտիվ հանգամանքները: Այդ առնչությամբ նա գրում է, որ Սասնո և Տարոնի կռիվները տևեցին մոտավորապես յոթ ամիս, որից ավելի անկարելի էր դիմանալ: Աչքերը հառած դեպի սահմանը, նրանք զուր տեղը սպասել էին ազատարար բանակների հայտնվելուն: Եվ ահա Անտոքի ծերպերի

մեջ խորհրդակցության են հավաքվում ժողովրդի ներկայացուցիչներն ու փիդայիները, այնքան հյուծված, որ միմյանց չէին ճանաչում: Միակ իրողությունը, որ պարզում է Ռուբենը, ռուսական բանակի նահանջի փաստն է, իսկ ամենադաժանը փամփուշտի սպառումն է, որի մասին գիտեն բոլորը: Ոմանք առաջարկում են կրակել մինչև վերջին փամփուշտը և ապա մեծով-փոքրով հետվել ժայռերից ցած: Մեկն էլ առաջարկում է մեծ խարույկ պատրաստել ու նրան ճարակ դառնալ: Սակայն դառնության այս խոսքերի ետևում նկատելի է ընդհանուր հոգեբանությունը.— քանի որ հավաքական ինքնապաշտպանությամբ անկարելի եղավ փրկությունը ապահովել, իսկ ոուսը նորից դավաճանեց, ազատ թողնենք կովողներին ու ժողովրդին և թող ամեն մարդ իր գլխի ճարը տեսնի, այս ձևով թերևս բազմաթիվ կյանքեր փրկվեն: Այսուհետև հայոց բարձրաբերձ լեռներն ու ծերպերը թող լինեն ժողովրդի ապաստարանը[1]: Խմբապետը հիշում է, որ այդ վճռական պահին բոլորի հայացքներն ուղղված էին Ռուբենին և ցանկանում էին, որ վերջինը հավանություն տա ընդհանուր տրամադրությանը, որովհետև քաջ գիտեին, որ անձամբ Ռուբենի կարծիքը մնալն էր և Սասնո լեռների վրա նահատակվելը: «Ռուբեն վերջապես համակերպեցավ ընդհանուր տրամադրության,— գրում է Մուշեղը:— Այլևս անկարելի էր այդ կացության մեջ ուրիշ ճամփա ընտրել. ուստի կարգադրեց, որ յուրաքանչյուրը իր զենքն ու փամփուշտները միասին առնէ և տեր կանգնի իր ընտանիքին: Որքան կարելի էր ժողովուրդը պետք էր ցրված պահել, իրարմէ միշտ հեռու, լեռներու, ձորերու և անտառներու խորերը...»[2]:

Մուշեղի վկայությամբ Անտոքի վրա հավաքված 5 000 ժողովրդի կեսը Միջոյի ղեկավարությամբ փորձեց անցնել Աղբակի շրջան, սակայն հանդիպեց քրդերին և անհավասար մարտում ընկավ իր ընկերների հետ: Մյուս կեսը Ռուբենի առաջարկությամբ հաջողությամբ անցավ Կոիշիկ լեռը և թաքնվեց նրա անտառներում, իսկ Ռուբենն ու իր գինակիցները թաքնվեցին Ֆոֆոքարի քարայրներում, որտեղ քսան հոգով անցկացրին 10 օր: Հետագայում մեծ դժվարությամբ նրանք հասան Եղկաթի ձորը: Նրանց միացավ նաև Քանից 10 հոգով այստեղ եկած Կոմսը: Կազմվեց 35 հոգիանոց խումբ, որը հասավ Նեմրութի գագաթը: Այստեղ կայացավ վերջին խորհրդակցությունը: «Իսկապես հասած էր ճակատագրական պահը,— գրում է խմբապետ Մուշեղը:— Այլևս պիտի նետվեինք կրակի մեջ, որմէ դուրս գալ պիտի ըլլար հրաշքի համազոր:

Երկար պետք չունեցանք վիճելու, Մահազկերտ տանող մեկ ճամփա կար մեր դիմաց, մեռած մարդիկ էինք արդեն, անոթի, հյուծված, շատերս մահ կփնտրեինք, ուստի միաձայնությամբ որոշեցինք մութը կոխելուն ճամփա իյնալ»[1]: Եվ իրոք, գործի դնելով հնարագիտության բոլոր հնարավոր եղանակները, խումբը կարողացավ աննկատ անցնել թուրքերի և քրդերի հոծ կուտակումների միջով և հասնել Մահազկերտ, ուր արդեն գտնվում էին ոուս կոզակները: Երեք օր Մահազկերտում կազդուրվելուց հետո խումբը ճանապարհվեց Իզդիր, ուր դիմավորելու էին եկել Արամ Մանուկյանը, Արմեն Գարոն, Մալխասը և ուրիշներ: Եվս երեք օր անց խումբը դիմավորողների հետ միասին մեկնեց Երևան:

Հուշագրողը պատմում է նաև, թե ինչպես Ռուբենը իր գործակիցներով, որոնց թվում և ինքը, վերադարձել են Խնուսի շրջանը, մեկ տարի մնացել այնտեղ և կոզակների օգնությամբ լեռներում, անտառներում, ձորերում փնտրել, գտել և թիկունք են ուղարկել տասնյակ հազարավոր հայերի: Ռուբենի մտահղացումն էր նաև Ալագյազի շրջանի մաքրագործումը մահմեդական ազգաբնակչությունից և այնտեղ Տարոնի ու Սասունի փրկված 60—70 հազար հայերի տեղավորումը, որն իրականացվեց հաջողությամբ: Այդ կապակցությամբ խմբապետ Մուշեղը նկարագրում է Թալինի բերդի առումը, որը ֆիդայական վարպետությամբ իրականացրին Մորուք Կարոն, Փեթարա Մահունը, Զոլոն, խմբապետ Մուշեղը և ուրիշներ:

Փրկված սասունցիները հատուկ զորամասով մասնակից դարձան նաև Սարդարապատի հերոսամարտին:

Եղեռնի պատմագրության առաջին ժամանակահատվածին են վերաբերում,անշուշտ, նաև մի շարք արժեքավոր հրատարակություններ, որոնց մանրամասնորեն չենք անդրադարձել, սակայն հարկ ենք համարում թվարկել դրանցից գեթ մի քանիսը:

Այդ շարքում առաջինը պետք է հիշատակել պատվելի Տիգրան Անդրեասյանի գրքույկը[2]: Ակամա ակնառուեսը դառնալով Զեյթունի տարագրությանը և երբեմնի հերոս զեյթունցիների դառնաղետ ճակա-

[1] Նշվ. աշխ., էջ 83:
[2] Նշվ. աշխ., էջ 85:

[1] Նշվ. աշխ., էջ 93:
[2] Անդրեասյան Տ., Զեյթունի անձնատվությունը և Սուետիո ինքնապաշտպանությունը: Գահիրե, 1915:

տագրին, Տ. Անդրեասյանին հաջողվում է հրաշքով խույս տալ տարագրությունից, մի կերպ հասնել հայրենի Սուետիա և հայրենակիցներին պարզաբանել երկրում տիրող իրական վիճակը: Անվարան կարելի է ասել, որ Տ. Անդրեասյանի պատմածները վճռական նշանակություն ունեցան սուետահայերի համար՝ Մուսա լեռանն ապավինելու որոշում կայացնելու գործում: Ինքը՝ Տ. Անդրեասյանը, դարձավ Մուսա լեռան հերոսամարտի ոգեշնչողներից ու գործուն կազմակերպիչներից մեկը:

Հիշատակելի են նաև Վ. Մալեզյանի[1], Ս. Սապահ-Գուլյանի[2], Է. Զոբուրյանի[3], Հ. Տաշյանի[4], Տ. Տոնիկյանի[5], Ա. Քեչյանի[6]և բազում այլ հեղինակների գործերը:

Առանձնակի պետք է հիշատակել Զավեն Արքեպիսկոպոսի «Պատրիարքական հուշեր: Վավերագիրներ և վկայություններ» ստվարածավալ աշխատությունը, որը սեղանի գիրք է դարձել հետագա շատ ուսումնասիրողների համար[7]:

1915—1965 թթ. սփյուռքում լույս տեսած պատմագիտական ժողովածուները ամուր հիմք դարձավ պատմագրության հետագա փուլի սկզբնավորման ու զարգացման համար:

2. 1965—1998 թվականների ուսումնասիրությունները

Սփյուռքահայության կյանքում բացառիկ իրադարձություն էր Մեծ եղեռնի 50-ամյակը: Բազմապիսի սգահանդեսներին և այլ միջոցառումներին զուգահեռ, այդ առիթով հրապարակվեցին նաև հուշամատյաններ, պարբերականների բացառիկներ, պատմագիտական աշխատություններ, որոնցում Եղեռնի պատմության ուսումնասիրումը բարձրացվեց մի նոր աստիճանի:

Եղեռնի 50-ամյակի նշման նախապատրաստության յուրատեսակ

1 Մալեզյան Վ., Տարագրի մը հուշատետրը: Կահիրե, 1915:

2 Սապահ-Գուլյան Ս., Պատասխանատուները: Պրովիդենս, 1916:

3 Զոբուրյան Է., Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920:

4 Տաշյան Հ., Հայ ազգի տարագրությունը գերմանական փավերագիրներու համեմատ: Վիեննա, 1921:

5 Տոնիկյան Տ., Հայկական փոթորիկը: Կահիրե, 1929:

6 Քեչյան Ա., Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն, Պոստըն2, 1939:

7 Զավեն Արքեպիսկոպոս: Պատրիարքական հուշեր: Վավերագիրներ և վկայություններ: Կահիրե, 1947:

կոչնակ դարձավ ամերիկահայ պրոֆեսոր Մանասե Սևակի գրքույկը[1], որտեղ, ի պատասխան պատմության թուրք կեղծարարների, որոնք ջանում են ուրանալ Հայոց եղեռնը, հեղինակն առաջարկում է ստեղծել «Պատմագիտական ուսումնասիրությանց ընկերություն», որի նպատակը պիտի լինի ստեղծել Եղեռնի և առհասարակ Հայկական դատի ճշմարիտ, իրական փաստերով հագեցած պատմությունը և հիմնել «Հայկական հրատարակչական Կեդրոն», որի խնդիրը պիտի լինի ամերիկյան թուրքահաճո իշխանությունների կողմից մերժված հայկական գրքերի հրատարակումը: Իբրև առաջին քայլ պրոֆեսորը առաջարկում է հրատարակել «Ապրիլյան եղեռնի վավերագրական (դոկումենտալ) պատմագիրք»: Հրապարակախոսը կարևոր է համարում «Հայկական հրատարակչական Կեդրոնին» կից կազմել նաև հայ և օտար փաստաբանների մի կաճառ՝ թուրքերի կողմից կողոպտված հայկական հարըստությունների իրավական և օրենսդրական պայմաններն ուսումնասիրելու և Թուրքիային պարտադրելու, որ ներկայանա միջազգային արդարադատության դատարանին՝ ուշացած հատուցում ունենալու համար կողոպտված ու բզկտված հայությանը, ինչպես որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արվեց հրեաներին:

***

Հիսունամյակի առթիվ հրատարակությունների առաջենկն ու չգերազանցվածը Ռամկավար ազատական կուսակցության «Զարթօնք» օրաթերթի լույս ընծայած **«Հուշամատյան Մեծ եղեռնի»** մեծադիր ու շքեղ հատորն է՝ բաղկացած 1140 էջից[2]: Հատորը պատրաստել է «Զարթօնքի» խմբագրապետ Գերսամ Անարոնյանը՝ գործակցությամբ թերթի խմբագիր Նազարեթ Թոփալյանի:

Ինչպես նշվում է հատորի առաջաբանում, «Զարթօնքը» սփյուռքում առաջիններից մեկն էր, որ շեշտեց մեծ պատրաստությամբ ու բացառիկ կարևորությամբ Մեծ եղեռնի հիսնամյակը նշելու անհրաժեշտությունը՝ համազգային արտահայտություններով, փառաշուք հանդիսություններով, գիրք-գրքույկներով, գեղարվեստական ստեղծագործություններով, որպեսզի արժանավորապես հարգվի հիշատակը մեկուկես միլիոն նահատակների, որպեսզի մեկ անգամ ևս մերկացվի թուրքա-

1 Մանասէ Սևակ, Հայկական Մեծ եղեռնը և մենք (թրքական հայապատճառություն), Պատասխան բարեկամներուս, Նյու-Յորք, 1964:

2 Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965:

կան ցեղասպանությունը, որպեսզի առիթը օգտագործվի վերարծարծելու համար հայոց հողային դատը և նոր թափ տրվի հայապահպանման ճիգերին սփյուռքում:

Սփյուռքահայ հայտնի հասարակական գործիչ Անդրանիկ Անդրեասյանի ընդարձակ ներածականից հետո սկսվում է գրքի առաջին՝ «Պատմական» խորագիրը կրող գլուխը, որը բացվում է պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանի «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և ազգային վերածնունդը» ծավալուն հոդվածով[2]: Այստեղ վեր են հանվում օսմանյան թուրքերի հայաջինջ քաղաքականության ակունքները, որոնք հասցվում են մինչև Օսմանյան պետության կազմավորման ժամանակները, նկարագրվում են առաջին զանգվածային կոտորածները 19-րդ դարի վերջերին, տրվում է թուրքական ցեղապաշտների դիկտատուրայի հաստատման և Մեծ եղեռնի նախապատրաստման ու իրագործման պատմությունը, առանձին ենթաբաժին է հատկացվում արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերին:

Գլխի երկրորդ հոդվածը, որի հեղինակն է Ստեփան Շահբազը, կրում է «Ապրիլ 24-Հիսնամյակին առթիվ ճշմարտությունների վավերաթուղթերու և ժամանակին բերած լույսերուն տակ» վերնագիրը[2]: Այստեղ ցեղասպանության ծրագրի իրագործումը ներկայացվում է իբրև քաղաքական նպատակ, և բերվում են պատմական անհերքելի վկայություններ այդ մասին, մերկացվում են Եղեռնի պատմության նենգափոխման թուրքական ջանքերը:

Սփյուռքահայ պատմաբան Լևոն Չորմիսյանի հոդվածը նվիրված է ապրիլյան եղեռնի պատճառներին ու պատասխանատուներին: Հոդվածում առաջ է քաշվում այն միտքը, որ ինչ էլ եղած լինի հայերի հանցանքը թուրքերի հանդեպ, ինչ սխալներ էլ, որ գործած լինեն հայ քաղաքական գործիչները, ինչ դժվարություններ և նեղություններ էլ պատճառած լինեն թուրքերին, ինչ ընդվզումներ, վատություններ, նույնիսկ դավաճանություններ կատարած լինեն հայ անհատները կամ կազմակերպությունները թուրքական պետության հանդեպ, միևնույն է, հնարավոր չէ որևէ արդարացուցիչ պատճառ ցույց տալ հայ ժողովրդի ամբողջությունը բնաջնջելու դիտավորությունը հետապնդող քաղաքական ոճրին, որ թուրքերը գործադրեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հեղինակի կարծիքով Եղեռնի հիմնապատճառը

[1] Նշվ. աշխ., էջ 11—72:
[2] Նշվ. աշխ., էջ 72—154:

հետևյալ մտայնությունն է. «Օսմանյան կայսրության մեջ հայերը կկազմեն կայսրության և պետության գոյությունը վտանգի ենթարկող տարր մը: Կարելի չէ երկիրը և պետությունը պահել, թուրքերուն զարգացումը և զորացումը ապահովել, որքան ատեն հայեր կբնակին երկրին մեջ և իրենց աշխատանքով, գործունեությամբ երկրին իրական տերը դառնալու դիրքին վրա կգտնվին: Առանց հայերը բնաջնջելու կարելի չէ թուրքերու կյանքը և զարգացումը ապահովել»[1]: Նա գտնում է, որ Բեռլինի դաշնագիրը հայ-թուրքական հարաբերությունների արմատական հեղաշրջման սկզբնավորում եղավ, որից հետո հայերը հռչակվեցին իբրև խային միլլեթ (ապերախտ ազգ): Երկրորդ գլխավոր պատճառը Լ. Չորմիսյանը համարում է Հայկական հարցը արմատապես և վերջնականորեն լուծելու անհրաժեշտությունը:

Քննարկելով Եղեռնի պատասխանատուների հարցը, նա գտնում է, որ եթե այդ ծրագրի պատրաստումը ամբողջապես իթթիհատական պարագլուխների մտահղացումն է, ապա դրա իրականացմանը մասնակցել է թուրք ժողովուրդը գրեթե ամբողջությամբ, մի քանի անհնշան բացառություններով:

Հաջորդ հոդվածը Լևոն Վարդանիանն է, որտեղ պատմվում է ցեղասպանության ծրագրման ու նախապատրաստության, իթթիհատականների հրեշային մտայնության ու գործելակերպի մասին[2]:

Հոդվածին հետևում է բաղդատական տեղեկագիր՝ Օսմանյան կայսրության մեջ բռնագաղթից առաջ և հետո հայ բնակչության մասին ըստ վիլայեթների: Տվյալները վերցված են Պոլսի Հայոց պատրիարքարանի արխիվներից, իսկ տեղեկագիրը կազմված է գիտադարի ժամանակ:

Հաջորդ՝ Գրեկերի (Գրիգոր Կերկերյան) հոդվածը նվիրված է «Մեծ ոճիրը» գրքի (Բոստոն, 1921) հեղինակ Արամ Անտոնյանի հրատարակած թուրքական պաշտոնական վավերագրերին: Մանրակրկիտ հետազոտությունների, փաստաթղթերի բաղդատման, թարգմանությունների ու բնագրերի համադրման հիման վրա հեղինակը գալիս է այն անվարան եզրակացության, որ Արամ Անտոնյանի հրատարակած թուրքական պաշտոնական վավերագրերը անտարակուսելիորեն վավերական են:

[1] Նշվ. աշխ., էջ 156:
[2] Նշվ. աշխ., էջ 178—215:

Պրոֆեսոր Մանասե Սևակի «Գերմանա-թուրք եղբայրակցության դավադրությունը և հայասպանության ներքին ծալքերը» հոդվածում, որի տվյալները վերցված են շվեյցարացի պատմաբան Ս. Յուրլինգենի՝ պատմագրության վերաբերյալ երկհատոր աշխատության համապատասխան գլուխներից, բացահայտվում է կայսրական Գերմանիայի պետական, քաղաքական, դիվանագիտական գործիչների և զինվորականության խաղացած քատմնելի դերը հայերի ցեղասպանության կազմակերպման և իրականացման գործում:

Հուշամատյանի հաջորդ՝ «Ջարդերը շրջան առ շրջան» գլխում զետեղված են հոդվածներ Բյութանիայի, Յոզղաթի, Կեսարիայի, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի, Տարոնի, Կարինի, Տրապիզոնի, Կիլիկիայի և այլ շրջաններում տեղի ունեցած ջարդերի, հայ հոգևորականության և մտավորականների նահատակության մասին:

Գլխի վերջում ներկայացված է դահճապետ Թալեաթի և այլ մարդասպանների հեռագիր-հրահանգների հավաքածու, որոնք Եղեռնի անմիջական իրականացման վերաբերյալ անհերքելի ապացույցներ են:

«Հուշագրական» գլուխը պարունակում է սահմռկեցուցիչ պատառիկներ վերապրողների հուշերից:

«Գրական» բաժնում ներկայացված են շուրջ քսան հեղինակների՝ Եղեռնին նվիրված գեղարվեստական գործերից հատվածներ:

«Գոյամարտ» բաժինը առանձին-առանձին պատմում է Վանի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Ուրֆայի հերոսամարտերի մասին:

Հուշամատյանի վերջին՝ **«Վկայություններ... Ուրացումներ...»** գլուխը հատկացված է օտար հեղինակների Ջեյմս Բրայսի, Առնոլդ Թոյնբիի, Ուինստոն Չերչիլի, Անդրե Մանդելշտամի, Եվգենի Տարլեի, Հենրի Մորգենթաուի, Հերբերտ Գիբոնսի, Ռենե Պինոնի, Յոհաննես Լեփսիուսի, Ֆրիտյոֆ Նանսենի աշխատություններից քաղված վկայություններին, ինչպես նաև թուրք պատմաբանների ենթագիտումներին[1] և ուրացումներին:

Հատորում զետեղված են շուրջ 400 նկարներ ու քարտեզներ:

Եղեռնի կեսդարյա տարելիցին է նվիրված Համազգայինի հայրենակցական միության «Վարագ» պարբերաթերթի բացառիկը[1]: Հատորի «Մեծ եղեռն» բաժինը ընդհանուր է Եղեռնի վերաբերյալ համառոտ տեսություն, տեղեկություններ հատուկ մտավորականների մասին, Թալեաթի, Էնվերի, Հիլմի փաշայի, Ջեմալի, Խալիլ փաշայի, Շաքիրի, Ազմիի, Պետրի բեյի և այլոց անհաբեկումների պատմությունը, հատվածներ իթթիհատական կառավարության՝ «Լքյալ գույքերու մասին» օրենքից, որը թույլատրում էր տարագրված ու բնաջնջված հայության գույքի թալանն ու կողոպուտը, և այլ նյութեր:

Երկրորդ՝ **«Հերոսամարտ»** բաժնում զետեղված են նյութեր Վասպուրականի հերոսամարտի մասին, որոնցում հատկապես հետաքրքրական են Վանի ինքնապաշտպանության Զինվորական մարմնի քարտուղար Օննիկ Միսիթարյանի օրագրից կատարված քաղվածքները և Քաղաքամեջի զինվորական մարմնի ղեկավար Հայկակ Կոսոյանի՝ «Մեր զինապայքարի 50-ամյակի առթիվ» հոդվածը:

***

Սփյուռքահայ եղեռնագիտության մեջ իր նշանակությամբ առանձնանում է Հայկազն Ղազարյանի ստվարածավալ մենագրությունը[1], որը լույս է տեսել Սիմեոն Վրացյանի առաջաբանով: Այդ ինքնատիպ ու նշանակալից աշխատության հեղինակը մի քանի տասնամյակներ աշխատակցել է սփյուռքահայ մամուլին, մասնավորապես Ամերիկայի «Հայրենիք»-ներին և իր կյանքի գլխավոր նպատակն է դարձրել փաստերի ու թվերի հիման վրա ներկայացնել ցեղասպան Թուրքիան ու թուրքերին: Ճակատագրորեն Հ. Ղազարյանը մեկն է Եղեռնից փրկվածներից, որի գերդաստանը՝ պապերը, տատերը, ծնողները, հինգ եղբայրներն ու քույրը, զոհ են գնացել սպանդին: Ծնվել է նա 1892-ին, Սեբաստիայում, պատանեկան տարիներից անդամագրվել է դաշնակցությանը, ստացել իրավաբանական, ապա զինվորական կրթություն, իրրև սպա ծառայել է նախ թուրքական, ապա երեք տարի՝ անգլիական բանակում:

Նշանակում ստանալով անգլիական ծովային հրամանատարության կենտրոնում, որը տեղավորված էր Պոլսի թուրքական ծովային նախարարության շենքում, Հ. Ղազարյանին աներևակայելի ադիթ է ներկայանում այդտեղ ծանոթանալ մի շարք փաստաթղթերի, որոնք վերաբերում են հայերի հալածանքին, հայ սպաների ու զինվորների տարագրությանն ու սպանությանը, նրանց ընտանիքների ոչնչացմանը, հայ

[1] Վարագ բացառիկ, նվիրված Մեծ եղեռնի և Վանի հերոսամարտի 50-ամյակի տարեդարձներուն, Բեյրութ, 1965:

[1] Հայկազն Ղազարեան, Ցեղասպան Թուրքը, տպարան Համազգային, Բեյրութ, 1968, 424 էջ:

պաշտոնյաների արտաքսմանը, հայերի տների բռնագրավմանը: Թուրքական արխիվներում նա հայտնաբերում է նաև չափազանց կարևոր միջնախարարական շրջաբերականներ:

Ծառայությունից հետո հաստատվելով Ամերիկայում, Հ. Ղազարյանը շուրջ 30 տարի աշխատակցում է «Հայրենիքին», որտեղ շարունակաբար հոդվածներ է տպագրել Եղեռնի մասին՝ լայնորեն օգտագործելով իր ձեռքը ընկած վերոհիշյալ վավերագրերը: Հենց այդ հոդվածներն էլ կազմում են հիշյալ մենագրության հենքը:

Աշխատության 27 բաժիններում Հայկազն Ղազարյանը ցուցադրում է Եղեռնի ամենատարբեր դրվագներ՝ թուրք զարդարարական մեքենայի զորախմբերի կազմակերպումը, Տրապիզոնի, Սեբաստիայի, Խարբերդի, Անկարայի, Նիկոմիդիայի, Բյութանիայի, Պրուսայի, Ադանայի, Տիգրանակերտի, Բաբերդի նահանգներում տեղի ունեցած տեղահանությունները ու ջարդերը, Շապին- Գարահիսարի հերոսամարտը, հայ եկեղեցական և կրթական գործիչների կոտորածը, հայերի լքված գույքի ու կայքի թալանը և այլն: Մենագրության մեջ հրապարակված են կարևորագույն գաղտնի փաստաթղթեր, ջարդարարական ժողովների արձանագրություններ, չորս մեծ պետությունների խորհրդի գաղտնի նիստերի արձանագրությունները և այլ վավերագրական նյութեր: Քննարկվում են իթթիհատի և թուրքական մյուս կուսակցությունների փոխհարաբերությունների, Մալթա աքսորված ոճրագործների, վեց հայ պետական երեսփոխանների սպանության հարցերը:

Մենագրությունն ավարտվում է «Ցեղասպան թուրքը» վերտառությամբ բաժնով, ուր ամփոփ ձևով ներկայացվում են մեծ ոճրի պատասխանատուները և հանրագումարի բերվում հայ ժողովրդի կորուստները:

Եղեռնի պատասխանատուները խմբավորվում են չորս հիմնական աստիճանների և 18 ենթախմբերի մեջ: Առաջին աստիճանի ոճրապարտ է հռչակվում Իթթիհատի ողջ կազմակերպությունը, որի ավերիչ մտայնությամբ շատ քիչ բացառությամբ շաղախված էին գրեթե բոլոր թուրքերը. հեղինակի պնդմամբ, նույնն շրջանին, ցեղասպանությանը մասնակցել են թուրք ազգաբնակչության 66—75 տոկոսը:

Ոճրի երկրորդ աստիճանի պատասխանատուներ են դիտվում Թուրքիայի և Գերմանիայի պետական պաշտոնյաների մեծագույն մասը: Երրորդ աստիճանին կանգնեցվում են ջարդի գաղափարական քարոզիչները՝ գրողներ, լրագրողներ, թերթերի խմբագիրներ, իսկ չորրորդ աստիճանը հատկացվում է իթթիհատի հակառակորդ քեմալականներին ու որոշ մեծ պետությունների:

Համաձայն հեղինակի ամփոփագրի, 1915-ի գարնանից մինչև 1918-ի հոկտեմբերի 30-ի զինադադարը, ցեղասպանությունը գործադրվել է 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ բնակչության նկատմամբ, կողոպտվել ու քանդվել են 2000 եկեղեցիներ, հազարավոր տներ ու ագուրականներ: Սպանվել են 300 000 տղամարդիկ, 400 000 կանայք, 400 000 մանուկներ, 250 000 հարսներ ու աղջիկներ, 100 000 զինվորներ, ընդամենը՝ մեկ միլիոն չորս հարյուր 50 հազար մարդ: Նյութական կորուստների ընդհանուր գումարն է հինգ միլիարդ դոլլար:

Մեղադրելով մեծ տերություններին հայ ժողովրդի անլուր ողբերգության նկատմամբ ցուցաբերած քար անտարբերության համար, պատմաբանը գիրքն ավարտում է հետևյալ խոսքերով. «Եվ մեկ ու կես միլիոն հայկու դիակին հաշիվը բաց կմնա տակավին որպես հավիտենական ամոթ մը «քրիստոնյա», «հաղթական» պետությանց ճակատին»[1]:

Նոր սերնդի հիշողության մեջ Եղեռնի սարսափները և հայ նահատակների հիշատակը մշտավառ պահելու նպատակառուղղվածություն ունի **Ներսես Շիրինյանի** պատմահուշագրական գիրքը[2]: Ականատեսի գրչով գրքում պատմվում է պատերազմն սկսվելու, հայերի տարագրության և անլավոր կոտորածների մասին:

Իթթիհատականների ոճրապարտ ծրագրի մերկացմանն է նվիրված **Ա. Ամուրյանի** «Հայ դատ» (Բեյրութ, 1977) գրքից քաղվածաբար հրատարակված գրքույկը[3]: Այստեղ ընդարձակ մեջբերում է հրատարակված 1910 թ. հոկտեմբերի 13-ին Սալոնիկում բացված «Իթթիհադ վե թերաքգը» կուսակցության 13 օր տևած համագումարում դոկտոր Նազըմի արտասանած ճառից, որը հանգում է «Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ» եզրակացությանը: Վերլուծելով դոկտոր Նազըմի ճառը և իթթիհատի ընդունած համապատասխան որոշումը, Ա. Ամուրյանը ընդհանրացնում է, որ դա կանխամտածված ու պետության քաղաքականության աստիճանի բարձրացված ծրագրված ցեղասպանություն էր:

---

[1] Նշվ. աշխ., էջ 421:

[2] Ներսես Շիրինյան, Անդունդեն դեպի բարձունք, Բեյրութ, 1974:

[3] Ա. Ամուրյան, Կանխամտածված և նախօրոք ծրագրված ցեղասպանություն, Թեհրան, 1979:

Գրքույկի վերջում Ա. Ամուրյանը մեջ է բերում ապրիլյան եղեռնի առնչությամբ մի կարևոր վկայություն, որը պատկանում է ֆրանսիացի պատմաբան և բանասեր Շառլ-Անդրե Ժյուլիենին: Ութսունչորսամյա պատմաբանը իր ռադիոելույթներից մեկում վկայել է, թե ինչպես ինքը, Ռուսաստանում գտնված ժամանակ, 1921-ին, հանդիպել է այստեղ ժամանած Էնվեր փաշային ու հարցրել. «Դուք չէի՞ք, որ ղեկավարեցիք կամ վարեցիք հայերի ջարդը»: Էնվերը պատասխանել է. «Գիտե՞ք, շատ չափազանցեցին, 150—160 հազար ջարդվեցին միայն»: Շ. Ժյուլիենի մոտ առաջանում է այն զգացողությունը, թե նա շան կամ շնագայլի մասին էր խոսում ու նայելով այդ ճիվաղին, մտածում, որ նրա վիզը շատ հարմար է գիլյոտինի համար:

***

Սփյուռքահայ պատմագրության գեղեցիկ ձեռքբերումներից է «Ազդակ» օրաթերթի հրատարակությամբ լույս ընծայված «Հերոսապատում Մեծ եղեռնի» ժողովածուն, որը վկայություն է երիտթուրքերի ծրագրած պետական ոճրի դեմ ծառանալու հայկական դյուցազնամարտի մասին[1]:

Ինչպես նշվում է առաջաբանում, գրքի նպատակն է եղեռնի և սուգի աճավորությունը ներկայացնելու փոխարեն ցնծերցողին, հատկապես հայ երիտասարդությանը, հաղորդակից դարձնել չխոնարհված եղեգների հերոսապատումին, որովհետև հայասպանության սև և քաղցմնեղի թղթածրարը միայն խոց ու վիրավորանք պիտի փոխանցեր սերունդներին, եթե Տարոնի աշխարհից մինչև Վան և Մուսա լեռից մինչև Ուրֆա և Շապին-Գարահիսար հայկական դյուցազներգության նոր էջեր չգրվեին:

Ջարգացվում է այն ուշագրավ միտքը, որ եթե մինչև Եղեռնի 50-ամյակը ամեն ապրիլի հայության նոր սերունդներին էր փոխանցվում Սև թվականի աճավորությունը, և հային մնում էր չմոռանալ իր նահատակներին ու հարգել սուգը, ապա Եղեռնի հիսնամյակին իր վերքերը կապած հայությունը դուրս ելավ իր եկեղեցիներից ու ակումբներից՝ սգաճանդեսի փոխարեն իր ազգային իրավունքներին տեր կանգնելու, թուրքերից հաշիվ պահանջելու և արդարությունը հաստատելու համար: Իսկ երբ հասավ Եղեռնի վաթսունամյակը, ընդիրագործվեց հայերի միասնական պահանջատիրությունը, երբ նրանց խիտ շարքերը բողոքի ցույց կատարեցին ամբողջ աշխարհում՝ թուրքական գրավումի տակ տառապող իրենց հողերի վերատիրացման վճռական պահանջը առաջադրելով:

Ժողովածուն սկսվում է Նազարեթ Պերպերյանի «Փշոտ դափնեպսակ» ուսումնասիրությամբ, որտեղ փորձ է արվում անկողմնակալ պատասխան տալ այն հարցին, թե ինչու 1915-ի հայկական հերոսամարտը չունեցավ ընդհանուր, համակարգված ու կազմակերպված բնույթ: Հեղինակն իրեն քննարկվելիք հիմնահարցի գլխավոր եզրեր՝ առանձնացնում է իթթիհատականների հետ համագործակցության, սահմանադրության շրջանում հայ կյանքի ներսում ստեղծված նոր պայմանների և հայ կամավորական գնդերի կազմակերպման հարցերը: Նրա կարծիքով, 1908-ից առաջ տիրող պայմանների համեմատ 1915-ին ավելի ձեռնտու կացություն գոյություն ուներ ընդհանուր ինքնապաշտպանություն ձեռնարկելու համար, սակայն հայ հեղափոխական կուսակցությունները և, մասնավորապես, Դաշնակցությունը, չպարզեցին ընդհանուր դիմադրության դրոշը: Ինչո՞ւ: Նա գրում է, որ անտեսելով կայացած գոյամարտերում դաշնակցական մարտիկների և ղեկավարների տիրական դերը, հայ քաղաքական մտածողության մեկ թևը՝ հանձին խորհրդահայ պատմագրության (պրոֆ. Ջ. Կիրակոսյան և ուրիշներ), Դաշնակցության վրա է բարդում ինքնապաշտպանության ծրագրի չդիմելու հանցանքի ողջ պատասխանատվությունը[1]: Այդ հարցում ինքնաքննադատական մոտեցում են ցուցաբերում նաև դաշնակցական որոշ գործիչներ՝ Կոմս, Ռուբեն, Մ. Վարանդյան, Ս. Վրացյան, որոնք դաշնակցական հեղափոխականի խստապահանջությամբ ընդունում են, որ իրենք չկարողացան տեր կանգնել ստեղծված աճավոր կացությանը: Սակայն հեղինակի կարծիքով այդ երկու մոտեցումներում էլ ճիշտն այն է, որ 1914-ին միայն Դաշնակցությունը կարող էր իրագործել Արևմտահայաստանի ընդհանուր ապստամբությունը և կազմակերպված ինքնապաշտպանությունը, բայց ոչ մի ճշմարտություն չկա դրան հետևող այն ամբաստանության մեջ, թե Դաշնակցության ղեկավարությունը խուսափեց այդ պարտավորությունից:

Փորձելով պարզաբանել իրական պատճառները, մեր կարծիքով, ոչնչով չհիմնավորված տեսակետ է արտահայտում հեղինակը, գրելով, թե հայապահպանության հետ կապված բոլոր հարցերի բանալին գտնվում է նրանում, որ նույնիսկ համիդյան ջարդերը և 1909-ի աղետը տեսած

[1] Հերոսապատում Մեծ եղեռնի, Պեյրութ, 1978:

[1] Նշվ. աշխ., էջ 15—16:

հայությունը չէր կարող նախատեսել գալիք ցեղասպանությունը, որովհետև միջազգային արդի պատմության իսկ չափանիշով՝ աննախընթաց ու աննախատեսելի էր թուրքերի ծրագրած ոճիրը:

Հեղինակի կարծիքով երկրորդ գլխավոր պատճառը անկախ Հայաստանի իրականացման ճանապարհին հայության ցուցաբերած ծայրահեղորեն զգույշ և պահպանողական կեցվածքն էր, և հայ ժողովուրդը շատ սուղ գին վճարեց այդ զգուշավորության համար: Հոդվածագրի պնդմամբ հայ պահպանողականությունը՝ կղեր և ազգային իշխանություն, համիդյան կոտորածների ողջ պատասխանատվությունը բարդեցին Դաշնակցության վրա, և վերջինս այդ ճնշման տակ հարկադրված էր ձվազագույնի հասցնել իր քաղաքական պահանջները և միայն 1919-ին կարողացավ հայտարարել իր վերջնական նպատակը՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան: Նա հայ պահպանողականությանը մեղադրում է նաև 1909-ի հայտնի դեպքերից հետո, երբ պահպանողական քարացած մտայնությունը դեմ էր դուրս գալիս հեղափոխական կռվի վերադարձին: «Այո,— հաստատագրում է հեղինակը,— հայ ժողովուրդը մեղքի բաժին մը ուներ հայասպանության ծրագրի անարգել գործադրության մեջ, և այդ մեղքը կուգար 1878-են իսկ, որովհետև արտաքին թե ներքին աննպաստ պայմաններու դասավորումով՝ հայ ազատագրական շարժումը պարտադրաբար շատ զգույշ շարժեցավ և Անկախ Հայաստանի պահանջով ամբողջական ճակատումի չդիմեց Օսմանյան պետության դեմ»[1]: Ավելին, հեղինակը պնդում է, որ 1908—1914 թվականներին Դաշնակցության ուժերը սպառվեցին պահպանողականության դեմ պարտադրված պայքարում, երբ հայկական դպրոցներից, ազգային իշխանություններից և ընդհանրապես հայկական ազգային միջավայրից դուրս էր մղվում հեղափոխական ամեն շունչ:

Շարունակելով պատճառների թվարկումը, նա 1915-ի հերոսամարտերի կազմակերպված չլինելն ու ընդհանուր դիմադրության բնույթ չունենալը բացատրում է նաև նրանով, որ թուրքը իր մահացու հարվածը տվեց պատմական աննախատեսելիորեն պատեհ րոպեին: Դաշնակցության գաղափարախոսը չի խորշում խոստովանել, որ Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունը, 1914-ի հունվարին կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը, առաջին աշխարհամարտում Թուրքիայի և Ռուսաստանի իրար դեմ պատերազմի մեջ մտնելը եղան այն-

[1] Նշվ. աշխ., էջ 22:

պիսի անակնկալ իրադարձություններ, որ հայությունը իր ազգային թե հեղափոխական ղեկավարությամբ հազիվ թե կարողացավ համընթաց քայլել քաղաքական դեպքերի զարգացման հետ: Ակամայից մտածում ես՝ շատ չե՞ն, արդյոք, անկանխատեսելիությունները, անսպասելիություններն ու անակնկալությունները ազատագրական շարժման առաջապահ կուսակցության գործիչների համար: Մեր կարծիքով, ցավոք, շատ են:

Հեղինակը ավելացնում է նաև, որ թեև 1914-ի հուլիս-օգոստոսին Կարինում տեղի ունեցած Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը քննեց պատերազմի ընթացքում ինքնապաշտպանության դիմելու հարցը, այդուհանդերձ, չկարողացավ քաղաքական հստակ որոշումներ կայացնել պատերազմի ընթացքում հայության որդեգրելիք կեցվածքի մասին: Ճիշտ է, ընդհանուր ժողովի դաշնակցական ղեկավարները մերժեցին իթթիհատի պարագլուխների պահանջը՝ Ռուսաստանի դեմ մղելիք պատերազմին թուրքական բանակին հայկական կամավորական գնդեր տրամադրելու մասին, բայց այդ մերժումը միաժամանակ քաղաքացիական հավատարմություն էր թելադրում արևմտահայությանը: Այնպես որ «Դեպքերու այդ արագ հոլովույթին մեջ հայությունը ներկայացավ առաջին աշխարհամարտին իրողապես առանց քաղաքական հստակ որոշումի, որուն հետևանքով հայկական յուրաքանչյուր շրջան ինք տնօրինեց իր ճակատագիրը»[1],— ամփոփում է նա:

Նազարեթ Պերպերյանը չի վարանում նաև խոստովանել մեկ ուրիշ սխալ հաշվարկի մասին: Նա գրում է, որ 1914-ի վերջերին, երբ արդեն ակնբախ էր, որ թուրքը պիտի օգտվեր պատերազմական իրադրությունից՝ հայկական պահանջներին վերջ դնելու համար, տիրապետող մնաց այն մտայնությունը, որ Իթթիհատը պիտի բավարարվեր հայության գլխատումով միայն, այսինքն իր հարվածը պիտի ուղղեր Դաշնակցության ղեկավարների, եկեղեցական և ազգային անվանի գործիչների դեմ, և վերջիններս էլ պատրաստ էին ինքնակամ զոհ գնալ յաթաղանին՝ ժողովուրդը փրկելու նախանձախնդրությամբ: Սակայն այդ մտայնությունը միայն դյուրացրեց թուրքի գործը՝ գլխատված զոհի տեղահանությունն ու բնաջնջումը իրականացնելու համար:

Այս տեսանկյունով էլ նա բացատրում է Տարոնի ինքնապաշտպանության ձախողանքը, որի ղեկավարները իրենց կյանքով վճարեցին այն համոզման գինը, թե թուրքը պիտի հարվածեր միայն ըմբոստ

[1] Նշվ. աշխ., էջ 24:

տարրերին և ոչ թե անգեն ժողովրդին: Այդ համոզումով էլ Ռուբենն ու իր գործակիցները Սասուն քաշվելով և ապստամբության դրոշ պարզելով, հույս ունեին, որ թշնամին պիտի աշխատի Սասունը ճգմել: Մինչդեռ թուրքերը նախ կոտորեցին Մշո դաշտի հայությանը և նոր միայն հարվածը կենտրոնացրին Սասունի վրա:

«Մեծ եղեռնի ներոսապատումը ընդհանրական չեղավ,— ընդհանրացնում է Ն. Պերպերյանը,— որովհետև հայ ժողովուրդը կհավատար թուրքին հետ խաղաղ գոյակցության՝ իբրև ազգային անջատ, բայց դրացի միավորներ: Սակայն հայասպանության փաստը արդեն իսկ աճավոր գին էր մեր ժողովրդին համար, որպեսզի վերջնական և անխախտ համոզում դարձնէ այն, որ թուրքը,— օսմանցի, իթթիհատական թե քեմալական— միշտ ունի հայաջնջումի իր ծրագիրը և կսպասէ հարմար պատեհության»[1]:

Գրքի հաջորդ նյութը Սարգիս Մահսերեճյանի «Վանի ապրիլյան ինքնապաշտպանությունը կամ ազատ Հայաստանի նախաքայլը» ուսումնասիրությունն է:

Վանի նահանգի մասին ճամտոտ պատմական տեղեկանք տալուց հետո հեղինակը մանրամասնորեն պարզաբանում է նախապատերազմական իրավիճակը, Ա. Վոսմյանի, Իշխանի զոհվելը և Արամ Մանուկյանի՝ ինքնապաշտպանության գլուխ անցնելը: Ապրիլի 5-ին նա հրավիրում է երեք կուսակցությունների ղեկավարների ժողով, որտեղ կազմվում է Զինվորական մարմին՝ նախկին ֆիդայիներ Կայծակ Առաքել (դաշնակցական), Պուլղարացի Գրիգոր (դաշնակցական) և Արմենակ Եկարյան (Արմենական, ապա՝ Ռամկավար): Զինվորական մարմինը պատրաստում է ինքնապաշտպանության հատակագիծ, Այգեստանը բաժանում 7 շրջանների և 73 դիրքերի՝ իրենց շրջանապետերով ու դիրքապետերով: Զինվորական ուժն էր 1053 զինվոր: Տեղեկատու մարմինը գրանցում է 505 հրացան՝ 75,000 փամփուշտով, 550 ատրճանակ՝ 39,000 փամփուշտով, որոշ քանակությամբ վառոդ և մի քանի ռումբ: Նրանց դեմ կանգնած էին 6 հազարանոց կանոնավոր զորագունդ, որը հետո պիտի կրկնապատկվեր, 12 թնդանոթ և թուրք ու քուրդ խուժանը: Ապրիլի 6-ին կառուցվեցին երեք շերտ պաշտպանական ամրություններ, և ապրիլի 7-ին վանեցիները կազմ ու պատրաստ էին: Նկարագրվում են ապրիլի 7-ի մարտական գործողությունները, ամրաշենների խմբի ստեղծումը: Նկարագրվում է նաև Գր. Բուլղարացու հնարամտությամբ Համուդ աղայի զորանոցի հրկիզումը, որը մինչ այդ կատարյալ պատուհաս էր հայկական դիրքերի համար:

Կռիվները շարունակվեցին մինչև ապրիլի 16-ը, և, Զինվորական մարմնի հաղորդագրության համաձայն, առաջին 10-օրյակի արդյունքները գոհացուցիչ էին: Հեղինակը նկարագրում է նաև առօրյա ներոսությունների մի քանի բնորոշ օրինակներ: Կարևոր գործ էր փամփուշտի արհեստանոցի ստեղծումը, որտեղ օրական 2000 փամփուշտ էր լցվում: Հիմնվում են նաև վառոդի արտադրության և զենքի վերանորոգման արհեստանոցներ[1]:

Հեղինակի վկայությամբ հայերի համար օրհասական և ամենավճռական օրը եղավ ապրիլի 21-ը: Առավոտ վաղ սկսեցին որոտալ թուրքերի բոլոր հրանոթները, որից հետո կանոնավոր բանակը և խուժանը անցան հարձակման: Դիրքից դիրք էր շրջում նվագախումբը և ոգևորում մարտիկներին: Այդ օրը իր տարերքի մեջ էր Արամ Մանուկյանը, որը դիրքից դիրք էր անցնում: Ցուրաքանչյուր դիրքի տասնյակ մարտիկները պետք է կասեցնեին հարյուրավորների գրոհը: Թուրքերին այդպես էլ չհաջողվեց որևէ տեղ կտրել ինքնապաշտպանության շղթան: Հեղինակն այն միտքն է հայտնում, թե հայերի գործը շատ հեշտացրեց խուժանը՝ իր խուճապային փախուստով վարակելով թուրք զինվորներին:

Ապրիլի 21-ից հետո Զևդեթը որոշեց սովաձար անել վանեցիներին: Սկսվեցին համաճարակներ, որոնց դեմ պայքարում էր Կարմիր Խաչի խումբը: Սկսվեց գաղթականների ներհոս, որը բարդացրեց պարենային վիճակը:

Հեղինակը նշում է, որ ապրիլի 28-ը եղավ թուրքական ընդհանուր հարձակման վճռական օրը, որը նույնպես հետ մղվեց:

Այնուհետև հեղինակն անցնում է Վան-Քաղաքամեջի իրադարձությունների նկարագրությանը: Պատմվում է Զևդեթի հետ հայոց առաջնորդական տեղապահ Եզնիկ ծ. Վրդ. Ներկարարյանի անհաջող բանակցությունների, 7 դաշնակցականներից կազմված Զինվորական մարմնի ստեղծման մասին: Այստեղ կային 4 շրջաններ և 20 դիրքեր: Ունեին 90 մաուզեր, 100 հրացան, 20 ատրճանակ, 60 հազար փամփուշտ: Խզված էր կապը Այգեստանի հետ:

Այնուհետև մանրամասնորեն նկարագրվում են մարտական գոր-

[1] Նշվ. աշխ., էջ 27:

[1] Նշվ. աշխ., էջ 75:

ծողությունները: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի մեջբերումները վենեսուելացի զինվորական Ռաֆայել դը Նոգալեսի հուշերից: Նա Վանի կռիվների առաջին օրերից ստանձնել էր բերդի սպայակույտի պետի պաշտոնը և ղեկավարում էր թուրքական զորքերի մարտական գործողությունները: Վենեսուելացի զինվորականը պատմում է թուրքական կառավարության՝ հայերի հանդեպ գործադրած վայրագությունների, ջարդերի, գյուղերի կողոպուտի մասին: «Հայոց դիմադրությունը աճեղ էր,— գրում է նա,— և քաջությունը՝ ամեն գովեստի արժանի: Մեր զորքերը, որ կետեն որ հառաջ անցնիլ փորձեին, ուղիղ ու սաստիկ կրակ մը կդիմավորեր զանոնք: Ամեն մեկ տուն ամրոց մըն էր, զոր հարկ էր առանձին նվաճել»[1]:

Հեղինակը նշում է, որ Վանի կռիվների վերջին օրը դարձավ մայիսի 3-ը, հաջորդ օրը հայտնի դարձավ թուրքերի փախուստի մասին, իսկ մայիսի 5-ին Վան մտան դաշնակցական Խեչոյի, երեկոյան՝ Դրոյի կամավորական գնդերը, իսկ 6-ին՝ գեներալ Նիկոլաևը: Մայիսի 7-ին Արամը նշանակվեց Վանի շրջանի ռահանգապետ: Նրա ջանքերով կազմակերպված Վանի ռահանգը, չնայած ընդամենը 70-օրյա գոյությանը, հեղինակը գնահատում է իբրև անկախ Հայաստանի իսկական կորիզ, նախաքայլ դեպի անկախություն:

Ս. Մահսերեճյանի ուսումնասիրությունն ավարտվում է անհրաժեշտ ծանոթագրություններով, ինչպես նաև Նժդեհի և Ռուբենի՝ Վանի հերոսամարտին տված բարձր գնահատականներով:

Աշխատության հաջորդ նյութը Շահանդուխտինն է՝ «Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը (1915, հունիս 2—28)» վերնագրով: Այն բացվում է Շապին-Գարահիսարի և շրջակա 40 հայկական գյուղերի վիճակագրական տախտակով, որում նշված են գյուղերի եկեղեցիների անունները, տների քանակը, բնակչության թիվը: Պատմագիտական առումով որոշակի արժեք է ներկայացնում պատմական հակիրճ ակնարկը Շապին-Գարահիսարի աշխարհագրական, սոցիալական և ազգային կյանքի մասին: Տեղեկություններ են հաղորդվում պատմական հեռավոր անցյալի, ապա 1890-ական թվականների ազատագրական խմորումների, հայդուկային խմբերի կազմավորման մասին, տրվում են խմբապետ Ռուբեն Շիշմանյանի (Քեռի), Ղուկաս Դովլաթյանի (Ղուկաս Աղբար), Վարդան Շահինյանի, Դանիել Չաուշի, Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Հարություն Շահրիկյանի, Սահրատի,

[1] Նշվ. աշխ., էջ 91:

Հայկ Տերտերյանի, Գրիգոր Ղարիբյանի (Հրաչյա Մարալ) և այլոց անունները: Հեղինակի պատմական ատաղձն է եղել շապինգարահիսարցի Արամ Հայկազի «Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը» օրագրային բնույթի հուշագրությունը:

Հեղինակը կարևոր նշում է անում այն մասին, որ շապինգարահիսարցի գործիչները թերահավատորեն էին վերաբերվում օսմանյան սահմանադրությանը և ինքնապաշտպանության էին նախապատրաստում երիտասարդությանը: Գ. Վաճունին ազատագրական ոգի էր հաղորդում երիտասարդությանը, իսկ Ղուկաս Աղբարը (Դովլաթյան), որը հետագայում դարձավ Շապին-Գարահիսարի հերոսամարտի ոգին, Բալկանյան պատերազմի շրջանում անցնում էր գյուղից գյուղ և բոլորին լսելի դարձնում նոր կարգախոսը. «Ծախել շապիկները՝ զենք գնելու համար»:

Նկարագրելով պատերազմի սկիզբը, հեղինակը նշում է, որ զորակոչվեցին 400 շապինգարահիսարցի երիտասարդներ, իսկ այնուհետև սկսվեց բնակչության քողարկված կողոպուտը: Մեր կարծիքով փաստագրորեն չի հաստատվում հեղինակի այն պնդումը, թե Բաբերդ և Երզնկա ուղարկված 400 զինվորագրված երիտասարդները բոլորն էլ դասալքել և վերադարձել ու թաքնվել էին իրենց տներում, և կառավարությունը նրանց և զենք հայտնաբերելու համար էր, որ մասսայական խուզարկություններ էր կատարում, բայց ապարդյուն[1]:

Նշվում է նաև, որ հերոսամարտից առաջ թուրքերը հիմնահատակ ավերեցին Բյուրք, Անդրեաս, Մշակնոց, Կթանոց, Այծպտեր, Սևհնտուք, Արդավիս, Զրախի, Պուսեիտ և Աներդի հայկական գյուղերը: Սեբաստիո կուսակալ Մուամմերի հրահանգով սպանվում է Ս. վարդապետ Օդաբաշյանը: Կառավարությանը հաջողվում է ձեռք գցել զենք ունեցողների ցուցակը և դրանք հայթայթողների անունները, ինչպես նաև կուսակցական ղեկավարների անունները՝ դաշնակցականներ՝ Վահան Հյուսիսյան, Համլակ Գարակոզյան, Հ. Մարկոսյան, հրնչակյաններ՝ Շապուհ Օզանյան, Ա. Տուրիկյան, Տ. Կարինյան, որոնք, սակայն, թաքնվում են: Թուրքերը նրանց փոխարեն ձերբակալում են մեծահարուստ Ն. Հյուսիսյանին, Ա. Թութունջյանին, Կարապետ Կարմիրյանին, Լևոն Գարակոզյանին և ուրիշների: Ձերբակալություններին հետևում է զենքի փնտրտուքը. հայ ղեկավարները թուրքերին են հանձ-

[1] Նշվ. աշխ., էջ 139—140:

նում որոշ քանակությամբ հնացած զենքեր: Այնուհետև դավադրությամբ թուրքերն սպանում են առաջնորդ Վ. ծ. վրդ. Թորիկյանին և անարգում նրա անթաղ մարմինը:

Շապինգարահիսարցիների համբերության բաժակը լցրեց բանից ազատված ավազակ Քելի Հասանը, որը 200 թուրք զինվորների գլուխ անցած՝ խուզարկում էր տները՝ քանդելով սալահատակները, տախտակամածները, առաստաղները՝ զինամթերք ու դասալիքներ որոնելու պատրվակով: Թուրքերը կոտրում էին գանձարկղերը, պահարանները, թալանում արժեքները, խոշտանգում կանանց ու երեխաներին: Նրանց լացն ու ճիչը լսող թաքնված հայ զինյալներն այլևս չդիմացան և քաղաքի Եկեղեցու թաղ, Բերդի թաղ, Միջին թաղ և այլ հայկական թաղերից կրակ բացեցին թուրքերի վրա: «Պետք էր հասկցնել թշնամիին,— գրում է հեղինակը,— թե հայ ժողովուրդը դյուրին ընկճվողը չէ, և թե՝ պիտի մեռնի պատվով: Այս վճռակամությամբ ամբողջ երիտասարդությունը կլծվի դիրքեր պատրաստելու աշխատանքին: Անոնք կպատրաստվեին կռվի, նույն ատեն հուսալով, որ իրենք առանձին չեն մնար իրենց պայքարին մեջ, և թե՝ **ազատագրական խմբերը օգնության կփութան հրաշքի թևով** (ընդգծումն իմն է— Մ.Կ.):

Կսպասեին Անդրանիկը, Մուրատը, որոնք չէին կրցած օգնության հասնիլ Գարահիսարին, որ միևնակը լեռներու կատարին պարզած էր կարմիր դրոշը, իբրև խորհրդանիշը թափվող հայ ծով արյունին ու հայ ընդվզումին...»[1]:

Կռիվն սկսված էր: Ողջ հայ բնակչությունը՝ 5062 հոգի, տեղափոխվեցին բերդ, որը կառուցված էր դեռ հռոմեական ժամանակներից: Նրանցից 1500-ը արական սեռի էին, իսկ կռվի ընդունակ՝ 250-ը: Կռիվների ղեկավարությունը հանձնվեց Ղուկաս Աղբարին (Դովլաթյան), կազմվեց Զինվորական խորհուրդ: Ժողովուրդը մի քանի ժամվա մեջ լավ ամրացված ամրոցի վերածեց բերդը: Կառուցվեցին 7 դիրքեր: Յուրաքանչյուր դիրքի տրամադրվեցին 8—25 հոգիանոց խմբեր՝ իրենց ղեկավարներով, տասնապետերով, հերթապահներով, պետերով ու փոխանորդներով: Բերդի բնակիչները երկու օրում սպառեցին Կանաչ գյուղերի նեխած ջուրը, և սկսվեց ջրի սոսկալի տագնապ: Մակայն քարերից մեծ դժվարությամբ մաքրվեց մի հին ջրհոր և որոշ ժամանակ ջուրը բավականացրեց: Բերդի պաշտպաններն ունեին 150 տանկական մաուզեր, 50 կարաբին և այնպու հրացաններ, հունական և բուլղարական հրացաններ, 40 հեծելազորի բազմահարված «Ֆելենտա» հրացաններ և 80 ձեռնառումբ, ինչպես նաև փոքր ատրճանակներ ու սրեր: Ղուկաս Աղբարի հրահանգն էր՝ ոչ մի փամփուշտ առանց նպատակի, ոչ մի ռումբ՝ առանց գոնե 5 թուրք սպանելու: Զինվորական խորհրդի հրահանգները կարճ էին և հատու՝ 1. Բացարձակ հնազանդություն խմբապետերին, 2. Կուսակցական վեճեր և խռովություններ հարուցող անձը կգնդակահարվի, 3. Ոչ ոք չպիտի հեռանա բերդից, 4. Խախտողներին տեղում մահապատիժ[1]:

Օրական 30 կանայք երկու քարայրներում 24 ժամվա ընթացքում թխում էին 8 հազար հաց: Սուղ էր վառելիքը, կրկին պակասեց ջուրը:

Սեբաստիայի կուսակալը մի հայ կնոջ միջոցով երեք անգամ հաշտության առաջարկ արեց՝ անձնատվության պայմանով, բայց մերժում ստացավ:

Այնուհետև Շահանդուխտը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հունիսի 20-ի արյունալի ու հուսահատ կռվի ողջ ընթացքը: Այդ օրը ոսոխը հարձակվում էր՝ «քայլող անտառների նման բարձրանալով դեպի բերդ»: Հայերն ստիպված էին մի կողմ դնել զինամթերքի խնայողության մտահոգությունը և միանվագ ու անդադար կրակել 5—6 հազարանոց թուրքական կանոնավոր բանակի և մի այդքան էլ խուժանի վրա: Հանկարծ բերդի պաշտպանների մեջ խուճապ առաջացավ. դիրքերից մեկի ուղղությամբ թուրքերին հաջողվել էր հայկական հագուստներով ծպտված իբրև հայկական օգնական ուժ մոտենալ ու գրավել բերդի դուռը, քանդել մուտքը պաշտպանող պատը: Սակայն 14 տարեկան Հ. Թևեքելյանը հացթուխ կանանց ռումբ հասցրեց, որը ճետվեց խռնված թուրքերի վրա: Խուճապահար թուրքերը նահանջեցին, և ճակատամարտն ավարտվեց հայերի փայլուն հաղթանակով: Թշնամին հեռացավ՝ թողնելով անթիվ դիակներ: Հայերը թաղեցին իրենց 25 զոհերին՝ Հ. Գարակյոզյանին, Ավագ Տուրիկյանին, Գ. Կարմիրյանին, Ռուբեն և Գրիգոր Պարոնվարդյան եղբայրներին, Ե. Վեցիկյանին և ուրիշների:

Սակայն ինչ որ չկարողացավ անել թշնամին, արեց սովը: Անդրանիկ Պարոնվարդյանը և Նշան Սերեճյանը ուղարկվեցին թուրքերի հետ բանակցելու, բայց չվերադարձան:

Հաղթանակից մի քանի օր հետո Ղուկաս Աղբարը հրավիրեց բո-

[1] Նշվ. աշխ., էջ 148:

[1] Նշվ. աշխ., էջ 158:

լոր մարտիկների ժողով և ցույց տվեց ճանապարհը. գիշերային ուժգին հարձակումով ճեղքել պաշարման օղակը և կռիվը շարունակել շրջակա լեռներում՝ հսկելով բերդի մեջ մնացած ժողովրդին, սպառնալ սրի քաշել թուրքական գյուղեր, եթե նրանք վայրագորեն վարվեն բերդի բնակիչների հետ: Սակայն սեբաստացի երկու երիտասարդներ իրենց կյանքը փրկելու համար թուրքերին մատնեցին այս ծրագիրը, և օղակն ավելի սեղմվեց: Հրաժարվելով Ուղտի դռան ուղղությամբ ճեղքելու նախնական պլանից, հայերը նահանջն սկսեցին բերդի դռան առջևից: Սկսվեց գիրկընդխառն կռիվ, և նահանջին մասնակցող 1000 հոգուց 100-ը նահատակվեցին: «Մնացյալները երեք ճակատ վրա հարվածելով թշնամին, մոխրացած դաշտի փլատակներուն մեջեն կանցնին դաշտ, ուր կցրվին և մոտ երկու տարի հոս ու հոն կովելէ ետք բոլորն ալ կսպանվին»[1],— վկայում է հեղինակը:

Հաջորդ օրը՝ հունիսի 28-ին, Նաթան քահանա Տատյանը բերդի դռան վրա ամրացրեց անձնատվության ճերմակ դրոշը: Թշնամին չէր հավատում աչքերին, և 6 ժամ հետո միայն բարձրացավ բերդ՝ այնտեղ բեմադրելու 20-րդ դարի ցեղասպանության արարներից մեկը:

«Կարելի է ըսել,— ամփոփում է Շահանդուխտը,— որ կան բախտավոր և անբախտ հերոսամարտեր: Գարաճիսարի հերոսամարտը եթե քիչ մը բախտավոր ըլլար, եթե անոր հասներ դուրսեն տարրական օգնություն մը՝ ուտեստեղեն և զինամթերք, թուրքը բնավ պիտի չկարենար ընկճել զայն...

Շապին-Գարաճիսար հայկական գոյամարտի մեծագույն վկայություններեն մեկը եղավ ստրկությունը արհամարհող և գիտակից մահով թշնամին շշմեցնող հերոսական ժողովրդին:

Գարաճիսարը չկա այսօր, բայց կտևէ հայ ժողովուրդը: Այս է մեր հաղթանակը ու թշնամիին հայաջինջ ծրագրին ձախողությունը»[2]:

«Տարոնի Միջնաբերդին վերջին ծառացումը» շուրջ 100 էջանոց ուսումնասիրության հեղինակն է դարձյալ Նազարեթ Պերպերյանը (էջ 173—270):

Պատմա-աշխարհագրական համառոտ ակնարկից հետո հեղինակն անցնում է առաջին աշխարհամարտի նախօրեին Տարոն աշխարհի կացության նկարագրությանը: Իրավացի է Ն. Պերպերյանը, գտնելով, որ Տարոն աշխարհը բանալիի նշանակություն ունի ոչ միայն հայ ազա-

[1] Նշվ. աշխ., էջ 166:
[2] Նշվ. աշխ., էջ 167:

տագրական շարժման, այլև 1915-ի հայասպանության հիմնահարցերն ըմբռնելու տեսակետից, որովհետև անցյալ դարավերջին այն դարձավ հայ ժողովրդի ազատագրական շարժումների միջնաբերդը և իբրև այդպիսին՝ համիդյան ու իթթիհատական Թուրքիայի աչքի փուշը: Եվ պատահական չէր, որ իթթիհատական պարագլուխների առաջնահերթ ոազմավարությունն էր ճզմել հայկական ծառացումների այս լեռնային օրրանը:

Հեղինակը չի թաքցնում այն ճակատագրական հանգամանքը, որ պատերազմի նախօրյակին Տարոնի հայությունը չուներ նախասահմանադրական շրջանի ֆիդայական դիմագիծը, և մինչև իսկ փորձառու ֆիդայիներն էլ մի կողմ էին դրել իրենց զենքերը[1]:

Ն. Պերպերյանը ներկայացնում է 1908-ի սահմանադրությունից հետո Տարոն աշխարհի ազգային և պետական ղեկավարության պատկերը. կենտրոնը Մուշ քաղաքն էր, ուր գտնվում էր առաջնորդարանը և գործում էր Դաշնակցության «Դուրան-Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեն»: Եղեռնի նախօրյակին Մուշի առաջնորդն էր Ներսես եպիսկոպոս Խարախանյանը, իսկ Կոմիտեի կազմում էին մշեցի Մճո Պոլեյանը, Կորյունը, Վարդան Վարդապետը, Ռուբենը, Լևոն Ապահյանը, Տիգրան Գավառյանը, Կաոնենի Մկրտիչը և Սեմանցի Քաթիպ Մանուկը: Առաջնորդարանին և գավառական փոխանորդներին կից գործում էին նաև Մուշի և Բաղեշի Ազգային Քաղաքական ժողովները: Մուշ եկավ նաև օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխաններից Կոմսը՝ Վահան Փափազյանը:

Նահանգապետ Մուստաֆա Աբդուլ Հալըզի նստավայրն էր Բիթլիսը, որին ենթակա էին Բաղեշի, Մուշի, Կենճի և Աղերդի գավառապետերը՝ մյութեսարիֆները: Մուշի գավառապետն էր իթթիհատական Սերվեթ բեյը: Սասունի լեռնաշխարհը բաժանված էր նշված 4 գավառապետերի միջև:

Պատերազմի սկզբում Մուշը դարձել էր պահեստի ուժերի կենտրոնատեղի: Տարոնի շրջանում գտնվում էին համիդիե գնդերի մեջ զինվորագրված քրդական յոթ ցեղախմբեր, որոնք հանձնարարություն ունեին պատուհասել հայերին:

«Առաջին աշխարհամարտի սկզբնավորության Տարոնի Աշխարհեն ներս տիրող ուժերուն այս ընդհանուր դասավորումը ցույց կուտա,— ամփոփում է հեղինակը,— որ հայությունը ամեն կողմէ շրջա-

[1] Նշվ. աշխ., էջ 196:

պատված էր քյուրտերով և աքցանի մեջ առնված էր թուրք կառավարության կողմէ: Ավելին, թուրքին և քյուրտին միջև, համակարգված ձևով, հետզհետե կիստականար Հայասպանության պետական ծրագիր մը, որուն դիմաց հայությունը կպարզեր աճավոր վտանգը նախազգացող, բայց անպատրաստ ժողովրդի (ընդգծումն իմն է— Մ.Կ.) մը պատկերը»[1]:

Հեղինակը նշում է, որ Տարոնի հայության թե՛ ֆիզիկական, թե՛ տնտեսական քայքայումն սկսվեց զորահավաքով, որը հայասպանության ավելի մեծ ու աճավոր ծրագրի գործադրության առաջին հանգրվանն էր: Նա վկայում է, որ Սասունում գրեթե մարդ չզինվորագրվեց, իսկ Մուշում թուրքերին հաջողվեց որոշ թվով երիտասարդների զինվորագրել: Զորահավաքին զուգընթաց կատարվում էին նաև բռնագրավումներ, և այդ ճանապարհով մի քանի ամսվա մեջ Տարոնի հայ գյուղերը մեծ մասամբ պարպվեցին տղամարդկանցից և ունեցվածքից:

Նշվում է, որ 1915-ի հունվարից սկսած Սասունի շրջանները ինքնապաշտպանության դրության մեջ էին:

Ցույց է տրվում, որ Մուշի առաջնորդարանը և Դաշնակցության Դուրան-Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեն կոտորածների վտանգն ըմբռնում էին անցյալի՝ չափանիշերով և ժողովրդին կոչում էին զգուշավորության, որը բացասական հետևանքներ ունեցավ: «Եթե թուրքը կձեռնարկեր պետական իր աճավոր ոճիրին՝ ցեղասպանության,— գրում է հեղինակը,— հայերու մեջ տակավին կտիրապետեր հակահեղափոխական հին տրամադրությունը: Իսկ ինչ կվերաբերի ինքնապաշտպանության լծվելու դաշնակցական հրահանգներուն, ընդհանուր ապստամբության մը սկզբունքը որդեգրած չըլլալով, անոնք բնականաբար պիտի չկարենային հայաջնջումի ընդհանուր ծրագրին դիմադրել»[2]:

Խոսելով ինքնապաշտպանության ծրագրի մասին, հեղինակը վկայակոչում է դեռևս 1914-ի դեկտեմբերի սկզբին Դաշնակցության կոմիտեի հրավերով Մուշում կայացած խորհրդակցությունը, որտեղ որոշվեց ամբողջ Տարոնը բաժանել ինքնապաշտպանության ութ շրջանների: Նույն օրերին խորհրդակցություն տեղի ունեցավ նաև առաջնորդարանում, որը, սակայն, որևէ որոշում չկայացրեց:

[1] Նշվ. աշխ., էջ 198:
[2] Նշվ. աշխ., էջ 205:

1915-ի հունվարին տեղի ունեցավ երկրորդ խորհրդակցությունը, և ինքնապաշտպանության ղեկավարման գործը դրվեց Ռուբենի և Կորյունի (Գոմսա Իսո) վրա:

Ցրոնքի և Գոմսի միջադեպերից հետո 1915 թ. փետրվարի 10-ին Ռուբենը և Կորյունը հասան Սասուն և Շենիկում հրավիրեցին խմբապետերի ժողով: Սասունը բաժանվեց յոթ շրջանների:

Մինչ Սասունը ապստամբության դրոշ էր պարզում, Մուշը սպասողական մղձավանջի մեջ էր: Առանց որոշման սպասելու հին ֆիդայի Մկրտիչ Բոլեյանը՝ Մճո, 30 կովողներով բարձրացավ Առաքելոց վանք, որտեղ հարձակվող թուրքերին դիմադրելուց հետո անցավ Սասուն և միացավ Ռուբենին ու Կորյունին:

Թուրքերը նախ 1915 թ. մայիսին տեղահանության և կոտորածի ենթարկեցին Մշո դաշտից հյուսիս գտնվող Խնուսի շրջանը: Խնուսցի երիտասարդությունը մի քանի օր հերոսական դիմադրություն ցույց տվեց: Գավառի 25 000 հայերից ազատվեցին մի քանի հազար հոգի, որոնցից հարյուրավոր երիտասարդներ անցան ռուսական գոտի և միացան հայկական կամավորական խմբերին[1]:

Ն. Պերպերյանը հանգամանորեն նկարագրում է Մուշ քաղաքի ինքնօրյա հուսահատ և հերոսական պաշտպանությունը: Խարախանձյան սրբազանի մահից (1915 թ. ապրիլի 23) և Կոմսի ծանր հիվանդությունից հետո այստեղ առաջնորդ դարձավ Վարդան վարդապետը, կուսակցական ղեկավարությունն ստանձնեց հին հայդուկ Հաջի Հակոբ Կոտոյանը, իսկ Կոմսը ապաքինվելուց հետո Ռուբենի պահանջով անցավ Սասուն (1915 թ. մայիսի 25):

Մինչև հուլիսի 10-ը թուրքերը Մուշի հայկական թաղերին մոտ գտնվող բարձունքներում տեղադրեցին թնդանոթներ և փաստորեն քաղաքը վերցրին երկաթե աքցանի մեջ: Ճգնաժամային այդ պահին առաջնորդարանի և դաշնակցական ղեկավարների միջև առաջացավ տարակարծություն: Վարդան վարդապետը կողմնակից էր տարագրությանը, իսկ վերջիններս պնդում էին ինքնապաշտպանության վրա: Շուտով Սերվեթ բեյի ուղարկած ոստիկանները առաջնորդարանում ձերբակալեցին Վարդան վարդապետին և 70 անձանց, որոնց տարան քաղաքից դուրս և գնդակահարեցին:

Քաղաքի դիմադրական ուժերը կենտրոնացան երեք հայկական թաղերի մեջ. Ս. Մարիամ թաղ, Ձորք թաղ, Վերին թաղ: Առաջին թաղի

[1] Նշվ. աշխ., էջ 226:

15 մարտիկների խմբապետն էր դաշնակցական կոմիտեի անդամ Տիգրան Մկրտչյանը, երկրորդինը՝ Հակոբ Կոտոյանը, երրորդինը՝ Լևոն Ասլանյանը, որն ուներ 6—7 մարտիկ: Հերոսամարտի ընդհանուր ղեկավար նշանակվեց Հաջի Հակոբ Կոտոյանը, օգնական՝ Տիգրան Մկրտչյանը:

Հուլիսի 11-ին սկսվեց հայկական թաղերի հրետակոծությունը: Սկզբում ծանրության կենտրոնը Վերին թաղն էր: Թուրքերը հրդեհեցին թաղը, սակայն դիմադրությունը շարունակվում էր նաև հաջորդ օրը: Ամբողջ թաղը քարուքանդ արվեց և կորավ հրդեհի բոցերի մեջ: Որոշվեց թողնել Վերին թաղը և վերջին ճակատամարտը մղել Ջորի թաղի մեջ:

Հեղինակը նշում է, որ կռվի բռնկումից հետո հայ մարտիկների թիվը բազմապատկված էր: Ջորի թաղի առաջին օրվա կռիվը տևեց 15 ժամ: Հուլիսի 12-ին գիշերային խորհրդակցությունը որոշում է խումբ-խումբ դուրս գալ քաղաքից և բարձրանալ մոտակա լեռները: Հեռանում է մոտ 700 հոգի, իսկ Հ. Կոտոյանը մնում է, շարունակում դիմադրությունը և զոհվում դիրքում:

Մշո դաշտի գյուղերի դիմադրական կռիվները ավելի երկարատև եղան և տևեցին ամիսներ: «Բայց Դաշտը լավ զինված չէր,— գրում է հեղինակը:— Մյուս կողմէ զրկվելով Սասուն բարձրացած իր ղեկավար մարտիկներեն և կռվի լավ զենքերեն, Դաշտը տկար դիմադրություն մը կրնար ցուցաբերել տակավին, Դաշտի ժողովուրդն ալ ուներ այն միամտությունը, թե անզեն ժողովուրդը, կիներ ու երեխաները պիտի չկոտորվեին, այլ՝ թուրքը պիտի հարվածէ աչքի զարնող ֆետայիները և զինյալ տղամարդիկը միայն»[1]:

Հեղինակը գրում է, որ այս պայմաններում Դաշտի գյուղերը մեծամասնությամբ չկարողացան դիմադրել և մի քանի օրվա մեջ կոտորվեցին, սակայն, այսուհանդերձ, գտնվեցին գյուղեր, ուր Մշո դաշտի հայությունը հերոսաբար ծառացավ նույնիսկ վերջին վայրկյանին: Այդ գյուղերից գլխավորներն էին՝ Կառնենը, Ս. Կարապետի վանքի շրջանը, Ավրանը, Ալիջանը, Վարդենիսի շրջանը և այլն:

Կառնենի կռիվը, որը գլխավորում էր հին հայդուկ Կառնենի Մկրտիչը, տևեց հուլիսի 12-ի ամբողջ օրը, ուր հայ հերոսները բոլորը նահատակվեցին:

Ալիջանի դիմադրությունը, որը գլխավորում էին Պատիկ Միսակը, Մխիթարը և Հայկ Միրջանյանը, տևեց չորս օր և պսակվեց հաղթանակով:

Ավրանցիները գյուղում դիմադրեցին մեկ օր, հետո դուրս եկան գյուղից, կռվեցին ևս 12 օր և բոլորը նահատակվեցին:

Վարդենիսի շրջանի հայությունը ապավինեց Շամբ ծանծաղ լճին, ուր կար եղեգների անտառ: Այստեղ ինքնապաշտպանությունը տևեց 15 օր: Նրանք փրկվեցին ռուսական զորքի մոտենալու շնորհիվ: Վեց հազար մարդ ռուսական զորքի հետ անցան Արարատյան դաշտ[1]:

Ս. Կարապետի շրջանի գյուղերի ինքնապաշտպանությունը գլխավորում էր առասպելական հերոսի անուն հանած Սորտարցի Արամը: Այստեղ հավաքված էր շուրջ 20 հազար ժողովուրդ, որոնք ունեին 100 հրացան և 100 ատրճանակ: Ինքնապաշտպանությունը շարունակվեց մինչև 1916-ի հունվար, և ժողովրդի բեկորները փրկվեցին ռուսական զորքի կողմից, իսկ Արամը նահատակվեց Խուլուխի կամրջի (Գևորգ Չաուշի դիրքի) մոտ:

Երեք ամիս տևեցին Նեմրութի կռիվները: Այստեղ ինքնապաշտպանության կազմակերպմանը ձեռնամուխ եղան Փալապեխ Կարապետն ու Շամիրամցի Սողոն, որոնք հավաքեցին 300 երիտասարդներ, սակայն իրենք անզգաբար ընկան թշնամու ձեռքը: Նեմրութ լեռը բարձրացածների դիմադրությունը ղեկավարեցին Սողոյի եղբայր Շամիրամցի Արամը, հին ֆիդայի Այվազ Գևորգյանը, Հարություն Տերոյանը և ուրիշներ: Հերոսամարտը տևեց ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը: Նրանք նույնպես փրկվեցին ռուսների շնորհիվ, համալրեցին հայ կամավորական գնդերը և իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի անկախության կերտումին:

Ուսումնասիրության վերջին բաժինը նվիրված է Սասունի հերոսամարտին: Հենց սկզբում հեղինակը կարևոր նշում է անում այն մասին, որ Սասունը, իբրև հայոց ազատամարտի միջնաբերդ, ըմբոստացումի ուղին էր բռնել դեռևս 1914-ի վերջերին, որովհետև հին ու դաժան օրերի իր փորձառությամբ չէր կարող հավատ ընծայել թուրքի կեղծ հայտարարություններին և ապավինում էր միայն իր սեփական զենքին:

Նշվում է, որ Սասունի ինքնապաշտպանության նախապատրաստությունը գլխավորում էին 1915-ի փետրվարին այստեղ եկած Ռուբենն ու Կորյունը, որոնց քիչ ուշ միացավ Մհոն:

Թշնամին հարձակումն սկսեց Սասունի արևելյան Խուլբի շրջանից՝

[1] Նշվ. աշխ., էջ 245:

[1] Նշվ. աշխ., էջ 249:

Անիրոնք գյուղի վրա հարձակումով: Շուտով շարժման մեջ դրվեցին նաև Խիանքի քրդերը, որոնք հարավից շարժվեցին դեպի Սպիտակ լեռ և Տալվորիկ: Խուլբի և Խիանքի հայությունը քաշվեց Անտոք՝ Սասնո քաոսօրյա վճռական ճակատամարտը մղելու համար: Թուրքերին հաջողվեց գրավել Ս. Կարապետ, Առաքելոց և Ս. Հովհաննեսի վանքերը և փորձեց գրավել նաև Կուրտիկի լեռնաշղթան: Սակայն Ռուբենը և Կորյունը կազմակերպեցին Կուրտիկի եռամյա դիրքային կռիվը, որի ընդհանուր ղեկավարը Փեթարա Մանուկն էր՝ Գևորգ Չաուշի զինակիցներից:

Հարավից և հարավ-արևմուտքից կռիվները ծավալվեցին մինչև Սպիտակ լեռ, որը գրավելուց հետո թշնամին պատրաստվում էր դուրս գալ Տալվորիկ: Այստեղ հրամանատարն էր խմբապետ Մուշեղը, որը փակել էր հարավի կիրճերը:

Այսպիսով, ինչպես գրում է հեղինակը, 1915-ի ապրիլից սկսած Սասունը պաշարված էր չորս կողմից, սասունցիք պատերազմական դրության մեջ էին, և այդ վիճակը պիտի շարունակվեր մինչև հուլիս: Տևական կռիվ էր մղվում 150 կմ երկարությամբ ճակատի վրա[1]:

Հեղինակը գրում է, որ մինչև հունիս գրեթե բոլոր ճակատների վրա սասունցիները կարողացան հերոսաբար դիմադրել բոլոր հարձակումներին: Սակայն Մուշից ու Մշո դաշտից կտրված, ռուսական բանակի առաջխաղացման գծով հուսախաբ՝ հայոց ազատամարտի միջնաբերդը հետզհետե ավելի սուր կերպով էր զգում ռազմամթերքի նվազումը և սննդեղենի պակասը: Թշնամու ձեռքն անցան Խիանքը, Խուլբի մեծ մասը և Բասենը: Հունիսի կեսերին պաշարման օղակն ավելի սեղմվեց, և կռիվները փոխադրվեցին Անտոք:

Ըստ Ն. Պերպերյանի նկարագրության, Տալվորիկից մինչև Կուրտիկ և Ծովասարի ստորոտից մինչև Անտոքի հարավային կողերը 30 կմ խորք և 40 կմ լայնք ունեցող մի շրջան էր մնացել սասունցիների ձեռքը: Ընդամենը 1200 քառ. կմ այս տարածքի վրա հավաքված էին ոչ միայն Սասունի ժողովուրդն ու մարտիկները, այլև շրջակա տարածքների գաղթականները:

Սննդամթերք ձեռք բերելու համար հին հայդուկներ Չոլոյի և Ծենիկի Ղազարի գլխավորությամբ կազմվեցին հարվածող խմբեր, որոնք անդադար հարձակվում էին քրդական դիրքերի վրա և զգալի սնունդ

[1] Նշվ. աշխ., էջ 258:

դամթերք էին առգրավում: Այդ հարձակումներն ունեցան նաև այն հետևանքը, որ քրդերը Անտոքի ճակատից հետ քաշվեցին 25 կմ:

Մուշի հերոսամարտից հետո թուրքական ուժերը սկսեցին բարձրանալ դեպի Ծիրինկատար, Կուրտիկ և Առաքելոց վանքի վերին ձորերը: Թնդանոթներով զինված զորամասերը ուղղվեցին դեպի Ծենիկ և Սեմալ, որոնք հերոսական Սասունի առաջին դոներն էին: Նրանց գլխավոր նպատակն էր ոչնչացնել Մուշից և Մշո դաշտից ազատված հայ մարտիկներին, որոնք Կոմսի և Մատթեոսի գլխավորությամբ դիրքեր էին գրավել Հավատորիկի և Մառնիկի բարձունքների վրա: Ուժասպառ սասունցիները թշնամուն երկու օր դիմադրելուց հետո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ ստիպված էին իջնել Ծենիկ և Սեմալ:

Նկարագրելով դեպքերի ընթացքը, հեղինակը նշում է, որ հուլիսի 19-ին թուրքական հարձակումն արդեն իսկ կանոնավոր ճակատամարտի բնույթ ստացավ[1]: Թուրքական թնդանոթները մի քանի դիրքերից կրակ էին թափում Գելիեգուզանի և Անտոքի ուղղությամբ, իսկ հարավ-արևմուտքից քրդական ուժերը ընդհանուր հարձակում ձեռնարկեցին Խիանքի և Խուլբի ուղղությամբ: Հարավ-արևելքից Հազոյի շրջանի թուրքական և քրդական ուժերը բարձրացան Բասենց լեռները և ուղղվեցին դեպի Տալվորիկ:

Նշվում է, որ թուրքերի այս ընդհանուր հարձակման պայմաններում Ռուբենը, Կորյունը և Մհոն վերադասավորեցին հայկական ուժերը և դիմադրությունը կենտրոնացրին վեց ճակատների վրա: Հեղինակը մեկ առ մեկ հիշատակում է այդ վեց ճակատամասերը և պաշտպանությունը ղեկավարող հերոսներին. Տալվորիկի և Խիանքի ճակատի հրամանատարն էր խմբապետ Մուշեղը, որի օգնականներն էին Ալիջանցի Տիգրանը և Բասենցի Դավիթը: Ծենիկ-Սեմալի ճակատի ղեկավարումը հանձնվեց Չոլոյին, Ծենիկի Ղազարին, Սեմալի Մանուկին և Արամին: Աղբիի ճակատը վստահվեց Աղբկա Մարտենին և Մշեցի Արոյին: Գեբին-Խուլբի ճակատը հանձնվեց Իշխանաձորի Արթինին, Հեղինցի Վահանին և Սաղտունցի Հովհաննեսին: Գելիեգուզանի ձգված ճակատը, որն ընդգրկում էր Անտոքի բոլոր կողերը, հանձնվեց Կորյունին և Մհոյին: Այստեղ մարտական ղեկավարներ էին Մորուք Կարոն, Ղազար Պետոյանը, Արգոյի Հովսեփը, Քյաթիպ Կիրակոսը, Տեր Քաջի Ադամը, Գաբոյի Պետրոսը, Ղազար Ֆարհատյանը: Կենտրոնը ղեկավարում էր Ռուբենը,

[1] Նշվ. աշխ., էջ 262:

որի օգնականներն էին Մուխսի Ֆարհատի Արոն, Պզտիկ Արամը, Ավրահամի Արամը, Հրայրի եղբայր Մանոն:

Հեղինակի վկայությամբ պաշարված Սասունում առկա էր կորովի և կռվի ընդունակ 15,000 ժողովուրդ:

Շենիկի ուղղությամբ թշնամին գրավեց Մերկե-Մոզանի և Տալավների բարձունքները, սակայն սասունցիները նոր դիրքեր ամրացրին Սեմալ-Շենիկ-Կուրտիկ ճակատի վրա: Նույն օրը հարավի քրդերը ուժեղ հարձակում ձեռնարկեցին Տալվորիկի և Իշխանձորի ուղղությամբ, բայց հանդիպեցին բուռն դիմադրության, և ճակատումը վերածվեց գիրկընդխառն բախումի, սկսվեց մահապատերազմ բոլորի համար: Հեղինակի պատկերավոր արտահայտությամբ Տալվորիկը կարծես երկրաշարժով էր բռնված, և երեկոյան տկարացած թշնամին զինադադար առաջարկեց, որը և ընդունվեց[1]:

Շենիկի ճակատում Ռուբենը, Կորյունը և Մհոն որոշեցին հակահարձակման անցնել թուրքական թնդանոթների դեմ, որոնք կրակի տակ էին պահում 15—20 կմ տարածությամբ ամբողջ ճակատը: Հայ ֆիդայիները անաղմուկ մոտեցան, արագորեն ոչնչացրին թնդանոթակիզներին և գրավեցին երեք թնդանոթ, որոնց կրակն ուղղեցին թուրքական զորամասերի վրա՝ նրանց մատնելով խուճապահար փախուստի: Շենիկը վերագրավվեց, իսկ թնդանոթների փակաղակները հանեցին ու վերադարձան իրենց կենտրոնատեղին:

Հուլիսի 23-ին թուրքերը սկսեցին նոր ընդհանուր հարձակում, որը տևեց մինչև օգոստոսի 2-ը: Դիրքերը ձեռքից-ձեռք էր անցնում: Թուրքերը օրական առաջ էին գալիս հազիվ մեկ կիլոմետր, իսկ սասունցիները քաշվում էին դեպի Անտոռ: Սակայն հրանոթային կրակն ավելի ու ավելի էր ուժեղանում:

Հեղինակի վկայությամբ օգոստոսի 2-ին տեղի ունեցավ Սասունի հերոսամարտի վերջին հանգրվանը, երբ Շենիկի շրջանից թշնամուն հաջողվեց ճեղքել դիմադրության կուռ շղթան, խլելով Կորյունի նման անվեհեր հերոսի ու նրա շատ զինակիցների կյանքը, հերոսներ, որոնք այլևս չէին ուզում հաշտանալ, որը կնշանակեր Սասնո ժողովրդի ստույգ կոտորածը:

Տասնօրյա հերոսական ճակատամարտից և Շենիկի անկումից հետո կայացավ վերջին խորհրդակցությունը, որտեղ մարտական խմբերի

[1] Նշվ. աշխ., էջ 266:

ղեկավարները որոշեցին տարբեր ուղղություններով հարձակվել թշնամու վրա և ամբողջ ժողովրդի հետ ճեղքել պաշարման շղթան: «Օգոստոսի 3-ի գիշերը կգործադրվի այս ծրագիրը և Անտոռը այլևս կդադարի հերոսներու ժամադրավայրը ըլլալէ,— գրում է հեղինակը: Կռվող խմբերն ու ժողովուրդը կհաջողին ապաստանիլ անառիկ լեռներու մեջ, ապահով տեղեր: Ռուբենի, Վ. Փափազյանի, Մարտիրոսի և ուրիշ խմբապետերու ղեկավարությամբ՝ կռվողները կհաջողին հյուսիս-արևելք ուղղվիլ և օգոստոսի վերջերուն ռուսական բանակին հասնիլ»[1]:

Ի տարբերություն մի շարք հեղինակների, որոնք Սասունի հերոսամարտի պատմությունն ավարտում են լեռնական ժողովրդի համընդհանուր կոտորածով՝ որպես արդյունք իբր Դաշնակցության անհեռատես, փաստորեն դավաճանական գործելակերպի, Ն. Պերպերյանը տալիս է բոլորովին այլ մեկնաբանություն: «Թեև Սասնո հերոսամարտը օգոստոսի 3-ին այսօրինակ վախճան մը կունենար,— շարունակում է նա,— բայց **որդեգրված ռազմավարությունը փաստորեն կհաջողեր, և սեպտեմբերի կեսերուն Սասունի ժողովրդին 90 տոկոս համեմատությունը ողջ էր տակավին ու ապաստանած էր անառիկ լեռներուն գիրկը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Թշնամին իզուր կփորձեր ձեռք անցնել Սասունի հայությունը. անոր փորձերը միշտ ապարդյուն կանցնեին, որովհետև դիմադրությունը միշտ կշարունակվեր՝ այս անգամ հրոսակային կռիվներու ձևով և տևական տեղափոխությամբ:

Այս կացության մեջ, ռուսական զորքերու հառաջխաղացքով, թրքական զորքերը արդեն իսկ կբռնեին նահանջի ճամբան: Այսուհանդերձ, Սասնո լեռները մինչև 1916-ի գարունը շարունակեցին պահպանել իրենց արի զավակները, մինչև որ հայ կամավորական գունդերը վերանվաճեցին Տարոնը՝ 1916-ի առաջին ամիսներուն»[2]:

Հեղինակն իր խոսքն ավարտում է այն ամփոփմամբ, որը պատմությունը պիտի վկայի Սասունի հայության մեկ ամբողջ տարի՝ 1915-ի փետրվարից մինչև 1916-ի փետրվար, թուրքին դիմադրելու և անկախ Հայաստանի կերտմանը իր վճռական մասնակցությունը բերելու մասին:

«Մուսա լեռ՝ Միջնաբերդ և Փրկության տապան»: Այս վերնագիրն է կրում Նուպար Չախուտյանի ուսումնասիրությունը (էջ 271—335):

Արժեքավոր է պատմա-աշխարհագրական և վիճակագրական

[1] Նշվ. աշխ., էջ 268:
[2] Նույն տեղում:

մանրամասն տեղեկանքը Սուետիայի (Սելևկիա բառի աղավաղումն է— Մ. Կ.) հայկական վեց գյուղերի՝ Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Յողուն Օլուք, Խդրբեկ, Վագըֆ, Քեբուսիե, ինչպես նաև Մուսա լեռան (Մովսեսի լեռ) մասին: Նշվում է, որ հայկական վեց գյուղերի բնակչության ընդհանուր թիվն էր 6 811 մարդ, որից 2 580-ը նախընտրեց բռնել տարագրության ճամփան, իսկ մնացած 4 231 հոգին, որոնցից՝ 1 711 կին, 1 237 տղամարդ, 1 288 անչափահասներ բարձրացան լեռը:

1915 թ. հուլիսի 30-ին ստացվեց Անտիոքի գայմագամի ստորագրած հրահանգը տեղահանության մասին, որով Սուետիայի հայերին նախապատրաստվելու համար տրվում էր ութ օր: Անհրաժեշտ էր լավագույնս օգտագործել այդ ութ օրը:

Շտապ կարգով Յողուն Օլուքի քահանա Աբրահամ Տեր-Գալուստյանի տանը հրավիրվեց խորհրդակցություն, ուր հինգ գյուղերն ուղարկել էին իրենց ներկայացուցիչներին: Քեբուսիեից ոչ ոք չկար, որովհետև նրանք որոշել էին տարագրվել: Հեղինակը թերում է խորհրդակցության մասնակիցներից մի քանիսի ելույթների ամբողջական տեքստը, որոնք այսօր ունեն վավերագրերի նշանակություն[1]: Ակքստամբության որոշում ընդունածներն ունեին 133 հունական «Կրա» հրացան, 7 մաուզեր, 450 որսորդական և հին հրացաններ, յուրաքանչյուր հրացանի համար կար 80—100 փամփուշտ, վառոդ ու կապար՝ 30 000 փամփուշտի համար:

Հեղինակը նշում է, որ վերապատվելի Տիգրան Անդրեասյանի և Մովսես Տեր-Գալուստյանի համոզիչ պատճառաբանություններից հետո մերժվեց գյուղերից մեկում ամրանալու գաղափարը և որոշվեց բնակավայր հաստատել Մուսա լեռան գագաթի վրա, որի բարձրությունը մոտ 1700 մետր էր և մակերեսը մոտ 80 քառակուսի կիլոմետր:

Հուլիսի 31-ին սկսվեց լեռ բարձրանալու գործողությունը, որը տեվեց երեք օր: Օգոստոսի 1-ին ժողովրդի մեծ մասը հասավ Թաթար Ալան կոչված վայրը, որը գագաթից բավական ցածր էր:

Օգոստոսի 7-ին թուրքական զորքերը ձեռնարկեցին առաջին հարձակումը, որը տևեց 6 ժամ: Թշնամին տվեց 10 սպանված և 20 վիրավոր, հայերը ոչ մի կորուստ չունեցան: Հեղինակը նշում է, որ այս առաջին հաղթանակը հոգեբանական մեծ նշանակություն ունեցավ և ամրապնդեց լեռան պաշտպանների կորովը:

[1] Նշվ. աշխ., էջ 286—290:

Երկու օր հետո՝ օգոստոսի 10-ին, տեղի ունեցավ երկրորդ ճակատամարտը՝ Պագաճըգ կոչված դիրքի ուղղությամբ: Այս ճակատամարտը տևեց 12 ժամ, ուր թշնամին տվեց 100, իսկ հայերը՝ 3 սպանված: Հեղինակը նշում է հատկապես աչքի ընկած երկու մարտիկների անունները՝ Պետրոս Գալուստյան և Հակոբ Գարակյոզյան: Վերջինս հինգ կրակոցով շարքից հանեց 4 թնդանոթաձիգների, ինքն էլ ընկավ հերոսաբար:

Երկրորդ ճակատամարտից հետո Տամլաճըգ վայրում գումարվեց ժողով, որտեղ ստեղծվեց Կենտրոնական վարչական ժողով (ատենապետ՝ Տիգրան Անդրեասյան) և զինվորական կենտրոնական վարչություն, որի վարիչ նշանակվեց 21-ամյա Մովսես Տեր Գալուստյանը:

Մարտիկները բաժանվեցին 43 տասնյակների, իրենց տասնապետերով: Կառուցվեցին զորանոցներ, պատանիների ջոկատները կատարում էին կապավորի դեր (տելեֆոնի տղաներ):

Ծովի դիմաց պարզվեցին երկու ճերմակ սավան-դրոշներ՝ կարմիր խաչով և փրկության խոսքերով: Երեք հոգի ուղարկվեցին Ալեքսանդրետ՝ նավ գտնելու և խնդրագիր հանձնելու համար, որոնք ձեռնունայն վերադարձան:

Երկրորդ ճակատամարտին հաջորդեց երկարատև անդորր: Օգոստոսի 19-ին Ասլովաճածնի տոնի առթիվ գլխավոր զորանոցի մոտ մատուցվեց հանդիսավոր պատարագ, որը ընդհատվեց թշնամու ստվարածավալ ուժերի հարձակմամբ:

Նուպար Չալխուտյանը մանրամասնորեն նկարագրում է նաև այս երրորդ ճակատամարտը, որին թուրքական կողմից մասնակցում էին 4000 զինվորներ, 10 թնդանոթով, և անհաշիվ խուժան: Այս անգամ հարձակումը կատարվում էր վեց ուղղությամբ: Հայերի համար նպաստավոր էր թանձրացող մեգը: Թուրքերը երկու հայ դավաճան եղբայրներից տեղեկացել էին հայերի դիրքերի և ուժերի մասին: Ի վերջո թուրքերին հաջողվեց գրավել պաշտպանության առաջին երկու գծերը և մոտենալ Տամլաճըգին: Սակայն երբ նրանք անցան Մեծ ջուրը և մոտեցան ցից զառիվերին՝ վերևից կանայք նրանց վրա գլորեցին հսկա քարեր և ժայռի կտորներ ու հետ մղեցին թուրքերին: Վերջիններս իրենց ուժերը կենտրոնացրին Թաթար Ալանի ուղղությամբ և մինչև գիշեր գրավեցին այն՝ հայտնվելով հայերի վերջին դիրքերից 200 մետր հեռավորության վրա: Հայերը կռվում էին մեկը տասի դեմ: Թշնամին արդեն կրակ էր տեղում բնակավայրերի ու զորանոցների վրա, իսկ

ժողովուրդը խումապահար փախչում էր դեպի մոտակա անտառները: Եթե թշնամին կարողանար առաջանալ ևս մի քանի հարյուր մետր, հայերին պիտի մնար կամ հանձնվել, կամ անձնասպան լինել: Այս պայմաններում հայերի մեջ եղան նաև դասալիքներ:

Ճգնաժամային ճակատամարտը սկսվեց մի բլրի շուրջ, որն ստացավ «Մահվան բլուր» անունը: Հեղինակը նշում է, որ եթե այդ բլուրը ընկներ թշնամու ձեռքը, Մուսա լեռան ինքնապաշտպանությունը կդասվեր անխոհեմ արկածախնդրությունների շարքը, և վճռված պիտի լիներ չորս հազար հայերի ճակատագիրը: Այդ իրականությունը կովողներն զգում էին բնազդաբար, դրա համար յուրաքանչյուրը դարձել էր հոմերական հերոս, և կրակում էին անգամ ծանր վերքեր ստացածները[1]:

Եվ օգնության եկավ հրաշքը. հայ դասալիքները, որոնք լսում էին իրենց կովող ընկերների գոռում-գոչյունը և համազարկերի ժխորը, ամաչեցին և որոշեցին վերադառնալ ճակատ: Նրանցից մեկի առաջարկած ծրագրով կազմվեց 50 հոգիանոց մի խումբ, որը թիկունքից հարձակվեց թշնամու վրա՝ առաջացնելով խումապային նահանջ: Մահվան բլրի պաշտպաններն իրենց հերթին խոյացան փախչող թշնամու վրա: Հալածանքը կատարյալ էր: Հայերը տվեցին 10, թուրքերը՝ 500 սպանված: Լուսաբացին ամբողջ Մուսա լեռը գտնվում էր հայերի ձեռքում: Հայերի ձեռքն ընկավ նաև 9 մասուզեր և 10 հազար փամփուշտ: Երկու դավաճան եղբայրները հրապարակայնորեն դատվեցին և գործածոցի առջև անմիջապես գնդակահարվեցին:

Այդ պարտությունից հետո թուրքերը որոշեցին փոխել ռազմավարությունը՝ պաշարել լեռը և սովի մատնել ժողովրդին:

Սեպտեմբերի 5-ին ծովի հեռու կապույտի վրա երևաց մոխրագույն մի զանգված, որից ծխի քուլաներ էին բարձրանում: Նավը մեծ արագությամբ մոտենում էր: Դա ֆրանսիական «Գիշոն» ռազմանավն էր, որը խարիսխ գցեց ծովեզերքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Ափ ուղարկվեց մակույկ, որով Խաչեր Թումանյանը նավ վերադարձավ և նավապետ Պրիսոնին պատմեց եղելությունը: Վերջինս խոստացավ ամեն ինչ հաղորդել Կիպրոսում գտնվող ծովակալ Դարթիժ դը Ֆուրնեին, որն իր հերթին ցուցում պետք է ստանար Փարիզից: «Գիշոնը» ռմբակոծեց թուրքերի դիրքերը և հեռացավ:

Սեպտեմբերի 7-ին թուրքերը վերսկսեցին հարձակումը: Ճակատամարտը տևեց 10 ժամ, և ի վերջո թուրքերը նահանջեցին:

[1] Նշվ. աշխ., էջ 311:

Սեպտեմբերի 10-ին «Գիշոնը» վերադարձավ «Տեսեքս» մարտանավի հետ: Այդ օրն էլ սկսվեց Մուսա լեռան վերջին և հերոսական ճակատամարտը: Նշելով, որ այդ օրը յուրաքանչյուր մուսալեռցի գերազանցեց ինքն իրեն, հեղինակը հատկապես ընդգծում է Եսայի Յաղուբյանի անունը, որի վճռականությունը և զինվորական բարձր հատկությունները մեծապես նպաստեցին այդ օրվա հաղթանակին[1]: Թշնամին ի վերջո նահանջեց՝ տալով հարյուրավոր սպանված, իսկ հայերը կորցրին երկու մարտիկ:

Ճակատամարտից հետո «Գիշոնից» եկավ մակույկ և հայտնվեց, որ ծովակալ Դարթիժ դը Ֆուրնեն հրահանգ է տվել լեռան հայերին փոխադրել ապահով վայր: Ժողովրդին հրահանգ տրվեց իջնել ծովեզերք, որը տևեց երկու օր: Սեպտեմբերի 12-ին «Գիշոնին» և «Տեսեքսին» միացան երեք ուրիշ մարտանավեր՝ «Տեսթրե», «Ադմիրալ Շարնե», «Ֆոտր», և բազմատասնյակ մակույկներով սկսվեց փոխադրության գործողությունը: Իրիկնադեմին մարտանավերը բարձրացրին խարիսխները և ուղղություն վերցրին դեպի Պորտ Սայիդ:

Վերջում հեղինակը երախտիքի ջերմ խոսք է ասում Ֆրանց Վերֆելի մասին, որը 1933-ին կերտեց «Մուսա լեռան 40 օրը» անմահ վեպը:

Եվ վերջապես ժողովածուի վերջին նյութը Էվա Դերվիշյանի «Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան» ուսումնասիրությունն է (էջ 337—413):

Ուրֆայի հերոսամարտը մյուսներից տարբերվում էր նրանով, որ այն մղվում էր բուն քաղաքի ներսում, բնական ամրություններից զուրկ պայմաններում, երբ չկար փրկության որևէ հույս:

Պատմա-աշխարհագրական ակնարկից և 1895-ի Ուրֆայի ինքնապաշտպանության հպանցիկ նկարագրությունից հետո հեղինակն անցնում է 1908—1915 թթ. իրադարձություններին: Նա նշում է, որ պատերազմի նախօրյակին Ուրֆայի հայ բնակչության թիվը անցնում էր 30 հազարից, իսկ մոտակա միակ հայկական Կարմուջ գյուղում ապրում էին 5 հազար հայեր:

Ընդգծվում է, որ պատերազմի սկզբին Ուրֆայի հայ երևելիները նույնպես սխալ ճանապարհի վրա էին, ենթադրելով, թե քանի որ պատերազմը շուտ կավարտվի, պետք չէ առճակատման գնալ կառավարության հետ, այլ հարկավոր է նրա հրահանգները կատարելու ճանա-

[1] Նշվ. աշխ., էջ 318:

պարիսով ժողովրդին անվնաս դուրս բերել ստեղծված կացությունից: Ոչ մեկի մտքով չէր անցնում թուրքի ոճրային ուղեղի մեջ պատրաստվող եղեռնը: Հեղինակը պատմում է Հայոց Քաղաքական ժողովի խորհրդակցության մասին, որը հրավիրված էր առաջնորդարանում: Այստեղ էլ մեծ գումար հանգանակվեց՝ թուրք պաշտոնյաներին հարկ եղած դեպքում կաշառելու նպատակով: Երբ խոսք գնաց ապստամբություն բարձրացնելու մասին՝ պահպանողական թևը դեմ արտահայտվեց և առաջարկեց համակերպվել ու «խոհեմ» քաղաքականություն վարել: Հանկարծ ժողովասրահ մտավ փախստական Մկրտիչ Յոթնեղբայրյանը և ցավ հայտնելով թուլամորթ ու համակերպվող մարդկանց հետևելու համար, հայտարարեց, որ ինքը թույլ չի տա, որ Ուրֆայի հայությունը տարագրվի և ավելացրեց. «Իսկ դուք բոլորդ ալ անխուսափելիորեն պիտի երթաք մորթվելու՝ հակառակ ձեր պատրաստած կաշառքներուն»[1]: Այնուհետև հեղինակը բառացիորեն մեջ է բերում պատվելի Շոնազյանի վկայությունը, որն այսօր ունի վավերագրի արժեք: Ըստ այդ վկայության, հակառակ Ուրֆայի կրոնական ու ազգային առաջնորդների, որոնք զգուշություն և հնազանդություն էին քարոզում, կար երիտասարդություն, որը կարծես ավելի լավ էր հասկացել թուրքին ու կողմնակից էր ինքնապաշտպանության: Դրանցից էր Մկրտիչ Յոթնեղբայրյանը, որի մեջ մարմնացած էին Ուրֆայի հայության զգացումները և որը մեծ գործ էր կատարել հայությանը զինելու և կազմակերպելու ուղղությամբ: Պատվելին վկայում է նաև, որ Ուրֆայում ավելի շատ զենք ու հայ քաջեր կային, քան Զեյթունում: Նրա վկայությամբ կուսակցությունները, իբրև կազմակերպություն, չուզեցին առաջնորդել ինքնապաշտպանության գործը, պատճառաբանելով, որ ժամանակը խառն է և իրենք չեն ուզում պաշտոնապես ստանձնել պատասխանատվությունը: Ուստի ինքնապաշտպանության միակ խիզախ և անկախ պատասխանատուն և առաջնորդը եղավ Մկրտիչ Յոթնեղբայրյանը, որն իր եղբայր Սարգսի, Հարություն Ռասթկելենյանի և մյուս ընկերների հետ քաջաբար կռվեց ու նրանց հետ միասին նահատակվեց:

Հեղինակի նկարագրությամբ Ուրֆայի մղձավանջային օրերն սկսվեցին 1915-ի հունիսի 8-ին, երբ ձերբակալվեցին 16 երևելի և կուսակցական դեմքեր: Քրդական տարազով ծպտված Մ. Յոթնեղբայրյանը երկու անգամ գաղտնի այցելեց նրանց և աշխատեց համոզել պատրաստ լինել փախուստի, բայց մերժում ստացավ: Ձերբակալվածներին կոտորեցին բանտի նահապարհին:

Դաշնակցության հրավերով կայացավ մի նոր ժողով, որը որոշեց ապստամբել միայն այն ժամանակ, երբ տեղահանության վերաբերյալ հրահանգ ստացվի: Հունիսի 25-ին տեղի ունեցան նոր ձերբակալություններ, իսկ 1500 երիտասարդներ արդեն զինվորագրված էին: Մ. Յոթնեղբայրյանին չհաջողվեց սրանց էլ համոզել՝ հաջորդ օրն իսկ սկսելու ապստամբությունը:

Իր 30 ընկերներով Մ. Յոթնեղբայրյանն ամրացավ Կարմուջ գյուղի մոտ գտնվող Ս. Վանեսի լեռան վրա: Թուրքական զորքը պաշարեց լեռը, բայց 3 ժամ տևած կռվից հետո Մ. Յոթնեղբայրյանն ու Հ. Ռասթկելենյանը ճեղքեցին պաշարումը և իջանք քաղաք՝ Ուրֆա:

Հուլիսի 10-ին կառավարությունը առաջնորդ Արտավազդ վարդապետից պահանջեց 48 ժամվա ընթացքում հանձնել բոլոր զենքերը: Հայ թեդևնոթաձիգ սպա Միհրան Հերարդյանի առաջարկով հավաքեցին և հանձնեցին անպետք զենքերի մի կույտ: Հուլիսի 26-ին առաջնորդը նույնպես ձերբակալվեց: Հուլիսի 28-ին բանտարկյալներին տարան դեպի Տիգրանակերտ և ճանապարհին բոլորին կոտորեցին[1]:

Հեղինակը պատմում է, թե ինչպես օգոստոսի 4-ին երկու ժամվա հեռավորության վրա գտնվող մի վայրում թուրք զինվորներն ու չեթեները հանկարծակի հարձակումով ոչնչացրին 1500 ուրֆացի հայ անզեն զինվորներին, որոնցից փրկվեցին միայն երկու հոգի: Դրանից մի քանի օր անց թուրք զինվորները պաշարեցին Ռասթկելենյանների տունը, ուր թաքնված էր Մ. Յոթնեղբայրյանը և փորձեցին պատվաստել Հարությունի մորը: Այդժամ թաքստոցից դուրս թռավ Հ. Ռասթկելենյանը և առաջին գնդակով գետին տապալեց թուրք չաուշին: Այնուս անհիմնատ էր հետևել սկզբնական որոշմանը՝ ապստամբելու համար տեղահանությանն սպասելու մասին: Սկսվեց ապստամբության նախապատրաստությունը: Անհրաժեշտ էր գաղտնի վերադասավորել դիրքերն ու կռվողներին, ճշտել զինամթերքի թիվը, ապահովել պարենամթերքը: Ուրֆայի կանայք թուրք զինվորների աչքի առաջ իրենց փեշերի տակ զենք ու փամփուշտ էին փոխադրում, 10—14 տարեկան փոքրիկները կատարում էին կապավորի դեր: Կռվի ազդանշանը պիտի լիներ Մայր

[1] Նշվ. աշխ., էջ 357:

[1] Նշվ. աշխ., էջ 366:

եկեղեցու և ավետարանականների ժողովասրահի զանգերի միաժամանակյա ուժգին և անընդհատ ղողանջները:

Սեպտեմբերի 29-ի առավոտյան թուրք ոստիկանները պաշարեցին ջարդից փրկված երկու հայ զինվորների՝ Սարգիս և Գրիգոր Թարախչյանների թաքստոցը: Սկսվեց փոխհրաձգություն, և... սկսեցին ղողանջել զանգերը: Քառորդ ժամը բավարար եղավ, որ բոլոր դիրքերի և տների պատուհանների հետևում փայլեն զենքերի փողերը: Հերոսամարտն սկսված էր:

Ապստամբները զինաթափեցին հայկական թաղերում գտնվող թուրք ոստիկաններին: Քաղաքի մյութեսարիֆ Ալի Հայդարի հաշտարար ճամակին ուրֆացիները պատասխանեցին, որ իրենք չեն ցանկանում «ոչխարային համակերպությամբ» զոհվել անապատներում, ուստի կռվելու են մինչև վերջին փամփուշտն ու մարդը[1]:

Է. Դերվիշյանը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է մարտական գործողությունների ողջ ընթացքը, թուրքական հարձակման փուլերը: Հայկական թաղերի վրա թուրքերի առաջին հարձակումը տեղի ունեցավ սեպտեմբերի 30-ին՝ երեք ուղղություններով: Մ. Յոթենեղբայրյանի հրահանգով թույլ տրվեց, որ նրանք մտնեն թաղերից ներս և ապա ռումբերի հարվածներով ոչնչացրին նրանց: Այդ օրը թուրքերը թողեցին 450 դիակ, հայերը տվեցին 8 զոհ:

Մ. Յոթենեղբայրյանն ու Հ. Ռասթկելենճյանը շրջում էին դիրքից դիրք, տալիս անհրաժեշտ հրահանգներ: Նրանք իրենց կողքին ստեղծեցին հինգ հոգիանոց զինվորական խորհուրդ, որի մեջ մտան Հարությունը Սիմյանը, Խորեն Քյոփելյանը, Լևոն Եղբերևերյանը, Հովհաննես Խմիրզյանը և Արմենակ Աթթարյանը: Ընտրվեց մատակարար մարմին, սարքավորվեց հիվանդանոց, բացվեց զինագործարան: Հայկական թաղամասը բաժանվեց վեց շրջանների, որոնք բոլորը միասին ունեին 32 դիրք: Նշանակվեցին շրջանային խմբապետեր և տասնապետեր:

Թուրքերի երկրորդ ուժգին հարձակումն սկսվեց հոկտեմբերի 1-ի արշալույսին, սակայն Մ. Յոթենեղբայրյանի ցուցումով ոչ մի պատասխան գնդակ չարձակվեց: Թուրքերը ներխուժեցին հայ կաթողիկե եկեղեցու բակը, կենտրոնացան հայկական Թեմրին թաղի թիկունքում և Շաքոյան դիրքի մոտ ու այդպիսով ընկան Յոթենեղբայրյանի սարքած ծուղակը. ռումբերի տարափը կատարյալ կոտորած առաջացրեց թուրքերի մեջ: Յոթենեղբայրյանը անձամբ դիրք էր բռնել եկեղեցու դիմաց:

[1] Նշվ. աշխ., էջ 371:

Թուրքերը թողեցին հարյուրավոր դիակներ և խուճապահար փախուստի դիմեցին: Թեմրին թաղի թուրքերի հաշիվը մաքրեց Գևորգ Ալահայտոյանը: Այդ կռվին մասնակցում էին նաև օրիորդներ Խանում Քեթենճյանը և Մարիամ Չիլինկիրյանը, որոնց Յոթենեղբայրյանը նվիրեց երկու գերի թուրք զինվորների հրացաններն ու փամփուշտները:

Շուտով լուր ստացվեց, որ Ուրֆայի վրա են շարժվում Ֆախրի փաշան՝ 6000 զորքով ու թնդանոթներով, և Սուլեյման բեկը՝ 600 զինվորով, ինչպես նաև շրջակա աշիրեթները:

Հոկտեմբերի 3-ին սկսվեց հայկական Հայր Աբրահամի թաղամասի գրոհը, որի պաշտպանությունը գլխավորում էր Հ. Ռասթկելենճյանը, որը նույնպես ծուղակը գցեց հարձակվողներին և ռմբահարվածներով ոչնչացրեց նրանց: Թուրքերը տվեցին 100-ի չափ սպանված: Օրվա հերոսների մեջ էին Գևորգ Ալահայտոյանը, Մարիամ Չիլինկիրյանը, հինգ-վեց հայ պատանիներ:

Մկրտիչի եղբայրը՝ Քոռ Սաքոն, քրդական տարազով ծպտված, իր վեց ընկերների հետ միասին կարողացավ շարքից հանել քաղաքին մոտեցող թուրքական զորքի թնդանոթաձիգներին:

Հոկտեմբերի 7-ին Ֆախրի փաշան անձամբ բանակցություններ սկսեց Մ. Յոթենեղբայրյանի հետ՝ անձնատվության մասին, բայց ապարդյուն:

Հոկտեմբերի 8-ին Ֆախրի փաշայի զորքերն անցան ուժեղ հարձակման: Սակայն այս անգամ էլ հայերը թակարդի մեջ գցեցին նրանց և հասան հաղթանակի:

Հոկտեմբերի 9-ին թուրքերին հաջողվեց դիրքեր գրավել Թլֆուր բլրի վրա, որը հայկական թաղը պաշտպանում էր թիկունքից: Դրանով հայկական դիրքերը վտանգվեցին չորս կողմից: Ժամը 12-ին թուրքական զույգ թնդանոթներն սկսեցին բլրի գագաթից ռմբակոծել հայկական դիրքերը: Զինյալ օրիորդների երեք խմբեր՝ օրիորդներ Քեթենճյանի, Չիլինկիրյանի և Կեմչյանի ղեկավարությամբ շրջում էին դիրքերը և քաջալերում կռվողներին: Թեև հոկտեմբերի 9-ի ճակատամարտն ավարտվեց հայերի հաղթանակով, բայց աջ ծունկից ծանր վիրավորվեց Մկրտիչ Յոթենեղբայրյանը: Հիվանդ էր նաև Հ. Ռասթկելենճյանը՝ 40 աստիճան ջերմությամբ: Ուժերն սպառվում էին, նոր ուժեր չկային: Նման պայմաններում հիվանդանոցում Մ. Յոթենեղբայրյանի մահճի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն, բոլորն ուխտեցին կռվել մինչև վերջին փամփուշտը:

Հոկտեմբերի 10-ին թուրքական հարձակումը վերսկսվեց, և պաշարման օղակն ավելի նեղացավ:

Է. Դերվիշյանը պատմում է հոկտեմբերի 11-ին գերմանական սպա Մ. Էքարտի և Մ. Յոթնեղբայրյանի հանդիպման մասին: Գերմանացին փորձում է համոզել Ուրֆայի ներոսին՝ վայր դնել զենքը, խոստանալով նրան անվնաս տեղափոխել Գերմանիա և չհալածել ուրֆացիներին, որին Մկրտիչը պատասխանում է. «Եթե ձեր մեջ տակավին քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներուն մեջ անզեն ու անպատսպար կոտորվող բազմությունները: Ո՞ւր են մեր ղեկավարները, ո՞ւր է մեր առաջնորդը, բերեք միայն այս վերջինը ու անմիջապես վար դնեմ զենքերս»[1]: Էքարտը հեռանում է՝ սպառնալով անձամբ ղեկավարել հրետակոծությունը:

Հոկտեմբերի 12-ին թնդանոթային կրակը վերսկսվում է անսովոր ուժգնությամբ: Թուրքերը մեծ կորուստներ են տալիս, սակայն դիմադրողների շարքերն էլ գնալով նոսրանում էին: Համալրում չկար, իսկ պաշարման օղակն ավելի է սեղմվում: Ռասթկելենյանն առաջարկում է, որ կռվող տղաները իրենք սպանեն իրենց մայրերին ու քույրերին, որպեսզի նրանք չընկնեն թուրքերի ձեռքը:

Հոկտեմբերի 13-ին չորսժամյա ռմբակոծությունից հետո թուրքերը գրոհում են բոլոր ճակատներով, որոնց փոքրաթիվ հայկական ուժերը դեռևս դիմադրում են: Կռվի մեջ են մտնում նաև փամփուշտ լցնող գինագործները: Թուրքերի ձեռքն են ընկնում նաև մինչ այդ չգրավված տները: Աճապոր կռիվ է տեղի ունենում հատկապես Հայր Աբրահամի շրջանում: Թուրք գինվորների դիակների կույտեր են գոյանում, բայց և ընկնում են տասնյակ հայ քաջեր: Ջախջախված թուրքական զորքի փոխարեն տեղ է հասնում նորը:

Հաջորդ օրը Մկրտիչն ու Հարությունը ամրացնում են խիստ փոքրացած հայկական թաղը, կառուցել տալիս նոր դիրքեր: Նրանք շրջում են դիրքերը և հորդորում հայերին հետևյալ խոսքերով. «Հոս, ձեր տուներու շեմին, թե անապատներու մեջ, միևնույն է վախճանը, քաջությամբ վերջացնենք քաջությամբ սկսած մեր գործը»[2]:

Նույն սաստկությամբ կռիվը շարունակվեց մինչև հոկտեմբերի 18-ը: Այդ օրը ամերիկյան հաստատությունների տարածքում ուրֆացիները լարում են վերջին թակարդը և վերջին դասը տալիս Ֆախրի փաշային՝ կոտորելով բազում թուրք գինվորների: Նույն գիշերը նրանք

[1] Նշվ. աշխ., էջ 393—394:
[2] Նշվ. աշխ., էջ 395:

փորձում են ճեղքել պաշարման օղակը, բայց ապարդյուն, և որոշում են մնալ թաղերի մեջ ու մեռնել դիրքերի վրա: Մեծ թվով ընտանիքներ դիմեցին հավաքական ինքնասպանության:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 19-ին, թուրքերը ամեն կողմից խուժեցին հայկական թաղերը: Ռասթկելենյանը մի քանի քայլերով ամրացավ առաջնորդարանում, սակայն Մայր եկեղեցու գավիթը գրաված թուրքերի արձակած գնդակներից մեկը մխրճվեց նրա ճակատին: Ընկավ «խաչեն նոր վար առնված Քրիստոսի տեսք ունեցող» ներոսը[1]:

Հոկտեմբերի 20-ին դիմադրությունը շարունակվում էր միայն երկու թաղերում: Թուրքերի գրաված թաղերում բազմաթիվ կանայք ու աղջիկներ անձնասպան եղան: Թուրքերը դադարեցրին թնդանոթային կրակը և դիրքեր գրավեցին տների մեջ: Այդ վիճակը շարունակվեց երեք օր, մինչև որ մնկ առ մեկ ընկան ուրֆացի կտրիճները:

Հեղինակն իր խոսքն ավարտում է հետևյալ կերպ. «Կիրակի, 23 հոկտեմբեր: Խոր ու մեռելային լռություն: Ամբողջ ամիս մը վճռականությամբ ու մոլեգնությամբ մարտնչած այդ հրաշք ժողովուրդին՝ ուրֆացի հայության ծառացումը հասած է իր վախճանին: Հերոսական պայքարէ մը ետք, իր վախճանին հասած է հայ ժողովրդի արիության, անձնազոհության, հերոսական մահով ու պատնեշի վրա մեռնելու վճռակամության պերճախոս օրինակը Ուրֆայի աննախընթաց հերոսամարտը»[2]:

Ուսումնասիրությանը կից «Վկայություններ» բաժնում զետեղված է Արամ Սահակյանի խոսքը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի հեղափոխական դիմագծի մասին: Նշելով, որ հայ հեղափոխական շարժումը չի ճանաչում երկրորդ Մկրտիչ Յոթնեղբայրյան, Ա. Սահակյանն ընդգծում է, որ Դաշնակցությանը նոր անդամագրված հերոսը Ուրֆայի Դաշնակցության ընդհանուր ժողովում առաջարկեց վերջ տալ թուրքերի հետ սիրաբանությանը և հայ ժողովրդին գիտել մինչև եղունգների ծայրը, որը պիտի լինի Դաշնակցության միակ գործը: Այդ էր պատճառը, որ նրա գործերն ու գաղափարները ձեռք բերեցին համահայկական նշանակություն:

Հաջորդ վկայությունը Ավետիս Ահարոնյանի «Ուրֆայի հերոսամարտը» ընդարձակ հոդվածն է: Մեծ գրողի կարծիքով Ուրֆայի ան-

[1] Նշվ. աշխ., էջ 397:
[2] Նույն տեղում:

նախընթաց, անզուգական հերոսամարտը մեն-մենակ բավական է մի պատմություն զարդարելու դարերի համար, իբրև հայ հեղափոխական պատմության փառք ու պսակ:

Ա. Ահարոնյանը մեջ է բերում Ֆախրի փաշայի բացականչությունը. «Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանային»[1]:

Մկրտիչ Յոթնեղբայրյանի մասին նա գրում է. «Գալլ Վահա՞նն է վերածնվել արդյոք այս զարմանալի տղամարդի մեջ, թե ավելի հին դարերից մի առասպելական հերոս, որ գերեզմանից դուրս եկած սուսերամերկ հանկարծ ցցվում է թուրքի առջև մռնչալով՝ հե՛տ քաշիր արյունոտ թաթդ, այս ե՛ս եմ ասում, վասնզի իմ ցեղը հավիտենական է»[2]:

Ա. Ահարոնյանը նշում է, որ Իթթիհատի սահմանադրությանը և թուրքական Հուրիեթին հազիվ 20-ը անց երիտասարդը իմաստուն արիություն ունեցավ հայտարարելու, թե սուտ է այդ բոլորը, հայ ժողովուրդը պիտի գինվի անընդհատ, և իր խոսքը պահեց:

Ա. Ահարոնյանը հաղորդում է, որ Մ. Յոթնեղբայրյանի ինքնապաշտության լուրն ստանալով, Ֆախրի փաշան կարգադրում է հրանոթի 24 համազարկով ծանուցել թուրք խուժանին անզուգական առաջնորդի մահը:

«Հայկական ամբողջ ազատագրական շարժումը, Հ. Յ. Դաշնակցությունը, որին անունով գործեց ու կովեց մինչև վերջ, երկրորդ Մկրտիչ Յոթնեղբայրյան չունի»,— հավաստում է Ա. Ահարոնյանը: Նա արժանին է հատուցում նաև Մ. Յոթնեղբայրյանի գինակիցներին. Հարություն Ռասթկելենյանին որակում է իբրև քրիստոսապատկեր, որի թաղման ականատեսներից մեկն ասել է. «Նա խաչեն նոր առնված Քրիստոսի տեսք ուներ, ճակատին՝ արյունի պսակ»: Այդ նա էր, որ 40 աստիճան տաքության մեջ թաց լաթը ճակատին դիրքից դիրք էր վազում, խրախուսում, ամրապնդում շարքերը:

Ա. Ահարոնյանը թվարկում է նաև Գևորգ Ալահայտոյանի, Սարգիս Յոթնեղբայրյանի, Հարություն Սիմյանի, Արմենակ Աղդարյանի, Լևոն Չերչյանի, Վաղարշ Մեսրոպյանի, Գառնիկ Շամլյանի անունները, որոնք իրենց անպարտելի առաջնորդի օրինակով պատնեշի վրա կընքեցին իրենց շքեղ կյանքը և ընկան Հայոց աշխարհի համար, որ այնպես պիտի սիրեցին: «Ուրֆացին աճձնատուր չի լինում երբեք. նա գիտէ մեռցնել ու մեռնիլ վիթխարի մաճով»,— ասում է Ա. Ահարոնյանը:

Հոդվածագիրը խանդաղատանքի խոսքեր է ասում նաև Ուրֆայի հայուհիների՝ տիկին Եղիսաբեթ Յոթնեղբայրյանի (Մկրտիչի կինը և արժանավոր համահարզը), տիկին Սուլթան Սիմյանի (Ռասթկելենյանի քույրը), օրիորդներ Մարիամ Չիլինկիրյանի, Խանում Քեթենճյանի, տիկին Խաթուն Գոնտուրաճյանի մասին, որոնք կամ ընկան դիրքերում, կամ թույլ ընդունեցին և իրենց զավակների ձեռքից բռնած ետվեցին իրենց իսկ հրդեհած տների բոցերի մեջ:

«Հեթանոս աստվածները վաղուց են մեռել,— գրում է Ահարոնյանը,— և մեր քրիստոնյա Ատծուն մեր մեկ միլիոն նահատակները ի զուր կանչեցին տարագրության բոսոր անգթության մեջ: Արդյո՞ք նա էլ մեռավ»[1]: Նա գոչում է աշխարհին, որ ոչ, Ուրֆայի հերոսները ծնող ցեղը չի կարող կորչել:

«Պատմությունն ի՞նչ է,— հարցնում է Ա. Ահարոնյանը: Բարբարոսությո՞ւն, ոխտադրուժ տմարդությո՞ւն, թե՞ արդարության և իրավունքի հաղթանակ: Այս հարցի պատասխանը պիտի տան մեր հետնորդները, և դրա համար է, որ պիտի սերտեն, որպես ամեն լուսաբացի աղոթք, Ուրֆայի հերոսամարտին մեծ դասը...

Պատմություն, ազգ և հայրենիք ոչ այլ ինչ են, եթե ոչ իրար հաջորդող անթիվ սերունդների հերոսական թանձրացում»[2]:

Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ 1965-ին և դրանից հետո սփյուռքում հրատարակված բազում գրքերի մեջ հիշատակելի են նաև Գ. Ահարոնյանի[3], Աղվան Տարոնեցու[4], Գ. Սյուրմենյանի[5], Լ. Չորմիսյանի[6], Լ. Ազատյանի[7] և շատ ուրիշների աշխատությունները:

[1] Նշվ. աշխ., էջ 406:
[2] Նշվ. աշխ., էջ 407:

[1] Նշվ. աշխ., էջ 412:
[2] Նշվ. աշխ., էջ 413:
[3] Ահարոնյան Գ., Խոհեր հիսնամյակի ավարտին (1915—1965), Պեյրութ, 1966:
[4] Աղվան Տարոնեցի, Պատասխանատուները Տարոնի եղեռնին, Պեյրութ, 1966:
[5] Սյուրմենյան Գ., Տաճկահայ գինվոր և գինվորականություն, Պեյրութ, 1967:
[6] Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության: Հ. Գ. (1908—1922): Պեյրութ, 1975:
[7] Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի: Լոս-Անջելես, 1995:

***

Հայոց ցեղասպանության պատմության գիտական հետազոտության բնագավառում հիմնարար նշանակություն ունեն պրոֆեսոր **Վահագն Տատրյանի** աշխատությունները: Իր ստեղծագործական կյանքի ընթացքում բազմաշխատ պատմաբանը հայոց ցեղասպանության հիմնահարցերի վերաբերյալ տարբեր լեզուներով հրատարակել է շուրջ հինսուն ուսումնասիրություն, որոնցից հայերեն է միայն մեկը[1]: Աշխատությունը բաղկացած է երկու ուսումնասիրություններից, որոնցից առաջինը կրում է «Հայկական ցեղասպանությունը հետպատերազմյան օսմանյան խորհրդարանին մեջ (հայ Երեսփոխաններու մեղադրական ելույթները)» վերնագիրը: Սույն ուսումնասիրության եզակի արժեքը կայանում է նրանում, որ վավերագրական ձևով ներկայացված են օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների մերկացումները և թուրք պատգամավորների ու պետական պաշտոնյաների մասնակի խոստովանությունները, զրչումի արտահայտությունները, ինչպես նաև ներկայացվող մեղադրանքներին ընդդիմանալը՝ կատարված ոճրագործության կապակցությամբ: Իրրև ներածության ամփոփում հնչում է հեղինակի այն միտքը, թե Անկարայի նախկին կուսակալ Հասան Մազհարի գլխավորած հանձնախմբի՝ կառավարական պաշտոնյաների հանցագործությունների ստուգումների հիման վրա Պատերազմական ատյանը 1919—1920 թթ. արձակեց մի շարք վճիռներ և, որ ամենաէականն է, հաստատեց, որ Հայկական եղեռնը կանխամտածված, ծրագրված և հսկողությամբ իրագործված ոճիր էր, որն իրականացվեց կառավարությունն իր ձեռքը գցած Իթթիհատ կուսակցության Կենտրոնական կոմիտեի և նահանգներում գործող իր արբանյակների կողմից:

Ինչպես նշվում է աշխատության հակիրճ նախաբանում, իթթիհատական ոճրագործների դեմ քրեական դատ բանալու գործում կարևոր դեր խաղաց Օսմանյան երեսփոխանական ժողովը, որը, չնայած ճնշող մեծամասնությամբ կազմված էր իթթիհատական հանցակատակներից, հասարակական կարծիքի ճնշման տակ ստիպված էր վիճակահանությամբ կազմել Հինգերորդ հանձնախումբը, որի պարտականությունն էր հարցաքննության ենթարկել պատերազմի ժամանակ Սայիդ Հալիմի և Թալեաթի գլխավորած երկու իրարահաջորդ կառավարություններում իրրև նախարար ծառայած կառավարական պաշտոնյաներին և որոշել՝ պե՞տք է նրանք իրրև հանցագործներ դատվեն, թե՞ ոչ: Այդ առթիվ խորհրդարանային այս մարմինը պատրաստեց մեծ թվով հարցաքննական թղթածրարներ և կարողացավ ձեռք բերել մի շարք հույժ կարևոր վավերագրեր: Սակայն Հանձնաժողովը չկարողացավ իր եզրակացություններն ամփոփել և Երեսփոխանական ժողովին ներկայացնել քվեարկության համար, քանի որ սուլթան Վահիդեդդինը լուծարեց այդ ժողովը և արձակեց երեսփոխաններին՝ իրենց թաքուն և խափանարար գործունեության համար: Բայց և այնպես այդ մարմնի հավաքած տեղեկությունները և փաստաթղթերը ավելի ուշ մեծ օգուտ ունեցան դատավարության ընթացքում: Հեղինակը եզրակացնում է, որ Երեսփոխանական ժողովի վիճաբանությունները դատական հետապնդման նախաքայլ հանդիսացան այն իմաստով, որ դրանք հանգեցին Հինգերորդ հանձնախմբի կազմավորման և արդյունավետ գործունեության[1]:

Երեսփոխանական ժողովը հետպատերազմյան իր առաջին նիստը գումարեց 1918 թ. հոկտեմբերի 10-ին: Նախագահն էր նախկին արտգործնախարար, թթու իթթիհատական և Թալեաթի մտերիմ խալիլը, իսկ փոխնախագահը՝ «բարեխառն» իթթիհատական Հյուսեին Ջահիդը:

Այնուհետև Վ. Տատրյանը ներկայացնում է 1918 թ. նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 12-ը տեղի ունեցած հինգ նիստերի սղագրական նկարագիրը, որոնց հետևում է յուրաքանչյուր նիստի նշանակության վերաբերյալ հեղինակի վերլուծությունները, ամփոփումներն ու գնահատականները:

1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում, որը հեղինակը բնորոշում է իրրև առնականման առաջին փորձաքար, ժողովի քարտուղարությանը հրաժեշտ հայ, հույն և թուրք երեսփոխանների մի շարք թագրիրներ՝ դիմումնագրեր: Դրանցից առաջինը Այտըն (Զմյուռնիա) ընտրանքի հույն երեսփոխան Էմմանուել Էմմանուելիտիի դիմումն էր, որով առաջարկվում էր ժողովի քննարկման առաջնահերթ նյութ դարձնել պատերազմի ժամանակի կառավարության վարքագիծը: Իր հերթին Տրապիզոնի երեսփոխան, իրավաբան Հաֆեզ Մեհմեդ Էմինը առաջարկեց քննարկել թուրքական կառավարության՝ պատերազմին մասնակցելուն առընչվող փաստաթղթերը: Այդ առաջարկները պաշտպանեցին տասնչորս ուրիշ երեսփոխաններ, որոնցից երկուսը՝ հայեր, երկուսը՝ հույներ էին:

Է. Էմմանուելիտիի դիմումնագիրը բաղկացած էր ութ կետերից,

[1] Փրոֆ. Վահագն Տատրեան. Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտության քննարկումներով: Պալքար, 1995 (ԱՄՆ):

[1] Նշվ. աշխ., էջ 7:

որոնցից առաջինում ընդգծվում էր, որ հայ ազգին պատկանելուց զատ ուրիշ ոչ մի հանցանք չունեցող մեկ միլիոն հոգի, առանց բացառելու կանանց և երեխաներին, սպանվեցին: Երկրորդ և երրորդ կետերում ասվում էր, որ քառասուն դարերից ի վեր երկրի քաղաքակրթության հիմնաքարը հանդիսացող հույն տարրից 250 000 մարդ օսմանյան սահմաններից արտաքսվեցին, կողոպտվեցին և բնաջնջվեցին, իսկ պատերազմից հետո էլ 550 000 հույներ արտաքսվեցին, կողոպտվեցին և սպանվեցին Սև ծովի շրջանից, Հանքարկալեի, Մարմարա ծովի և Կըզըլ-Իրմաղի մարզերից: Հինգերորդ կետում խոսվում էր երեսփոխաններ Զոհրապ և Վարդգես էֆենդիների բնաջնջման մասին[1]:

Սակայն, ինչպես նշում է Վ. Տատրյանը, այն դիմումնագիրը, որը հետևողական հանդիսացավ և իր անառարկելի դրոշմը դրեց ժողովի Հինգերորդ հանձնախմբի կազմության և աշխատանքների վրա, պատրաստված էր Դիվանիեի արաբ երեսփոխան Ֆուատի կողմից, որը պաշտոնապես գրանցվեց և վիճաբանության հիմնահարց դարձավ նոյեմբերի 4-ի նիստում: Հեղինակի բնորոշմամբ, տասը կետերից բաղկացած այդ դիմումնագիրը ընդհանրական էր և շոշափում էր ոչ միայն հայկական ջարդերը, այլ նաև կառավարության մի շարք ապօրինի արարքներ:

Ներկայացնելով Հայկական եղեռնի քննական հետապնդումը թելադրող 5-րդ կետը, որտեղ խոսվում է մարդկային և իրավական կոնների դեմ մեղանչող, օսմանյան սահմանադրության ոգին ոտնահարող ժամանակավոր օրենքների և հրամանագրերի ընդունման և դրանցով իսկ երկիրը ողբերգության բեմի վերածելու մասին՝ Վ. Տատրյանը բացահայտում է ժամանակավոր օրենք հորջորջված տեղահանության օրենքի ընդունման (27.05.1915) կապակցությամբ, իթթիհատականների գործած զարտուղի և օրինազանց գործողությունները, ցույց տալիս, որ այդ օրենքի հաստատումից շաբաթներ առաջ արդեն Թալեաթը տեղահանման գործողություններ էր ձեռնարկել Զեյթունում, Մարաշում, Պոլսում և երկրի այլ շրջաններում: Այդ առնչությամբ հեղինակը մեկնաբանում է օրենքի ցարդ անհայտ մնացած 4-րդ հոդվածը, ըստ որի տեղահանությունները պետք է իրականացնեին պատերազմական նախարարության իշխանությունները, մինչդեռ դրանք գրեթե ամբողջությամբ ի կատար ածվեցին ներքին գործերի նախարարության և նրան ենթակա հատուկ հանձնաժողովի (ժանդարմերիա), գաղտնի ոստիկանության և բանտային հանձնագործների հոմսակների կողմից, որոնք Հատուկ կազմակերպության պիտակի տակ գլխավոր ջարդարարները հանդիսացան: Նշվում է նաև, որ տեղահանության օրենքը խորհրդարանի քվեարկությանը դրվեց 1918-ի նոյեմբերի 4-ին, երբ հայերը բնաջնջված էին, թուրքերը՝ պարտված:

Այնուհետև Վ. Տատրյանն անդրադառնում է Ֆուատի ծանուցագրի 10-րդ կետին, որտեղ նշվում է, որ իշխանության մարմինները, երկրի ներսում քաոս և խառնակություն ստեղծելով, մարդկանց կյանքը, սեփականությունը և պատիվը վտանգեցին իրենց իսկ օժանդակած հրոսակախմբերին և դրանով իսկ աղետալի ոճիրների մասնակից դարձան[1]:

Վ. Տատրյանը ներկայացնում է Հայկական եղեռնի հարցի արծարծմանը մասնակից վեց հայ երեսփոխաններին՝ Գոզանի (Սիս) երեսփոխան Մատթեոս Նալբանդյան, Իզմիրի երեսփոխան Օննիկ Իհսան, Էրզրումի երեսփոխան Հովսեփ Մադաթյան, Հալեպի երեսփոխան Արթին Պոշկեզենյան, Մարաշի երեսփոխան Հակոբ Խոլաքյան, Սվազի (Սեբաստիա) երեսփոխան Տիգրան Պարսամյան: Բացակայում էին Մուշի երկու հայ երեսփոխաններ, Գեղամ Տեր-Կարապետյանը, որը հիվանդ էր, Վահան Փափազյանը, որը հեռացել էր երկրից, Պոլսի երեսփոխան Պետրոս Հալաճյանը: Եղեռնի ժամանակ գազանաբար սպանվել էին հայ երեսփոխաններ Զոհրապը, Վարդգեսը և Վռամյանը (Օննիկ Դերձակյան): Մերթ ընդ մերթ հայերին զորավիգ էին կանգնում 10 հույն երեսփոխաններ, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում Էմմանուելիտին, Էֆքալիտիսը, Հարավամպիսը, Յուվանիտին:

Վիճաբանությունների ասպարեզ նետվեցին երեք հարակից հարցեր. ինչպիսի՞ն էր ոճրի բնույթը և տարողությունը, ովքե՞ր էին պատասխանատուները, ինչպե՞ս կարելի է դարմանել հասցված վնասները և կորուստները:

Ըստ Վ. Տատրյանի հանգամանալի նկարագրության, խորհրդարանական վիճաբանության առաջին հանգրվանը բացվեց հույն երեսփոխան Էմմանուելիտիի հարցապնդմամբ, թե ներկայի թուրքական կառավարությունը ի՞նչ է մտածում խնդրի մասին և ի՞նչ քայլերի պիտի դիմի: Պատասխանի համար բեմ բարձրացավ նախկին իթթիհատական, ներքին գործերի նախարար Թեթրի Օքեարը: Կրկնելով թուրքական

[1] Նշվ. աշխ., էջ 8:

[1] Նշվ. աշխ., էջ 10:

սովորական հանգերգը, թե խնդրո առարկա զոհերը միայն հայերը, հույները կամ արաբները չէին, այլ թուրք ժողովրդի զանգվածները նույնպես, նախարարը խոստացավ իրենց բնակավայրերը վերադարձնել աքսորյալներին և նյութական հատուցում տալ նրանց:

Այնուհետև հրապարակվեց Գոզանի (Սիս) երեսփոխան Մատթեոս Նալբանդյանի դիտողագիրը (թագրիր), որն ստորագրել էին նաև հայ երեսփոխաններ Խրլաքյանը, Իհսանը, Պոշկեզենյանը, Մադաթյանը և Պարսամյանը: Հայ երեսփոխանները հարց էին տալիս կառավարությանը, թե նա ի՞նչ դիրք ունի Տեղահանության (27.05.1915) և Լքյալ գույքերի (26.09.1915) օրենքների գործադրության առթիվ գործված ոճիրների կազմակերպիչների և գործադրողների, ինչպես և այդ ոճիրների զոհերի հանդեպ:

Գնահատելով նիստի նշանակությունը, Վ. Տատրյանն արձանագրում է, որ դա առաջին քաղաքական առճակատումն էր, որով հայ երեսփոխանները մերթ փաղաքշելով, մերթ սաստելով և մերթ էլ երկիմաստ կամ թաքուն արտահայտություններով իրենց թուրք պաշտոնակիցներին մարտահրավեր նետեցին Մեծ եղեռնի առնչությամբ գործված ոճրապարտ արարքների համար: Թուրքիայի ներքին գործերի նախարարը հարկադրված էր անձամբ ներկայանալ Խորհրդարան՝ բացատրություններ և խոստումներ տալու համար: Միաժամանակ հեղինակը ուշադրություն է հրավիրում թուրք երեսփոխանների ճիգին՝ ճիգերի և համառ փորձերի վրա, որոնց նպատակն էր նսեմացնել հայոց ցեղասպանության տարողությունն ու իմաստը, այն դնել թուրքերի կրած այլազան կորուստների հետ նույն նժարի վրա, և կամ հայերին վերագրել գրգռիչի և նախահարձակի դեր[1]: Կարևորվում է Տրապիզոնի երեսփոխան Հաֆեզ Մեհմեդի բացահայտ խոստովանությունը՝ Տրապիզոնի կուսակալ Ջեմալ Ազմիի ոճրագործությունների, կառավարական հրահանգներով հայերի ջարդի և ծովամույն անելու վերաբերյալ:

Հեղինակն առանձնակի ուշադրություն է հրավիրում 1915-ի մայիսի 27-ի կառավարական որոշման վրա, որը հետապնդում էր երկու նպատակ. ա. տեղահանության պիտակի տակ գործադրել ցեղասպանությունը, բ. իրավական հիմք ստեղծել այդ ոճրի համար: Տեղահանության օրենքը, որը Խորհրդարանի վերջնական հաստատմանը պիտի ներկայացվեր 1915-ի սեպտեմբերին, այդպես էլ չներկայացվեց:

[1] Նշվ. աշխ., էջ 19:

Հեղինակը զավեշտական է համարում այն փաստը, որ այդ ժամանակավոր օրենքը հայ երեսփոխանների պնդմամբ Երեսփոխանական ժողովի հաստատմանը դրվեց 1918-ի նոյեմբերի 4-ին միայն և առանց այլևայլի մերժվեց, որն արդեն գործադրված էր: Չհայտարարվեց, սակայն, որ այդ օրենքը ապօրինի էր և հակասահմանադրական[1]:

Մատնանշվում է նաև, որ հայ երեսփոխան Մատթեոս Նալբանդյանը համարձակություն ունեցավ հասկացնել տալու թուրք երեսփոխաններին, թուրք հանրությանը և կառավարությանը, որ տեղի ունեցածը մի վիթխարի ոճիր էր, որից անմասն մնացածների թիվը շատ քիչ է:

1918 թ. նոյեմբերի 18-ի նիստին ներկա էին արտգործնախարար Մուստաֆա Ռեշիդ փաշան, ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆը, կրթական նախարար Ռիզա Թևֆիքը, Պետական խորհրդի նախագահ Շերիֆ փաշան: Վ. Տատրյանի բնորոշմամբ այնքան տպավորիչ էր Հալեպի երեսփոխան Արթին Պոշկեզենյանի ելույթը, որ արտգործնախարարը, զգալով կացության լրջությունը, պահանջեց, որ նիստը գաղտնի լինի, բայց այդ առաջարկը չընդունվեց: Հայ երեսփոխանը մատը դրեց թուրքերի համար անախորժ և խոովահույզ հարց հանդիսացող Մեծ եղեռնի վրա, այն որակելով իբրև կտտացող մի վերք: Հայ երեսփոխանը հայկական կոտորածները որակեց իբրև երկինք ու երկիր դղրդացնող վիթխարի ոճիր, որը օսմանյան պատմության ամենատխուր և ամենաարյունալի էջն է: Առաջ քաշելով պատասխանատուների հարցը, Ա. Պոշկեզենյանը հայտնեց այն միտքը, որ բուն ամբաստանյալը թուրք ազգը չէ, այլ թուրք կառավարությունը, նախորդ վարչակազմը: Նա «չեթեական վարմունք» համարեց մի քանի հրեշների և ճիվաղների գործած ոճրի համար մի ամբողջ ազգ ամբաստանելը: Սակայն, չուրանալով, որ մի շարք վայրերում ժողովուրդն, այնուամենայնիվ, մասնակից է դարձել չարագործություններին, հայ երեսփոխանը նրանց համար «հայտնագործում է» հետևյալ արդարացումը. «Այո, կարգ մը տեղեր խուժանը և ցած դասակարգի մարդիկ կառավարության ղրկած չեթեներու ըրած ոճրային արարքներուն մասնակցեցան: Ասոնք իրենց արարքներուն հետևանքները կշռելու և չափելու ընկարող հասարակ մահկանացուներ էին. երբ ոչխարի հոտ մը ճահիճի մեջ կիյնա, ատոր հանցավորը ոչխարնե՞րն են, թե՞ ոչ զիրենք առաջնորդող հովիվը.

[1] Նշվ. աշխ., էջ 20:

ևս կպնդեմ, որ եթե կարգ մը տեղեր ասոնք ոճիրներուն մասնակցած են, հանցանքը կառավարական պաշտոնյաներունն է»[1]:

Շարունակելով խոսքը, Ա. Պոշկեզենյանն ասաց, որ իսկական հայ բնօրրան և հայրենիք, հայի բույն եղող մի քանի նահանգներ կան, ուր ներկայումս ոչ մի հայ չի կարելի գտնել. 70—80 հազար հայ պարունակող նահանգում 70—80 հայ հնարավոր չէ գտնել: Տեր-Զորի և Ռասուլ-Այնի միջև գտնվող տարածության վրա գայլերի և թռչունների հոշոտումներից մնացած հայերի ոսկորներից բլուրներ են առաջացել[2]:

Գնահատելով չորս ու կես ժամ տևած նիստի նշանակությունը, Վ. Տատրյանը նշում է, որ հայ երեսփոխաններ Պոշկեզենյանին, Պարսամյանին և Նալբանդյանին հաջողվեց մի քանի թուրք և հույն երեսփոխանների աջակցությամբ կրկին արծարծել հայկական ցեղասպանության հարցը իր այլազան ծալքերով: Պոշկեզենյանը Մեծ եղեռնը որակեց իբրև աշխարհը դղրդացնող աներավոր ոճիր և այդ որակումը փոքր-ինչ մեղմելու նպատակով դիմեց ազպարարության՝ թուրք ազգը տարանջատելով թուրք կառավարությունից՝ ոճրի գլխավոր հեղինակ ճանաչելով վերջինիս:

Վ. Տատրյանն ընդգծում է երեսփոխան Պարսամյանի ելույթի բացառիկ նշանակությունը, որը, լինելով թուրդ իթթիհատական, այնուամենայնիվ, ոգեկոչեց սպանված հայ երեսփոխանների հիշատակը և ջարդարարներ անվանեց թուրք պաշտոնյաներին, պաշտպանության տակ վերցրեց Վանի երեսփոխան Վռամյանին ու վանեցիներին[3]:

Հեղինակի գնահատմամբ, Մատթեոս Նալբանդյանի ճառը իր ողջ էությամբ մի ներհուն պատասխան էր թուրքական ուրացումի և դրժումի բոլոր ելույթներին: Նա հայտարարեց, թե իրավաբանական կամ տրամաբանական ոչ մի հիմք չկա, որ երկրի տարբեր անկյուններում հայերը տեղահանվեն ու ջարդվեն Վանի դեպքերի պատճառով, դեպքեր, որոնց հանգամանքները դեռ պետք է պարզել: Հայ երեսփոխանը հակադրվեց նաև այն պնդումներին, թե այդ մեծ ոճիրը մի փոքր խմբակի սարքած գործն էր և հասկացրեց, որ կազմակերպված նախճիրի իրագործմանը մասնակցեցին պետական հաստատություններ, կառավարական և զինվորական կառույցներ, ինչպես և բնակչության հատվածներ:

[1] Նշվ. աշխ., էջ 23:
[2] Նշվ. աշխ., էջ 25:
[3] Նշվ աշխ., էջ 44:

Վ. Տատրյանի կարծիքով այս նիստում ամենապարսավելի դերը խաղաց Մուշի քուրդ երեսփոխան, Մշո դաշտի 70—80 000 հայ բնակչության բնաջնջման գլխավոր պատասխանատու մոլի իթթիհատական Իլյաս Սամին: Եղելությունը չարափոխելու և չքմեղանալու նոր վարկած ձևավորելու միտումով նա Վանի հայ երեսփոխաններ Վռամյանի և Փափազյանի՝ 1915 թ. հունվար-փետրվարին կառավարությանն ուղարկած խնդրագրերը որակեց իբրև վերջնագրեր: Կուռ տրամաբանությամբ և անհերքելի փաստերով վեր հանելով Վանի հազվագյուտ հերոսամարտի ինքնապաշտպանական բնույթը, Վ. Տատրյանը վճռականորեն մերժում է այն իբրև հայկական աղետի սկզբնապատճառ ցույց տալու ճիգերը: «Վան դրդապատճառ մը չէր, այլ նպատակահարմար շարժառիթ մը,— այդ առիթով ամփոփում է նա իր մտքերը,— և այս տարբերությունը ամենալավը ըմբռնած էին Հայկական Ցեղասպանության կազմակերպիչները»[1]:

Դեկտեմբերի 9-ի նիստում հայ երեսփոխանների հետևողական պահանջով ընթերցվեց Մշո նոր մահացած երեսփոխան Գեղամ Տեր-Կարապետյանի կազմած և Սեբաստիայի երեսփոխան Տիգրան Պարսամյանի կողմից նույնպես ստորագրված դիտողագրի լրիվ տեքստը: Փաստաթղթի հեղինակները հակահարված էին տալիս հայերի զոհերի թիվը 100 000-ի իջեցնելու թուրքական փորձերին և այն հասցնում էին 1,5 միլիոնի: Վճռական բողոք էր հայտնվում դատարկված Արևմտյան Հայաստանը այլազգիներով բնակեցնելու գործողությունների դեմ:

Վ. Տատրյանն այդ դիտողագրի ամենակենսական և զարմանալիորեն խիզախ մասը համարում է այն հայտարարությունը, որ Արևելյան հայհոյագրերը հայ ազգի պատմական բնօրրանն են, հարազատորեն հայկական հողեր են և կազմում են հայերի ճիվիրական հայրենիքը, մի բան, որ մինչ այդ որևէ մեկի կողմից չէր արվել: Գ. Տեր-Կարապետյանն առաջինն էր նաև, որ նահատակների թիվը հասցնում էր մեկ ու կես միլիոնի:

Դեկտեմբերի 11-ի նիստը գրեթե ամբողջությամբ հատկացվեց Թուրքիայի հույն բնակչության նկատմամբ պատերազմի ժամանակ կիրառված բռնարարքների քննարկմանը, և այդ առնչությամբ հիշատակվեցին նաև հայերը: Մասնավորապես մի թուրք երեսփոխան հաստատեց Տրապիզոնում հայերին Սև ծովում խեղդելու փաստը: Նիստում թուրք հոչակավոր բանաստեղծ **Մեհմեդ Էմինը** փորձեց թուրք ազգի

[1] Նշվ. աշխ., էջ 55:

կրած տառապանքները բաղդատել հայերի կրած դժբախտությունների հետ՝ իբրև զուգակշիռ եղելություններ և պնդել, որ հայերի դեմ գործված ոճիրները բուն թուրքերի կողմից չեն կատարված: Անամոթությունը լիովին բավարարում է թուրք բանաստեղծին՝ հայտարարելու, թե թուրք ազգն այնքան կարեկից է պանդուխտների ու տնանկների նկատմամբ, որ սիրահոժար իր երկրում ապաստան է ապահովել հայերի և հրեաների նման ազգերի համար: «Թուրքը այսօր ալ ցուլի մը նման հուժկու ըլլալով հանդերձ ոչխարի մը չափ անմեղ և խաղաղ է... Չարագործությունները այս Ազգին ոգիեն, այս Ազգին արտեն, այս Ազգին խղճեն, այս Ազգին գաղափարներեն բխած չարագործություններ չեն»,— ինքնամոռաց կուրծք է ծեծում թուրք ազգայնամոլը և միաժամանակ մեղադրական կարդում Մ. Խրիմյանի, Ներսես Վարժապետյանի, Գամառ Քաթիպայի հասցեին, որոնք ազգայնականության կրակ հրահրեցին հայերի շրջանում[1]:

Վ. Տատրյանը բացառիկ կարևորություն է տալիս թուրք երեսփոխաններից մեկի վկայությանը՝ Տրապիզոնի կուսակալ Ջեմալ Ազմիի և Սամսոնի կառավարչի՝ հայերին Սև ծովում ծովամույն անելուն անմիջականորեն մասնակցելու վերաբերյալ: Նա գտնում է, որ դրանով բացահայտորեն մերկացվում է թուրքական գավառային վարչամեքենայի գործում մասնակցությունը ցեղասպանության կազմակերպման գործողություններին, վարչամեքենա, որը բացարձակորեն ենթակա էր կենտրոնական կառավարության հրամաններին[2]:

Դեկտեմբերի 12-ի վերջին նիստը նախագահում էր Երեսփոխանական ժողովի նախագահը՝ Հալիլ Մենթեշեն, որը պատերազմի ժամանակ արտգործնախարարն էր և մի կարճ ժամանակ՝ արդարադատության նախարարը և որը մի քանի ամիս անց պետք է ձերբակալվեր ու դատի տրվեր իբրև հայոց ցեղասպանության ոճիրների մեղսակից:

Վ. Տատրյանի բնորոշմամբ այս նիստի հատկանշական կողմերից մեկն այն էր, որ այն սկսվեց հույների նախաձեռնած հարցերի արծարծմամբ, սակայն դուրս եկավ հունից և ծաղրացավ հայկական ցեղասպանության արհավիրքի և հատկապես Տարոն-Տուրուբերանում կատարված նախճիրի վրա: Այդ տեսակետից վճռական դեր խաղաց Սիսի երեսփոխան **Մատթեոս Նալբանդյանը**: Նրա ելույթը շառաչուն պատասխան էր թուրք բանաստեղծ Մեհմեդ Էմինի այն պնդումին, թե հայերի դեմ կատարված ոճիրը չպետք է թուրքերին վերագրել, և թե թուրք ազգն էլ արժանի է կարեկցության և մխիթարության[1]:

Նիստի ծանրության կենտրոնը դարձավ Մուշի երեսփոխան **Խոջա Իլյաս Սամիի** ճառերն ու պատասխանները: Նախ նա կոչ արեց հարցը ճնարավորին չափ շուտ փակել և այլևս դրան չանդրադառնալ: Նա ամեն կերպ ճգնում էր ժխտել մահմեդական կրոնավորների խաղացած ծանրակշիռ դերը ոճիրների իրագործման մեջ: Քուրդ ոճրագործ երեսփոխանը փորձում է ծուռ հայելու մեջ ներկայացնել Վանյան Փափազյանի վարքագիծը և ունկնդիրներին հրամցնել այն համոզումը, թե հայկական տեղահանությունը և նախճիրը միայն մի պատճառաբանություն ունի. Թուրքիան մահու և կենաց պայքարի մեջ գտնվելու պահին հարված ստացավ ռուսների հետ ընկերակցած հայկական զինյալ խմբերից և հուժկու հակահարված տվեց: Սակայն Խոջա Իլյասն անգամ ստիպված էր ընդունել, որ զոհված հայ զանգվածների ութսուն տոկոսը անմեղ մարդիկ էին[2]:

Եզրափակման մեջ Վ. Տատրյանն ընդգծում է, որ Երեսփոխանական ժողովի նիստերի ուսումնասիրությունն ունի արտակարգ նշանակություն, քանի որ առաջին և վերջին անգամ թուրք երեսփոխանները և նախարարները ստիպված էին դիմագրավել ուղղակի և շեշտակի կերպով իրենց դեմ եղած մեղադրանքները՝ հայերի տեղահանության և ջարդին առնչվող ոճիրների կապակցությամբ: Առաջին և վերջին անգամ եղան մանրամասն խոստովանություններ, զղջումի արտահայտություններ և դարմանների գտնելու անհրաժեշտության հավաստիքներ: Հիշեցնելով, որ Երեսփոխանական ժողովը վերջին հաշվով թուրք իթթիհատական մարմին էր, հեղինակը տարակուսանք է հայտնում, որ եթե չիներ հաշտության ծանր պայմանների ուրվականը, հազիվ թե նիստերը նույն բովանդակությամբ և ընթացքով տեղի ունենային:

Վ. Տատրյանի հատորում զետեղված երկրորդ երկխոսությունը կրում է «Պետութեան մը և պետական կուսակցութեան մը միաձոյլ դերը հայկական ցեղասպանութեան մէջ» վերնագիրը:

Ներածության մեջ հեղինակը «ցեղասպանություն» հասկացությունը բնորոշում է իբրև զանգվածային ոճիր, որը նախատրում է գերակշիռ ուժերի եղեռնափորձ կիրարկումը ընդդեմ աննմանմատորեն անզոր զոհի, որը կարող է մի փոքրամասնության, ազգության կամ ուրիշ որևէ

[1] Նշվ. աշխ., էջ 67:
[2] Նշվ. աշխ., էջ 74:

[1] Նշվ. աշխ., էջ 87:
[2] Նշվ. աշխ., էջ 88:

հավաքականություն լինել: Նրա կարծիքով ցեղասպանությունը ամենից առաջ կուտակված և համադրված հզորանքի մի արտահայտությունն է՝ պայմանավորված պարտադրիչ որոշ կառուցվածքների առկայությամբ և դրանց լծակային օգտագործմամբ[1]: Զարգացնելով իր միտքը, Վ. Տատրյանը գրում է, որ արդի պատմության մեջ առհասարակ պետությունն է, որ մարմնավորում է ամեն տեսակի պարտադրիչ հզորանք, այնտեղ են կուտակված ուժի աղբյուրները, այնտեղից են բխում պարտադրանքի հնարամիջոցները: Եվ պատահական չէ, որ ցեղասպանության պատմությունն ուսումնասիրած պատմաբանների և այլ մասնագետների ճնշող մեծամասնությունը առանց այլևայլության ցեղասպանությունը դիտում է իբրև պետական ոճիր:

Կոնկրետացնելով խոսքը հայոց ցեղասպանության վրա, այդուհանդերձ, հեղինակն առաջարկում է այլընտրական վարկած, ըստ որի ոչ թե պետությունն ինքնին, այլ բռնատիրական միջոցներով այդ պետությունը նվաճած և նրա կառուցվածքին միաձուլված միահեծան քաղաքական կուսակցությունն է, որ գատորոշվում է իբրև հայկական ցեղասպանության բուն հեղինակ: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է, այսպես կոչված, Երիտասարդ թուրքերի հաստատած Իթթիհատ վե Թերագգը քաղաքական կուսակցությանը, որը 1908-ի հուլիսին նվազագույն արյունահեղությամբ տապալեց համիդյան բռնակալական վարչակարգը և վերահաստատեց 1976-ի սահմանադրությունը:

Երիտասարդ թուրքերի գազանային էությունը բացահայտելու համար Վ. Տատրյանը անդրադառնում է նրանց կուսակցության ակունքներին, գրում, որ Իթթիհատական հեղափոխությունը զուրկ էր մշակված գաղափարախոսությունից, և նրա ղեկավարների հիմնական և միակ մտասևեռումը համիդյան վարչակարգի տապալումն էր, որը անդունդի եզրին էր հասցրել կայսրությունը: 1908-ի հեղափոխությունից հետո Իթթիհատը մնաց իբրև մի դավադիր խմբակցություն, որը մատնված էր անճարակության: Հեղափոխության ջահակիրները չէին զբաղվել հետհեղափոխական երևան գալիք խնդիրների լուծման հարցերով: Իթթիհատական ղեկավարների մեջ պակասում էին կառավարական փորձառությամբ խմորված վարչագետ անձինք: Նրանց մեջ ավելի շատ էին արյունկզակ բախտախնդիրները, որոնք հայրենասիրության

[1] Նշվ. աշխ., էջ 107:

պիտակի տակ պատրաստ էին ամեն կարգի ծայրահեղության դիմելու՝ ներառյալ մարդասպանությունը:

Առանձին գլխում Վ. Տատրյանը վերլուծում է Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածի հանգամանքները և հանգում այն եզրակացության, որ դա մի փորձաքար էր Մեծ եղեռնի կազմակերպման համար: Նա վկայակոչում է իթթիհատական երեսփոխան Հակոբ Պապիկյանի զեկուցագիրը, որով հաստատվում էր իթթիհատականների մասնակցությունը Ադանայի վայրագ եղերերգության կազմակերպմանն ու գործադրմանը: Այլ փաստեր ևս վկայակոչելով, հեղինակը Ադանայի եղեռնի գլխավոր հանցագործ է հռչակում իթթիհատական պարագլուխ դոկտոր Նազըմին: Այն միտքն է հայտնվում նաև, որ Ադանայի եղեռնագործների անպատիժ մնալը խթանեց իթթիհատականների ցեղասպանական հակումները, որոնք հետագայում նոր թափ ստացան[1]:

Հաջորդ գլխում քննարկվում են Բալկանյան պատերազմի արդյունքները և կարծիք է հայտնվում, որ դրանք մեծ դեր խաղացին հայոց ցեղասպանության գաղափարի սաղմնավորման գործում:

Վ. Տատրյանը արտահայտում է վիճահարույց այն տեսակետը, թե ռուսական ազդակը, հակառակ իր հայանպաստ առաջադրության, հայերի համար դարձավ աղետալի՝ 1914 թ. օգոստոսի 2-ին ստորագրված գերմանա-թուրքական դաշինքի պարագայում: «Թե գերմանացիներուն և թե թուրքերուն համար ռուսական հարցը ձնով մը դարձած էր հայկական հարց, այսինքն Ռուսիան խորտակելու ծրագրին մեջ կիյնար հայերը խորտակելու պայմանը»,— գրում է նա[2]: Դրանով է նա բացատրում գերմանական զինվորական և քաղաքական իշխանությունների ներգործակցությունը հայկական նախճիրին, և գերմանացիները անպատշաճ ընդունակ դեր կատարեցին այդ եղեռնագործության մեջ: Հայերին հետապնդելու, լրտեսելու և հսկողության տակ առնելու նպատակով ոստիկանական բնդհանուր տնօրինության համակարգում ստեղծվեց հատուկ մասնաճյուղ՝ ոստիկանապետ Պետրի բեյի գլխավորությամբ: Ականավոր հայերի, հատկապես կուսակցական ղեկավարների, ազգային մտավորականների և եկեղեցական գործիչների համար բացվեցին անձնական թղթապանակներ՝ նրանց բոլոր գործողությունները հետևելու և արձանագրելու նպատակով, Վ. Տատրյանը հաղորդում է, օրինակ, որ Զոհրապի բոլոր այցելությունները ռուսական դես-

[1] Նշվ. աշխ., էջ 118:
[2] Նշվ. աշխ., էջ 125:

պանատուն՝ լրտեսված և ձշված էին նրա հատուկ թղթապանակում: Լրտեսական այդ նոր մեթոդները թուրքերը կիրառում էին գերմանացիների ցուցումներով: Իսկ երբ սկսվեց պատերազմը, ստեղծվեց գերագաղտնի մի մարմին, որի պարտականությունն էր սարսափի և անհնազանդության ենթարկել հայությանը: Այդ մարմնի անդամներն էին ապահովության ընդհանուր տնօրեն, ժանդարմերիայի պետ Ջանփոլադը, ոստիկանության պետ Պետրին, նրա օգնական Մուստաֆա Ռեշադը, ընդհանուր ապահովության բաժինների վարիչներ Ազիզ և Էսատ բեյերը: Դրանք բոլորն էլ վճռական դեր խաղացին հայկական ցեղասպանության կազմակերպման մեջ: Պատերազմից հետո Էսադ բեյը անգլիական իշխանություններին հանձնեց գերգաղտնի թթիհատական մի փաստաթուղթ, որը հայկական ցեղասպանության ծրագրի նախնական ուրվագիծն էր:

Վ. Տատրյանի կարծիքով գերմանական թելադրությամբ և աջակցությամբ ստեղծված ամենակարևոր կառույցը Հատուկ կազմակերպությունն էր՝ Թեշքիլաթը մախսուսեն, որի սկզբնական գլխավոր նպատակադրումը դաշնակից երկրների և հատկապես Ռուսաստանի դեմ լրտեսական և խափանարարական գործողություններ ձեռնարկելն էր: Սակայն թուրքական 3-րդ բանակի ռուսական բանակի կողմից ջախջախվելուց հետո իթթիհատական պարագլուխները Բեհաէդդին Շաքիրի պնդմամբ Հատուկ կազմակերպության համար սահմանեցին նոր առաքելություն՝ Թուրքիայի հայ ազգաբնակչության բնաջնջումը: Պետության մեջ պետության նման գործող այս կազմակերպությունն ուներ իր ծածկագրերը, համազգեստները, յուրահատուկ անձնակազմը և ֆինանսները: Հեղինակի բնորոշմամբ Հատուկ կազմակերպությունը իթթիհատի մահասփյուռ այն դժոխային մեքենան էր, որի միջոցով այդ կուսակցությունը կարողացավ ներթափանցել թուրքական պետական հաստատության մեջ, այլափոխել այդ պետության կառուցվածքային բնույթը և պարտադրել այդ պետությանը իթթիհատական կուսակցության առաջադրությունների որդեգրումը[1]: Ահա այդ կազմակերպությունն էլ դարձավ հայոց ցեղասպանության գլխավոր գործիքը:

Երկասիրության վերջին՝ «Իթթիհատի կուսակցական կազմակերպության ցեղասպանական կարողականությունը» բաժնում Վ. Տատրյանը վերստին ընդգծում է, որ իթթիհատը ոչ միայն քաղաքական կուսակցություն էր, այլև դավադրական գաղտնի կազմակերպություն էր, և

[1] Նշվ. աշխ., էջ 130:

միայն այդպիսի կուսակցությունը կարող էր կազմել արյունարբու ոճրագործներից բաղկացած ջարդարար ոհմակներ և ավարտին հասցնել ցեղասպանությունը: Իսկ կառավարական գրեթե բոլոր մարմիններն ու իշխանությունները լծվեցին իթթիհատի կուսակցական ոճրապարտ ծրագրերն իրագործելու նպատակին: «Հայկական ցեղասպանությունը ցայտուն ապտահայտությունն է միահեծան և բռնակալ կուսակցության մը այն ոճրապարտ նպատակադրության,— ամփոփում է իր խոսքը հեղինակը,— որով ազգ մը կործանեցավ շնորհիվ Իթթիհատ կուսակցության դավադրական միաձուլման Օսմանյան պետության հետ»[1]:

***

Հայոց ցեղասպանության վերաբերյալ նորագույն ուսումնասիրությունների շարքում առանձնակի կարևորություն ունի «հայ-ավստրիական պատմարան (այդպես է նրան որակել Վիեննայի համալսարանի նոր պատմության ինստիտուտի ռեկտոր Վոլֆդիթեր Բիհլը) **Արտեմ Օհանջանյանի** աշխատությունը, որը հրատարակել է ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը[2]:

Ինչպես գրքի առաջաբանում նշում է Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Վ. Բիհլը, Ա. Օհանջանյանը հենվել է հիմնականում Ավստրո-Հունգարիայի գործիչների զեկուցագրերի վրա, որոնք իրրև փաստաթղթեր ճշմարտացիության տեսակետից հետու են վիճելի լինելուց և խոսուն վկայություններ են: Իրրև գրքի արժանիք նշվում է նաև, որ ազգությամբ հայ հեղինակը զարմանալի անաչառության է հասել:

Հայոց եղեռնին նվիրված բաժինը Ա. Օհանջանյանն սկսում է այն դատողություններ, որ Թուրքիայի մուտքը պատերազմ հայ ժողովրդի հավատարիմ կրկնակի զգույշ լինելու նշան պետք է ծառայեր: Հայոց պատրիարք Զավենի շրջաբերականը պահանջում էր յուրաքանչյուր հայից՝ կատարել իր պարտքը ի պաշտպանություն հայրենիքի: Հայկական թերթերն առանց բացառության գրում էին հայրենիքի հանդեպ հայերի հավատարմության մասին:

Սակայն ժողովրդին հանգստացնելու նման ճիգերը նպատակին չհասան. հայերը տագնապած էին և թերահավատ, որովհետև կատա-

[1] Նշվ. աշխ., էջ 138:

[2] Արտեմ Օհանջանյան. 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին): Երևան, 1997:

վարությունը մահմեդականներին զենք էր բաժանել: Ահա թե ինչու, ըստ Ա. Օհանջանյանի, երբ սկսվեց պատերազմը, հայերը Կովկասում կամավորական ջոկատներ կազմեցին, որոնց ընդհանուր թիվը վեց հազար էր, և միացան ռուսական բանակի ստորաբաժանումներին: «Եթե հիշենք,— գրում է հեղինակը,— որ ռուսական բանակ էր հավաքագրվել 250.000 հայ, ապա հայ կամավորական գումարտակները, դրանց հետ համեմատած՝ էական նշանակություն չունեին: Սակայն թուրք տիրակալների և նրանց դաշնակիցների մեջ սրանք միայն ավելի մեծ թշնամանք առաջացրին»[1]:

Հայոց ցեղասպանությանը նվիրված շարադրանքում Ա. Օհանջանյանը լայնորեն օգտագործել է Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան՝ մարկիզ Յոհան ֆոն Պալավիչինիի, դեսպանի խորհրդական կոմս Կարլ ֆոն Թրաութմանսդորֆի, Ադրիանապոլսի հյուպատոսներ Մաքս Հերցֆելդի, Արթուր Նադամլենգկու, Հալեպի հյուպատոս Ալոիս Դանդինիի, Տրապիզոնի հյուպատոսներ՝ ֆոն Մորիցի, Էրնեստ Կվյատկովսկու, ռազմական կցորդներ բարոն Վլադիմիր Գիզլի, Յոզեֆ Պոմյանկովսկու, արտգործնախարարներ կոմս Բերթխոլդի, կոմս Բուրյանի, կոմս Չերնինի և այլոց զեկուցագրերը, նրանց հղած ու ստացած հեռագրերը, նամակները, լրտեսագրերը, հուշերը և այլ փաստաթղթեր, որոնք հիմնականում շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Այսպես. Պոմյանկովսկին իր հուշերում գրում է, որ Դարդանելում անգլիական նավատորմի նկատմամբ տարած հաղթանակից հետո խիտ գաղտնի հրաման տրվեց Փոքր Ասիայում բնակվող հայերին Հյուսիսային Արաբիա կամ Միջագետք՝ Եփրատի ակունքները տեղափոխելու մասին, և այդ բարբարոսական հրամանի կատարումը իրականում հաջողությամբ սկսեցին կոտորել զինվորական ծառայության համար պիտանի հայերին՝ ազգաբնակչության մյուս մասին անպաշտպան դարձնելու նպատակով: Ապա մինչև 1915 թ. աշունն ընկած ժամանակաշրջանում առանց սեռն ու տարիքը հաշվի առնելու հայերին ժանդարմների հրոսկողությամբ քշեցին դեպի հարավ: Ճանապարհին տղամարդկանց խմբերով սպանում էին, իսկ գեղեցիկ կանանց տանում թուրքական հարեմները: Մնացածը մեռան քաղցի, զրկանքների և ուժասպառության հետևանքով, և միայն մի խղճուկ մասը հասավ Եփրատի ափերը,

[1] Նշվ. աշխ., էջ 85:

որտեղ, ամեն միջոցից զուրկ և առանց որևէ օգնության, կարճ ժամանակ անց մահացավ[1]:

Բերված փաստերից տեղեկանում ենք, որ Վանի ինքնապաշտպանության մասին ավստրիական թերթերը հաղորդում էին այնպես, ինչպես թուրքական մամուլը՝ թե իբր հայերը ռուսների հետ միասին պատերազմ էին վարում Թուրքիայի դեմ: Նրանք հաղորդում էին նաև 150 000 մահմեդականների ջարդերի մասին, որ իբր իրագործել էին հայերն ու ռուսները:

Հայերի կոտորածների անհնախադեպ չափերը հարկադրեցին Պալավիչինիին՝ զգուշացնել Թալեաթին, որ Թուրքիան դրանով ինքն իրեն է վնասում: Հեռագրերից մեկում նա նշում է, որ Տրապիզոնի հայերի արտաքսումը Մոսուլ՝ մեծ հեռավորության և օթևանի ու սննդի բացակայության պայմաններում հավասարազոր է մահվան դատապարտման:

Այլ կարծիքի էր, սակայն, Հալեպի հյուպատոս Դանդինին, որը բռնագաղթի մեղքը վերագրում էր հայերին, համարելով, որ կառավարությունը հայերի թշնամական դիրքը փոխելու ապարդյուն ջանքերից հետո ստիպված էր նրանց տեղահանել արևելյան վիլայեթներից: Նա գրում էր, որ հայերի արյունոտ կոտորածների մասին լուրերը հավատ չեն ներշնչում, այլ պարզապես երկրի ներսում տեղի են ունեցել վտանգավոր հայկական տարրի մեծ թվով զանգվածային մասնապոիժներ: Հյուպատոսը առաջին հերթին մեղադրում էր Անտանտին, որը նրա կարծիքով այդ շրջաններում քրիստոնյաներին անհեռանկարային ոտնձգությունների էր սադրել կառավարության դեմ[2]:

Շարունակելով ավստրիական հյուպատոսի միտքը, Ա. Օհանջանյանը ուշագրավ փաստեր է բերում նաև որոշ վալիների դժգոհության մասին, թուրքեր, որոնք ճիշտ չէին համարում կառավարության գործողությունները հայերի դեմ և չէին ցանկանում կատարել բռնագաղթի հրամանները: Դրանցից էին՝ Հալեպի վալի Ջելալ բեյը, որին տեղափոխեցին Կոնիա, Դիարբեքիրի վալին և Լիջեհի կայմակամը, որոնց պաշտոնից հեռացրին և ապա գաղտնի սպանեցին: Հայերի հալածանքներին դեմ էին նաև կոմիտեի անդամ Ահմեդ Ռիզա բեյը, շեյխ Ուլ Իսլամը, երիտթուրք և լիբերալ ընդդիմության առաջնորդ Իսմայիլ Հաքքին և նման բարձր դիրքի էլի ուրիշ թուրքեր: Ա. Օհանջանյանը

[1] Նշվ. աշխ., էջ 90—91:

[2] Նշվ. աշխ., էջ 99:

քաղվածք է կատարում Իսմայիլ Հաքքիի հրապարակած լրագրային մի հոդվածից, որտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրությունում ապրող հույների ու հատկապես հայերի նկատմամբ ամենասարսափելի ոճրագործություններ են կատարվում: Մարդկային լեզուն ու գրիչն ի վիճակի չեն արտահայտելու փաստերի անգամ հարյուրերորդ մասը: Կեղծ հայրենասերներն ու կարճատես քաղաքագետները ջանում են քողարկել Թուրքիայում իշխող հարաբերությունները: Այնինչ մենք, իբրև իսկական օսմանցիներ, այսօր գոռում ենք մարդկությանն ու քաղաքակիրթ Եվրոպային, որ հայերի ու հույների հալածանքները շատ ավելի սոսկալի չափեր են ընդունել, քան երևում է մամուլի հաղորդումներից: Հայերին ու հույներին անողոքաբար հալածում են: Օրեցօր հեռավոր շրջաններում հարյուրավոր հայեր են սպանվում: Մենք ամբողջ սրտով կարեկցում ենք մեր հայրենակիցների դժբախտությանը»[1]:

Դեսպանի խորհրդական Թրաութմանդորֆի Վիեննա ուղարկած մի զեկուցագրից, որը զետեղված է «Եղեռնի թվերը» բաժնում, տեղեկանում ենք, որ հայության մի մասին փրկելու նպատակով ամերիկյան դեսպան Մորգենթաուն Թալեաթին առաջարկել է թույլ տալ նրանց արտագաղթել Ամերիկա: Սկզբում Թալեաթն ընդունել է այդ առաջարկը, սակայն հետագայում հարուցել է ամենատարբեր դժվարություններ:

Ադրիանապոլսի հյուպատոս Նադամլենցկու մի հաղորդման մեջ խոսվում է դասալիքների ընտանիքներին պատժելու գործողությունների մասին և պարզաբանվում, որ քրիստոնյաների դասալքության պատճառը նրանց նկատմամբ բիրտ վերաբերմունքն էր, զինվորներին որպես ճանապարհաշինարարներ օգտագործելը:

Բաժնում ներկայացված է Վատիկանի նվիրակ Հ. Հուֆերի՝ 1915 թ. աշնանը Վիեննայում կազմած հուշագիրը բռնագաղթի ենթարկված հայերի ճակատագրի մասին, որին նա ականատես էր եղել Էրզրումում: Ըստ նրա, «տեղահանում» բառը նշանակում էր տղամարդկանց ոչնչացում, կանանց առևանգում, բռնի մահմեդականացում: Նա նշում է, որ թուրքերն իրենք սպանված հայերի թիվը համարում են 500 000, տեղահանվածներինը՝ 900 000:

Հիշատակվում է գնդապետ Կրեսի վկայությունը, ըստ որի թուրքական իշխանությունների կողմից մի հին եկեղեցում բացված որբանոցում տեղավորված էին 500 ծնողազուրկ երեխաներ: Նրանք պատկած էին բարակ ծղոտե խսիրների վրա, առանց վերմակների, թեթև գիշերանոցներով: Երեխաները ցրտից դողում էին: Նրանք օրական երեսուն գրամ հաց և մի թաս ջրիկ ապուր էին ստանում: Նրանք բոլորը լուռ էին, ու անտարբեր, աչքերի մեջ՝ աճ ու սարսափ[1]:

Անդրադառնալով Մեծ եղեռնի զոհերի թվի հարցին, Ա. Օհանջանյանը բաղդատում է տարբեր վկայություններ և հանգում այն եզրակացության, որ մինչև 1915 թ. հոկտեմբերի վերջը պետք է զոհված լինեն մեկ միլիոնից ավելի հայեր:

Ա. Օհանջանյանը բերում է նաև ավստրո-հունգարական պաշտոնյաների մի շարք վկայություններ, որոնք ժխտում են այն կեղծիքը, թե իբր հայերին տեղահանում էին միայն սահմանամերձ շրջաններից և պարզում, որ նրանց անապատներ են տեղահանել բոլոր մարզերից: Այսպես, Պալավիչինին հաղորդում է Ադրիանապոլսից հայերի վտարման մասին: Նա նշում է, որ անկարելի է նկարագրել արտաքսումների ժամանակ տեղի ունեցող տեսարանները: Հիվանդներին, ծերերին ու երեխաներին դուրս էին քաշում անկողնուց և ուժով տանում:

Ադրիանապոլսի հյուպատոս Նադամլենցկին իր զեկուցագրերից մեկում խոստովանում է, որ այն եղանակը, որով տեղի է ունենում հայերի վտարումը, հակասում է մարդասիրական բոլոր սկզբունքներին: «Այս գործելակերպը,— գրում է հյուպատոսը,— որը ստորագրյալներս տեսել ենք այստեղ, ցույց է տալիս, որ գործ ունենք ոչ միայն մի ամբողջ ցեղի ոչնչացման, այլև, և ավելի շուտ, նրա բնաջնջման հետ... բաներ են կատարվում, որոնց ըմբռնելու ի վիճակի կլինի միայն բոլորովին աղճատված բանականությունը և բարբարոսական ու գազանային հոգին»[2]:

Պալավիչինին հաղորդում էր, որ հալածանքները շարունակվում են նախկին դաժանությամբ: Նոր հավաքատեղին Հալեպն է, որտեղ, սակայն, քչերն են հասնում, որովհետև տեղահանվածներին ոչ հաց են տալիս, ոչ էլ ջուր: Հալեպում բնակվող մի շվեյցարացու ձերբակալել և զինվորական դատի էին տվել, որովհետև նա հայերին հիսուն հատ հաց էր բաժանել: Մի տեղ հավաքել են 2000 հայերի և սպանել ինչպես գազանների:

Պալավիչինին խոսում է թուրքական կառավարության կողմից ճարպկորեն սարքված և տարածած մի հուշագրի մասին, որով հայերը

[1] Նշվ. աշխ., էջ 102:

[1] Նշվ. աշխ., էջ 110:
[2] Նշվ. աշխ., էջ 118:

ներկայացվում էին որպես ըմբոստ հպատակներ և Անտանտի լրտեսներ: Հավանություն տալով հայերի մասնակի տեղահանումներին, նա գտնում է, սակայն, որ կատարվածը ընդմիշտ անարգանքի բիծ կմնա թուրքական կառավարության համար:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. Օհանջանյանի «Պատասխանատուները» բաժինը: Այստեղ նշվում է, որ երիտթուրքերի քաղաքագետները բազմիցս նշել են, որ կոտորածների շարժիչ ուժը Էնվերն ու Թալեաթն էին: Սակայն հեղինակը վկայակոչում է պատմաբան Վոլֆդիտեր Բիլի կարծիքը, ըստ որի գլխավոր շարժիչ ուժն, անշուշտ, Թալեաթն էր, նա էր վալիներին ցուցումներ ուղարկում, սակայն բռնագաղթի մասին որոշումը, այնուհանդերձ, ընդունել է ամբողջ կաբինետը:

Ա. Օհանջանյանը վկայակոչում է Պալավիչինիի, Նադամլենգկու, Թրաութմանդորֆի և այլոց մի շարք փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ հայերի հալածանքների հրամանները տվել է թուրքական կառավարությունը[1]: Այդ փաստաթղթերը մերկացնում են նաև թուրքական կառավարության՝ մեղքը ուրիշի վրա բարդելու ձախողակ փորձերը:

Հայոց Մեծ եղեռնի պատմության վերաբերյալ սփյուռքահայ ստվար ու բազմաբովանդակ պատմահուշագրական, փաստավավերագրական, տեղեկատու, վիճակագրական և այլ բնույթի գրականության մատակարարած նյութը կարևոր աղբյուր է հայրենական պատմաբանների համար՝ հայ ժողովրդի մեծագույն ողբերգության գիտական պատմությունը նոր աշխատություններով հարստացնելու ճանապարհին:

[1] Նշվ. աշխ., էջ 116—119:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայոց Մեծ եղեռնի արյունաթաթախ պատմությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո տասնամյակներ շարունակ քաղաքական պատեհապաշտության նկատառումներով ի վերուստ պարուրվեց միտումնավոր լռության և մոռացության անթափանց շղարշով, որովհետև դրա գլխավոր սադրիչներ ու պատասխանատուներ հռչակվեցին հայ ազգային քաղաքական կուսակցությունները, նրանց ղեկավար գործիչները և հայոց ազատամարտիկները:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ ծայրահեղ տեսակետներ է արտահայտել պրոֆ. Լեոն (Առաքել Բաբախանյան): «Անցյալից» աշխատության հինգերորդ՝ «Համաշխարհային պատերազմ» գլխում կամավորական շարժումը որակելով իբրև չկշռադատված, ռուսական բանակի շտաբի կողմից Դաշնակցությանը հանձնարարված որոշում, նա գրում է. «Սկզվում էր կամավորական շարժումը: Հայ ժողովուրդն ուներ ռուսական բանակի մեջ հարյուր հազարից ավելի զինվորներ: Այս բավական չէր: Կազմվում էր առանձին և հատուկ հայկական կամավոր զինվորություն: Եվ այս նշանակում էր, թե հայ ժողովուրդն առանձին իր կողմից էր պատերազմ հայտարարում Թուրքիային: Այնպես էր քառորդդարյա հայդուկային դաստիարակությունը, միշտ հանդուգն, խիզախ, բայց և միշտ անհմաստ ու երազական... Եթե չլիներ 1914-ի ամառը Հ. Հ. Դաշնակցությանը կամ նրա նման մի այլ ֆիդայական հիմնարկություն, կարո՞ղ էր առաջանալ հայկական առանձին կամավորական շարժում:— Երբեք»[1]:

Խոսելով Դաշնակցության՝ Էրզրումի ժողովում թուրքերի առաջարկության առթիվ (իսկ նրանք առաջարկում էին հայերին՝ ապստամբել

[1] Լեո: Ականջալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 284—285:

Ռուսաստանի դեմ և իրենց տրամադրել կամավորներ, փոխարենը խոստանալով հայերին ինքնավարություն ռուսական Հայաստանի սահմաններում— Մ. Կ.) կայացրած որոշման մասին, Լեոն գտնում է, որ դա միակ կարելին էր սալի և կռանի մեջ տրորվող մի փոքր ազգության համար: «Նա չընդունեց երիտասարդ թուրքերի առաջարկությունը,— գրում է Լեոն,— հայտարարելով, որ Դաշնակցությունը ծագող պատերազմի մեջ իրեն չեզոք կպահի: Բայց բարձր մարմնի այս որոշումը մնաց մեռած տառ թղթի վրա: Հարց վճռողներ հանդիսացան Կ. Պոլսի կոմիտեն և Կովկասի Արևելյան բյուրոն: Դաշնակցությունը չեզոք չէ, այլ միանում է ռուսներին և տալիս է նրանց այն, ինչ մերժել էր թուրքերին— կամավորական խմբեր, պատերազմ մղելու համար և ապստամբություն Թուրքաց Հայաստանում»[1]: Լեոն դա համարում է ոճրագործ որոշում, որը կայացվել էր ոչ միայն առանց բուն երկրի գիտության, այլև հակառակ նրա ցանկության: «Ժողովուրդը Կ. Պոլսի և Թիֆլիսի պոռոտախոսներից շատ լավ էր հասկանում իր դրությունը և միայն մի բան էր ցանկանում— որ իրեն թույլ տրվի անցկացնել պատերազմական փոթորիկը, ինչպես ինքը կարող էր,— շարունակում է նա:— Այսպես չեղավ, դժբախտաբար: Այդ ժողովուրդը, անմեղ ու անզեզու մի ամբոխ, «փրկիչներ» չափազանց շատ ուներ և նրա համար, դրա հետևանքով, փրկություն չէր մնում այլևս»[2]:

Հայերին համեմատության մեջ դնելով լեհերի հետ, Լեոն գրում է, որ վերջիններս չխաբվեցին Նիկոլայ Նիկոլաևիչի մեծախոս դիմումին և այն ընդունեցին առանց հորթային հրճվանքի, նույնիսկ սառն անտարբերությամբ, ոչ կամավորական գնդեր կազմեցին, ոչ էլ ապստամբություն բարձրացրին Գալիցիայում: «Իսկ մե՞նք,— շարունակում է Լեոն:— Մենք նույնիսկ Նիկոլայ Նիկոլաևիչի կոչն էլ չունեինք ձեռներիս, բայց այնքան խոսեցինք ու քղավեցինք, թե պետք է, որ մենք էլ կոչ ունենանք, այն էլ ոչ թե Նիկոլայ Նիկոլաևիչից, այլ հենց իրենից՝ Նիկոլայ Բ-ից, որ լրագիրների մեջ, այն էլ, անշուշտ դաշնակցական կամ հնչակյան մամուլի սատարությամբ, կազմվեց մի հրեշավոր սուտ— իբր թե Նիկոլայ Բ-ն կոչ է ուղղել հայերին և նրա մեջ ասել՝ «Հայեր, եկել է և ձեր ազատագրության վերջը» և այլն: Այս սուտը երկու ձեռքով բռնեց թուրքական կառավարությունը և գետեղեց մեղադրական կետերի մեջ, որոնցով ամբողջ թուրքահայությունը դատապարտվում էր բնաջնջման:

[1] Նշվ. աշխ., էջ 286:
[2] Նույն տեղում:

Կոնստրվատիվ սենյակի ժողովուրդ չէինք, այլ կտրի ժողովուրդ էինք, ինչ ունեինք՝ հրապարակի մեջ էր: Նույնիսկ ինչ չունեինք էլ, դարձյալ հրապարակի մեջ էինք դնում: Այս պատճառով էլ չափազանց հեշտ էր մեզ թակարդի մեջ գցելը, մեզ լավ ջարդելը և նույնիսկ արմատահան անելը»[1]: Հայոց ցեղասպանության պատճառների նման պարզունակացումը կարծեք թե վերցնում է անգամ պատասխանատվությունը երիտթուրքական ոճրագործների վրայից և թեթև ձեռքով ամեն ինչ բարդում հայերի վրա, մտայնություն, որը, մեր կարծիքով, հույժ մերժելի է:

Խոսելով Անդրանիկի, Համազասպի և, մասնավորապես, օսմանյան պաղտամեենտի անդամ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) Թիֆլիս գալու և կամավորական շարժման կազմակերպմանը ձեռնամուխ լինելու մասին, Լեոն գրում է. «Ամենի մեծ անտանկտություն Դաշնակցությունն իր կյանքում չէր արել: Ոչինչ բան այնքան չկատաղեցրեց երիտպարդ թուրքերին, որքան այն հանգամանքը, որ թուրքական պառլամենտի անդամն անցնում է Թուրքիայի դարավոր ոխերիմ թշնամու կողմը՝ Թուրքիայի դեմ կռվելու համար: Հայերի պետական դավաճանության ապացույց է այն լուսանկարը, որ ներկայացնում է այդ պառլամենտի անդամին իր զինվորների հետ: Եվ այդ փոքրիկ մարդն իր փոքրիկ փառասիրությամբ, ով գիտե որքան ուժ է տվել այն ձեռքին, որ ստորագրում էր թշվառ թուրքահայության բնաջնջման ծրագիրը»[2]:

Լեոն բառացիորեն մեջ է բերում փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ Գևորգ կաթողիկոսին ուղղված 1914 թ. սեպտեմբերի 2-ի պատասխանը և ցույց տալիս, որ այնտեղ ոչինչ նոր բան չկար, այլ միայն այն, ինչ ռուսաց կառավարությունը առաջարկել էր Թուրքիային 1913-ին և կրճատվել էր Գերմանիայի դիմադրության շնորհիվ: Միևչդեռ ոգևորված հայ գործիչները մեկնաբանում էին այդ պատասխանը այնպես, որ ստացվում էր, թե վարչապետ Գորեմիկինը խոստացել է անգամ անկախ Հայաստան: Միևչդեռ ռուսաց կառավարության խոստումն անորոշ էր, մշուշային, ինչպես էր 1878-ին: «Պարզ է, զարհուրելի պարզ այդ նամակի երկրորդ մասը,— շարունակում է Լեոն,— որից երևում է, որ կառավարության դրած պայմաններից մեկը եղել է հայկական ապստամբություններ հարուցանելը Թուրքաց Հայաստանում, և այս պայմանը ընդունել են հա-

[1] Նշվ. աշխ., էջ 289—290:
[2] Նշվ. աշխ., էջ 292:

յերը: Պատմությունը զարհուրանքով կարձանագրի այս փաստը և կասե, որ այս այլևս հիմարություն չէ, անմտություն չէ, այլ՝ եղեռն է... Պատերազմի ժամանակ ապստամբեցնել մի ժողովուրդ՝ նշանակում է պարզապես բոլոր իրավունքները տալ պատերազմող երկրի կառավարության, որ նա հրով և սրով ոչնչացնե այդ ապստամբած ժողովուրդը»[1]:

Նմանատիպ արտառոց տեսակետները տեղ գտան նաև պրոֆ. Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ, որտեղ նա անցյալ դարի 90-ական թվականների արևմտահայերի զանգվածային կոտորածների ու Մեծ եղեռնի հիմնապատճառ համարեց «հայկական ապստամբությունները»: Առանց վարանելու Լեոն գրում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեկ միլիոն հայերի բնաջնջման պատճառը հենց այդ ապստամբություններն են եղել, և եթե չլիներ Դաշնակցությունը, ապա հայությունը չէր խեղդվի արյան ծովի մեջ[2]:

Հետին թվով Լեոն դատապարտում է Թիֆլիսի Ազգային բյուրոյի, որի անդամներից մեկն էլ, ի դեպ, ինքն էր և Կովկասի փոխարքայության կազմակերպած կամավորական շարժումը, այն որակելով իբրև «զարհուրելի, հրեշավորագույնր բոլոր մարդկային ոճիրներից»[3]:

Եվ արդեն զարմանալի էլ չի թվում, որ բազմահատոր պատմաբանը ցավալիորեն հանիրավի դատապարտում է Վանի, Մուշի, Սասունի, Բաղեշի, Շապին-Գարահիսարի, Զեյթունի 1915 թ. հերոսամարտերը:

Դե ինչ, չմեկնաբանենք: Ասենք միայն, որ դրանից հետո թուրքերն առանձնապես մեծ ճեղություն չէին կրելու՝ իրենց զարհուրելի եղեռնագործությունն արդարացնող «հիմնավորումներ» որոնելիս:

***

Հայրենական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության հիմնահարցի շուրջ պարտադրված մոտավորապես քառորդդարյա լռության քողը պատռելու առաջին քայլերը ձեռնարկեց և Եղեռնի պատմության գիտական ուսումնասիրման հիմքերը դրեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, որը դեռևս 1946-ին պաշտպանեց դոկտորական դիսերտացիա՝

1 Նշվ. աշխ., էջ 294:

2 Լեո: Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Բ հատոր, Փարիզ, 1935, էջ 113—121:

3 Նշվ. աշխ., էջ 111:

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ (1850—1870 թթ.)» թեմայով, որը 1955-ին հրատարակվեց իբրև մենագրություն[1]: Ի թիվս անցյալ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման մի շարք առաջնահերթ հիմնահարցերի, նշված հիմնարար մենագրության մեջ Մ. Ներսիսյանը, մերկացնելով արևմտյան պետությունների հակահայկական քաղաքականությունը հայ ազատագրական շարժման վերաբերմամբ, բարձրացրեց նաև Հայոց ցեղասպանության հիմնահարցը՝ գրելով. «Նույն արևմտյան պետությունների «չեզոքության» և հովանավորող քաղաքականության պայմաններում թյուրքական ջարդարարները կազմակերպեցին հայ բնակչության մասսայական կոտորածներ 1909 թվականին Ադանայում և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ Արևմտյան Հայաստանում ու Թյուրքիայում: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, Թալեաթի դահիճները սրի քաշեցին մեկ միլիոն մարդ: Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի այս մասսայական ջարդերի համար քիչ հանցանք չունեն նշված պետությունները, որոնք, ինչպես արդեն տեսանք, հանդես եկան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ»[2]:

Առավել հանգամանորեն Մ. Ներսիսյանը Հայոց ցեղասպանության հիմնահարցին անդրադարձավ Հայաստանի ԳԱ «Տեղեկագրում» հրապարակած «Արևմտահայերի մասսայական կոտորածները 1915—1916 թվականներին» ընդարձակ հոդվածում[3]:

1. Սկզբնաղբյուրների և փաստաթղթերի հրապարակումը

Հայոց Մեծ եղեռնի պատմության լուսաբանման ասպարեզում շրջադարձային եղավ 1960-ական թվականների սկզբները, երբ նախապատրաստական գործունեություն ծավալվեց հայոց պատմության այդ արյունոտ բաց վերքի 50-ամյա տարելիցը մեր իրականության մեջ առաջին անգամ բարձրաձայն նշելու ուղղությամբ: Ի թիվս տարաբնույթ այլ ձեռնարկումների, հրապարակ եկան պատմագիտական առաջին հետազոտությունները, որոնց շարքում ելակետային նշանակություն ունի Հայոց

1 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850—1870 թթ.): Երևան, 1955:

2 Նշվ. աշխ., էջ 339:

3 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, թիվ 5:

ցեղասպանության վերաբերյալ ակզբնաղբյուրների և փաստաթղթերի հրապարակումը:

Հայոց Մեծ եղեռնի պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում մեծ ավանդ է ներդրել բազմավաստակ հայագետ-պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Հայաստանի կենտրոնական պատմական արխիվում և ԳԱ պատմության ինստիտուտի արխիվի պրոֆ. Լեոյի ֆոնդում նա հայտնաբերեց և դեռևս 1965-ին «Պատմա-բանասիրական հանդեսի 1965-ի թիվ 1-ում «Նյութեր հայկական կոտորածների մասին» խորագրով հրապարակեց թվով իննն արժեքավոր փաստաթղթեր, որոնք լույս են սփռում շատ հարցերի վրա: Նախնական խոսքում ականավոր պատմաբանը նշում է, որ սուլթանական Թուրքիայում հայկական զանգվածային կոտորածներ տեղի ունեցան դեռևս 19-րդ դարի վերջերին, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը 1894—1896 թթ. բնաջինջ արեց մոտ 300 000 հայերի: Սակայն երիտասարդ թուրքերի ազգայնամոլ ու ոազմատենչ կուսակցությունը, որը իշխանության գլուխ անցավ 1908-ին, չցանկանալով լսել անգամ ազգային փոքրամասնությունների որևէ իրավունքի մասին, նախապատրաստեց մի նոր, անօրինական հանցագործություն: Որպեսզի վերջ տա Հայկական հարցին, նա որոշեց ֆիզիկապես ոչնչացնել օսմանյան ծանր լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդին[1]: «Այդ զարհուրելի ծրագիրը,— շարունակում է նա,— թուրքական կառավարությունը ամենայն բարբարոսությամբ իրականացրեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Ջարդերն սկսվեցին դեռևս 1914 թ. վերջերին: Սկզբում ենթագրեն և գաղտնի կոտորեցին դիմադրության ընդունակ բնակչության մեծ մասը: 1915 թ. ապրիլի 24-ին բանտարկվեցին և անխն ոչնչացվեցին արևմտահայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Հոծերի թվում էին ականավոր գրողներ, բանաստեղծներ ու հրապարակախոսներ՝ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և շատ ուրիշներ: Զարդարարներն այնուհետև անցան անօգնական բնակչության համընդհանուր կոտորածներին: Սկսվեց կանանց, երեխաների ու ծերերի անխնա բնաջնջում, ընդ որում, նրանց մի մասը կոտորվեց հայրենի գյուղերում ու քաղաքներում, մյուս մասը, որը բռնի տեղահան էր արվել՝ ճանապարհներին, երրորդ մասը ոչնչացավ Միջագետքի անապատներում:

1 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից: Երևան, 1982, էջ 352:

Կոտորածները իրականացվեցին ամենագազանային ձևերով: Ականատեսները, որոնց թվում հայեր, արաբներ, քրդեր, թուրքեր, եվրոպացիներ ու ամերիկացիներ, սարսափով են պատմում կատարված զազրելի ոճրագործությունների մասին:

Հայկական կոտորածները, որ առանձնապես ծավալվեցին 1915 թ., շարունակվեցին հետագա տարիներին Միջագետք և կայսրության մյուս անկյուններն աքսորված հայ բնակչության նկատմամբ: Ջարդեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, Թուրքիայի բոլոր հայաբնակ վայրերում»[1]:

Հայերի մասսայական կոտորածները Մ. Ներսիսյանը որակում է իբրև ցեղասպանության-գենոցիդի քաղաքականություն, որը մանրամասնորեն մշակվեց և անողոքաբար իրականացվեց երիտթուրքերի կառավարության և մասնավորապես նրա երեք դեկավարների՝ արյունարբու դահիճներ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի կողմից:

Հրապարակված առաջին երկու փաստաթղթերը արևմտահայերի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Սաքաոյանի ուղարկված նամակներն են Գևորգ 5-րդ Սուրենյանին:

Առաջին նամակում, որը գրված է 1912-ի սեպտեմբերի 4-ին, պատրիարքը իր հուսախաբությունն է հայտնում 1908-ի օսմանյան սահմանադրությունից, որի հռչակումից հետո ոչ միայն հայերի վիճակը որևէ նպաստավոր փոփոխություն չկրեց, այլև Ադանայի անհավոր կոտորածով (1909 թ.— Մ. Կ.) սկսվեց չարագործությունների նոր շրջան, որոնց թատերաբեմ դարձան հատկապես Վանի, Աղթամարի, Բսուեջի, Մշո և Սղերդի վիճակները: «Նոր ի նորո հասած հեռագրեր գուժեցին սպանության, ավարառության, առևանգումներու դեպքեր, և բռնագրոսիկ իսլամացումներ, նույնիսկ անչափահասներու, որ տեղական իշխանության պաշտոնեից աչքին առջև և անոնց անտարբերության, չըսենք՝ գաղտնի համաձայնության կամ մեղսակցության շնորհիվ՝ ի գործ կդրվին մերազնեից դեմ, որ անզեն ու անպաշտպան կգտնվին խուժդուժ ու զինյալ խուժանին առջև, խաղալիք թողված անոր մոլեռանդական վայրագ կրից, որ դեռ ծարավն ունի իր երբեմնի կոտորածներուն և ավարները շարունակելու, և **կապտանա սպառսպուռ չքացնելու հայ ժողովուրդը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), եթե անմիջական և իրական միջոցներ ի գործ չդրվին պաշտպանելու համար գայն...

Անհավատիկ, Վեհափառ Ս. Հայրապետ, այս է Թուրքիո Ձեր հոտին

1 Նշվ. աշխ., էջ 352:

վիճակը՝ հարատև կեղեքում, անվերջ և անասելի տառապանք, անմեկնելի անտարբերություն կառավարության կողմէ, հուզմունք ազգին մեջ, արտասահմանի ազգայիններու կողմե ալ բողոք և առաջարկ, դիմելու ուր որ անկե և հասկցնելու մեր վիճակը, լսելի ընել տալու մեր աղերսը և դարման մը ձեռք բերելու համար»[1]: Կարելի է, ուրեմն, անվարան հետևցընել, որ եղեռնի ուրվապատկերը արևմտահայության առջև կանգնած էր առաջին համաշխարհային պատերազմից դեռ շատ առաջ, 1912-ին, և միանգամայն անհիմն է կոտորածները պատերազմից բխող հանգամանքների հետ առնչելը: Մեր ասածի հաստատումն է պատրիարքի երկրորդ նամակը կաթողիկոսին՝ թվագրված 1913-ի մայիսի 24-ին, որտեղ ուղղակիորեն ասված է. «Գավառական առաջնորդարանե հասած հավաստի տեղեկություններե իրազեկ լինելով, որ բնագավառի հայ ժողովըրդյան վիճակը հետզհետե կվատթարանա և **հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կգտնվի** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), և մանավանդ նկատելով, որ Սահմ. Օսմ. կառավարությունն ևս, համիտական կառավարության նման, հետևելով հայահալած գաղտնի քաղաքականության մը, Հայաստանը կուզե սպարպել հայ ժողովրդեն, ուղղակի, բայց ավելի անուղղակի միջոցներով մղելով վշտաչափչար թշվառ հայությունը արտագաղթի...»[2]:

Երրորդ և չորրորդ փաստաթղթերը Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի գաղտնի հեռագրերն են՝ ուղարկված Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Սազոնովին, 1913-ի սեպտեմբեր-հոկտեմբերին, որոնցով դեսպանն ահազանգում է թուրքական կառավարության կողմից մուսուլմանական ավազակախմբերին զինելու և հայկական ջարդեր նախապատրաստելու մասին:

Հաջորդ փաստաթղթերը բուն եղեռնի իրականացման վերաբերյալ պերճախոս վկայագրեր են: Այսպես՝ Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանի 1915 թ. մայիսի 28-ի նամակում՝ ուղարկված կաթողիկոս Գևորգ Սուրենյանին (փաստաթուղթ 6) վիճակագրական ստույգ ու ցնցող տվյալներ են բերվում ցեղասպանության մասշտաբների մասին: Տեղեկանում ենք, որ Խնուսի 27 հայկական գյուղերի 3322 տուն հայերից ազատվել են 128, Ներքին Բուլանըխի 11 հայ գյուղերի 1000 տնից՝ 21, Վերին Բուլանըխի 15 հայ գյուղերի 2225 տնից՝ 40, Մանազկերտի 27 հայ գյուղերի 1089 տնից՝ 15,

[1] Նշվ. աշխ., էջ 353—354:
[2] Նշվ. աշխ., էջ 355:

Խլաթի 24 հայ գյուղերի 2150 ընտանիքից՝ 20 մարդ և այլն: Ազատվածներն էլ բոլորը մերկ ու բոբիկ են, երեսուն օր հաց չեն կերել, սնվել են բանջարներով ու բույսերով, կատարելապես մեռելի դեմք ունեն[1]: Գրեթե նույն պատկերն է Արծկեի, Ականցի, Բադնոցի և այնթափի գավառակներում, ուր մարդ է ուղարկված ու ստուգված, որ այնտեղ էլ բոլոր հայ տղամարդիկ սրի են քաշվել, իսկ գեղանի կանայք գերեվարվել են; Հիշատակվում է, որ կոտորածների գլուխ կանգնած է ինքը՝ կառավարությունը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Արևմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի 1915 թ. դեկտեմբերի 28-ի նամակը՝ ուղարկված ամերիկահայերի հոգևոր առաջնորդ, ծայրագույն վարդապետ Վեհունուն (փաստաթուղթ 7):

Այնտեղ նշվում է, որ որևէ գրիչ կամ թերան չի կարող նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներին Թուրքիայի մի ծայրից մինչև մյուսը, առանց խնայելու ամենափոքր գյուղը կամ զառամյալ ծերունին և կաթնակեր մանուկը, և որ համիդյան կոտորածները չնչին բան են սրա մոտ: Այս անգամ գործադրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր է, և Դիարբեքիրի Ռեշիդ, Բիթլիսի Աբդուլհալիգ, Կարնո Թահսին և այլ կուսակալներ արդեն պարծանքով հետագրել են կենտրոնական կառավարությանը, թե իրենց նահանգներում այլևս **ոչ մի հայ չկա** (ընդգծումը նամակագրինն է— Մ. Կ.): Այս անգամ խուժանը չէր, որ հարձակվեց խաղաղ ժողովրդի վրա, այլ նույն ինքը՝ կառավարությունը, որն իր ծրագիրը գործադրեց զինվորների, ժանդարմների, ոստիկանների և մանավանդ հրոսակախմբերի ձեռքով: Հրահանգը տրվեց կենտրոնից և ամեն կողմ գործադրվեց անխղճորեն:

Այնուհետև նամակում նշվում է, որ կոտորածը հատկապես ահռելի է եղել Մուշում, Բաղեշում, Տիգրանակերտում, Եդեսիայում, Տրապիզոնում, Շապին-Գարահիսարում, Քղիում, Բալուում, Երզնկա-Քեմախում, ուր գրեթե ոչ մի հայ չի ազատվել: Հայաստանի մյուս նահանգներում ազատվածներ կան, սակայն նրանք կազմում են հազիվ 5 տոկոսը: Լեռներն ու բանուկ ճամփաները դիակներով լցվեցին, գետերը օրերով դիակներ էին տանում իրենց ալիքների վրա: Նամակագիրը նշում է, որ մարդկային պատմությունը նման գազանային դեպքեր չի արձանագրել նույնիսկ նախաքրիստոնեական ժամանակներում: Զինադը լիովին գոր-

[1] Նշվ. աշխ., էջ 357—358:

ծադրվեց, որովհետև հայերը օրենքից դուրս և իսլամի թշնամի հայտարարվեցին և նրանց կյանքը, պատիվը և իճչքը «հելալ» համարվեցին, սպանությունը, բռնաբարությունը և կողոպուտը կրոնական պարտականության վերածվեցին նույնիսկ պաշտոնական անձանց համար»[1]:

Նամակի հեղինակը գրում է նաև հազարավոր հայ զինվորների կոտորածի և մահվան սպառնալիքով իսլամացած լինելու մասին: Ինչ վերաբերում է վանքերին ու եկեղեցիներին, ապա դրանք մեծ մասամբ կործանվեցին ու պղծվեցին, որոնց թվում Մշո Ս. Կարապետ, Կարնո Կարմիր վանքերը, Սեբաստիո Ս. Փրկիչ և Ս. Սարգիս եկեղեցիները թնդանոթով հիմնահատակ արվեցին, իսկ հոգևորականությունը գրեթե ամբողջովին կոտորվեց, որոնց թվում էին Կարնո առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սահաթեյանը, Տրապիզոնի առաջնորդ Գևորգ ծայրագույն վարդապետ Թուրյանը, Շապին-Գարահիսարի առաջնորդ Վաղինակ ծայրագույն վարդապետ Թորեկյանը, Բաբերդի առաջնորդ Անանիա ծայրագույն վարդապետ Հազարապետյանը, Մշո առաջնորդ Վարդան ծայրագույն վարդապետ Հակոբյանը, Տիգրանակերտի առաջնորդ Սկըրտիչ ծայրագույն վարդապետ Չլղատյանը, Եվդոկիո առաջնորդ Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյանը, Խարբերդի առաջնորդ Պսակ ծայրագույն վարդապետ Տեր-Խորենյանը և շատ ուրիշներ (թվարկվում են ևս 18 բարձրաստիճան հոգևորականների անուններ): Ամփոփելով զոհերի թիվը, Չավեն արքեպիսկոպոսը գրում է, որ այն **մեկ միլիոնից պակաս չէ** (ընդգծումն իմն է— Մ. Կ.):

Նամակի վերջում պատրիարքը գրում է, որ հայության բնաջնջման այս ծրագիրը, որ վաղուց հղացված էր, գործադրվեց՝ պատրվակ բռնելով Վանա դեպքերը, Կովկասի սահմանագլխին հայերի շարժումները և իբր թե ներքին գավառներում հայերի ապստամբելու մտադրությունը: Դաշնակից պետությունների սպառնալիքները ոչ միայն արժեք չունեցան, այլև պատճառ դարձան ավելի սաստկացնելու հալածանքը[2]:

Ուշագրավ դիտարկումներ է պարունակում ռուսական բանակի շտաբս-կապիտան Կրիմ Շամխալչի 1916 թ. փետրվարի 14-ին Մուշից ուղարկված զեկուցագիրը Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարին (փաստաթուղթ 8): Այստեղ նշվում է, որ հաղորդվող տեղեկությունները հավաստի են, որովհետև հիմնված են իրարից անկախ հարցաքննված հայերի և թուրքերի ցուցմունքների վրա: Հաղորդվում է, որ պատերազմի նախօրեին տեղի հայերը դիմել են Պոլսի հայոց պատրիարքարան՝ պատերազմի դեպքում իրենց վարքագիծը ճշտելու վերաբերյալ, պատասխան են ստացել, որ նրանք պարտավոր են եթարկվել իրենց միապետի կամքին, որից հետո հոժարակամ զինվորագրվել են թուրքական բանակի շարքերը: Միայն 1915 թ. սեպտեմբերի կեսերին, երբ Էրզրումում գերմանական սպաները անցկացրին թուրքական զորքերի ստուգատես, հայ զինվորներից վերցրին զենքը, բացատրելով այդ քայլը քրիստոնյաների դավաճանության մտավախությամբ: Դրանից հետո հայերին ուղարկեցին աշխատանքային, գումակային և այլ օժանդակ զորամասեր, և հայերն սկսեցին մասսայաբար դասալքել[1]: Ի դեպ, վերջին պնդումը փաստական այլ նյութերով մերժվում է: Միշտ է, հայ զինվորների մի ինչ-որ մաս դասալքել է, բայց այդ երևույթը զանգվածային բնույթ է կրել հենց թուրք զինվորների շրջանում:

Նա վկայում է, որ հայերը կատարում էին զինվորական ծառայություն և վճարում բնեմթերային զինվորական հարկ, ընդ որում զինապոշի էին եթարկվում 20—45 տարեկան բոլոր տղամարդիկ, իսկ զինվորական հարկը նրանցից գանձվում էր նրանց ունեցած պարենամթերքի պաշարի մեկ երրորդի չափով, ընդ որում այն հավաքվում էր մի քանի անգամ:

Շտաբս-կապիտանը գրում է, որ Վանի գրավումը կոտորածներն ավարտելու ազդանշան դարձավ, ընդ որում Թուրքիայով մեկ լուրեր էին պտտվում, թե Վանը գրավել են հայերը, թե ռուսահայերն ու թուրքահայերը կռվում են ռուսական զորքերի շարքերում, դրա համար քրիստոնյաներին պետք է կոտորել, և այդ լուրերն ամենևին հավանականության տարածում էր կառավարությունը:

Ռուսական բանակի սպան ականատես հայերի պատմածների հիման վրա նկարագրում է կոտորածի սովորական դարձած հետևյալ եղանակը. փորվում էր մի մեծ փոս, նրա եզրերն էին քշվում կանայք և երեխաները, և մայրերին հարկադրում էին փոսը հրել իրենց երեխաներին, որից հետո մի քիչ հող էր լցվում, հետո կապկպված հայ տղամարդկանց աչքերի առջև բռնաբարվում և սպանվում էին կանայք, ապա վերջապես սպանվում էին տղամարդիկ, և փոսը գրեթե լցվում էր

[1] Նշվ. աշխ., էջ 361—362:
[2] Նշվ. աշխ., էջ 365:

[1] Նշվ. աշխ., էջ 366:

դիակներով: Քրիստոնյաների մի մասին կամուրջներից գցում էին գետը: Մուշի մոտ Եփրատ գետը թափվեց 25 000 դիակ:

Խորհելու առիթ է տալիս Կ. Շամխալչու այն վկայությունը, թե այդ գազանությունների դեմ բողոքեց տեղի մուսուլմանական հոգևորականությունը, ընդ որում Մուշ քաղաքի իմամ շեյխ Ավիս Կադիրը անձամբ դիմեց մյութեսարիֆ Սարվաթ-բեկին՝ խնդրելով հարգել Մուհամմեդի օրենքը, որը թույլատրում է սպանել միայն զենք կրելու և դիմադրելու ընդունակ 15—60 տարեկան տղամարդկանց, բայց իբրև պատասխան տուացավ ձերբակալվելու և հրապարակայնորեն հայհոյվելու սպառնալիք: Դրանից հետո իբր քաղաքի հոգևորականության և աշխարհիկ իշխանությունների միջև թշնամանք ակսվեց, և դրանից հետո հոգևորականությունը հետ կանգնեց հասարակական կյանքից ու միաժամանակ ակսեց թաքցնել հայերին՝ ենթարկվելով նահանգապետի և ոստիկանության տուգանքներին ու վիրավորանքներին: Հայերին հովանավորողների շարքում հիշատակվում են Մուշի իմամ շեյխ Ավիս Կադիրը, շեյխ Աբդուլ Համիդը, հարուստ և անվանի անձինք՝ Զաֆար-աղան ու նրա եղբայր Նադիր խանը, Թաղի-օղլին և ուրիշներ: «Հայերի ցուցմունքների համաձայն,— գրում է շտաբս-կապիտանը,— առհասարակ ողջ հոգևորականությունը առանց բացառության պաշտպանել է իրենց»[1]: Մեր կարծիքով այստեղ առկա է թուրք «մարդասեր» հոգևորականության դերի որոշակի չափազանցում և իրականության խեղաթյուրում: Նման դեպքեր, անշուշտ, եղել են, բայց դրանք այնքան քիչ էին ու հազվադեպ, որ կաթիլ էլ չէին դժոխքի օվկիանոսում: Չպետք է մոռանալ, որ սրբազան պատերազմի և կրոնական մոլեռանդության գլխավոր հրահրիչն ու գրգռիչը հենց այդ մուսուլմանական հոգևորականությունն էր, որ հայոց ցեղասպանության իրականացման գլխավոր փաղանգներից մեկն էր:

Եվ վերջապես, հետաքրքրությունից զուրկ չէ նաև 9-րդ փաստաթուղթը, որը Ամատունի ստորագրությամբ 1916 թ. ներկայացված մի զեկուցագիր է Թիֆլիսի Ազգային բյուրոյին: Համառոտակի տեղեկություններ հաղորդելով հայկական նահանգներում կատարված բռնությունների ու տեղահանությունների մասին, զեկուցագրի հեղինակը խոսում է Տիգրանակերտում, Մարզվանում, Ծապին-Գարահիսարում, Զեյթունում, Սուեդիայում, Չինկիլիում և Պանդրմայում հայերի ցույց տված ինքնապաշտպանական մարտերի մասին: Նրա հաշվումներով կոտո-

[1] Նշվ. աշխ., էջ 367:

րածներից ու տեղահանումներից հետո ողջ են մնացել մոտ 530 000 արևմտահայեր[1]:

Սույն հրապարակմամբ էլ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ հանրապետությունում հիմք դրվեց Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ փաստաթղթերի, արխիվային նյութերի ու վավերագրերի հավաքման, մշակման ու հրատարակման կարևոր աշխատանքին, որի շրջանակները հետագայում մեծ չափով ընդլայնվեցին: Այդ ուղղությամբ երկարատև պրպտումների արդյունք հանդիսացավ 1966-ին ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Геноцид армян в Османской империи» (Сборник документов и материалов) մեծարժեք ու ծավալուն ժողովածուն: Այն կազմել են Մ. Գ. Ներսիսյանը և Ռ. Գ. Սահակյանը, հրատարակության նախապատրաստելու աշխատանքներին մասնակցել են Ն. Դերոյանը և Դ. Մուրադյանը: 1982-ին լույս տեսավ ժողովածուի երկրորդ, լրացված հրատարակությունը, իսկ 1991-ին այն հրատարակվեց հայերեն թարգմանությամբ[2,3]:

Շուրջ 700 էջից բաղկացած այս ժողովածուն, որն ունի ընդարձակ նախաբան, ծանոթագրություններ, մատենագիտություն, կարևորագույն աշխարհագրական անվանումների ցանկ, փաստաթղթերի և նյութերի ցուցակ և անգլերեն ամփոփում (խոսքը ռուսերեն երկրորդ հրատարակության մասին է— Մ. Կ.), չափազանց կարևոր աղբյուր է հայոց ցեղասպանության ճշմարիտ պատմությունը ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացնելու համար: Ժողովածուում զետեղված են հայկական, ռուսական, արաբական, գերմանական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից վերցված փաստաթղթեր ու նյութեր: Դրանց գերակշռող մասը զանազան արխիվներում հայտնաբերված տարբեր պետությունների դեկավարների, դեսպանների, հյուպատոսների, նախարարների, բարձրաստիճան պաշտոնյաների, կառավարության անդամների պաշտոնական զեկուցագրեր, հաշվետվություններ, ամփոփագրեր, հեռագրեր ու նամակներ, ինչպես նաև Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածների մասին հոգևորականների ու միսիոներների ցուցմունքներ են: Լինելով արժանահավատ և շատ առումներով արժեքավոր փաստաթղթեր, դրանք ճշգրիտ ու ճշմարիտ պատկերացում են տալիս հայ ժո-

[1] Նշվ. աշխ., էջ 373:

[2] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под. ред. М. Нерсисяна. Ереван, 1982.

[3] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1981:

ղովրդի մեծագույն ողբերգության մասին: Ինչպես նախաբանում նշում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, ժողովածուի արժեքը մեծանում է նաև նրանով, որ դրանում բերվող աններքելի փաստաթղթերը մերկացնում են ժամանակակից թուրք այն «մտավորականներին», որոնք այսօր էլ ճգնում են ժխտել Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը:

Բովանդակային առումով ժողովածուն բաղկացած է երկու մասից: Ելնելով Մ. Ներսիսյանի առաջ քաշած այն դրույթից, որ Մեծ եղեռնի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն 1915—1916 թթ. համընդհանուր կոտորածը, այլև 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբի զանգվածային ջարդերը, ժողովածուի առաջին մասում տեղ են գտել սուլթան Աբդուլ Համիդի օրոք (1876—1908 թթ.) հայերի կոտորածներին վերաբերող նյութերը (էջ 1—228):

Առավել ընդարձակ է ժողովածուի երկրորդ մասը (էջ 229—719), որը կրում է «Հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909—1918 թթ.) ընդհանուր վերնագիրը:

Ժողովածուի ընդարձակ նախաբանում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը ներկայացնում է իր մոտեցումները հայերի ցեղասպանության, հայ ազատագրական շարժման պատմության հիմնահարցերի վերաբերյալ, կատարում ելակետային ընդհանրացումներ ու եզրակացություններ, տալիս ուղենշային գնահատականներ: Ընդգծելով, որ արևմտահայերի զանգվածային ջարդերի քաղաքականությունը սկիզբ առավ դեռևս 19-րդ դարի վերջերին և անդրադառնալով այդ արյունոտ ակցքերի նախապատմությանը, Մ. Ներսիսյանը նշում է, որ արևմտահայությունը ենթարկվում էր սուլթանների ու փաշաների անսանձ կամայականությանը և մշտապես գտնվում էր ջարդերի ու կոտորածների սպառնալիքի տակ: «Ազգային և սոցիալական անտանելի ճնշման, թալանի ու բարբարոսական կոտորածների այդ իրադրության մեջ,— եզրակացնում է Մ. Ներսիսյանը,— ծագեց Հայկական հարցը, որը շուտով դարձավ մեծ տերությունների դիվանագիտական խաղերի առարկա: Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ ուժեղացավ ձգտումը դեպի ազատությունը, դեպի պայքարը հանուն իր պատվի և մարդկային տարրական իրավունքների, մանավանդ, որ կար սերբերի, հույների ու բուլղարների ոգևորիչ օրինակը: Ի պատասխան թուրքական իշխանությունների դաժան ճնշումների, հայերը, որտեղ դա հնարավոր էր, դիմում էին ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի, որը, ինչպես հայտնի

է, եղել և մնում է ամեն մի ճնշված ժողովրդի անսասան իրավունքը և ազնիվ, արթազան պարտականությունը:

Բայց թուրքական ռազմապատական բռնապետությունը լսել իսկ չէր ուզում իրեն ենթակա ժողովուրդների որևէ իրավունքի մասին: Ազգային հարցի լուծման համար նա գիտեր միայն մեկ ուղի՝ զանգվածային կոտորածների, ֆիզիկական ոչնչացման ուղին»[1]:

Այնուհետև նա նշում է, որ հայ ժողովրդի նկատմամբ Աբդուլ Համիդի արյունոտ քաղաքականությունը շարունակեցին երիտթուրքերը: Լինելով մոլի պանթուրքիստներ, նրանք գերազանցեցին արյունարբու սուլթանին: Երիտթուրքերի կուսակցության պարագլուխները մինչև իշխանության գլուխը երկերեսանիորեն ճամարտակում էին ազատության, ժողովուրդների եղբայրության, հավասարության, դեմոկրատիայի մասին, սակայն հենց որ իշխանության ձեռք բերեցին, դարձան սանձարձակ բռնակալներ ու ջարդարարներ: Ինչպես իրավամբ նկատում է Մ. Ներսիսյանը, այդ սանձարձակ ազգայնականները իրենց առջև խնդիր դրեցին «թուրքացնել» կայսրությունը՝ բոլոր ոչ թուրք ժողովուրդներին բռնությամբ ձուլելու և ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով, և որոշեցին այդ դաժան քաղաքականությունը կիրառել ամենից առաջ հայերի նկատմամբ: «Բանն այն է,— շարունակում է Մ. Ներսիսյանը,— որ հետապնդելով ագրեսիվ նպատակներ, նրանք ձգտում էին մասնավորապես զավթել և Թուրքիային միացնել Կովկասը: Բայց դրան զգալի չափով խանգարում էր հայ ժողովուրդը, որը, ինչպես հայտնի է, ուներ ռուսական կողմնորոշում, քանզի օսմանյան անտանելի լծից իր ազատագրության հույսը նա կապում էր Ռուսաստանի հետ: Որպեսզի դյուրացներ Կովկասի նվաճումը և վերջ տար Հայկական հարցին առհասարակ, երիտթուրքական կառավարությունը վճռեց բնաջնջել հայ ժողովրդին»[2]:

Մ. Ներսիսյանը նշում է, որ երիտթուրքերի անլուր բարբարոսությունը շատ բաներով հիշեցնում է հիտլերյան դահիճների հանցագործությունները երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, և երիտթուրքերը որոշ առումով եղել են ֆաշիստների նախորդներն ու նախատիպերը: Ի հաստատումն դրա, նա օրինակ է բերում, թե ինչպես 1915—1916 թվականներին Երզնկայում թուրք բժիշկները ղեկավարության գիտությամբ և համաձայնությամբ հիվանդանոցներում ու լա-

[1] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 1991, Մ. Ներսիսյանի նախաբանը, էջ 6:

[2] Նշվ. աշխ., Մ. Ներսիսյանի նախաբանը, էջ 9:

բորատորիաներում հայերին օգտագործել են իբրև փորձակենդանիներ և նրանց վրա կատարել են բակտերիոլոգիական փորձեր, որպիսիք սովորաբար կատարվում էին ծովախոզուկների և ճագարների վրա: Մ. Ներսիսյանը հիշատակում է նաև 1939 թ. օգոստոսին Օբերզալցբուրգում մի խորհրդակցության ժամանակ, երբ նախապատրաստվում էր ֆաշիստական հրոսակների ներխուժումը Լեհաստան, դիվահար ֆյուրերի հանձնարարականը իր գեներալներին ու սպաներին՝ անխնա ոչնչացնել բոլոր լեհերին, չվախենալ հասարակական կարծիքից, որովհետև «Ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»[1]:

Պատասխանելով այն հարցին, թե որքա՞ն է եղել Մեծ եղեռնի զոհերի ընդհանուր թիվը, Մ. Ներսիսյանը գալիս է այն եզրակացության, որ կոտորածների զոհ են դարձել **մոտ մեկուկես միլիոն մարդ** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), իսկ շուրջ 700 հազար փախստականներ ապաստան են գտել Կովկասում, Արաբական արևելքում, Հունաստանում և այլ երկրներում:

Անդրադառնալով արևմտահայերի ինքնապաշտպանության հիմնախնդրին, Մ. Ներսիսյանը գգուշացնում է, որ որոշ փաստաթղթերի ընթերցումից կարող է երբեմն ստեղծվել այն սխալ տպավորությունը, թե թուրքական կառավարության բարբարոսական ոճրագործությունը հայերի կողմից չի հանդիպել արժանի հակահարվածի: Այդ կապակցությամբ նա հարկ է համարում նշել, որ չնայած խիստ անբարենպաստ պայմաններին, հայերը 1915—1918 թթ. շատ անգամ հանդես են եկել իրենց դահիճների դեմ, հաճախ դիմել են ինքնապաշտպանության և գենքը ձեռքներին պայքարել իրենց կյանքի ու պատվի համար: Անձնուրաց քաջությամբ է պաշտպանվել Վանի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուշի, Սասունի և մի շարք այլ քաղաքների ու վայրերի բնակչությունը: Հաջողությամբ պսակվեց հատկապես Վան քաղաքի ինքնապաշտպանությունը, որը տևեց մոտ մեկ ամիս: Շնորհիվ ժողովրդի հերոսական պայքարի և ռուսական Կովկասյան բանակի օգնության, որի կազմում կային և հայ կամավորական ջոկատներ, տասնյակ հազարավոր վանեցիներ փրկվեցին: Հաջող ավարտվեց նաև Սուեդիայի շրջանի հայերի ինքնապաշտպանությունը Մուսա լեռան վրա, որտեղ վատ զինված գյուղացիները մոտ 40 օր խիզախորեն մարտնչում էին թուրքական գերակշիռ ուժերի դեմ: Սակայն հայերի ինքնապաշտպանությունը ուժերի անհավասարության պատճառով մեծ մասամբ պարտությամբ մատնվեց:

[1] Նշվ. աշխ., Մ. Ներսիսյանի նախաբանը, էջ 9:

Ձկար գենք, հայոց գավառները կտրված էին միմյանցից, արևմտահայության մարտունակ բնակչության զգալի մասը նախապես զորակոչվել էր բանակ և ենթգորեն ոչնչացվել:

«Արևմտահայերի զանգվածային կոտորածների քաղաքականությունը,— եզրակացնում է Մ. Ներսիսյանը,— եղել է ցեղասպանության **քաղաքականություն**, որն անողոքաբար իրագործվում էր Թուրքիայի **կառավարող շրջանների** կողմից: Այն, ինչ տեղի ունեցավ մասնավորապես 1915 թ., եղել է չտեսնված բարբարոսություն, կարելի է ասել՝ **առաջին ցեղասպանությունը ժողովուրդների պատմության մեջ** (ընդգծումն իմն է— Մ. Կ.)»[1]:

Մ. Ներսիսյանը պարզաբանում է նաև մեծ տերությունների բռնած դիրքը հայ ժողովրդի ապրած աներևակայելի ողբերգության նկատմամբ, տալիս հատու և անաչառ գնահատականներ: Նրա բնորոշմամբ կայզերական Գերմանիան, որը Թուրքիայի «դաշնակիցն» էր, խրախուսում և պաշտպանում էր երիտթուրքերի հանցավոր ծրագրերը և գործողությունները, ամեն կերպ աջակցում էր վանդալներին՝ հայ ժողովրդի բռնագաղթը և կոտորածը կազմակերպելու գործում, գերմանացի սպաները մասնակցություն էին ունենում թուրքական գազանություններին, իսկ գերմանական կառավարության շատ ներկայացուցիչներ փորձեր էին անում արդարացնել թուրք մարդասպաններին:

Անտանտի տերությունները, որոնք հայ ժողովրդին իրենց դաշնակիցն էին համարում, չձեռնարկեցին անհրաժեշտ գործուն քայլեր՝ նրան փրկելու համար: Այդ տերությունները բավարարվեցին միայն նրանով, որ 1915 թ. մայիսի 24-ին հրապարակեցին մի հայտարարություն, որով երիտթուրքերի կառավարությանն վրա դրեցին հայերի կոտորածի ամբողջ պատասխանատվությունը: Իսկ ԱՄՆ-ը, որն այդ ժամանակ դեռևս չեզոք երկիր էր, նույնիսկ նման հայտարարություն էլ չարեց և ոչ միայն միջոցներ չձեռնարկեց բարբարոսներին սանձահարելու ուղղությամբ, այլև այդ նույն ժամանակամիջոցում ամրապնդում էր իր առևտրական կապերը Թուրքիայի հետ, իսկ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը ստեղծում էր այն տպավորությունը, թե հայերի կոտորածների մասին լուրերը չափազանցված են ու ոչ ճշմարիտ:

Անգլիական կառավարությունը 1916-ի սկզբին մերժեց Ռուսաստանի առաջարկը՝ հայ փախստականներին համատեղ ֆինանսական օգնություն կազմակերպելու մասին: Մաքսիմ Գորկու բառերով արևմտյան տերու-

[1] Նշվ. աշխ., Նախաբանը, էջ 19:

թյունների բռնած դիրքը Մ. Ներսիսյանը որակում է իբրև «զազրելի անտարբերություն»: Միաժամանակ նա ընդգծում է առաջադեմ հասարակայնության ցասումնալի բողոքը, որն արտահայտեցին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը և Յուրի Վեսելովսկին Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում, Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնեխտը, Յոհաննես Լեփսիուսը, Յոզեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում և շատ ուրիշներ:

Վերապահում կատարելով, որ հրապարակվող մի շարք նյութեր պարունակում են մտքեր, որոնց հետ չի կարելի համաձայնել, կան նաև անճշտություններ ու սխալներ, Մ. Ներսիսյանը առանձնացնում է այն փաստաթղթերը, որոնցում գերագնահատվում են մահմեդական խաժամուժի ու քրդական ցեղերի դերն ու նշանակությունը եղեռնի իրականացման գործում: Այդ կապակցությամբ նա շեշտում է այն միտքը, որ հայերի զանգվածային կոտորածների կազմակերպիչները եղել են թուրքական կառավարությունը և նրա տեղական մարմինները: Միշտ է, նրանց շատ անգամ հաջողվել է հայերի դեմ հրահրել խավարամիտ զանգվածներին, քուրդ ցեղապետերից շատերին և քրեական տարրերին, բայց այդ պրովոկացիան կատարվում էր պաշտոնական իշխանությունների կողմից, այնպես որ հայերի զանգվածային կոտորածների ողջ պատասխանատվությունը ընկնում է Աբդուլ Համիդի և ավելի ուշ՝ երիտթուրքերի կառավարության վրա[1]:

Մ. Ներսիսյանը առաջարկում է վերապահումով մոտենալ նաև այն փաստաթղթերին, որոնցից կարող է ստեղծվել այն թյուր տպավորությունը, թե իբր մեծ տերությունները լրջորեն մտահոգված են եղել տեղի ունեցած արյունալի իրադարձություններով:

«Թվում էր,— լավատեսորեն ավարտում է իր խոսքը ակադեմիկոս Մ. Ներսիսյանը,— թե եկել է հայ ժողովրդի վերջը: Բայց որքան էլ դաժան ու անողոք լինի թշնամին, այնուամենայնիվ, նա չկարողացավ ընկճել մեր ժողովրդի ոգին ու կամքը, չկարողացավ իրականացնել իր դիվային ծրագիրը»[2]:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հրատարակած մեծարժեք ժողովածուի գիտաճանաչողական հսկայական նշանակությունը ավելի առարկայորեն դարձնելու նպատակադրմամբ անհրաժեշտ ենք համարում

[1] Նշվ. աշխ., Նախաբանը, էջ 22:
[2] Նույն տեղում:

քաղվածաբար վերաշարադրել նրանում պարունակող մի շարք բազմաբնույթ խոսուն փաստեր և տեղեկություններ, որպիսիք գրեթե չեն հանդիպում եղեռնին նվիրված գիտական գրականության մեջ: Այդ առումով բնորոշ է ժողովածուի երկրորդ մասի հենց առաջին (թիվ 89) փաստաթուղթը, որը մի հատված է Էրզրումում գլխավոր հյուպատոսի գեկույցից՝ ուղղված Պոլսի ռուսական դեսպան Ի. Չիրովնիին (19.01.1909): Այստեղ նշվում է, որ հոչակված ազատություններով հայերի հրապուրվելը ավելի ու ավելի է գրգռում մուսուլմանների ատելությունը նրանց դեմ: Նույնիսկ առավել առաջադեմ երիտթուրքերի մեջ, որոնք դեռ վերջերս այնպես բացահայտորեն իրենց երախտագիտություն էին հայտնում հայերին՝ **Թուրքիայում ազատագրական շարժման նախաձեռնողներ լինելու համար** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), անվստահությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրեցօր, այլ ժամըստժամ...»[1]:

Ուշադրության արժանի է կաթողիկոս Գևորգ 5-րդի 1914 թ. նոյեմբերի 8-ի նամակը փոխարքա Վորոնցով-Դաշկովին (թիվ 138), որտեղ նշվում է, թե պատերազմն սկսվելուց հետո թուրքերի կողմից սպանվում են հայերի գլխին գալիք այնպիսի աղետներ, որոնք դժվար թե կարողանա պատկերացնել մարդկային երևակայությունը: «Ներկայումս,— ասված է նամակում,— երբ ողջ Ռուսաստանի և հաղթական ռուսական զորքի հետ հայերը պետք է ծայր աստիճանի լարեն իրենց ջանքերը ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում, ես այժմյան պատմական պահի հետ լիովին համապատասխան եմ գտնում թագավորի անունից թուրքահայերին ուղղված կոչ հրապարակել, հայ ժողովրդին ներշնչել, որ այժմ հնչել է Թուրքիայի հայերի դրության հարցի վերջնական և անդառնալի որոշման ժամը և որ հայ ժողովրդին Թուրքահայաստանի վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի) և իր անբաժան մասի՝ Կիլիկիայի հետ, որպես մեկ օրգանական ամբողջություն, սահմաններում **մեծ Ռուսաստանից պետք է ինքնավարություն ընծայվի** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), որով լրումն կտանի թուրքերի լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ազատագրման նրա պատմական առաքելությունը...»[2]:

[1] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, երկրորդ մաս, էջ 230:
[2] Նշվ. աշխ., էջ 334:

Մեր կարծիքով բովանդակալից է Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովի հետևյալ կարճառոտ հեռագիրը Լոնդոնի ռուսական դեսպանին. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ (1.05.1915)»[1]: Միևչդեռ թուրք-գերմանական բլոկը իր հանցագործությունների արդարացման հիմնական կռվան ծառայեցնում էր Վանի «ապստամբությունը»:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վանի իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սբորդոնի 1915 թ. մայիսի 31-ի նամակը Պետրոգրադի իտալական դեսպանին, որտեղ սեղմ կերպով տրված է Վանի ինքնապաշտպանության ճշմարտապատում նկարագիրը: Նամակի հեղինակը ուշադրություն է բևեռում երեք կարևոր իրադարձությունների վրա: Առաջինը շրջակա հայկական գյուղերի կոտորածներն են, որոնք Վանի իրադարձություններից շատ առաջ էին սկսվել, և զոհ էին գնացել 16 000 մարդ: Հայ գյուղացիները, թեև զինված են եղել, բայց, **փոխանակ իրենց զենքով պաշտպանվելու, դա հանձնել են իշխանություններին, թույլ տալով, որ խեղդեն իրենց** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Բոլոր այդ կոտորածները կատարվել են արտասովոր անողորմությամբ:

Երկրորդ իրադարձությունը Վանի երեք գլխավոր առաջնորդներին՝ Վռամյանին, Արամին և Իշխանին, վերջ տալու Զևդեթի մտադրությունն էր: Վռամյանն ու Իշխանը ընկան ծուղակը և զոհվեցին, իսկ Արամին հաջողվեց խուսափել դրանից, վերադառնալ Վան ու դառնալ ինքնապաշտպանության ոգին:

Երրորդ իրադարձությունը Վանի ոմբակոծության նախօրյակին բոլոր հայ աստիճանավորներին և մեծամեծներին բոլոր գավառներում գնդակահարելն էր:

Այնուհետև նամակագիրն անցնում է Վանի պաշարման նկարագրությանը, նշում, որ կառավարության տրամադրության տակ կային 12 հրանոթ, վիթխարի քանակությամբ զինամթերք, 6 հազար թուրք, քուրդ, չերքեզ զինվորներ, մի շոգենավ, բազմաթիվ առագաստանավեր:

Հայերը հրանոթ չունեին, իսկ մարտիկներ «քաղաքում» ունեին 100—120 հոգի և 1500 հոգի՝ «այգեստանում»:

Իտալացին հիացմունքով վկայում է, որ հայերը կազմակերպեցին հիանալի արագությամբ ու խորաթափանցությամբ, հիմնեցին գլխավոր շտաբ, կազմակերպեցին ինժեներական ջոկատ, հրաձիգների գումարտակ, «կարմիր խաչ», վիրակապական կետեր, ոստիկանություն: Նրանք խրամատներ փորեցին, բարիկադներ կանգնեցրին և այնքան խելամիտ եղան, որ ընդունեցին գործողությունների պաշտպանական եղանակ, արգելեցին աննպատակ հրաձգությունը:

Թուրքերի պաշարողական գործողությունները սահմանափակվում էին օր ու գիշեր հայկական դիրքերը ռմբակոծելով ու հայերի տները հրկիզելով: «Քաղաքի» վրա արձակվեց մոտ 10 000, «այգեստանի» վրա՝ մոտ 8,000 արկ, սպանելով մոտ 100 կին ու երեխա: Հայերը ոչ միայն արագորեն վերականգնում էին ավերվածը, այլև իրենք գրավեցին թուրքական դիրքերը և հրո ճարակ դարձրին դրանք[1]: Հրկիզվեցին անգլիական հյուպատոսարանը, Օտտոմանյան բանկը, ակցիզային վարչությունը, փոստը, հեռագրատունը: Թուրքերի գիշերային գրոհը ղեկավարում էր Էրզրումից եկած գերմանացի սպան: Պաշարումը շարունակվեց 27 օր:

Հայերը անհամբերությամբ էին սպասում ռուսներին, որոնք վերջապես եկան, և մուսուլմանները մեկ մարդու պես փախուստի դիմեցին:

Հայ կամավորները առաջինը մտան Վան: Նրանց համար հաղթահարնդեսային դիմավորում կազմակերպվեց: Նրանց հետևից գնում էին ռուսական կանոնավոր զորամասերը: Հիմնադրվեց քաղաքացիական վարչություն, և ռուսները գեներալ-ադյուտանտ նշանակեցին Արամին:

Մերկացնող է Էրզրումի գերմանական հյուպատոս Շոլցերի 1915 թ. հունիսի 2-ի հեռագիրը Պոլսի դեսպանությանը, որտեղ նշվում է, որ հայ բնակչությունը բոլոր հովիտներից, ըստ երևույթին նաև Էրզրումից, պետք է աքսորվի Դեյր-էզ-Զորի կողմը: Գերմանական հյուպատոսը մտահոգություն է հայտնում, որ մեծ մասշտաբի այս **տեղահանությունը հավասարազոր է զանգվածային ոչնչացման,** քանի որ որևէ փոխադրամիջոցի բացակայության պատճառով տեղահանվածների մույնիսկ կեսը հազիվ թե կհնդանի հասնի նշանակված տեղը, **և, երևի, այս տեղահանությունը իր հետևից բերի ոչ միայն հայերի, այլև ամբողջ երկրի քայքայում: Ռազմական բնույթի հիմնավորումները չեն կարող պատճառաբանում լինել այս գործողությունների համար,** որովհետև տեղացի հայերի ապստամբության հնարավորությունը բացառված է, քանզի տեղահանվողները ծերեր են, կանայք ու երեխաներ[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 840:

[1] Նշվ. աշխ., էջ 847:
[2] Նշվ. աշխ., էջ 849:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի պերճախոս վկայագրեր, ինչպիսիք են՝ Էրզրումի հայերի տեղահանության մասին օտարերկրացի ականատեսի հաշվետվությունը (158, էջ 352—356), Պետական դումայի անդամ Պապաջանյանի նամակը արտաքին գործերի մինիստր Սազոնովին (162, էջ 358—359), ռուսական Կովկասյան բանակի շտաբի թարգմանիչ Մաքսիմովի նամակը բանակային կորպուսի պետին (163, էջ 359—360), բժիշկ Զավրիևի նամակը՝ ուղղված արտգործմինիստր Սազոնովին (168, էջ 362—364), Էրզրումի գերմանական գիվերսիական միսիայում ծառայած երկու գերության քույրերի հայտարարությունը (169, էջ 364—375), Մուշում հայերի կոտորածի ականատես գերմանացու հայտարարությունը (171, էջ 377—382), Ծվեյցարիայի հասարակական և գիտական գործիչների կոչը (174, էջ 294—295), արևմտահայոց պատրիարքի նամակը Պողոս Նուբար փաշային (175, էջ 395—399), Դիարբեքիրի կոտորածի և տեղահանության մասին ընդարձակ տեղեկագիրը (179, էջ 411—420), թուրքական բանակի բժշկի օրագիրը (181, էջ 428—432), «Խարբերդից մինչև Ուրֆա ճանապարհին» գրքից հատվածները (189, էջ 458—466), ամերիկացի քարոզիչ Վեքսի հաղորդումը (194, էջ 477—482) և այլն:

Իսկ ահա 197, 198 և 199-րդ փաստաթղթերը ներկված են դաշնակից տերությունների կողմից տեղահանված արևմտահայության բեկորներին ֆինանսական օգնություն կազմակերպելուց: Դրանցից տեղեկանում ենք, որ Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպանների միջոցով դիմել է ֆրանսիական և անգլիական կառավարություններին՝ Պոլսի ամերիկյան դեսպանի միջոցով 1 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով արևմտահայերին օգնություն ուղարկելու մասին, և որ Ֆրանսիան համաձայնել է, իսկ Անգլիան «խորհուրդ է տվել» այդ բանն անել բարեգործական հանգանակությունների միջոցով, այսինքն մերժել է[1]:

Ժողովածուի 206-րդ փաստաթուղթը (էջ 511—512) վիճակագրական տեղեկություններ է պարունակում 1916-ին Քոթի գավառում գոհված հայերի թվի մասին:

210-րդ փաստաթղթում հիշում են Էմիլ Դուրքեյմի հրաշալի խոսքերը՝ արտասանված Փարիզում, 1916-ի հունվարի 16-ին, որտեղ նա անարգանքի սյունին է գամում երիտթուրքերի պարագլուխներին, որոնք իշխանության գալուց քիչ անց պանիսլամականությունը փոխարինեցին պանթուրքիզմով, այսինքն՝ ամենաթունդ ազգայնամոլությամբ, և իրենց դրսևորեցին իբրև լկտի արկածախնդիրների ավազակախումբ: Նա այն կարծիքին է, որ զարհուրելի կոտորածի համար պատասխանատու են Եվրոպայի առանց բացառության բոլոր ժողովուրդները, հարկավ, ոչ հավասար չափով, բայց պատասխանատվության նույնիսկ ամենաանշան բաժինը անչափ մեծ է:

Ուշադրության արժանի է 209-րդ փաստաթուղթը, որը բացահայտում է մի շարք թուրք բժիշկների ոճրագործությունները 1915—1918 թվականներին, և նաև անսպասելի, որ այդ մերկացումները կատարել են թուրք բժիշկները, բայց արդեն 1918-ին, Խթիհատի տապալումից հետո: Թուրք վիրաբույժ Հայդար Զեմալի ստորագրությամբ Ստամբուլի թուրքական թերթերից մեկում տպագրվել է մի բաց նամակ ներքին գործերի մինիստրի հասցեով, որում հեղինակը հաղորդում է 1915—1916 թթ. Երզնկայի հիվանդանոցում կատարված գիտական հանցագործությունների մասին: Նա հայտնում է, որ 1915 թ. դեկտեմբերին Երզնկայի հիվանդանոցում 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թեֆիկ Սալեմի կարգադրությամբ բծավոր տիֆով հիվանդներից վերցված արյունը առանց «ակտիվազերծման» օգտագործվել է որպես պատվաստանյութ անմեղ հայերի վրա: Փորձի ենթարկվողներից շատերը արագորեն հիվանդանում էին ու մեռնում: Այդ փորձերի կազմակերպիչ, օտոմանյան բժշկական դպրոցի ախտաբանական կազմախոսության պրոֆեսոր Համդի Սուադը հայտարարել էր, թե դրանք կատարվել են մահապարտների վրա, մինչդեռ մահաբեր գիտափորձերի օբյեկտները ոչ մի ուրիշ մեղք չունեին, բացի այն, որ հայ էին[1]:

Դոկտոր Սելահեդդինի նամակում, որը թուրքական թերթում տպագրվել է 1918-ի դեկտեմբերին, հեղինակն իբրև ականատես և մասնակից պարզաբանում է, որ 1915-ին Երզնկայում թաքնվող հայերից շատերին ընտրեցին և տեղավորեցին քաղաքի կենտրոնական հիվանդանոցում իբրև ենթափորձայիններ, որպեսզի նրանց վրա մանրէաբանական փորձեր դնեն, որոնք սովորաբար դրվում էին ծովախոզուկների և ճագարների վրա: Այդպես զոհվեցին շատ հայեր... Այն ժամանակ ոչ ոք հաշիվ չէր պահանջում կատարված վայրենությունների համար, և մարդիկ կարծում էին, թե այդ ամենը անպատիժ կմնա:

212-րդ փաստաթուղթը մի հատված է Անատոլ Ֆրանսի՝ 1916-ի

1 Նշվ. աշխ., էջ 499—500:

1 Նշվ. աշխ., էջ 522:

ապրիլի 9-ին Փարիզում արտասանած ճառից, որտեղ մեծ գրողը նշում է, որ աբդուլհամիդյան կոտորածների տարիներին Ֆրանսիայում շատ քիչ թվով մարդիկ բողոքի ձայն բարձրացրին: Անհասկանալի էր մնում, թե ինչու էին թուրքերը կոտորում հայերին: Բայց ահա պայթեց համաշխարհային պատերազմը, և հանկարծ Հայաստանն ու նրա մարտիրոսության պատճառները միանգամայն այլ լույսի ներքո հառնեցին Ֆրանսիայի առջև: «Մենք հասկացանք,— շարունակում է աշխարհահռչակ գրողը,— որ թուրք կեղեքչի և հայի տևական անհավասար պայքարը՝ բռնակալության պայքարն է, բարբարոսության պայքարը ընդդեմ արդարության ու ազատության ոգու... Մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մեռնում Արևելքում և մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, մտածում էր այնպես, ինչպես մենք ենք մտածում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեր նման գնահատում էր իմաստությունը, արդարությունը, քերթությունը, արվեստը: Սա էր նրա ամբավելի հանցանքը...

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կվերածնվի: Արյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, երբեք չի մեռնի...»[1]: Ֆրանսիացի մեծ գրողն այս ճառն արտասանել է Սորբոնի Մեծ դահլիճում, Հայաստանին նվիրված երեկոյին:

Ժողովածուում ընդարձակ հատվածներ են զետեղված Ջեյմս Բրայսի, Հ. Գիբոնսի, Ռենե Պինոնի, Անրի Բարբիի՝ հայերի ցեղասպանությանը նվիրված գրքերից (էջ 529—559):

Այն հատվածներ է պարունակում նաև Ա. Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը» գրքից, Վ. Գորդլևսկու «Հայերը և պատերազմը» հոդվածից, Թուրքահայաստանի մասին Վ. Տերյանի զեկուցագրից (1917 թ.):

230—252-րդ փաստաթղթերը վերաբերում են 1918 թվականի իրադարձություններին (էջ 605—652):

Տպավորիչ է ֆրանսիացի նշանավոր հնագետ և պատմաբան, Արևելքի հոչակավոր ուսումնասիրող Ժակ դը Մորգանի (1857—1929) ցասումնալի խոսքը Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման մասին (փաստաթուղթ 253): Այն վերցված է գիտնականի «Ընդդեմ

[1] Նշվ. աշխ., էջ 528—529:

Արևելքի բարբարոսների» գրքից, որը լույս է տեսել 1918-ին, Փարիզում:

Մորգանը նշում է, որ հայերի բնաջնջման մեթոդը, որը մշակվել էր Թալեաթի և Էնվերի դիվանատներում՝ գերմանացի խորատատուների աջակցությամբ, գործադրվեց չորս տարբեր ձևերով.

1. Երիտասարդության զինակոչում և ոչնչացում, 2. բնակչության մի մասի կոտորում և կողոպտում, 3. բնակչության մնացուկների տարագրում, 4. կենդանի մնացածների համակենտրոնացում Միջագետքի ճամբարներում, որոնց 60 տոկոսը զոհվեց:

Անվանի արևելագետը գրում է, որ երբ ուշադիր կարդում ես հայերի կոտորածին վերաբերող փաստաթղթերը, ապշում ես այն շրջահայեցությունից ու հնտությունից, որով երիտթուրքական կառավարությունը կազմակերպել էր այդ չարագործությունները:

Աշխարհահռչակ գիտնականը հույս է հայտնում, որ կգա օրը, երբ այդ ոճրագործները ստիպված կլինեն պատասխան տալ իրենց արածների և հատուցել կատարած չարագործությունների համար: Նա չի տարակուսում, որ նրանք փորձելու են քաղաքական ապաստան գտնել արտասահմանում, բայց չի գտնվելու գեթ մի բավականաչափ բարոյազուրկ ազգ, որը նրանց թաքցնի իր դրոշի հովանու ներքո[1]:

Հրապարակված էին նաև Արմին Վեգների, Յոզեֆ Մարկվարտի, Լոյդ Ջորջի, Յոհաննես Լեփսիուսի, Չերչիլի, Մ. Գորկու, Ֆ. Նանսենի, Ե. Տարլեի ասույթները հայոց ցեղասպանության մասին:

Իրրև ամփոփում կարելի է առանց երկմտելու ասել, որ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն մի անսպառ շտեմարան է Եղեռնի պատմությամբ զբաղվողների և սեղանի գիրք՝ յուրաքանչյուր հայ մարդու համար:

Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը առաջիններից մեկն էր, որ իր հեղինակավոր խոսքն ասաց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրերին[2]: 1965-ի ապրիլի 25-ին «Պրավդա» թերթում լույս տեսավ նրա հոդվածը՝ Հայոց Մեծ եղեռնի մասին: Նա առանձին հոդվածով հանդես եկավ նաև Եղեռնի 60-ամյակի առիթով[3]:

[1] Նշվ. աշխ., էջ 670—671:

[2] Մ. Ներսիսյան, Արևմտահայերի ցեղասպանությունը 1915 թվականին (ռուսերեն), Պատմա-բանասիրական հանդես, 1965, հ. 2:

[3] Մ. Ներսիսյան, Մղձավանջից դեպի վերածնություն, «Սովետական Հայաստան» թերթ, 24.04.1975:

***

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում արևմտահայության ճակատագրին վերաբերող մի շարք փաստաթղթեր և նյութեր են հրապարակվել պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)» մեծարժեք ու ծավալուն ժողովածուում, որի կազմողներն են Ջ. Ս. Կիրակոսյանը և Ռ. Գ. Սահակյանը[1]:

Հայոց եղեռնի պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք է ներկայացնում Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» ժողովածուն՝ Ա. Հ. Փափազյանի առաջաբանով, թարգմանությամբ և ծանոթագրություններով[2]: Նշվում է, որ տեղի տալով համաշխարհային հասարակայնության բողոքի ուժեղ հոսանքին, 1918 թ. Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո Թուրքիայի նոր կառավարությունը որոշում կայացրեց Օսմանյան կայսրությունը առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին, ինչպես նաև կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին: Դատավարությունը խոշոր երևույթ էր արևմտահայության ցեղասպանությունը համայն մարդկության առաջ բացահայտելու տեսակետից, և առաջին անգամ հրատարակվող փաստաթղթերի այս ամբողջությունը ծանրակշիռ հակահարված է թուրք կեղծարարներին, որոնք այսօր փորձում են ուրանալ եղեռնի փաստը և ենթագիտակցությունը պատմական ճշմարտությունը: Գիրքը պարունակում է հատկապես կարևոր փաստաթղթերի լուսապատճեններ:

1990-ին Երևանում վերահրատարակվեց դեռևս 1921-ին Վիեննայում լույս տեսած «Դատավարություն Թալեաթ փաշայի» աղագրական

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923): Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: Կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան: Երևան, 1972, էջ 367—402:

[2] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Երևան, 1988:

գեկուցումը՝ գրող Ստեփան Ալաջաջյանի նախաբանով[1]: Գրքի տեքստը հրատարակության է պատրաստել Պ. Մ. Մարգարյանը:

Դատավարության այս փաստացի և բառացի սղագրությունը մի չափազանց կարևոր վավերագիր է, որի շնորհիվ ընթերցողը ծանոթանում է Եղեռնի վերաբերյալ բազում փաստագրական նյութերի:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական փաստաթղթերի հայտնաբերման ու հրատարակման բնագավառում կարևոր ներդրում է պրոֆ. Ստ. Ստեփանյանի խմբագրությամբ 1991-ին լույս տեսած «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին ժողովածուն»[2]: Ժողովածուն կազմողներն են Ստ. Ստեփանյանը և Ն. Բաղդասարյանը:

Ընդարձակ առաջաբանում պրոֆ. Ստ. Ստեփանյանը նշում է, որ հրատարակվող փաստաթղթերը հայտնաբերված են Պոտսդամի, Դրեզդենի, Մերզեբուրգի, Ծվերինի արխիվներից:

Ժողովածուի հեղինակն այն միտքն է հայտնում, որ ժամանակակիցների հաղորդումները, գերմանական դիվանագետների զեկուցագրերը, Գերմանիայի արտգործնախարարության փաստաթղթերը համոզիչ կերպով վկայում են, որ Գերմանիան լիակատար պատասխանատվություն է կրում Թուրքիայում հայերի բնաջնջման համար: Փաստերով ցույց է տրվում, որ կայզերական Գերմանիան ոչ միայն արդարացնում, այլև խրախուսում էր հայերի կոտորածը:

Ներկայացնելով կայզերական Գերմանիայի արտգործնախարարության դիվանագիտական փաստաթղթերի 40 հատորյա ժողովածուն, որը Գերմանիայի արտգործնախարարության հանձնարարությամբ կազմել և 1922—1926 թթ. Բեռլինում հրատարակել են մասնագետ-միջազգայնագետներ Տիմմեն, Մենդելսոն-Բրատոլդը և Յո. Լեփսիուսը, հեղինակը նշում է, որ դա նպատակ էր հետապնդում համոզել եվրոպական հասարակայնությանը, թե իբր Գերմանիան պատասխանատվություն չի կրում արևմտահայության ցեղասպանության համար[3]:

Պարզաբանելով Ռուսաստանի դիրքորոշումը, Ստ. Ստեփանյանը գրում է, որ դա տրամագծորեն տարբերվում էր Գերմանիայի դիրքորոշումից, որովհետև Ռուսաստանը շահագրգռված էր հայերի համակրանքը

[1] Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը (Սղագրություն): Երևան, 1990:

[2] Германские источники о геноциде армян. Период Первой мировой войны. Сборник документов и материалов в 2-х томах. Том I, Ереван, 1991.

[3] Նշվ. աշխ., էջ 34:

շահելու և Թուրքիայում ապրող հայերի մեջ իր ազդեցությունն ամրապնդելու գործում:

Առաջաբանում արժանվույն են գնահատված Յո. Լեփսիուսի (որի Պոտսդամի բնակարանի գրադարանում աշխատել է հեղինակը— Մ. Կ.), Արմին Վեգների, Յո. Մարկվարտի և այլոց ջանքերը քնաջնջվող հայությանը օգնելու գործում, հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում «Գերմանա-հայկական ընկերության» գործունեության մասին:

Մերկացնող խոսք է ուղղվում արևմտյան և թուրք հետադիմական պատմագրության հասցեին, որը ճիգ է թափում ամեն բանում մեղադրել զոհին՝ հայերին:

Ժողովածուի նյութերը խմբավորված են վեց բաժինների մեջ: Առաջին բաժնում ներկայացված են գերմանացի գիտնականներ Է. Վերների, Ա. Կրաֆտ-Բոննարդի, Յո. Լեփսիուսի, Բ. Վոլֆդիտերի, Գ. Պոդորի, Յու. Ֆեյի, Ռ. Դիկի, Տ. Հոֆմանի գրվածքները, երկրորդում՝ հատվածներ գերմանացի ականատեսներ Ա. Վեգների, Հ. Ֆիրբյուխերի, Հ. Շտյումերների աշխատություններից, երրորդում հանդես են գալիս գերմանացի հրապարակախոսներ Ֆ. Վինֆրիդը, բարոն ֆոն Մակկայը, Է. Շտիրը:

Չորրորդ բաժինը պարունակում է արխիվային նյութեր Դրեզդենի Գլխավոր պետական, Պոտսդամի Գերմանական կենտրոնական, Բեռլինի միսիոներական արխիվներից:

Հինգերորդ բաժնում զետեղված են նյութեր գերմանական հրապարակված փաստաթղթերից, իսկ վերջին՝ վեցերորդ բաժինը ներառում է Գերմանիայի Արևելյան միսիայի փաստաթղթերը:

Հրապարակված ժողովածուն, հիրավի, գերմանական նոր նյութերով լրացնում է համաշխարհային պատմության կարևոր էջերից մեկը հանդիսացող հայոց ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրությունը:

Թուրքիայում հայերի ցեղասպանության վերաբերյալ նոր փաստաթղթերի ու նյութերի հայտնաբերման, գիտական մշակման և հրատարակման բնագավառում լուրջ ներդրում է կատարել ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը: 1989-ին, աշխատելով Գերմանիայի արտգործնախարարության Քաղաքական արխիվում (Բոնն), ինչպես նաև Պոտսդամի

Կենտրոնական պետական, Դրեզդենի Պետական, Բեռլինյան միսիայի արխիվներում, հեղինակը հրապարակ է հանել մեծարժեք մի ժողովածու[1]:

Հիմնավորելով նման ժողովածուի հրատարակման գիտական ու քաղաքական հրատապությունը, հեղինակը առաջաբանում գրում է, որ վերջին ժամանակներս Թուրքիայի կառավարող շրջանները, պաշտոնական ու ոչ պաշտոնական պատմագրությունն ու հրապարակախոսությունը ճգնում են «ապացուցել» անապացուցելին՝ որ իբր Օսմանյան Թուրքիայում հայերի ոչ մի ցեղասպանություն էլ չի եղել, այլ ընդհակառակը, հայերն են կազմակերպել թուրքերի կոտորածներ: Ինչ վերաբերում է թուրքերի կողմից հայերի բնաջնջման վերաբերյալ անգլիական, ամերիկյան և ֆրանսիական արխիվային փաստաթղթերին, ապա դրանք, ըստ թուրքերի, կողմնակալ ու կեղծ են, քանի որ առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի թշնամի պետությունների փաստաթղթեր են: Նման պայմաններում, այնուհետև նշում է Վ. Միքայելյանը, Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի, որի կառավարության հանձնագործ թողտվությամբ իրականացվեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, արտգործնախարարության Քաղաքական արխիվի փաստաթղթերի և նյութերի հրապարակումը, բնականաբար, ձեռք է բերում առաջնային նշանակություն, քանզի «Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի թշնամի պետությունների փաստաթղթեր» փաստարկը կորցնում է իր իմաստն ու ուժը[2]:

Հեղինակը համոզիչ փաստարկներով ցույց է տալիս, որ դեռևս 1919-ին Պոտսդամում դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հրատարակած «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուն, որը, անշուշտ, մեծ դեր խաղաց, քաղաքական իրադրության բերումով չէր կարող կատարյալ լինել, որովհետև լույս ընծայվեց բազմաթիվ կրճատումներով, հեղինակին չտրամադրվեցին բոլոր փաստաթղթերը և այլն: Օրինակ է բերվում, թե ինչպես Լեփսիուսի ժողովածուում տեղ չեն գտել այնպիսի քաջատեղյակ և արտակարգ կարևոր պաշտոնյայի փաստաթղթերը, ինչպիսին Հալեպի գերմանական հյուպատոս Ռյուսերն է[3]:

Բովանդակային առումով Վ. Միքայելյանը իր հրատարակած փաս-

[1] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответ. ред., автор предисловия, введения и примечаний, доктор исторических наук, проф. Вардгес Микаелян. Ереван, 1995.

[2] Նշվ. աշխ., էջ 5:

[3] Նշվ. աշխ., էջ 6:

տաթղթերն ու նյութերը բաժանում է 13 խմբի, որոնցից յուրաքանչյուրը վկայում է Թուրքիայում 1915—1918 թթ. հայերի բնաջնջման, արևմտահայության տեղահանության, տարագրյալների նկատմամբ թուրք զինվորների և ավազակախմբերի կամայականությունների, հարյուր հազարավոր հայերի իսլամացման, նրանց ինձող սովի, ցրտի ու համաճարակների, թուրքական բանակ կանչված հայ զինվորների զինաթափման ու ոչնչացման, ցեղասպանության՝ կառավարական մակարդակով պլանավորվածության, կայզերական Գերմանիայի մեղսակցության արևմտյան տերությունների և հասարակայնության վերաբերմունքի և այլ հարցերի մասին:

Ժողովածուի նախաբանում այն միտքն է հայտնվում, որ թուրքական կեղծարարությունը ծառայում է մեկ մի նպատակի՝ խանգարել մեծ տերությունների և ՄԱԿ-ի կողմից Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչմանը, հանգամանք, որը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ դեռ վաղ է Թուրքիան քաղաքակիրթ պետությունների ցուցակում գրանցելը:

Ժողովածուի ընդարձակ ներածությունում Վ. Միքայելյանը, պատասխանելով այն հարցին, թե պրակտիկորեն ով իրականացրեց հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության ակտը, գրում է. «Այո, ցեղասպանության հեղինակները երիտթուրքերն էին ու նրանց կառավարությունը: Սակայն նրանց հրամաններն ու կարգադրությունները բանակի կանոնավոր ստորաբաժանումների, ժանդարմերիայի և ոստիկանության միասին կատարում էր շարքային թուրքը, որը ծարավի էր հեշտ վաստակի: Այն թուրքը, որի նախնիները հայերի հայրենիքում և առհասարակ Առաջավոր Ասիայում հայտնվել էին ընդամենը մի քանի հարյուրամյակ առաջ, և որը այդ ամբողջ ժամանակամիջոցում, մինչև վերջին ժամանակներս ոչ մի քաղաքակիրթ բան չվարժվեց. ո՛չ գրականության, ո՛չ արդյունաբերական աշխատանքի, ո՛չ առևտրի: Եվրոպան գիտեր, որ այն ժամանակ թուրքերի համար թալանը շարունակում էր մնալ իրրև կյանքի նորմ ու կենսակերպ, նրանց գոյության պայման»[1]: Իր միտքը հաստատելու համար Վ. Միքայելյանը վկայակոչում է գերմանացի հեղինակ, գեներալ Լիման ֆոն Զանդերսի թարգմանիչ Հենրիխ Ֆիրբյուխերի աշխատությունը, որի ռուսերեն հրատարակության առաջաբանի հեղինակը ինքն է[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 11:

[2] Г. Фирбюхер, Армения 1915. Предисловие к русскому изданию Вардгеса Микаеляна, Ереван, 1991.

Վ. Միքայելյանը նույնպես այն կարծիքն է հայտնում, որ հայերի ցեղասպանությունը չպետք է սահմանափակել 1915 թվականով, 1915—1922 թվականները դա միայն հայերի բնաջնջման բարձրակետի ու ավարտի ժամանակաշրջանն է, որը սկիզբ է առնում անցյալ դարի 90-ական թվականներից:

Անդրադառնալով Դաշնակցության և երիտթուրքական կուսակցության համագործակցության խնդրին, ակադ. Վ. Միքայելյանը գրում է, որ այդ քայլին հայերի ամենաազդեցիկ կազմակերպությունը գնաց՝ նոր, դեմոկրատական Թուրքիայում նաև հայ ժողովրդի համար փրկություն ձեռք բերելու հույսեր փայփայելով, ենթադրելով, որ դաշնակից-երիտթուրքերը կջնջեն արյունոտ անցյալը: Եվ երբ 1909-ին Աբդուլ Համիդի պահպանողականները հետապնդում էին երիտթուրքական առաջնորդներին, հայ գործիչները, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, թաքցնում էին նրանց:

Դնելով այն հարցը, թե ինչո՞ւ Դաշնակցությունը կոմպրոմիսի գնաց երիտթուրքերի հետ, Վ. Միքայելյանը պատասխանում է, որ հավանաբար նա չէր կարող այդ քայլին չգնալ այն պարզ պատճառով, որ երիտթուրքերի հանգստությանական ծրագիրը իր դեմոկրատական պահանջներով լիուլի բավարարում էր հայերի ցանկություններին[1]: «Այսօր, Թուրքիայում հայ ժողովրդի ցեղասպանությունից 80 տարի անց,— գրում է ներածականի հեղինակը,— իհարկե, շատ հեշտ է մեղադրել հայ լիդերներին 1907-ին երիտթուրքերի հետ կնքած համաձայնության համար: Այնուամենայնիվ, նրանց մեղքը չէր, որ վստահությունը երիտթուրքերի հանդեպ շրջվեց քաղաքականության մեջ դառը հաշվեխախալի»[2]: Հեղինակն ավելացնում է նաև, որ 1911-ին Դաշնակցության ղեկավարները հայտարարեցին երիտթուրքերին, որ իրենք այլևս չեն վստահում նրանց: Նա նշում է նաև, որ Իթթիհատի հետ Փարիզի 1907-ի համաձայնության տակ դրված է ոչ միայն Դաշնակցության, այլև Թուրքիայի այլ ազգային կուսակցությունների ստորագրությունները:

Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչու երիտթուրքերը, քաջ գիտենալով, որ հայերը կազմում են Թուրքիայի ազգաբնակչության գործուն մասը, այնուամենայնիվ, որոշեցին ոչնչացնել նրանց, Վ. Միքայելյանը գրում է, որ այդ հարցին միանշանակորեն դժվար է պատասխանել, սակայն մի բան անկասկած է՝ գլխավոր պատճառը պան-

[1] Նշվ. աշխ., էջ 15:

[2] Նույն տեղում:

թուրքիզմի գաղափարախոսությունն էր, որն ընկած էր երիտթուրքերի ծրագրի և պրակտիկ գործունեության հիմքում[1]:

Վկայակոչելով Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերի, Էրզրումի հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերի, Զմյուռնիայի փոխհյուպատոս Կուկհոֆի զեկուցագրերը և գերմանական այլ փաստաթղթեր, Վ. Միքայելյանն ընդգծում է, որ դրանք ի չիք են դարձնում «հայերի ապստամբությունների» վերաբերյալ թուրքական հորինվածք-վարկածը: Միաժամանակ գերմանական փաստաթղթերի վերլուծության հիման վրա նա հանգում է այն եզրակացության, որ Գերմանիայի կառավարությունը և Կ. Պոլսում նրա դեսպան Վանգենհայմը պաշտպանում էին թուրքական իշխանությունների չարագործությունները: Իբրև Գերմանիայի կառավարության մեղսակցություն Վ. Միքայելյանը մատնանշում է նաև այն փաստը, որ գերմանական ներկայացուցիչները ամեն կերպ համոզում էին հայերին, թե նրանց ոչ մի վտանգ չի սպառնում, որ նրանց լիակատար անվտանգությունը երաշխավորված է: Այդ ուղղակի խաբեությունը ապակողմնորոշեց հայերին և մեծ չափով խանգարեց նրանց ինքնապաշտպանության կազմակերպմանը: Այդ առթիվ Վ. Միքայելյանը վկայակոչում է փոխհյուպատոս Հոֆմանի խոսքերը. մի հայ բողոքական հոգևորական ասել էր նրան, որ մինչև տարագրությունը իրենք որոշել էին լոյալ մնալ և եթե այն ժամանակ հայերը ամենուրեք դիմադրություն ցույց տային, ապա կդառնային դրության տերը և դատապարտված չէին ջինի կործանման: Սակայն իրենց բոլոր գերմանացի բարեկամները Մարաշում, Ուրֆայում, Մալաթիայում, Մամուրեթ-ուլ-Ազիզում համառորեն խորհուրդ էին տալիս ենթարկվել և ոչինչ չի պատահի: Իրենք էլ հավատացին դրան, և այն, որ իրենք հույսը դրեցին գերմանացիների ազդեցության վրա, դարձավ իրենց չար ճակատագիրը[2]:

1915—1916 թվականների վերաբերյալ ակադ. Վ. Միքայելյանը հրապարակել է շուրջ 80 փաստաթղթեր, որոնց գերակշիռ մասը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են, օրինակ, Էրզրումի հայ կաթոլիկների առաջնորդ Հովսեփ եպիսկոպոս Մելքիսեդեկյանի դիմումը գերմանական հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերին, գերմանացի հոգևորական Կյունցլերի նամակը Հալեպի հյուպատոս Ռյոսլերին՝ Ուրֆայի և նրա շրջակայքի ասրասփելի իրադարձությունների մասին,

[1] Նշվ. աշխ., էջ 16:
[2] Նշվ. աշխ., էջ 25—26:

Ռյոսլերի զեկուցագիրը կանցլեր Բետման-Հոլվեգին՝ հայերի դեմ թուրքական կառավարության միջոցառումների մասին, Շոյնբեր-Ռիխտերի զեկուցագիրը Կ. Պոլսի գերմանական դեսպան Հոհենլոե-Լանգենբուրգին՝ Էրզրումից հայերի տարագրման մասին, Կ. Պոլսի գերմանական դեսպանության հրահանգները կայզերական հյուպատոսությունների՝ հայկական հարցի վերաբերյալ, Ռյոսլերի հաշվետվությունը՝ Հալեպ հասած հայերի մասին, դեսպանի պաշտոնակատար Նոյրաթի զեկուցագիրը Բետման-Հոլվեգին՝ Ուրֆայի ինքնապաշտպանության մասին, գերմանական մի շարք միսիոներուհիների վկայությունները և այլն[1]:

1916-ի իրադարձություններն արտացոլված են այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Ռյոսլերի երկու հաշվետվությունները հայերի տեղահանության և Տել-Աբիադի հայկական ճամբարի մասին՝ հասցեագրված կայսերական դեսպան Վոլֆ Մետերնիխին, Հալեպի գերմանական հյուպատոսության աշխատակից Վիլհելմ Լիտտենի տպավորությունների գրառումները Բաղդադից Հալեպ ճանապարհորդության մասին, ռայխստագի անդամ Մ. Էրցբերգերի հուշագիրը Գերմանիայի արտգործնախարարության գաղտնի խորհրդական բարոն ֆոն Ռոզենբերգին՝ Թուրքիայում կաթոլիկ հայերի դրության մասին, Սվազի և Էրզրումի փոխհյուպատոս Կարլ Վերտի ուղեգրությունը, որը լույս է սփռում 1916-ի ձմռանը տասնյակ հազարավոր թուրքերի մահվան իրական պատճառների վրա, Մետերնիխի նամակը ռայխսկանցլեր Բետման-Հոլվեգին՝ Թուրքիայի արևելյան նահանգներում հայերի հետապնդումների մասին, մի շարք հոգևոր միսիաների ներկայացրած փաստաթղթերը, Բեռլինի միսիոներական ընկերության դիրեկտոր Կարլ Ակսենֆելդի դիմումը գերմանական կառավարությանը՝ հայերին ոչնչացումից ու իսլամացումից փրկելու միջոցառումների մասին, Էրզրումի հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերի նամակը ռայխսկանցլեր Բետման-Հոլվեգին՝ հայկական հարցում իր դիրքորոշման մասին և այլն[2]:

Վ. Միքայելյանի հրատարակած ժողովածուն մեկ անգամ ևս գալիս է փաստելու այն անժխտելի իրողությունը, որ երիտթուրքական ոճրակի վարած պանթուրքական քաղաքականության հետևանքով տարագրվեց ու ոչնչացվեց մի ամբողջ ժողովուրդ՝ արևմտահայությունը, իսկ նրանց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, որը կազմում է Հայաստանի 9/10 մասը, վերածվեց ավերակների:

[1] Նշվ. աշխ., էջ 171—284:
[2] Նշվ. աշխ., էջ 285—422:

Ժողովածուի հեղինակը համոզմունք է հայտնում, որ գալու է այն ժամանակը, երբ հայ ժողովրդի ցեղասպանության փաստը ստիպված ճանաչելու են նաև թուրք պաշտոնական շրջանները:

Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության բնագավառի նշանակալի ձեռքբերումներից է «Ռուսական սկզբնաղբյուրները Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին. 1915—1916 թվականներ» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի հրատարակումը[1]: Ժողովածուի կազմողներն են Գ. Ա. Աբրահամյանը և Տ. Գ. Մնաց-Խաչատրյանը: Կազմման աշխատանքներին մասնակցել են Գ. Վարդազարյանը, Մ. Սահակյանը և Լ. Շահվերդյանը: Ընդարձակ առաջաբանի հեղինակն է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը:

Ժողովածուի հրատարակումը հիմնավորվում է նրանով, որ գերմանական, ֆրանսիական, ամերիկյան, անգլիական աղբյուրների սկզբնաղբյուրների ժողովածուների առկայության պայմաններում մինչ այժմ չկար մի առանձին ժողովածու, որտեղ ի մի հավաքված լիներին ռուսական պաշտոնական աղբյուրները, որոնցում արտահայտություն են գտել ռուսական առաջավոր միտքը, հասարակական և քաղաքական գործիչների հոդվածները, գրողների ասույթները: Ժողովածուում տեղ են գտել ինչպես հրապարակված, այնպես էլ առաջին անգամ հրապարակվող փաստաթղթեր ու նյութեր:

Ինչպես առաջաբանում նշում է Մ. Ներսիսյանը, ժողովածուն պարունակում է շատ հետաքրքիր փաստեր և նյութեր, որոնք վերաբերում են առաջին համաշխարհային պատերազմի ծանր օրերին ռուս ականավոր ու շարքային մարդկանց՝ հայ ժողովրդին ցույց տված բարոյական և նյութական օգնությանը:

Հայերի ցեղասպանության պատմության բնագավառում շնորհակալ աշխատանք է կատարել բանասիրաբան-ժողովրդագետ Վերժինե Սվազլյանը՝ երկար տարիներ գրի առնելով, ձայնագրելով և մի ամփոփ ժողովածուով հրատարակելով Մեծ եղեռնից վերապրածների յոթանասուն հուշապատում և շուրջ երկու հարյուր պատմական բնույթի երգեր ու վիպերգեր՝ ստեղծված այն աճավոր տարիներին[2]:

Ժողովածուն, նրա խմբագիր, բանասիրության դոկտոր Սարգիս Հարությունյանի գնահատմամբ, ունի հույժ պատմական, անգամ քաղաքական արժեք ու նշանակություն:

[1] Русские источники о геноциде армян в Османской империи, 1915—1916 годы (Сборник документов и материалов). Выпуск I. Ереван, 1995.

[2] Վերժինե Սվազլյան, Արևմտահայոց բանավոր վկայություններ, Երևան, 1995:

Հրապարակված նյութերը պատմական կարևորագույն վկայագրեր են: Իսկ իր՝ հեղինակի բնորոշմամբ, հրատարակված երգերն ու հուշերը իրենց պատմաճանաչողական արժեքով Մեծ եղեռնը ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ են, առարկայական վկայագրեր:

ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արժեքավոր հրատարակություններից է «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո» փաստաթղթերի ժողովածուն[1]: Այն կազմել և առաջաբանը գրել է բուլղարահայ հասարակական-գրական գործիչ Հակոբ Կիլիկյանը, բուլղարերենից թարգմանել են Զ. Ղասաբյանը և Կ. Ծիճգոզյանը: Ժողովածուն պարունակում է առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կոստանդնուպոլսում Բուլղարիայի լիազոր-դեսպան Ն. Կոլուշևի, Զմյուռնիայի հյուպատոս Իվ. Համամջիևի, Ադրիանապոլսի գլխավոր հյուպատոս Գ. Սերաֆիմովի, Բուլղարիայի նախարարների խորհրդի նախագահ Վ. Ռադոսլավովին հասցեագրած նամակների, հեռագրերի և զեկուցագրերի մի մասը: Այդ փաստաթղթերը, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, մերկացնում են թուրքիահատականների գործած ամօրինական բարբարոսությունները: Այդ նյութերի վավերագրական արժեքը մեծանում է նրանով, որ դրանք գերմանական և ավստրո-հունգարական փաստաթղթերի նման Թուրքիայի դաշնակից պետության պաշտոնյաների դիվանագիտական փաստաթղթեր են:

Ինչպես նշում են ժողովածուի թարգմանիչները, հայ ժողովրդի գլխին պատած փոթորիկը լայն արձագանք գտավ բուլղարական դիվանագիտական ու կառավարական շրջաններում և մամուլում, դատապարտող զարթալի հոդվածներ լույս տեսան երիտթուրքերի բարբարոսությունների դեմ, հրատարակվեցին աշխատություններ, դիմումներ հղվեցին բուլղարական կառավարությունը՝ ի պաշտպանություն հոշոտվող հայ ժողովրդի: Այդ բոլորը հայ և բուլղար ժողովուրդների բազմադարյան բարեկամության արդյունքն էր, որ կոփվել էր օսմանյան լծի դեմ համագործակցելու պայմաններում: Բուլղարիայի վարչապետ Վ. Ռադոսլավովը ընդունեց հայ պատվիրակներին և հայտնեց, որ բուլղարական կառավարությունը թագավորական լիազոր դեսպան Ն. Կոլուշևի միջոցով խնդրել է թուրքական կառավարությանը՝ դադարեցնել հայերի հա-

[1] Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, Երևան, 1996:

լածանքներն ու կոտորածները: Ի պատասխան հայերի խնդրանքի, վարչապետը հավաստիացրեց նաև, որ բուլղարական սահմանն անցնելու դեպքում ոչ մի հայ փախստականից փաստաթուղթ կամ անձնագիր չի պահանջվի: Եզրահանգվում է, որ 1915—1922 թթ. Մեծ եղեռնի ու բռնագաղթերի ժամանակաշրջանում բուլղարահայերը և բուլղար ժողովուրդը հսկայական աշխատանք կատարեցին հազարավոր հայ տարագիրներին օգնելու և ապաստան տալու գործում:

Հիշյալ փաստաթղթերը պարունակում են ոչ միայն չարագործությունների սոսկական նկարագրություններ, այլև ուշադրության արժանի բազում հավաստի ու ճշմարտապատում վկայություններ: Այսպես, լիազոր նախարար դոկտոր Ն. Կոլուշևի 1915 թ. մարտի 17-ի թվակիր նամակում խոսք է գնում Զեյթունի հայերի դիմադրության մասին: Նշվում է, որ զորակոչիկներ հավաքելիս զեյթունցիները զինված հարձակում են գործել բանտի վրա, կոտորել պահակախմբին, ազատել բանտարկյալներին: Սպանվել է Մարաշի ժանդարմապետ Սուլեյման բեյը և շուրջ 30 ոստիկաններ ու զինվորներ: Այնուհետև ապստամբները ամրացել են Զեյթունից դուրս գտնվող վանքում, որոնց դեմ ուղարկվել է զորք և հրետանի: Ինչպես տեսնում ենք, սույն վկայությունը հակասում է պատմագրության մեջ տարածված այն կարծիքին, թե իբր այս անգամ զեյթունցիները խաբվել են և դիմադրություն ցույց չեն տվել:

1915 թ. հունիսի 27-ի թվակիր զեկուցագրում Ն. Կոլուշևը, խոսելով հայ բնակչության անհնկարագրելի վշտերի ու տառապանքների մասին, վարչապետին զգուշացնում է, որ եթե թուրքական կառավարությունը փորձի մայրաքաղաքից տեղահանել գավառներից այստեղ բնակություն հաստատած հայերին, ապա հայերը կդիմեն հուսահատ գործողությունների[1]:

Հաջորդ նամակներում հաղորդվում է, որ հայերի ջարդերն ու հալածանքները ստանում են այդ ժողովրդին վերջնականապես բնաջնջելու սոսկալի կերպարանք, ամենուրեք հայկական բնակավայրերը բոլորովին մաքրազարդվում են:

Զմյուռնիայի հյուպատոս Իվան Համամջիևի 1915 թ. հուլիսի 24-ի՝ Վ. Ռադոսլավովին ուղղված նամակում նշվում է, որ հավատի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն Անատոլիայի հայ բնակչության վիճակը խիստ տագնապալի է, որը նկատվում է սիստեմատիկ ու զանգվածային կոտորածների: Բիթլիսում և Էրզրումում ոչ մի հայ չի մնացել, Անկարայից փտարված 750 հայ ընտանիքներ ճանապարհին կոտորվել են:

Ն. Կոլուշևի 1915 թ. օգոստոսի 16-ի զեկույցում նշվում է, որ հայերի տարագրությունը օրը օրին ավելի սարսափելի չափերի է հասնում, հայերով բնակեցված նահանգները անապատների են վերածվում: Կոտորածներից զերծ չի մնացել Թուրքիայի խորքերում գտնվող հայաբնակ ոչ մի տարածք: Երիտթուրքերի կատաղությունը մոտենում է Կոստանդնուպոլսի շրջակայքին: Հայերից մաքրվել են Ադաբազարն ու Իզմիթը, որտեղ կատարված հրեշավոր ոճիրները հնարավոր չէ նկարագրել: Բուրսայի տասնյակ հազարավոր հայերից քաղաքում թողնվել է միայն մի ծերունի լուսանկարիչ: Արտասահմանյան ներկայացուցիչներին, որոնք հայերից ստացել են հազարավոր խնդրագրեր, թուրքական կառավարիչները պատասխանում են, թե միջոցառումը ժամանակավոր է և որ աքսորված հայ բնակչությանը ոչ մի վատ բան չի պատահի: Մինչդեռ անապատներում հազարավոր հայերի հրեշավոր կոտորածների մասին տեղեկություններ ստացվում են ամեն օր, որը տանում է մի ամբողջ ժողովրդի վերջնական ոչնչացման[1]:

1915 թ. օգոստոսի 31-ի նամակում Ն. Կոլուշևը վարչապետին գրում է, որ հայ բնակչության ոչնչացման վերաբերյալ կենտրոնական իշխանության հրամանները կատարվում են զարմանալի արագությամբ: Թուրքիայում բոլոր հայերը կոտորվում են, այդ թվում նաև նրանց հոգևոր առաջնորդները, իսկ նրանց շարժական և անշարժ գույքը կողոպտվում է: Լիազոր դեսպանը օրինակ է բերում, թե ինչպես են թուրքական իշխանությունները կազմակերպում հայերի անշարժ գույքի ձևական առք ու վաճառք և նույն պահին գույքատիրոջից խլում են գնորդի վճարած դրամը: Վկայություն է բերվում նաև, որ ոչ մի տարբերություն չէր դրվում հայ լուսավորչականների, կաթոլիկների կամ բողոքականների միջև: Նշելով, որ թուրք ջարդարարներին չդիմադրելը ընդհանուր զարմանք է առաջացնում, լիազոր դեսպանը հայերի նման կեցվածքը բացատրում է մի կողմից նրա բնավորության խաթարումով, որը կատարվել է թուրքական դարավոր լծի հետևանքով և մյուս կողմից՝ իր առաջնորդների փայփայած հույսին հավատալով, թե, այնուամենայնիվ, այն բնակչության մի մասը մի կերպ խնայվելու է[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 14:

[1] Նշվ. աշխ., էջ 25:
[2] Նշվ. աշխ., էջ 31:

Ի տարբերություն պատմագրության մեջ տարածված այն կարծիքի, թե ինչ-ինչ նկատառումներով թուրքերը չեն տեղահանել Կոստանդնուպոլսի հայությանը, Ն. Կոլուշևը վկայում է, որ մայրաքաղաքն էլ խնայված չէ: Նա նշում է, որ առայժմ հավաքում և ոչնչացնում են գավառներից եկածներին: Նրանք, ովքեր իրենց ընտանիքները թողել են գավառներում, ուղարկվում են նրանց մոտ, թեև վերջիններս վաղուց արդեն տեղահանվել ու ոչնչացվել են:

Նամակի վերջում լիազոր դեսպանը փորձում է համոզել վարչապետին, որ Գերմանիայի և Բուլղարիայի կողմից թուրքական իշխանությունների առաջ ավելի համարձակորեն միասին ներկայանալու դեպքում, կամ նույնիսկ այս պետություններից մեկի կողմից առանձին, ի վիճակի կլինի խելքի բերելու թուրքական դահճին, որը խնդիր է դրել մինչև վերջ անխնա ոչնչացնելու հայ բնակչությանը, որը բոլոր ստըրկացված ժողովուրդներից ունի ամենաստակալի ճակատագիրը:

Ադրիանապոլսի գլխավոր հյուպատոս Գ. Մերաֆիմովը և քարտուղար Գրանդարովը 1916 թ. փետրվարի 24-ին Բուլղարիայի վարչապետին գրած նամակում նկարագրում են Հայոց պատրիարքարանի գույքի և գանձերի թալանը, որին իրենք ականատես են եղել: Նշելով, որ իրենք ներկա են համաշխարհային ահավոր դրամայի վերջին արարին, բուլղար դիվանագետները գրում են. «Պատմությունը, այդ դաժան ու անխնա քննադատը, թաքնված մի օթյակում, լուռ նշումներ է անում: Եվ վաղը, երբ ամբողջ ազգեր պատմության դաժան դատաստանի առջև են կանգնելու, Թուրքիան ի՞նչ պիտի կարողանա ասել իր արդարացման համար... Թուրքիան ի հեճուկս ամբողջ մարդասիրության, վերածնվելի ու վերանորոգման ճանապարհով գնալու փոխարեն, վերադառնում է դեպի 14—16-րդ դարերը»[1]:

2. Ցեղասպանության ուսումնասիրումը

1960-ական թվականների սկզբները հայրենական պատմագրության մեջ շրջադարձային եղան Հայոց Մեծ եղեռնի պատմության գիտական ուսումնասիրության առումով, և մեկը մյուսի հետևից հրապարակ հանվեցին մի շարք մենագրություններ, որոնց ուղին, կարելի է ասել, հարթվել էր դեռևս 1950-ական թվականների կեսերին՝ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի վերը քննարկված աշխատություններով[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 35:

[2] Տե՛ս էջ 206—207:

Այդ շարքի առաջնեկներից եղան Ե. Ղ. Սարգսյանի ռուսերեն աշխատությունը և նրա լրացված ու բարեփոխված հայերեն հրատարակությունը[1,2]:

Հայերեն աշխատության մեջ Ե. Սարգսյանը հատուկ գլուխ է հատկացրել 1915—1916 թվականներին երիտթուրքերի կողմից հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործմանը: Իբրև ելակետ ընդգծվում է այն միտքը, որ երիտթուրքական կուսակցության գործիչների պատկերացմամբ մահմեդական աշխարհի մեջ «սեպի նման խրված» հայերը խանգարում էին Օսմանյան կայսրության հետ Անդրկովկասի ու Ռուսաստանի այլ շրջանների մահմեդական ազգաբնակչության միավորմանը, այստեղից էլ՝ նրանց բնաջնջման հրեշավոր ծրագիրը: Հեղինակը փաստերով հիմնավորում է այն իրողությունը, որ սկզբունքորեն երիտթուրքական ոճմակը տակավին համաշխարհային պատերազմից առաջ որոշել էր ոչնչացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին:

Նշվում է, որ երիտթուրքական կառավարությունն իր բարբարոսական ծրագրի իրականացումն սկսեց 1914 թվականի աշնանը, թուրքական բանակ զորակոչված հայերի ոչնչացումով:

Ե. Սարգսյանը համոզիչ փաստարկներով մերկացնում է թուրքական կառավարության հորինած և ջանադրաբար տարածած այն կեղծ վարկածը, թե իբր հայերն ապստամբություններ էին սարքում, որոնք նպատակ ունեին կազմալուծել թուրքերի կռվունակությունը[3]:

Ցույց է տրվում, որ թուրքական կառավարությունը, բացի հայերի աքսորի մասին հրահանգից, վիլայեթների իշխանություններին հղեց Թալեաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայ ազգաբնակչության ոչնչացման մասին, որտեղ ասվում էր, թե կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի մանուկներին: Նույն հրահանգում խստորեն նախազգուշացվում էր տեղական իշխանություններին, որ նրանք թույլ չտան հայերին պաշտպանելու դեպքեր և որ կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների անունով փոստով ու հեռագրով ստացվող բողոքները պետք է ընդունվեն, բայց տեղ չհասցվեն: Նշվում է, որ այդ չարաբաստիկ պրակը նախապատ-

[1] Саркисян Е. К. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, 1962.

[2] Թուրքիան և նրա ներքաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964:

[3] Նշվ. աշխ., էջ 287—288:

րաստվել էր և վաղօրոք մանրամասն մշակվել, ուստի հայերի աքսորն ու զանգվածային ջարդը միևնույն եղանակով ու միաժամանակ իրականացվեցին կայսրության ավելի քան 50 վայրերում, որը տևեց 1915 թվականի ապրիլից մինչև նոյեմբեր:

Փորձելով որոշել ջարդերի ու աքսորի հետևանքով զոհված հայերի մոտավոր թիվը, Ե. Սարգսյանը տարբեր փաստական աղբյուրների համեմատությամբ գտնում է, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմել է մոտ 2 միլիոն 500 հազար մարդ: Չնայած մինչև պատերազմը տեղի ունեցած հայկական ջարդերին ու արտագաղթերին, հայերը կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության հարաբերական մեծամասնությունը:

Ի մի բերելով բոլոր տվյալները, նա գտնում է, որ 1915—1916 թվականների ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մեկնկես միլիոն հայեր արտաքսվեցին այն տարածքներից, որտեղ նրանք բնակվում էին դարեր ի վեր: Նրանցից մեկ միլիոնից ավելի մարդ սպանվեց կամ մահացավ սովից ու համաճարակից՝ Միջագետքի ճանապարհին ու բուն աքսորավայրում:

Ե. Սարգսյանը պաշտպանում է այն կարծիքը, որ երիտթուրքերին հաջողվեց հայերին կոտորել՝ եվրոպական պետությունների գրաված դիրքի պատճառով: Այս առումով գլխավոր հանցագործ նա ճանաչում է կայզերական Գերմանիային:

Նշվում է, որ ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անարգանքի ենթարկում էր գամում երիտթուրքական մարդասպաններին և իրենց կառավարություններից պահանջում վճռական քայլերի դիմել՝ արևմտահայերին պաշտպանելու համար: Հեղինակը տալավորիչ քաղվածքներ է բերում Ռուսաստանի, եվրոպական ու ամերիկյան երկրների պարբերականների մամուլում զետեղված հոդվածներից ու հաղորդումներից, որոնցում լայնորեն լուսաբանվում են թուրքական իշխանությունների չարագործությունները:

Եղեռնի պատմության հարցերին նվիրված հատուկ աշխատություններից մեկը Ա. Ն. Մնացականյանի գիրքն էր[1], որը լույս ընծայվեց հայ ժողովրդի մեծագույն ողբերգության 50-ամյա տարելիցի օրերին:

[1] Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965:

Գրքի առաջին գլուխը նվիրված է հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության թուրքական պետական քաղաքականության բացահայտմանը: Պատմական փաստերի հիման վրա մերժվում են այն տեսակետները, ըստ որոնց հայերի կոտորածները Թուրքիայում սկսվել են հայկական ազգային կուսակցությունների ստեղծման և նրանց գործունեության պատճառով, և ձևակերպվում է այն մոտեցումը, թե հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը Հայաստանում կիրառվել է Օսմանյան Թուրքիայի տիրապետության հաստատման ժամանակներից սկսած, որն արտահայտվել է տնտեսական ոտրկացման և շահագործման ձևով, բռնի մահմեդականացման և ձուլման միջոցներով, պատերազմների ընթացքում մասսայաբար ոչնչացման, իսկ խաղաղ ժամանակ մասնակի սպանությունների ձևերով:

Անդրադառնալով 19-րդ դարում արևմտահայերի կոտորածների պատմությանը և նշելով, որ եթե անցյալում թուրքական բռնապետությունը հայ ժողովրդի նկատմամբ կիրառում էր ազգային սահմանափակումների, շահագործման և ձուլման քաղաքականություն, ապա ցարական կառավարության և Արևմուտքի մեծ տերությունների միջամտությունից ու հայկական հարցի գոյացումից հետո թուրքերն անցան հայերի բացահայտ, մասսայական ջարդերի քաղաքականությանը, Ա. Մնացականյանը եզրակացնում է. «Ոչ թե հայկական ազատագրական շարժումները կամ ազգային կուսակցությունների գործունեությունն առաջ բերին թուրքական բռնություններ և հայաջինջ ծրագրեր, այլ ընդհակառակը՝ ավելի վաղ ժամանակ տոլթանական իշխանության մշակած հայաջինջ ծրագրերը և հայերի կոտորածները առաջ բերեցին իրավազուրկ հայ ժողովրդի պայքարի նոր բռնկումներ, ազատագրական ճիգեր, ձևավորվեցին հայկական ազգային պարտիաներ, որոնք տարբեր ծրագրերով և տարբեր տակտիկական միջոցներով մասնակցում էին հայկական հարցի շուրջը մղվող պայքարին»[1]:

Ա. Մնացականյանը անդրադառնում է արևմտահայերը զորահավաքին ու նրանցից աշխատանքային գումարտակներ կազմելուն, ինչպես նաև հայ բնակչության զինաթափմանը և դրանք դիտում է իբրև Մեծ եղեռնի նախապատրաստմանն ուղղված միջոցառումներ: Մանրամասնորեն խոսվում է իթթիհատի կենտկոմի գաղտնի նիստի մասին՝ Թալեաթի նախագահությամբ, ուր քննվեց հայերի տեղահանման և ֆիզիկական բնաջնջման հարցը: Արխիվային փաստաթղթերի հիման վրա նա ցույց

[1] Նշվ. աշխ., էջ 28:

է տալիս, որ թուրքական ռասիստների կոմիտեն 1915-ի ապրիլի սկզբներին ստեղծեց «Հատուկ կոմիտե» (թաշկինաթի մաքսուսե), որին տրամադրվեց ամբողջ ոստիկանական կորպուսը:

Ապրիլի 15-ին հաստատվեց և տեղական իշխանություններին ուղարկվեց հրահանգ արևմտահայերի տեղահանման և ապա կոտորածների մասին:

Այնուհետև Ա. Մնացականյանն անցնում է ապրիլի 24-ին պոլսահայ մտավորականության ձերբակալման, աքսորի և կոտորածի նկարագրությանը, նշում, որ Ստամբուլի 600 000 բնակիչներից 150 000-ը հայեր էին, որոնց մեջ էր արևմտահայ մտավորականության ծաղիկը:

Ստամբուլում ձերբակալված, աքսորված ու խոշտանգված հայ մտավորականների թիվը րստ Ա. Մնացականյանի հասնում է 1500-ի՝ ընդունված 600-ի կամ 800-ի փոխարեն: Նա գրում է նաև հայ ազատագրական շարժման մի խումբ ղեկավարների՝ 1915 թ. ապրիլի 28-ին Ստամբուլում սկսված «դատավարության» մասին, որոնց մեջ գլխավոր դերը Մաթևոս Սարգսյանն էր՝ հինչակյան հայտնի գործիչ Փարամազը:

Այնուհետև նկարագրվում են նահանգներում ու գավառներում տեղի ունեցած տեղահանություններն ու ջարդերը:

1965-ին լույս տեսավ պրոֆ. Զոհ Կիրակոսյանի մեծարժեք մենագրությունը[1], որն ունեցավ երկու հրատարակություն և որի ռուսերեն տարբերակը լույս տեսավ մի քանի տարի անց՝ փոքր-ինչ փոփոխված վերնագրով[2]:

Աշխատության երրորդ գլուխն ամբողջովին նվիրված է արևմտահայության 1915 թ. ցեղասպանությանը: Հեղինակն առաջ է քաշում այն ելակետային միտքը, թե 1914-ի աշնանից սկսած երիտասարդ թուրքերի որդեգրած հայահալած շովինիստական քաղաքականությունը թևակոխում էր իր ծոր, ավելի մարդատյաց, ժողովրդասպան փուլը, թուրքական կառավարողներ ձեռնամուխ եղան հայ ժողովրդի դեմ քաղաքական մեղադրանք առաջ քաշելու, այն հիմնավորելու և այդ ոգով թուրք ժողովրդի խավար, մոլեռանդ խավերին սնելու ու համոզելու գործին:

Փորձելով պատասխանել այն հարցին, թե թուրքական կառավարությունը ե՞րբ որոշեց և ինչի՞ց դրդված ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի

[1] Զ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ.: Երևան, 1965, 1967:

[2] Дж. С. Киракосян. Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971.

զանգվածային տեղահանություններին ու ջարդին, Զ. Կիրակոսյանը համոզմունք է հայտնում, որ հայ ժողովրդի բնաջնջման թուրքական ծրագիրը խարսխված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կիրառված ջարդարարական քաղաքականության վրա, օրգանապես բխում էր նրանից, իսկ պատերազմն այն պատեհ առիթն էր, որ պետք է սատարեր թուրքական կառավարողներին ժողովրդասպան պլանն իրականացնելու և, միաժամանակ, այն պատերազմական իրավիճակով պատճառաբանելու համար:

Բազմաթիվ աղբյուրների, այդ թվում նաև թուրքական, վերլուծության հիման վրա Զ. Կիրակոսյանը եզրակացնում է, որ արևմտահայ ժողովրդի զանգվածային կոտորածի պլաններ թուրքական կառավարողները ծրագրել էին Բալկանյան պատերազմից անմիջապես հետո, բայց վախենալով տերությունների միջամտության վտանգից, նրանք այդ պլանը չգործադրեցին, իսկ պատերազմը լայն հնարավորություններ ընձեռեց[1]:

Նա հետաքրքիր մանրամասներ է հաղորդում 1915-ի ապրիլի 24-ին պոլսահայ մտավորականության ձերբակալության, աքսորի և բնաջնջման մասին, հաշվելով շուրջ 800 հոգի:

Խոսելով 1915-ի հունիսի 2-ին (15-ին) դատական խեղկատակությունից հետո Կ. Պոլսի սուլթան Բայազիդի հրապարակում կախաղան հանված հինչակյան 20 գործիչների մասին՝ Փարամազ, Մուրադ Զաքարյան, Հակոբ Բաամաջյան, Հրանտ Եկավյան, Երեմիա Մանանյան, Թովմաս Թովմասյան, դոկտոր Պեննե՝ արաբագետ Պետրոս Թորոսյան, Երվանդ Թոփուզյան, Գեղամ Վանիկյան (Վանիկ), Արամ Աչըգպաշյան և ուրիշներ (ի դեպ Փարամազին նա սխալմամբ անվանում է Սարգիս Մաթևոսյան, մինչդեռ պիտի լինի Մաթևոս Սարգսյան— Մ. Կ), Զ. Կիրակոսյանը իրավամբ գտնում է, որ դրանք այն մարդկանցից էին, որոնք անձնուրացությամբ նվիրվել էին իրենց հայրենիքի ազատության գործին, պատմականորեն առաջադիմական ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչներ էին և արտահայտում էին Թուրքիայի հասարակական կյանքի և քաղաքական մտքի զարգացման ամենաբարձր աստիճանը[2]:

Զ. Կիրակոսյանն իրավացի դիտողություն է անում, որ ավանդույթի ուժով պատմագրության մեջ հիշատակվում է 1915 թ. եղեռնը և աչքա-

[1] Նշվ. աշխ., էջ 234:

[2] Նշվ. աշխ., էջ 258:

թող է արվում այն փաստը, որ սարսափելի կոտորածները և հանցագործությունները նոր թափով շարունակվեցին 1916 թվականին, թեև այդ ժամանակ արդեն չկային ո՛չ տեղահանության անհրաժեշտություն և ո՛չ էլ ըմբոստություններ: Խոսքը Միջագետքի և Սիրիայի անապատները քշված հարյուր հազարավոր հայ տարագիրների զանգվածային ջարդերի մասին է: Հիրավի, սփյուռքահայ պատմագրության մեջ նույնիսկ գոյություն ունի այն կարծիքը, թե բուն կոտորածը առավել լայն մասշտաբով տեղի է ունեցել ոչ թե 1915, այլ 1916-ին:

Ջ. Կիրակոսյանը նշում է, որ համաշխարհային պատմության մեջ 1915 թվականի Մեծ եղեռնը կարելի է համեմատել միայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստների կողմից կազմակերպված վեց միլիոն հրեաների ոչնչացման, Մայդանեկի, Օսվենցիմի, Մաութհաուզենի և մահվան այլ ճամբարներում կատարված ավելի մեծ մասշտաբի մասսայական մարդասպանությունների հետ: Նա մեջ է բերում պատմաբան Ջոզեֆ Գոլդմանի եզրակացությունը, որն իր ուսումնասիրության մեջ գրում է, թե նոր ժամանակներում զանգվածային ժողովրդասպանության պրակտիկան իր սկիզբն առնում է առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի արևմտյան հատվածի գենոցիդից[1]:

Ընդհանրացնելով վիճակագրական տվյալները, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ բնաջնջվեց հայ ժողովրդի արևմտյան հատվածի կեսից ավելին, որ հայ ժողովուրդը ոչ միայն համեմատական տեսակետից, այլև բացարձակ թվով շատ ավելի մեծ կորուստներ ունեցավ պատերազմի ժամանակ, քան մեծ տերությունների բանակները:

Ջ. Կիրակոսյանը անարգանքի սյունին է գամում միջազգային իմպերիալիզմը, որն ըստ էության քաջալերեց պանթուրքիզմի պարագլուխներին, որպեսզի նրանք իրենց մարդատյաց գաղափարները կիրառեին հայ ժողովրդի նկատմամբ:

***

Եղեռնի պատմության ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել պրոֆ. Մ. Վ. Արզումանյանը[2]: Առաջ քաշելով հայերի բնաջնջման թուրք-գերմանական ծրագիրն ու նրա մշակման ու իրականացման շարժառիթ-«պատճառները» նա գրում է. «Երիտթուրքերի հայաջինջ քաղաքակա-

[1] Նշվ. աշխ., էջ 349:

[2] Մ. Վ. Արզումանյան: Հայաստան 1914—1917: Երևան, 1969:

նությունը պատահական երևույթ չէր, այլ բռնակալական Թուրքիայի մշտապես իրականացվող հայասպան գծի անմիջական շարունակությունը՝ բարձրացրած գերադրական աստիճանի»[1]: Այնուհետև հեղինակը կանգ է առնում ջարդարարական հատուկ մեքենայի՝ «Թեշքիլաթը մախսուսեի» ստեղծման, թուրքական սեֆերբերլիքի (զորահավաք) սարսափների ու հայ զինվորականության ոչնչացման, արևմտահայ մտավորականության խողխողման, հայ եկեղեցական գործիչների ոչնչացման հարցերի վրա:

Փորձելով որոշել հայ ժողովրդի տված զոհերի թիվը և շրջանառության մեջ դնելով տարբեր աղբյուրների հաղորդած տվյալներ, Մ. Արզումանյանը ընդունելի է համարում 1,5 միլիոնը, իսկ ավելի ճիշտ՝ սփյուռքահայ հեղինակ Երվանդ Խաթանասյանի որոշած վերջին թիվը՝ 1 763 000:

Դնելով մեծ ոճրի հանցավորների հարցը, Մ. Արզումանյանը գրում է, որ հայոց եղեռնի ամենագլխավոր հանցավորը թուրքական բռնակալությունն էր: Նա մերկացնում է թուրքական «Սպիտակ գրքի» կեղծագիր հեղինակներին (Թալեաթ և ուրիշներ), որոնք դեռևս 1916-ին թուրքերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակեցին «Հայկական կոմիտեների ապստամբական շարժումները սահմանադրության հայտարարությունից առաջ և հետո» փաստաթղթերի ժողովածուն, որտեղ փորձ է արվում կոտորածների հանցանքը բարդել հայերի վրա[2]: Նա ժխտում է նաև թուրքական բանակից հայերի դասալքումների վարկածը, փաստական տվյալներով ապացուցում, որ դասալքությունը ավելի մասսայական էր հենց թուրք զինվորների մեջ:

Մ. Արզումանյանը հատուկ էջեր է նվիրում նաև թուրք «պատմաբան» կեղծարարների մերկացմանը:

Մ. Արզումանյանը որոշակիորեն դնում է նաև թուրք ժողովրդի մեղավորության հարցը և այդ առթիվ գրում. «Կարեկցանքի ու օգնության առանձին դեպքերը եղանակ չստեղծեցին, և մեծ ոճիրը կազմակերպվեց հետամնաց ու մոլեռանդ թուրք ժողովրդի, ինչպես նաև մնացած մուսուլմանների (չերքեզների, քրդերի, մյուսների) մասնակցությամբ: Երբ որևէ ժողովուրդ հանդուրժում է ռեակցիոն կառավարությանը, թեկուզ խաբվում է նրա կողմից, և այս կամ այն չափով կատարում նրա կամքը, դրանով իսկ նա դառնում է չարիքի մեղսակից,

[1] Նշվ. աշխ., էջ 295:

[2] Նշվ. աշխ., էջ 497:

որը քավելու միակ միջոցը այդ կառավարության տապալումն է, վճռի հատուցումը, արդարության վերականգնումը...

Թուրք ժողովուրդը պետք է իր մեղքը հատուցի նրանով, որ դատապարտի հայկական կոտորածները, պատժի նրա հանցավորներին և ուղղի պատմական անարդարությունը: Դա է պահանջում ճշմարտությունը, մարդկային խիղճն ու բանականությունը, ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը»[1]:

Հայկական եղեռնի երկրորդ գլխավոր հանցավոր և պատասխանատու Մ. Արզումանյանը ճանաչում է իմպերիալիստական Գերմանիային, որը, ելնելով իր ագրեսիվ նպատակներից, հովանավորում ու աջակցում էր Թուրքիային:

Նա գտնում է, որ արևմտահայության բնաջնջման մեջ հանցավոր են նաև մյուս երկրների իմպերիալիստները և հատկապես դիվային ու նենգամիտ Անգլիան:

Մ. Արզումանյանը հայկական կոտորածների հարցում հանցավոր է ճանաչում նաև ռուսական ցարիզմին: Նա գտնում է, որ Կովկասյան բանակի հատկապես երկու մեծ հրամանջները իրենց հետ բերեցին արևմտահայության նորանոր կոտորածներ, մինչդեռ ռուսական ցարիզմը, որը Թուրքիայի դեմ պատերազմի մեջ էր մտել աղմուկով և հատկապես հայերի ազատագրման դրոշով, եթե հայերին օգնելու ցանկություն ունենար, ապա նա Կովկասյան ռազմաճակատում կվարեր սրընթաց պատերազմական գործողություններ և կարճ ժամանակամիջոցում կգրավեր Արևմտյան Հայաստանը: Տեսակետ է սա, որի հետ, մեր կարծիքով, չի կարելի անվերապահորեն համաձայնել:

Մ. Արզումանյանը պարզաբանում է հայ ժողովրդի ազգային ղեկավարների պատասխանատվության հարցը, գտնում, որ դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները, հոգևորականությունը և այլն, դարձան խաղալիք ու գործիք իմպերիալիստական պետությունների ձեռքին և վարեցին ավանտյուրիստական քաղաքականություն, որն իր հերթին ծանրացրեց հայ ժողովրդի ողբերգությունը[2]:

Մենք, իհարկե, համամիտ չենք նման հախուռն գնահատականին և գտնում ենք, որ այդպիսի հիմնազուրկ հայտարարությունը միայն ու միայն ջուր է լցնում պատմության ամեն գույնի կեղծարարների ջրաղացին:

[1] Նշվ. աշխ., էջ 514—515:
[2] Նշվ. աշխ., էջ 546:

Դնելով առաջին համաշխարհային պատերազմի և հայկական կոտորածների հանցավորների պատասխանատվության հարցը, Մ. Արզումանյանը ընդգծում է դրա ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական ու գործնական այժմեական նշանակությունը:

Նա ջերմ համակրանքով է շարադրում հայ հայրենասերներ Սողոմոն Թեհլերյանի, Արշավիր Շիրակյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի, Ստեփան Ծաղիկյանի, Արամ Երկանյանի, Միսակ Թորլաքյանի կողմից հայակերներ Թալեաթին, Բեհաէդդին Շաքիրին, Ջեմալ Ազմին, Ջեմալ փաշային, Խան-Խոյսկուն, Բեհբուդ խան Ջիվանշիրին ահաբեկչության ենթարկելու դրվագները, իրավամբ գտնելով, որ դրանք սովորական ահաբեկչական ակտեր չէին, այլ քաղաքական սպանություններ, հանցագործների պատժման այն ժամանակվա պայմաններում միակ հնարավոր ձևը, և պատահական չէ, որ առաջադեմ հասարակական կարծիքն արդարացնում էր դրանք[1]: Նա գտնում է, որ հայկական եղեռնի ու նրա հանցավորների պատասխանատվության ու պատժի, պատմական անարդարությունն ուղղելու հարցը սոսկ չի վերաբերում միայն հայ ժողովրդին, այն միաժամանակ պետք է լինի ամբողջ առաջադեմ մարդկության հոգածության առարկան, նրա իմաստության, խղճի ու պատվի գործը:

Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանությանը իր մենագրության մեջ առանձին բաժին է հատկացրել պրոֆ. Ս. Ս. Ստեփանյանը[2]: Ճիշտ է, շարադրանքն այստեղ կրում է ակնարկային բնույթ և, ինչպես նշում է հեղինակը, տրված է հարցի շուրջ գոյություն ունեցող հատուկ ուսումնասիրությունների հիման վրա, սակայն գնահատելին այն է, որ օգտագործված են նաև գերմանական աղբյուրներից քաղված նյութեր, որոնք լրացնում են Եղեռնի պատմությունը:

Մեծ եղեռնին իր մենագրության մեջ ծավալուն գլուխ է նվիրել ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը[3]: Նա նույնպես եղեռնի պատկերները վերաշարադրում է արդեն իսկ շրջանառության մեջ գտնվող փաստերի և նյութերի հիման վրա, այդ ոճրագործության համար դատապարտում երիտթուրքերի հանցավոր կառավարությանը, գերմանական իմպերիալիզմը, նշում Անտանտի պետությունների թողտվությունը, անդրադառ-

[1] Նշվ. աշխ., էջ 632—633:
[2] Ст. Степанян, Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.
[3] Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

նում համաշխարհային առաջադեմ հասարակայնության կողմից չարագործների դատապարտման հարցին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանության պատմությունը պատշաճորեն ներկայացված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 6-րդ հատորում[1]:

Հատորի 14-րդ գլխում («Արևմտյան Հայաստանը 1908—1914 թվականներին») պրոֆ. Ա. Համբարյանը անդրադարձել է երիտթուրքերի կառավարման նախապատերազմյան տարիների իրադարձություններին, իսկ 15-րդ գլխում («Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին») պրոֆ. Ե. Սարգսյանը շարադրել է Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների, պատերազմին հայերի մասնակցության և կամավորական շարժման, արևմտահայերի զանգվածային ջարդերի ու տեղահանության, ինքնապաշտպանական մարտերի պատմության հարցերը:

Եղեռնի հարցերը իր մենագրության մեջ քննարկել է ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը[2]: Նա գրում է, որ ո՛չ ժամանակները, ո՛չ էլ թուրքական դիվանագիտական խոհանոցներում թխված կեղծ փաստարկները չեն կարող վերացնել երիտթուրքերի պատասխանատվությունը պատմության առաջ՝ նրանց կատարած ոճրագործությունների համար: «Թուրքական քարբարոսները,— շարունակում է հեղինակը,— պատասխանատվություն են կրում Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս տարածքներում բնակված ավելի քան 2 և կես միլիոն հայերի ճակատագրի համար, ոչ միայն Մեծ եղեռնի զոհերի, այլև ամբողջ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին տասնամյակներում հայկական Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանում պարբերաբար ձեռնարկած հայերի կոտորածների համար: Եթե չլիներ ցեղասպանությունը, ապա մարդկության բնական աճի միջին ամենանվազ հաշվարկներով այժմ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թիվը կկազմեր առնվազն 5 միլիոն»[3]:

Նշելով, որ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի անպատիժ մնալը հետագայում խրախուսանքի աղբյուր հանդիսացավ Հիտլերին՝ համաշխարհային քաղաքակրթության դեմ առավել մեծ ու մասսայական ոճրագործությունը իրագործելու համար, Գ. Գալոյանը հռետորական հարց է տալիս՝ արդյո՞ք այդ նույն աղբյուրից չեն սնվում ժամանակակից ռասիստներն ու սիոնիստները:

Ընդդիմանալով թուրքական ռեակցիոն պատմագրությանը, որն փորձում է հայերի ցեղասպանության հանցավոր քաղաքականությունն արդարացնել կամավորական ջոկատներին հայերի մասնակցության վկայակոչումով, Գ. Գալոյանը դա համարում է հասարակական կարծիքն ապակողմնորոշող թափանցիկ կեղծիք և ավելացնում, որ կամավորական շարժումը վշտի ու տառապանքների դատապարտված ժողովրդի ցասման հուսահատ արտահայտությունն է եղել միայն:

Ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը հեղինակ է նաև Թեոդիկի «Հուշարձան նահատակ մտավորականության» բարձրարժեք աշխատության վերահրատարակության ընդարձակ առաջաբանի[1]:

Պատմական հակիրճ ակնարկով ներկայացնելով Հայկական հարցի զարգացման, հայ ազատագրական շարժման և արևմտահայության սիստեմատիկ բնաջնջման քաղաքականության իրականացման գլխավոր փուլերը, Գ. Գալոյանը արգահատանքի խոսք է ուղղում թուրքական հակահայկական գաղափարախոսության արդի ջատագովներին, ովքեր փորձում են ոչ միայն արդարացնել երիտթուրքերի ոճրագործությունները, այլև ինքնապաշտպանական հերոսամարտերում նահատակվածներին ներկայացնել իբրև «մեր դարի գենոցիդի նախաձեռնողների»: Նա անարգանքի սլաքին է գամում ներկայումս Թուրքիայում բնակվող այն հերձվածող հայերին, որոնք իրենց «վկայություններով» փորձում են հայերի ցեղասպանությունը ներկայացնել որպես անհրաժեշտությամբ թելադրված տեղահանման պլան, որն իրագործվել է «հումանիտարական սիրալիրությամբ»[2]:

1982—1983 թթ. լույս տեսավ պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի երկհատոր մենագրությունը[3]:

Փաստերի, վկայությունների, վավերագրերի հիման վրա գիտնականը հանգում է այն եզրակացության, որ մահմեդական մոլեռանդությունը չէր հայոց կոտորածի գլխավոր շարժիչը, այլ նախաձեռնությունը բխում էր Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունից, որը պլանավորել էր Օսմանյան կայսրությունում հայոց ազգի սիստեմատիկ ոչնչացումը:

---

1 Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատարակություն, հ. 6, Երևան, 1931:

2 Գ. Ա. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982:

3 Նշվ. աշխ., էջ 184:

1 Թեոդիկ: Հուշարձան նահատակ մտավորականության, Երևան, 1990:

2 Նշվ. աշխ., էջ 14—15:

3 Զ.Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք առաջին, Երևան, 1982: Գիրք երկրորդ, Երևան, 1983:

Հեղինակը մանրամասնորեն նկարագրում է 1919-ին Ստամբուլի դատավարությունը երիտթուրքերի կուսակցության 63 ղեկավար անդամների նկատմամբ, որը տեղի էր ունենում Անգլիայի օկուպացիոն զորքերի հսկողության տակ: Երիտթուրք ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք. Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը: Հեղինակը ընդգծում է, որ սա արդեն պաշտոնական ճանաչումն էր հրեշավոր ոճրագործության, որ կատարել էին երիտթուրքական պետական մարմինները[1]: Ընդգծվում է նաև, որ երիտթուրքական կառավարության անկումից հետո թուրքական պետական իշխանությունները իրենք են ընդունել հայոց նկատմամբ կատարված գնդոցիդը, իրենք են դատել ու դատապարտել նրանց անմարդկային գործողությունները, չնայած դատական պրոցեսը չի եղել կատարյալ, երիտթուրքերի նկատմամբ չի իրականացվել հետևողական հետապնդումների ու պատժի քաղաքականություն, և մի փոքր անց նրանք հավալրելու էին ազգայնական բանակի շարքերը:

Եղեռնի որոշ հարցեր քննարկված են Հ. Գ. Ինճիկյանի մենագրության մեջ[2]: Քննարկելով Օսմանյան կայսրության անկման բազմազան պատճառներ, նա ընդգծում է, որ Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքի և նրա հետագա զարգացման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ կայսրության ամբողջ տարածքում պատերազմի տարիներին և դրանից հետո կազմակերպված քրիստոնյաների և հատկապես հայ ժողովրդի ցեղասպանությունը: Բաղդատելով վերջին շրջանում հրապարակված մի շարք փաստաթղթերի հաղորդած բազմազան տվյալներ, հեղինակը գտնում է, որ եղեռնի տարիներին բնավ էլ ոչ լրիվ տվյալներով թալանի և ոչնչացման ենթարկվեց 63 քաղաքների ու 2500 գյուղերի հայ և քրիստոնյա ազգաբնակչությունը, կողոպտվեցին և քանդվեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Նա գտնում է, որ երիտթուրքերի կազմակերպած սպանդի զոհ դարձան շուրջ 2 միլիոն հայեր, իսկ հայ ժողովրդին հասցված նյութական վնասը կազմեց մոտ 20 միլիարդ ֆրանկ:

***

Հայոց ցեղասպանության հարակից հարցերին՝ երիտթուրքերի ազգային քաղաքականությանը, 1908-ի երիտթուրքական հեղափոխության

[1] Նշվ. աշխ., Գիրք երկրորդ, էջ 176:

[2] Հ. Գ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:

նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների, լիբերալ շրջանների և դեմոկրատական մտավորականության դիրքորոշմանը, պրոֆ. Ա. Համբարյանը հանգամանորեն անդրադարձել է 1979-ին հրատարակված մենագրության մեջ[1]:

Նա ցույց է տվել, որ չնայած սահմանադրության հռչակումից անմիջապես հետո երիտթուրքերը մեղմեցին հակահայկական քաղաքականությունը, անցկացրին որոշ բարելավումներ, բանտերից ազատեցին բազմաթիվ կալանավորներ, կազմակերպվեց մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացում, դադարեցրին հայդուկների հետապնդումը, կրոնական հալածանքները, վերսկսեց գործել արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, սակայն շուտով «հեղեղն անցավ, և ջուրը նորից իր հունով գնաց»[2]: Շատ չանցած վերսկսվեցին սպանությունները, թալանն ու առևանգումները, որոնք հատկապես ուժեղացան 1913 թ. իթթիլաֆիստների տապալումից հետո:

Ինչպես նշում է Ա. Համբարյանը, երիտթուրքերը լսել անգամ չուզեցին հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման կամ ինքնավարության մասին, պահպանեցին հին պետական մեքենան և հովանավորեցին համիդյան ոճրագործ պաշտոնյաներին:

Հեղինակը պարզաբանում է 1909 թ. Ադանայի կոտորածի հանգամանքները՝ այդ չարագործությունը իրավամբ վերագրելով երիտթուրքերին:

Նա խոսում է նաև հայ մշակույթի դեմ ուղղված հալածանքների մասին, բացահայտում է 1908—1913 թթ. արևմտահայերի մատակարարման արտագաղթի պատճառները:

Ա. Համբարյանը մանրամասնորեն քննարկում է Դաշնակցության, Հնչակյան և Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունների դիրքորոշումները, ցույց տալիս, որ սկզբնական շրջանում նրանք թոլորն էլ ընդունեցին երիտթուրքերի հետ համագործակցելու և խաղաղ զարգացման դիրքորոշում:

1990-ին լույս տեսավ պրոֆեսոր Ա. Ս. Համբարյանի ծավալուն մենագրությունը[3], որտեղ հեղինակը հանգամանորեն շարադրում է առա-

[1] Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:

[2] Նշվ. աշխ., էջ 20—24:

[3] Ա. Ս. Համբարյան: Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (19-րդ դարի վերջ—20-րդ դարի սկիզբ), Երևան, 1990:

ջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ հասարակական-քաղաքական տարբեր շրջանների դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի հարցում: Այն գրված է 1985-ին:

Նշվում է, որ արևմտահայ շրջանները, գտնվելով թուրքական բռնապետության ճիրաններում, հարկադրված էին կանգնել օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում: 1914-ի հուլիս-օգոստոս ամիսներին Թիֆլիս մեկնեց Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի պատվիրակ դոկտոր Նազարեթ Տաղավարյանը (ապրիլյան զոհերից— Մ. Կ.), որ տեսակցություններ ունեցավ արևելահայ մտավորական շրջանների հետ, խնդրելով, որ մեծ զգուշությամբ շարժվեն, որովհետև նրանց թուրքահայ եղբայրների կյանքը կարող է վտանգվել անխորհուրդ ձեռնարկներով ու ավելորդ ցույցերով: Սակայն մեկ ամիս անց պատրիարքի պատվիրակը Պոլիս վերադարձավ բոլորովին հուսահատ, քանի որ նրա հորդորները ոչ մի ազդեցություն չէին գործել:

Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, պատրիարքը հրավիրեց խորհրդակցություն, որին մասնակցում էին Վահրամ արք. Մանկուճին, Հմայյակ արք. Դիմաքսյանը, Պետրոս Հալաճյանը (իթթիհատի կենտկոմի անդամ— Մ. Կ.), Գրիգոր Զոհրապը, Բյուզանդ Քեչյանը, Համբարձում Պոյաջյանը, Վարդգես Սերենկյուլյանը, Տիրան Քելեկյանը, Հարություն Շահրիկյանը, Դավիթ Տեր-Մովսիսյանը, Միհրան Մուրադյանը և ուրիշներ: Այդ տարբեր հոսանքների ու կուսակցությունների ներկայացուցիչներն արձանագրեցին, որ ազգի վիճակը ծանր է և հանձնարարեցին պատրիարքարանին ու ազգային վարչությանը՝ բարվոք հարաբերություններ մշակել իթթիհատական կառավարության հետ, շրջաբերական հրահանգ ուղարկել բոլոր գավառները և ժողովրդին հորդորել կատարելու իր պարտականությունները օսմանյան հայրենիքի հանդեպ, որը և կատարվեց[1]:

Նոյեմբերի 8-ին պատրիարքն այցելեց ներքին գործերի և արդարադատության նախարարներին և հայտնեց, որ հայ ազգը նվիրված է օսմանյան հայրենիքին, իսկ վերջիններս խոստացան, որ իրենք կատարյալ բարյացակամ կլինեն հայերի հանդեպ:

Այնուհետև հեղինակը գրում է, որ, չնայած այդ ամենին, 1914 թ. վերջերին և 1915-ի սկզբներին թուրքական իշխանությունները սրի քաշեցին Վասպուրականի ու Էրզրումի մի շարք գավառների հայերին: Այդ առթիվ Թալեաթը պատրիարքին պատասխանեց, թե հայերի կոտորածի

[1] Նշվ. աշխ., էջ 428:

մասին խոսք անգամ լինել չի կարող, և իրենք այդպիսի մտադրություն չունեն:

Արևմտահայ լիբերալները ևս «Բյուզանդիոն» թերթի բերանով արտահայտում էին իրենց դիրքորոշումը, կոչ անելով հայերին՝ կատարել իրենց պարտքը և պաշտպան կանգնել ծանր կացության մեջ հայտնված օսմանյան հայրենիքին:

Արևմտահայ անկուսակցական դեմոկրատիայի ներկայացուցիչ Գրիգոր Զոհրապը, հավատարիմ մնալով իր ռուսական կողմնորոշմանը, սակայն հաշվի առնելով արևմտահայության բացառիկ ծանր կացությունը, լոյալություն պահպանեց օսմանյան հայրենիքի պաշտպանությունը քարոզող ուժերի հետ և արևմտահայությանը ընդդեմ Թուրքիայի զենք վերցնելու կոչ չարեց[1]:

Դեռևս 1914-ի գարնանը իթթիհատականները գործակալներ ուղարկեցին Անդրկովկաս՝ պատերազմի դեպքում տեղի ժողովուրդներին Ռուսաստանի դեմ ապստամբեցնելու նպատակով, սակայն կտրական մերժում ստացան: Նույն առաջարկությամբ նրանք դիմեցին նաև դաշնակցությանը, սակայն 1914-ի հուլիսին Էրզրումում կայացած 8-րդ համաժողովում դաշնակցությունը որոշում ընդունեց ռուս-թուրքական պատերազմի դեպքում պահպանել չեզոքություն: Էրզրում ժամանած Բեհաէդդին Շաքիրը խոստացավ հայերին՝ օգնության դեպքում ստեղծել ինքնավար Հայաստան՝ կազմված Երևանի, Կարսի նահանգներից, Եղիզավետպոլի նահանգի արևմտյան մասից, միացնելով նրան Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները, սակայն այդ կեղծ խոստումները ազդեցություն չունեցան: Հայերը պատասխանեցին, որ իրենք թե՛ Թուրքիայում, թե՛ Ռուսաստանում կլինեն օրինապահ իրենց պետություններին հանդեպ, միաժամանակ ավելացրին, որ Թուրքիայի պատերազմը Ռուսաստանի դեմ կլինի բախտախնդրություն, որը ապառնալիքի տակ կդնի Օսմանյան կայսրության գոյությունը: Դաշնակցության Արևելյան բյուրոն հետագայում խափանեց կուսակցության համաժողովի սույն որոշումը և սկսեց կամավորներ հավաքագրել Թուրքիայի դեմ, իսկ Արևմտյան բյուրոն հավատարիմ մնաց այդ որոշմանը՝ մինչև ցեղասպանության սկսվելը:

Երիտթուրքերը հնչակյաններին հալածանքների ենթարկեցին դեռ պատերազմից առաջ՝ մեղադրելով նրանց իթթիլաֆիստների հետ հակաիթթիհատական կոալիցիայի մեջ մտնելու համար, իսկ 1915 թ. հունիսի

[1] Նշվ. աշխ., էջ 431:

15-ին 20 հնչակյան ղեկավար գործիչներ (Փարամազ և ուրիշներ) Պոլսի սուլթան Բայազիդի հրապարակում կախաղան հանվեցին[1]:

Հայ սահմանադրական ուժկավարների կուսակցությունը պատերազմի սկզբում նույնպես կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և իր օրգան «Վան-Տոսպի» միջոցով կոչ արեց հայերին՝ կատարել իրենց զինվորական պարտքը: Պատերազմի սկզբում ուժկավարները դեմ էին նաև կամավորական շարժմանը: Նրանց նշանավոր դեմքերից մեկը՝ Արտակ Դարբինյանը գտնում էր, որ կամավորական շարժումը պիտի բորբոքի թուրքերի մինչ այժմ զսպված բարբարոսական կիրքը, և այս անգամ թուրքահայությունը անխնայորեն պիտի ջարդվի ամեն տեղ, մանավանդ որ ինքնապաշտպանության միջոցներից բոլորովին զուրկ է: Նրանք ևս իրենց դիրքը փոխեցին եղեռնը սկսվելուց հետո:

«Այսպիսով,— եզրակացնում է պրոֆ. Ա. Համբարյանը,— Թուրքիայում գործող բոլոր հայ հասարակական-քաղաքական ուժերը կանգնեցին օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում, և որևէ մեկը հանդես չեկավ (թուրքական բռնապետական պայմաններում չէր էլ կարող հանդես գալ) հակահեթեթիստական, ապստամբական կոչերով կամ գործողություններով: Ընդհակառակը՝ նրանք հայերից պահանջում էին կատարել իրենց հայրենասիրական պարտքը և առիթ չտալ խժդժությունների: Միայն այն ժամանակ նրանք դիմագրավեցին և կանգնեցին ինքնապաշտպանության ավանգարդում, երբ իթթիհատական իշխանությունները ձեռնարկեցին հայոց ցեղասպանությունը: Ուստի հիմնազուրկ են անցյալի ու ժամանակակից պատմության այն թուրք կեղծարարները և պետական ու հասարակական գործիչները, որոնք փորձում են երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը կամ հայերի տեղահանությունը բացատրել, իբր թե նրանց ապստամբություններով և թուրքական թիկունքում սպառնալից դրության ստեղծումով»[2]:

Այնուհետև Ա. Համբարյանն անցնում է արևելահայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշման ներկայացմանը, որը, սակայն, բոլորովին այլ էր: Նախ նա վկայակոչում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի 1914 թ. օգոստոսի 5-ի նամակը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որտեղ կաթողիկոսը գրում էր, որ եթե Ռուսաստանը թողացնի իր ուշադրությունը արևմտահայության հանդեպ, ապա այն

[1] Նշվ. աշխ., էջ 434:
[2] Նշվ. աշխ., էջ 436:

կենթարկվի ահավոր աղետների: Նա առաջարկում էր Անատոլիայի հայկական նահանգներից կազմել մեկ անբաժան մարզ, նրան ղեկավար նշանակել մի քրիստոնյայի:

1914-ի նոյեմբերի 8-ին, երբ արդեն բացվել էր Կովկասյան ռազմաճակատը, Գևորգ 5-րդը նորից դիմեց փոխարքային, խնդրելով, որ ցարը հայտարարի, թե Ռուսաստանի կողմից արևմտահայերին տրվում է ինքնավարություն, որն իր մեջ կընդգրկի վեց վիլայեթները (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի, Խարբերդի) ու Կիլիկիան և այդպիսով ավարտի իր պատմական առաքելությունը[1]:

Հեղինակի կարծիքով նույն դիրքերում կանգնեցին նաև արևելահայ լիբերալները, որոնք համախմբված էին «Մշակի» շուրջը: Նրանց պատկերացմամբ Արևմտյան Հայաստանի հարցը կարելի էր լուծել երկու եղանակով. այն կամ պարզապես կցվելու է Ռուսաստանին, կամ նրան տրվելու է ինքնավարություն՝ Ռուսաստանի հովանու տակ՝ Կիլիկիայով հանդերձ: Նախընտրելին, իհարկե, երկրորդ տարբերակն էր:

Հեղինակն ընդգծում է, որ հայ մեծահարուստները՝ Ա. Ղուկասով, Ա. Խատիսով, Ա. Խաչատուրով և ուրիշներ, գործուն դեր էին խաղում, կազմակերպում էին ցարական բանակի հանդերձավորման ու պարենավորման գործը, նպաստում զորակոչին և այլն: Նշվում է նաև, որ ցարական կառավարությունը պարզապես խաբում էր կովկասահայ բուրժուազիային և օգտագործում նրան իր նվաճողական քաղաքականության համար:

Նա պարզաբանում է նաև արտասահմանի հայ բուրժուական մտավորականության դիրքորոշումը, նշում, որ այն համընկնում էր կովկասահայ լիբերալ-բուրժուական գաղափարախոսությանը: Մ. Փորթուգալյանը հանդես էր գալիս արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման պահանջով, գտնում էր, որ նյութական օգնությունից բացի, արտասահմանի հայերը նույնպես պետք է կամավորներ տրամադրեն Թուրքիայի դեմ պատերազմող երկրների բանակներին:

Նույնպիսի դիրքերից հանդես եկավ նաև Արշակ Չոպանյանը, որը կոչ էր անում հայերին՝ ամենուրեք օժանդակել Անտանտի տերություններին, կամավորներ տրամադրել նրանց: Նա գտնում էր, որ եթե նույնիսկ Ռուսաստանը Էրզրումից մինչև Սիս գրավի ու կցի իրեն, դարձյալ հայերի համար շատ լավ է:

Ա. Համբարյանը մեկնաբանում է նաև արևելահայ դեմոկրատ

[1] Նշվ. աշխ., էջ 438:

մտավորականների մոտեցումները, գրում է, որ Հովհ. Թումանյանն ու Վ. Տերյանը հայ ժողովրդի իսկական փրկությունը կապում էին դեմոկրատական Ռուսաստանի հետ[1]:

Առանձին քննարկելով արևելահայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումները, Ա. Համբարյանը գրում է, որ Դաշնակցությունը մեծ հույսեր էր կապում Անտանտի տերությունների հետ, ուստի պատերազմի հենց սկզբում հայտարարեց, որ հրաժարվում է հեղափոխական գործունեությունից և բացառապես զբաղվելու է կամավորական ջոկատների կազմակերպմամբ: Նույնիսկ ցարական կառավարությունը բանտերից ազատեց դաշնակցականներին և նրանց ընդգրկեց կամավորական շարժման մեջ:

Մեր կարծիքով պատմաբանը կամավորական շարժման գնահատման հարցում ցուցաբերում է հիմնականում ճիշտ մոտեցում, գրելով. «Հայկական կամավորական ջոկատները, անշուշտ, օբյեկտիվորեն նպաստում էին ցարիզմի նվաճողական քաղաքականությանը և առիթ էին տալիս երիտթուրքերի հայաջինջ վարքագծի ակտիվացմանը, յուր էին լցնում սրանց կրակին: Բայց, այնուամենայնիվ, այդ ջոկատների ստեղծումն ու կազմակերպումը, ինչպես իրավամբ նշում են պատմաբանները, բխում էր հայ ժողովրդի ազատատենչ ձգտումներից: Համալրելով Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակի շարքերը, հայ կամավորները ցանկանում էին ոչ թե օժանդակել ցարիզմի իմպերիալիստական ձգտումներին, այլ ազատագրել իրենց եղբայրներին թուրքական բիրտ լծից: Նրանք մասնակցեցին մի շարք ճակատամարտերի, գործեցին խիզախություններ և հազարավոր արևմըտահայերի փրկեցին անվերապահ կոտորածներից[2]:

Պարզաբանելով Հնչակյան կուսակցության դիրքորոշումը, Ա. Համբարյանը գրում է, որ նրանք նույնպես արձագանքեցին ցարական իշխանությունների կոչին, ձեռնամուխ եղան հայկական կամավորական խմբերի ստեղծմանը և ռազմաճակատ ուղարկեցին երեք ջոկատ: Ընդորում, Հայկական հարցի լուծում ասելով հնչակյանները հասկանում էին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի միացյալ ինքնավարության հաստատում Թուրքիայի կազմում, իսկ պատերազմից հետո՝ Ռուսաստանի հովանավորության տակ: Այդ կուսակցության տեսակետները շարադրված էին նրա տեսաբան Ս. Սապահ-Գյուլյանի «Ինքնավար Հայաստան» գրքույկում, որը հրատարակվեց Կահիրեում:

Ինչ վերաբերում Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությանը, ապա Ա. Համբարյանը գրում է, որ պատերազմի սկզբում հիմնականում Վան-Վասպուրականում գործող այս կուսակցությունը կանգնած էր օրինապահ քաղաքացիներ լինելու դիրքերում, մերժում էր հակահեղեղիհատական ելույթները, դատապարտում կամավորական շարժումը: Բայց երբ 1915-ի գարնանը կուսակցությունը հարկադրված հաստատվեց Թիֆլիսում, տեսնելով երիտթուրքերի կողմից իրագործվող ցեղասպանությունը, փոխեց իր տեսակետը, կոչ արեց պայքարել հեղեղիհատականների վայրագությունների դեմ, փրկել արևմտահայությանը ոչնչացումից, և Թիֆլիսում հրատարակվող «Վան-Տոսպը» վրեժի էր կոչում ողջ հայությանը:

Պրոֆ. Ա. Համբարյանի արտահայտությամբ ցարիզմի մարտակառքին լծվեցին նաև հայ կադետները, որոնց առաջնորդը 4-րդ Պետական դումայի պատգամավոր Մ. Պապաջանյանն էր: Նրանք նույնպես մեկնում էին ռուսական քաղաքները, հավաքագրում կամավորներ, կազմակերպում հանգանակություններ: Նրանք գտնում էին, որ Հայաստանը կարող է ինքնավարություն ստանալ միայն Ռուսաստանի օգնությամբ:

Շարադրվում են նաև «սպեցիֆիկների» կուսակցության տեսակետները, որոնք արտահայտված էին նրանց ղեկավար Դ. Անանունի «Հայության հավաքումը» հոդվածաշարում, որը հանգում էր «Հայոց հարցի լուծումը պետք է փնտրել Թուրքիայում և ազգային-կուլտուրական ինքնուրույնության միջոցով» մտայնությանը[1]: Նրան համակարծիք էր Բ. Իշխանյանը, որը թե՛ պատերազմից առաջ, թե՛ պատերազմի տարիներին պաշտպանում էր «կուլտուր-ազգային ինքնավարության» անհրագործելի գաղափարը:

Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է նաև բոլշևիկների տեսակետը, նշում, որ նրանց գլխավոր հոգսերից մեկն էլ արևմտահայության փրկության հարցն էր:

Հայերի ցեղասպանության մի շարք հարցեր ուսումնասիրության հատուկ նյութ է դարձրել ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը[1]:

Նա իրավացիորեն նշում է, որ երիտթուրքերի ավազակային բնույթը

[1] Նշվ. աշխ., էջ 445—448:
[2] Նշվ. աշխ., էջ 455—456:

[1] Նշվ. աշխ., էջ 461:
[2] Գ. Բ. Ղարիբջանյան: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Երևան, 1986, էջ 51:

ակնբախ երևաց 1909 թ. գարնանը Ադանայում, Տարսոնում, Մարաշում, Հալեպում և այլուր տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ, որին զոհ դարձան մոտ 30 հազար անմեղ հայեր:

Հեղինակը խոսում է Ադանայի կոտորածներից հետո ծայր առած զանգվածային արտագաղթի մասին, որի հետևանքով արևմտահայերի թիվը 1876 թ. ավելի քան 3 միլիոնից նվազեց և 1912-ին դարձավ 2—2,5 միլիոն:

Համապատասխան փաստերի վկայակոչմամբ նա հետևություն է անում, որ արևմտահայ աշխատավոր ժողովուրդը երիտթուրքերի մեջ տեսնում էր իր նկատմամբ սուլթան Համիդի հայակործան քաղաքականության շարունակողներին և պայքարելով նրանց դեմ՝ ազատագրվելու հույսը կապում էր Ռուսաստանի հետ[1]:

Այնուհետև նշվում է, որ առաջին համաշխարհային սպառնազմի նախօրեին երիտթուրքերի կուսակցությունն ու կառավարությունը, վարելով պանթուրքական քաղաքականություն, ծրագրում և խիստ գաղտնի նախապատրաստում են հայերին ֆիզիկապես ոչնչացնելու իրենց հրեշավոր պլանները:

Գ. Ղարիբջանյանը քննարկման հատուկ առարկա է դարձրել կամավորական շարժումը: Նա գտնում է, որ հայ հայրենասերները Ռուսաստանի հաղթանակի հետ էին կապում թուրքական դարավոր ստրկությունից ազատագրվելու հույսերը, ուստի այդ նպատակով շատ հայ երիտասարդներ Ռուսաստանից և արտասահմանից սկսեցին գալ Թիֆլիս և մտնել կամավորական ջոկատներ: Նա ներկայացնում է Հովհ. Թումանյանի կարծիքը, որը նշում էր, որ հայոց կամավորների խմբերն ու ռուս-հայկական լավ հարաբերությունները դարավոր պատմություն ունեն և կարևոր հույս են ներկա սպառնազմում նաև Ռուսաստանից փրկություն սպասելու համար, իսկ 1915-ի հոկտեմբերին Ալեքսանդր Շիրվանզադեն գրում էր, որ կամավորների հանդես գալը բանակում ինչ-որ քաղաքական խմբերի քմահաճույքի կամ ազգային փառասիրության արդյունք չէր, այլ նա ծնունդ է առել թուրքահայերի դարավոր ատելությունից դեպի Թուրքիան: Նա եղել է և կա որպես խաղաղ և կուլտուրական **ժողովրդի տառապանքներից ծնունդ առած ազատական շարժում**[2]:

Նշվում է, որ շատ ներսիսյանցիներ ևս 1914-ի վերջին որպես կամավորներ մեկնեցին ռազմաճակատ՝ անմիջականորեն մասնակցելու Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: 1914-ի երկրորդ կեսին ստեղծվեցին կամավորական 4 ջոկատներ, ապա 5-րդ, 6-րդ և 7-րդ ջոկատները: Կամավորների ընդհանուր թիվը 1915-ի գարնանը հասավ 6 հազարի, իսկ հետո մինչև 10 հազարի: Այդ ջոկատները կռվում էին ռուսական բանակի մարտակարգերում՝ Սարդասդ-Վան, Խդդիր-Բայազետ-Բերկրի-Վան, Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բիթլիս, Սարիղամիշ-Էրզրում ուղղություններում:

Հատուկ նշվում է, որ 1915 թ. ապրիլ-մայիսին հայկական կամավորական 1-ին ջոկատը՝ բաղկացած 1200 հոգուց, Անդրանիկի հրամանատարությամբ Դիլմանի ճակատամարտում մասնակցեց Խալիլ բեյի 12 հազարանոց կորպուսի ջախջախմանը, անցավ սահմանը և հասավ Վան: Հայ կամավորներն աչքի ընկան Վանի ,Սարիղամիշի, Խոյի, Մուշի, Բիթլիսի, Էրզրումի, Երզնկայի և այլ ճակատամարտերում, թուրքական յաթաղանից ազատեցին տասնյակ հազարավոր արևմտահայերի և ապահովեցին նրանց գաղթը դեպի Կովկաս: Անձնական խիզախության համար նրանցից մոտ հինգ հարյուր հոգի արժանացան Գեորգիևյան խաչերի ու մեդալների: Սակայն ցարիզմին ձեռնտու չէր հայկական զինված ջոկատների երկարատև գոյությունը: 1916 թ. սկզբին ցարական գլխավոր հրամանատարությունը կազմացրեց հայկական կամավորական ջոկատները, և նրանց փոխարեն ստեղծվեցին 6 հայկական հրաձգային գումարտակներ, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան 1916—17 թթ. Արևմտյան Հայաստանում և Իրանական Ադրբեջանում մղված ճակատամարտերին[1]:

Գ. Ղարիբջանյանն անդրադառնում է նաև Կիլիկիայի 1916—1921 թթ. իրադարձություններին, որտեղ հայերի նոր ցեղասպանության զոհ գնացին 30 հազար մարդ:

Նա առանձին ենթաբաժին է հատկացրել աշխարհի առաջադեմ մարդկանց, կազմակերպություններին և կուսակցություններին, որոնք հանդես եկան հայերի ցեղասպանության դեմ: Նշվում է, որ 1915-ի սեպտեմբերին Ցիմմերվալդի սոցիալիստական կոնֆերանսը դատապարտել է դաժան հալածանքները լեհերի, հայերի, հրեաների հանդեպ, երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը դատապարտել են բոլշևիկյան գործիչներ Գ. Օրջոնիկիձեն, Ա. Ջափարիձեն, Վ. Բոնչ-Բրուևիչը, Ս. Կիրովը, Ս. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մյասնիկյանը և

[1] Նշվ. աշխ., էջ 56:
[2] Նշվ. աշխ., էջ 69:

[1] Նշվ. աշխ., էջ 70—71:

ուրիշներ: Հատկապես շեշտադրվում են Վլադիկավկազի «Թերեք» թերթում 1916 թ. փետրվարին լույս տեսած Ս. Կիրովի «Տառապյալ ժողովուրդը», «Գաղթականների մոտ» հոդվածները:

Ընդգծվում է նաև, որ պատերազմի ժամանակ հայ ժողովրդի պաշտպանությամբ հանդես են եկել միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչներ Ռ. Լյուքսեմբուրգը, Կ. Լիբկնեխտը, Դ. Բլագոևը, Վ. Կոլարովը, Գ. Դիմիտրովը, Մ. Կաշենը և ուրիշներ: Ամբողջությամբ մեջ է բերվում 1916 թ. հունվարին գերմանական ռայխստագում պատգամավոր Կ. Լիբկնեխտի հարցապնդումը՝ ուղղված ռայխսկանցլերին, ի պաշտպանություն տարաբախտ արևմտահայության:

Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում Թուրքիայում արևմտահայերի կոտորածների դեմ բողոքի ձայն բարձրացրած Ռուսաստանի ականավոր մտավորականների՝ Մաքսիմ Գորկու, Վալերի Բրյուսովի, Յուրի Վեսելովսկու, Նիկողայոս Մուռի, Մաքսիմ Կովալևսկու, Վ. Գորդլևսկու, Ի. Բունինի, Ա. Կրիմսկու, Ֆ. Սոլոգուբի, Սերգեյ Գորոդեցկու, Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոյի, Վյաչեսլավ Պոլոնսկու և այլոց հայասպաշտպան գործունեության վրա:

Նա առանձնակի ջերմությամբ է խոսում լատիշ մեծ պոետ և հեղափոխական Յան Ռայնիսի մասին, որը 1916-ին լատվիական պարբերական մամուլում հանդես է եկել արևմտահայերի կրքոտ պաշտպանությամբ:

Հեղինակը երախտագիտությամբ է տալիս Ժան Ժորեսի, Անատոլ Ֆրանսի, Ռոմեն Ռոլանի, Էդգար Լոնգեի (Կ. Մարքսի թոռը), Հանրի Բարբյուսի, Անրի Բարբիի, Ֆրիտյոֆ Նանսենի, Ջոն Ռիդի, Էմիլ Վերհարնի, Յոզեֆ Մարկվարտի, Յոհաննես Լեփսիուսի, Ժակ դը Մորգանի, Անտուան Մեյեի, Հ. Գիբբոնսի, Ա. Վեգների, Ջ. Բրայսի, Ա. Թոյնբիի, Գաբրիել Կացարովի, Ֆրեդերիկ Մաքլերի, Հ. Մորգենթաուի, Կորադո Կորադինոյի, Լեոպոլդ Ֆավրի, Ֆայեզ Էլ-Ղոսեյնի, Ռենե Պինոնի, Վալերի Յազվիցկու և շատ ուրիշների անունները, որոնք իրենց գրավոր և բանավոր խոսքն են ասել թուրքական յաթաղանի տակ տառապող ու մարտնչող հայերի մասին[1]: Նա սեղմ բնորոշումներ է տալիս Ջեյմս Բրայսի, Առնոլդ Թոյնբիի, Հերբերտ Ադամս Գիբբոնսի, Ֆ. Նանսենի աշխատություններին, կանգ առնում Ե. Տարլեի «Թուրքիան և հայերը» դասախոսությունների վրա:

Հեղինակը հիշատակում է նաև Լլոյդ Ջորջի, Ուինստոն Չերչիլի ասույթները հայկական եղեռնի մասին:

[1] Նշվ. աշխ., էջ 91:

Գրքում տեղ է հատկացված թուրք պատմաբաններ Ս. Սոնմեզի, Ջ. Կարալի, Կ. Գյուրունի և այլոց հակագիտական հորինվածքների քննադատությանը:

Հիշատակվում է 1984 թ. ապրիլի 13—16-ը Փարիզում տեղի ունեցած ժողովուրդների մշտական դատարանի նստաշրջանը, որը որոշեց, որ 1915-ի Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ տեղի է ունեցել ցեղասպանություն, և երիտթուրքերի կառավարությունը պատասխանատվություն է կրում դրա համար:

1989-ին հրատարակվեց Գ. Բ. Ղարիբջանյանի ռուսերեն աշխատությունը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը համաշխարհային հասարակայնության ցուցաբերած վերաբերմունքին[1]:

Ժամանակակից սփյուռքի առաջացման պատմական արմատների պարզաբանման առնչությամբ արևմտահայության 1915—1916 թթ. ողբերգությանը իր աշխատություններում անդրադարձել է պրոֆ. Հ. Ռի. Մելիքսեթյանը[2],[3]:

Ցուցահանելով երիտթուրքերի վաղօրոք մշակած պլանը արևմտահայերի տեղահանության ու բնաջնջման մասին, հեղինակն այն ներկայացնում է իբրև պետական քաղաքականություն: «Մի կողմ թողնելով հազվադեպ բացառությունները,— գրում է նա,— պետք է ասել, որ թուրք պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը աննկարագրելի ուրախությամբ արձագանքեց հայերի բնաջնջման վերաբերյալ Կ. Պոլսից ստացված գաղտնի հրամանին և ձեռնամուխ եղավ դրա կենսագործմանը[4]:

Ընդգծելով հայ գիտվորության, մտավորականության ոչնչացման փաստը, հեղինակը դրվագ առ դրվագ պատկերում է անպաշտպան մնացած ազգաբնակչության տարագրության գործողությունները, որը գործնականում նշանակում էր նրանց զանգվածային բնաջնջում: Իր միտքը հաստատելու համար հեղինակը վկայակոչում է մի շարք հավաստի տեղեկություններ, որոնցից մեկն էլ այն էր, որ հենց միայն

[1] Гарибджанян Г. Б. Геноцид армян и мировая общественность. Ереван, 1989.

[2] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1914—1940), Երևան, 1975:

[3] Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980 թթ.): Երևան, 1985:

[4] Նշվ. աշխ., էջ 29:

Երզնկայի և նրա շրջակայքի հայերից ավելի քան 80 000 մարդ խեղդամահ է արվել Եփրատը գետանցելիս:

Նշելով, որ իրականում հայ տարագիրների համար որոշակի բնակության վայրեր չէին նախատեսված, Հ. Մելիքսեթյանն այնուհետև գրում է, որ իրենց բնօրրանից բռնությամբ արտաքսված նրանց բեկորները հանգիստ չգտան նաև հեռավոր արաբական անապատներում: Նա ցույց է տալիս, որ անմարդաբնակ անապատներում կուտակված հայությունը 1916 թվականին և հետո ենթարկվեց նոր զարհուրելի եղեռնագործության, որտեղ թուրքերը կազմակերպեցին հայության երեք մեծ ու սոսկալի ջարդեր: Առաջին ջարդը տեղի ունեցավ Ռաս-ուլ-Այնում, որտեղ կոտորվեցին մոտ 70 000 հայեր, երկրորդը՝ Ինթիլիում, ուր սրի քաշվեց 50 000, երրորդը՝ Տեր-Զորում, որտեղ ոչնչացվեց ավելի քան 200 000 մարդ: Տասնյակ հազարավոր հայ տարագիրներ էլ նահատակվեցին Հալեպում, Մեսքենեում, Մարաշում, Շետատեում, Սուվարում և Եփրատի երկայնքով ձգված գաղթական մյուս ճամբարներում:

Հ. Մելիքսեթյանը փորձում է պարզել 1915—1916 թվականներին զոհ գնացած արևմտահայերի մոտավոր թիվը և գոյություն ունեցող տարբեր վիճակագրական տվյալների բաղդատմամբ գալիս է այն եզրակացության, որ այն կազմում է մոտ մեկուկես միլիոն:

***

Արևմտահայության ողբերգական ճակատագրի պատմական արմատները բացահայտելու, գաղափարական-քաղաքական ակունքները պարզաբանելու և առհասարակ հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրման բնագավառում ներդրում ունի ակադեմիկոս Հ. Ռ. Սիմոնյանը: Եղեռնի պատմության բազում հարցեր շոշափված են նրա «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» մենագրության մեջ[1]:

Աշխատության մեջ առանձին գլխով ներկայացված են համիդյան մղձավանջի տարիները: Նշվում է, թե Թուրքիայում հայ ծնվելը դժբախտություն էր, հայ ապրելը՝ հերոսություն, և «ծայրահեղ հուսահատության և ընդհանուր լքումի այս անտանելի մթնոլորտում միակ միսիթարությունը հայ կտրիճ ֆիդային էր, խիզախ հայդուկը՝ ինքնամոռաց ու անսակարկ, որը տուն-տեղ թողած, ընկերացած հրացանին, ապավեն ունենալով հարազատ լեռներն ու անտառները, վախ ու դադար չունենալով կռիվ էր տալիս թուրքական բռնակալության դեմ՝ վրեժի անմար կրակը սրտում»[1]: Ցույց է տրվում, որ աբդուլհամիդյան ջարդարարների կողմից հայերին հարուցված մեղադրանքը կայսրությունից անջատվելու ձգտման մասին՝ հորինվածք էր[2]:

Առանձին գլխում հեղինակը շարադրում է երիտթուրքական հեղափոխության պատմությունը: Հեղինակի կարծիքով անհերքելի, ճակատագրական անհեռատեսություն հանդես բերեց հատկապես Դաշնակցությունը՝ հավատալով երիտթուրքերի կեղծ խոստումներին: Այդ կուսակցությունը պաշտոնապես հանդես եկավ երիտթուրքերի հետ անվերապահ «եղբայրանալու» և ազգային-ազատագրական շարժումից հրաժարվելու պահանջով՝ հայտարարելով, որ Արևմտյան Հայաստանը կազմում է Օսմանյան կայսրության անբաժան մասը:

Հր. Սիմոնյանը գրում է, որ Դաշնակցության ղեկավարներն ու մտավորականները՝ Ակնունի (Խաչատուր Մալումյան), Ատոմ (Հարություն Շահրիկյան), Կոմս (Վահան Փափազյան), Խաժակ (Գարեգին Փաստրմաջյան), Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաջյան), Վարդգես (Սերենկյուլյան) և ուրիշներ, ամենուրեք հորդորում էին դադարեցնել հակաթուրքական պրոպագանդան և թուրքերի հետ միասին լծվել ողջ կայսրության վերելքի գործին: «Նրանք իրենց խանդավառությամբ թմրեցնում էին արևմտահայության զգոնությունը, սառը ջուր լցնում իր հայրենիքը փրկելու նրա ձգտումների վրա»[3],— եզրակացնում է հեղինակը: Եվ երբ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներին հիշեցնում էին ինքնապաշտպանության մասին, նրանք պատասխանում էին. «Սուրի դարն անցավ, աշխատեցեք կրթություն տալ ժողովրդին»: Հեղինակը բերում է մի թուրք պաշտոնյայի խոսքերը՝ ասված ծանոթ մի հայի. «Սուլթանը ֆերմաններ է հրատարակում ձեզ ուրախացնելու համար, և հետո ֆերմանը չի գործադրում մեզ ուրախացնելու համար», որով հասկացնում էր, թե պետք չէ անտեղի ուրախանալ: Հր. Սիմոնյանը նշում է, որ կային նաև չուրախացողներ, դրանք մարտիկ-ֆիդայիներն էին, որոնք կոչ էին անում մտահոգվել ինքնապաշտպանության խնդրով, լրջորեն մտածել զենք և ռազմամթերք ձեռք բերելու մասին: Դրանց թվում էր և Անդրանիկը: Նա մեղադրում է դաշնակցականներին, որոնք երիտթուր-

[1] Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Երևան, 1986:

[1] Նշվ. աշխ., էջ 104:
[2] Նշվ. աշխ., էջ 107:
[3] Նշվ. աշխ., էջ 200—201:

քերի առաջին իսկ պահանջով զենքը հանձնեցին իշխանություններին: «Օգտագործելով դաշնակցության քաղաքական կուրությունը,— այդ առթիվ գրում է Հր. Սիմոնյանը,— իթթիհատականները այնքան «մոտեցան» նրան, որ լիովին իմացան նրա ծրագրերն ու նպատակները, տեղեկացան նրա կառուցվածքին, ղեկավար կենտրոններին, զենքի կուտակման վայրերին, նույնիսկ՝ արխիվներին, իրենց ձեռքը գցեցին կուսակցության տեղական կազմակերպությունների ցուցակները, ճանաչեցին համարյա բոլոր ղեկավարներին»[1]:

Ինչ վերաբերում է քրդերին, ալբանացիներին և մահմեդական մակեդոնացիներին, ապա, ինչպես նշում է հեղինակը, նրանց մտքով նույնիսկ չէր անցնում, թե կարելի է զենքը հանձնել կառավարությանը կամ վաճառել: Մակեդոնական չետնիկական ջոկատները զենքը հանձնեցին ոչ թե թուրքական իշխանություններին, այլ իրենց ազգային կոմիտեներին, որը թելադրված էր ինչպես անցյալի փորձով, այնպես էլ իրենց ղեկավարների քաղաքական հեռատեսությամբ ու հաշվենկատությամբ:

«Թուրքիզմ» և «Պանթուրքիզմ» գլուխներում Հր. Սիմոնյանը բացահայտում է երիտթուրքերի գաղափարական կոնցեպցիաները, որոնցից էլ բխում էին նրանց հետագա գործողությունները: Հեղինակի բնորոշմամբ թուրքիզմը Օսմանյան կայսրությունը ազգային տեսակետից «միատարր» դարձնելու յուրօրինակ ցեղապաշտական մի գաղափար էր, որի հիմնադիրներն էին Զիա Գեոքալփը և Յուսուֆ Աքչուրան, որոնք երկուսն էլ ազգությամբ թուրք չէին:

Թուրքիզմը քարոզում էր ամենից առաջ թուրքացնել Թուրքիան, ստեղծել էթնիկական, ազգային միատարրություն և միասնություն բուն Թուրքիայում, իսկ դա նշանակում էր, որ «բուն Թուրքիայի» մյուս բոլոր ժողովուրդները պետք է արագորեն ուծացվեն, կորցնեն իրենց լեզուն և ազգային հատկանիշները, ձուլվեն թուրքերին: «Բուն Թուրքիայի» միջուկը թուրքականները համարում էին Անատոլիան, որի մեջ մտնում էր Արևմտյան Հայաստանը՝ «Արևմտյան Անատոլիա» անունով: Դա նշանակում էր, որ այդ տարածքում ապրելու իրավունք էին ունենալու միայն ու միայն նրանք, ովքեր խոսելու էին թուրքերեն և դավանելու էին իսլամը:

Բնորոշելով պանթուրքիզմը որպես Թուրքիայի հովանու ներքո բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորմանը ձգտող առավել հետադեմ ցեղապաշտական ուսմունք, որի գլխավոր նպատակը երևակայական Մեծ Թուրանի ստեղծումն էր, Հր. Սիմոնյանը նշում է, որ այն երկու սուր ծայր ուներ: Դրանցից մեկն ուղղված էր Ռուսաստանի դեմ, որի կազմում էր թուրքալեզու ժողովուրդների բացարձակ մեծամասնությունը, մյուսն ուղղված էր հայ ժողովրդի դեմ:

«Նախապատերազմյան սարսափի տարիները» գլխում Հր. Սիմոնյանը տալիս է Հայոց եղեռնին նախորդող մղձավանջային ժամանակաշրջանի իրական նկարագիրը, ցույց տալիս, որ պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը գահավեժ գնում էր դեպի արյունոտ 1915 թվականը:

«Որպեսզի կարողանար դիմագրավել վերահաս աղետ վտանգին,— գրում էր Հր. Սիմոնյանը,— բոլորից լքված և երիտթուրքական գազանի բացված երախի առջև կանգնած հայ ժողովուրդը փրկության միայն մի ելք կարող էր ունենալ՝ **զինվել** (ընդգծումը հեղինակինն է— Մ. Կ.): Նրա գլխին կախված դամոկլյան սրին պետք է հակադրվեր սուրը, բռնությանը՝ բռնությունը, որքան էլ դա հղի լիներ վտանգներով, որքան էլ մեծ զոհեր պահանջվեր»[1]: Նա միանգամայն իրավացի հիմքով գտնում է, որ միայն այդ դեպքում հայությունը գուցե խուսափեր ազգովին կոտորվելու խայտառակությունից, որովհետև կայսրության մեջ ընդամենը 8 միլիոն թուրքը, որը հայկական լեռնաշխարհում խոր արմատներ չուներ, չէր կարողանա արյան մեջ թաթախել շուրջ 3 միլիոնի հասնող հայերին, որը միայն զենք վերցնելու ունակ ավելի քան 300 հազար երիտասարդ ուներ:

Բուն եղեռնի ժամանակաշրջանին է վերաբերում աշխատության «Արևմտահայությունը թուրքական ազգայնամոլության զոհ» ընդարձակ գլուխը:

Բացահայտելով երկու հակոտնյա խմբավորումների՝ Քառյակ միության և Անտանտի երկրների հետապնդած նպատակները առաջին համաշխարհային պատերազմում, Հր. Սիմոնյանը ընդգծում է այն միտքը, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գլխավոր պատճառներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, Հայկական հարցի «լուծումն» էր: Նշվում է, որ հակառակ թուրքերի բորբոքած հակահայկական հիստերիային, հայ ազգային մարմինները հայտարարեցին, որ արևմտահայությունը թուրքական պետության հանդեպ հավատարմությամբ է կատա-

[1] Նշվ. աշխ., էջ 205:

[1] Նշվ. աշխ., էջ 315:

րելու իր քաղաքացիական պարտքը, որի ելակետն էր՝ ոչ մի դեպքում առիթ չտալ ու չգրգռել գազանին[1]:

Մինչդեռ, 1914 թ. նոյեմբերի 12-ին, այսինքն Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց մեկ օր հետո, երիտթուրքական կուսակցության ղեկավարությունը հատուկ նամակ-շրջաբերականով դիմեց իր տեղական կազմակերպություններին, որի մեջ իբրև առաջին անհրաժեշտություն ցուցում էր տրվում բնաջնջել հայ ցեղը:

Հեղինակը արձանագրում է, որ ամբողջ հայ ժողովուրդը պատերազմի հենց սկզբից իր անսքող համակրանքն էր դրսևորել Ռուսաստանի նկատմամբ և իր բախտը կապել ռուսական զենքի հաղթանակի հետ: Ռուսական զորքերի ժամանակավոր անհաջողությունը խոր վիշտ էր պատճառել արևմտահայությանը, իսկ արևելահայությունն արդեն հարյուր հազարավոր զինվորներ էր տվել ռուսական բանակին:

Հր. Սիմոնյանը միայն ու միայն դրականորեն է արտահայտվում Կովկասում ծավալված կամավորական շարժման մասին, գտնելով, որ այն հետապնդում էր սպասվելիք էլ ավելի մեծ ջարդերից արևմտահայությանը փրկելու նպատակ, և հազար-հազարներ էին ցանկանում մասնակցել ազգի ազատագրության գործին: Նա գրում է, որ կազմվեցին հայկական կամավորական հինգ ջոկատներ, որոնցից յուրաքանչյուրում կար 1000 զինվոր: Ժողովրդի առատաձեռն ընծրատվություններով կամավորները պատշաճորեն հանդերձավորվեցին, ապահովվեցին ռազմամթերքով ու ձիերով: Կամավորական առաջին ջոկատի հրամանատարությունը ստանձնեց հատուկ այդ նպատակով Բուլղարիայից Թիֆլիս եկած Անդրանիկը:

Ձժխտելով պատերազմում ցարական Ռուսաստանի հետապնդած զավթողական նպատակները, հեղինակը զարգացնում է այն տեսակետը, որ, այդուհանդերձ, պատերազմը էական առանձնահատկություններ ուներ Հայկական հարցի տեսանկյունից: «Եթե պատերազմում Ռուսաստանի դեմ Թուրքիայի հաջողությունը մահաբեր էր հայության համար,— գրում է նա,— ապա Թուրքիայի դեմ ռուսական բանակի հաղթանակը, ընդհակառակը, հայ ժողովրդի հաղթանակն էր, քանի որ այդ բանակը, թեկուզ ցարական, նրան ազատագրություն էր բերելու օսմանյան դարավոր բռնակալությունից, և նա ժամ առաջ էր փափագում տեսնել այդ ազատությունը»[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 329:
[2] Նշվ. աշխ., էջ 341:

Հր. Սիմոնյանը վերարտադրում է երիտթուրքերի կուսակցության կոմիտեի 1915-ի փետրվարի կեսերի գաղտնի նիստը, թվարկում մասնակիցներին, ելույթ ունեցողներին, ցուցահանում դրանց հայատյաց բովանդակությունը: «Հաշվեհարդարը եղավ արագ և արյունալի,— գրում է նա:— Օսմանյան պետությունն օրենքից դուրս հայտարարեց կայսրության մեջ ապրող ամբողջ հայությանը: Ներքին գործերի մինիստր, ապա վարչապետ, պատմության մեծագույն ոճրագործներից մեկը՝ Թալեաթը, հայերի մասսայական բնաջնջումը պետական առաջնահերթ խնդիր համարելով, համապատասխան մարմիններին սառնասրտորեն հրահանգեց՝ անխնա ոչնչացնել բոլորին, մինչև իսկ օրորոցի մանուկներին: Գործի դրվեցին պետական ապարատը, բանակը և ոստիկանությունը, «համիդիեները» և չերքեզական ավազակախմբերը»[1]:

Հեղինակը գրում է, որ 1915 թվականի ապրիլի 24-ին Պոլսի հայ մտավորականության փայլուն հավաստեղության սպանդով սկսվեց արևմտահայության ընդհանուր, մասսայական ցեղասպանությունը: Թուրքերն այնուհետև տենդագին շտապողականությամբ ոչնչացրին զինվորական ծառայության կանչված 300 հազար հայ երիտասարդների: «Ձնայած այն հանգամանքին,— գրում է այդ առթիվ հեղինակը,— որ թուրքական բանակի հայ զինվորները և սպաները ռազմի դաշտում ապացուցեցին իրենց օրինապահ հպատակությունը, այնուհանդերձ, թուրքական զինվորական իշխանությունները նախ նրանց զինաթափեցին ու բանակից հեռացրին՝ օգտագործելով միայն թիկունքային աշխատանքներում՝ որպես «ամելե թաբուրի», իսկ հետո էլ հավարյա բոլորին կոտորեցին զորանոցներում կամ ձորերում ու անտառներում: Հազարավոր հայ տղաների էլ հանում էին խրամատներից և հենց տեղում գնդակահարում»[2]:

Հր. Սիմոնյանը տիյուրքահայ հեղինակներից վերցրած մի շարք բնորոշ օրինակներով պատկերում է եղեռնի սահմռկեցուցիչ տեսարանները, եղեռն, որին ենթարկվեց անպաշտպան մնացած արևմտահայ ազգաբնակչությունը՝ կանայք, աղջիկներ, երեխաներ, ծերեր, մեծահասակ տղամարդիկ: Դժվար է առարկել հեղինակի այն մտքին, որ ո՛չ ստեղծված մեծաթիվ պատմագիտական երկերը, ո՛չ էլ ականատեսների հուշերը չեն կարող տալ ողբերգության ու մաքսուրների, տիձավանջի ու սոսկալի ոճրի իրական, ամբողջական պատկերը:

[1] Նշվ. աշխ., էջ 347:
[2] Նշվ. աշխ., էջ 348:

Աշխատության հեղինակը չերմ համակրանքով ու երախտագիտությամբ է խոսում արաբ աշխատավոր մարդկանց մասին, որոնք իրենց կյանքը վտանգելու գնով օգնության ձեռք էին մեկնում տարագրյալ հայերին: «Դարեր են անցնելու,— հուզիչ զգացմունքայնությամբ գրում է նա,— բայց մեր ժողովուրդը չի մոռանալու, որ իր պատմության ամենաճակատագրական, ամենադժնդակ, ամենասև օրերին արաբ ժողովուրդը օգտակար եղավ իրեն: Անապատի բեդվինները, արաբ ուղտապանները, աղքատ գյուղացիները հավաքում, ի մի էին բերում իրենց բնօրրանից պոկված, հյուծված, հիվանդ ու հալածված, անապատի ավազուտներում դեգերող դժբախտ կանանց ու որբուկներին, նրանց օթևան տալիս, խնամում, կիսում հացի պատառը»[1]:

Նա խոսում է նաև հույների, քրդերի ցուցաբերած օգնության մասին, որոնք անձնազոհաբար փրկեցին հարյուրավոր հայերի: Խոսք է գնում նաև առանձին թուրքերի, սպաների, հոգևորականության՝ հայերին ցույց տված օգնության և իթթիհատական իշխանություններին ընդդիմանալու մասին, բերվում են դրանք հաստատող փաստեր: Այդ կապակցությամբ հեղինակը իր մտորումներն ամփոփում է հետևյալ կերպ. «Հայ ժողովրդի ոչնչացման դեմ այդ բողոքները, տարաբախտաբար, մնացին որպես առանձին դրվագներ: Թուրքիայում չստեղծվեց ընդհանուր հասարակական կարծիք, առավել ևս չստեղծվեց հասարակական շարժում, որը հակադրվեր իթթիհատի ոճրագործ քաղաքականությանը: Եվ թողտվության այդ պայմաններում թուրքական պետությունը գեհենային վայրագությամբ ամբողջովին բնաջնջեց իրեն հպատակ մի ժողովրդի, նրան զոհեց հանաթուրանականության քաղաքական ցնորքին, մորթեց նրան իր սեփական հայրենիքում՝ օրորոցի մանուկից մինչև զառամյալ ծերունին»[2]:

Հր. Սիմոնյանը, հենվելով հրապարակված արխիվային տվյալների ու վավերագրերի վրա, ցուցահանում է երիտթուրքերի ջարդարարական քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և Իրանում ապրող շուրջ 940 հազար ասորիների նկատմամբ, որին զոհ գնաց մոտ 500 հազար մարդ: Ցանկալի կլիներ, սակայն, որ բախտակից ժողովրդի ճակատագիրը պարզաբանվեր առավել հանգամանորեն, հիմնահարց, որը մեր կարծիքով օրգանական կապ ունի հայոց ցեղասպանության հետ:

1 Նշվ. աշխ., էջ 356:
2 Նշվ. աշխ., էջ 359:

Հեղինակն արծարծում է նաև հայոց ինքնապաշտպանության հարցը: Այդ առթիվ նա գրում է. «Արևմտահայ ժողովրդի ընդհանուր կոտորածի և տեղահանության ամիսներին մի քանի քաղաքներում ու վայրերում թուրքերը ներողական դիմադրության հանդիպեցին... Արտաքին աշխարհից բոլորովին կտրված, փրկության որևէ հույս ու ապավեն չունենալով, իմանալով, որ թուրքերին հանձնվելով ստույգ մահվան են ենթարկվելու չարչարանքներով, թուրք ջարդարար զինվորներից ու թալանող խուժանից իրենք իրենց պաշտպանե՛ն համար նրանք կռվեցին մինչև վերջին փամփուշտն ու շունչը»[1]: Թվարկելով Սասունի, Ուրֆայի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ամասիայի, Ֆնտրճագի, Խուզուզի դյուցազնամարտները, հեղինակը միաժամանակ նշում է, որ անհավասար այդ կռիվները չէին կարող երկար տևել, որովհետև սակավաթիվ էին տղամարդիկ, սահմանափակ էին զենքի ու զինամթերքի պաշարները, պարենը: Ուստի դիմադրության օջախները սեղմվելով՝ աստիճանաբար մարեցին, և «հաղթական» թուրք ոճրագործներին մնում էր միայն մորթել կենդանի մնացած մահապարտներին: Բացառություններ եղան միայն Վանը և Մուսա լեռը, որոնցից առաջինը փրկվեց ռուսական բանակի, երկրորդը՝ ֆրանսիական ռազմանավերի օգնությամբ: «Վանի և Մուսա լեռան հերոսամարտերը նորից ապացույց եղան այն բանի,— գրում է հեղինակը,— թե ինչպես բոլոր կողմերից շրջապատված կարելի է անհավասար, բայց հաղթական կռիվներ մղել անարգ թշնամու դեմ»[2]:

Հանրագումարի բերելով Հայոց մեծ եղեռնի զարհուրելի հետևանքները, հեղինակը գրում է, որ ցեղասպանության հրամանը ի կատար ածվեց մի վիթխարի տարածքի՝ 800 հազար քառ. կիլոմետրի վրա, որն ընդգրկում էր ողջ Արևմտյան Հայաստանը, Քուրդիստանը, Փոքր Ասիան, Սիրիան, Միջագետքի հյուսիսը: Ոչնչացավ 500 հազար հայ ընտանիք: Շուրջ երեք միլիոն արևմտահայությունից ջարդվեց ավելի քան 1,5 միլիոնը, թուրքացվեց 200 հազար հայ: Ավերակների վերածվեցին անհամար շեն բնակավայրերը, ավերվեցին հազարավոր ճարտարապետական կոթողներ, թալանվեց անհաշիվ նյութական հարստություն: Ոչնչացվեց 66 քաղաք, 2500 գյուղ, 63 առաջնորդարան, 2050 եկեղեցի, 300 վանք, հազարավոր դպրոցներ, թատրոններ, ձեռագրեր: Թուրք զավթիչները հայ ժողովրդից **հափշտակեցին նրա հայրենի երկիրը՝ հա-**

1 Նշվ. աշխ., էջ 360:
2 Նույն տեղում:

զարամյակների մայր հայրենիք Հայաստանը (ընդգծումը հեղինակինն է— Մ. Կ.):

Հեղինակը եզրակացնում է, որ կորուստների բացարձակ թվով հայությունը երրորդ տեղն էր զբաղեցնում Ռուսաստանից ու Գերմանիայից հետո, և այդ կորուստները 6—7 անգամ գերազանցում էր Թուրքիայի մարդկային կորուստները:

Ջարդերից հրաշքով փրկված հայերը ցրվեցին աշխարհով մեկ, իսկ դրախտավայր հայրենիքը մնաց հեռվում՝ իբրև պատրանք[1]:

«Այսպիսով,— ամփոփում է Հր. Սիմոնյանը,— թուրք զավթիչների և օկուպանտների դեմ հայ ժողովրդի երկարատև ազգային ազատագրական պայքարը վերջացավ սոսկալի աղետով: Պետություն չունեցող անզեն ժողովուրդը «պատժվել» էր իր բնօրրանում: Ազատագրության համար օսմանյան բռնակալության դեմ պայքարի ելած բազմաթիվ ազգերի մեջ թերևս հայ ժողովրդից ավելի շատ կորով ու ճիգ թափող չեղավ: Իր ազատության համար նա մղեց երկարաշունչ կռիվներ, տվեց անգին զոհեր, կրեց անլուր տառապանքներ, ջարդվեցին տարաբախտ հազարները: Իսկ արդյունքը ազգովին ողջակիզումն էր: Այդպես եղավ...»[2]:

Հայոց Մեծ եղեռնի հիմնահարցերը քննարկված են Հր. Սիմոնյանի մեկ այլ՝ «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրության մեջ[3]:

Աշխատության առաջին գլխում հեղինակն ամենայն մանրամասնությամբ քննության է առնում Օսմանյան կայսրության պաշտոնական գաղափարախոսությունները աբդուլհամիդյան կառավարման տարիներին՝ իսլամիզմ, պանիսլամիզմ, օսմանիզմ, նոր օսմանիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ, որոնց հանրագումարն ի վերջո հող նախապատրաստեց հայոց ցեղասպանության համար:

Հայոց եղեռնի դրվագները ներկայացված են աշխատության հաջորդ՝ «Արևմտահայության գողգոթան» գլխում:

Չնայած այն հանգամանքին, որ նախորդ աշխատության նյութը իր զգալի մասով ներառնված է այս նոր մենագրության մեջ, վերոհիշյալ երկու գլուխներն էլ համալրվել են շոշափելի քանակությամբ նոր նյութերով, սրբագրվել ու ճշգրտվել են շատ ձևակերպումներ ու տողեր,

1 Նշվ. աշխ., էջ 367—368:

2 Նշվ. աշխ., էջ 368:

3 Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից: Երևան, 1991:

շրջանառության մեջ են դրվել նոր փաստեր: Հիշյալ գլուխների առկայությունը սույն մենագրության մեջ ինքնանպատակ չէ. դրանք ապահովում են այս արժեքավոր աշխատության տրամաբանական ներքին կապն ու ամբողջականությունը:

Մեծ եղեռնի պատմությունը փաստական նյութի լայն օգտագործմամբ է շարադրված Ս. Կ. Պողոսյանի գրքում[1]:

Աշխատության ներածականում հեղինակը նշում է, որ ժամանակակից թուրքական կառավարող շրջանները ոչ միայն չեն դատապարտում, այլև չեն ընդունում հայկական ցեղասպանության փաստը և դրանով իսկ նրանք կիսում են տասնամյակներ առաջ կատարված ոճրագործության պատասխանատվությունը, դառնում մեղսակից դրանց իրականացնողների հետ: Ընթերցողը տեղեկանում է, որ քաղաքական ասպարեզում Էնվերի վարչակարգը ձգտում է Արևմուտքի պետությունների հետ համագործակցված արտասահմանյան երկրներում խեղդել հայկական հայրենասիրական, առաջադեմ շարժումները, քայքայել սփյուռքը, կազմալուծել նրա ուժերը, որ հրատարակվում են բառարաններ, «պատմագրական աշխատություններ», քարտեզներ, որոնց նպատակն է ապացուցել, որ Հայաստան չկա և չի էլ եղել, որ այն հայերի երևակայության արդյունք է, որ Անկարայի կառավարությունը հրահանգել է արտասահմանյան իր դեսպանություններին ու ներկայացուցիչներին՝ արգելել եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների վրա ցեղասպանությունը հիշատակող արձանագրությունները, խափանել այդ թեմայով հրատարակություններն ու կինոժապավենների ցուցադրումը, ճնշում գործադրել հայկական մեծ գաղթօջախներ ունեցող երկրների կառավարությունների վրա, որպեսզի նրանք հայերին թույլ չտան ապրիլի 24-ին ցույցեր և այլ միջոցառումներ կազմակերպել[2]:

Հատուկ ենթաբաժնում Ս. Պողոսյանը ցուցահանում է ցեղասպանության իրականացման ամենադաժան ու ամենաստոր մեթոդները, բերում սահմռկեցուցիչ նորանոր փաստեր: Այդ կապակցությամբ նա գրում է, որ ցեղասպանությունը թուրքերն իրականացրեցին ամենապայլապտակ, ամենավայրագ ու անմարդկային միջոցներով, և երբ ծանոթանում ես կատարվածին, դժվարանում ես հավատալ, որ դրանց հեղինակները մարդիկ են[3]:

1 Ս. Կ. Պողոսյան: Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ, մեկնաբանություններ), Երևան, 1988:

2 Նշվ. աշխ., էջ 45, 48:

3 Նշվ. աշխ., էջ 455:

Հեղինակը փաստեր է բերում այն մասին, որ «Կառավարությունը քաջալերում էր խոշտանգումները, որոնց մանրամասները քննվում էին «Միության և առաջադիմության» կուսակցության շտաբի գիշերային նիստերում: Խոշտանգումների յուրաքանչյուր նոր մեթոդ գնահատվում էր որպես գերադրական հայտնագործություն, և ծառայողները մշտապես գլուխ էին ջարդում, որպեսզի հայտնագործեին խոշտանգումների նոր տեսակ... Նրանք նույնիսկ դիմում էին իսպանական հավատաքննության հաշվետվություններին»[1]:

Խոսելով առաջադեմ մարդկության կողմից հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին, Ս. Պողոսյանը վկայակոչում է 1984 թ. ապրիլի 13—16-ը Սորբոնում տեղի ունեցած «Ժողովուրդների մշտական տրիբունալ» անունը կրող ոչ կառավարական միջազգային կազմակերպության նստաշրջանը, որի նիստերից մեկը նվիրված էր Հայկական եղեռնին և որտեղ արձանագրված է. «Ելնելով ցեղասպանությունը կանխելու և մեղավորներին պատժելու մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի դրույթներից, բոլոր հիմքերը կան ասելու, որ հայ ժողովրդի բռնի գաղթեցումն ու զանգվածային սպանությունները իսկական ցեղասպանություն են:

Հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը միաժամանակ միջազգային հանցագործություն էր, և թուրքական պետությունը պետք է պատասխանատվություն կրի, նա պետք է պաշտոնապես ընդունի ցեղասպանության փաստը և հատուցի հայ ժողովրդին հասցված վնասը»[2]:

Ի թիվս այլ հրատարակությունների, Ս. Պողոսյանը վկայակոչում է ամերիկյան «Միթի» ամսագրում 1980 թ. ապրիլին զետեղված «Հայերը» հոդվածի հետևյալ հատվածը. «Թուրքերի կողմից 1915 թվականին իրագործված հայ ժողովրդի գենոցիդը, որի հետևանքով զոհվեց ավելի քան 1,5 միլիոն մարդ, մինչև այժմ պաշտոնապես չի ճանաչված որոշ կառավարությունների, այդ թվում և մեր կառավարության կողմից: Բայց փաստը մնում է փաստ՝ մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի արևելյան շրջաններում և Արարատ լեռան մերձակայքում բնակվող հայերի թիվը երկու միլիոնից ավելի էր: Այժմ այստեղ իրականում հայեր չկան: Ո՞ւր են նրանք անհետացել»: Եվ հետևում է դեռևս 1918-ին այդ հարցին «Պրավդա» թերթի պատասխանը՝ «Մեկ միլիոն

[1] Նշվ. աշխ., էջ 468:
[2] Նշվ. աշխ., էջ 479:

հայեր իրենց կանանց ու երեխաների հետ սրի քաշվեցին միայն այն բանի համար, որ նրանք հայեր էին» (նույն տեղում):

Հայկական ցեղասպանությանը քրդերի մասնակցության հարցերը քննարկված են Ս. Կ. Պողոսյանի մեկ այլ՝ «Քրդերը և Հայկական հարցը» գրքում (Երևան, 1991, էջ 169—246):

Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանությունն ըստ ամենայնի ներկայացված է «Հայկական հարց» հանրագիտարանում[1]: Այստեղ «Ցեղասպանություն» առանձին բառ-հոդվածում (հեղինակ՝ Ա. Հակոբյան) տրված է այդ հասկացության ընդհանուր բնորոշումը, բերված են բնորոշ օրինակներ[2]:

«Հայերի ցեղասպանությունը 1915—1916 թվականներին» հոդվածում, որի հեղինակներն են Մ. Ներսիսյանը և Կ. Խուդավերդյանը, տրված է 20-րդ դարի առաջին ցեղասպանության պատմության սեղմ շարադրանքը՝ համապատասխան համառոտ եզրակացություններով: Հոդվածի վերջում բերված է Մեծ եղեռնը ներկայացնող հիմնական գրականության համառոտ ցանկ[3]:

«Հայերի ցեղասպանությունը արվեստում» ծավալուն հոդվածում (հեղինակներ՝ Լ. Զուգազյան, Ա. Լեյլոյան, Ս. Մանուկյան, Գ. Սարգսյան, Ռ. Աթայան, Բ. Հովակիմյան, Հ. Զաքոյան) Եղեռնը ներկայացված է արվեստի ամենատարբեր՝ կերպարվեստի, մոնումենտալ արվեստի, հուշամեդալային արվեստի, երաժշտության, թատրոնի, կինոյի բնագավառներում: Հոդվածը հագեցած է 40-ից ավելի նկարներով[4]:

Առանձին հոդվածով ներկայացված է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (խմբագիր՝ Մ. Ներսիսյան)՝ իբրև հայրենական պատմագրության մեջ հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստավավերագրական նյութերի առաջին հրապարակում: Հոդվածի հեղինակն է Ռ. Սահակյանը:

Առանձին ընդարձակ հոդված է նվիրված «Հայերի ցեղասպանությունը գեղարվեստական գրականության մեջ» թեմային, որտեղ ներկայացված են հայ նահանջապոխական, խորհրդային, սփյուռքահայ գրականությունը, ռուս նահանջապոխական, խորհրդային գրականությունը, ֆրանսիական, ամերիկյան, անգլիական, գերմանական, ավստ-

[1] Армянский вопрос. Энциклопедия. Ереван, 1991.
[2] Նշվ. աշխ., էջ 110:
[3] Նշվ. աշխ., էջ 111—114:
[4] Նշվ. աշխ., էջ 114—129:

րիական, բուլղարական, լեհական, սերբական, իսպանական գրականությունը:

Հանրագիտարանում զետեղված է պրոֆ. Կ. Խուդավերդյանի «Հայոց եղեռնի զոհերի հիշատակի օրը», «Ցեղասպանություն», «Հուշամատյան Մեծ եղեռնի» և այլ հոդվածներ:

Առանձին հոդվածներով ներկայացված են Վանի, Շապին-Գարահիսարի, Մուշի, Սասունի, Շատախի, Մուսա լեռան, Ուրֆայի հերոսամարտերը:

«Առաջին համաշխարհային պատերազմը և Հայաստանը» ընդարձակ հոդվածի հեղինակն է Ա. Կիրակոսյանը: Հանրագիտարանը պարունակում է Հայոց Մեծ եղեռնին վերաբերող նաև այլ հոդվածներ:

***

1995-ին լրացավ Հայոց Մեծ եղեռնի 80 տարին: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով ստեղծվեց Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման Պետական հանձնաժողով:

Հանձնաժողովի կարևոր ձեռնարկումներից մեկը եղավ 1995 թ. ապրիլի 21—28-ը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում անցկացված «Ցեղասպանության հարցեր» միջազգային գիտաժողովը:

Ութսունամյա տարելիցի կապակցությամբ հրատարակվեցին մի շարք աշխատություններ, հոդվածների ժողովածուներ և այլ նյութեր:

ՀՀ ԳԱԱ հրատարակչությունը լույս ընծայեց ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանի «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ» ռուսերեն մենագրությունը[1]:

Հեղինակը ցույց է տալիս, որ Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականությունը շարունակեցին երիտթուրքերը, որոնք 1908-ին գալով իշխանության, հաջորդ տարի Ադանայում և Կիլիկիայի այլ քաղաքներում կազմակերպեցին շուրջ 40 հազար հայերի կոտորած, որ երիտթուրքերը հարմար առիթ էին փնտրում՝ հայերին բնաջնջելու նախօրոք մշակած պլաններն իրականացնելու համար: «Եվ երբ 1914-ի օգոստոսին սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, երիտթուրքերը գերմանական ռազմամոլների հովանավորությամբ ձեռնամուխ եղան իրենց դիվային պլանների իրականացմանը,— գրում է նա:— Մասսայական ջարդերն սկսվեցին պատերազմի առաջին իսկ ամիսներից և իրենց բարձրակետին հասան 1915-ի ապրիլին, որը պատմության մեջ մտավ որպես ցեղասպանության ամիս»[1]:

Գ. Ղարիբջանյանը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայերի ցեղասպանության վերաբերյալ վերջին շրջանում հայտնաբերված ու հրապարակված նոր փաստաթղթերի, նյութերի և ապացույցների մասին: Նա հիշատակում է Բուենոս-Այրեսի Ազգային համալսարանի փաստաբան, «Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները» երկհատոր մենագրության հեղինակ Պասկուալ Կարլոս Օհանյանի հրատարակած «Թուրքիան՝ 1915—1923 թթ. գենոցիդի արարիչ» (Բուենոս-Այրես, 1986) փաստաթղթերի իսպաներեն ժողովածուն: Ժողովածուում հրապարակված 524 փաստաթղթերը քաղված են թուրքական, անգլիական, ֆրանսիական և ամերիկյան աղբյուրներից: Իբրև նմուշ բերված է կաթոլիկական համայնքի պատվելի հայր Սիմոնի վկայությունը, որից երևում է, որ հայերի ցեղասպանությունը իրականացվում էր հետևյալ որոշակի մեթոդով.

1. Կատարել հայերի մասսայական ձերբակալություններ՝ սկսած ամենաանվանի մարդկանցից:

2. Տանել նրանց այնպես, որ չիմանային, թե իրենց ուր են տանում:

3. Ճանապարհին ձերբակալվածներին բաժանել 50—100 հոգիանոց խմբերի:

4. Մահապատժի վայրում հանել նրանց հագուստները, սպանել և դիակները գցել խոր ջրհորները:

5. Ղորանի վրա երդմամբ պահպանել լռություն, քաղաքում մնացած քրիստոնյաներից գաղտնի պահել կատարվող իրադարձությունները և մահապատժի ենթարկվածների ճակատագիրը[2]:

Գ. Ղարիբջանյանը տեղեկացնում է նաև, որ հայերի ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայի և Ավստրիայի արխիվներում պահպանվող նյութերից մասամբ հրատարակվել են Մյունխենի Հայկական հարցի ինստիտուտի կողմից՝ «Հայերի ցեղասպանությունը: Փաստաթղթեր» (Մյունխեն, 1988) սերիայով և «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» (Մյունխեն, 1991) ժողովածուում:

---

[1] Г. Б. Гарибджанян. Геноцид армян перед судом истории. Ереван, 1995.

[1] Նշվ. աշխ., էջ 11:

[2] Նշվ. աշխ., էջ 15:

Վկայակոչելով Պոլսում գերմանական դեսպանատան 1915 թ. օգոստոսի 9-ի մեմորանդումը, որտեղ ասվում էր, հասարակական կարծիքն արդեն համոզվել է նրանում, որ Գերմանիան մասնակից է հայերի կոտորածներին, Գ. Ղարիբջանյանը նշում է, որ բազմաթիվ համանման փաստաթղթեր հաստատում են, որ կայզերական Գերմանիան իր թողտվությամբ հրահրում էր հայերի բնաջնջումը: «Գերմանական ռայխի կառավարությունից պահանջվում էր լոկ արտահայտել իր «վետոն», և Թուրքիայի հնազանդվելը երաշխավորված կլիներ»,— գրում է նա: Իր այս միտքը հաստատելու համար հեղինակը վկայակոչում է գերմանացի հրապարակախոս Հենրիխ Ֆիրբյուխերին, որը գտնում է, որ գերմանական զինվորականն կառավարությունը կիսում է պատասխանատվությունը նաև 1915 թվականի ստոր հանցագործության համար:

Առանձին գլխում հանգամանորեն խոսվում է ցեղասպանության ենթարկված հայերին Ռուսաստանի ցույց տված օգնության մասին: Հեղինակը բարձր է գնահատում 1896-ին Մոսկվայում հրատարակված «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը 1895-ին» ժողովածուն, որտեղ զետեղված էին Գլադստոնի ճառը, Մ. Ռոլեն-Ժեկմենի, Մ. Մակ-Կոլի, Ֆ. Գրինի, Է. Դիլլոնի, Գր. Դիևի և այլոց հոդվածները: Խորհելու առիթ է տալիս ժողովածուի առաջաբանի հեղինակ պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկու կարծիքը, որ Թուրքիայի գոյության փաստն իսկ համակ խայտառակություն էր համարում քրիստոնյա ժողովուրդների համար: «Եթե նրանք վճռեին,— գրում է նա,— ինչպես հարկն է պայմանավորվելին իրար հետ, կանգնելով բարոյականության, իրավունքի և մարդասիրության հողի վրա, կարող էին արագորեն, առանց էական ցնցումների, վերջ տալ այդ պետությանը, որը նրանց մեջ իրենից ներկայացնում է միայն անախրոնիզմ և աղաղակող հասարակական սխալմունք»[1]:

Հեղինակը նույնպիսի բարձր գնահատական է տալիս 1897-ին Մոսկվայում ռուս մտավորականության նախաձեռնությամբ հրատարակված «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» գրական-գիտական ժողովածուին, որը մեկ տարի անց հրատարակվեց երկրորդ անգամ:

Գ. Ղարիբջանյանը հայտնում է, որ այս երկու մեծարժեք ժողովածուների հրատարակման նախաձեռնողն ու խմբագիրը թիֆլիսահայ գործիչ Գրիգոր Ջանշիևն էր (1851—1900), որը մեծ հեղինակություն

[1] Նշվ. աշխ., էջ 27:

էր վայելում ռուսական գրական-հասարակական շրջաններում: Դեռևս 1893-ին նա Մոսկվայում հրատարակել էր «Հայկական հարցը Թուրքիայում» գրքույկը՝ Գր. Ա. Դիևի ստորագրությամբ: Այս ժողովածուներից ստացված 60 հազար ռուբլի գումարը տրամադրվեց տուժած արևմտահայերի օգնությանը:

Նշվում է, որ 1914—1916 թվականներին Մոսկվայում հրատարակվեցին Յու. Վեսելովսկու «Թուրքահայաստանի ողբերգությունը», «Հայ գրականության ժողովածուն»՝ Մ. Գորկու խմբագրությամբ, «Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»՝ Վ. Բրյուսովի խմբագրությամբ, Ա. Զիվելեգովի «Թուրքահայաստանի ապագան» և այլ գրքեր, որոնցում հեղինակները, մերկացնելով հայերի ցեղասպանությունը Թուրքիայում, միաժամանակ խորը հավատ և պայծառ ապագա էին մաղթում բազմաչարչար հայ ժողովրդին:

Հեղինակն առանձնակի ջերմությամբ է արտահայտվում ռուս գեներալ և պոետ Ա. Կուլեբյակինի, գրող-մարտիկ Պ. Սիբիրցևի, անվանի արևելագետ, ակադեմիկոս Վ. Գորդլևսկու, ռուս նշանավոր գիտնական, պետական և հասարակական գործիչ Մաքսիմ Կովալևսկու, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի, անվանի հրապարակախոս Վ. Վորովսկու, զինվորական թղթակիցներ Ս. Գորոդեցկու, Վ. Պոլոնսկու, Ալեքսանդրա Տոլստայայի (Լ. Տոլստոյի դուստրը) և այլոց հայանպաստ գործունեության մասին:

Հաջորդ գլուխը նվիրված է հայոց եղեռնի դեմ հանդես եկած Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջադեմ հասարակայնությանը:

Ցույց է տրվում, որ հայկական ջարդերի կազմակերպիչների՝ ի դեմս երիտթուրքերի և նրանց հովանավոր գերմանական կառավարության, դատապարտմամբ հանդես եկան Անգլիայի, Իտալիայի, Բելգիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների գիտնականներն ու հասարակական-քաղաքական գործիչները:

Աշխատության վերջին գլուխը կրում է «Թուրք ջարդարարները պատմության դատաստանի առաջ: Ցեղասպանությունը չպետք է կրկնվի» վերնագիրը, որն ունի ընդհանրացնող բնույթ:

Այստեղ խոսվում է լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկեի մասին, որն առաջին անգամ 1944-ին գործողության մեջ է դրել «գենոցիդ» տերմինը՝ նկատի ունենալով 1915-ի հայոց եղեռնը: Առաջ է քաշվում այն միտքը, որ թուրք բարբարոսների անպատժելիությունը արձակեց մարդկության հետագա դահիճների ձեռքերը և ի հաստատումն դրա՝ բերվում է Հիտլերի հայտնի նախադասությունը հայերի ցեղասպանության մասին:

Դրան ավելացվում է Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուի խորհուրդը Հիտլերին՝ ռուսական պրոբլեմը լուծելու համար ոչնչացնել ռուսների առնվազն կեսը:

Գլխում խոսք է գնում ցեղասպանությունը դատապարտած մի շարք միջազգային ֆորումների որոշումների մասին, կամուրջ է գցվում անցյալ ժամանակների և 1988—90 թթ. Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Խոջալուում տեղի ունեցած ցեղասպանության միջև: Հիշատակվում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. նոյեմբերի 28-ի որոշումը և Հայաստանի Հանրապետության Հռչակագրի (23 օգոստոսի, 1990 թ.) համապատասխան հատվածը հայոց ցեղասպանության մասին:

Հիշատակելով Թուրքիայի վարչապետ Թ. Օզալի և Ս. Դեմիրելի մերօրյա ցինիկ հայտարարությունները հայ ժողովրդի հասցեին, ակադեմիկոս Գ. Վարիբջանյանն իր խոսքն ավարտում է հետևյալ կերպ. «Թուրք իշխանավորների դամոկլյան սուրը այժմ էլ կախված է բազմաչարչար Հայաստանի գլխավերևում: Միջազգային հասարակայնությունը, բարի կամքի բոլոր մարդիկ պարտավոր են առավել վճռականորեն պայքարել ռասիզմի և ցեղասպանության ցանկացած դրսևորմամբ բորբոքման դեմ»[1]:

Աշխատությանը կցված են հայերի ցեղասպանության վերաբերյալ հինգ փաստաթղթեր:

Հայերի ցեղասպանության 80-ամյակի առիթով միջոցառումները Պետական հանձնաժողովի որոշմամբ հրատարակվեց պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Ռուբեն Սահակյանի և Կոստանդին Խուդավերդյանի «Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո» մենագրությունը[2]:

Ոչ մեծածավալ այս աշխատության մեջ հայրենական և արտասահմանյան պատմագրության ձեռքբերումների հիման վրա քննարկված է հայերի ցեղասպանության պատմության հարցերի մի ամբողջ համալիր՝ գենոցիդի պատճառներն ու նախադրյալները, նրա իրագործման մեխանիզմը, հետևանքները, մեծ տերությունների դիրքորոշումը, հայերի ինքնապաշտպանությունը, ժամանակակից աշխարհի վերաբերմունքը և այլն: Տրված է հիմնահարցի պատմագրության համառոտ ակնարկ:

Աշխատությունը բաղկացած է 10 ոչ մեծ գլուխներից, որոնցից առա-

1 Նշվ. աշխ., էջ 94:

2 Ռուբեն Սահակյան, Կոստանդին Խուդավերդյան: Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո: Երևան, 1995:

ջին երեքը կրում են ներածական բնույթ: Դրանցում քննության են առնված Օսմանյան կայսրության կազմավորմանը, այդ կայսրության կազմում հայերի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակի հարցերը, Հայկական հարցի միջազգայնացումը Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում դրանից հետո ծավալված հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը, հայդուկային շարժումը և հարակից այլ հարցեր:

Նշվում է, որ 19-րդ դարի վերջի—20-րդ դարասկզբի հայերի ազգային ազատագրական պայքարը, չնայած նրա մասնակիցների հերոսությանն ու ինքնազոհությանը, **պարտություն կրեց** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), որը պայմանավորված էր մի շարք պատճառներով. շարժումը չուներ միասնական ղեկավարություն, այն գերազանցապես կրում էր տարերային, ցաքուցրիվ ելույթների բնույթ: Շարժումը մեկուսացված էր, այն ձեռք չբերեց դաշնակիցներ Թուրքիայի ներսում այլ ժողովուրդների մեջ, մինչդեռ Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվեց սեպ խրել հայերի և քրդերի միջև, օգտագործել վերջիններիս հայ ապստամբների դեմ[1]:

«Թուրքիայի հայ ազգաբնակչության ցեղասպանությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» գլխում տրվում է ցեղասպանության բնորոշումն իբրև ծանրագույն հանցագործություն մարդկության դեմ և հատուկ ընդգծվում է, որ ՄԱԿ-ի 1948-ի Կոնվենցիան այդ հանցագործության համար իրավաբանական վաղեմություն չի ճանաչում:

Բացահայտելով արևմտահայերի ցեղասպանության պատճառները, աշխատության հեղինակները դրանք ուղղակիորեն կապում են երիտթուրքերի կառավարող ոհմակի ներքին ու արտաքին քաղաքականության հետապնդած նպատակների հետ, նշում, որ նրանց ուղենիշը դարձավ պանթուրքիզմի դոկտրինան, որն ուղղվեց հայ ժողովրդի և Ռուսաստանի դեմ:

Ընդգծվում է, որ երիտթուրքերի հետապնդած նպատակներից մեկն էլ կազմավորված թուրք ազգային բուրժուազիայի համար «արևի տակ տեղ» ապահովելն էր, այսինքն՝ երկրի տնտեսության ոլորտից ոչ թուրք, և առաջին հերթին հայ բուրժուազիայի դուրս մղումը, որը կարող էր տեղի ունենալ միայն բռնի ճանապարհով: «Պատահական չէ,— այդ

1 Նշվ. աշխ., էջ 14:

կապակցությամբ գրում են հեղինակները,— որ 19-րդ դարի վերջի— 20-րդ դարասկզբի հայերի կոտորածների ժամանակ թալանի ու ոչնչացման ենթարկվեցին հայերին պատկանող առևտրական տները, խանութները, ձեռնարկությունները: Ասվածից ելնելով երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը համապատասխանում էր թուրք ազգային բուրժուազիայի շահերին, որը ձգտում էր տիրել հայերին պատկանող ունեցվածքին և երկրի տնտեսության մեջ հաստատել իր անբաժանելի տիրապետությունը»[1]:

Հեղինակները առաջ են քաշում երիտթուրքերի հակահայկական քաղաքականության ևս մեկ ուրիշ գործոն՝ արևմտահայերի վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ, նշում, որ արևմտահայերի ակընհայտ ռուսական կողմնորոշումը օգտագործվեց թուրքական իշխանությունների կողմից՝ հայերի նկատմամբ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու, հայերի բնօրրան հայրենիքը վերջնականապես յուրացնելու համար:

Հեղինակներն այնուհետև ներկայացնում են ցեղասպանության նախապատրաստումը, նրա իրագործման մեխանիզմը: «1914-ի սկզբին,— գրում են նրանք,— այսինքն Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց շատ առաջ, արևելյան վիլայեթների տեղական իշխանություններն ստացան կառավարության հատուկ կարգադրագիր հայերի նկատմամբ կիրառվելիք միջոցառումների մասին: Այն փաստը, որ կարգադրագիրը մշակվել և բաժանվել էր մինչև ռազմական գործողությունների սկսվելը, անհերքելիորեն վկայում է, որ հայ ազգաբնակչության ոչնչացումը և բնաջնջումը պլանավորվել էին նախօրոք, և պայմանավորված չէին կոնկրետ ռազմական իրադրությամբ, որը հետագայում վկայակոչում էին երիտթուրքական պարագլուխները»[2]: Ավելացվում է նաև, որ պատերազմի նախօրյակին երիտթուրքերի կուսակցության ղեկավարությունը բազմիցս քննարկել է հայերի տարագրման և բնաջնջման հարցը, և այդ խորհրդակցությունների հետագայում հայտնի դարձած մանրամասնությունները ցույց են տալիս, որ խոսքը գնացել է ոչ թե մերձճակատային գոտուց հայ ազգաբնակչության տարագրման, այլ Թուրքիայի հայերի բնաջնջման մասին ամբողջությամբ:

Խոսելով հայ զինվորության ոչնչացման մասին, հեղինակները նշում են, որ պատերազմի սկզբին թուրքական բանակ զորակոչվեցին 18—45 տարեկան շուրջ 60 հազար հայեր, որոնք հետագայում էնվերի հրամանով ոչնչացվեցին: Ցավոք, չի նշվում ամբողջ պատերազմում թուրքական բանակ զորակոչված արևմտահայերի ընդհանուր թիվը, որի շուրջ գոյություն ունեն տարակարծություններ:

Առավել հանգամանորեն հեղինակները կանգ են առնում հայերի տարագրման և մասսայական բնաջնջման վրա 1915—1916 թվականներին: Նշվում է, որ թուրքական կառավարության կողմից տարագրման մասին օրենքը ընդունվեց 1915-ի մայիսի 14-ին, որին հետևեցին երեք օրենքներ նրանց ունեցվածքի մասին: Մի շարք տիպական փաստերի վկայակոչմամբ հեղինակները ցույց են տալիս, որ տարագրությունը ըստ էության հայերի բնաջնջման վատ քողարկված ձև էր, որն իրականացվում էր ծայրահեղ դաժանությամբ ու անխնա, ուղեկցվում էր տանջանքներով, բռնություններով, ծաղրուծանակով անմեղ մարդկանց նկատմամբ: Ընդգծվում է, որ բնաջնջման գործողությունները տեղերում խրատորեն վերահսկվում էր կենտրոնից: Հայերի նկատմամբ խղճահարության և գթասրտության անթույլատրելիության մասին նախազգուշացվում էին ոչ միայն տեղական իշխանությունները, այլև թուրք ազգաբնակչությունը, որոնք գլխով էին պատասխանատու հայերին թաքցնելու համար:

Հեղինակները նշում են, որ հայ ժողովրդի Գողգոթան տարագրությամբ չավարտվեց: ԵՒքսորվածների մի փոքր մասը, հասնելով Միջագետքի և Սիրիայի համակենտրոնացման ճամբարները, այստեղ նույնպես ոչնչացվեցին: Ռաս-ուլ-Այնի, Դեյր-էզ-Զորի, Մեսքենեի, Ռաքքայի և այլ համակենտրոնացման ճամբարներում ստեղծված էին գոյության համար անտանելի պայմաններ:

Շեշտվում է, որ 1916-ին հրեշավոր օպերացիա անցկացվեց Դեյր-էզ-Զորի և Եփրատի երկայնքով մյուս համակենտրոնացման ճամբարների ավելի քան 200 000 հայերին ոչնչացնելու ուղղությամբ: Ամոնգը նրանց հանեցին ճամբարներից, քշեցին անապատի խորքերը և այնտեղ ոչնչացրին: 1916-ի վերջին Եփրատի երկայնքով ձգվող ճամբարները դադարեցին գոյություն ունենալուց, իսկ կենդանի մնացածների թիվը չէր անցնում 20 հազարից[1]:

Իրենց ուսումնասիրությունների հիման վրա Ռ. Սահակյանը և Կ. Խուդավերդյանը նշում են Մեծ եղեռնի զոհերի ընդհանուր թիվը՝ 1,8 միլիոն, 800 հազար հայեր դարձան փախստական, ապաստան գտան աշխարհի տարբեր երկրներում: Նրանց կարծիքով հաշվառման ենթակա չէ այն հայերի թիվը, որոնք թուրքացվեցին[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 20:
[2] Նշվ. աշխ., էջ 22:

[1] Նշվ. աշխ., էջ 30:
[2] Նույն տեղում:

Հեղինակներն էական ընդհանրացումներ են կատարում՝ թուրք ջարդարարների կողմից եղեռնը համեմատաբար հեշտությամբ իրագործելու հանգամանքները պարզաբանելու հարցում: Ահա թե ինչ են գրում նրանք այդ առթիվ. «Թուրք ջարդարարների կողմից Օսմանյան կայսրության հայերի ցեղասպանության համեմատաբար հեշտ իրագործումը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Փաստերը ցույց են տալիս, որ **Թուրքիայի հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև հայ քաղաքական կուսակցությունները ամբողջությամբ վերցրած անպատրաստ հայտնվեցին բնաջնջման սպառնալիքի առջև,** նույնիսկ 1909 թվականի իրադարձություններից հետո: Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվեց ըստ էության մեկուսացնել հայ ազգաբնակչությանը, սեպ խրել հայերի ու քրդերի միջև, օգտագործել վերջիններիս իրենց պլաններում: Իր դերը կատարեց նաև Թուրքիայում տասնամյակներով քարոզվող օսմանիզմը. շովինիստական շմոլքը միացած մուսուլմանական ֆանատիզմին՝ **տիրեց թուրք ազգաբնակչության ճնշանակալի մասին,** որի որոշակի շերտերը հանդիսացան ջարդարարական գործողությունների **անմիջական կատարողներ** (ընդգծումներն իմն են— Մ. Կ.)»[1]: Նպաստավոր հանգամանքների թվում հիշատակվում են հայերի դեմ պետական մեքենայի՝ ժանդարմերիա, կանոնավոր զորքեր, տարբեր մակարդակների վարչակազմ, գործադրումը, պատերազմի գործոնի լիակատար օգտագործումը, հայ զինվորության և մտավորականության ոչնչացումը: «Որոշակի դեր խաղաց այն հանգամանքը,— շարունակում են նրանք,— որ արևմտահայերի հասարակական և կղերական որոշ շրջաններում տիրապետում էր այն կարծիքը, որ տարագրման վերաբերյալ հրամաններ տվող թուրքական իշխանություններին չենթարկվելը կարող է սոսկ մեծացնել զոհերի թիվը»[2]:

Հանգամանքներ են սրանք, որոնց վրա պատմագրությունը հարկ եղած ուշադրությունը չի դարձրել, և կարծում ենք, որ դրանք արժանի են հետագա ավելի խորը ուսումնասիրման ու պարզաբանման:

Դնելով եղեռնի պատասխանատուների հարցը, հեղինակներն այն համոզմունքն են հայտնում, որ հրեշավոր հանցագործության գլխավոր մեղավորները երիտթուրքական պարագլուխներն էին, սակայն որոշակի պատասխանատվություն է կրում նաև Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիան, որի կառավարական և զինվորական շրջանները ոչ միայն տեղյակ էին նախապատրաստվող հանցագործությանը, այլև նպաստեցին նրա իրագործմանը, որովհետև տեղեկություններ կան, որ մերձմակատային գոտուց հայերի տարագրման գաղափարը թուրքերին հուշել են գերմանական գլխավոր շտաբի սպաները: Իբրև ապույգ փաստ, նրանք մատնանշում են, որ պատերազմի նախօրյակին Բուխարեստի գերմանական դեսպանատանը կայացել է Գերմանիայի և Թուրքիայի կառավարական և զինվորական գերատեսչությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ քննարկվել է Թուրքիայի արևելյան վեց վիլայեթներից հայ ազգաբնակչության տարագրման ու ոչնչացման հարցը[1]: Ի դեպ, բուխարեստյան հիշյալ խորհրդակցության մասին մեր պատմագրության մեջ, որքան մեզ հայտնի է, հիշատակվում է առաջին անգամ:

«Ցեղասպանության հետևանքները» գլխում հեղինակները ցույց են տալիս, որ արևմտահայերի ցեղասպանությունը անհաց ազդեցություն գործեց հայ ժողովրդի հետագա ողջ պատմության, նրա կենսագործունեության քաղաքական, սոցիալական և հոգևոր ոլորտների վրա[2]:

Որպես ամենածանր հետևանքներից մեկը նշվում է այն, որ Արևմտյան Հայաստանը, հայերի բնօրրանի նշանակալի մասը, որտեղ հազարամյակներով ընթացել էր հայ ժողովրդի պատմական կյանքը, ըստ էության զրկվեց իր բնիկ բնակչությունից: Դրան զուգընթաց ոչնչացվեցին հայկական նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները, այսինքն իրականացվեց նաև ազգային-մշակութային ցեղասպանություն: Հենվելով Պոլսի պատրիարքարանի տվյալների վրա, նրանք գրում են, որ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող 2200 հայկական եկեղեցիներից ու վանքերից 2150-ը թալանվեցին ու ավերվեցին, ոչնչացվեցին նրանցում պահպանվող ավելի քան 20 հազար հին հայկական ձեռագրեր ու հնատիպ գրքեր:

Հեղինակները նշում են նաև ցեղասպանության ուժեղ ազդեցությունը հայ ժողովրդի սոցիալ-հոգեբանական վարքագծի և հոգեկան կերպարի վրա:

«Հայերի ցեղասպանությունը ժամանակակից աշխարհի աչքերով» գլխում հեղինակները պարզաբանում են գենոցիդի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը միջազգային մասշտաբով, արձանագրում, որ երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում

[1] Նշվ. աշխ., էջ 30:
[2] Նշվ. աշխ., էջ 31:

[1] Նշվ. աշխ., էջ 31:
[2] Նշվ. աշխ., էջ 37:

դրա մասին հազվադեպ էր հիշատակվում: Խոսքը վերաբերում է ոչ միայն արևմտյան երկրներին, այլև ԽՍՀՄ-ին և նույնիսկ Խորհրդային Հայաստանին, որտեղ, ի հաճույս խորհրդային պետության քաղաքական շահերի, ցեղասպանության հիմնահարցը ոչ միայն չէր ուսումնասիրվում, այլև նրա մասին անգամ չէր հիշատակվում պատմության դասագրքերում[1]:

Նշվում է, որ հայերի ցեղասպանության հիմնահարցի վերաբերյալ հետաքրքրությունն աճեց հատկապես 1965-ին, Եղեռնի 50-ամյակի առիթով: Հենց այդ թվականին էլ ցեղասպանությունը առաջին անգամ հիշատակվեց միջազգային հեղինակավոր համաժողովի՝ Հելսինկիում կայացած Խաղաղության համաշխարհային կոնգրեսի որոշման մեջ:

Այնուհետև խոսվում է մի շարք միջազգային կազմակերպությունների, տարբեր երկրների պառլամենտների կողմից հայերի ցեղասպանության ճանաչման փորձերի, 1987-ին Եվրոպառլամենտի ընդունած որոշման մասին, որը շուրջ երեք տարվա համառ քննարկումների արդյունք էր:

Հեղինակները նշանակալի իրադարձություն են համարում 1919—1920 թթ. Ստամբուլում տեղի ունեցած երիտթուրքական պարագլուխների դատավարությունը, որոնք մեղադրվում էին Թուրքիան կործանարար պատերազմի մեջ ներքաշելու և հայերի բնաջնջման մեջ: Սակայն հետագայում թուրքերը բացարձակ ժխտողական դիրք գրավեցին եղեռնի նկատմամբ:

Հիշեցնելով 1950-ական թվականներին աշխարհի բազում թերթերում տպագրված Գերմանիայի կանցլեր Ադենաուերի լուսանկարի մասին, որը ծնկի էր իջել Երուսաղեմում Արցունքի պատի առջև՝ ի նշան ցավակցության հիտլերականների ոչնչացրած միլիոնավոր հրեաների համար, հեղինակներն այն միտքն են հայտնում, որ ժամանակակից Թուրքիայի կողմից ցեղասպանության փաստի ընդունումը կարող է նպաստել երկու հարևան պետությունների՝ Հայաստանի և Թուրքիայի միջև նորմալ հարաբերությունների հաստատմանը և դրանք նոր մակարդակի բարձրացնելուն: Մեր համոզմամբ, առաջարկվում էր լրջմիտ մի մոտեցում, որն ակնհայտորեն տարբերվում է այդ հարաբերությունների բարելավման սիրույն Հայոց Մեծ եղեռնը անտեսա անելու անհեռանկար քայլերից:

1 Նշվ. աշխ., էջ 41:

Հայոց ցեղասպանության պատմական ակունքների բացահայտման ինքնատիպ մոտեցում է մշակել ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը՝ 1995-ին հրատարակված մենագրության մեջ[1]:

Աշխատության «Հայկական հարցի լուծման թուրքական կոնցեպցիան: Ցեղասպանությունը— Հայկական հարցի լուծման թուրքական եղանակ» գլխում Լ. Խուրշուդյանը զարգացնում է Հայոց եղեռնի պատճառների խորքային տեսակետ: Նա գտնում է, որ 11—12-րդ դարերում միջինասիական թուրքական ցեղերը այլ տարածքների հետ ևվաճելով նաև Հայկական լեռնաշխարհը, ի սկզբանե վարեցին Հայաստանը հայաթափելու, **հայոց պատմական Հայրենիքը սեփական Հայրենիք դարձնելու** (ընդգծումն իմն է— Մ. Կ.) քաղաքականություն: Ընդ որում, թուրքերն այդ նոր Հայրենիքը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի՝ հայ ժողովրդի[2]:

Այդ ավանդական քաղաքականությունը պետական ծրագրի տեսք է ստանում 1860—70-ական թվականներին, երբ նոր օսմանները առաջ են քաշում Պանօսմանիզմի կոնցեպցիան, ըստ որի Օսմանյան կայսրությունում, անկախ մուսուլման կամ ոչ մուսուլման լինելուց, գոյություն ուներ մեկ ազգ՝ օսմանները, որտեղ թուրքերը պետք է տիրապետող դիրք ունենային:

Սակայն, ինչպես նշում է Լ. Խուրշուդյանը, հետագայում պարզ դարձավ, որ Պանօսմանիզմի քաղաքականության կենսագործումը չի կարող արգելակել ազգային ազատագրական պայքարի այն հզոր պրոցեսը, որ սկիզբ էր առել կայսրությունում: «Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու համար պետք է մշակվեր ազգային քաղաքականության միանգամայն նոր կոնցեպցիա...

Ահա այսպիսի պայմաններում ծնունդ է առնում Օսմանյան կայսրությունում ազգային հարցը, և, իհարկե, առաջին հերթին **Հայկական հարցը եղեռնի միջոցով լուծելու կոնցեպցիան** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), որի հեղինակը Աբդուլ Համիդն էր»,— գրում է նա[3]:

Հեղինակը մերժում է պատմագիտական գրականության մեջ ընդունված այն տեսակետը, ըստ որի հայկական եղեռնի կենսագործումը կապվում է միայն Երիտթուրքերի և Պանթուրքիզմի հետ և գտնում է, որ այն

1 Լենդրուշ Խուրշուդյան: Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը: Երևան, 1995:

2 Նշվ. աշխ., էջ 32:

3 Նշվ. աշխ., էջ 33:

սկսել է կենսագործվել շատ ավելի վաղ, Աբդուլ Համիդի կողմից, 1890-ական թվականներից: Նա գրում է, որ Երիտթուրքերը, որոնք իշխանության գլուխ անցան 1908-ին, Թուրքիայի փրկությունը գտնում էին Պանթուրքիզմի մեջ, ուստի հրաժարվելով Պանօսմանիզմից, այն բարձրացրին պետական քաղաքականության մակարդակի:

Մեկնաբանելով Պանթուրքիզմի կենսագործման երեք փուլերը՝ թուրքիզմ— օղուզականություն— պանթուրանիզմ, Լ. Խուրշուդյանը եզրակացնում է, որ այդ գաղափարների իրականացումը հանգեցնում է Հայաստանի և հայ ժողովրդի անխուսափելի ոչնչացմանը և ահա թե ինչու. «Պանթուրքիզմի գաղափարախոսության համաձայն,— գրում է նա,— հայ ժողովուրդը կամ պետք է ձուլվեր, կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր: Հայկական «սեպը», որը խանգարում էր Մեծ Թուրանի գաղափարի իրականացմանը, պետք է դադարեր գոյություն ունենալուց: Երրորդ ուղի հայ ժողովրդի համար Պանթուրքիզմը չէր ընդունում»[1]:

Ընդգծելով, որ Թուրքիզմը թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսությունն էր, իսկ Պանթուրքիզմը՝ թուրքալեզու ժողովուրդների, հեղինակը զուգահեռաբար դնում է նաև կրոնական գործոնի հարցը և նշում, որ մահմեդականությունը մշտապես ունեցել է իր կարևորագույն տեղն ու դերը թե՛ ազգային և թե՛ համթուրքական գաղափարախոսությունների ձևավորման և իրականացման գործում, ուստի Օսմանյան կայսրության ղեկավարությունը արհեստականորեն սրում էր մուսուլմանների և քրիստոնյաների հարաբերությունները: «Հայկական ջարդերի և եղեռնի իրականացման գործում,— գրում է նա,— խոշոր դեր է կատարել մուսուլմանական, կրոնական ֆանատիկոսությունը: Այդ նպատակի համար օգտագործվել է նաև Պանիսլամիզմը»[2]:

Խոսելով 1908-ին Երիտթուրքերի իշխանության գալու, Սալոնիկի 1910 և 1911 թվականների համաժողովներում նրանց ընդունած որոշումների մասին, Լ. Խուրշուդյանը եզրակացնում է. «Եվ այսպես, ընտրությունը կատարված էր, Պանթուրքիզմը դառնում էր Թուրքիայի պետական քաղաքականություն: Սալոնիկի 1910 և 1911 թվականների համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանցիականացնելու և մահմեդականացնելու մասին, հզանակում էր հայ ժողովրդի ցեղասպանության ծրագրի ընդունում...

1 Նշվ. աշխ., էջ 35:
2 Նշվ. աշխ., էջ 36:

Արևմտահայության ճակատագիրը որոշված էր. թուրքերը վճռել էին ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ: Ընդունելով այդ ծրագիրը՝ թուրքերը, սակայն, սպասում էին նպաստավոր ժամանակի այն իրագործելու համար»[1]:

Եվ այդ հարմար ժամանակը եկավ. 1914-ի օգոստոսի 1-ին սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Լ. Խուրշուդյանը, թուրքերը համոզված էին, որ պատերազմի կրակներում պետականություն չունեցող արևմտահայության գենոցիդը կանցնի աննկատ, իսկ դաշնակից Գերմանիայի համաձայնության պայմաններում Անտանտը, եթե անգամ ցանկանար, ի վիճակի չէր լինելու թուրքերին խանգարել իրականացնելու իրենց հայաջինջ ծրագիրը: Այդ կապակցությամբ հեղինակը հիշատակում է 1914 թ. օգոստոսի 6-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված պայմանագրի 5-րդ հոդվածը, որտեղ ասված էր, որ Գերմանիան կօգնի Օսմանյան կայսրության արևելյան սահմանները շտկել այնպես, որ Թուրքիայի համար ապահովի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ: Դա նշանակում էր, որ Գերմանիան իր համաձայնությունն էր տալիս օգնել Թուրքիային՝ նրա պանթուրքական ծրագրերի իրականացման գործում[2]:

Այնուհետև հեղինակը խոսում է 1915-ի սկզբներին Երիտթուրքերի կուսակցության կենտկոմի՝ Թալեաթի նախագահությամբ տեղի ունեցած գաղտնի նիստի մասին, որը որոշեց արևմտահայության գենոցիդի և տեղահանության կոնկրետ եղանակները, 1915-ի ապրիլի 15-ին կազմված պաշտոնական հրահանգի մասին՝ ստորագրված Թալեաթի, Էնվերի ու Նազըմի կողմից:

«1915—1916 թվականներին իրականացվեց արևմտահայության ցեղասպանության պանթուրքիստական ծրագիրը,— ամփոփում է Լ. Խուրշուդյանը: Ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ:

Արևմտյան Հայաստանը հայաթափվեց: Հայ ժողովուրդը 1915 թ. եղեռնը անվանեց Մեծ եղեռն:

Արևմտահայության բնաջնջումից հետո Թալեաթը հայտարարեց. «Հայկական հարց այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր գոյություն չունեն»: Թուրքիան Հայկական հարցը Արևմտյան Հայաստանում լուծեց՝ ոչնչացնելով արևմտահայությանը»[3]:

1 Նշվ աշխ., էջ 38—39:
2 Նշվ. աշխ., էջ 39:
3 Նշվ. աշխ., էջ 40:

«Սփյուռքահայությունը և Հայկական հարցը: Հայկական հարցի վերածնունդը» գլխում Լ. Խուրշուդյանը հանգամանորեն անդրադարձել է Հայկական հարցի լուծման և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ սփյուռքահայության մղած անդադրում պայքարին, նշել, որ այդ պայքարում արմատական շրջադարձ տեղի ունեցավ Մեծ եղեռնի 50-ամյակից հետո, երբ նախահշվեցին պայքարի նոր ուղիներ, մշակվեց նոր մարտավարություն: Իսկ այդ պայքարն ընթանում էր ծանրագույն պայմաններում, որովհետև Խորհրդային Հայաստանին պարտադրվել էր հրաժարվել Հայկական հարցից ու հայոց հայրենիքի պահանջատիրությունից:

Նշվում է, որ սփյուռքահայ քաղաքական միտքը ավելի մեծ ուշադրություն է դարձնում միջազգային կազմակերպությունների վրա ազդելու գործնական ուղիների, ծրագրերի մշակմանն ու գործադրմանը, և այդ բնագավառում զգալի գործ է կատարում 1972-ին հիմադրված Ամերիկայի հայկական համագումարը: Պայքարի առաջին սլաք է մղվում հայոց ցեղասպանության դատապարտման հարցը՝ արդարացիորեն ելնելով նրանից, որ Եղեռնի ընդունումն ու դատապարտումը կհանգեցնի Հայկական հարցի լուծման անհրաժեշտությանը:

Հեղինակը կանգ է առնում նաև Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի երկրորդ ուղու՝ անհաբեկչական շարժման վրա, որն սկիզբ առավ 1973-ից, երբ ԱՄՆ-ի Սանտա-Բարբարա քաղաքում 73-ամյա Գուրգեն Յանիկյանը, որի ընտանիքի բոլոր անդամները զոհ էին գնացել Մեծ եղեռնին, գնդակահարեց թուրքական հյուպատոսին և նրա օգնականին: Գ. Յանիկյանի օրինակին հետևեցին շատ ու շատ հայ երիտասարդներ, որոնք զենքը ձեռքին պայքարի դուրս եկան Հայկական հարցի լուծման համար, և հայ ժողովուրդը նորից մտավ ազգային ազատագրական պայքարի գինված փուլը: Ստեղծվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ԱՍԱԼԱ), որը կարևոր ներդրում ունեցավ այդ պայքարում: ՀԱՀԳԲ-ն անհաբեկչական գործողություններ կազմակերպեց Բելգիայում, Ավստրիայում, Աթենքում, Թուրքիայում, Ժնևում, Ֆրանկֆուրտում, Կոպենհագենում, Միլանում, Հռոմում, Փարիզում, Մադրիդում, Կանադայում, ԱՄՆ-ում:

Լ.Խուրշուդյանը նշում է նաև այն բոլոր նմանատիպ կազմակերպությունները, որոնք ստեղծվեցին ՀԱՀԳԲ-ի պառակտումից (1983 թ.) հետո:

Խոսվում է 1975-ին ստեղծված «Հայկական ցեղասպանության Արդարության մարտիկներ» կազմակերպության մասին, որը յայնաձավալ

անհաբեկչական գործողություններ էր կատարում թուրք դիվանագետների և թուրքական կառավարական հաստատությունների դեմ[1]: 1983-ին այս կազմակերպությունը վերանվանվում է Հայ հեղափոխական բանակ, որի կազմակերպած անհաբեկչական գործողությունների մեջ հատկապես աչքի էր ընկնում Լիսաբոնի անձնասպանական գործողությունը: 1983 թ. հուլիսի 27-ին հինգ հայ երիտասարդներ պայթուցիկ նյութերով բեռնված ավտոմեքենան քշեցին Լիսաբոնի թուրքական դեսպանատան դարպասից ներս, պայթեցրին դեսպանատունը և իրենք էլ զոհվեցին:

Հեղինակն իրավամբ գտնում է, որ հիշյալ կազմակերպությունների գործունեությունը, որը մեր նորագույն շրջանի ազգային ազատագրական պայքարի էջն է, կարոտ է հատուկ ուսումնասիրության: «Անկախ բազմաբնույթ վիճահարույց հարցերից,— գրում է Լ. Խուրշուդյանը,— մի բան անկասկած է. անհաբեկչական կազմակերպությունները հասան իրենց նպատակին... Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տարաձայնություններ են գոյություն ունեցել այդ կազմակերպությունների միջև, որ կուսակցությանն են հարել, ինչ գաղափարախոսության են դավանել, բոլոր այն երիտասարդները, որոնք զենքը ձեռքին պայքարել են կորցրած Հայրենիքի ազատագրման համար, որպես ազգային հերոսներ, իրենց արժանավույն տեղն են գրավել հայոց նորագույն պատմության մեջ:

Սփյուռքահայ երիտասարդության անձնազոհ անհաբեկչական պայքարի շնորհիվ Հայկական հարցը դուրս եկավ մոռացության շրջանից և նորից միջազգային ճանաչում գտավ»[2]:

Հետագա շարադրանքում Լ. Խուրշուդյանը մանրամասնորեն խոսում է բոլոր այն միջազգային համաժողովների մասին, որտեղ արծարծվել է հայոց ցեղասպանության ճանաչման հարցը. 1973-ի Ժնևի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթահանձնաժողով, որը հայերի ցեղասպանությունը որակեց իբրև ցեղասպանություն, 1975 թ.— ԱՄՆ-ի կոնգրես, 1983 թ.— Կանադայի եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, որը ճանաչեց հայերի ցեղասպանությունը, կոչ ուղղեց ՄԱԿ-ին և այլն:

Հեղինակը հատուկ կանգ է առնում 1984-ի ապրիլի 16-ին Փարիզում տեղի ունեցած ժողովուրդների մշտական դատական ատյանի՝ հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ նստաշրջանի ընդունած 6 կետից բաղկացած որոշման վրա:

---

1 Նշվ. աշխ., էջ 60—61:

2 Նշվ. աշխ., էջ 63:

Նրա առանձնակի ուշադրության առարկան է դարձել 1987 թ. հունիսի 18-ին Եվրոպական պառլամենտի ընդունած հինգ էջից բաղկացած բանաձևը, որը գրքում զետեղվել է ամբողջությամբ: «Այսպիսով, ինչպես տեսնում ենք,— եզրակացնում է Լ. Խուրշուդյանը,— Հայկական հարցի հետապնդման բնագավառում ձեռք բերվեցին ակնառու հաջողություններ: Անհերքելի իրողություն է այն փաստը, որ Հայկական հարցը շնորհիվ նոր ռազմաքաղաքական մարտավարության հանվեց մոռացության շրջանից և դարձավ միջազգային հարաբերությունների, հատարակական, քաղաքական, մշակութային, կրոնական կազմակերպությունների և պետությունների գործունեության օրակարգի հարց»[1]:

«Հայաստանի երկրորդ հանրապետությունը և Հայկական հարցը» գլխում Լ. Խուրշուդյանը, ի թիվս շատ այլ հարցերի, անդրադառնում է նաև նոր անկախ Հայաստանի Հանրապետությունում ցեղասպանության միջազգային ճանաչման շուրջ ստեղծված հատարակական-քաղաքական իրադրությանը:

Նշվում է, որ երբ 1988 թ. փետրվարին Հայաստանում սկսված ազգային ազատագրական հզոր շարժմամբ հայ ժողովուրդը մտավ իր պատմության նոր փուլը, որպես առանցքային հիմնահարցեր առաջ քաշվեցին նաև Հայկական հարցի, Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման, 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը չեղյալ հատարելու պահանջները:

1988-ի նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և առաջարկություն ներկայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին: Ապրիլի 24-ը հայտարարվեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ընդգծվում է, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ստեղծեց հատուկ հանձնաժողով՝ մինչ այդ կնքված և Հայաստանին պարտադրված բոլոր հակահայկական պայմանագրերը ապօրինի հայտարարելու վերաբերյալ որոշման նախագիծ պատրաստելու նպատակով[2]:

Աշխատության վերջաբանում Լ. Խուրշուդյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Հայ ժողովրդի պատմության դժվարին պահին է առաջացել Հայկական հարցը և այնուհետև մի սերնդից փոխանցվելով մյուսին՝ որպես պատմական սրբազան բեռ հանձնվել է մեր սերնդին:

Հայկական հարցը հայոց պատմական հայրենիքում անկախ պետականության վերականգնման և ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ապահովումն է: Այդ առումով Հայկական հարցը ազգային գաղափարախոսության առանցքն է, ազգային ոգին: Հայկական հարցից հրաժարումը ճակատագրական նշանակություն կունենա հայ ժողովրդի համար: Ազգային գաղափարախոսությունից զուրկ, անառագաստ ժողովուրդը դատապարտված է կործանման: Հայրենիքը ժողովրդինն է, և ոչ մի կուսակցություն կամ քաղաքական կազմակերպություն իրավունք չունի տնօրինելու նրա ճակատագիրը: Հայաստանի Հանրապետության խորհրդարանը պարտավոր է օրենք ընդունել այն բոլոր քաղաքացիներին և կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու մասին, որոնք վարկաբեկում կամ հանդես են գալիս Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ճանաչման դեմ...

Հայ ժողովրդի ներկա սերունդը պարտավոր է Հայկական հարցի լուծման համար գործադրել բոլոր ջանքերը, հաջողության չհասնելու դեպքում այդ պատմական բախտի բեռը պետք է փոխանցվի հաջորդ սերունդներին:

Հաղթում է այն ժողովուրդը, որը հավատում է ապագային»[1]:

Հայոց ցեղասպանության 80-ամյակի առիթով Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոնը «Անդրեի զանգակատուն» մատենաշարով լույս ընծայեց «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր» գիտական ուսումնասիրությունների առաջին ժողովածուն[2]: Զետեղված չորս հոդվածներում քննարկվում են հայոց ցեղասպանության պատճառներն ու դասերը, եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները, գենոցիդի իրականացումը և այլ հարցեր: Ժողովածուն տպագրության են երաշխավորել Երևանի պետական համալսարանի հայոց պատմության, համաշխարհային պատմության, միջազգային դիվանագիտության պատմության և տեսության ամբիոնները:

«Անհրաժեշտ է նոր մոտեցում հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրմանը»— այս վերնագիրն է կրում ժողովածուի առաջաբանը, որի հեղինակն է համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը:

---

1 Նշվ. աշխ., էջ 69:

2 Նշվ. աշխ., էջ 70—71:

1 Նշվ. աշխ., էջ 88—89:

2 Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր, մաս 1, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1995:

Գտնելով, որ առ այսօր չկա հայոց ցեղասպանության բազմակողմանիորեն մշակված, ամբողջական պետական գիտական կոնցեպցիա, նա առաջարկում է ելակետային մի շարք դրույթներ: Մասնավորապես Լ. Խուրշուդյանը ևս գտնում է, որ հայ ժողովրդի ցեղասպանությունն սկսել է իրագործվել 1890-ական թվականների սկզբներից և շարունակվել մինչև 1990 թ. հունվարին Բաքվում կազմակերպված ջարդերը, ուստի հայոց ցեղասպանությունն ունի շուրջ հարյուր տարվա պատմություն: Այդ տեսանկյունով նա անընդունելի է համարում հայոց ցեղասպանությունը 1915—1923 թվականներով սահմանափակող ընդհանուր ճանաչում գտած տեսակետը[1]:

Առաջաբանի հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ ավելի լայն առումով հայոց ցեղասպանությունն սկսվել է այն ժամանակահատվածից, երբ թուրքական ցեղերը գրավեցին Փոքր Ասիան ու Հայաստանը և հիմք դրեցին Օսմանյան կայսրությանը: Գենոցիդի այդ «խաղաղ» ժամանակաշրջանը տևել է 500 տարի և, ըստ հեղինակի, կենսագործվել է հետևյալ ձևերով. հայ ժողովրդի ձուլում, մահմեդականացում, երկրից արտաքսում և մասնակի ջարդեր: Այդ ձևերով թուրքերը շուրջ կես հազարամյակ պայքարում էին հայոց պատմական Հայրենիքը սեփական Հայրենիք դարձնելու համար[2]:

Առարկելով Յու. Բարսեղովի այն տեսակետին, որն այդ 500 տարին համարում է հայոց ցեղասպանության նախապատմության ժամանակաշրջան, Լ. Խուրշուդյանն առաջարկում է այն համարել գենոցիդի առաջին փուլ, երբ թուրքերը դեռ հույս ունեին Հայաստանը հալածանքի ոչ թե նրանց ֆիզիկական ոչնչացման, այլ սպիտակ գենոցիդի միջոցով: Իսկ 1890—1990 թթ. ցեղասպանությունը նախորդ շրջանից տարբերվում է նրանով, որ թուրքերը սպիտակ գենոցիդից անցան ամբողջ հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրագործմանը:

Այնուհետև Լ. Խուրշուդյանը զարգացնում է այն տեսակետը, որ արևմտահայության Մեծ եղեռնով պանթուրքիզմը լուծեց իր առաջին հիմնական խնդիրը՝ Թուրքիան թուրքացվեց, մահմեդականացվեց: Սակայն պանթուրքիզմն ուներ ևս երկու չլուծված ծրագրային խնդիր՝ Օղուզական պետության ստեղծումը, որը պետք է ներառեր միջինասիական տարածքները և որն իրականացնելու համար պետք է ոչնչացվեր Արևելյան Հայաստանը, և Մեծ Թուրանի պետության ստեղծումը, որի

[1] Նշվ. աշխ., էջ 5:
[2] Նշվ. աշխ., էջ 6:

կենսագործմամբ պետք է մասնատվեր Ռուսական կայսրությունը: Ձնված ձեռք բերված հաջողություններին, այնուամենայնիվ, պանթուրքիզմը չհասավ վերոհիշյալ երկու խնդիրների լուծման, որոնք, սակայն, մնացին օրակարգում[1]:

Առաջաբանն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ. «Հայոց մարտավարական և ռազմավարական ծրագրերի առանցքային խնդիրը պետք է լինի պանթուրքիզմի վտանգին դիմակայելու համակարգի ստեղծումը:

Դրանք են հայոց ցեղասպանության պատմական դասերը, դրանք են հայոց ազգային ազատագրական պայքարի ղեկավարների ու գաղափարախոսների պատգամները, դա է հայոց ազգային գաղափարախոսության հրամայականը»[2]:

Ժողովածուում զետեղված չորս հոդվածներից առաջինը Լ. Խուրշուդյանինն է՝ «Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը» վերնագրով:

Հոդվածի հենց սկզբում հեղինակն ահազանգում է, որ հայոց ցեղասպանությունը ծնող պատճառներն այսօր էլ վերացված չեն, քանի որ պանթուրքիզմը չի հասել իր վերջնական նպատակին: «Պատմական հարմար պահին պանթուրքիզմը անկասկած կփորձի հասնել իր վերջնական նպատակին՝ Մեծ Թուրանի պետության ստեղծմանը, որը կարող է իրականացվել միայն Զանգեզուրի գրավմամբ և հայ ժողովրդի նոր գենոցիդով»,— զգուշացնում է պատմաբանը[3]: Դրան հետևում է գործնական առաջարկը՝ ելնելով պատմական այդ անխուսափելի վտանգի սպառնալիքից՝ հայ ժողովուրդը, նրա քաղաքական ղեկավարությունը, ազգային գաղափարախոսները պարտավոր են խոր ու բազմակողմանիորեն վերլուծել հայոց ցեղասպանության պատճառները, համապատասխան դասեր քաղել դրանից և հուսալի միջոցներ ձեռք առնել պանթուրքիզմի հարձակմանը դիմակայելու համար[4]:

Սկզբունքային ճշգրտություն ունի Լ. Խուրշուդյանի հետևյալ եզրահանգումը. «Ստեղծված պատմական պայմաններում միամտություն էր խոսել թուրքերի հետ լեզու գտնելու, հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները՝ հայոց Հայրենիքի ազատագրության, հայ պետականության

[1] Նշվ. աշխ., էջ 7:
[2] Նշվ. աշխ., էջ 8:
[3] Նշվ. աշխ., էջ 9:
[4] Նույն տեղում:

վերականգնման հիմնահարցերը թուրքերի հետ խաղաղ լուծելու մասին: **Թուրքերի և հայերի միջև հաշտության եզրեր չկային** (ընդգծումն իմն է— Մ.Կ.): Թուրքերը, նվաճելով հայոց Հայրենիքը, այն վերածում էին սեփական հայրենիքի»[1]: Տրամաբանական դատողությունների շղթան հեղինակին հանգեցնում է այն մտքին, որ հայ ժողովրդին մնում էր միայն մի ելք՝ ձեռք բերելով քիչ թե շատ հուսալի դաշնակիցներ, պայքարի դուրս գալ թուրքական նվաճողների դեմ, և հայ ժողովուրդը ընտրեց պայքարի ուղին: Երկարատև ապարդյուն որոնումներից հետո հուսախաբվելով Արևմտյան պետություններից՝ նա ի վերջո հանգեց ռուսական կողմնորոշման:

Փաստերի տրամաբանությամբ հեղինակը ցույց է տալիս, որ Ռուսաստանը և Թուրքիան ստրատեգիական առումով հավերժ թշնամիներ են, ուստի հայ ժողովուրդը իր պատմական ճակատագիրը պետք է մշտապես կապի Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ կունենա այդ երկիրը:

Հին փաստերին տալով նոր մեկնաբանություններ, Լ. Խուրշուդյանը նշում է, որ 1896—1898 թվականներին հայ քաղաքական կուսակցությունները **հրաժարվում են ֆիդայական կռվի տակտիկայից և ամենում երկրում զինված ուժեր պատրաստելուն՝ ընդհանուր ապստամբության համար** (ընդգծումն իմն է— Մ. Կ.)[2]:

Ուշադրություն հրավիրելով Դաշնակցության առաջարկով 1907 թ. դեկտեմբերի 27—29-ը Փարիզում կայացած Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ կոնգրեսի ընդունած որոշումների վրա, նա ընդգծում է, որ այդ պահից արևմտահայությունը դադարեցնում էր ազգային ազատագրական զինված պայքարը և Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի հետ կուլիսների մեջ մտնում տիրող կարգերը տապալելու, երկրում պառլամենտական, սահմանադրական կարգեր հաստատելու համար: «Ստեղծվեց այն պատմական շանսը,— այդ առթիվ գրում է Լ. Խուրշուդյանը,— որ երկու ժողովուրդների քաղաքական ուժերին հնարավորություն էր տալիս փոխզիջումների գնով հաշտության եզրեր գտնել, կյանքի կոչել Արևմտյան Հայաստանի կարգավիճակի ընդունելի տարբերակ»[3]:

1 Նշվ. աշխ., էջ 12:
2 Նշվ. աշխ., էջ 15:
3 Նշվ. աշխ., էջ 16:

Զարգացնելով իր միտքը, հեղինակն այնուհետև գրում է, որ պատմական նման պայմաններում, բնականաբար, **դադարեցվեց ազգային-ազատագրական պայքարը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), օրակարգից գործնականում հանվեց արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության պատրաստելու հարցը: «Ուրեմն,— շարունակում է նա,— անիմաստություն է խոսել ազգային ազատագրական պայքարի պարտության մասին: Հայոց ազգային-ազատագրական պայքարը դադարեցվել է մարտավարությունը փոխելու պատճառով, իսկ ավելի ուշ՝ 1907 թվականին այն ընդհանրապես պաշտոնապես հանվել է օրակարգից՝ Հայկական հարցը նոր պայմաններում խաղաղ ձևով լուծելու ակնկալիքների պատճառով»[1]:

Կարծում ենք, որ Լ. Խուրշուդյանի առաջ քաշած հիշյալ դրույթը առիթ է տալիս մտածել 20-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժման վերագնահատման մասին ընդհանրապես:

Շարունակելով միտքը, Լ. Խուրշուդյանն ընդգծում է, որ վճռական խոսքը պատկանում էր թուրքերին, սակայն վերջիններս հայերի խաղաղարար քայլերին պատասխանեցին 1909-ի Ադանայի կոտորածով, որին զոհ գնացին շուրջ 30 հազար մարդ: Մեկ անգամ ևս ընդգծվում է, որ Սալոնիկի 1910 և 1911 թվականների երիտթուրքերի համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանացնելու և մահմեդականացնելու մասին, իրականում նշանակում էր ամբողջ հայ ժողովրդի ցեղասպանության պետական ծրագրի ընդունում[2]:

Նշելով, որ 1915—1916 թվականներին, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հարմար պահից, երիտթուրքերն իրականացրին արևմտահայության ցեղասպանության պանթուրքական ծրագիրը՝ ոչնչացնելով 1,5 միլիոն հայ, Լ. Խուրշուդյանը գրում է, որ Մեծ եղեռնի իրագործումից հետո Թուրքիայում մշակվեց Հայկական հարցի և ցեղասպանության պատմագիտական պետական կոնցեպցիա, որի հիմքում դրվեցին հետևյալ հիմնադրույթները.

ա) Հայերը եկվորներ են, Արևմտյան Հայաստանը նրանց Հայրենիքը չէ, նրանք երբեք պետականություն չեն ունեցել:

բ) Թուրքերը և հայերը դարեր շարունակ ապրել են բարեկամաբար, հայերի վիճակը Թուրքիայում լավ է եղել: Նրանց հարաբերությունները վատացել են Արևմտյան տերությունների և մասնավորապես Ռու-

1 Նշվ. աշխ., էջ 17:
2 Նշվ. աշխ., էջ 18:

սաստանի քաղաքականության պատճառով: Չլիներ հայերի արևմտյան և հատկապես ռուսական կողմնորոշումը, չէր լինի 1915 թվականը:

գ) 1915—1916 թվականներին Թուրքիայում հայերի ցեղասպանություն չի եղել, այլ տեղի է ունեցել հայերի դեպորտացիա ռազմական գործողությունների գոտուց, որի ընթացքում հայերի կորուստներն անխուսափելի էին:

դ) Հիշյալ տարիներին տեղի է ունեցել ոչ թե հայերի, այլ թուրքերի գենոցիդ, որին զոհ են գնացել շուրջ 600 հազար թուրքեր[1]:

Պատմական հարևանցի հայացք նետելով նաև հետագա իրադարձությունների վրա՝ մինչև Հայաստանի խորհրդայնացումը, Լ. Խուրշուդյանն այնուհետև թվարկում է պատմության դասերը, որոնք հետևյալն են.

1. Քանի դեռ չի իրագործվել պանթուրքիզմի գաղափարախոսությունը, կա և գոյություն կունենա պանթուրքիզմն իր վտանգներով:

2. Եթե պանթուրքիզմը սպառնում է Ռուսական կայսրության և հայ ժողովրդի գոյությանը, ուրեմն նրանց շահերը առնչված են պատմական ճակատագրով: Այդ առումով էլ Հայաստանի ճակատագիրը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ:

3. Պանթուրքիզմի վտանգից խուսափելու միակ ելքը հայ քաղաքական մտքի նախորդ սերունդների մշակած մարտավարության և ռազմավարության սկզբունքներին հարազատ մնալն է: Այդ սկզբունքներն են՝ պայքարել ուժեղ, անկախ հայկական պետականության կայացման համար, ստեղծել հզոր, մարտունակ բանակ, պահպանել ավանդական ռուսական կողմնորոշումը[2]:

Վերջում հեղինակը վերստին հիշեցնում է, որ պատմության դասերը հաշվի չառնելու դեպքում հայոց մեծ ցեղասպանությունը կդառնա անխուսափելի:

Ժողովածուի երկրորդ հոդվածը կրում է «Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները (15-րդ դարի վերջ—1915 թ.)» վերնագիրը, որի հեղինակն է պատմ. գիտ. թեկնածու Աշոտ Մելքոնյանը: Պատմաժողովրդագրական այս ակնարկը գրված է Էրզրումի նահանգի օրինակով, որը Արևմտյան Հայաստանի կենտրոնական և ամենաընդարձակ վարչամիավորն էր՝ 70—80 հազար քառ. կմ տարածքով, շուրջ 1000 հայկական գյուղերով, 400 000 հայ ազգաբնակչությամբ:

[1] Նշվ. աշխ., էջ 23—24:

[2] Նշվ. աշխ., էջ 34:

Հոդվածում քննության է առնվում մի կարևոր հիմնահարց, որը, ինչպես նշում է հոդվածագիրը, ավելի ակնառու և անհերքելի է դարձնում գենոցիդի առկայության խնդիրը Օսմանյան Թուրքիայում. դա հայ բնակչության ժողովրդագրական զարգացման ընթացքի հարցն է 15-րդ դարի վերջից, այսինքն թուրքական նվաճման շրջանից մինչև 1915 թ. Մեծ եղեռնը:

Հոդվածի հեղինակը ուշադրություն է հրավիրում այն չափազանց կարևոր հանգամանքի վրա, որ ուսումնասիրողները, գրեթե առանց բացառության, հայոց ցեղասպանության գաղափարական ակունքները փնտրել են 19-րդ դարի վերջին քառորդում՝ սուլթան Համիդի գահակալման շրջանում, 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի հանդես գալու փուլում: «Որպես կանոն,— դիպուկ կերպով նկատում է հոդվածագիրը,— անուշադրության է մատնվել դրա նախորդ ժամանակաշրջանը, որում Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական զարգացման բացահայտումը հնարավորություն է տալիս **պատասխանելու կենսական մի շարք հարցերի** (ընդգծումն իմն է— Մ. Կ.)՝ արևմտահայության իրավիճակը Օսմանյան կայսրությունում, հայ ազգային ազատագրական շարժման սոցիալ-քաղաքական ու տնտեսական նախադրյալները, հայկական նահանգներում ժողովրդագրական գործընթացների միտումները և այլն[1]:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունների վկայակոչմամբ ցույց տալով, որ 17-րդ դարի առաջին կեսին Էրզրումի նահանգը Արևմտյան Հայաստանի էթնիկապես ամենամիատարր վարչամիավորներից էր, հեղինակն այնուհետև գծում է դեմոգրաֆիական հետագա փոփոխությունների պատկերը: Նշվում է, որ երկատված Հայաստանի էթնիկական դիմագիծը զգալիորեն փոխվեց այստեղ թուրքալեզու և իրանալեզու (գերազանցապես քրդական) ցեղերի բնակեցման և հայ բնակչության զանգվածային կոտորածների ու մահմեդականացման հետևանքով: Այդ առումով հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 16-րդ դարի սկզբներից սկսած Օսմանյան կայսրության հարավային և հարավարևելյան շրջաններից քրդերի ներհոսը Հայկական լեռնաշխարհ:

Փաստերի թելադրանքով Ա. Մելքոնյանը հանգում է այն շատ էական եզրակացության, որ մինչև 19-րդ դարը, այսինքն՝ Արևելքում Ռուսական կայսրության քաղաքականության գործնական ակտիվացումը, Արևմտյան Հայաստանում **էթնիկական եղեռնը** (ընդգծումն իմն

[1] Նշվ. աշխ., էջ 38:

է— Մ. Կ.) բավականաչափ արագ առաջ էր ընթացել, և հայ-մահմեդական հակամարտությունն առկա էր: «Այնպես որ,— գրում է նա,— անհամոզիչ են բոլոր այն քաղաքագետների փաստարկները, թե իբր մինչև Անդրկովկաս ռուսների ներթափանցումը, հայ բնակչությունը Օսմանյան կայսրությունում ապրում էր բարեկեցիկ կյանքով և նրա թվաքանակը անշեղորեն աճում էր»[1]:

Այնուհետև Ա. Մելքոնյանը խոսում է 1828/29 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո 75 հազար արևմտահայերի (մեծամասամբ էրզրումցիներ) Անդրկովկաս արտագաղթելու, 1853/56 թթ. Ղրիմի պատերազմից հետո արևմտահայերի նոր արտագաղթի, Շամիլի պարտությունից հետո լեռնականներին լքված հայկական բնակավայրերում տեղավորելու, 1877/78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո մեծ թվով էրզրումցիների՝ Արևելյան Հայաստան արտագաղթելու մասին, որոնք պատճառ դարձան Արևմտյան Հայաստանի էթնիկական դիմախեղմանն:

Հերքելու համար այն սխալ տեսակետը, թե իբր մինչև առաջին համաշխարհային պատերազմը Արևմտյան Հայաստանում հայության թվաքանակն իբր աճել է, Ա. Մելքոնյանը բերում է վիճակագրական մի արժեքավոր աղյուսակ, որը փաստական տվյալներով ցույց է տալիս մեկ դարի ընթացքում (1809—1909 թթ.) Էրզրումի նահանգում կատարված ժողովրդագրական շարժի իրական պատկերը: Աղյուսակի տվյալների հիման վրա հեղինակը ընդգծում է Էրզրումի նահանգի աղետալի դեմոգրաֆիկ վիճակը. այդ ժամանակահատվածում հայկական բնակավայրերի թիվը կրճատվել է 58 տոկոսով, իսկ հայ բնակչությունը պակասել է 60 տոկոսով[2]:

Փաստական հանգամանալի ուսումնասիրության հիման վրա Ա. Մելքոնյանը կատարում է խիստ ուշագրավ հետևյալ եզրահանգումը. «Հայսպիսով, մինչև 1915 թ. Հայոց Մեծ եղեռնը, մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացը Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել...

Կարծում ենք, որ 16—19-րդ դարերի ընթացքում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայաթափման երևույթները, որոնք անուշադրության են մատնվել հայոց գենոցիդի հարցերով զբաղվող շատ մաս-

[1] Նշվ. աշխ., էջ 50:
[2] Նշվ. աշխ., էջ 57:

ճագետների կողմից, ավազ կարևոր չեն իբրև ցեղասպանության դրսևորումներ Օսմանյան կայսրությունում...»[1]:

Արևմտահայության ցեղասպանության աբդուլհամիդյան քաղաքականությանն է նվիրված ժողովածուի երրորդ հոդվածը, որի հեղինակն է պատմական գիտությունների թեկնածու Լևոն Մկրտչյանը, ժամանակաշրջան, որը մեր նպատակադրումից դուրս է:

Մեծ եղեռնի մի շարք կարևորագույն հարցեր են շոշափված ժողովածուի վերջին՝ «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից 1914—1918 թթ.» հոդվածում, որի հեղինակն է Էդվարդ Դանիելյանը: Առաջին հայացքից թվում է, թե հոդվածի վերնագիրը ենթադրում է հրապարակի վրա եղած փաստերի վերաշարադրանք, բայց ոչ, հոդվածագիրը գնացել է մեծամասամբ սեփական խոսք ասելու ճանապարհով:

Հոդվածում առաջ է քաշվում այն միտքը, որ հայերի ցեղասպանության ծրագրի գործադրությունն սկսվեց Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու առաջին օրերից, և Օսմանյան կայսրությունում ապրող 2,5—3 միլիոն հայերից կոտորածներից փրկվեցին ընդամենը մի քանի հարյուր հազարը, որոնք դեռևս 1915-ին ծվատվեցին երեք ցաք ու ցրիվ հատվածների: Մի հատվածը մնաց բուն երկրում, սրանք հիմնականում երեխաներ ու երիտասարդ կանայք էին, որոնք մահմեդականացվեցին: Ամենափոքր հատվածը կազմեցին նրանք, որոնց բռնագաղթի ճանապարհին չհաջողվեց սրածել: Նրանք քշվեցին Միջագետքի և Սիրիայի անապատները, և նրանց կեսից ավելին 1916-ին զոհ գնացին ջարդերին, սովին ու համաճարակներին:

Երրորդ հատվածն ապաստանեց Անդրկովկասում և ճակատամերձ շրջաններում: Նրանց մի խոշոր հատվածը՝ 140—150 հազար մարդ, ռուսների կողմից Արևմտյան Հայաստանի գրավումից հետո վերադարձան, բայց 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով նրանք էլ հողմացրիվ եղան:

Արաբական անապատներ աքսորված շուրջ 250 հազար հայերից մոտ 200 հազարը Թուրքիայի պարտությունից հետո վերադարձան Կիլիկյան Հայաստան, որոնք, սակայն, մի քանի ամիս անց լքեցին հայրենի եզերքը՝ անգլո-ֆրանսիական դավաճանության հետևանքով:

Հեղինակը շատ ճիշտ կերպով ուշադրություն է սրում արևելահայերի ցեղասպանության վրա, այդ առթիվ գրելով, որ ուսումնասիրող-

[1] Նշվ. աշխ., էջ 58:

ների տեսադաշտում եղել է միայն արևմտահայության բնաջնջումը: «Մինչդեռ իրողություն է,— գրում է Է. Դանիելյանը,— որ երիտթուրքական վարչակարգը, ի տարբերություն սուլթանականի, դրել էր ընդհանրապես հայ ժողովրդի ոչնչացման հարցը: 1914—1918 թթ. ցեղասպանությունն իր սև ալիքների մեջ էր առել երեք Հայաստաններին էլ՝ և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Պարսկա-Հայաստանը, և՛ Արևելյան Հայաստանը: Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Պարսկահայքի, Ատրպատականի, Բասենի և հարակից այլ շրջանների հայերը՝ կապված վերոհիշյալ շրջաններ թուրքական զորքերի ներխուժման հետ»[1]:

Արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա նկարագրելով թուրքերի սովորական ու անսովոր գազանությունները Խոյում, Սալմաստում, Ատրպատականում, Ալաշկերտում, որտեղից հայ փախստականների թիվը շուրջ 100 հազար էր, հոդվածագիրը կատարում է կարևոր եզրահանգում «Այսպիսով,— գրում է նա,— հայերի Մեծ եղեռնի սրակտիկ գործադրումը սկսվել էր երիտթուրք վարչախմբի 1915 թ. ապրիլի 15-ի տխրահռչակ հայասպան հրահանգից ամիսներ առաջ, և **նրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Հետևաբար, միանգամայն սին են թուրք պատմագրության այն պնդումները, թե հայերը որպես օսմանյան քաղաքացիներ՝ օրինապահ չգտնվեցին, դիմեցին ապստամբության, որի հետևանքով էլ տեղի ունեցան արևմտահայերի տեղահանությունն ու ջարդերը»[2]:

Հոդվածագիրը գտնում է, որ Արևելյան Հայաստանի մեծ մասի հայաթափումը և արևելահայերի կոտորածները ուսանելի դասեր ունեն և դրանց վերհանումը խիստ այժմեական է անցման շրջանում գտնվող մեր ժողովրդի այսօրվա համար՝ ճիշտ կողմնորոշվելու, քաղաքական ճիշտ հաշվարկ անելու և անցյալի սխալները չկրկնելու իմաստով:

Հեղինակի ամփոփիչ եզրակացությունն այն է, որ իր հոգեվարքն ապրող թուրքական կայսրությունը անցյալ դարի վերջին քառորդից հայերի ֆիզիկական ոչնչացումը հռչակեց որպես պետական ուսմունք... Հայերի ցեղասպանությունն իրագործվեց և՛ սուլթանական, և՛ երիտթուրքական, և՛ քեմալական վարչակարգերի կողմից, հետևաբար հայերի ցեղասպանության պատասխանատուն թուրք պետականությունն է[1]:

Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ հրատարակվեց **Ա. Համբարյանի և Ս. Ստեփանյանի** համատեղ աշխատությունը[2]: Մեծ եղեռնի համառոտ պատմությանը նվիրված այս գրքույկում հեղինակները պարզաբանում են «ցեղասպանություն» և «հայասպանություն» հասկացությունները, տալիս հայկական ինքնապաշտպանական հերոսամարտերի պատմության սեղմ շարադրանքը, ամփոփում ցեղասպանության հետևանքները, ներկայացնում արդի ժամանակաշրջանում հայերի ցեղասպանության համաշխարհային ճանաչման խնդիրը, ուրվագծում հիմնահարցի պատմագրությունը:

Նշվում է, որ ցեղասպանության համար վաղեմությունը չկիրառելու վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1968 թ. նոյեմբերի 26-ին ընդունած կոնվենցիան ունի հետադարձ ուժ, այսինքն՝ ցեղասպանության հանցագործները պատասխանատվության են ենթարկվում նաև մինչև այդ կատարած հանցագործության համար:

Առաջ է քաշվում այն տեսակետը, որ հայերի ցեղասպանությունը սկսվեց և իրագործվեց հետևյալ էտապներով: Առաջին՝ 1914 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1915 թ. ապրիլի 20-ը: Երկրորդ՝ 1915 թ. ապրիլի 20—24-ից մինչև նույն թվականի դեկտեմբեր, երբ հիմնականում իրագործվեց արևմտահայության տեղահանությունն ու ֆիզիկական բնաջնջումը: Երրորդ՝ 1915 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. հոկտեմբեր, երբ շարունակվեց արևմտահայության մնացած մասի ոչնչացումը: Միաժամանակ թուրքական զորքերը ներխուժեցին Արևելյան Հայաստան, և սկսվեցին արևելահայության կոտորածները[3]: Այդ իմաստով էլ հեղինակները արևմտահայության 1915 թ. հերոսամարտերին զուգահեռ ներկայացնում են 1918 թ. Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերը[4]:

Գրքույկն ավարտվում է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի 1995 թ. ապրիլի 14-ին ընդունած «1915—1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին» հայտարարությամբ:

---

1 Նշվ. աշխ., էջ 96:
2 Նշվ. աշխ., էջ 97:

1 Նշվ. աշխ., էջ 105:
2 Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան. Հայոց ցեղասպանությունը: Երևան, 1995:
3 Նշվ. աշխ., էջ 14—15:
4 Նշվ. աշխ., էջ 32—38:

Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի արժեքավոր հրատարակություններից է «1915 թ. Հայոց ցեղասպանությունը. պատմության և պատմագրության հարցեր» (Երևան, 1995) **հոդվածների ժողովածուն,** որի պատասխանատու խմբագիրն է Ռուբեն Սաֆրաստյանը:

Ինչպես նշում են առաջաբանի հեղինակներ Ժ. Լիպարիտյանը և Ռ. Սաֆրաստյանը, ժողովածուն ընդգրկում է Հայաստանի պատմաբանների ավագ սերնդի ներկայացուցիչների հոդվածները, որոնց հեղինակները երկար տարիներ զբաղվել են հայոց ցեղասպանության հիմնախնդրի տարբեր կողմերի ուսումնասիրությամբ և թողել արդեն դասական դարձած աշխատություններ: Դա գիտնականների այն սերունդն է՝ Մ. Ներսիսյան, Զ. Կիրակոսյան, Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Ա. Մնացականյան, Մ. Արզումանյան, Վ. Միքայելյան, Ա. Համբարյան և ուրիշներ, որի ջանքերով շուրջ երեք տասնամյակների ընթացքում ստեղծվեց հայոց ցեղասպանության պատմության լավ հիմնավորված և սկզբնաղբյուրների վրա հիմնված կոնցեպցիա: Առաջաբանի հեղինակները ուրվագծում են նաև ցեղասպանության հետագա զարգացման հիմնական ուղղությունները՝ 20-րդ դարի ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրության, ցեղասպանության հետևանքների ու ազդեցությունը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության վրա, ցեղասպանության խնդրի ազդեցությունը հայ քաղաքական մտքի վրա և այլն:

Ժողովածուում զետեղված են Մ. Ներսիսյանի, Վ. Միքայելյանի, Ա. Հովհաննիսյանի, Ստ. Ստեփանյանի, Ա. Համբարյանի, Ռ. Սահակյանի, Ն. Հովհաննիսյանի հոդվածները:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հոդվածը[1] նվիրված է արևմտահայության ցեղասպանության վերաբերյալ գերմանական և թուրքական աղբյուրներին: Հենց այդ աղբյուրների ուսումնասիրման հիման վրա մեծավաստակ պատմաբանը գիտականորեն հերքում է թուրք կեղծարարների այն պնդումները, թե իբրև հայերի ցեղասպանությունը հայատեր **պացիֆիստների** հորինվածքն է: Ցույց տալով աղբյուրների թուրքամետ բնույթը, հոդվածի հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ այդպիսիք նույնպես ընդունում են արևմտահայության ցեղասպանության փաստը: Բերվում են գերմանական պաշտոնատար անձանց՝ դեսպանների, հյուպատոսների, ռազմական գործիչների, ինչպես նաև թուրք բարձրաստիճան պետական գործիչների բազմաթիվ վկայություններ, որոնք աներերքելիորեն ապացուցում են երիտթուրքերի կառավարության կողմից վաղօրոք ընդունված ծրագրի համաձայն ամենայն դաժանությամբ արևմտահայության ցեղասպանության իրականացման փաստը:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանի հոդվածը[1] համատոտ ակնարկ է հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանացի դիվանագետների հաղորդագրությունների մասին: Այդ փաստաթղթերի նշանակությունը կարևորվում է այն տեսանկյունից, որ եթե եղեռնի վերաբերյալ անգլո-ամերիկյան և ֆրանսիական փաստաթղթերը թուրքերի կողմից դիտվում են շինծու և անընդունելի, ապա տվյալ դեպքում գործ ունենք **Թուրքիայի** գիճակից պետության հետ, որի թողտվության պայմաններում էլ իրագործվեց հայոց ոչնչացման ծրագիրը: Հոդվածում ներկայացված են Թուրքիայում հավատարմագրված գերմանական մի խումբ հյուպատոսների և փոխհյուպատոսների զեկուցագրերն ու հաղորդագրությունները՝ հասցեագրված Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանին, Գերմանիայի արտգործնախարարին և ռայխսկանցլերին: Դրանք մանրամասնորեն նկարագրում են հայերի տեղահանման և ոչնչացման սարսափելի պատկերը, բացահայտում հայոց ցեղասպանության պատճառները և երիտթուրքական կառավարության պաշտոնական նպատակները:

Պրոֆեսոր **Ստեփան Ստեփանյանի** հոդվածը[2] նվիրված է հայոց ցեղասպանությանը կայզերական Գերմանիայի մեղսակցության հարցին: Արխիվային նյութերի հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ հայոց ցեղասպանության գործում Գերմանիայի մեղսակցությունը բացահայտ էր, և հայերի դեմ ուղղված գործողությունների հարցում Գերմանիայի և Թուրքիայի կառավարությունների մոտեցումները լիովին համընկնում էին:

Պրոֆեսոր **Ազատ Համբարյանն իր** հոդվածում[3] կանգ է առել Վանի 1915 թվականի հերոսամարտի դրվագների վրա: Ցույց է տրված, որ 1915 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 5-ը Վանի հայ ազգաբնակչության

[1] М. Г. Нерсисян. Геноцид западных армян по немецким и турецким источникам. «1915 թ. Հայոց ցեղասպանությունը. պատմության և պատմագրության հարցեր». Հոդվածների ժողովածու: Պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան: Երևան, 1995, էջ 7—20:

[1] Վարդգես Միքայելյան. Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում: Նշվ. ժողովածու, էջ 21—87:

[2] Степан Степанян. Геноцид армян и пособничество Кайзеровской Германии. Указ. сборник, стр. 47—64.

[3] Ազատ Համբարյան. Վանի 1915 թ. հերոսամարտը: Նշվ. ժողովածու, էջ 65—87:

թուրք ջարդարարներին ցույց տված կազմակերպված դիմադրության, ռուսական բանակի և հայ կամավորականների ժամանակին օգնության հասնելու շնորհիվ նրանք փրկվեցին վերահաս ոչնչացումից: Վանի հերոսամարտը գնահատված է իբրև մի գեղեցիկ էջ հայոց պատմության մեջ, որը բարձրացրեց հայ ժողովրդի պայքարի ոգին և ցույց տվեց, որ նա գիտի պաշտպանել իր մարդկային ու ազգային արժանապատվությունը, գերադասում է մեռնել զենքը ձեռքին, քան հանձնվել թշնամու ողորմածությանը:

Պատմագիտության դոկտոր **Ռուբեն Սահակյանը** անդրադարձել է հայերի ցեղասպանության արտասահմանյան պատմագրության հարցերին[1]: Հակահարված տալով թուրք ժամանակակից պատմաբանների պաշտոնական վարկածին, թե իբրև արևմտահայերը, որպես Օսմանյան կայսրության անվստահելի հպատակներ, ժամանակավորապես տեղափոխվել են ռուս-թուրքական սահմանից հեռու ընկած վայրեր, ինչը չի կարելի որակել որպես ցեղասպանություն, հոդվածի հեղինակն ընթերցողին է հրամցնում ֆրանսիական և անգլիական պատմաբանների գերակշռող մասի կարծիքը, ըստ որի հայերի տեղահանությունը կանխամտածված բռնագաղթ էր, ոչնչացման մի նոր եղանակ՝ թելադրված Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու շարժառիթներով: Ներկայացվում է նաև արևմտյան հեղինակների այն հետևությունը, որ երիտթուրքերի քաղաքականության հիմքում ընկած էր պանթուրքիզմի գաղափարախոսությունը, իսկ կրոնական գործոնը սոսկ ածանցյալ միջոց էր ցեղասպանության իրականացման ճանապարհին:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հոդվածում[2] բացահայտված են հայոց ցեղասպանության պատճառներն ըստ արաբական ժամանակակից հեղինակների: Քննարկված են Ֆայեզ-ալ-Ղոսեյնի, Նաիմ ալ-Յուսուֆիի, Ֆուադ Հասան Հաֆիզի, Մրվան ալ-Մուդավարի, Մուսա Պրեճոի, Սամիր Արբաղի և այլոց համապատասխան աշխատությունները, որոնք առաջ են քաշում հայոց ցեղասպանության երկու հիմնական պատճառ. առաջինը՝ հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների թուրքացման քաղաքականությունը, երկրորդը՝ պանթուրանիզմի կամ պանթուրքիզմի ռասիստական, ֆաշիստական գաղափարախոսությունը: Ընդգծվում է, որ

[1] Рубен Г. Саакян. Зарубежная историография геноцида армян (1970—1990 гг.). Указ. сборник, стр. 88—116.

[2] Николай Оганесян. Арабская историография о причинах геноцида армян 1915 г. Указ. сборник, стр. 117—134.

արաբ հեղինակները հայոց ցեղասպանությունը որակում են իբրև հանցագործություն համայն մարդկության դեմ, որը դեռ չի ունեցել իր նյուրնբերգը:

Ժողովածուում զետեղված է նաև պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչ Անուշ Հովհաննիսյանի հոդվածը[1]: Ցույց է տրվում, որ այնպիսի մասշտաբների հանցագործությունը, ինչպիսին հայերի ցեղասպանությունն էր, պետք է ունենար իր գաղափարախոսական հիմնավորումը, ինչպիսիք դարձան ռասիզմի թուրքական տարատեսակները՝ պանթուրքիզմը և պանթուրանիզմը, որոնց շրջանակներում էլ հայերը ենթակա էին ոչնչացման:

Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ շնորհակալ աշխատանք կատարեց ՀԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսը» (գլխավոր խմբագիր՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյան): Ռ. Գասպարյանի և Ռ. Սահակյանի հոդվածը[2] 1992-ին Մոսկվայում ռուսերեն լույս տեսած «Թալեաթ փաշայի դատավարությունը» գրքի գրախոսությունն է: Գրքի խմբագիրը և նախաբանի հեղինակն է պրոֆ. Ստ. Ստեփանյանը: Հոդվածագիրները գիրքը գնահատել են իբրև արժեքավոր ներդրում հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, որը հնարավորություն կտա ռուսալեզու ընթերցողին՝ իմանալու ճշմարտությունը հայ ժողովրդի մեծ ողբերգության մասին:

Նորայր Սարուխանյանի հոդվածում[3] հեղինակը, քննադատելով անցյալում թույլ տրված գռեհիկ սոցիոլոգիզմի և նիհիլիզմի երևույթները, միաժամանակ պատշաճորեն գնահատում է խորհրդահայ պատմագիտության զարգացման դրական միտումները վերջին տասնամյակներում, արժեքավորում խորհրդահայ պատմաբանների վաստակը հիմնահարցի բազմակողմանի հետազոտության բնագավառում:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ստ. Ստեփանյանի հոդվածը[4], որտեղ ամփոփ ձևով ներկայացված են գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, դեպքերի ան-

[1] Անուշ Հովհաննիսյան. Ռասիզմ և ցեղասպանություն: Նշվ. ժողովածու, էջ 38—46:

[2] Ռ. Հ. Գասպարյան, Ռ. Օ. Սահակյան: Թալեաթ փաշայի դատավարությունը: ՊԲՀ, 1995, հ. 1:

[3] Ն. Բ. Սարուխանյան: Մեծ եղեռնի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ: ՊԲՀ, 1995, հ. 2:

[4] Ստեփան Ստեփանյան. Արմին Վեգները Հայոց մեծ եղեռնի մասին: ՊԲՀ, 1995, հ. 2:

միջական ականատես Արմին Վեգների անհերքելի ու ցնցող վկայությունները: Ընդգծվում է, որ Ա. Վեգները հաստատակամորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի բնաջնջման հարցում, բացահայտորեն անհիմն է համարում հայերի տեղահանության վերաբերյալ ռազմական անհրաժեշտության վարկածը: Ընդհանուր գծերով ներկայացվում են Ա. Վեգների «Հայ մորը», «Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ պարոն Վուդրո Վիլսոնին», «Ճիչ Արարատից» գրվածքները, որոնցում հանցագործությունը հայ ժողովրդի դեմ որակվում է իբրև հանցագործություն համայն մարդկության դեմ, մերկացվում է եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը:

Հոդվածի վերջում նկարագրվում է Ա. Վեգների երկու՝ 1927 թ. և 1968 թ. այցերը Հայաստան:

Ռ. Գ. Սահակյանի և Ռ. Ա. Սաֆրաստյանի հոդվածը[1] գիտական արժեքավոր տեղեկատվություն է Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի մասին: Նշվում է, որ 1995 թ. ապրիլի 21—23-ին ՀԳԱԱ մեծ դահլիճում տեղի ունեցավ ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր պետական հանձնաժողովը՝ Զորյան ինստիտուտի (ԱՄՆ, Բոստոն) մասնակցությամբ: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իսրայելի, Կանադայի, Գերմանիայի, Լիսաբոնի, Կիպրոսի, Շվեյցարիայի մասնագետներ: Բացման խոսք ասաց ՀՀ նախագահ, այնուհետև ուղերձով հանդես եկավ Աննենյան հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն: Մասնակիցներին ողջունեց նաև Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր, ՀԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը:

Լիագումար նիստում առաջին զեկուցումը կարդաց ՀԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և ցեղասպանության բաժնի վարիչ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը՝ «Արևմտահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցեր» թեմայով: Նա նշեց, որ հստակորեն չեն բացահայտված Մեծ եղեռնի գլխավոր պատճառները, մեծ տերությունների դիրքորոշումը, եվրոպական և ամերիկյան պատմաբանները դեռևս չեն ծգտվել Ռուսաստանի և Հայաստանի արխիվների կարևոր նյութերից:

Հայաստանից զեկուցումներով հանդես եկան նաև պատմաբաններ Ռուբեն Սահակյանը, Ռուբեն Սաֆրաստյանը, Անուշ Հովհաննիսյանը, Գայանե Մախմուրյանը:

ԱՄՆ-ից զեկուցեցին պրոֆեսորներ Հելեն Ֆայնը, Ռուբեն Ադալյանը, Պերճ Բերբերօղլին, Ֆրանկլին Լիթլը, Բեն Քերնոնը, Հենրի Հոութեփեյանը, Ռոջեր Սմիթը, Կանադայից՝ Ֆրանկ Սիսինը, Իսրայելից՝ Յահուդա Բաուերը, Գերմանիայից՝ ազգությամբ թուրք Թաներ Աքչամը: Ֆրանսիացի պատմաբան Իվ Թերնոնի զեկուցումը կարդաց պրոֆ. Անահիտ Տեր-Մինասյանը: Պրոֆ. Վահագն Տատրյանը զեկուցեց «Պետության և կառավարող կուսակցության միաձույլ դերը Հայկական ցեղասպանության մեջ» թեմայով:

Գիտաժողովի վերջին նիստը հատկացված էր կլոր սեղանի քննարկումներին, ուր Հայաստանից ելույթներ ունեցան ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը և պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը:

ՀԳԱԱ պարբերաթերթում հանրագումարային հոդվածով հանդես եկավ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը[1]: Նշելով հայոց ցեղասպանության զոհերի թիվը՝ մեկ ու կես միլիոն մարդ, գիտնականը վկայակոչում է արևմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի 1915 թ. դեկտեմբերի 28-ի նամակը՝ ուղղված ամերիկահայերին, որով հայտնվում էր, որ գործադրվել է իսկապես բնաջնջման ծրագիր և վերջին 8—9 ամիսների ընթացքում տեղի է ունեցել աննկարագրելի կոտորած: Մեջբերում է կատարվում Արևմտյան Հայաստան այցելած ֆրանսիացի հրապարակախոս Անրի Բարբիի նոթերից, որտեղ նշվում էր, որ այստեղ չկա մի ծառ, մի ժայռ, մամուռի մի կտոր, որ վկա չլինի մարդու սպանության, որը ողողված չլինի արյան հեղեղներով:

Մ. Ներսիսյանը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Մեծ եղեռնի փաստը ընդունել են մի շարք թուրք գործիչներ և հեղինակներ, այն բացահայտվել է երեք խոշոր դատավարություններում: «Արևմտահայության 1915—1916 թթ. ցեղասպանության հիմնական պատճառը,— եզրակացնում է հոդվածի հեղինակը,— օսմանյան պարագլուխների պանթուրքիստական նպատակներն էին»:

---

1 Ռ. Գ. Սահակյան, Ռ. Ա. Սաֆրաստյան. Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 80-ամյակին: ՊԲՀ, 1995, հ. 2:

1 Մկրտիչ Ներսիսյան. Քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը: «Գիտություն», 24.04.1996:

3. Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի ուսումնասիրումն ու գնահատումը

1915—1916 թվականների հայոց ցեղասպանության դժնդակ ժամանակաշրջանում արևմտահայության մղած օրհասական հերոսամարտերը, որոնք, անտարակույս, թուրքական կառավարության վարած ջարդարարական քաղաքականության արդյունքն էին, մեր ժողովրդի ազգային ազատագրական ոգորումների պատմության թերևս ամենաարյունաթաթավ դրվագներից են, որոնք մղվում էին անհավատալիության աստիճանի ծանր, անհավասար պայմաններում և կարող են պատիվ բերել յուրաքանչյուր փոքր ժողովրդի:

Ժխտել հիրավի դյուցազնական այդ հերոսամարտերի սոսկ ինքնապաշտպանական բնույթը, բացառել դրանց ստիպողական անհրաժեշտությունը և, որն առավել քան անտրամաբանական ու անհեթեթ է՝ ներկայացնել դրանք իբրև պատերազմի պայմաններում թուրքական կառավարության դեմ հայերի կողմից վաղօրոք պատրաստված ապըստամբություն՝ նշանակում է համերաշխել ու ձայնակցել հայ ժողովրդի դահիճներին և պատմության ամեն գույնի կեղծարարներին:

Դաշնակցության գործելակերպը խստագույնս դատապարտելու անդիմադրելի պահանջը էր, անշուշտ, բազմավաստակ պատմաբան Լեոյին հանգեցնում մի այնպիսի ծայրահեղության, որ նա անցյալ դարի 90-ական թվականների արևմտահայերի զանգվածային կոտորածների ու Մեծ եղեռնի հիմնապատճառ համարեր հայկական ապստամբությունները և գրեր, թե առաջին աշխարհամարտի տարիներին մեկ միլիոն հայերի բնաջնջման պատճառը հենց այդ ապստամբություններն են եղել[1]: Կտրականապես առարկելով գործին քաջատեղյակ մի շարք օտար և հայ հեղինակների համապատասխան գրքերում ընդգծված այն հավատի վկայությանը, թե պատերազմի ժամանակ թուրքերի թիկունքում հայկական ապստամբություններ չեն եղել, թե դա ինքնարդարացման թուրքական հորինվածք է, և հայերը զենք են վերցրել միայն ու միայն ինքնապաշտպանության համար, Լեոն հանիրավի դատապարտում է Վանի, Մուշի, Սասունի, Շապին-Գարահիսարի հերոսամարտերը:

Հարկ է նշել, որ մինչև 1960-ական թվականները հայերը ինքնապաշտպանական կռիվների մասին մեզանում որևէ հիմնարար պատմագիտական ուսումնասիրություն չի հրատարակվել: Պատճառը թերևս քաղաքական պատեհապաշտությունն էր, ինչպես նաև այդ իրադարձությունները չհիմնավորված կերպով ամբողջովին դաշնակցության գործունեությանն աղերսելը:

Հիմնահարցի ուսումնասիրման բնագավառում շրջադարձ կատարվեց 1960-ականներից միայն, երբ նախադրյալներ ստեղծվեցին պատմության հարցերի առավել օբյեկտիվ լուսաբանման համար:

«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի առաջաբանում[1] ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, ի մի բերելով արդեն հիշատակված նախորդ աշխատություններում թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի վերաբերյալ իր մշակած հիմնադրույթները, տվեց 1915 թվականի հայոց դյուցազնամարտի արդարացի գնահատականը:

Անդրադառնալով արևմտահայերի ինքնապաշտպանական հերոսամարտին, Մ. Ներսիսյանը գրում է, որ չնայած ծայրահեղ անբարենպաստ պայմաններին, հայերը 1915—1918 թվականներին բազմիցս հանդես եկան իրենց դահիճների դեմ և զենքը ձեռքին մարտնչեցին հանուն իրենց կյանքի ու պատվի: Վանի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Սասունի, Մուեթհայի և մի շարք այլ վայրերի հայ ազգաբնակչության ինքնապաշտպանությունը նա համարում է անձնուրաց քաջագործություններ: «Մի շարք փաստաթղթերից կարող է կարծիք ստեղծվել,— գրում է Մ. Ներսիսյանը,— որ թուրքական կառավարության բարբարոսական չարագործությունը հայերի կողմից չէր հանդիպում արժանի հակահարվածի: Նման եզրակացությունը, հասկանալի է, սխալ կլիներ: Չնայած ծանրագույն պայմաններին և ուժերի անհավասարությանը, հայերը բազմիցս զենքը ձեռքին հանդես եկան ընդդեմ համիդյան և երիտթուրքական դահիճների, քաջաբար մարտնչեցին հանուն իրենց պատվի, ազգային արժանապատվության, ֆիզիկական գոյության: Սակայն ուժասպառ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանությունը շատ դեպքերում ավարտվում էր անհաջողությամբ...»: Այդ անհաջողությունները բացատրելով նրանով, որ հայերը զենք չունեին, հայկական նահանգները կտրված էին միմյանցից, որ Հայաստանի մարտունակ ազգաբնակչության նշանակալի մասը նախապես զո-

1 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 2, Փարիզ, 1935, էջ 113—121:

1 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Խմբագիր Մ. Գ. Ներսիսյան: Երևան, 1991:

րակոչվել էր զորաբանակ և տմարդորեն կոտորվել, նա մեկ անգամ ևս ընդգծում է հայկական ապստամբության մասին թուրքական վերսիայի կեղծ ու շինծու լինելը:

1915-ի ինքնապաշտպանական կռիվներին իր մենագրության մեջ պատշաճ տեղ է հատկացրել պրոֆ. Ե. Ղ. Սարգսյանը[1]: Այդ կապակցությամբ նա գրում է. «Հայ ժողովուրդն իր երկարամյա դառը փորձով համոզվեց, որ եվրոպական տերություններից որևէ իրական օգնություն ստանալու նրա հույսերն իզուր էին, ուստի և թուրքական իշխանություններից կրած դաժան հալածանքների օրերին նա ամենից առաջ հույսը դնում էր ինքն իր վրա: Չնայած այն բանին, որ թուրքական կառավարությունը նախօրոք փորձում էր զինաթափ անել խաղաղ հայ բնակչությանը, մի շարք վիլայեթներում հայերը հերոսական դիմադրություն ցույց տվին ժանդարմներին ու թուրքական կանոնավոր զորքերին...

Տակավին նախքան հայերին զինաթափ անելը, վերջիններիս մի մասը, զգալով, որ թուրքերը պատրաստվում են իրենց սրի քաշել, զենքը ձեռքներին փախան լեռներն ու անտառները, որտեղից հարձակումներ էին գործում թուրք ջարդարարների վրա, ազատում իրենց մայրերին, քույրերին ու եղբայրներին»[2]:

Արխիվային փաստաթղթերի, ականատես-ժամանակակիցների հուշերի, ինչպես նաև նախախորհրդային շրջանում լույս տեսած գրականության, զանազան փաստագրական ժողովածուների լայն օգտագործմամբ, Ե. Սարգսյանը ամփոփ ձևով շարադրում է 1915 թ. Վանի հայ ազգաբնակչության հերոսական պայքարը թուրքական զորքերի դեմ, ցույց տալիս, որ նահանգապետ Ջևդեթ փաշան՝ Էնվեր փաշայի փեսան, Վանի վիլայեթի շուրջ 250 հազար հայերին իսպառ բնաջնջելու բացահայտ կոչ էր արել դեռևս 1915 թվականի փետրվարին, երբ հայերի ապստամբության մասին որևէ խոսք անգամ լինել չէր կարող:

Նկարագրելով Վանի ինքնապաշտպանության հերոսական շատ դրվագներ, պատմաբանը հատկապես նշում է վանեցիների կազմակերպվածությունը, հնարամտությունը, համոզությունն ու խստագույն կարգապահությունը, առանց որոնց նրանք չէին կարողանա ամբողջ մեկ ամիս համառ դիմադրություն ցույց տալ թվական և ռազմական գերազանցություն ունեցող հակառակորդին:

1 Ե. Սարգսյան: Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում: Երևան, 1964:

2 Նշվ. աշխ., էջ 278:

Խոսելով Վանից ռուսական զորքերի անակնկալ նահանջի մասին, հեղինակն այդ քայլը փորձում է բացատրել ռուսական զորքի պարենամթերքի ու զինամթերքի սպառմամբ, ինչպես նաև թուրքերի նոր հարձակման ու շրջապատման վտանգի առկայությամբ, ուստի այդ նահանջը համարում է ստիպողական, հարկադրական[1]:

Ե. Սարգսյանը սեղմ ու պատկերավոր շարադրանքով ներկայացրել է նաև Մուշի, Սասունի, Զեյթունի հերոսամարտերը: Սակայն, այստեղ էլ, չգիտես ինչու, նա թուրքական գերակշիռ ուժերի դեմ օրհասական պայքարի ելած հայ մահապարտներին անվանում է «ապստամբներ» (էջ 284, 285): Նա նշում է, որ քառօրյա հերոսական ինքնապաշտպանությունից հետո ամբողջ Մուշի վիլայեթի 59 հազար հայերից կենդանի մնացին... 9 հազարը, որոնք էլ փախան Սասուն և պայքարը շարունակեցին այնտեղ: Հեղինակը հատկապես շեշտում է շուրջ 30 հազար սասունցիների տոկունությունն ու ազատաշունչ ոգին, որոնց ընկճելու և բնաջնջելու էր դուրս բերվել նույնաքանակ կանոնավոր մի բանակ:

Ի տարբերություն որոշ հեղինակների, որոնք գրեթե բացառում են ինքնապաշտպանական կռիվների փաստը Զեյթունում, Ե. Սարգսյանը գտնում է, որ ճիշտ է, անսալով Կիլիկիայի հայոց կաթողիկոսի ապակողմնորոշիչ կոչերին, այս անգամ Զեյթունի ազգաբնակչությունը դիմադրություն չկազմակերպեց և ենթարկվեց տեղահանության ու աքսորի հրահանգին, սակայն երիտասարդության մեծ մասը փախավ լեռները, միացավ այնտեղ թաքնված հայ դասալիք զինվորներին և բազում հարձակումներ գործեց թուրքական զորքերի վրա:

Առավել հանգամանորեն Ե. Սարգսյանը կանգ է առնում մուսալեռցիների մղած ինքնապաշտպանության վրա, որը, սակայն, մեզ համար անհասկանալի չափանիշով, նա համարել է «հայ ժողովրդի անհավասար հերոսական պայքարի **ամենանշանակալից ու ամենափառահեղ էջը**» (ընդգծումը մերն է— Մ. Կ.): Ոչ ոք, իհարկե, մտադրություն չունի նսեմացնելու մուսալեռցիների հիրավի անօրինակ հերոսապատումը, բայց ի՞նչ հիմունքով այն առանց այլևայլության հռչակել ամենանշանակալիցն ու ամենափառահեղը[2]:

Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների պատմության բաժինը Ե.Սարգսյանը ամփոփում է մի կարևոր եզրակացությամբ, որ

1 Նշվ. աշխ., էջ 283:

2 Նշվ. աշխ., էջ 285:

այն վայրերում, ուր հայերը զենքի էին դիմում՝ իրենց կյանքը փրկելու համար, նրանք զգալիորեն ավելի քիչ տուժեցին, քան այն դեպքում, երբ նրանք հնազանդվելով իրենց ճակատագրին, անտրտունջ կատարում էին թուրքական պաշտոնյաների կարգադրությունները:

Արևմտահայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի հատուկ ենթաբաժին է տրամադրված պրոֆ. Ա. Ն. Մնացականյանի աշխատության մեջ[1]:

Ինչպես իրավամբ նշում է Ա. Մնացականյանը, առաջին աշխարհամարտի դժնդակ պայմաններում էլ արևմտահայությունը գլուխ չխոնարհեց բռնակալների առաջ և որտեղ կարողացավ՝ դիմեց ինքնապաշտպանության, հերոսական մարտեր մղեց թշնամու մեծաքանակ ուժերի դեմ:

Ի տարբերություն Ե. Սարգսյանի, որը, ինչպես տեսանք, հայկական գոյամարտերից «ամենանշանակալիցն ու ամենափառահեղը» համարում է Մուսա լեռան հերոսամարտը, Ա. Մնացականյանը առավել աչքի ընկնող սխրագործություն է դիտում Վանի ամօրինակ ինքնապաշտպանությունը[2] և մեր կարծիքով չի սխալվում, որովհետև Վասպուրականի աշխատավորության մաքառումն ավելի ընդգրկուն էր, մասշտաբային ու կազմակերպված, աներևակայելի քաջագործություններով առլեցուն, նշանակությամբ առավել մեծ:

Մերկացնելով պատմության թուրքական կեղծարարների ու նրանց ամեն գույնի ձայնափողերի հերյուրանքները, որոնք ճգնում են Վանի հերոսամարտը ներկայացնել որպես «դավադրություն» թուրքական իշխանության դեմ, որն, իբր, գրգռվելով այդ «դավադրական ելույթից և ուրիշ նման ապստամբություններից՝ հարկադրված եղավ» կանխել հայերի սպառնալիքը, Ա. Մնացականյանն ընդգծում է, որ Վանի բնակչությունն զբաղված էր խաղաղ աշխատանքով և զենքի դիմելու ոչ մի նախապատրաստություն չէր տեսել, մինչդեռ իթթիհատական գաղտնի կազմակերպությունը Վանի կուսակալ Ջևդեթ բեյի գլխավորությամբ վաղօրոք նախապատրաստել էր հայկական կոտորածը:

Վանեցիների «ապստամբության» մասին հերյուրանքը բացառող և նրանց խաղաղասիրական վարքագիծը հավաստող մի պերճախոս վավերագիր է թուրքական զորքերի հարձակման օրը՝ ապրիլի 7-ին,

[1] Ա. Ն. Մնացականյան: Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ: Երևան, 1965:

[2] Նշվ. աշխ., էջ 36—57:

Վանի թուրք բնակչության և զինվորների մեջ տարածված վանեցի աշխատավորների կոչ նամակը, որն «Աշխատանք» թերթից քաղվածքար մեջ է բերել Ա. Մնացականյանը: Վանի միամյա հերոսամարտը նա գնահատում է իբրև վանեցի հասարակ մարդկանց՝ բանվորների, գյուղացիների, արհեստավորների, մտավորականության, կանանց ու պատանիների՝ իրենց կյանքը, օջախը, կայքը պահպանելու համար մղված անձնուրաց, ինքնամոռացության աստիճանի հասնող հերոսական պայքար, որի շնորհիվ Վասպուրականի տասնյակ հազարավոր բնակիչներ փրկվեցին կոտորածից:

Ա. Մնացականյանը համառոտակի խոսում է նաև Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Ուրֆայի, Սասունի հերոսամարտերի մասին, ընդգծում, որ այդ ինքնապաշտպանական կռիվները բոլորն էլ բռնկվեցին որպես պատասխան թուրքական չարդարարների գործադրած բռնությունների: «Ոչ թե ապստամբություններ տեղի ունեցան, որոնց պատճառով թուրքական իշխանությունները նախաձեռնեցին արևմտահայերի կոտորածները,— գրում է նա,— այլ ընդհակառակը՝ իթթիհատական բանդաների կողմից միլիոնավոր հայերի ամողջ կոտորածների դեմ ուղղված զայրույթից առաջ եկած այդ ապստամբությունները, որոնք բառի բուն իմաստով՝ ապստամբություններ չէին, այլ ինքնապաշտպանական կռիվներ, գոյամարտեր»[1]:

Հեղինակն ուշագրավ միտք է հայտնում այն մասին, որ հենց վերոհիշյալ տեսանկյունից պիտի մոտենալ նաև Կովկասյան ճակատում հայ կամավորական ջոկատների գործողությունների լուսաբանմանը, և ինքն էլ կամավորական շարժումը իրավացի հիմքով դիտում է իբրև իր էությամբ արևմտահայերի պաշտպանության մի ձև, մի փորձ:

Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին հանգամանալի խոսք կա պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի մենագրության մեջ[2]: Գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային խոսում փաստաթղթեր, ինչպես նաև ընդարձակ քաղվածքներ կատարելով ականատես-ժամանակակիցների վկայություններից, Ջ. Կիրակոսյանը հիմնավորապես հերքում է Արևմտյան Հայաստանում հակաթուրքական ապստամբական շարժման առկայության վերաբերյալ թուրքական հորինվածքը: Կոնկրետ անդրադառնալով Վանում ծավալված իրադարձություններին,

[1] Նշվ. աշխ., էջ 64:

[2] Ջ. Ս. Կիրակոսյան: Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.): Երևան, 1965:

որոնք առանձնապես շատ են հոլովվում թուրք կեղծարարների բերաններում, Ջ. Կիրակոսյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Վանի հայ քաղաքական կուսակցությունները ձգտում էին ամեն կերպ հարթել կոնֆլիկտը, չսրել հարաբերությունները իշխանությունների հետ, ոչ մի ընդհանուր հակակառավարական գործողության չդիմել մինչև ռուսական բանակի մոտենալը, և նրանց գործնական քայլերում գլխավորը խաղաղության պահպանումն էր և ոչ թե ապստամբական նախապատրաստությունը, ինչը վերագրվել էր նրանց թուրքական իշխանությունների կողմից: «Թուրքիայում, մասնավորապես Վանում գործած ազգային կուսակցությունների մեղքը ոչ թե ապստամբական նախապատրաստությունն էր,— իրավացի հիմքով գրում է Ջ. Կիրակոսյանը,— այլ, ընդհակառակը, նրան պատրաստ չլինելը, նրանց աննպատակ ընթացքը, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, մոտալուտ գալիքի աղոտ պատկերացումը»[1]: Այնուհետև Ջ. Կիրակոսյանն անցնում է Վանի 27-օրյա ներոսամարտի պատմության սեղմ շարադրանքին, ընդգծում քաղաքի պաշտպանների կազմակերպվածությունն ու անսահման խիզախությունը:

Փաստերի տրամաբանությամբ Ջ. Կիրակոսյանը հաստատում է այն համոզմունքը, որ Վանի շրջանում հայ ժողովրդի ինքնապաշտպանության հանգամանալի ուսումնասիրությունն ամբողջապես ճերքում է թուրքական կառավարության այն բոլոր հայտարարությունները, թե նա հայ ժողովրդի նկատմամբ բռնության չի դիմել մինչև 1915 թվականի ապրիլի կեսերը, որ նա զենքի դիմեց Վանի ապստամբությունից դրդռված: Կարձյալ միայն անժխտելի փաստերի վկայակոչմամբ ընդգծելով, որ մինչև Վանի հայ բնակչության դեմ թուրքական առաջին կրակոցները՝ ապրիլի 7-ը, իշխանություններն արդեն 12 օր առաջ ձեռնամուխ էին եղել հայերի տեղահանությանը Զեյթունում, որոնց առաջին քարավանները Սիրիա էին հասել ապրիլի 6-ին, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ երիտթուրքական մարդասպան պարագլուխները, ձգտելով ամեն կերպ արդարանալ համաշխարհային հասարակական կարծիքի առջև, ճապերին էին վերագրում բոլոր մեղքերը, նախահարձակ լինելու մեղադրանքը: «Եթե նույնիսկ հայերը նախահարձակ հանդիսացած լինեին,— շարունակում է նա,— միևնույնն է, նրանց կոչումն էր արդարությունը, քանի որ նրանք կռվում էին իրենց կյանքի, իրավունքների պաշտպանության համար: Եթե կատարվեին հարձակումներ հայերի կողմից,

[1] Նշվ. աշխ., էջ 265:

ապա դրանք արդարացի էին և սեփական ունեցվածքը, կյանքը պաշտպանելու և ոչ թե ուրիշներին ստրկացնելու, նրանց տիրապետելու նպատակ էին հետապնդում»[1]:

Խոսելով Շապին-Գարահիսարի 27-օրյա (հուլիսի 3—29-ը) հերոսապատումի մասին, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ դա այն եզակի վայրերից մեկն էր, որտեղ ժողովուրդը դրսևորեց որոշ կազմակերպվածություն և համախմբվածություն, փորձեց դիմագրավել սպանդին, պաշտպանել իր պատիվը և զենքը ձեռքին կարճ, բայց հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք չարդարարներին: Վերլայակոչելով անգլիացի հեղինակ Ա. Թոյնբիին և համեմատելով վերջինիս հետ, նա գրանում է, որ ոչ թե ըմբոստություն էր տեղահանության պատճառը, այլ տեղահանություն ու կոտորածն էին շապին-գարահիսարցիների ինքնապաշտպանության շարժառիթը, որովհետև չորս հազարի հասնող հայ բնակչությունը, տեղեկանալով Էրզրումի նահանգում, Երզնկայում, Սեբաստիայում, Տրապիզոնում և այլուր իրենց եղբայրների հետ կատարվող ողբերգական իրադարձություններին, պետք է մտածեր իր փրկության մասին, զենքը ձեռքին մաքառեր, որպեսզի չարժանանար մյուս վայրերի բնակչության ճակատագրին[2]:

Անդրադառնալով Մուշի և Սասունի իրադարձություններին, Ջ. Կիրակոսյանը հանիրավի ու խստորեն պարսավում է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի այդ կենտրոններում դաշնակցական լիազոր-ղեկավարների «անձեռնհասս», «միանգամայն վնասակար» գործելակերպը, որոնք ինքնապաշտպանություն կազմակերպելու մասին «ամպագոռգոռ հայտարարություններից այն կողմ չանցան» և փաստորեն ոչնչով չնպաստեցին վտանգի դեպքում ժողովրդի պաշտպանությունը կազմակերպելու գործին: Հատկապես քննադատության կրակի տակ առնելով Մուշ-Սասուն գործուղված դաշնակցական լիազոր-ղեկավար Ռուբեն Տեր-Մինասյանի գործունեությունը, հեղինակը եզրակացնում է, որ տարիներ շարունակ պրոթուրքական քաղաքականության տուրք տված մարդը, ինչ խոսք, չէր կարող գլխավորել ժողովրդի ինքնապաշտպանության գործը, և բոլորովին էլ պատահական չէր, որ նա եղավ ժողովրդին առաջին լքողը և իր գլխին ազատողը:

Նման «քննադատությունը», մեր կարծիքով, զուրկ է պատմական ճշմարտության հիմքերից: Ընդգծելով Ռ. Տեր-Մինասյանի և Վ. Փափազ-

[1] Նշվ. աշխ., էջ 277—279:
[2] Նշվ. աշխ., էջ 308:

յանի անհետաոտես գործելակերպը, հեղինակը նշում է, որ վերջիններս Մշո դաշտի տեղահանությունից ու կոտորածից առաջ արդեն բարձրացել էին Սասուն, իրենց հետ տանելով կովող ուժեր, զենք և պարեն, այն պատճառաբանությամբ, թե անցյալի օրինակով լեռնային հայությունը առաջին նշանախեցը պիտի դառնար թուրքական իշխանությունների համար և ապա հետո նրանք ձեռնամուխ կլինեին հարթավայրի հայության կոտորածին, սխալ, որը հետագայում ընդունել են հենց իրենք՝ այդ գործիչները: Միաժամանակ նա ընդգծում է ժողովրդական պայքարի մեջ թրծված մի շարք տեղաբնիկ գործիչների՝ Հաջի Հակոբ Կոտոյան, Մկրտիչ Սողոմոնյան, Քիաթենց Մանուկ Շառոյան և ուրիշներ, միանգամայն հակադիր տեսակետը, որոնք անհրաժեշտ էին գըտնում առաջին հերթին կազմակերպել Մշո դաշտի հայության ինքնապաշտպանությունը, որը և արհամարհվեց դաշնակցության կուսակցության ղեկավարների կողմից[1]: Անդրադառնալով Մուսա լեռան հերոսամարտին, այնքան էլ արդարացի չէ Զ. Կիրակոսյանը, գրելով, թե այն մինչև օրս չի լուսաբանված հայրենական պատմագրության մեջ (տե՛ս Ե. Սարգսյանի աշխատության մասին մեր շարադրանքը): Եվ հետո ավելացնում է, թե ինքն էլ նպատակ չունի հանգամանորեն պատմելու և վերլուծելու այդ իրադարձությունը, որին և, իրոք, հատկացնում է ընդամենը երկու էջ:

Հայոց Մեծ եղեռնի հիմնապաստառի վրա արևմտահայության հերոսամարտերի պատմության ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել պրոֆ. Մ. Վ. Արզումանյանը[2]: Նա ոչ միայն խոսել է ինքնապաշտպանական մարտերի հանրահայտ օջախների մասին, այլև հուշագրական, սփյուռքահայ և ժամանակակից օտար հեղինակների աշխատություններից քաղել ու ընթերցողին է ներկայացրել նաև երկրորդական նշանակության կռիվների փաստեր, դրանով աշխատելով ըստ հնարավորին ամբողջացնել հայ դյուցազնամարտի պատմությունը: Հեղինակի ընդհանուր ելակետը մեկն է ու ճիշտ՝ հերոսամարտերը ոչ թե համընդհանուր ապստամբություն էին թուրքական կառավարության դեմ, այլ անմիջական հետևանք էին ծրագրավորված ջարդարարական քաղաքականության, պարտադրված կենսական անհրաժեշտություն: Այսպես՝ խոսելով Վանի հերոսամարտի մասին, նա գտնում է, որ վանեցիները ինքնապաշտպանության դիմեցին միայն այն ժամանակ, և այն էլ, դրժ-

[1] Նշվ. աշխ., էջ 313:

[2] Մ. Վ. Արզումանյան: Հայաստան 1914—1917: Երևան, 1969:

բախտաբար, ուշացումով, երբ զգացին, որ մոտենում է աճյավոր ժամը, երբ դաշնակը ոսկորին էր հասել:

Սովորաբար պատմագրության մեջ ընդունված է գրել, թե Վանի պաշտպանների առանց այն էլ փոքրաթիվ ուժերը գնալով հալվում էին, սպառվում: Հակառակ դրան, Մ. Արզումանյանը գտնում է, որ, ընդհակառակը, գնալով հայերի դիմադրողական ուժը աճում էր, որովհետև նախ՝ նրանք արդեն ձեռք էին բերել կռվելու փորձ, երկրորդ՝ զենք հայթայթելու համար ստեղծել էին զինարան, փամփշտարան, վառոդարան և երրորդ՝ նրանց շատ ոգեշնչեց ռուսական զորքերի մոտենալը[1]: Հարցի նման դրվածքը թերևս ավելի ճիշտ է: Դրան կարելի է ավելացնել նաև այն, որ քաղաքի պաշտպանների շարքերը համալրվում էին այստեղ հոսող գաղթականների հոծ խմբերից:

Ամենայն իրավամբ Մ. Արզումանյանը գտնում է, որ Վանի հերոսական ինքնապաշտպանությունը հայկական հերոսամարտերի փայլուն դրվագներից է, և այն բռնկվեց, երբ թուրքերն արդեն սկսել էին ջարդերը և նախապատրաստվում էին կոտորել Վանի հայությանը:

Այնուհետև Մ. Արզումանյանը ներկայացնում է Շատախի 40-օրյա հերոսական կռիվները, այն համարում մեծ սխրագործություն, որն ավարտվեց հաղթանակով:

Առավել հանգամանորեն Մ. Արզումանյանը ծանրանում է Մուշի և Սասունի հերոսամարտերի պատմության վրա: Փաստագրական հարուստ նյութի հիման վրա նա ոչ միայն ընթերցողին ներկայացնում է տարոնահայության մղձավանջային վիճակը, նրա մղած օրհասական պայքարը, այլև առաջ է քաշում Մուշի և Սասունի ինքնապաշտպանության պատասխանատուների խնդիրը, ինքնապաշտպանություն, որը խելամիտ ղեկավարման դեպքում կարող էր պսակվել լիակատար հաջողությամբ, և կփրկվեին տասնյակ հազարավոր կյանքեր: Դաշնակցությանը ամեն կերպ վատաբանելու սովորության ուժով Մ. Արզումանյանը անհաջողության գլխավոր հանցավորներ է ճանաչում Ռուբեն Տեր-Մինասյանին (Ռուբեն փաշա) և Վահան Փափազյանին (Կոմս), որոնք ճիշտ կողմնորոշվելու և վճռական գործողությունների դիմելու փոխարեն իրր դրսևորեցին մորթապաշտություն, անճարակություն և իրենց անմիտ գործողություններով փաստորեն նպաստեցին հայերի բնաջնջմանը:

[1] Նշվ. աշխ., էջ 361:

Հեղինակը բազում էջեր է նվիրել Շապին-Գարահիսարի 25 հազար հայության կարճատև, բայց հիրավի հերոսական դիմադրությանը, որը նույնպես ճիշտ է, հաջող ելք չունեցավ, բայց անմահացրեց ընկածների հիշատակը: Արևմտահայության ինքնապաշտպանության պատմության մեջ Մ. Արզումանյանը բացառիկ տեղ է հատկացնում Մուսա լեռան 55-օրյա հերոսամարտին, ընդգծում, որ այն դարձավ հայ ժողովրդի ազատագրական շարժման փայլուն դրվագներից մեկը, ցույց տվեց, թե ինչի է ընդունակ ժողովուրդը, երբ նա հանդես է գալիս միասնական ու համախմբված կերպով[1]:

Հերոսականորեն սրտառուչ և ողբերգականորեն հուզիչ է Ուրֆայի 35 հազար հայերի 25-օրյա ինքնապաշտպանության նկարագրությունը: Մեջ բերելով ուրֆացիների դահիճներից մեկի՝ Ֆախրի փաշայի խոսքերը՝ «Ինչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այնպես ծառանային», հեղինակը սրտի ցավով ավելացնում է. «Այո, երբ ամենուրեք հայությունը դիմեր այդպիսի վճռական պայքարի, նա կունենար փրկության մեծ շանսեր»[2]:

Հայոց մեծ եղեռնի ու արևմտահայության դյուցազնամարտի միահյուսված պատմությունը, լրացված բազմաթիվ նյութերով ու մանրամասներով, բավականաչափ ընդարձակ ծավալով տեղ է գտել Մ. Արզումանյանի վերջին մենագրության մեջ[3]:

***

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում արևմտահայերի տեղահանության և ինքնապաշտպանության հիմնահարցերը իր մենագրություններում քննարկել է պրոֆեսոր Հ. Մ. Պողոսյանը: Նրա «Զեյթունի պատմությունը» ծավալուն ուսումնասիրության մեջ առանձին գլուխ է հատկացված Զեյթունի բնակչության 1915-ի տեղահանությանն ու ինքնապաշտպանական կռիվներին[4]: Նախքան նշված հարցերին անցնելը պատմաբանը գրում է 1908-ի երիտթուրքական հեղափոխության, Ադանայի կոտորածների մասին, վերլուծում իթթիհատական սահմանադրությունից հետո արևմտահայերի և, մասնավորապես, զեյթունցիների զինվորագրության հարցը և դրանից բխող հետևանքները, ցույց տալիս, որ այն պատրվակ դարձավ Հայդար փաշայի համար՝ Զեյթունում խժդժություններ սկսելու, տեղացիների զինաթափումը հեշտությամբ իրականացնելու համար: Նա գրում է, որ երբ Զեյթունի քաղաքապետ Նազարեթ Չաուշը (Նորաշխարհյան) իր եղբոր տղային հանձնեց թուրքերին, լեռներում ապաստանած փախստականները, բացառությամբ երկու հոգու, մի քանի օրվա ընթացքում իջան լեռներից և հանձնվեցին իշխանություններին: Հայդար փաշան ձերբակալում է Նազարեթ Չաուշին, Հ. Գարաճֆիլյանին, Փանոս Չոլաքյանին, Փանոս Չագըրյանին, Նշան Խաչերյանին, Եղիա Նորաշխարհյանին և ուրիշների, ստիպում, որ զեյթունցիները հանձնեն ողջ զենքը: Ըստ Հ. Գարաճֆիլյանի հաղորդած տեղեկությունների, Հայդար փաշան Զեյթուն գյուղաքաղաքի բնակիչներից հավաքեց 20, իսկ շրջակա գյուղերից՝ 15 հազար տարբեր տեսակի զենքեր: «Լեռնականներն իրենց ամբողջ պատմության ընթացքում,— գրում է Հ. Պողոսյանը,— ոչ մի անգամ այդպիսի դառն և անմխիթարական վիճակի հասած չեն եղել: Մի ժողովուրդ, որը դարեր շարունակ ճակատամարտերի ընթացքում պաշտպանել էր իր կիսանկախությունը և չէր հպատակվել օսմանյան կառավարողներին, վերնախավի անհեռատես քաղաքականության շնորհիվ սկսեց հպատակվել նրան»[1]:

Հեղինակը գրում է, որ զինաթափումից հետո էլ Զեյթունում կային ուժեր, որոնք փորձում են ապստամբություն բարձրացնել: Նրանք գումարում են ժողով և որոշում են զեյթունցի դասալիքների ուժերով Կյուրետինի կիրճում հարձակվել զենք տեղափոխող թուրքական գումակի վրա, խլել զենքը և ապստամբության դրոշ պարզել, սակայն Զեյթունի վերնախավի մի մասը դավաճանաբար այդ մասին հայտնում է թուրքերին, և հարձակումը վիժեցվում է: Դրանից հետո էլ հայ դասալիքները Արեզին գյուղի մոտ հարձակվում են 20 ժանդարմների վրա, նրանցից խլում նորագույն զենքը: «Դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս,— գրում է Հ. Պողոսյանը,— որ գյուղաքաղաքի բնակիչները ցանկացել են մի անգամ ևս վեր խոյանալ, խորտակել թուրքական իշխանավորների անարդ լուծը, գրավել զորանոցը, պաշտպանել արծվաբույնը: Սակայն վերնախավը դավաճանում է ժողովրդին՝ խանգարելով ապստամբների և բնակչության միավորման գործը»[2]: Մատենադարա-

[1] Նշվ. աշխ., էջ 444:
[2] Նշվ. աշխ., էջ 453:
[3] Մ. Վ. Արզումանյան: Դարավոր գոյամարտ: Երևան, 1989, էջ 405—490:
[4] Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969:

[1] Նշվ. աշխ., էջ 387:
[2] Նշվ. աշխ., էջ 389:

նից հայտնաբերած մի վավերագրով Հ. Պողոսյանը ցույց է տալիս, որ այդ նույն վերնախավը անգամ փորձում է արգելակել Զեյթունի շրջակա գյուղերի բնակչության մուտքը գյուղաքաղաք, որոնք սկսել էին 1895-ի օրինակով կամաց-կամաց տեղափոխվել Զեյթուն, սակայն հաջողություն չեն ունենում:

Հ. Պողոսյանը մանրամասնորեն շարադրում է Վանքի ինքնապաշտպանական կռիվների պատմությունը, նշելով, որ ապստամբած խմբերն իրար միանալով, ամրանում են Զեյթունի վանքում: Պերգնկա լեռան վրա կառուցված հինավուրց վանքը դարձավ ապստամբության կենտրոնը: Ապստամբները նպատակ ունեին ոտքի հանել գյուղաքաղաքի բնակիչներին, գրավել կառավարչական շենքը, զորանոցը և զեյթունցիներին պաշտպանել վերահաս վտանգից: Վանքի ապստամբները գրավոր պահանջեցին թուրքական իշխանություններից՝ ազատել բանտարկված 60 երիտասարդներին, հանձնել կառավարչատունը, զորանոցը և հեռանալ Զեյթունից՝ պատասխանի համար գայմագամին տալով 24 ժամ: Վերջինս ձգձգեց բանակցությունները, մինչև որ Զեյթուն հասավ 300 թուրք զինվոր: Պատմաբանն այն կարծիքն է հայտնում, որ եթե ապստամբներն առանց հապաղելու իջնեին քաղաք, ապա բնակչության ճնշող մեծամասնությունը կմիանար նրանց, և հաջողությունն ապահովված կլիներ: Սակայն վանքում նրանց մնալը, գործուն միջոցների չդիմելը հնարավորություն տվեց թուրքերին՝ մեկուսացնել ապստամբներին: Ապստամբության ղեկավարների սխալ մարտավարության հետևանքով ապստամբները հենց սկզբից անցան ինքնապաշտպանության, որը և կործանարար ազդեցություն ունեցավ նրա ելքի համար[1]:

Նա բացահայտում է այն բացասական դերը, որը խաղացել է Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանը ապստամբության կանխման գործում, ցույց տալիս, որ կաթողիկոսը զեյթունցիներին հնազանդության կոչող հեռագրեր ու նամակներ է ուղարկել Սիրիայի բանակի հրամանատար Ջեմալ փաշայի դրդմամբ[2]:

Երբ Մարաշից մի գումարտակով Զեյթուն եկավ հազարապետ Սուլեյմանը, ապստամբները դիմեցին հարձակման, սակայն գյուղաքաղաքի խաբված բնակչությունը նրանց չմիացավ, և նրանք ստիպված էին նորից վանք վերադառնալ: Հեղինակը նշում է, որ ապստամբներին

[1] Նշվ. աշխ., էջ 390:
[2] Նշվ. աշխ., էջ 391:

չմիացան նաև շրջակա Ֆոնուզ, Ալագկալ, Պունտուգ և այլ գյուղերը, իսկ Մարաշի հայերը պատվիրակություն ուղարկեցին Զեյթուն՝ հնազանդության կոչով:

1915 թ. մարտի 14-ին թուրքական զորքերը ավարտեցին վանքի պաշարումը և սկսեցին թնդանոթային ռմբակոծությունը: Նրանց հաջողվեց գրավել վանքի շրջակայքի այգիները: Սակայն վանքի պաշտպանները համառորեն շարունակեցին դիմադրությունը՝ մինչև վերջին փամփուշտը կրակելու վճռականությամբ: Թուրքերը մարտի մեջ մղտցրին զորանոցի մեծ թնդանոթը, և նրանց հաջողվեց քանդել վանքի պարսպի մի հատվածը: Գիշերը վանքի պաշտպանները հեռացան Ամանոսի լեռները և պայքարը շարունակեցին մինչև պատերազմի ավարտը:

«Այլևս թուրքական ուժերին ո՛չ դիմադրող ուժ կար և ո՛չ էլ զենք,— գրում է հեղինակը:— Այսպես, հենց այս պահից էլ սկսվեց արծվաբնի բնակիչների ողբերգությունը, երբ ժողովուրդը նույնպես Արևմտյան Հայաստանի, Թուրքիայի մնացած վայրերում ապրող հայության և Կիլիկիայի բնակիչների պես պետք է բարբարոսաբար դուրս վռնդվեր իր դարավոր բնակավայրերից և գնար դեպի Տեր-Զորի անապատները»[1]:

Այնուհետև Հ. Պողոսյանը փաստերով ցույց է տալիս, որ լեռնականների տեղահանությունն սկսվել է 1915 թ. մայիսի 15-ի հայերի բնաջնջելու հրամանից էլ առաջ: Նա նշում է, որ զեյթունցիները տարագրավեցին մի քանի ուղղություններով: Մոտ 8000 հոգի քշվեցին դեպի Կոնիա, 5000 հոգի՝ Հալեպ, մնացածները՝ Տեր-Զոր, Ռաքքա, մինչև Բաղդադ, իսկ Տեր-Զոր աքսորված 7000 զեյթունցիներից ոչ մեկը կենդանի չմնաց: Պատմվում է նաև այն մասին, որ Զեյթունի տեղահանությունից հետո, 1915-ի հուլիսին թուրքերը գնդակահարեցին ու կախեցին Մարաշում բանտարկված 200 զեյթունցիների մեծ մասին, իսկ 15—20 հոգու քշեցին անապատ:

Նշվում է նաև, որ տարագրությունից հետո Զեյթուն գյուղաքաղաքն անմիջապես բնակեցվում է թուրքական ցեղերով, և տեղի է ունենում անվանափոխություն՝ նախ Ենիշեհիր, ապա՝ Սուլեյմանլը, սպանված հազարապետ Սուլեյմանի անունով:

Հ. Պողոսյանը վեր է հանել նաև «երկրորդ Զեյթունի»՝ Ֆրնտըճագ գյուղի ապստամբությունը: Գյուղը գտնվում էր Զեյթունից 6 ժամվա

[1] Նշվ. աշխ., էջ 396:

ճանապարհ արևմուտք և իր անմատչելի ձորերով ու լեռներով հիանալի դիրք ուներ ինքնապաշտպանության համար: Այստեղ են գալիս Վանքի 40 պաշտպաններ և միանալով տեղացիներին՝ ապստամբում և ջախջախում են թուրքական զորամասը: Ապստամբներին միանում են նաև որոշ թվով զեյթունցիներ: Հեղինակը նշում է, որ ապստամբներն ունեին շուրջ 500 կովողներ, 250 «Մարտին» սիստեմի հրացան՝ 40 000 փամփուշտներով:

1915 թ. օգոստոսի 1-ին թուրքական 8000-անոց բանակը Կալիպ բեյի գլխավորությամբ հարձակվում է Ֆնտճագի վրա: Մեկօրյա արյունահեղ ճակատամարտից հետո թուրքերին հաջողվեց ճեղքել պաշտպանությունը և մխրճվել գյուղի մեջ: Սկսվեց անհավասար մարտ գյուղի ներսում: Ի վերջո ապստամբների մի մասը ճեղքեց օղակը և ապաստանեց շրջակա լեռներում: Ֆնտճագի ճակատամարտի արդյունքում զոհվեցին 2100 հայեր, սպանվեցին 2000 թուրք զինվորներ և մոտ 5000 բաշիբոզուկներ: Թուրքերը սրի քաշեցին գյուղի բնակչությանը՝ կեն-դանի-կենդանի այրեցին եկեղեցիներում, մի մասին էլ տարան Մարաշ և այրեցին կրի վառարաններում[1]:

Հ. Պողոսյանը մերկացնում է թուրք պյուղկզակ կառավարողներին, որոնք ճգնում են հայերի ցեղասպանությունը պայմանավորել հայ կամավորների, ազգային կուսակցությունների գործունեությամբ կամ հայերի մոտ զենքի առկայությամբ, և գտնում է, որ դրա գլխավոր պատճառը Հայկական հարցի ուրվականն էր, որը մշտապես անհանգստություն էր պատճառում թուրքերին:

Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ 1915 թվականի եղեռնի ժամանակ տեղահան արվեց ու ոչնչացվեց մինչև երկու միլիոն մարդ, և հայ ժողովրդի մի քանի հարյուր տարվա ազատագրական պայքարն ավարտվեց նրա արևմտյան հատվածի մեծ մասի բնաջնջմամբ:

Հայոց ցեղասպանության մի շարք հիմնահարցեր քննարկված են պրոֆ. Հ. Մ. Պողոսյանի մեկ այլ մենագրության մեջ[2]:

Արխիվային, վավերագրական, հուշագրական և պատմագրական բազմազան նյութերի հիման վրա հեղինակը ներկայացրել է երիտթուրքական հեղափոխության ժամանակաշրջանը, ընդգծել այն ոգևորությունը, որ մի ընթացքում պատել էր հայ ազգային-քաղաքական շրջաններին, ինչպես նաև դրան հետևած խորը հիասթափությունը:

[1] Նշվ. աշխ., էջ 404–406:

[2] Հ. Մ. Պողոսյան: Սեսուսի պատմություն, Երևան, 1985:

Հեղինակը խոսում է 1909-ի Ադանայի կոտորածների մասին, նշում, որ երիտթուրքերը չլուծեցին հողային հարցը, համերաշխում պրոֆ. Ա. Համբարյանին այն հարցում, որ արևմտահայ գյուղացիությունը ընդդիմացավ երիտթուրքերին և նրա պայքարն արտահայտվեց ամենատարբեր ձևերով՝ բողոքներով ու գանգատվելով, հարկերից խուսափելով, ակտիվ ընդվզումներով ու ելույթներով: Նա նշում է, որ արևմտահայերի մոտ ավելի ու ավելի էր ուժեղանում հիասթափությունը, և նրանք զգում էին, որ շատ բան չի փոխվել աբդուլհամիդյան ռեժիմից: Նրանց հատկապես զայրացնում էր երիտթուրքերի սահմանադրության 8-րդ կետը, որտեղ հայտարարվում էր թուրքական պետության տարածքում ապրող ազգերի ձուլման և մեկ օսմանյան ազգ ստեղծելու մասին:

Հ. Պողոսյանի հիշյալ մենագրության վեցերորդ գլուխը նվիրված է Մուշի և Սասունի 1915 թ. հերոսամարտերին:

Գլխի սկզբում հեղինակը նկարագրում է նախապատերազմյան իրադրությունը, խոսում Ռուսաստանի և Թուրքիայի նպատակադրումների, Հայկական հարցի վերաբացման, բարեփոխումների վերաբերյալ 1914 թ. հունվարի ռուս-թուրքական համաձայնագրի մասին: Դիվանագիտական մի փաստաթղթի հիման վրա նա մատնանշում է այն ուշագրավ փաստը, որ պատերազմի նախօրյակին ցարիզմը ցանկանում էր ամեն գնով մերձենալ երիտթուրքերի հետ, հրաժարվել Հայկական հարցից, ոչ մի օժանդակություն ցույց չտալ հայկական ազգային հոսանքներին, որովհետև չէր ցանկանում ապագա պատերազմում երկու ճակատով կռվել: Հեղինակը եզրակացնում է, որ ցարական կառավարությունը տարբեր ժամանակներում Հայկական հարցին մոտեցել է տարբեր միտումներով և հայ գործիչներին սկսել է խոստումներ տալ, նրանց ջանքերով կամավորական ջոկատներ հրապարակ հանել միայն այն ժամանակ, երբ Թուրքիան վերջնականապես անցավ Գերմանիայի կողմը[1]: Հեղինակն անդրադառնում է 1914 թ. հունիսին տեղի ունեցած Դաշնակցության 8-րդ ժողովին, նշում, որ հայերը մերժեցին թուրքական պահանջը՝ կամավորներ տալու մասին և հավատարիմ մնացին իրենց դարավոր ռուսական կողմնորոշմանը:

Խոսք է գնում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին հասցեագրած 1914 թ. օգոստոսի 5-ի նամակի, հայ ժողովրդին ուղղված սեպտեմբերի 17-ի կոչի մասին

[1] Նշվ. աշխ., էջ 298:

և եզրակացություն է արվում, որ Հայկական հարցը կախված էր ցարական զորքերի առաջխաղացումից, ցարական կառավարության կամքից և նրան ձեռնտու լինելու կամ չլինելու հանգամանքից:

Հ. Պողոսյանը գրում է նաև զինվորագրության, աշխատանքային և բեռնակիր գումարտակներում հայ զինվորների տաժանակիր աշխատանքի և ի վերջո ֆիզիկական ոչնչացման, զանազան հարկերի ենթարկված տակ հայ գյուղացիների կատարյալ կողոպուտի մասին: Նա փաստագրում է, որ Սասունը թուրքական բանակին ոչ մի զինվոր չտվեց, իսկ սասունցիները պատերազմն սկսելու պահից գտնվում էին պաշարված դրության մեջ և միջոցներ էին որոնում ինքնապաշտպանության համար[1]: Խոսելով դեռևս 1914 թ. դեկտեմբերին Մուշում տեղի ունեցած խորհրդակցության մասին, Հ. Պողոսյանը գրում է, որ, ի տարբերություն Դաշնակցության ներկայացուցիչներ Վահան Փափազյանի և Հուրեն Տեր-Միհայելյանի, որոնք առաջարկում էին բոլոր ուժերը կենտրոնացնել Սասունում, տեղի հայդուկային ուժերը գտնում էին, որ ընդհակառակը, անհրաժեշտ է հարվածել Մուշ քաղաքին, գրավել թուրքական ռազմական պահեստները, ամրանալ այնտեղ և կապվել ռուսական բանակի հրամանատարության հետ, սակայն դաշնակցության ղեկավարները չգնացին դրան:

Նա գրում է նաև 1915-ի սկզբներին Սասունի Սեմալ գյուղում տեղի ունեցած խորհրդակցության մասին, որտեղ որոշվում է դաշտի ուժերը փոխադրել Սասուն, որից էլ օգտվելով, թշնամին նախ հարվածում է Մուշին:

Նկարագրելով Մուշ քաղաքի հերոսական դիմադրությունը, Հ. Պողոսյանն ընդգծում է ինքնապաշտպանության ղեկավար, հին հայդուկ Հաջի Հակոբ Կոտոյանի անձնուրացությունը, որը կռվի ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն մինչև վերջ դիրքերից չհեռացավ, և երբ սպառվեց զինամթերքը, իր ձեռքով գնդակահարեց կնոջը, հրդեհեց սեփական տունը և վերջին փամփուշտով ինքնասպան եղավ:

Ներկայացված է նաև Մշո դաշտի Կառնեն, Ալիջան, Ավրան, Վարդենիս գյուղերի ինքնապաշտպանությունը, գյուղացիների անձնուրաց պայքարը, որի հետևանքով բնակչության մի մասը փրկվեց բնաջնջումից:

Հանրագումարի բերելով Մուշ քաղաքի և Դաշտի ինքնապաշտպանության արդյունքները, հեղինակը գրում է, որ 180 հազար բնակիչներից ազատվեցին 20 հազարը, իսկ մնացածները զոհ գնացին թուրքական ջարդարարներին[1]:

Հ. Պողոսյանը մանրամասնորեն շարադրում է Սասունի ինքնապաշտպանությունը, որը տևեց 1915 թվականի փետրվարի 4-ից մինչև հուլիսի 27-ը՝ շուրջ 6 ամիս: Նա արժեքավորում է ծննդյամբ շենիկցի, բժիշկ Գարեգին Երիցյանի «Լեռնաշխարհի գոյամարտը» գիրքը (Բեյրութ, 1959):Վկայակոչելով Սարգիս և Միսակ Բդեյանների՝ «Հարազատ պատմություն Տարոնո» (Գահիրե, 1962) սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող գիրքը, հեղինակը նշում է, որ սասունցիներն ունեին 3000 հրացան, մի քանի հազար էլ անկանոն զենքեր և ընդունել էին «Ավելի լավ է կռվում պատվով ընկնել, քան թե անպատիվ ապրել և կործանվել» նշանաբանը: Ցույց է տրվում, որ բոլոր կողմերից Սասունի վրա գրոհող թուրք-քրդական հրոսակների դեմ կռվում էին տղամարդիկ, կանայք, ծերերը, երեխաները, նույնիսկ անգեն մարդիկ: Նշվում է այն հետաքրքիր փաստը, որ ստեղծվել էր կանանց գաղտնի մի կազմակերպություն, որի անդամների խնդիրն էր գնդակահարել այն տղամարդկանց, որոնք բարձր չէին պահի իրենց զենքի պատիվը, վախկոտություն կդրսևորեին և բարոյալքում առաջ կբերեին:

Հ. Պողոսյանը մատնանշում է Սասունի վրա թուրքական և քրդական հրոսակների հարձակման երկու գլխավոր ուղղությունները՝ 1. Խուլբից դեպի Տալվորիկ և Անտոթ, 2. Հազզոյի շրջանից դեպի Բսանք և Ծովասար[2]: Նա նկարագրում է թշնամու առաջին հարձակումը Ահրոնք գյուղի վրա, նրա առաջխաղացումը դեպի Սպիտակ լեռ և Տալվորիկ, Խուլբի և Խիանքի ազգաբնակչության ամառային եռամսյա կռիվները, Կուրտիկ լեռան և լեռնաշղթայի դիմադրությունը, որը գլխավորում էր փորձված ֆիդայի Փեթարա Մանուկը: Ցույց է տրվում, որ 1915-ի ապրիլի վերջերին արդեն Սասունը 150 կմ շրջագծով գըտնվում էր թշնամու օղակի մեջ, և երբ մայիսին քրդերը հարձակվեցին Բսանքի վրա, ժողովուրդը շարժվեց դեպի Տալվորիկ և Անտոթ:

Տրվում է Շենիկի ճակատամարտի նկարագրությունը, որին մասնակցում էին Պոլեի Մհոն, Կորյունը, Մորուք Կարոն, Փեթարա Մանուկը, Շենիկցի Ղազարը, Չոլոն, Աբրեի Գրգոն, Թաթոն, Հախոն, Խարոն, Ղութա Ղուկասը և որոնց ջանքերով էլ Շենիկը հետ խլվեց թշնա-

[1] Նշվ. աշխ., էջ 310:

[1] Նշվ. աշխ., էջ 331:
[2] Նշվ. աշխ., էջ 334:

մուց, սակայն հաջորդ օրը նրանք ստիպված էին տեղի տալ և կենտրոնանալ Անդոք լեռան վրա:

Նշվում է, որ 1915 թ. հունիսի կեսերից պաշարման օղակն սկսեց սեղմվել, և լեռնականների ձեռքում մնաց 1200 քառ. կմ մի տարածք, երբ արդեն բազմահազար թշնամու դեմ սասունցիներն ունեին 1000 մարտիկ և սակավ զինամթերք ու պարեն: Սակայն այդ պայմաններում էլ Լաճկանի շրջանում և Անտոքի ձորերում սասունցիները հակահարձակման անցան քրդերի դեմ, վանեցին նրանց 25 կմ և ձեռք բերեցին հագարավոր ոչխարներ:

Հեղինակի նկարագրությամբ 1915 թ. հուլիսի 19-ին սկսվեց թուրքական և քրդական միացյալ հարձակումը Գելիեգուզանի և Անտոքի ուղղությամբ, և Սասունի լեռնագագաթներում ծվարած մի քանի տասնյակ հազար լեռնականները անհավասար գոտեմարտի ելան 30 հազարանոց կանոնավոր բանակի ու բաշիբոզուկների դեմ: Օգոստոսի սկզբին սկսվեց հարձակումը Շենիկ և Սեմալ գյուղերի վրա, որոնք սասունցիների գլխավոր հենակետերն էին: Շուտով վիճակը օրհասական դարձավ. Անտոք լեռան վրա հավաքվածները ստիպված էին թողնել իրենց դիրքերը և ցրվել Սասունի կիրճերի մեջ: Անօրինակ սխրանքներ կատարեցին սասունցի կանայք, որոնք ժայռաբեկորներ էին գլորում թշնամու վրա և իրենք էլ նետվում անդունդը:

Հենվելով Կարո Սասունու «Պատմություն Տարոնի աշխարհի» (Պեյրութ, 1956) գրքի վրա, Հ. Պողոսյանը գրում է, որ այդ օրհասական կացության մեջ Ռուբեն Տեր-Միհրանյանը հրահանգ է տալիս դիմադրության ղեկավարներին՝ մարտերը դադարեցնելու և ցրվելու մասին: Ռուբենի այդ վարմունքը հեղինակը գնահատում է իբրև ժողովրդին թշնամու ողորմածությանը հանձնելու և իր անձը փրկելու գործողություն: Նա հակադրվում է Կ. Սասունուն, որը պաշտպանության տակ է առնում Ռուբենին և իր գնահատականը հիմնավորելու համար դիմում է Եղիշե Տեր-Պարսամյանին, որը «Տարոնո ինքնապաշտպանությունն ու ջարդը 1914—1915» (Ֆրեզնո, 1920) գրքում ընդգծում է, թե «Ռուբենը եղավ առաջին անգամ լքողը ժողովուրդը»[1]:

Հ. Պողոսյանը գրում է, որ սասունցիների մանր կռիվները շարունակվեցին նաև հետագայում, մինչև 1916-ի գարնանը ռուսական զորքերը գրավեցին Մուշը, որից հետո Սասունից Մուշ իջավ շուրջ 10 000

1 Նշվ. աշխ., էջ 340:

մարդ: Նա դատապարտում է նաև Վահան Փափազյանին, որն իբր չկազմակերպեց Քանա լեռան վրա հավաքված 15—20 հազար մշեցիների անցումը մոտեցող ռուսական բանակին ընդառաջ:

Ամփոփելով շարադրանքը, Հ. Պողոսյանը նշում է, որ պապենական հայրենիքից զրկված Սասունի խիզախ ժողովրդի բեկորները ի վերջո հանգրվանեցին Արևելյան Հայաստանում, առավելապես ներկայիս Թալինի շրջանում:

Կովկասյան բանակի գործողությունների առնչությամբ Վանի ինքնապաշտպանության հերոսամարտին հպանցիկ ձևով անդրադարձել է պրոֆ. Ա. Հարությունյանը[1]: Բարձր գնահատելով Վանի ինքնապաշտպանության նշանակությունը, նա գրում է. «Վան քաղաքի պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության փառավոր էջերից մեկն է: Այն ակնբախորեն ցույց տվեց, որ արևմտահայերը այդքան զոհեր չէին կրի, եթե նրանք գենոցիդի քաղաքականություն անցկացնողներին ամենուրեք ցույց տային զինված դիմադրություն: Մյուս կողմից՝ Վանի պաշտպանությունը ցուցադրեց նրա մասնակիցների ու կազմակերպիչների բարձր կազմակերպվածությունը, ռազմական հնարամտությունն ու արիությունը»[2]: Նա նշում է, որ Վանի ազատագրումը տոնում էր ողջ Հայաստանը, ամենուրեք տարերայնորեն առաջանում էին միտինգներ, որտեղ հայ ժողովուրդը գովաբանում էր ռուսական քաջարի զորքերին ու Վանի հերոսական պաշտպաններին: Այս բոլորը լավ է, շատ լավ: Բայց ինչո՞ւ Վանի ինքնապաշտպանությունը կոչել ապստամբություն, իսկ նրա պաշտպաններին՝ ապստամբներ, կամ ինչո՞ւ քաղաքի պաշտպանության կազմակերպիչ համարել միայն Արամ Մանուկյանին (էջ 307), երբ հանրահայտ է, որ «Վանի հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմնի» նախագահը ռամկավար Արմենակ Եկարյանն էր, իսկ դաշնակցական Ա. Մանուկյանը մտավ այդ մարմնի մեջ իբրև խորհրդական:

Արևմտահայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը սխեմատիկ են ներկայացված Ծ. Աղայանի մենագրության մեջ[3]: Թվում է, թե մեծադիր հատորում, որի 7-րդ և 8-րդ ընդարձակ գլուխները կրում են «Առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովուրդը», «Մեծ եղեռնը»

1 Арутюнян А. Кавказский фронт 1914—1917. Ереван, 1971.

2 Նշվ. աշխ., էջ 306:

3 Ծ. Պ. Աղայան: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից: Երեվան, 1976:

վերնագրերը, առավել քան հանգամանալի խոսք կլիներ նաև ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին: Սակայն, ցավոք, այդպես չէ. հանգուցային այդ հարցին հատկացված են սուղ էջեր միայն (էջ 421—425):

Թուրք ջարդարարների դեմ անհավասար գոտեմարտերում անձնվիրաբար ընկած հայորդիների հիշատակին երախտագիտության խոսք ասելու և հարգանքի տուրք մատուցելու մղումով է գրված Հայրիկ Մուրադյանի գիրքը[1]: Փաստավավերագրական նյութի և դեպքերին մասնակից սակավաթիվ վերապրողների հիշողությունների օգտագործմամբ հեղինակը վերաշարադրել է Շատախի, Վանի, Տարոնի, Շապին-Գարահիսարի, Սուեդիայի, Յոզղաթի, Ուրֆայի գոյամարտերի պատմությունը, վերականգնել մի շարք հետաքրքիր մանրամասներ, հերոս հայհատակների գործեր և անուններ: Թերևս հենց գրքի բնույթով է պայմանավորված այն, որ տեղ եմ գտել փաստական բնույթի մի շարք վրիպումներ, որոշ դեպքերում ցուցաբերված է անքննադատ մոտեցում աղբյուրների հաղորդած տեղեկությունների նկատմամբ: Անընդունելի է, օրինակ, հեղինակի այն ձևակերպումը, թե շատ քաղաքների և գավառների հայերը, որոնք զենքը հանձնեցին կառավարության պահանջով, «...կարող էին թիկունքից ծանր հարված հասցնել երկու ճակատի վրա պատերազմի մեջ մտած երիտթուրքական ցեղասպաններին»[2]:

Արևմտահայության ինքնապաշտպանության հիմնահարցին իր աշխատություններում անդրադարձել է պրոֆ. Հ. Ու. Մելիքսեթյանը[3,4]:

Գրելով, որ ընդամենը մի քանի ամսվա ընթացքում թուրք ջարդարարներն անպատիժ կերպով հայազրկեցին Հայաստանը, վստահ լինելով, որ իրենց քաղաքականության հետևանքով կոչնչանա ամբողջ արևմտահայությունը, նա միաժամանակ ավելացնում է, որ մի շարք վայրերում հայերը դիմեցին հերոսական ինքնապաշտպանության: Նա գտնում է, որ ինքնապաշտպանական այդ կռիվները ոչ թե դավադրություններ կամ ապստամբություններ էին, ինչպես փորձում են դրանք ներկայացնել թուրք շովինիստները, այլ գոյության պաշտպանման բնական ու օրինական մի կռիվ, օրհասական մի ճիգ: Թվարկելով Վանի,

1 Հ. Մուրադյան: Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Երևան, 1988:

2 Նշվ. աշխ., էջ 20:

3 Հ. Ու. Մելիքսեթյան: Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1914—1949), Երևան, 1975:

4 Հ. Ու. Մելիքսեթյան: Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980 թթ.): Երևան, 1985:

Մուշի, Սասունի, Շապին-Գարահիսարի, Սուեդիայի, Մուսա լեռան, Ուրֆայի հերոսամարտերը, որոնցից մի քանիսը դրական ելք ունեցան, Հ. Մելիքսեթյանը նշում է, որ դժբախտաբար դրանք ինչպես հարկն է նախապատրաստված չէին, համընդհանուր բնույթ չկրեցին, որպեսզի հաջող ելք ու ավելի մեծ արդյունք տային[1]:

Ավելացնենք միայն, որ մեր պատկերացմամբ, օրհասական կռվի գետված հայորդիներին առաջնորդում էր ոչ այնքան «գոյության պաշտպանման» բնական և օրինական իրավունքը, որքան բռնադատիչներին մի վերջին մահացու հարված հասցնելու և զենքը ձեռքին պատվով նահատակվելու վեհ զգացումը: Այս առումով մենք այնքան էլ համամիտ չենք «գոյամարտ» բառի շատ տարածված գործածությանը և առավել համապատասխան ենք նկատում «հերոսամարտ», «դյուցազնամարտ» տերմինները, մանավանդ վերջինը, նկատի առնելով, որ մի շարք վայրերում հայերը պարզապես հրաշքներ գործեցին:

Արևմտահայերի ինքնապաշտպանական գոտեմարտերին իր վերաբերմունքն է ցույց տվել ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը:

Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Սուեդիայում (Մուսալեռ), Ուրֆայում և այլ վայրերում հայերի ցույց տված դիմադրությունը նա իրավամբ դիտում է իբրև տեղահանության և ջարդի հետևանք, ինքնապաշտպանություն, երբ հայ դյուցազունները՝ տղամարդ ու կին, ծեր և պատանի կռվում էին մինչև վերջին փամփուշտը, վերջին մարդը[2]: Նա հատկապես կանգ է առնում Վանի ինքնապաշտպանության վրա, ընդգծում ուժերի անհավասարությունը՝ թուրքերն ունեին 12 000 զինվոր, 12 հրանոթ, հայերը՝ 1463 վատ զինված ռազմիկ: Սակայն վանեցիները գիտեին, որ կռվելով ապահովում են իրենց գոյատևումը, նրանք միասնական էին իրենց արդար գործում, լի հայրենասիրական գիտակցությամբ, ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ իրենց բարոյական պարտքը մինչև վերջ կատարելու կորովով[3]: Հեղինակը Շատախի ինքնապաշտպանությունը դիտում է իբրև Վան-Վասպուրականի հերոսամարտերի բաղկացուցիչ մաս, որը տևեց 42 օր (ապրիլ-մայիս), երբ Զևդեթի դեմ ելան 57 հայկական գյուղերի բնակիչները, ստեղծեցին զինվորական խորհուրդ՝ Ս. Մեսրոպյանի և Ա. Սիմոնյանի գլխավորությամբ:

1 Նշվ. աշխ., էջ 37:

2 Գ. Բ. Ղարիբջանյան: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Երևան, 1986, էջ 62:

3 Նշվ. աշխ., էջ 68:

Նա 1915 թ. ներոսամարտերի մեջ առանձնակի տեղ է հատկացնում Սասունի լեռնականների մղած ինքնապաշտպանական կռիվներին Շենիքում, Սեմալում, Տալվորիկում, Գելիեգուզանում և Անդոք լեռան վրա: Մի քանի օր պաշտպանվեցին նաև Մուշ քաղաքն ու նրա շրջակա գյուղերը: Սակայն զենքի և ռազմամթերքի պակասի պատճառով այդ կռիվներն անհաջող ելք ունեցան: Այդ կռիվների վերաբերյալ ճեղինակն իր մտքերը հանրագումարի է բերում հետևյալ կերպ. «Հայ ժողովրդի այս ինքնապաշտպանական մարտերը կրկին ցույց տվեցին, որ թուրքական լաթադանից **փրկության միակ ելքը կռիվն էր** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): Ճիշտ է, այն անհավասար էր, իսկ զոհերը՝ շատ, սակայն հիմնականում փրկվում էին նրանք, ովքեր կռվում էին. հնազանդվել թշնամու կամքին՝ նշանակում էր իսպառ բնաջնջվել»[1]:

Մեկ այլ մենագրության մեջ Գ. Ղարիբջանյանը, տալով Վան-Վասպուրականի, Ծապին-Գարահիսարի, Մուշի, Սասունի, Ուրֆայի, Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի սեղմ նկարագիրը և ամփոփելով դրանց արդյունքները, եզրակացնում է. «Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը առաջին ներթին հույսը դրել էր ինքն իր վրա: Եվ այնտեղ, որտեղ նրանք զենքի դիմեցին և ներոսաբար պաշտպանվեցին, ավելի քիչ տուժեցին, քան այնտեղ, որտեղ ենթարկվեցին իրենց ճակատագրին: Եվ զոհերն էլ շատ ավելի քիչ կլինեին, եթե հայ ազգային ազատագրական շարժումն ունենար ընդհանուր ղեկավարություն, Օսմանյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդների պայքարի հետ շաղկապված գործողությունների միասնական պլան[2]:

Եղեռնի 75-րդ տարելիցի առթիվ աշխատություն է հրատարակել պրոֆեսոր Ա. Ս. Համբարյանը[3]:

Համառոտակի տալով իմպերիալիստական հակադիր խմբավորումների՝ Եռյակ միության և Անտանտի հետապնդած նպատակները առաջին համաշխարհային պատերազմում և Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը Ռուսաստանի դեմ 1914 թ. նոյեմբերի 2-ին, հեղինակը նշում է, որ հայ հասարակական քաղաքական տարբեր շրջաններ տարբեր դիրքերում կանգնեցին պատերազմի հանդեպ: Պոլսի հայոց պատ-

[1] Նշվ. աշխ., էջ 68:
[2] Г. В. Гарибджанян. Геноцид армян перед судом истории. Ереван. 1995. с. 26.
[3] Ա. Ս. Համբարյան: 1915 թվականի արևմտահայերի կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990:

րիարք Զավեն արքեպիսկոպոսը հայտարարեց, որ անհրաժեշտ է ցուցաբերել շրջահայեցություն, լրջմտություն, դրացի ժողովուրդների հանդեպ հարգանք և աղջամտություն, իսկ զորակոչվածները պետք է կատարեն իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:

Արևմտահայ լիբերալները հայտարարեցին, որ պետք է մերժել անջատողական ձգտումները, պինդ փարվել Օսմանյան հայրենիքին, մշակել բարի հարաբերություններ մահմեդական հարևանների հետ և գործով ապացուցել իրենց նվիրվածությունը կայսրությանը:

Օսմանյան հայրենիքի պաշտպանության կոչով հանդես եկան նաև Թուրքիայում գործող արևմտահայ քաղաքական կուսակցությունները: Գրեթե նույն դիրքորոշումն ընդունեցին նաև արևմտահայ դեմոկրատական մտավորականները[1]:

Այլ էր, սակայն, արևելահայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշումը: Պատերազմի սկսվելուց մի քանի օր անց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը դիմեց Կովկասի փոխարքային, որպեսզի ցարական կառավարությունն իր ձեռքը վերցնի արևմտահայերի կյանքի և գույքի պաշտպանության գործը, իսկ սեպտեմբերի 8-ին, խնդրում էր, որ ցարը Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներից՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի ու Կիլիկիայից կազմի հայկական ինքնավարություն: Այդ նույն դիրքորոշման վրա կանգնեցին արևելահայ լիբերալները:

Առավել մեծ ակտիվություն դրսևորեցին արևելահայ քաղաքական կուսակցությունները: Դաշնակցության արևելյան բյուրոն զինվորագրվեց ցարիզմին և ղեկավար դեր ստանձնեց կամավորական ջոկատների ստեղծման գործում:

Հնչակյանները ևս կանգնեցին պատերազմից հայ ժողովրդի համար բարիք ակնկալողների դիրքերում: Նույնպիսի ակնկալիքներ ունեին նաև էսեռները, սպեցիֆիկները և կադետները: Միայն բոլշևիկներն էին, որ հակադրվեցին ազգային կուսակցությունների ցարատեսլատ դիրքորոշմանը[2]:

Ա. Համբարյանը ուրույն տեսակետ է հայտնում կամավորական շարժման մասին, այդ առթիվ գրելով. «Հայ կամավորները զինվորագրվում էին գերազանցապես Ռուսաստանին: Պատմաբանները նշում

[1] Նշվ. աշխ., էջ 4—6:
[2] Նշվ. աշխ., էջ 7—8:

են, որ նրանք հանդիսանում էին այդ պետության բանակները ոչ թե նրա զավթողական պլանների իրականացմանը նպաստելու, այլ ռուսների օգնությամբ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու համար: Որքան էլ դա ճշմարիտ էր, **սակայն թերևս անհրաժեշտ էր հաշվի առնել արևմտահայության վիճակը և չդիմել այդ քայլին,** մանավանդ, երբ Ռուսաստանը կարող էր գրավել Արևմտյան Հայաստանը, առանց հայ կամավորների մասնակցության և նվաճելիս պիտի ստեղծեր ոչ թե ինքնավար Հայաստան, այլ բնակեցնելու էր այն կազակներով: Ցարիզմը միայն օգտագործում էր հայերին, իսկ իրականում կցելու էր Արևմտյան Հայաստանը կայսրությանը որպես նվաճած տարածություն... **Հայ բուրժուական շրջանները ղեկավարվում էին ավելի շատ իրենց պատրանքներով և ենթադրություններով,** քան իրական գործերով (ընդգծումները իմն են— Մ. Կ.)»[1]:

Այնուհետև խոսելով կամավորական յոթ գնդերի կազմավորման մասին և տալով նրանց հրամանատարների անունները՝ Անդրանիկ, Քեռի, Խանասորի Վարդան, Համազասպ, Գրիգոր Ավշարյան, Հայկ Բժշկյան, Հովսեփ Արղության, հեղինակը ցավալիորեն առհասարակ չի նշում Դրոյի (Դրաստամատ Կանայան) անունը, որը եղել է 2-րդ գնդի անփոփոխ հրամանատարը՝ օգնականներ ունենալով Գարեգին Նժդեհին, Արմեն Գարոյին և Դաշնակցական Խեչոյին: Մեր կարծիքով այստեղ Դրոյի տեղն զբաղեցրել է Խանասորի Վարդանի (Վարդան Մեհրաբյան) անունը, որը եղել է հետագայում 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ գնդերի միավորմամբ ստեղծված «Արարատյան զորագնդի ընդհանուր հրամանատարը»[2]:

Նշված է, որ ամենախոշորը Անդրանիկի ջոկատն էր՝ 1200 զինվոր, իսկ կամավորների ընդհանուր թիվը ըստ որոշ հեղինակների 6 000 էր, ըստ ուրիշների՝ հասնում էր 10 000-ի: Տրվում են կամավորական առաջին չորս գնդերի մարտական ուղղությունները՝ 1. Սալմաստ-Վան (Անդրանիկ, որը ռազմաճակատ մեկնեց 1914-ի նոյեմբերի 16-ին), 2. Իգդիր-Բայազետ-Բերկրի-Վան (սա հենց Դրոյի գլխավորած գունդն էր, որ ռազմաճակատ մեկնեց նոյեմբերի 17-ին— Մ. Կ.), 3. Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բիթլիս, 4. Սարիղամիշ-Քյոփրիքյոյ-Էրզրում: Ա. Համբարյանը միանգամայն իրավացիորեն գրում է, որ արիաբար կռվելով ռուսական բանակների շարքերում, հայ կամավորական գնդերը մի շարք ճակատամարտերում նպաստեցին թշնամու դեմ տարած հաղթանակներին: Առանձնապես աչքի ընկավ Անդրանիկի գլխավորած ջոկատը, որը փաստորեն վճռական դեր խաղալով Դիլմանի ճակատամարտում (Սալմաստ-Վան ուղղությամբ— Մ. Կ.), փրկեց Կովկասը թուրքական ներխուժումից, արժանանալով այդ ուղղությամբ ռուսական զորաբաժնի հրամանատար գեներալ Չեռնոզուբովի բարձր գնահատականին:

Ա.Համբարյանը չի անտեսում նաև այն հանգամանքը, որ հայ կամավորները թուրքական կոտորածներից փրկեցին բազմահազար հայերի և ուղարկեցին Կովկաս:

Նշվում է նաև, որ կամավորներից բացի, ռուսական բանակ էին զորակոչվել շուրջ 250 000, անգլիական, ֆրանսիական և ամերիկյան բանակներ՝ 50 հազար, թուրքական բանակ՝ 300 000 հայեր:

1916 թ. ամռանը, երկյուղ կրելով, որ հայ կամավորական ջոկատները կդառնան ազգային բանակի հիմք, ռուսական հրամանատարությունը ցրեց դրանք, կազմավորվեց հինգ գումարտակ՝ տարբեր զորամիավորումների կազմում[1]:

Հեղինակը նույնպես այն կարծիքին է, որ հայերի կոտորածները թուրքերն սկսել են դեռևս 1914-ի վերջերին: Այդ առթիվ նա գրում է, որ 1914 թ. նոյեմբերին ռազմաճակատում կրած պարտությունների մեղքը գցելով հայերի վրա, թուրքերը սրի քաշեցին Արդվինի, ապա Բաշկալեհի հայերին, իսկ ապա 1915-ի ապրիլից ձեռնամուխ եղան հայերի զանգվածային տեղահանման ու բնաջնջման քաղաքականության իրականացմանը: Հակիրճ շարադրանքով, սակայն խոսուն և մեկնաբանություններ չպահանջող փաստերի վկայակոչմամբ Ա. Համբարյանը ներկայացնում է եղեռնի հիմնական դրվագները՝ երիտթուրքերի հայաջինջ ծրագրի ստեղծումը, 1915-ի ապրիլի 24-ին Պոլսի, ապա Իզմիրի, Պարտիզակի, Բրուսայի, Ադաբազարի, Մարզվանի, Էրզրումի Սվազի, Դիարբեքիրի, Կեսարիայի և այլ վայրերի հայ մտավորականության ձերբակալությունը, աքսորն ու բնաջնջումը, հայ ռազմունակ ուժերի զինաթափումն ու ոչնչացումը թուրքական բանակում, հայ ազգաբնակչության տեղահանությունը, աքսորն ու բնաջնջումը Զեյթունի, Բիթլիսի, Մուշի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի վիլայեթներում: «Մինչև 1915 թվականի վերջերը և 1916 թվականի սկզբները,— ամփոփում է հեղինակը,— երիտթուրքական իշ-

[1] Նշվ. աշխ., էջ 10:
[2] Նշվ. աշխ., էջ 11:

[1] Նշվ. աշխ., էջ 13:

խանությունները հայաթափեցին Արևմտյան Հայաստանը, հայերին ենթարկելով բոլոր ժամանակների տանջանքներին ու կտտանքներին և մեռցնելով բոլոր ժամանակների մահերով»[1]:

Նա այն կարծիքն է հայտնում, որ, անշուշտ, արևմտահայության ցեղասպանությունը կազմակերպեցին երիտթուրքական ղեկավարները, բայց նրանց օգնեցին, նրանց հրաՖանգները կենսագործեցին նաև թուրք ու քուրդ աղաները, բեյերը, ցեղապետերը, մահմեդական հոգևորականները և սրանց ձեռքերին կույր գործիք դարձած ֆանատիկ խուժանը: Իհարկե, եղան պաշտոնյաներ, որոնք դեմ կանգնեցին իթթիհատականների հայաջինջ քաղաքականությանը, որոնց, սակայն, անմիջապես պաշտոնազրկեցին: Եղան նաև մահմեդական հասարակ քաղաքացիներ ու գյուղացիներ, որոնք վտանգելով իրենց կյանքը, փրկեցին առանձին հայերի, սակայն, ցավոք, այդպիսիները քիչ էին:

Հեղինակը գրում է, որ իթթիհատական ոճրագործները պատերազմի տարիներին Թուրքիայում բնակվող ավելի քան 2 500 հազար հայերից կոտորեցին շուրջ 1,5 միլիոնը, մնացածները մի կերպ փրկվեցին՝ ցրվելով Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի, Ամերիկայի տարբեր երկրներ: «1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթ փաշան հայտարարեց,— շարունակում է նա,— որ ինքն ու իր գործընկերները **Հայկական հարցը լուծեցին** երեք ամսում, ինչը տալթան Աբդուլ Համիդ 2-րդին չէր հաջողվում երեսուն տարվա ընթացքում: **Այս լկտի հայտարարությունը, ցավոք, ճշմարիտ էր** (ընդգծումներն իմն են— Մ. Կ.)»[2]: Կարծում ենք, որ ոչ, Թալեաթը ճշմարիտ չէր: Իր չարագործությունների համար նա հենց նույն հայ ժողովրդին պատասխան տվեց սեփական կյանքով, իսկ Հայկական հարցը այդպես էլ առ այսօր մնում է չլուծված:

Հանրագումարի բերելով հայ ժողովրդի մարդկային կորուստները, Ա. Համբարյանը գրում է, որ պատերազմի նախօրյակին ամբողջ աշխարհում հաշվվում էր 4,5—5 միլիոն հայ: Նկատի ունենալով այլ ռազմաճակատներում դաշնակից պետությունների բանակների զոհված հայերին, ինչպես նաև հետագա տարիներին թուրքական ներխուժման հետևանքով Անդրկովկասում սրի քաշված արևելահայերին, հեղինակը հայերի կորուստների ընդհանուր թիվը հաշվում է երկու միլիոն, որը կազմում է ժողովրդի 40 տոկոսը: Մինչդեռ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը կորցրին իրենց բնակչության 1—8 տոկոսը:

[1] Նշվ. աշխ., էջ 25:
[2] Նշվ. աշխ., էջ 28:

Հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծ մասից և նրան մնաց իր դարավոր բնօրրանի մոտ 10 տոկոսը[1]:

Հեղինակը ընդհանուր գծերով խոսում է նաև մեծ տերությունների հայավնաս դիրքորոշման, ինչպես նաև համաշխարհային առաջադեմ հասարակայնության բողոքի ձայնի, երիտթուրքերի դատավարության, հայ վրիժառուների սխրանքի և հարակից այլ հարցերի մասին:

Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են արևմտահայերի ինքնապաշտպանությունը Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա: Սակայն հեղինակը չի գնացել տրորված արահետներով, այլ վեր է հանել այդ հերոսամարտերի մի շարք նոր դրվագներ, շրջանառության մեջ դրել նոր փաստեր ու անուններ, տվել ուրույն գնահատականներ: Ինքնապաշտպանական հիշյալ հանրահայտ կռիվներին Ա. Համբարյանն ավելացնում է, որ այդպիսի մարտեր տեղի ունեցան նաև Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում՝ Բյուրիքում (Շապին-Գարահիսարի գավառ), Սինջարում (Դիարբեքիրի վիլայեթ), Ֆունջակում, Ֆոնուզում, Կիշելֆիլում, Բերեկոյում (Ադանայի վիլայեթ), Գուվաթ-Շափայում (Տրապիզոնի վիլայեթ), Պարտիզակում և այլ տեղերում[2]:

Հեղինակի եզրակացությունը հետևյալն է. «1915-ի ինքնապաշտպանական մարտերը հայ ժողովրդի պատմության փառապանծ դրվագներից են: Նրանք ցույց տվեցին մեր ժողովրդի կենսունակությունը, թշնամու դեմ մաքառելու պատրաստակամությունը և հարատևելու կամքը: Այդ մարտերն ապացուցեցին, որ հայերը, երբ դիմադրում էին թշնամուն, ավելի քիչ էին կոտորվում, քան երբ հանձնվում էին նրա ողորմածությանը: Ազգերի գոյատևման գաղտնիքը նրանց ստեղծագործության և պայքարի մեջ է»[3]:

Նա ընդգծում է նաև, որ հայ ժողովուրդը բուժում է իր վերքերը, բայց երբեք չի մոռանում կորցրած հայրենիքը և վառ է պահում զոհերի հիշատակը: Նա պահանջում է, որ հանրաշխարհային հասարակայնությունն ընդունի հայերի ցեղասպանությունը, դատապարտի թուրքերի անմախադեպ ոճրագործությունը և արդարամտորեն հատուցի իր կորուստները:

[1] Նշվ. աշխ., էջ 28—29:
[2] Նշվ. աշխ., էջ 84:
[3] Նշվ. աշխ., էջ 85:

Եղեռնի տարիների հայոց դյուցազնամարտի վավերականությունը վերականգնելու և ժամանակակից ընթերցողի սեփականությունը դարձնելու շահագրգռությամբ է պայմանավորված, անշուշտ, Վասպուրականի հայրենակցական միության հրատարակած ժողովածուն՝ նվիրված Վան-Վասպուրականի հերոսամարտի 75-ամյակին[1]: Այստեղ հոդվածներ են զետեղված Վասպուրականի, Վան-քաղաքամեջի, Արճակի ու Թիմարի, Հայոց ձորի, Շատախի ու Փեսանդաշտի, Լեռնապարի հերոսամարտերի, Վանի հայկական ժամանակավոր կառավարության, Վասպուրականի իշխանության մասին, որոնց հեղինակներն են դեպքերի ականատես-ժամանակակիցներ և մասնակիցներ Ա. Փոխարյանը, Հ. Կոսոյանը, Հ. Մուտոյանը, Ս. Մեսրոբյանը, Ա. Աբրահամյանը, Օ. Մխիթարյանը, Հ. Կուլօղլյանը, Ա. Մաքսապետյանը: Գրքում զետեղված են Զինվորական մարմնի կոչերն ու հրահանգները:

Այժմեական է հնչում ժողովածուն կազմող Հ. Դ. Փափազյանի արտահայտած այն միտքը, թե Եղեռնի ժամանակաշրջանում հերոսական ինքնապաշտպանական կռիվները, որ մղվեցին ամենուր, եկան հաստատելու, որ ամենաանհնարին պայմաններում անգամ մեր ժողովուրդը կարող է ծառանալ բռնության դեմ, արյան գնով պաշտպանել իր ազատությունը և շարունակել ապրել ու արարել: Միանգամայն իրավացի է Հ. Փափազյանը, գրելով, որ հայոց ազատամարտի և հերոսական խոյանքի գագաթները եղան ոչ միայն Վանի, Շատախի, Արճակի, Փեսանդաշտի, այլ նաև Մուշի, Սասունի, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան և այլ վայրերում օրհասական կռվի ելած հայ զանգվածների՝ օսմանյան զորքերի և ջարդարար ամբոխի դեմ մղած ինքնապաշտպանական մարտերը, սակայն իր մասշտաբներով և բախտորոշ հետևանքներով ապրիլ-մայիս ամիսներին Վանում մղած հերոսամարտը մեր ժողովրդի պատմական ճակատագրում առանցքային նշանակություն ունեցավ: Նա գտնում է նաև, որ 1915-ի մայիսի 6-ին, հայ կամավորական գնդերի և ռուսական բանակի մուտքից հետո, Արամ Մանուկյանի գլխավորությամբ Վանում ստեղծված հայկական իշխանությունը մեր մղած ազատագրական պայքարի առաջին քաղաքական ձեռքերումը պիտի համարել[2]:

Գիտահանրաճաչողական որոշակի արժեք է ներկայացնում եղեռնից վերապրած Աբգար Ասլանյանի հուշերի գիրքը՝ նվիրված Փեսանդաշտում՝ Արևմտյան Հայաստանի այդ գողտրիկ անկյունում, անկոտրում ոշտունցիների մղած անօրինակ հերոսամարտին[1]:

Սրտի կծկումներով ես կարդում գրքի խմբագիր Վլ. Մովսիսյանի այն դառը խոսքերը, թե որքան հուշերի գրքեր, վկայություններ, փաստաթղթեր կարող էին շրջանառության մեջ դրված լինել, եթե այն մարդիկ, որոնք ապրում էին մեր կողքին ու իրենց մաշկի վրա էին զգացել եղեռնը, մասնակիցը եղել գոյամարտերին, հնարավորություն ունենային գրել իրենց հուշերը, սակայն մեծամասամբ դրանք չգրվեցին, որովհետև փրկվածները, եղեռնի խլյակները մեզ մոտ ապրեցին նացիոնալիստ կամ դաշնակցական համարվելու վախը սրտներում, որոնք «իրենց ապրածի ու տեսածի հիշողությունն իսկ պահպանելու դեպքում արժանանում էին բռնադատված այն զոհերի ճակատագրին, որոնց թիվը տասնյակ միլիոններով է հաշվվում»: Եվ բարեբախտաբար (այդպիսի բարեբախտություն էլ կարող է լինել— Մ. Կ.) Ա. Ասլանյանը ապրածն ու տեսածը գաղտագողի թղթին հանձնած փոքրաթիվ խիզախներից մեկն է[2]:

Իրենց համատեղ աշխատության մեջ թուրք ջարդարարների դեմ մղած արևմտահայության պայքարին առանձին գլուխ են հատկացրել Ռ. Սահակյանը և Կ. Խուդավերդյանը[3]:

Ներկայացնելով այն հիրավի անհավասար գոտեմարտը, որ մղեցին արևմտահայերը թուրք ջարդարարների դեմ Վանում, Շատախում, Շապին-Գարահիսարում, Սասունում, Մուշում, Ուրֆայում, Ֆնտրճագում, Մուսալեռում 1915-ին, հեղինակներն այդ էջերը դիտում են իբրև հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի դրսևորումներ:

Հայոց Մեծ եղեռնի հերոսապատումին արդեն հիշատակված ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն է դարձրել Է. Դանիելյանը[4]: Գրելով, որ, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի և կայսրության բազմաթիվ հարկական բնակավայրեր վերածվեցին արձվաբույնի, նա նշում է, որ Վանում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռում, Ուրֆայում և այլուր արևմտահայերի դիմադրական մարտերի

---

1 Վան-Վասպուրականի հերոսամարտը: Կազմող՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1990:

2 Նշվ. աշխ. Առաջաբան:

1 Ա. Ն. Ասլանյան: Փեսանդաշտը պաշարված էր: Երևան, 1990:

2 Նշվ. աշխ., Առաջաբան:

3 Ռուբեն Սահակյան, Կոստանդին Խուդավերդյան: Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո: Երևան, 1995:

4 Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր (Է. Դանիելյան, «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից»):

արդյունքն այն եղավ, որ հարյուր հազարավոր հայեր փրկվեցին մահից:

Հեղինակը ընդգծում է, որ դժբախտաբար Եղեռնի ճերոսապատումի էջը գիտական պատշաճ մակարդակով չի ուսումնասիրված և մատնացույց է անում սփյուռքահայ պատմաճանաչողական բնույթի աշխատությունները: Մեր կարծիքով, սակայն, իրականությանը չի համապատասխանում Է. Դանիելյանի մեղադրականը խորհրդահայ ողջ պատմագրության հասցեին, որն, իբր, գնահատելով հեշտ ճանապարհով, սփյուռքում լույս տեսած աշխատություններից լոկ ծաղկաքաղ է արել, որոնցում բացակայում է պատշաճ գիտական վերլուծությունը: «Եվ եթե փորձվել է գիտական ինչ-որ տարր մտցնել, ապա, տուրք տալով բոլշևիկյան վարչակարգի գաղափարական պահանջներին, դա արվել է հակադաշնակցական քարոզչության դիրքերից»,— ավելացնում է հեղինակը[1]: Ուրիշ խնդիր է, եթե ասենք, որ հայոց գոյամարտի պատմությունը դեռևս ողջ ծավալով ու խորությամբ չի լուսաբանվել, սակայն արված պատկառելի դրական աշխատանքն անտեսելու կամ նսեմացնելու պարզապես իրավունք չունենք:

Իրավամբ գրելով, որ, իրոք, հայոց Գողգոթայի ճերոսապատումի էջը մեծ դասեր է պարունակում, հեղինակը կատարում է մեր կարծիքով տեղին և կարևոր հարցադրումներ. ի՞նչը մեզ խանգարեց հայկական գործոնով արգելք հանդիսանալ ցեղասպան ծրագրին, ինչո՞ւ ինքնապաշտպանական դրոշը պարզվեց միայն մի քանի շրջաններում, ի՞նչը մեզ խանգարեց համահայկական ինքնապաշտպանության ծրագիր և կենտրոն ունենալուն: «Սրանք հարցեր են,— իրավամբ գրում է հեղինակը,— որոնցից յուրաքանչյուրը դաս և ուղեցույց է մեզ համար»[2]:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է անվարան եզրակացնել, որ հայրենական պատմագրության մեջ լուրջ աշխատանք է կատարված արևմտահայության 1915 թվականի ինքնապաշտպանական մարտերի ճերոսական դրվագների պատմության վերհանման, համակարգման ու գնահատման ուղղությամբ: Բազմաթիվ անաստուածների փաստերի օգտագործմամբ վճռականորեն մերկացնելով Արևմտյան Հայաստանում հակաթուրքական ապստամբական շարժման առկայության վերաբերյալ թուրքական ճերյուրանքը, ինչպես նաև հակահարված

1 Նշվ. աշխ., էջ 95:
2 Նույն տեղում:

տալով պատմության տարբեր երանգի կեղծարարներին, հայրենական պատմագրությունը մշակել ու արմատավորել է հարցի լուսաբանման գիտականորեն հիմնավորված ճիշտ մեկնակետ, համաձայն որի արևմտահայության ճերոսամարտերը երիտթուրքական ավազակախարտ վարչակարգի ծրագրավորված աննախադեպ ցեղասպանության քաղաքականության անմիջական հետևանքն էին, որոնք ունեին բացառապես ինքնապաշտպանական բնույթ և միանգամայն օրինաչափ էին, պարտադրված ու անհրաժեշտ:

4. Ցեղասպանության պատմագրության հետազոտությունը

Հայերի ցեղասպանության պատմության հետազոտության կարևորագույն խնդիրներից մեկը հիմնահարցի պատմագրության ուսումնասիրումն է, որն ունի գիտատեսական և գաղափարական-քաղաքական արդիական նշանակություն:

Հայրենական մի շարք պատմաբաններ՝ Մ. Ներսիսյան, Ե. Սարգսյան, Զ. Կիրակոսյան, Գ. Ղարիբջանյան, Մ. Արզումանյան, Ա. Համբարյան, Հ. Սիմոնյան և ուրիշներ, իրենց աշխատությունների ներածականում կամ բուն շարադրանքում այս կամ այն չափով անդրադարձել են Եղեռնի պատմության թուրք կեղծարարների և արևմտաեվրոպական ու ամերիկյան պատմաբանների աշխատություններին, սակայն երկար ժամանակ հիմնահարցը հատուկ հետազոտության առարկա չէր դառնում:

Պատմագրական բնույթի առանձին հետազոտությունների առաջինը Ե. Սարգսյանի և Ռ. Սահակյանի համատեղ աշխատությունն էր[1]:

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ հետպատերազմյան տարիներին Թուրքիայում լույս տեսած ստվար «պատմագիտական» գրականության հիմնական ուղղությունը թուրքիզմն է, որը նպատակ ունի ամեն կերպ գունազարդել Թուրքիայի պատմությունը՝ կանգ չառնելով իրականության միտումնավոր աղավաղման և բացահայտ կեղծման առաջ:

Ընդգծվում է դեռևս 1931-ին Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ հիմնադրված «Թուրքիայի Պատմության ընկերության» դերը այդ գործում, որը մշտապես ստանալով Թուրքիայի կառավարող շրջ-

1 Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան: Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ճենգափոխումը թուրք պատմագրության մեջ: Երևան, 1968:

ջանների աջակցությունը, հետևողականորեն անց է կացնում նրանց հիմնական գաղափարախոսությունը՝ թուրքիզմը, որի ցայտուն արտահայտությունը ընկերության հրատարակած քառահատոր «Պատմության» է՝ «Թարիհը», որը թուրքերին հռչակում է իբրև աշխարհի ամենահնագույն ժողովուրդ, ամբողջ աշխարհում քաղաքակրթության տարածողներ[1]:

Ե. Սարգսյանը և Ռ. Սահակյանը հայոց նոր շրջանի պատմության կեղծարարության առաջնեկ համարում են ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Ահմեդ Ռուստեմ բեյի՝ 1918-ին Շվեյցարիայում ֆրանսերեն հրատարակած «Համաշխարհային պատերազմը և թուրք-հայկական հարցը» գիրքը, որտեղ հեղինակը փորձում է 1894—96 թթ. և հետագա ջարդերի մեղքը բարդել «մոլեռանդ ամբոխի» և քրդերի վրա՝ ոչ մի խոսք չասելով կառավարության հակահայկական միջոցառումների մասին[2]:

Գրքում հանգամանորեն խոսվում է 1946-ին Ստամբուլում լույս տեսած «Թալեաթ փաշայի հուշերի» մասին՝ շովինիստ պատմաբան Ջահիդ Յալչընի առաջաբանով, որը նշում է, թե գլխավոր մարդասպանի հուշերը երիտթուրքերի կուսակցության արդարացնող փաստաթուղթ է: Ինչպես նշում են հեղինակները, իրոք, Թալեաթը հատուկ ջանասիրությամբ ու հետևողականությամբ աղավաղում է երիտթուրքական կառավարության քաղաքականությունը հայկական հարցում, որին նա առանձին բաժին է հատկացրել: Նա առաջ է քաշում հայերի ապստամբությունների մասին շինծու վարկածը և գրում, թե հենց որ սկսվեց պատերազմը, Մուշի, Բիթլիսի, Վանի վիլայեթներում հայերի ապստամբություններ բռնկվեցին: Այնուհետև Թալեաթը լկտիորեն պնդում է, որ երբ գլխավոր շտաբը հայերին տեղահան անելու օրենքը նախագծեց, **ինքը նորից հանդես եկավ դրա դեմ** (ընդգծումը հեղինակներինն է— Մ. Կ.): Նա անարդարացի է համարում թիթիհատական պարագլուխների նկատմամբ Ստամբուլի ռազմական դատարանի կողմից 1919 թ. հուլիսի 6-ին կայացրած մահավճիռը:

Ինչպես նշում են հեղինակները, Թալեաթ փաշայի կեղծարարությունը հետագայում ընկավ թուրք պատմաբանների աշխատությունների հիմքում: Այսպես՝ թուրք հայտնի պատմաբան Էսադ Ուրասը «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը» (Անկարա, 1950) գրքում, հե-

1 Նշվ. աշխ., էջ 4:
2 Նշվ. աշխ., էջ 12:

տելով 1915—1916 թվականների հայկական եղեռնի մասին, լկտիորեն պնդում է, որ այդպիսի ջարդեր չեն եղել, որ թուրքերի կողմից 600 հազար, 800 հազար և նույնիսկ 1 միլիոն հայերի սպանելու մասին բազմաթիվ հեղինակների գրածները իրականության հետ ոչ մի կապ չունեն, այդ բոլորը առասպելներ են: Ընդհակառակը, հայերի կողմից սպանված մուսուլմանների թիվն ավելի է, քան վերը հիշված թվերը:

Նշվում է նաև, որ Էսադ Ուրասն իր գրքում արդարացնում է երիտթուրքական դահիճներին, գրում, որ եթե որոշ հայեր արտաքսվել են պատերազմական գործողությունների գծից այն կողմ, դա բխում էր իր ազգային անվտանգությունն ապահովելու՝ սուլթանական կառավարության օրինական անհանգստությունից:

Այնուհետև հեղինակները կանգ են առնում պրոֆեսոր Հիքմեթ Բայուրի «Թուրքական հեղափոխության պատմությունը» (Անկարա, 1957) բազմահատոր աշխատության վրա, նշում, որ նա կրկնում է Թալեաթի ստահոդ պնդումը հայերի ապստամբությունների մասին, անցկացնում այն միտքը, թե կառավարությունն ինքը չի նախաձեռնել և մշակել ջարդերի ծրագիրը, այլ ստիպված է եղել որոշ «պաշտպանական» գործողությունների դիմել:

Եղեռնի պատմության և պատմագրության վերաբերյալ Ռ. Գ. Սահակյանի տևական հետազոտությունների հանրագումարը եղավ «Ցեղասպանության պատմությունից» աշխատությունը[1]:

Հեղինակի առաջադրած հանգուցային հիմնահարցերն են ցեղասպանության դրդապատճառների, կանխամտածված բնույթի վերհանումը, եղեռնի միջազգային արձագանքները:

Գրքի նպատակներից մեկն էլ Հայոց եղեռնի պատմագրության վերհանումն է, որն իր ծավալով, հեղինակի իսկ արտահայտությամբ անընդգրկելի է: Հեղինակը նշում է, որ անցած 75 տարում Հայոց եղեռնի վերաբերյալ տարբեր լեզուներով տպագրվել են 1000-ից ավելի անուն գրքեր, իսկ հոդվածների ու հաղորդումների քանակը պարզապես հաշվառման ենթակա չէ: Նա օրակարգի հարց է համարում հայկական հարցի և հայերի ցեղասպանության համապարփակ մատենագիտության ստեղծումը:

Աշխատության «Հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը» վերնագիրը կրող առաջին գլխի «Մեծ եղեռնը» բաժնում, գրված 1965-ին, հեղինակը կատարում է հետևյալ հարցադրումը՝ ինչո՞ւ

1 Ռուբեն Սահակյան: Ցեղասպանության պատմությունից: Երևան, 1990:

էին հալածում հայերին Թուրքիայում և պատասխանում. որովհետև նրանք չէին ցանկանում դավաճանիչ լինել, չէին ուզում ուրանալ իրենց մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը, այլ կերպ ասած՝ չէին ուզում հրաժարվել իրենց ազգությունից ու կրոնից, կամավոր կերպով ընդառաջել թուրքացման ամենակուլ ծրագրին[1]: Այլ պատճառների թվում Ռ. Սահակյանը հիշատակում է թուրքերի նախանձը՝ իրենցից կուլտուրապես ու տնտեսապես ավելի ուժեղ ու եռանդուն ժողովրդի նկատմամբ, ինչպես նաև իրենց կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովության մասին հայերի պահանջը, որը առաջ էր բերում թուրքերի զայրույթը:

Նա գտնում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեր ժողովուրդը տվեց մոտ 1 300 000 զոհ, իսկ 1 000 000 հայեր տրիպլված եղան ափրվել աշխարհով մեկ[2]: Ինչպես տեսնում ենք, Ռ. Սահակյանի բերած զոհերի թիվը 200 000-ով պակաս է ընդունված 1,5 միլիոնից:

«Եղեռնի դրդապատճառների մասին» բաժնում հեղինակը նշում է, որ 1915-ին արևմտահայության բռնագաղթն ու ջարդերը ներկայումս ճանաչելի են դառնում միջազգային հասարակայնությանը որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, որպես հանցագործություն ուղղված մարդկության դեմ:

Ռ. Սահակյանը առանձնացնում է եղեռնի հինգ հիմնական դրդապատճառներ. 1. Հայկական հարցը լուծելու համիդյան քաղաքականությունը, որն իբրև «ժառանգություն» փոխանցվեց երիտթուրքերին, 2. արևմտահայ առևտրական բուրժուազիայի և առհասարակ արևմտահայության ունեցվածքը հափշտակելը, 3. երիտթուրքերի պանթուրքական ծրագրերը, որի իրականացման ճանապարհին գլխավոր խոչընդոտը հայերն էին, 4. հայերի դերը ռուս-թուրքական դարավոր մենամարտում, երբ ռուս-թուրքական պատերազմներում Թուրքիայի կրած ծանր պարտությունների մեղքը զգալի չափով բարդվում էր հայերի վրա, 5. պատերազմական իրադրությունը[3]:

Հեղինակն ընդգծում է հայերի ցեղասպանության **կանխամտածված բնույթը և նախապես լավ մշակված պլանի առկայությունը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.), որն այսօր ամենից շատ է անհանգստացնում թուրքերին, քանի որ հակառակ դեպքում տեղի ունեցածը իբրև ցեղասպանություն՝ գենոցիդ չի որակվի:

Վկայակոչելով ֆրանսիացի հեղինակ Ժան-Մարի Կառզուի «Հայաստանը 1915-ին» գիրքը (Փարիզ, 1975), Ռ. Սահակյանը ընդգծում է, որ հայերի նկատմամբ կատարվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իսկական գենոցիդ և դեռ ավելին՝ «օրինակելի գենոցիդ», ինչպես այն որակում է վերոհիշյալ ֆրանսիացի հեղինակը: «Եվ հենց այդ որակումն է,— շարունակում է հեղինակը,— որ լուրջ անհանգստություն է պատճառում թուրքական պաշտոնական շրջաններին, մղում նրանց դեպի ամեն կարգի պատմական խեղաթյուրումների և կոպիտ ու բացահայտ նենգափոխման՝ հայկական գենոցիդի իրողությունը ժխտելու և համաշխարհային հասարակական կարծիքը շփոթության մեջ գցելու համար»[1]:

Ռ. Սահակյանը նշում է թուրքական պաշտոնական պատմագրության առաջին հրատարակությունները՝ «Ճշմարտություն հայկական հեղափոխական շարժման մասին և կառավարական միջոցառումները» (1916 թ.), «Հայկական կոմիտեների հեղափոխական ձգտումներն ու գործողությունները Օտոմանյան սահմանադրության հռչակումից առաջ և հետո» (1917 թ.) և ընդգծում, որ հիշյալ հրատարակություններում ձևակերպվեց թուրքական պետական, պաշտոնական տեսակետը՝ «Հայերը ապստամբել են, և թուրքերը ստիպված են եղել ճնշել այդ ապըստամբությունները», մի տեսակետ, որը իշխում է ահա 70 տարի:

Գլխի վերջում հեղինակը հետաքրքրական է համարում այն կարծիքը, թե իբր արևմտահայերը, առանց որևէ դիմադրության, թույլ են տվել իրենց մորթոտելու և գտնում, որ ամենուրեք, որտեղ դա հնարավոր էր, հայերը դիմադրություն են ցույց տվել իրենց դահիճներին, և հիշատակում է Վանը, Շատախը, Շապին-Գարահիսարը, Մուսա լեռը, Ուրֆան, Սասունը:

Դույզն իսկ չնսեմացնելով հայ ժողովրդի ինքնապաշտպանական դյուցազնամարտերի ողբերգականությունն ու հերոսականությունը, մենք գտնում ենք, որ չարիքը դիմագրավելու ուղղությամբ, այնուամենայնիվ, չարվեց այն ամենը, ինչ հնարավոր էր: Մեր ազգային վարիչներին չհաջողվեց ստեղծել կազմակերպված դիմադրության քիչ թե շատ ղեկավարելի համակարգ, մոբիլիզացնել դիմադրության ընդունակ առկա բոլոր ուժերը, որի դեպքում նախճիրը այդքան աճավոր և զոհերի թիվն էլ այդքան անչափելի չէր լինի: Սա մեր համոզմունքն է, որը երբեք էլ չի նշանակում անտեսել մեր ժողովրդի դիմադրական ոգին, այլ, ընդ-

[1] Նշվ. աշխ., էջ 6:
[2] Նշվ. աշխ., էջ 11:
[3] Նշվ. աշխ., էջ 12—14:

[1] Նշվ. աշխ., էջ 15:

հակառակը, հարցի նման դրվածքի դեպքում այն ավելի է ընդգծվում: Գլխի «Որքան հին է ռասիզմը» բաժնում (1969 թ.) խոսք է գնում ֆրանսուհի հրապարակագիրը Էլենա դը լա Սուշեռի «Ռասիզմը 1000 պատկերներում» (Փարիզ, 1967) գրքի մասին, որտեղ հեղինակը վեր է հանում սուլթանական և երիտթուրքական բռնատիրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառված չարագործությունները: Վկայակոչելով Սուշեռի խոսքերը, թե Գերմանիայի աչքի առջև ու նրա պատասխանատվությամբ էր, որ գրվեց արևմտահայերի պատմության ամենասև էջը, և հենց Հիտլերը կարող էր բացականչել. «Ոչնչացրեք, ո՞վ է ներկայումս հիշում Հայաստանի ջարդերի մասին», Ռ. Սահակյանը ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ հեղինակի արտահայտած վերջին միտքը գնալով ավելի է գրավում ռասիզմի և ցեղասպանության պատմության հարցերով զբաղվողների ուշադրությունը:

Հայ պատմաբանը ցասումով է նշում, որ այդքանից հետո Թուրքիայում գտնվում են մարդիկ, որոնք մտածում են հայ ժողովրդի դահիճների հիշատակի հավերժացման, «Ազատության ևահատակների դամբարան» հիմնելու մասին, որտեղ մեծ մարդասպան Թալեաթի կողքին պիտի թաղվեն մարդասպաններ Շաքիրը, Ազմին, Խալիլը և ուրիշներ:

«Գենոցիդի «դասական» օրինակ» բաժնում (1988 թ.) հեղինակն արժանավոր է գնահատում «Պրոգրես» հրատարակչության լույս ընծայած «Ինչը ինչ է համաշխարհային քաղաքականության մեջ» խորագիրը կրող բառարան-ուղեցույցը (Մոսկվա, 1987), որտեղ տրված է «գենոցիդ» հասկացության բնորոշումը, ըստ որի գենոցիդը դա գործողություններ են, որոնք կատարվում են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ[1]: Այնուհետև այնտեղ ասված է, որ գենոցիդի «դասական» օրինակ է հանդիսանում 1,5 մլն հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից, որոնք օգտվեցին առաջին համաշխարհային պատերազմի իրադրությունից: Նշվում է, որ գենոցիդը հանցագործություն է մարդկության և մարդկայնության դեմ և պատժվում է որպես այդպիսին, ինչը իր արտահայտությունն է գտել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած Հատուկ կոնվենցիայում: Նշվում է նաև, որ գենոցիդը, իբրև հանցագործություն, վաղեմություն չունի:

1 Գենոցիդի լրիվ բնորոշումը տե՛ս նշվ. աշխ., էջ 23:

Այս առիթով հեղինակը նպատակահարմար է համարել ներկայացնել նաև Եվրոպական պառլամենտի 1987-ի հունիսի 18-ի որոշումը, որտեղ ասված է. «Եվրոպական պառլամենտը... այն կարծիքին է, որ Օսմանյան կայսրության տարածքում հաստատված հայերի հետ կապված 1915—1917 թթ. ողբերգական դեպքերը իրենցից ներկայացնում են գենոցիդ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին հավանության արժանացած գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու կոնվենցիայի իմաստով:

«Այս ապրիլը» բաժինը գրված է երկրաշարժից հետո (1988 թ.): ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988-ի նոյեմբերի 22-ի ընդունած օրենքը «Օսմանյան Թուրքիայում 1915-ի հայերի ցեղասպանության դատապարտման մասին» և այն որակելով իբրև անգնահատելի պատմական փաստաթուղթ, հեղինակը մտովի անդրադառնում է անցած մի քանի տասնամյակներում եղեռնի առնչությամբ տեղի ունեցած իրադարձություններին և վերհիշում հատկապես 1965-ի ապրիլի 24-ը, երբ աշխարհի 23 երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Լիբանան, Սիրիա, Արգենտինա, Ուրուգվայ և այլն, լայնորեն նշվեց 1915-ի եղեռնի 50-ամյակը: «Պրավդա» թերթում լույս տեսավ «Ցեղասպանությունը՝ մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն» հոդվածը: Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր՝ մոռացության մատնված ոճիրը դատապարտելու արդարացի պահանջով: Օպերային թատրոնի շենքում գումարվեց սգո հանդիսավոր նիստ: Մեր կողմից ավելացնենք նաև, որ իշխանությունները կոպտորեն միջամտեցին, հրշեջ մեքենաների օգնությամբ ցրեցին օպերայի հրապարակում հավաքված ցուցարարներին, և այդ օրը խորհրդային ոստիկանության ձեռքին առաջին անգամ երևացին ռետինե մահակներ, ցույցի երիտասարդ շատ ակտիվիստներ էլ ձերբակալվեցին: Ռ. Սահակյանը իրավամբ նշանակալի երևույթ է համարում 1966-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ստվարածավալ ռուսերեն ժողովածուն ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, որի կազմողներից մեկն էլ ինքն էր: Նշանակալի էր նաև 1967 թվականը, երբ Երևանում, Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա բացվեց ցեղասպանության զոհերի հուշարձանը:

Նա վերհիշում է նաև 1973-ի հուլիսը, երբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը պաշտոնապես հանձնարարում է ռասիզմի և ցեղասպանության կանխման ենթահանձնաժողովին՝ ուսումնասիրելու համապատասխան պատմական փաստաթղթերը՝ 1915-ի եղեռնը

որպես ցեղասպանության ակտ որակելու տեսանկյունով: 1974-ի մարտի 6-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 39-րդ նիստում քննության է առնվում ցեղասպանության կանխման և այն պատժելու մասին հուշագիրը, որտեղ 1915-ի հայկական ջարդերը հիշատակվում էին որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանության փաստ: Սակայն Թուրքիայի ներկայացուցչի պահանջով փաստաթուղթը չի վավերացվում և վերադարձվում է «լրացուցիչ ուսումնասիրության»:

1975-ի ապրիլի 3-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատն ընդունում է բանաձև, որով ճանաչվում է հայերի ցեղասպանության փաստը:

1984-ի ապրիլի 13—16-ին Փարիզում գումարվում է ժողովուրդների մշտական ատյանի նիստ, որը հատուկ քննության է առնում 1915-ի ցեղասպանության հարցը և ընդունում որոշում այն մասին, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948-ի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի համաձայն, հայ ժողովրդի բնաջնջումը իրենից ներկայացնում է գենոցիդ, որի համար ժամանակի թուրքական կառավարությունը պատասխանատվություն է կրում:

1987-ի հունիսի 13-ին Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում տեղի ունեցած Եվրոպական պառլամենտի հերթական նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում, որի համաձայն 1915—1917 թթ. հայերի հետ կատարված իրադարձությունները որակվում են իբրև գենոցիդ: Հիշյալ որոշումը հեղինակը գնահատում է իբրև հանրագումար բոլոր այն ջանքերի, որ համաշխարհային հասարակայնությունը գործադրեց 1960—80-ական թվականներին՝ եղեռնը 20-րդ դարի առաջին զանգվածային ցեղասպանություն որակելու և այն դատապարտելու ուղղությամբ[1]:

Ռ. Սահակյանի աշխատության երկրորդ գլուխը կրում է «Հոդվածհրապարակումներ» խորագիրը: Հեղինակը պրոֆ. Վ. Դիլոյանի թարգմանությամբ այստեղ է զետեղել կանադացի պրոֆեսոր Ուլրիխ Տրումպեների «Գերմանիան և Օսմանյան կայսրությունը 1914—1918 թթ.» գրքի «Հայկական հալածանքները» գլուխը (ԱՄՆ, Պրինստոն, 1968, էջ 200—270):

Նշելով, որ պրոֆ. Տրումպեների հետամտած հիմնական խնդիրը Օսմանյան կայսրության ներքին կյանքում և արտաքին քաղաքականության մեջ կայզերական Գերմանիայի դերի ու ազդեցության բացահայտումն է, Ռ. Սահակյանը գտնում է, որ հեղինակը ձգտել է մի փոքր նվազեցնել կամ մեղմացնել Գերմանիայի անփառունակ դերը հայերի ճակատագրում:

Հեղինակը վեր է հանում երիտթուրքերի հակահայկական, ցեղասպան քաղաքականության **կանխամտածված ու հնքնուրույն բնույթը** (ընդգծումն իմն է— Մ. Կ.): «Հիրավի,— գրում է Ռ. Սահակյանը,— արտասահմանյան, ինչպես և խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում գործն այնպես է ներկայացվում, թե իբր գերմանական իմպերիալիզմի ջատագովներն են հղացել, մշակել և առանդուն կերպով հրահրել հայերի իսպառ ոչնչացման ծրագիրը, և որ երիտթուրքական կառավարությունը իբր կարող էր չկիրառել այդ քաղաքականությունը, որ իբր Գերմանիան ուզում էր, որ հայ ազգը գլխովին բնաջնջվի և այլն: Նման պնդումները մնում են որպես անհիմն ենթադրություններ»[1]:

Ռ. Սահակյանը իր անհամաձայնությունն է հայտնում հեղինակի արտահայտած այն մտքերին, թե իբր գերմանական ու ավստրիական պետական գործիչները նողկում էին ու ցնցված էին թուրքերի դաժանություններից, թե Վանգեհհայմը համակված էր հայկական ընդհատակյա առեղի մի շարժման առկայության գաղափարով, թե իբր տարագիր հայերին օգնելու Ջեմալի խոստումն անկեղծ էր և այլն[2]:

Տրումպեների աշխատության համապատասխան գլխի (էջ 37—104) հրատարակումը, անշուշտ, պետք է գնահատել իբրև շահեկան գործ:

Հաջորդ բաժնում Ռ. Սահակյանը անդրադառնում է 1984-ին Փարիզում ֆրանսերեն վերահրատարակված ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերին՝ նոր պաշտոնական փաստաթղթերի մի հավելվածով, որոնք հրատարակվում են առաջին անգամ: Դրանք 17 արժեքավոր փաստաթղթեր են՝ բոլորն էլ հանված ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի արխիվից, թվագրված 1915-ի ապրիլի 30-ից մինչև հոկտեմբերի 9-ը:

Դրանցից 5-ը դեսպանի խիստ գաղտնի հեռագրերն են՝ հասցեագրված ԱՄՆ-ի պետական քարտուղարին, 9-ը՝ Հալեպի, Կոնիայի ու Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսների զեկուցագրերն են իրենց դեսպանին, մնացածը՝ այլ անձանց զեկուցագրեր են:

[1] Նշվ. աշխ., էջ 23—29:

[1] Նշվ. աշխ., էջ 35—36:
[2] Նշվ. աշխ., էջ 36—37:

Մեկ առ մեկ վերլուծելով նորահայտ փաստաթղթերը, Ռ. Սահակյանն ընդգծում է այն նորը, որ ավելացնում են դրանք եղածին:

Աշխատության երրորդ գլուխը, որը կրում է «Դատապարտում են թուրք ցեղասպաններին» խորագիրը, բաղկացած է 5 բաժիններից:

Այս գլխի նպատակն է վեր հանել համաշխարհային հասարակայնության ցասումնալի բողոքը երիտթուրքական կառավարողների հրեշավոր չարագործությունների դեմ:

Առաջին բաժին է հատկացված գերմանացի արևելագետ ու հասարակական գործիչ Յոհաննես Լեփսիուսին, բնութագրված են նրա «Հայաստանը և Եվրոպան» (1896 թ.), «Հաղորդում հայ ժողովրդի դրության վերաբերյալ Թուրքիայում» (Պոտսդամ, 1916) աշխատությունները, ինչպես նաև «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թթ.» դիվանագիտական փաստաթղթերի մեծածավալ ժողովածուն:

Չորրորդ գլուխը խորագրված է «Դիմադրություն մարդասպաններին. ինքնապաշտպանական կռիվներ» և նրա առաջին բաժինը ցվիրված է սուեդահայության հերոսամարտին՝ «Մուսա լեռան գոյամարտի պատմական դասերը» (1935 թ.) վերտառությամբ: Թվում է, թե Մուսա լեռան մասին թարմ խոսք ասելը դժվար պիտի լիներ, բայց ոչ՝ հեղինակը այն ներկայացրել է միանգամայն ուրույն մեկնաբանությամբ, ապելիքը «համեմել» սկզբնաղբյուրներից քաղված նոր փաստերով:

Ռ. Սահակյանը գտնում է, որ Մուսա լեռան հերոսամարտը (1915 թ. հուլիս-սեպտեմբեր) թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր ազատագրական պայքարի առավել փայլուն ու լուսավոր էջերից է, և այդ պատմական սխրանքը իր ուրույն ու անփոխարինելի տեղն ունի հայոց հազարամյա տարեգրության մեջ[1]:

Գծելով հերոսամարտի ընդհանուր պատկերը, ինչպես նաև փուլ առ փուլ մանրամասնորեն նկարագրելով գլխավոր ճակատամարտերն ու ավարտը, հեղինակը հիշատակում է նրա պատմական դասերը, այժմեական հնչողությունն ու հրատապ արդիականությունը, որովհետև ազգայնամոլ այն ուժերը, որոնք երեկ փորձում էին վերջ դնել մուսալեռցի հայերի և ընդհանրապես հայ ժողովրդի գոյությանը, այսօր էլ կենսունակ ու վտանգավոր են:

«Մուսալեռցիների մյուս դասն այն է,— շարունակում է հեղինակը,— որ ազատությունը խեղդողների դեմ պետք է պայքարի ելնել թեկուզ փոքրաթիվ ուժերով, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պայքարը խիստ անհավասար»[1]: Պատասխանելով այն հնչեցվող հարցին, թե արդյո՞ք լեռ բարձրանալը արկածախնդրություն չէր, հեղինակն անվարան պատասխանում է, որ, ընդհակառակը, արկածախնդրություն կլիներ հազարավոր մարդկանց մարդասպանների գթությանը թողնելը, բռնագաղթի ճամփան բռնելը, անապատների ավազուտներին կուլ գնալը: «Պատմական ճշմարտությունն, այսպիսով, այն պարզ իրողությունն է,— ամփոփում է հեղինակը,— որ բռնությանն ու հալածանքներին, ջարդերին ու տեղահանություններին օրինաչափորեն ու անխուսափելիորեն հակադրվում են և պիտի հակադրվեն հուզումներն ու ապստամբությունները, պայքարն ու ինքնապաշտպանությունը: Այլ կերպ ասած՝ չլինեին ջարդն ու տեղահանությունը, չէր լինի և մուսալեռցիների ընդվզումը: Միայն այսպես, և ոչ թե հակառակը, ինչպես փորձում են ներկայացնել պատմության թուրք կեղծարարները»[2]:

Վերջում հեղինակը օրինակներ է բերում, թե ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մուսալեռցիների սխրանքը ոգևորել է հարավսլավական պարտիզաններին, լեհ հակաֆաշիստներին և եզրակացնում, որ այդ պատմական սխրանքի վեհությունն ավելի ըմբռնելի է դառնում, երբ մենք գիտակցում ենք, որ Մուսա լեռան գոյամարտի պատմությունը ոգեշնչում է ազատության մարտիկներին՝ ամեն կարգի բռնության դեմ մղվող նրանց պայքարում:

Աշխատության վերջին՝ 5-րդ գլուխը հատկացված է Մեծ եղեռնի պատմագրության հարցերին:

Հեղինակը քննադատական սուր խոսք է ուղղում մոսկովյան իրավաբան Մ. Ն. Անդրյուխինի հասցեին, որը «Գենոցիդը իմպերիալիստական պետությունների քաղաքականության մեջ» (Մոսկվա, 1967) գրքույկում, շատ ճիշտ բնութագրելով «գենոցիդ» հասկացությունը, միաժամանակ անբացատրելիորեն ամբողջովին շրջանցել է Օսմանյան կայսրությունում արևմտահայերի գենոցիդի հարցը:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում եղեռնի ֆրանսիական պատմագրությանը ցվիրված բաժինը: Նշվում է, որ 1900—1960-ական թվականներին Ֆրանսիայում հրատարակվել է Արևմտյան Հայաստանի պատմությանը վերաբերող շուրջ 400 անուն գիրք, որոնց մի զգալի մասը ցվիրված են 1915-ի իրադարձություններին:

---

1 Նշվ. աշխ., էջ 174:

1 Նշվ. աշխ., էջ 190:

2 Նշվ. աշխ., էջ 191:

Ռ. Սահակյանը գրում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հրատարակված գրքերը կրում էին մեծիմաստ ընկարագրական բնույթ՝ Ժակ դը Մորգանի, Ռենե Պինոնի, Էմիլ Դուսերգի, Ֆրեդերիկ Մակլերի, Անատոլ Ֆրանսի, Անրի Բարբյի և այլոց գործերը, որոնցում առավել գերիշխում էր գերմանատյաց ուղղությունը:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում լույս տեսած գրականությունը սահմանափակ է, չնայած հեղինակը թվարկում է մի շարք անուններ՝ Պոլ դյու Վեռ, Ռեմյուզա, Ռ. Գոնտրիրոն, Է. Նիկոլ, Միշել Պայառես, Պիեռ Ռեդան որոնց աշխատություններն աչքի են ընկնում նոր նյութերի ընդգրկմամբ ու անաչառ գնահատականներով: Այս շրջանում եղեռնի պատմությունը շարունակում են կեղծել Պիեռ Լոտին, Պիեռ Լիոտեն:

Այնուհետև Ռ. Սահակյանն ընդգծում է, որ Եղեռնի 50-ամյակի նշումից հետո Ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական գրականության մեջ եղեռնը որակավորվում է որպես 20-րդ դարի առաջին զանգվածային ցեղասպան:

Հեղինակը հատկապես արժեքավորում է 1970—80-ական թվականների հրատարակությունները, որոնցում մերկացվում է ժամանակակից թուրք պատմագրության միտումնավոր մոտեցումը, պատմական փաստերի ու թվական տվյալների բացահայտ ենթագնահատումը և, միաժամանակ, դատապարտվում ժամանակակից թուրք կառավարողների ժխտողական դիրքը եղեռնի փաստի ճանաչման հարցում[1]:

Ռ. Սահակյանը հատուկ կանգ է առնում Իվ Տերնոնի «Հայերը. մի ցեղասպանության պատմություն» գրքի վրա (Փարիզ, 1977), որտեղ հեղինակը վերլուծում է երիտթուրքական կուսակցության գաղափարական կոնցեպցիաները, թուրքիզմի գաղափարական զենքի վերածվելը, որով էլ հայերը դատապարտվեցին կործանման:

Ֆրանսիացի հաջորդ պատմաբանը, որին հատուկ ուշադրություն է նվիրում Ռ. Սահակյանը, Ժան-Մարի Կառզոն է, որի գիրքն ունի ինքնատիպ վերնագիր՝ «Օրինակելի ցեղասպանություն: Հայաստան, 1915 թվական» (Փարիզ, 1975): Նշվում է, որ հեղինակը, քննելով հայ ազգաբնակչության բռնի տեղահանման հարցը, այսպես կոչված, հայկական ապստամբության առնչությամբ, ընդգծում է, որ դա զուրկ է որևէ հիմքից և մի շարք փաստերով ապացուցում, որ տեղահանման հարցը սկզբունքորեն վճռված էր Վանի դեպքերից շատ առաջ, և որ

[1] Նշվ. աշխ., էջ 225:

գոյություն չունի ոչ մի ապացույց, որ հայերը կանխատրամադրվել ու իրականացրել են խռովություն:

Այնուհետև Ռ. Սահակյանը արժեքավորում է ֆրանսիացի պատմաբան Արթուր Բեյլերյանի «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում. 1914—1918 թվականներ» խորագիրը կրող դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն, որի առաջաբանում հեղինակը քննարկել է եղեռնին առնչվող մի շարք կարևոր հարցեր: Դրանից տեղեկանում ենք, որ 1915-ի հունվարի սկզբին տեղի է ունեցել խիստ գաղտնի մի ժողով, որին մասնակցել են ընդամենը 5 հոգի՝ Թալեաթը, Բեհաեդդին Շաքիրը, Պոլսի պրեֆեկտ Իսմայիլ Ջանփոլադը, դոկտոր Նազըմը և ռազմական նախարարությունից գնդապետ Սեյֆին: Երկար քննարկումից հետո ընդունվել է «Տասը հրահանգ», որոնցով պետք է իրականացվեր տեղահանությունն ու կոտորածը[1]:

Ռ. Սահակյանը արժանի հակահարված է հասցնում նաև թուրքական պատմաբաններին՝ Պոլ Դյումոնին, որը կրկնում է տեղահանությունների ստիպողական լինելու թուրքական վարկածը, Ժան Լյարոշին, որն այն կարծիքն է հայտնել, թե թուրքերը գերիշխող ժողովրդի մի եզակի օրինակ են, որոնք հանդուրժողականություն են հանդես բերել պարտված ժողովուրդների կրոնների նկատմամբ նույնիսկ միջնադարում:

Ավելի հանգամանալի է քննադատությունը Պիեռ Մոզերի հասցեին, որը անհայտ մի հրատարակչության միջոցով լույս աշխարհ է հանել «Հայերը. որտե՞ղ է ճշմարտությունը» (1980 թ.) գիրքը:

Ռ. Սահակյանը կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Այսպիսով, 1960—80-ական թվականներին Ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական հրատարակություններում ընդհանուր առմամբ ճիշտ են լուսաբանվում 1915-ի հայկական ցեղասպանության հետ կապված իրադարձությունները, բացառությամբ մի քանի գործերի: Ուստի դրանք կարող են իրենց ձգտումը բերել մարդկության դեմ ուղղված այդ հանցագործությունը միջազգային մակարդակով ճանաչելու և այն դատապարտելու շնորհակալ գործին:

Միաժամանակ այդ աշխատությունները լավագույն պատասխան են ժամանակակից թուրք պատմագիտության ստահոդ պնդումներին և պատմական ճշմարտության աղավաղման բացահայտ փորձերին»[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 231—233:

[2] Նշվ. աշխ., էջ 239:

«Հայերի ցեղասպանությունը անգլիական պատմաբանների աշխատություններում» բաժնում Ռ. Սահակյանը վերլուծում և գնահատում է 1960—80-ական թվականներին Անգլիայում լույս տեսած մի քանի կարևոր աշխատություններ: Այդ շարքում առանձնացվում է պատմաբան Քրիստոֆեր Ուոքերի «Հայաստան. ազգի կործանումը» (Լոնդոն, 1980) աշխատությունը և նշվում, որ այն աչքի է ընկնում սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության լայն ընդգրկումով, գրված է Անգլիայի արտգործնախարարության արխիվում պահվող մի շարք արժեքավոր փաստաթղթերի օգտագործմամբ:

Հետևյալ է առնված կովկասագետ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Դեվիդ Լանգի «Հայերը աքսորյալ ժողովուրդ» (Լոնդոն, 1981) աշխատությունը: Ըստ Դ. Լանգի տվյալների, երեք միլիոն արևմտահայերից ոչնչացվեց 1,5 միլիոնը: Անգլիացի պատմաբանը անժխտելի է համարում, որ բնաջնջումը կանխամտածված ծրագրված էր և իրականացված երիտթուրքական խունտայի հրամանով:

Ամփոփելով իր խոսքը անգլիական պատմագրության մասին, հայ ուսումնասիրողը եզրակացնում է, որ 1915 թվականի եղեռնի պատմությունը անգլիական պատմաբանների կողմից մեկնաբանում է հիմնականում անաչառությամբ, պատմականության դիրքերից, և միայն առանձին հեղինակների գործերում է, որ առկա է աչառու, միտումնավոր մոտեցում:

Գլխի վերջին, ամենաընդարձակ բաժինը կրում է «Եղեռնի պատմության ենթագիտակումը թուրք պատմագրության կողմից» վերնագիրը:

Ռ. Սահակյանը նշում է, որ 1960—80-ական թվականներին Թուրքիայում լույս տեսած պատմագիտական գրականության մեջ զգալի տեղ է հատկացված Հայկական հարցի և եղեռնի պատմությանը, որը բացատրվում է Եղեռնի 50-ամյակի համաշխարհային մասշտաբներով նշումով: Նման իրադրության մեջ թուրք կառավարող շրջանները միջոցներ ձեռնարկեցին իրենց երկրի միջազգային հեղինակությունը փրկելու համար: Եվ ահա կարճ ժամանակում հրապարակ եկան տարբեր մակարդակի պատմագիտական աշխատություններ, որոնց հիմնական միտումը ամեն ինչ գլխիվայր ներկայացնելն էր:

1980-ական թվականների սկզբներից, ժխտելով գենոցիդի բուն փաստը, թուրք պատմաբանների մի մասը ընդունում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում որոշ քանակությամբ հայեր «մահացել են», սակայն նրանք գենոցիդի զոհեր չեն, քանի որ երիտթուրքական կառավարությունը երբեք չի նպատակադրվել ոչնչացնել հայերին, չի եղել բնաջնջման նախապես մշակված ծրագիր, և կառավարող շրջանները մեղավոր չեն, որ տեղական իշխանությունների առանձին անբարեխիղճ ու անպատասխանատու ներկայացուցիչներ չեն կատարել հայերի «անվտանգ տեղափոխման» վերաբերյալ հրամանը:

Ռ. Սահակյանը հիշատակում է մեկ տասնյակից ավելի թուրք պատմաբանների՝ Սադի Քոչազի, Ջեմալ Օզքայա, Ալթան Դելիորմանի, Ջիա Կարալ, Այհան Յալչընի, Վեյսել Էրօղլու, Մեհմեդ Հոջաօղլու, Սալահի Սոնիել, Ջեմալ Անադոլ, Քյամուրան Գյուրյուն և ուրիշներ, որոնց աշխատությունները հրատարակվել են ոչ միայն թուրքերեն, այլև անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով, և որոնք աղավաղված և ծայրահեղ միտումնավոր ձևով են ներկայացնում Հայաստանի նոր շրջանի և, մասնավորապես, հայկական ջարդերի ու 1915-ի ցեղասպանության պատմությունը, անհեթեթ մեղադրանքներ առաջ քաշում արևմտահայ ազգաբնակչության նկատմամբ:

Ռ. Սահակյանը վերջին հրատարակություններից նշում է պրոֆեսոր Թ. Աթայովի անգլերեն լույս տեսած «Թուրքիկ հայացք հայկական հարցի վրա» գրքույկը, որտեղ հեղինակը ամբողջովին աղավաղում է 1915-ի դեպքերը, պնդում, որ հայերը փաստորեն հանդես էին գալիս **որպես պատերազմող կողմ** (ընդգծումն իմն է— Մ. Կ.) Ռուսաստանի կողքին, ուստի նրանց հարկ էր հեռացնել սահմանից, հետևաբար «տեղափոխումը», ինչպես նա անվանում է բռնագաղթը, պատերազմի հանգամանքով ծագած անհրաժեշտություն էր:

Ի մի բերելով իր վերլուծությունները, Ռ. Սահակյանը եզրակացնում է, որ թուրք հեղինակների հիմնական դրույթները հանգում են հետևյալին.

1. Պատերազմի հենց սկզբից արևմտահայերը ամենուրեք սկսել են պատրաստվել «համընդհանուր ապստամբության» թուրքերին թիկունքից հարվածելու և Օսմանյան կայսրությունից անջատվելու նպատակով:

2. Սարիղամիշի տակ 1915-ի հունվարին թուրքական զորքերի կրած պարտության գլխավոր մեղավորները հայերն են:

3. «Հայկական ապստամբությունը» նպատակ ուներ աջակցել ռուսական զորքերին:

4. Հայերը մերժեցին թուրքերի առաջարկը՝ ապստամբել ռուսական Կովկասյան բանակի թիկունքում:

5. Հայերը ոչնչացնում էին մահմեդական գյուղերը՝ իրենց բնակիչներով:

6. Մինչև հայերի «խռովությունը» Վանում, թուրքական իշխանությունների կողմից ոչ մի պատժիչ միջոցառում չի ձեռնարկվել և հայերի տեղահանման ու ոչնչացման նախապես մշակված պլան չի եղել:

7. Երիտթուրքերը ոչ մի պատասխանատվություն չեն կրում հայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի համար[1]:

Այնուհետև հեղինակը կետ առ կետ մերժում է թուրքական հորինվածքները և վեր հանում իրականությունն ու ճշմարտությունը:

Պատմագրական բնույթի գնահատելի աշխատանք է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի նոր պատմությունը արտասահմանյան արդի հեղինակների աշխատություններում» խորագրով կոլեկտիվ աշխատությունը[2], որի պատասխանատու խմբագիրը, ներածության և 1—3-րդ գլուխների հեղինակն է պրոֆ. Ռ. Գ. Սահակյանը:

Առաջին երեք գլուխներում Ռ. Գ. Սահակյանը քննարկել է Հայաստանի նոր պատմության, այդ թվում նաև հայերի 1915—1916 թթ. ցեղասպանության հարցերը ժամանակակից թուրք, ֆրանսիացի և անգլիացի պատմաբանների աշխատություններում:

Կոլեկտիվ այս մենագրության 4-րդ գլուխը կոչում է «Հայաստանի նոր պատմության հարցերը ԱՄՆ-ի ժամանակակից պատմագրության մեջ» վերնագիրը, որի հեղինակն է Գ. Մախմուրյանը (էջ 115—159): Մանրամասնորեն ներկայացված են ամերիկյան մի շարք հեղինակների (Ջ. Բարտոն, Վ. Հայգ, Ռ. Դեվիս, Կ. Ջոնսոն, Բ. Լյուիս, Լ. Արպի, Վ. Տատրյան, Ժ. Լիպարիտյան, Հ. Դեկմեջյան, Ռ. Հովհաննիսյան և ուրիշներ) գլխավորապես տեսական ընդհանրացումները ցեղասպանության մասին առհասարակ: Գ. Մախմուրյանը մերկացնում է Ստեֆորդ Ջ. Շոուի և Էզել Կ. Շոուի «Օսմանյան կայսրության և ժամանակակից Թուրքիայի պատմության» երկհատոր գրքում (Քեմբրիջ, 1977) տեղ գտած փաստական կոպիտ սխալներն ու արտահայտված հակագիտական մեկնաբանությունները, թե ցեղասպանության զոհերը իրենք էին ամեն ինչում մեղավոր, և թե տարագրությունը անհրաժեշտ պատասխան միջոցառում էր թշնամուն օգնող ոխերիմ հայերի դեմ[3]:

1 Նշվ. աշխ., էջ 298:

2 Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993.

3 Նշվ. աշխ., էջ 140:

Հեղինակը հակիրճ կերպով ներկայացնում է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի քննադատությունը Շոու ամուսինների գրքի վերաբերյալ:

Հետագա շարադրանքում Գ. Մախմուրյանը ցույց է տալիս, որ ամերիկյան մի շարք հեղինակներ հատուկ ուշադրություն են դարձրել հայերի ցեղասպանության կազմակերպման գործում թուրքական պետության մասնակցության հարցին, բազմաթիվ համոզիչ փաստերով ցույց տվել, որ թուրքական իշխանությունները՝ իթթիհատի պարագլուխները և քեմալականները եղել են ուղղակի կազմակերպիչներ և լիակատար պատասխանատվություն են կրում երկրում կատարված հանցագործությունների համար:

Մենագրության հինգերորդ գլուխը, որի հեղինակն է պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, նվիրված է Հայաստանի նոր պատմության արաբական պատմագրությանը (էջ 159—218):

Վերլուծելով արաբ պատմաբանների Մրվան ալ-Մուդավարի, Ֆուադ Հաֆիզի և այլոց աշխատությունները, Ն. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ երիտթուրքական հեղափոխության ժամանակաշրջանի լուսաբանումը արաբական պատմագրության մեջ՝ լրացուցիչ նյութ է տալիս և օգնում է ավելի լավ հասկանալ պահի բարդությունը, երիտթուրքերի ազգային քաղաքականության իսկական բնույթը, ինչպես նաև 1915-ի նախապատրաստվող ցեղասպանության պատճառներն ու էությունը:

Արաբ հեղինակներ Ֆուադ Հաֆիզի, Օսման ալ-Թուրքի, Մրվան ալ-Մուդավարի, Մուսա Պրեևնի և այլոց աշխատությունների հիման վրա Ն. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ արաբական պատմագրությունը հայերի ցեղասպանության հիմնապատճառներ է համարում Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքական քաղաքականությունն ու պանթուրանիզմը: Այս խորքապատառի վրա հեղինակը տարօրինակ է համարում արաբ հեղինակ Ֆուադ Մայդանիի կարծիքը, ըստ որի հայ-օսմանյան բարեկամությունը շատ հին էր, և այդ բարեկամությունը փչացրեց ու կատաղի թշնամության վերածեց ռուսական պրոպագանդան:

Հեղինակը նշում է, որ արաբ հեղինակները պատշաճ տեղ են տալիս թուրքական պաշտոնական վարկածի քննադատությունը, այսպես կոչված, «հայկական ապստամբությունների» մասին, մեղադրում երիտթուրքական կառավարողներին: Արաբ հեղինակ Ա. Տոման, Ֆ. Հաֆիզը և ուրիշներ մեծ ուշադրություն են դարձրել օսմանյան կառավարության կողմից ջիհադի հայտարարմանը և նշել, որ այն շոշափելի ար-

դյունք չտվեց, այսինքն մուսուլման ժողովուրդները չելան սրբազան պատերազմի[1]:

Քննարկվում են լիբանանյան պատմաբանների Մասուդ Դահիրի, Ջամիլ Հաբրիի, եգիպտական պատմաբան Ամին Սայիդի և այլոց աշխատությունները, որոնք համակարծիք են նրանում, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանությունն իրականացրին երիտթուրքական կառավարողները՝ համաձայն վաղօրոք մշակված ծրագրի:

Ն. Հովհաննիսյանը նշում է, որ արաբ հեղինակների աշխատություններում հանգամանորեն, երբեմն ամենայն մանրամասնությամբ տրված է հայերի բնաջնջման նկարագիրը: Այդ աշխատություններում տրված է նաև տարբեր վայրերում հայերի հերոսական ինքնապաշտպանության սեղմ շարադրանքը:

Արաբ հեղինակներն անդրադարձել են նաև արաբ, ասորի և այլ ոչ թուրք ժողովուրդների կոտորածներին, և Ն. Հովհաննիսյանը ամենայն իրավամբ գտնում է, որ նման մոտեցումը հնարավորություն է տալիս առավել չափով խորամուխ լինել երիտթուրքերի ազգային քաղաքականության մեջ:

Հեղինակը շարադրում է Քեմալ Ահմադի տեսակետները հայերի ցեղասպանության մեջ քրդերի կատարած դերի մասին, որն այն բացատրում է քրդական վերնախավի ընչաքաղցությամբ, ջիհադի ազդեցությամբ և այլ գործոններով[2]:

Աշխատության վերջին՝ 6-րդ գլուխը, որի հեղինակն է Ա. Մանուչարյանը, կրում է «Հայերի ցեղասպանությունը գերմանացի հեղինակների լուսաբանմամբ» (էջ 219—244) վերնագիրը:

Հայերի ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայում հրատարակված պատմագիտական գրականությունը Ա. Մանուչարյանը տեսակավորում է երեք խմբի. առաջին խմբին պատկանում են այն ուսումնասիրությունները, որոնցում փաստական հարուստ նյութի և սկզբնաղբյուրների մանրակրկիտ հետազոտության հիման վրա օբյեկտիվ և սկզբունքային դիրքերից վերլուծվում են ցեղասպանության պատճառները և նրա հանցագործ բնույթը: Երկրորդին վերաբերում են թուրքոլոգիական հետազոտությունները, որոնցում կասկածի տակ է դրվում

[1] Նշվ. աշխ., էջ 208:
[2] Նշվ. աշխ., էջ 215:

ցեղասպանության բուն փաստը, երրորդ խմբի հեղինակները բացարձակապես արհամարհում են հայերի ցեղասպանությունը:

Հայերի ցեղասպանությունը օբյեկտիվորեն լուսաբանող հեղինակներ են համարվում Տեսսա Հոֆմանը, Պետեր Լանգեն, Է. Մայերը, Ժ. Քոչարյանը, Ա. Ռեյցը, Ու. Ֆայգելը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում նշում են, որ տարագրությունը սոսկ միջոց էր հայերի սիստեմատիկ բնաջնջման համար: Հիշյալ հեղինակները հայերի կորուստները հաշվում են 1 միլիոն 800 հազար մարդ:

Ա. Մանուչարյանը նշում է, որ գերմանական պատմագրության մեջ կարևոր հարցերից է հայերի ցեղասպանության գործում Գերմանիայի մեղսակցության և պատասխանատվության հարցը, որը, գերմանացի հեղինակներից շատերի կարծիքով, ենթակա է խորը և բազմակողմանի ուսումնասիրության:

Ա. Մանուչարյանը շեշտադրում է գերմանացի հետազոտողների ջանքերը՝ միջազգային համագործակցության և հենց թուրքական կառավարության կողմից հայերի ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարում: Նշվում է, որ նրանք պահանջում են իրենց կառավարությունից՝ առաջինը ճանաչել հայերի ցեղասպանությունը, որպես կայզերական Գերմանիայի իրավահաջորդ, քանի որ, ըստ պրոֆեսոր Վալտեր Ֆաբիանի բնորոշման, կան հանցագործություններ, որոնք չի կարելի մոռանալ, որպիսին է հայերի ցեղասպանությունը[1]:

Եղեռնի պատմագրության վերաբերյալ առանձին գլուխ է պարունակում Ռ. Սահակյանի և Կ. Խուդավերդյանի համատեղ աշխատությունը[2]: Գլուխը, որը կրում է «Հայերի ցեղասպանության պատմության ուսումնասիրումը» վերնագիրը, ընդգրկված է հիմնահարցի հայկական, ռուսական, ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, գերմանական, արաբական պատմագրությանը, ընդհանուր գծերով ներկայացված են հիմնարար ուսումնասիրությունները: Առանձին բաժին է հատկացված թուրքական պատմագրությանը: Տալով թուրք պատմաբանների Է. Ուրասի, Հ. Բայուրի, Զ. Կարալի, Զ. Օզկայայի, Մ. Խոջաօղլուի, Ս. Սոնիեի, Թ. Աթեսի, Կ. Գորյունի և այլոց կեղծարարության սեղմ քննադատությունը, հեղինակները մատնանշում են դրանց միտումնավորությունն ու պատմական ճշմարտությունից հեռու լինելը:

[1] Նշվ. աշխ., էջ 244:
[2] Ռոբերտ Սահակյան, Կոստանդին Խուդավերդյան: Հայոց ցեղասպանությունը ուսանողական լույսի ներքո: Երևան, 1995:

Միաժամանակ նրանք ընդգծում են, որ 1980-ական թվականների վերջերին և 1990-ական թվականների սկզբներին հայտնվեցին աշխատություններ, որոնցում փորձեր են արվում ինչ-որ չափով հեռանալ թուրքական պատմագրության մեջ արմատացած սխեմայից, չկրկնել ժամանակի քննությունը չբռնած պաշտոնական վարկածները: Բերվում է պատմաբան Թահսին Զելալի օրինակը, որը գտնում է, թե հասել է ժամանակը ուղղակիորեն ու ազնվորեն ասել Օսմանյան Թուրքիայում հայերի վերացմանը հանգեցնող պատճառների մասին: Մեկ այլ թուրք հեղինակ՝ Ռահիբ Զարակօղլուն, նշում է. «Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ սկսվեց էթնիկական մաքրագործումների ճանապարհով ազգային պետությունների ստեղծման ժամանակաշրջանը, օսմանյան պետությունը և իթթիհատական շովինիստները դրան պատասխանեցին 1915 թվականի հայկական գենոցիդով»: Թուրք հեղինակը եզրակացնում է, որ նոր ցեղասպանությունների կանխարգելման միակ միջոցը անցյալում կատարված գենոցիդների դատապարտումն է: Թուրք հեղինակ Թաներ Աքչամը «Թուրքական նացիոնալիզմի էությունը և հայկական հարցը» գրքում (1993 թ.), խոսելով հայերի գենոցիդի մասին, այն համեմատում է նացիոնալիստների կողմից հրեաների բնաջնջման հետ:

Ողջունելի պետք է համարել Եղեռնի վերաբերյալ մատենագիտական բնույթի աշխատանքների հրատարակումը: ՀԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը հրատարակել է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (1894—1923 թթ.)» մատենագիտությունը[1]: Նրա կազմողներն են Ա. Հ. Հարությունյանը և Գ. Բ. Մկրտչյանը, խմբագրական կոլեգիայի անդամներն են Գ. Բ. Ղարիբջանյանը (գլխավոր խմբագիր), Հ. Մ. Պողոսյանը և Վ. Խ. Ալեքսանյանը:

Ինչպես իրավացիորեն նշված է կազմողների խոսքում, Հայոց ցեղասպանության ուսումնասիրման բնագավառում հսկայական աշխատանք է կատարված, միևչդեռ նրա պատմության մատենագիտությունը դուրս է մնացել գիտական ուսումնասիրությունների շրջանակներից:

Մատենագիտությունն ընդգրկում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և իտալերեն հրատարակված փաստաթղթերի ժողովածուներ, հուշագրություններ, մենագրություններ, հոդվածներ և տարաբնույթ այլ աշխատություններ: Հայերեն լեզվով հիշատակված է 551, ռուսերեն՝ 141, օտար լեզուներով՝ 455, ընդհանուր առմամբ՝ 1147 անուն աշխատություն:

Վերջում տրված են անձնանունների և տեղանունների ցանկերը:

Մեծ եղեռնին նվիրված մատենագիտական գրականության ստեղծման ճանապարհին կարևոր քայլ է ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայոց 1915—1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն» աշխատությունը, որը կազմել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ֆունդամենտալ գրադարանի աշխատակիցներ Ռ. Բաբաջանյանը և Ն. Դերոյանը, Մ. Կարապետյանը և Մ. Հովհաննիսյանը[1]:

Ինչպես նշված է պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի խմբագրական խոսքում, սույն համառոտ մատենագիտությունը նպատակ ունի Մեծ եղեռնի պատմության հարցերով զբաղվող մերօրյա գիտաշխատողներին և դրանով հետաքրքրվողներին ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն հրատարակությունների առավել կարևոր մասը:

Մատենագիտության առաջին բաժնում ընդգրկված են 1915—1964, երկրորդ բաժնում՝ 1965—1995 թթ. հրատարակված հայերեն՝ 540, ռուսերեն՝ 141, անգլերեն՝ 103, ընդհանուր առմամբ՝ 784 անուն աշխատություններ:

Վերջում տրված են մի շարք կարևոր հրատարակությունների անվանաթերթերի լուսանկարները, օգտագործված մատենագիտության և անձնանունների ցանկեր:

Երկու մատենագրություններն էլ օգտակար ուղեցույց են Հայոց ցեղասպանության պատմության հետագա ուսումնասիրողների համար:

***

1998-ին նշվեց հայ ժողովրդի նվիրյալ բարեկամ Յոհաննես Լեփսիուսի ծննդյան 140-ամյակը: Այդ կապակցությամբ ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը նախաձեռնեց երկու հրատարակություն: Դրանցից մեկը[2] մեծ հումանիստին նվիրված հոդվածների ժողովածու է, որի խմբագիրն է Լ. Ա. Բարսեղյանը:

1. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (1894—1923 թթ.), Երևան, 1998:

1 Հայոց 1915—1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն: Երևան, 1995:
2 Յոհաննես Լեփսիուսը և հայ ժողովուրդը: Երևան, 1998:

Հայ ժողովրդի մեծ բարեկամի կյանքի և գործունեության մասին համառոտ ակնարկներ են Գ. Գոլտցի և Հ. Ղորխմազյանի[1], Ստեփան Ստեփանյանի հոդվածները[2]:

Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանի հոդվածը նվիրված է Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ Լեփսիուսի ելույթին[3]: Ջուգահեռ անցկացնելով որպես հայ իրականության իրազեկներ հանդես եկող Յոհաննես Լեփսիուսի և Լիման ֆոն Զանդերսի ելույթների միջև, հեղինակը ընդգծում է, որ եթե առաջինը մերկացնող էր և խարազանող, ապա երկրորդը ամեն կերպ ձգտում էր արդարացնել գերմանական հրամանատարությանը և թեթևացնել Թալեաթի հանցանքը: Նշվում է նաև, որ եթե համաշխարհային իրավաբանական պրակտիկայում առաջին անգամ մեղավոր ճանաչվեց ոչ թե սպանողը, այլ սպանվողը, ապա դրանում մեծ էր Յո. Լեփսիուսի ելույթի նշանակությունը:

Ռուբեն Սահակյանն իր հոդվածում գլխավորապես անդրադարձել է Յոհաննես Լեփսիուսի՝ արևմտահայերի ճակատագրին նվիրված հիմնարար աշխատություններին, դրանցում ձևավորված եզրակացություններին ու գնահատականներին[4]: Խոսելով 1896-ին հրատարակված «Հայաստանը և Եվրոպան» աշխատության մասին, հոդվածագիրը նշում է, որ այն այսօր էլ զարմանալի կերպով պահպանում է իր արժեքականությունը և օգնում է առավել խորն ըմբռնելու առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում ծավալված իրադարձությունները: Անդրադառնալով այդ ժամանակաշրջանին նվիրված «Հաղորդում հայ ժողովրդի դրության վերաբերյալ Թուրքիայում» աշխատությանը, հեղինակը նրա կարևորագույն արժանիքն է համարում բարձր հավաստիությունը, նշում, որ ըստ բերված աղյուսակների՝ 1915-ին բռնագաղթվել և գաղթի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում զոհվել են մեկ միլիոն 396 հազար 350 արևմտահայեր: Կարևորվում են Լեփսիուսի տված տեղահանության պատկերն ըստ վիլայեթների, նրա բերած թվերը և կոնկրետ փաստերը: Ընդգծվում է Լեփսիուսի կողմից բարձրացված, այսպես կոչված, «հանրնդհանուր հայկական ապստամբության» հարցի այժմեականությունը, որն իբր պատճառ դարձավ տեղահանությունների, կեղծ մի վարկած, որն այսօր էլ շահարկվում է թուրքական պաշտոնական քարոզչության կողմից: Դոկտոր Լեփսիուսը համոզիչ կերպով ցույց է տալիս այդ կեղծ վարկածի ողջ սնանկությունը, հայերի «դավաճանության» մասին թուրքական մեղադրանքների սադրիչ բնույթը: Այդ առիթով Ռ. Սահակյանը շեշտադրում է Լեփսիուսի այն խոսքերը, թե, այսպես կոչված, Վանի ապստամբությունը օրինական պաշտպանության մի սովորական ակտ էր, մի դրվագ ջարդի պատմության մեջ, բայց ոչ մի դեպքում դավաճանություն[1]: Ուստի համաթուրքական մասշտաբով Լեփսիուսի եզրակացությունը մեկն է՝ կառավարության դեմ ուղղված կանխամտածված որևէ շարժում չի եղել, կանխամտածված էին միայն այն հալածանքները, որոնք իրականացվում էին մեթոդիկ կերպով: Հեղինակը կարևորում է «Հաղորդման» երկրորդ մասը, որտեղ Լեփսիուսը, դնելով պատասխանատվության հարցը, անվիճելիորեն հետևցնում է, որ հայերի տեղահանությունների և դրանց իրականացման մասին հրամանի պատասխանատվությունն ընկնում է Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարության վրա, իսկ հայերի դեմ գործադրված բոլոր հանցագործությունների պատասխանատվությունը կրում են «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և նրա ակումբները գավառներում:

Ընդգծվում է, որ Լեփսիուսը առաջիններից մեկն էր, որ ուշադրություն հրավիրեց երիտթուրքերի հակահայկական քաղաքականության և պանթուրքական գաղափարախոսության միջև գոյություն ունեցող անմիջական կապի վրա:

Համառոտակի ներկայացվում է «Հաղորդման» երրորդ մասի բովանդակությունը, որտեղ քննարկված է հայերի ոչնչացման տնտեսական ծանր հետևանքների հարցը:

Արժեքավորելով Լեփսիուսի կազմած «Գերմանիան և Հայաստանը» դիվանագիտական փաստաթղթերի մեծածավալ ժողովածուն, որը լույս տեսավ 1919-ին, Ռ. Սահակյանը եզրակացնում է, որ դժվար է գերագնահատել նրա նշանակությունը՝ պատմության կեղծարարների ստահոդ պնդումները մերկացնելու գործում, որոնք այսօր էլ փորձում են ժխտել հայերի ցեղասպանությունը:

[1] Г. Гольтц, Р. С. Корхмазян. Доктор Иоганес Лепсиус: Краткий очерк жизни и деятельности (1858–1926). Указ. сборник, стр. 3–30.

[2] Ստեփան Ստեփանյան. Հայ ժողովրդի մեծ բարեկամը: Նշվ. աշխ., էջ 31—38:

[3] Գևորգ Ղարիբջանյան: Յոհաննես Լեփսիուսի ելույթը Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ: Նշվ. աշխ., էջ 39—47:

[4] Ռուբեն Սահակյան. Յոհաննես Լեփսիուսը և արևմտահայերի ճակատագիրը: Նշվ. աշխ., էջ 48—62:

[1] Նշվ. աշխ., էջ 57:

Հաջորդ հրապարակումը Ստեփան Ստեփանյանի գրքույկն է[1]: Գրքույկում առավել հանգամանորեն ներկայացված են մեծ մարդասերի կենսագրության էջերը, նրա ջանքերը «Գերմանա-հայ ընկերության» ստեղծման գործում: Առանձին բաժին է հատկացված Մեծ եղեռնի ժամանակաշրջանում դոկտոր Լեփսիուսի գործունեությունը, որտեղ նշվում է, որ նա տիտանական աշխատանք կատարեց ի պաշտպանություն արևմտահայության, նրա կոչով որպես օգնություն հավաքվեց 172 000 մարկ: 1915 թ. հուլիսին Յո. Լեփսիուսը մեկնեց Ստամբուլ, հանդիպեց Էնվեր փաշային, դիմեց նրան հայերի ցեղասպանությունը դադարեցնելու խնդրանքով, աղերսանքով, առաջարկեց իր ծառայությունները, բայց ապարդյուն:

1915 թ. հոկտեմբերի 9-ին «Գերմանա-հայ ընկերության» ժողովում Լեփսիուսը հաղորդում է տալիս արևմտահայության ցեղասպանության մասին, և ժողովի մասնակիցները նամակ են ուղարկում Գերմանիայի կանցլերին՝ խնդրելով արգելակել տեղահանությունն ու կոտորածները: Ստ. Ստեփանյանը բարձր է գնահատում Լեփսիուսի հրատարակած «Զեկուցագիր Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» 302 էջանոց գիրքը, որն ավելի ուշ հրատարակվեց «Հայ ժողովրդի մահվան օրհասը» վերնագրով, ինչպես նաև 1918-ին կազմած «Հայկական պրոբլեմը» վերնագրով ամբողջական փաստաթուղթը, որտեղ համակողմանիորեն շարադրված են Հայկական հարցի բոլոր հիմնական կողմերը և մատնանշված են խնդրի լուծման ուղիները:

Առանձին բաժնում Ստ. Ստեփանյանը ներկայացնում է Յո. Լեփսիուսի հրատարակած «Գերմանիան և Հայաստանը 1914—1918» ստվարածավալ փաստաթղթերի մեծարժեք ժողովածուն, որը պարունակում է շուրջ 500 փաստաթուղթ և որը, ըստ հետազոտողի, գերմանական պաշտոնական աղբյուրների հիման վրա Հայկական հարցի և մասնավորապես հայերի ցեղասպանության վերաբերյալ առավել հավաստի ժողովածուն է: Այն առաջին անգամ հրատարակվել է 1919-ին, Պոտսդամում, երկրորդ անգամ՝ 67 տարի անց, 1986-ին, Բրեմենում: Իրրև աշխատության մեծագույն արժանիք նշվում է, որ այն ի չիք դարձրեց պատմության կեղծարարների՝ հայության ողբերգությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելու փորձերը: Համապատասխան քաղվածքներ կատարելով, հեղինակը ցույց է տալիս, որ Լեփսիուսը վերոհիշյալ գրքում համակողմանիորեն վերլուծել է հայերի բնաջնջման վերաբերյալ երիտթուրքական ծրագիրը, որը բխում էր դեռևս 1911-ի հոկտեմբերին Սալոնիկում կայացած համագումարում ընդունված որոշումից:

[1] Ստեփան Ստեփանյան. Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը: Երևան, 1998:

Ներկայացվում է հայերի տեղահանության և ցեղասպանության պատմության լեփսիուսյան պարբերացումը չորս հիմնական փուլերի, այն է. առաջին փուլը սկսվում է 1914 թվականի նոյեմբերի 1-ից և շարունակվում մինչև 1915 թ. ապրիլի 20-ը: Երկրորդ փուլը սկսվում է 1915 թ. ապրիլի 20—24-ին և շարունակվում մինչև նույն թվականի դեկտեմբերը, երբ հիմնականում իրականացվում է հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը: Երրորդ փուլը սկսվում է 1915 թվականի դեկտեմբերին և շարունակվում է մինչև 1918 թ. հոկտեմբերը, երբ իրագործվում է Արևմտյան Հայաստանում կենդանի մնացած հայերի բռնի իսլամացումը և ֆիզիկական ոչնչացումը: Չորրորդ փուլը վերաբերում է կովկասահայության ցեղասպանությանը, որն ընդգրկում է 1918 թ. մարտի 3-ից մինչև նույն թվականի սեպտեմբերի 15—17-ը[1]:

Հեղինակը հատկանշական է համարում, որ Լեփսիուսը լուսաբանել է նաև արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը և հատկապես Վանի հերոսամարտը, այն համարելով իր բնույթով ինքնապաշտպանական արդարացի պայքար:

Ստ. Ստեփանյանը հատուկ ուշադրություն է հրավիրում Լեփսիուսի գրքի այն հատվածների վրա, որոնք մերկացնում են Ջեմալ փաշայի «հայանպաստ» հրամանների դեմագոգիկ բնույթը և բացահայտում են այդ մոլի հայասպանի իսկական դեմքը: Լեփսիուսյան փաստաթղթերի վերլուծությամբ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ փաստորեն կայզերական Գերմանիան ոչ միայն արդարացնում էր թուրք բարբարոսների կազմակերպած եղեռնը, այլև պաշտպանում էր այն, և գերմանական կառավարությունը ոչ մի ազդեցիկ միջոցի չի դիմել հայերի ջարդերը դադարեցնելու ուղղությամբ:

Ստ. Ստեփանյանի աշխատության վերջին բաժինը ևվիրված է Սողոմոն Թեհլերյանի Բեռլինյան դատավարությանը Լեփսիուսի մասնակցությանը: Հրապարակելով նրա ելույթում հնչած միտքը՝ Հայկական հարցը ինքնաճին տունկ չէ, այլ եվրոպական դիվանագիտության պտուղը, հեղինակը ցույց է տալիս, որ Լեփսիուսն իր ելույթում հանգամանորեն վերլուծել է մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում: Միաժամանակ հեղինակը իրավացիորեն անարդարացի է

[1] Նշվ. աշխ., էջ 20—21:

համարում Լեփսիուսի կողմից Ռուսաստանի դրական դերի թերագնահատումը:

Աշխատությունն ավարտվում է մեծ մարդասերի հայազգի գիտնական Ջեյմս Գրիճֆիլդի հետևյալ խոսքերով, արտասանված Լեփսիուսի մահվան կապակցությամբ. «Գերմանիան կորցրեց իր ազնիվ զավակներից մեկին: Հայերը, սակայն, իրենց միակ Լեփսիուսին, անփոխարինելի Մարդում, որն իր մեծ գործով հուշարձան է կերտել բոլոր հայերի սրտերում, մի հուշարձան մնալուն, ինչպես գրանիտը և մարմարը: Հայ ժողովուրդը սերնդե սերունդ սիրով և երախտագիտությամբ կհիշի նրան և նրա հիշատակը կպահպանի ինչպես սրբություն»[1]:

***

1965 թվականի Եղեռնի 50-ամյա տարելիցի նշումից հետո, երբ մեծագույն ջանքերի շնորհիվ մարդկության հիշողությունը վերստին բևեռվեց հայոց մեծագույն ողբերգության վրա, աշխարհում շատ երկրների պետական մարմիններ, միջազգային և այլ կազմակերպություններ տարբեր ժամանակներում կազմակերպեցին հարցի քննարկումներ և կայացրին համապատասխան որոշումներ, որոնց ընդհանուր իմաստը 1915—1923 թթ. հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումն է: Նմանօրինակ քննարկումների ամփոփմանն է նվիրված ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր **Լավրենտի Բարսեղյանի** փոքրածավալ, բայց և օգտաշատ գրքույկը[2]: Դատապարտելով պատմության կեղծարարների ապարդյուն ճիգերը՝ «մոռացված ցեղասպանությունը» գոնե «վիճելի ցեղասպանություն» ներկայացնելու ուղղությամբ, գրքույկի հեղինակը նախաբանում գոհունակությամբ նշում է, որ այսօր արդեն ճշմարտություն և արդարություն պահանջող միջազգային հանրության ինչեղ ձայնը լսելի է դարձել ամենուր[3]:

«Միջազգային կազմակերպությունները լռելյայն շրջանցել չեն կարող» բաժնում իբրև հայերի ցեղասպանության մասին հիշեցնող առաջին ազդ ձայն հեղինակը հիշատակում է 1968 թվականին 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համաշխարհային կոնգրեսը: Կարևորվում են ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի երկարամյա (1973—1985 թթ.) ջանքերը, որոնց արդյունքը եղավ 1985 թ. հուլիսի 2-ին ընդունած որոշումը՝ «1915—1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որպես ցեղասպանության օրինակ որակելու մասին:

Իբրև հիշարժան տարեթիվ ներկայացվում է 1984 թ. ապրիլի 13—16-ը, երբ Փարիզում կայացած ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, քննարկելով հայերի ցեղասպանության հարցը, ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում:

Գրքույկում արժանի տեղ է գրավել նաև 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանի ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի լրիվ տեքստը, որով 1915—1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները որակվում են իբրև ցեղասպանություն և պահանջվում է ներկայիս թուրքական կառավարությունից՝ ճանաչել այն[1]:

Գրքույկի «Հայոց ցեղասպանության դատապարտումը և ճանաչումը առանձին պետությունների կողմից» բաժնում նշվում է, որ սփյուռքում հայկական համայնքների ակտիվ գործունեության շնորհիվ մի շարք պետություններ հատուկ քննարկման ենթարկեցին հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Ներկայացվում են Ֆրանսիայի Ազգային ժողովի քննարկումները 1965—1998 թվականներին, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Հունաստանի, Ավստրալիայի, Լիբանանի պետական մարմինների ընդունած որոշումները: Բացահայտվում է ԱՄՆ-ի կառավարության բացասական վերաբերմունքը՝ հայոց ցեղասպանության նկատմամբ, որը տարբեր ժամանակներում մերժել է ներկայացված բանաձևերը[2]:

Բաժնում տեղ են գտել 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքը «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին», ինչպես նաև 1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության պետական դումայի ընդունած հայտարարությունը «1915—1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

---

1 Նշվ. աշխ., էջ 51:

2 Լավրենտի Բարսեղյան. Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը: Երևան, 1998:

3 Նշվ. աշխ., էջ 4:

1 Նշվ. աշխ., էջ 7—11:

2 Նշվ. աշխ., էջ 19—22:

Գրքույկի վերջում զետեղված է 1965—1998 թթ. ընդգրկող ժամանակագրություն, որն ավարտվում է վերջին իրադարձությունների՝ հայերի 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու մասին 1998 թ. մարտի 16-ի Բելգիայի Սենատի և մայիսի 29-ի Ֆրանսիայի Ազգային ժողովի կայացրած որոշումների հիշատակմամբ:

Հայ ժողովուրդն սպասում է միջազգային հանրության արդարացի վճռահատությանը:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

1. Հայ պատմագրության մեջ, Մեծ եղեռնի առաջին տարիներից սկսած մինչև մեր օրերը, հսկայական աշխատանք է կատարվել հիմնահարցի ուսումնասիրման բնագավառում: Այդ ժամանակաշրջանում հրատարակվել են հուշագրական, փաստավավերագրական, տեղեկատու, վիճակագրական, գիտական, պատմագրական, մատենագիտական բնույթի բազում աշխատություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ:

2. Արևմտահայության Գողգոթայի արյունածոր դրվագները մոռացումից փրկելու, դրանք պատմության հավերժությանը պահ տալու առումով անգերագնահատելի է ականատես-ժամանակակիցների հուշագրությունների և ուսումնասիրությունների նշանակությունը, որոնք փաստական առատ նյութ են մատակարարել հետագա ուսումնասիրողներին:

Նման բնույթի հրատարակությունները, գրեթե առանց բացառության, այսօր դարձել են մատենագիտական հազվագյուտ նմուշներ, ուստի անհրաժեշտ պարզաբանումներով և ծանոթագրություններով դրանց չուտափույթ վերահրատարակումը հրամայական անհրաժեշտություն է:

3. Պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում հատկապես այնօրյա օտար հեղինակների՝ դիվանագետների, զինվորական, հասարակական գործիչների, միսիոներների, հրապարակախոսների, լրագրողների, սոսկ ականատեսների աշխատությունները, հիշողություններն ու վկայությունները, որոնք թարգմանվել են հայերեն: Այդ աշխատությունների մի մասը եղակետային նշանակություն են ունեցել հայ ուսումնասիրողների համար, ուստի դրանց վերահրատարակումը նույնպես օրախնդիր պահանջ է:

4. Հայոց Մեծ եղեռնի պատմության լուսաբանման ուղղությամբ հսկայածավալ աշխատանք է կատարվել սփյուռքահայ պատմագրության մեջ:

Ամենևին մտադրություն չունենալով ստվերել այդ հիրավի վիթխարածավալ աշխատանքը, հարկ է, սակայն, նկատի առնել, որ սփյուռքահայ հեղինակների աշխատությունների ճնշող մեծամասնու-

թյունը կրում են պատմողական-նկարագրական բնույթ և հաճախ չեն համընկնում գիտահետազոտական աշխատանքներին վերաբերող մեր պատկերացումներին: Դրանք լի են հակասական, իրարամերժ տեղեկություններով ու մեկնաբանություններով: Այսուամենայնիվ, ընդգծելով դրանց պատմաճանաչողական հսկայական արժեքը, որի հիմքի վրա է բարձրացել հետագայի հայրենական պատմագրությունը, գտնում ենք, որ սփյուռքահայ հեղինակների փոքրածավալ աշխատությունները, ներառված գիտական համապատասխան շրջանակների մեջ, այսօր պետք է հրապարակվեն ժողովածուների ձևով, իսկ առավել կարևորները պարզապես պետք է վերահրատարակվեն առանձին, սակայն անհրաժեշտ ծանոթագրություններով: Նշենք նաև, որ այդ ուղղությամբ վերջին ժամանակներս որոշ քայլեր արված են:

5. Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանության պատմության ուսումնասիրման ուղղությամբ լուրջ աշխատանք է կատարված հայրենական պատմագրության մեջ, որն ամբողջությամբ, մեր կարծիքով, գոհացուցիչ լինել չի կարող: Ուստի գտնում ենք, որ հայրենական պատմագրությունը այդ բնագավառում դեռ շատ անելիքներ ունի:

6. Դեռ լրիվ չափով չեն բացահայտված 1920—30-ական թվականների պատեհապաշտական և գռեհիկ մոտեցումներն ու դրանց սնող պատճառները հայ ժողովրդի մեծագույն ողբերգության նկատմամբ, որը պետք է արվի այսօր:

7. Ճիշտ է, ամենայն դրվատանքի արժանի աշխատանք է կատարված Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի ժողովածուների հրատարակման ասպարեզում, սակայն կարծում ենք, որ այդ աշխատանքը պետք է դեռ երկար շարունակվի ու խորացվի:

8. Հայրենական պատմագրության մեջ գնահատելի տքնաջան աշխատանք է կատարված բուն ցեղասպանության պատմության գիտական հետազոտման բնագավառում՝ հատկապես 1960-ական թվականների կեսերից սկսած: Սակայն մեր համոզմամբ անելիքները դեռ շատ են, և ընթերցողն սպասում է նոր մենագրությունների:

9. Ցանկալի է տեսնել Հայոց Մեծ եղեռնի պատմությունը ըստ մեր պատմական Հայրենիքի նահանգների ու գավառների, ինչպես դա արվում է սփյուռքահայ պատմագրության մեջ: Մեզանում իսպառ կամ գրեթե բացակայում են հուշամատյանները, ալբոմները, համապատասխան բարտեզներն ու սխեմաները, բուհական և դպրոցական ուսումնաօժանդակ ձեռնարկները:

10. Որոշակի աշխատանք է կատարված հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի ուսումնասիրման ու վերհանման ասպարեզում, սակայն վիճակը դեռ շատ հեռու է գոհացուցիչ լինելուց: Կարծում ենք, եկել է արդեն ժամանակը, որ արյունոտ ու զոհառատ այդ դյուցազնամարտի յուրաքանչյուր դրվագ արժանանա առանձին և հատուկ ուսումնասիրության: Իսկ եղած աշխատությունները պետք է սրբագրվեն ժամանակին պարտադրված կուսակցական ներմտությունից, վերանայվեն այդ ասպարեզում հայ ազգային կուսակցությունների գործունեության գնահատականները:

Այդ բնագավառի գլխավոր խնդիրներից մեկն էլ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում հայոց ազատամարտի ցայսօր չբացահայտված դրվագների հայտնաբերումն ու վերհանումն է, որպիսիք մեր ներքին համոզմամբ կան և շարունակում են պարուրված մնալ անհայտության քողով:

11. Հայրենական պատմաբանները որոշակի քայլեր են իրականացրել Հայոց ցեղասպանության պատմագրության գիտական ուսումնասիրության բնագավառում, ստեղծվել են նաև մատենագիտական արժեքավոր գործեր: Սակայն այդ ասպարեզում ևս անելիքներ շատ կան, ուստի պետք է հրապարակվեն պատմագրական և մատենագիտական բնույթի նոր աշխատություններ:

12. Ի մի բերելով Մեծ եղեռնի պատմության բնագավառում հայ պատմագրության ձեռք բերած արդյունքները, կարող ենք վստահաբար եզրակացնել, որ դրանք ամուր և հուսալի հենարան են՝ Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանության համապարփակ գիտական պատմության ամբողջացման ճանապարհին, հիմնախնդիր, որն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գաղափարաքաղաքական օրախնդիր նշանակություն:

ԹԱՏԱԳՐՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

ա) Հայերեն

1.1. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան): Խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան: Երևան, Հայաստան, 1991, 758 էջ:

1.2. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923): Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: Կազմողներ՝ Զ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սսհակյան: Երևան, Հայաստան, 1972, 810 էջ:

1.3. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի: ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988, 253 էջ:

1.4. Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո: Կազմող՝ Հակոբ Կիլիկյան: Ժողովածուն, բուլղարերենից թարգմանեցին՝ Զ. Ղասաբյան, Կ. Միհնգոլյան: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1996, 36 էջ:

1.5. Հունաստանի խորհրդարանը դատապարտում է հայոց ցեղասպանությունը: Հունարենից թարգմանեց Սիմոն Սրկյաշարյանը: Խմբագիր՝ Լավրենտի Բարսեղյան: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1997, 40 էջ:

1.6. Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: Սղագրություն: Երևան, Արևագուն, 1990, 224 էջ:

1.7. Սվազլյան Վ., Մեծ եղեռն: Արևմտահայոց բանավոր վկայություններ: Երևան, ՀԳԱԱ «Գիտություն», 1995, 224 էջ:

բ) Թուրքերեն

1.8. Геноцид армян в Османской империи. Сборник документоз и материалов. Под. ред. М. Г. Нерсисяна. Составители: М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Ереван, АН Арм. ССР, 1966, 563 стр.

1.9. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Г. Нерсисяна, 2-ое доп. издание: Составители: М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Ереван, Айастан, 1982, 685 стр.

1.10. Германские источники о геноциде армян: Период первой мировой войны. (Сборник документов и материалов. В. 2-х томах). Сост. С. С. Степанян, Н. К. Багдасарян. Под ред.. С. С. Степаняна, т. 1-ый, Ереван, Айастан, 1991, 378 стр.

1.11. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель: ответ. редактор Вардгес Микаелян. Ереван, Гитутюн НАН РА, 1995, 643 стр.

1.12. Русские источники о геноциде армян в Османской империи. 1915—1916 годы. Составили: Г. А. Абраамян, Т. Г. Севан-Хачатрян. Предисловие М. Г. Нерсисяна. Ереван, Арередум, 1995, 272 стр.

գ) Մատենագրական

1.13. Հայերի ցեղասպանությունը (Մեծ եղեռնի 75-ամյակի առթիվ): Գրականության մատենագիտական ցանկ: Երևան, Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարան, 1990, 22 էջ:

1.14. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ (1894—1923): Մատենագիտություն: Կազմողներ՝ Ա. Հ. Հարությունյան, Գ. Բ. Մկրտչյան: ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների ինֆորմացիոն կենտրոն: Երևան, ԳԱԱ հրատ., 1993, 122 էջ:

1.15. Հայոց 1915—1916 թվականների ցեղասպանությունը: Մատենագիտություն: Խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան: Կազմողներ՝ Ռ. Բաբաջանյան, Ն. Դերոյան, Մ. Կարապետյան, Մ. Հովհաննիսյան: Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1995, 111 էջ:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Սփյուռքահայ հեղինակներ

2.1. Ակունի Ս. Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը: Կ. Պոլիս, 1920, 224 էջ:

2.2. Անտոնյան Արամ. Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա: Բոստոն, 1921, 304 էջ:
Գրքի լուսապատճենային հրատարակությունը՝ Երևան, Արևիկ, 1990:

2.3. Աղետ և վերածնունդ: Հեղինակ՝ աղետեն վերապրողներ: Փարիզ, 1952, 480 էջ:

2.4. Արամ Հայկազ. Ծապին-Գարահիսար ու իր հերոսամարտը: Նյու-Յորք, 1957, 459 էջ:

2.5. Անդրեասյան Տ. Զեյթունի անձնատվությունը և Սուետիո ինքնապաշտպանությունը, Կահիրե, 1915, 68 էջ:

2.6. Ամուրյան Ա. Կանխամտածված և նախօրոք ծրագրված ցեղասպանություն: Թեհրան, 1979:

2.7. Ազատյան Լ. Հայ որբերը Մեծ եղեռնի: Լոս-Անջելես, 1995, 343 էջ:

2.8. Ահարոնյան Գ. Մեծ երազի ճամբուն վրա: Բեյրութ, 1964, 368 էջ:

2.9. Ահարոնյան Գ. Խոհեր Հիսնամյակի ավարտին (1915—1965): Բեյրութ, 1966, 348 էջ:

2.10. Աղասի. Զեյթուն և իր շրջակաները: Բեյրութ, 1968, 415 էջ:

2.11. Ավետյան Մ. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870—1920) հուշամատյան և զոր. Անդրանիկ: Փարիզ, 1954, 525 էջ:

2.12. Բդեյան Ա., Բդեյան Մ. Հարազատ պատմություն Տարոնի: Կահիրե, 1962, 671 էջ:

2.13. Երեցյան Գ. Լեռնաշխարհի գոյամարտը: Բեյրութ, 1959, 270 էջ:

2.14. Եկարյան Ա. Հուշեր: Կահիրե, 1947, 423 էջ:

2.15. Զավեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս: Վավերագիրներ և վկայություններ: Կահիրե, 1947, 423 էջ:

2.16. Էմմերյան Մ. Աբսորի և պատերազմի կրակներում մեջեն: Բոստոն, 1953, 387 էջ:

2.17. Թագվորյան Գաբրիել. Գորշ գայլը կատղեր էր (վկայություններ և տպավորություններ): Կահիրե, 1953, 429 էջ:

2.18. Թեոդիկ։ Հուշարձան ապրիլ տասնմեկի։ Կ. Պոլիս, 1919, 128 էջ։
2.19. Թեոդիկ։ Հուշարձան նահատակ մտավորականության։ Թեհրան, 1985, 153 էջ։ Լուսապատճենը՝ Երևան, ՀԿԿ Կդ հրատ., 1990։
2.20. Թյուրապյան Հ. Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ. 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրներով։ Փարիզ, 1946, 207 էջ։
2.21. Թեհլերյան Ս. Ինչպես սպանվեցավ Թալեաթ փաշա։ Գրի առավ Վահան Մինախորյան։ Բեյրութ, 1968, 428 էջ։
2.22. Թորլաքյան Մ. Օրերուս հետ։ Լոս Անջելոս, 1953, 546 էջ։
2.23. Ծոցիկյան Ս. Արևմտահայ աշխարհ։ Նյու-Յորք, 1947, 816 էջ։
2.24. Լազյան Գաբրիել. Հայաստան և Հայ դատը (հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ)։ Կահիրե, 1957, 440 էջ։ Լուսապատճենը՝ Երևան, 1990։
2.25. Կոսոյան Հ. Վան-քաղաքամիջի ապրիլյան կռիվները։ Թեհրան, 1954, 135 էջ։ Վերահրատ.՝ Երևան, 1992։
2.26. Կեորկիզյան Ա. Մեր ազգային գոյապայքարը։ 1915—1922-ի զուլումի տարիներուն։ Բեյրութ, 1967, 503 էջ։
2.27. Հուշամատյան Մեծ եղեռնի. 1915—1965։ Պատրաստեց՝ Գ. Ահարոնյան։ Բեյրութ, Զարթոնք, 1965, 1119 էջ։
2.28. Հերոսամարտում Մեծ եղեռնի։ Բեյրութ, 1978, 443 էջ։
2.29 Հաճյան Հ. Հայոց տաժանքի ճամբաներով։ Թեհրան, 1965, 463 էջ։
2.30. Ղազարյան Հայկազն. Ցեղասպան թուրքը։ Բեյրութ, 1968, 424 էջ։
2.31. Շիրեճյան Ե. Արյունոտ գոյերթի վկաներ։ Բեյրութ, 1989, 166 էջ։
2.32. Մուշեղ Արքեպիսկոպոս։ Հայկական մղձավանջը (քննական վերլուծումներ)։ Բոստոն, 1916, 212 էջ։
2.33. Մոզյան Լ. Աբսորակաճի մը ոդիսականը (Սև օրերու հիշատակներ)։ Բոստոն, 1958, 123 էջ։
2.34. Մինախորյան Վ. 1915 թվականը (արհավիրքի օրեր)։ Վենետիկ, 1949, 470 էջ։
2.35. Մակունց Ղազար, Տրապիզոնի հայոց տեղահանությունը։ Հուշագրական էջեր։ Թեհրան, 1963։
2.36. Միսքչյան Ստ. Ես Տեր-Ձորի դժոխքեն փախած եմ։ Ա հատոր։ Փարիզ, 1966, 89 էջ։
2.37. Մալեզյան Վ. Տարագրի մը հուշատետրը։ Կահիրե, 1915, 228 էջ։
2.38. Նագգաշյան Ա. Հայ մտավորականներու ձերբակալությունը և Այաշի քանտը։ Բեյրութ, 1969, 143 էջ։
2.39. Նազլյան Հովհ. Արք. Հուշեր, Ա հատոր։ Բեյրութ, 1960, 670 էջ։
2.40. Նաթալի Շահան. Թուրքիզմի Անգորայեն Բաքու և թուրքական օրիենտասիոն։ Թուրքիզմը և մենք։ Աթենք, 1928, 241 էջ։ Լուսապատճենը՝ Երևան, 1990։
2.41. Նասիբյան Ագապի. Բրիտանիա և Հայկական հարցը. 1915—1923։ Բեյրութ, 1994, 344 էջ։
2.42. Շամտանճյան Մ. Հայ մտքին հարկը Եղեռնին։ Հիսնամյակ 1915—1965։ Ամերիա, 1965, 110 էջ։
2.43. Շիրինյան Ներսես. Անդունդեն դեպի բարձունք։ Բեյրութ, 1974, 142 էջ։
2.44. Չարըգ Ղազար. Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում։ Բեյրութ, 1957, 791 էջ։

2.45. Չոփուրյան Է. Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը։ Կ. Պոլիս, 1920։
2.46. Չորմիսյան Լ. Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության (1908—1922), հ. Գ, Բեյրութ, 1975, 661 էջ։
2.47. Պաղտիկյան Գ. Տարագրի մը ճամփան։ Ապրումներ և հուշեր։ 1912—1918։ Ֆրեզնո, 1958, 303 էջ։
2.48. Պալաքյան Գրիգորիս Ծ. վարդապետ. Հայ Գողգոթան (դրվագներ հայ մարտիրոսութենեն), Վիեննա, 1922, 429 էջ։ Վերահրատարակությունը՝ Երևան, 1991։ 391 էջ։
2.49. Պողարյան Գրիգոր։ Ցեղասպան թուրքը։ Վկայություններ՝ քաղված հրաշքով փրկվածներու գրույցներեն։ Բեյրութ, 1973, 207 էջ։
2.50. Ռուբեն. Հայ հեղափոխականի մը հիշատակները, Է հատոր, Թեհրան, 1982, 348 էջ։ Վերահրատարակությունը՝ Երևան, 1990։
2.51. Սապահ-Գուլյան Ս. Պատասխանատուները։ Պրովիդենս, 1916, 351 էջ։
2.52. Սասունի Կ. Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով։ Փարիզ, 1931, 64 էջ։
2.53. Սասունցի Մարտիրոս. Սև օրագիր։ Բեյրութ, 1957, 291 էջ։
2.54. Սյուրմենյան Գ. Տաճկահայ գիրվոր և գիրվորականությունը նախ տաճկական, ապա հայկական բանակներուն մեջ։ Բեյրութ, 1967, 123 էջ։
2.55. Սևակ Մանանե. Հայկական Մեծ եղեռնը և մենք (թրքական հայասպանություն)։ Նյու-Յորք, 1964, 82 էջ։
2.56. Վարագ Բացառիկ. Նվիրված Մեծ եղեռնի և Վանի հերոսամարտի 50-ամյակի տարեդարձներուն։ Բեյրութ, 1965։
2.57. Տաշյան Հ. Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ։ Վիեննա, 1921, 241 էջ։
2.58 Տատրյան Վահագն. Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով։ Պալքար, 1995, 147 էջ։
2.59. Տարոնցի Աղտա. Պատասխանատուները Տարոնի եղեռնին։ Բեյրութ, 1966, 530 էջ։
2.60. Տեր-Ձոր. Հեղինակ՝ աղետեն վերապրողներ։ Կազմեց՝ Լևոն Մեսրոպ։ Փարիզ, 1955, 391 էջ։
2.61. Տեր-Մելքոնյան Մելքոն. Կյանքի և մահվան միջև։ Բեյրութ, 1974, 257 էջ։
2.62. Տեր-Պարսամյան Եղիշե քահ. Տարոնո ինքնապաշտպանությունն ու ջարդը (1914—1915)։ Ֆրեզնո, 1920։
2.63. Տերտերյան Ի. Հայկական գոյամարտը։ Մեր ցեղի դառնաղետ անցյալի սեղմ պատմություն։ Թեհրան, 1957, 641 էջ։
2.64. Տոնիկյան Տ. Հայկական փոթորիկը։ Կահիրե, 1929, 53 էջ։
2.65. Փիրանյան Նազարեթ. Խարբերդի եղեռնը։ Բոստոն, 1937, 541 էջ։
2.66. Օհանջանյան Արտեմ. 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին)։ Երևան, 1997, 246 էջ։

3. Հայրենական հեղինակների աշխատություններ

3.1. Ա-Դո. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին։ Երևան, 1917, 487 էջ։
3.2. Ադոնց Ն. Հայկական հարց։ Հատոր Ա։ Կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը։ Թարգմանիչ՝ Վալտեր Դիլոյան։ Երևան, 1998, 244 էջ։

3.3. Ամենյան Հայկ: Թուրքահայ աղետը. պատմական փաստաթղթեր: Ս. Էջմիածին, 1919:
3.4. Աղայան Ծ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից: ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1976, 869 էջ:
3.5. Արզումանյան Մ. Հայաստան 1914—1917: Երևան, Հայաստան, 1969, 777 էջ:
3.6. Արզումանյան Մ. Դարավոր գոյամարտ: Երևան, Հայաստան, 1989, 766 էջ:
3.7. Ասլանյան Ա. Փեսանդաշտը պաշարված էր (դրվագներ արևմտահայերի ցեղասպանությունից): Երևան, Հայաստան, 1990, 236 էջ:
3.8. Բայբուրդյան Վ. Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: Երևան, Հայաստան, 1989, 358 էջ:
3.9. Բարսեղյան Լ. Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1998, 28 էջ:
3.10. Գալոյան Գ. Պատմության քառուղիներում: Երևան, Հայաստան, 1982, 460 էջ:
3.11. Գահիճեճյան Ե. Հուշեր Ուրֆայի 1915 թ. ներոսամարտի ու հետագա իրադարձությունների մասին: Գրի առավ և հրատարակության պատրաստեց պատմ. գիտ. դոկտոր Վարդան Գրիգորյանը: Երևան, 1995, 88 էջ:
3.12. Լեո. Անգյալից: Հուշեր, թղթեր, դատումներ: Թիֆլիս, 1925, 482 էջ:
3.13. Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Հ. 2, Փարիզ, 1935, 215 էջ:
3.14. Ինճիկյան Հ. Օսմանյան կայսրության անկումը: Երևան, Հայաստան, 1989, 335 էջ:
3.15. Խուրշուդյան Լ. Հայկական հարցը, բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը: Երևան, Համագգային հայ կրթական և մշակութային միություն, 1995, 100 էջ:
3.16. Կարապետյան Մ. Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ: Երևան, Մասնկավարժ, 1993, 98 էջ:
3.17. Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ.: Երևան, Հայաստան, 1965, 511 էջ:
3.18. Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև (1915-ից մինչև մեր օրերը): Գիրք երկրորդ, Երևան, Հայաստան, 1983, 463 էջ:
3.19. Համբարյան Ա. Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում 1908—1914 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979, 311 էջ:
3.20. Համբարյան Ա. Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (19-րդ դարի վերջ— 20-րդ դարի սկիզբ): Երևան, Հայաստան, 1990, 480 էջ:
3.21. Համբարյան Ա. Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը: Երևան, Գիտելիք, 1990, 86 էջ:
3.22. Համբարյան Ա., Ստեփանյան Ս. Հայոց ցեղասպանությունը: Երևան, 1995, 70 էջ:
3.23. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6: Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, 1045 էջ:
3.24. Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր. մաս 1: Երևան: ԵՊՀ, 1995, 107 էջ:
3.25. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր: Հոդվածների ժողովածու: Պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան: Երևան, 1995, 134 էջ:
3.26. Հովհաննիսյան Գ. Սասունը բոցերի մեջ (1915—1916 թթ.): Խմբ. Հ. Պողոսյան: Երևան, Հայաստան, 1987, 265 էջ:
3.27. Դարիբջանյան Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Երևան, ԵՊՀ, 1986, 161 էջ:
3.28. Մելիքսեթյան Հ. Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1914—1940): Երևան, Հայաստան, 1975, 294 էջ:
3.29. Մելիքսեթյան Հ. Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1930): Երևան, ԵՊՀ, 1985, 474 էջ:
3.30. Մնացականյան Ա. Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ: Երևան, Հայաստան, 1965, 207 էջ:
3.31. Մուրադյան Հ. Էջեր հայ ժողովրդի ներոսական անցյալից: Երևան, Հայաստան, 1988, 262 էջ:
3.32. Յոհաննես Լեփսիուսը և հայ ժողովուրդը: Խմբագիր՝ Լ. Բարսեղյան: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1998, 71 էջ:
3.33. Ներսիսյան Մ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.: Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1955, 530 էջ:
3.34. Ներսիսյան Մ. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից: Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1982, 404 էջ:
3.35. Նորաշխարհյան Լ. Զեյթունը 1914—1921 թթ.: Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1984, 271 էջ:
3.36. Պարսամյան Վ. Հայ ժողովրդի պատմություն (1801—1917 թթ.), հատոր 3-րդ: Երևան, Լույս, 1967, 535 էջ:
3.37. Պողոսյան Հ. Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ.: Երևան, Հայաստան, 1969, 458 էջ:
3.38. Պողոսյան Հ. Սասունի պատմություն (1750—1918): Երևան, Հայաստան, 1985, 360 էջ:
3.39. Պողոսյան Հ. Փարամազ: Երևան, ՀՍՍՀ, ԳԱ, 1992, 96 էջ:
3.40. Պողոսյան Ս. Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ, մեկնաբանություններ): Երևան, Հայաստան, 1988, 480 էջ:
3.41. Պողոսյան Ս. Քրդերը և հայկական հարցը: Երևան, Հայաստան, 1991, 455 էջ:
3.42. Պողոսյան Ս. Կ. Արևմտահայությունը ցեղասպանության շեմին: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1997, 195 էջ:
3.43. Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից: Երևան, Հայաստան, 1990, 367 էջ:
3.44. Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ. Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո: Երևան, Եղեռնի 80-ամյակի պետ. հանձնաժողովի հրատ., 1995, 59 էջ:
3.45. Սարգսյան Ն., Սահակյան Ռ. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ: Երևան, Հայպետհրատ, 1963, 96 էջ:
3.46. Սարգսյան Ե. Թուրքիան և նրա ներաճողական քաղաքականությունը Անդրկովկասում: Երևան, Հայաստան, 1964, 537 էջ:

3.47. Սիմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքաղարականությունը: Երևան, 1986, 564 էջ:
3.48. Սիմոնյան Հ. Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից: Երևան, Հայաստան, 1991, 630 էջ:
3.49. Սիմոնյան Հրաչիկ. Անդրանիկի ժամանակը: Երկու գրքով: Գիրք Ա, Երևան, 1996, 751 էջ:
3.50. Ստեփանյան Ստեփան. Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1998, 52 էջ:
3.51. Վան-Վասպուրականի հերոսամարտը— 75 (ժողովածու): Կազմող՝ Հ. Դ. Փափազյան, խմբ.՝ Հ. Պոդոսյան: Երևան, Հայաստան, 1990, 127 էջ:
3.52. Հայկական հարց. Հանրագիտարան: Երևան, 1996:

4. Օտար հեղինակների հայերեն հրատարակություններ

4.1. Ահմեդ Ռեֆիկ. Երկու կոմիտե՝ երկու ոճիր: ՀԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1997, 98 էջ:
4.2. Բարբի Հ. Սարսափի երկրի մեջ. Ճահճատակ Հայաստան: Կ. Պոլիս, 1919, 158 էջ:
4.3. Բրայս Ջ. Անգլիական կառավարության Կապույտ գիրքը հայկական Մեծ եղեռնի մասին (1915—1916): Կ. Պոլիս, 1919, 80 էջ:
4.4. Բրայս Ջ. Հայկական ջարդերու փաստաթղթերը. Ա մաս: Կ. Պոլիս, 1920, 175 էջ:
4.5. Բրյուսով Վ. Տարեգրություն հայ ժողովրդյան պատմական ճակատագրին: Վենետիկ, Ս. Ղազար, 1931, 253 էջ:
4.6. Գեմբարակի Բ. Նամակներ աշխարհին: Երևան, ԵՊՀ, 1990, 149 էջ:
4.7. Գիբոնս Հ. Ժամանակակից պատմության սևագույն էջը: 1915-ի հայկական դեպքեր: Իրողություններ և պատասխանատվություններ: Նյու-Յորք, 1916, 93 էջ:
4.8. Լենկ Տ., Ուորքր Ք. Հայերը: Հալեպ, 1978, 125 էջ:
4.9. Լեփսիուս Յո. Հայաստանի ջարդերը. Գաղտնի տեղեկագիր դոկտոր Յոհաննես Լեփսիուսի: Կ. Պոլիս, 1919, 315 էջ:
4.10. Մանդելշտամ Ա. Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը. Ա մաս, Կ. Պոլիս, 1919:
4.11. Մորգենթաու Հ. Ամերիկյան դեսպան Մր. Մորկընթաուի հիշատակները և հայկական եղեռնին գաղտնիքները: Կ. Պոլիս, 1919, 350 էջ:
4.12. Ցակորսոն Մ. 1915. պատառիկներ օրագրություններից: Երևան, Պարբերական, 1995, 47 էջ:
4.13. Նանսեն Ֆ. Հայաստանը և Մերձավոր Արևելքը: Երևան, Լույս, 1993, 176 էջ:
4.14. Պիևոն Ռ. Հայերու բնաջնջումը: Գերմանական մեթոդ— թուրքական գործելակերպ: Կ. Պոլիս, 1919, 61 էջ:
4.15. Ռիֆաթ Մեվլան Ջւադե. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները: Բեյրութ, 1968:
Լուսապատճենահանումը՝ Երևան, ԿՓՀ, 1990, 330 էջ:
4.16. Վերֆել Ֆ. Մուսա լեռան քառասուն օրը: Երևան, Հայաստան, 1987, 918 էջ:
4.17. Ֆայեզ Էլ Հոսեյն. Հերոսական հայության անցյալեն. Ջարդերը Հայաստանի մեջ (Անհանատեսի վկայություններ): Կահիրե, 1960, 72 էջ:
4.18. Ֆիրբյուխեր Հ. Հայաստան 1915. գերմանացի սպայի վկայությունը: Երևան, Փյունիկ, 1995, 64 էջ:

5. Ռուսերեն աշխատություններ

5.1. Акопян С. М. Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Изд. АН Арм. ССР, Ереван, 1967, 262 стр.
5.2. Армянский вопрос. Энциклопедия. Ереван, АЗ, 1991, 348 стр.
5.3. Арутюнян А. О. Кавказский фронт 1914—1917 гг. Изд. «Айастан», Ереван, 1971, 415 стр.
5.4. Гарибджанян Г. В. Геноцид армян и мировая общественность. Ереван, Изд. Гитутюн НАН РА, 1989, 76 стр.
5.5. Гарибджанян Г. В. Геноцид армян перед судом истории. Ереван, 1995, 107 стр.
5.6. Зареванд. Турция и Пантуранизм. Париж, 1930, 168 стр.
5.7. Киракосян Дж. С. Западная Армения в годы первой мировой войны. Изд. ЕГУ, Ереван, 1971, 477 стр.
5.8. Кочар Мери, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос. Ереван, Изд. ЕГУ, 1988, 308 стр.
5.9. Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ответ. редактор: Р. Г. Саакян, Изд. НАН Армении. Ереван, 1993, 287 стр.
5.10. Саркисян Е. К. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, Изд. АН Арм. ССР, 1962, 497 стр.
5.11. Саркисян Е. К. Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и начале 20-го вв. Изд. АН Арм. ССР, Ереван, 1972, 330 стр.
5.12. Степанян Ст. Армения в политике империалистической Германии. Ереван, «Айастан», 1975, 242 стр.
5.13. Фирбюхер Генрих. Армения 1915: Уничтожение Турцией культурного народа. Отв. ред. В. А. Микаелян. Изд. АН Армении, Ереван, 1991, 96 стр.

6. Պարբերականներ

6.1. ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, հ. 5:
6.2. «Պատմա-բանասիրական հանդես», 1965, հ. 1, 2, 1995, հ. 1, 2:
6.3. ՀԳԱԱ «Գիտություն», 24.04.1996:
6.4. «Սովետական Հայաստան», 24.04.1975:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 7
1. Ականատես-ժամանակակիցների ուսումնասիրություններն ու հուշագրությունները 8
2. Օտար հեղինակների հայերեն թարգմանված աշխատությունները 33

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 110
1. 1915—1965 թվականների հրատարակությունները 111
2. 1965—1998 թվականների ուսումնասիրությունները 136

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 195
1. Սկզբնաղբյուրների և փաստաթղթերի հրապարակումը 199
2. Ցեղասպանության ուսումնասիրումը 232
3. Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի ուսումնասիրումն ու գնահատումը 302
4. Ցեղասպանության պատմագրության հետազոտությունը 333
Եզրափակում 361
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 364